

«Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՉՆՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բ Ա Ն Բ Ե Ր

Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի

16



ՏՊԵՑԱԻ ՀԱՏՈՐՍ ԱՐԳԵԱՄՔԷ
ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԻՄՆԱԳՐԱՄԻ
ԱՌ Ի ՅԻՇԱՏԱԿ ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ



Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խ մ ք ա գ ր ա կ ա ն մ ա ր մ ի ն

Յ. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ (գլխավոր խմբագիր), Թ. ԶՈՒՔԱՍՉՅԱՆ, Հ. ՓԱՓԱՉՅԱՆ, Վ. ԳՐԳՈՐՅԱՆ,
Ա. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ (պատասխանատու ֆարաղար)

0500000000

Բ-----100-91

703 (02) - 94



ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՓՐԵՄ ԱՍՈՐՈՒ «ՀՈՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ»
ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

Ասորական գրականության մեծագույն ներկայացուցիչ Եփրեմ Ասորու (մահ. 373 թ.) «Հորի մեկնության» սկզբնագիրը չի պահպանվել. Ասեմանինների հրատարակած ասորերեն բնագիրը¹ հետազոտողների կողմից հաստատապես անվավեր է համարվում²: Մեկնության հայերեն թարգմանությունը նույնպես, դժբախտաբար, ամբողջությամբ մեզ չի հասել: Սակայն բավականին ընդարձակ մի հատված, որն ընդգրկում է Եփրեմի ներածությունը և Հորի գրքի Ա, 1—12 համարների մեկնությունը, պահպանվել է Գրիգոր Աբասա որդու (մահ. 1220/1 թ.) «Պատճառաց գրքում»: Այդ հատվածը խնամքով հրատարակված է Ա. Վարդանյանի կողմից Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրերի հիման վրա³:

Եփրեմի երկը՝ Որոգինեսի, Իսիբիոս Երուսաղեմացու, Եվազր Պոնտացու, Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Քորայրեցու նույնաբնույթ գրվածքների կողքին բաղվածաբար ընդգրկված է նաև Հովհաննես Վանականի (1181—1251 թթ.) «Հորի մեկնության» մեջ⁴: Սակայն, ինչպես համոզիչ կերպով ցույց է տվել Ա. Վարդանյանը, Եփրեմի աշխատությունը Վանականի կողմից որոշ կրճատումների ու փոփոխությունների է ենթարկվել⁵: Ուստի այս բնագրի օգնությամբ ևս անհնար է վերականգնել Եփրեմ Ասորու մեկնության ամբողջական տեսքը: Այնուամենայնիվ, պահպանված հատակոտորները, մանավանդ «Պատճառաց գրքի» ընդարձակ բաղվածքը, հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել այդ մեծարժեք երկի հայերեն թարգմանության մասին:

¹ *Sb' u Sancti Patris nostri Ep'raem Syri Opera omnia*, t. 2, Syriace et latine. Romae, 1740, p. 1—19.

² *Sb' u Ch. Renoux*, Vers le Commentaire de Job d'Ephrem de Nisibe, „Parole de l'Orient“, vol. VI—VII, 1975—1976, p. 63.

³ *Sb' u Ա. Վարդանյան*, Սրբոյն Եփրեմի Մեկնութիւն և սկիզբն Յորայ (Ա. Վարդանյանի «Դասական մանր բնագիրներ և ձեռագրական համեմատութիւններ» գրքում, Վիեննա, 1913), էջ 81—94:

⁴ Վանականի մեկնության մասին մանրամասն տե՛ս *Ch. Renoux*, Hésychius de Jérusalem, Homélie sur Job, „Patrologia Orientalis“, t. 42, fasc. 1, No 190, Brepols-Turnhout, 1983, p. 18—19.

⁵ *Sb' u Ա. Վարդանյան*, Սրբոյն Եփրեմի Մեկնութիւն..., էջ 68—71: Վանականի մեկնությունից եփրեմյան մի հատված հրատարակել է Շ. Ռընուն Ֆրանսերեն թարգմանությամբ, տե՛ս *Ch. Renoux*, Vers le Commentaire, p. 65—68.

Եփրեմ Ասորու «Հորի մեկնությունը» հայ թարգմանական գրականության հնագույն հուշարձաններից է. հնություն հիմնական ապացույցը, Ա. Վարդանյանի արտահայտություններ, «լեզուական ամենայնպես ցուցումը, այսինքն եփրեմեան գործոց դասական հայերէնն» է⁶: Իսկապես, հայերեն թարգմանության լեզուն աչքի է ընկնում ընտիր հայկաբանությամբ և դասական գրաբարին բնորոշ վայելուչ ոճով: Դրանում կարելի է համոզվել, ծանոթանալով թեկուզ հետևյալ փոքրիկ հատվածին. «Եղեն արարածք դարմանիչք մարմնոց մերոց, եղեն և գիրք դարմանիչք հոգոց մերոց: Եւ որպէս գոն յամենայն աշխարհի բիւր բարիք, և ոչ բռնութեամբ գան մտանեն ի բերան մարդոյ և դարմանեն զնա, այլ ինքն կամաւ իւրովք բանայ զգուռն բերանոյ իւրոյ և վայելէ ի ճաշակսն, որ ուրախ առնէ զնա, սոյնպէս և ըստ սմին արինակի գոն ի գիրս ամենայն բարութիւնք. և ոչ բռնութեամբ մտանեն ի հոգիս կենդանի բանքն և իմաստնացուցանեն զմիտս, այլ ինքն իշխանական կամաւք բանայ զգուռն լսելեաց իւրոց և ընդունի զնոսա ի միտսն»⁷:

Եփրեմի մեկնության՝ «Պատճառաց գրքում» պահպանված հատվածում կարելի է մատնանշել միայն հետևյալ ասորարանությունները.

6—Ի ձեռն (=b—yd)⁸.

50—ամենայն մարդ (=kl 'nš)⁹.

64, 78—յերկիր յԱւծ⁹ (=b- r' d-'wš) Աստվածաշնչի հայերեն բնագրում ունենք յԱսիդ աշխարհի ընթերցվածք (=ἐν γῶραι τῆ Αυσίτιδι).

65, 127—այս ինքն (=hnw=hn' hw).

67—զուարթուն (=y'r').

72—կանխեաց դրոշմեաց (=qdm ršm).

100—Յոր, որ բազցր էին ճառագայթք ողորմութեան նորա փխ Յոր, ճառագայթք ողորմութեան որոյ բազցր էին.

152—կանխեաց զրկեաց (հմմտ. տ. 72).

226—խաւսել կալաւ փխ խաւսել սկսաւ.

228—պատերազմ է այս մեծ և սաստիկ, որ կարգի անուն նորա յամենայն դարս փխ... որոյ անուն կարգի յամենայն դարս (հմմտ. տ. 100).

247—զուստր ձախոյ (=brt sml').

302/4—սատանայ էջ եկաց ի մէջ պատերազմին, որոյ նման է գալուստն իւր Յուդայի փխ... որոյ գալուստն նման է Յուդայի.

306—սաստեաց ի նոսա (k" b-hwn) փխ սաստեաց նոցա.

Ասորարանություն պետք է համարել նաև տէր բառով կազմված հետևյալ բառակապակցությունները. տէր նաշոյս (33), տէր մարտին (47), տէր դրախտին (125):

6 Ա. Վարդանյան, Սրբոյն Եփրեմի Մեկնութիւն..., էջ 64:

7 Նույն տեղում, էջ 81:

8 Քաղվածքների սկզբում գրված թվերով նշանակվում են Ա. Վարդանյանի հրատարակության տողահամարները:

9 Ա. Վարդանյանն ուղղել է յնւծ:

«Պատճառաց զբքի» հնագույն բնօրինակությունը (ԺԳ դ.), ինչպես հայտնի է, պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 1879 համարի տակ¹⁰: Քանի որ Ա. Վարդանյանը հնարավորություն չի ունեցել օգտվելու այդ բնօրինակությունից, հարկ ենք համարում ստորև ներկայացնել վերջինիս տարբերակները նրա հրատարակության նկատմամբ¹¹.

- 7 յեզուն փխ զեզուն
 9 զիրք փխ իրք
 11 դարմանիչ փխ դարմանիչք
 12 քանզի փխ որպէս
 12 աշխարհէ փխ աշխարհի
 13 բիւրք փխ բիւր
 16 ճաշակն փխ ճաշական
 26 կերէք փխ կերայք
 26 կերակրոց փխ կերակրոյ
 29 սիրոյ սեղանի փխ սեղանոյ
 30 բերանոց փխ բերանոյ
 35 զնա փխ զնոսա
 35 առաջի ի վերայ փխ ի վերայ
 37 ողորմութիւնն... մեծութիւնն փխ ողորմութիւն... մեծութիւն
 52 լինին փխ լիցին
 59 իմաստացուցիչք փխ իմաստնացուցիչք
 64 յաւծ փխ յմւծ
 66 երկիր յերկրէ փխ յերկրէ
 76 գոն... ազգականք փխ գոյ... ազգական
 78 յաւծ փխ յմւծ
 89 շի՛ք զձեզ
 94 շի՛ք հաշէր
 99 շարս փխ շարիս
 108 կողմնս փխ կողմն
 108 աշխատիլ փխ աշխատել
 111 զաւրութեամբն փխ զաւրութեամբ
 112 որ փխ որք
 113 խաւարային փխ խաւարին
 118 ի յոստս փխ յոստս
 119 կատաղութեանն փխ կատաղութեան
 120 ապաւինութենէն փխ յապաւինութենէն
 136 մոլարքն փխ մոլարք
 138 զերկոսեան փխ զերկոսեանն
 146 շար մտաց փխ մտաց
 158 դժառա[-յ հետին գրչով] փխ ծառայ
 172 զեկս փխ զերկս
 176 եռանդան փխ եռանդեան
 183 վաճառոց փխ վաճառաց

10 Եփրեմի մեկնության հատվածն զբաղեցնում է ձեռագրի 67բ—74բ էջերը:

11 Ուղղագրական տարբերությունները շինք նշում:

- 189 հէնան փխ հէնս
 197 ասաց փխ ասէ
 202 շի՛ և
 204 յայտնի եմոյծ փխ եմոյծ
 210 էր փխ են
 211 ստին փխ սատանային
 211 ակնարկեսցէ և փխ և ակնարկեսցէ
 213 ակնառու փխ ակնառու
 217 ստութեանն փխ ստութեան
 219 առաքինութեանց փխ առաքինութեան
 220 ել փխ և
 220 և առ փխ էառ
 223 զբանակս փխ զբանակն
 224 ամենեքեան փխ ամենեքին
 233 շի՛ և
 235 խորամանկութիւնդ փխ խորամանկութիւնք
 240 վարութանակք իմ ապականիչք փխ զվարութանակս իմ ապա-
 կանիչս
 243 յոճակք խաւարեայք փխ յոճակս խաւարեայս
 247 ձորամուտ փխ ձորամուտս
 262 խորանք փխ խարանք
 263 բազմաւքն փխ զբազումսն
 270 նմա փխ ի նմա
 273 վարդապետութեամբն փխ վարդապետութեամբ
 280 երկինք երկրորդ փխ երկինք
 284 առաւել փխ և առաւել
 285 նիզակաւք իւրովք փխ նիզակաւք
 290 յայտնեցին յետոյ փխ յայտնեցին
 291 իւրեանց փխ միմեանց
 296 մի իւր փխ մի
 299 իբրև փխ որպէս
 302 զաւրաւքն փխ զաւրաւք
 307 զաւրութիւնն փխ զաւրութիւն
 308 երթեալ փխ երթալ
 309 ամաշեսցէ փխ ամաշեաց
 310 խաշահանութն փխ խաշահանունքն
 321 սովորութեանն փխ սովորութեան
 325 արժանատրեցաւ փխ արժանի եղև
 326 ի ցեղէն փխ ի ցեղէ
 329 որդւոցն փխ որդւոյն
 330 մայրն փխ մայր
 330 հինգերորդ փխ երրորդ
 342 առաքինութիւնն փխ առաքինութիւն
 343 անունն փխ անուն
 347 զհամբերութիւնն փխ զհամբերութիւն

350 և ընդ փխ ընդ

354 շիք յախտենից ամէն:

Նշված տարբերակները հիմք են տալիս որոշ սրբագրություններ կատարելու Ա. Վարդանյանի հրատարակած բնագրում: Այսպես.

8—10. Տպագրված է՝ «ամենայն իրք աւգտակարք տան զամենայն աւգնութիւնս ի դարմանս ոգւոց մերոց». պետք է ուղղել՝ «ամենայն գիրք աւգտակարք...»:

120. Տպագրված է՝ «հալածեսցին թռչունք յիրեանց յապալնութենէն». պետք է ուղղել՝ «հալածեսցին թռչունք յիրեանց ապալնութենէն»:

140. Տպագրված է՝ «վասն (զի) հպարտացաւ». պետք է ուղղել՝ «վասն զի հպարտացաւ»:

145/6. Տպագրված է՝ «ի կորուստ եւ ի պարտութիւն մտաց նորա». պետք է ուղղել՝ «ի կորուստ եւ ի պարտութիւն շար մտաց նորա»:

204/5. Տպագրված է՝ «աշաւք տեսանէին, զի եմոյժ զնա ի մարտն». պետք է ուղղել՝ «աշաւք տեսանէին, զի յայտնի եմոյժ զնա ի մարտն»:

220. Տպագրված է՝ «եւ սատանայ պարծելով էառ հրաման». պետք է ուղղել՝ «ել սատանայ պարծելով եւ առ հրաման»:

262/3. Տպագրված է՝ «զի թէ միայն էր, շէին յոյժ մեծ խարանք նորա, այլ մեզ այն շար է, զի զբազումսն խարէ». պետք է ուղղել՝ «...զի բազմաւքն խարէ»:

269/70. Տպագրված է՝ «եթէ կամիմ ձգել ի նա զնետս իմ, լինի ի նմա իրրեւ զվահան ընդզէմ երեսաց նորա». պետք է ուղղել՝ «...լինի նմա իրրեւ զվահան...»:

279/80. Տպագրված է՝ «արար ինձ զերկիրս երկինք». պետք է ուղղել՝ «արար ինձ զերկիրս երկինք երկրորդ»:

284/5. Տպագրված է՝ «խոցոտեաց եւ զձեզ սաստիկ նիզակաւք եւ ձգեաց զնետս իւր զեղեալս». պետք է ուղղել՝ «խոցոտեաց եւ զձեզ սաստիկ նիզակաւք իւրովք...»:

290/1. Տպագրված է՝ «ապա յայտնեցին միմեանց զամբարշտութիւնս միմեանց». պետք է ուղղել՝ «ապա յայտնեցին միմեանց զամբարշտութիւնս իւրեանց»:

Մի ուղղում էլ առաջարկում ենք հակառակ «Պատճառաց զրբի» բոլոր հայտնի ձեռագրերի ընթերցման: Ա. Վարդանյանի հրատարակության 135/7 տողերում կարդում ենք. «Առանց պատասխանիս տալոյ գոցին ուսմունքն մոլարք, որ ասեն եթէ իշխանութիւն ունի նա [սատանայ] բնութեամբ»: Բնութեամբ բառը, մեր կարծիքով, պետք է դարձնել բռնութեամբ¹², որ հաստատվում է Հովհաննես Վանականի մեկնության տվյալներով¹³:

Ինչպես վերը նշվեց, Եփրեմ Ասորու «Հորի մեկնության» հայերեն թարգմանությունը, դատելով նրա լեզվի դասական բնույթից, պետք է դասվի Եփրեմի երկերի մյուս հայերեն թարգմանությունների շարքում, որոնք կատարվել են հիմնականում V դ. առաջին տասնամյակներին: Բարերախտարար այս ընդհանուր դատողությունն ամրապնդվում է մի ավելի որոշակի փաս-

¹² Ասորական բնագրում հավանարար եզել է զԿՐԿՆԻ բառը:

¹³ Հմմտ. Ա. Վարդանյան, Սրբոյն Եփրեմի Մեկնություն..., էջ 86, տողատակ: Ստորև կտեսնենք, որ դա հաստատվում է նաև Եզնիկ Կողբացու «Յոժ ազանդոց» երկի բնագրով:

տարկով, որը կապված է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի աղբյուրների քննության խնդրի հետ:

Եզնիկ Կողբացու աղբյուրների քննության հարցով հիմնավորապես զբաղվել են երկու հետազոտողներ՝ Գ. Գալեմբերյանը¹⁴ և Լ. Մարիեսը¹⁵: Հիմնականում նրանց ջանքերով վեր են հանվել Եզնիկի հետևյալ աղբյուրները՝ Արիստիդես Աթենացու «Ջատագովութիւնը», Մեթոդիոս Ողիմպիացու «Վասն անձնիշխանութեան» (Περὶ ἀντιστοιχείων) երկը, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքը», զրվանականությանը նվիրված մի աշխատություն՝ թարգմանված պահլավերենից ասորերեն, Եպիփան Կիպրացու «Ընդդէմ հերձուածոց» երկը, Գիողորոս Տարսոնացու մի աշխատությունը և, վերջապես, հակամարկիոնական մի գրվածք, որն օգտագործել են Եփրեմ Ասորին և Եզնիկը: Լ. Մարիեսի կարծիքով՝ Եզնիկը ուղղակի կամ անուղղակի կերպով օգտվել է նաև Որոգինեսի, Աքիլևսի, Իրենեոսի, Ադամանտիոսի, Գրիգոր Նյուաացու, Հուստինոսի և Թեոդորոս Մոպսուեստացու աշխատություններից: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ «Եզնիկի զբաղարանը», ինչպես նշում է Լ. Մարիեսը, չի սահմանափակվում անգամ այս պատկանելի ցանկով, աղբյուրների քննությունն անհրաժեշտ է շարունակել, «վստահ լինելով, որ Եզնիկի երկը դեռևս շատ անակնկալներ է պահպանում մեզ համար»¹⁶:

Լ. Մարիեսի պնդումը լիովին արդարացավ, երբ հայտնաբերվեց և Հ. Թորոսյանի աշխատասիրությամբ հրատարակվեց Աթեղահայ Եղեսացու¹⁷ «Թուղթ առ քրիստոնեայս Պարսից աշխարհին» երկը¹⁸: Այդ հրատարակության ներածական հոդվածում Հ. Թորոսյանը բազմաթիվ բնագրական բնդհանրություններ է մատնանշում Աթեղահայի թղթի և Եզնիկի «Եղծ աղանդոց» երկի միջև, որոնք աշխատասիրողին հիմք են տալիս նույնիսկ թարգմանությունը վերջինիս վերագրելու¹⁹:

Մենք կփորձենք ապացուցել, որ Եզնիկը, Աթեղահայի թղթից բացի, օգտագործել է նաև մի ուրիշ ասորական աղբյուր, այն է՝ Եփրեմ Ասորու «Հորի մեկնությունը»: Խոսքը վերաբերում է «Եղծ աղանդոցի» մի փոքրիկ հատվածի, որտեղ Եզնիկը քննում է «չէ սատանայ բռնաւոր և կանխագէտ» միտքը: Սատանան բռնաւոր (այսինքն՝ բռնադատող) չէ, քանի որ կարող է մարդկանց միայն զրդել, բայց ոչ բռնադատել կամ ստիպել շարիք գործելու: Նա նաև կանխագէտ չէ, քանի որ չի կարող կանխատեսել իր գործած

14 Տե՛ս Գ. Գալեմբերյան, Նորագոյն աղբերք Եզնիկայ Կողբացու Ընդդէմ աղանդոց մատենին, Վիեննա, 1919:

15 Տե՛ս L. Mariès, Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de „Contre les sectes“, „Revue des Etudes Arméniennes“, t. IV, 1924, p. 113—205; t. V, 1925, p. 13—124. Ընդհանուր էջակայմամբ՝ [1—206].

16 Նույն տեղում, էջ 85:

17 Աթեղահայն 324—346 թթ. եղել է Եղեսիայի եպիսկոպոսը, տե՛ս R. Daval, Histoire politique, religieuse et littéraire d'Édesse, Paris, 1892, p. 138. Արեղահայ անունն ազգավորված է, հավանաբար նախապես այն հայերեն է տառազարձվել Այեթաղա ձևով (= Aytallāhā):

18 Տե՛ս «Աթեղահայ եպիսկոպոսի Ուսայի Թուղթ առ քրիստոնեայս աշխարհին Պարսից վասն հաւատոյ, ուսումնասիրեաց և ի լատին լեզու թարգմանեաց Յ. Թորոսեան», Վենետիկ, 1942:

19 Նույն տեղում, էջ 20—26:

շարիքների հետևանքները²⁰: Այս միտքն, ահա, որ հիմնավորվում է Հորի կրած փորձության օրինակով, մեր կարծիքով, Եզնիկը փոխ է առել Եփրեմ Ասորու մեկնությունից: Խնդիրը մի փոքր բարդանում է նրանով, որ մոտավորապես նույն միտքը, թեև այլ ձևակերպմամբ, գտնում ենք նաև Աթեղահայի հիշյալ թղթում: Ուստի հարկ ենք համարում համադրաբար բերել բոլոր երեք բնագրերն էլ.

Աթեղահայ²¹

Եփրեմ²²

Եզնիկ²³

Եւ ոչ զաբուփիւն ինչ բանաւոր է սատանայ, թէ բանաբար ինչ ապստամբեաց եւ կամ թէ բանի զօր վարիցէ ի շարիս, այլ պատրանաւք եւ գրգռելով. եւ վկայ զի ասէինն. «Զի՞ կայ մեր եւ քո, Յիսուս որդի Աստուծոյ, եկիր տարածամ կորուսանի զըմեզ»²⁵: Եւ զի ոչ բանի վարէ զօր ի շարիս, այլ որպէս եւ որչափ առնու հրաման՝ այնչափ փորձէ, ի փորձութեանցն իմանամք, որովք փորձեաց զՅովք. զի ոչ որպէս եւ կամեցաւ փորձեաց, այլ որպէս եւ առ հրաման, եւ զի ոչ աւելի քան զըկար մարդկան փորձէ

Առանց պատասխանիս տալոյ գտցին ուսմունքն մոլարք, որ ասին եթէ իշխանութիւն ունի նա բանութեամբ²⁴, զի ահա մարտին, զոր արար ընդ Յորայ, ունիմք զերկոսեանն, զի տկար է եւ անզէտ. տկար է՝ վասն զի խնդրեաց զհրամանն, եւ անզէտ՝ վասն զի հրպարտացաւ, զի թէ զիտացեալ էր, թէ ինքն յաղթի ի պատերազմին, ապա ոչ բնաւ մարտընչէր: Ապա եթէ մարտեա առ յոյս եթէ յաղթեմ, ոչ որպէս կարծեացն զիպեցաւ նմա: Բազումք են որ պարտաւորին յամաթ մեծացուցչաց նորա եւ (հը-

Դարձեալ և ի Յորայ փորձանացն է ուսանել՝ թէ չէ սատանայ բանաւոր և կանխազէտ: Զի եթէ բանաւոր որ ինչ էր նա, ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր աւճան և ապա մխէր ի փորձութիւնսն: Եւ եթէ կանխազէտ էր, ոչ մատչէր փորձել. քանզի զիտէր՝ թէ յորժամ ոչ կարէ յաղթել, յամաթ լինելոց է:

20 Ի դեպ, այս երկու բառերը «Եղծ աղանդոցի» աշխարհաբար բնագրում սխալմամբ թարգմանված են «զորավոր ու կանխազուշակ» (Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց. թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 66): Զորավոր-ի փոխարենն պետք էր դնել բանադատիչ բառը, իսկ կանխազուշակ-ի փոխարենն պահել զբարբառյան կանխազէտ-ը, քանի որ խոսքը ոչ թե ապագան զուշակելու, այլ այն գիտեանալու մասին է: Հիշենք, որ քրիստոնեական մտայնությամբ կանխազէտը միայն Աստված է: Նույն սխալը կատարված է նաև Եզնիկի ուսուցիչ թարգմանության մեջ, որտեղ խնդրո առարկա բառերը վերաբրտադրված են «сильный и всеведущий (ամենազեա)» ձևով (Езник Кохбацу, Книга опровержений: о добре и зле. Перевод, предисловие и примечания В. К. Чалояна, Ереван, 1968, с. 67). Մինչդեռ անհրաժեշտ էր թարգմանել «способный заставить и обладающий даром предвидения . ճիշտ թարգմանությունը ավել է Լ. Մարիեսը. «par violence s'imposant et prescient». տե՛ս Езник de Kolb, De Deo, traduction française, notes et tables par L. Mariès et Ch. Mercier, «Patrologia Orientalis», t. XXVIII, fasc. 4, Paris, 1959, p. [43].

21 «Աթեղահայ եպիսկոպոսի Ուռհայի Թուղթ...», էջ 70, 73:

22 Ա. Վարդանյան, Արքայն Եփրեմի Մեկնութիւն..., տ. 135—146:

23 Езник de Kolb, De Deo, éd. critique du texte arménien par L. Mariès et Ch. Mercier, «Patrologia Orientalis», t. XXVIII/3, Paris, 1959, p. [38].

24 Ինչպես վերը տեսանք, տպագիրն ունի բնութեամբ, որը Հովհաննես Վանականի մեկնության հիման վրա ուղղվել է բնութեամբ. դա հաստատվում է Եզնիկի բնագրով, որտեղ ունենք բնաւոր բառը:

25 Հմմտ. Մատթ. Ը, 29:

դնոսա փորձիչն... եւ զի պարտութիւն) ի կորուստ
 թշ ունի կանխագիտու- եւ ի պարտութիւն շարձ²⁶
 թիւն՝ յայնմանէ յայա է, մտաց նորա:
 որ խառնիխուսն մարտըն-
 շի:

Եփրեմի մեկնությունն ու Եզնիկի երկը երեք կետում, տարբերվելով Աթեղահայի թղթից, համընկնում են իրար.

ա. Եփրեմն ու Եզնիկը նախ և առաջ միևնույն հստակ հարցադրումն են առաջ քաշում. Եփրեմի մոտ այն ձևակերպված է «(սատանայ) տկար է եւ անզէտ», իսկ Եզնիկի մոտ «չէ սատանայ բնաւոր և կանխագէտ» բառերով: Աթեղահայի մոտ այս հարցադրումը բացակայում է:

բ. Եփրեմն ու Եզնիկն այնուհետև մեկ առ մեկ քննում և բացատրում են առաջադրված հարցերը: Աթեղահայն մեկնաբանում է միայն առաջին հարցը:

գ. Թեև տաս տող հետո Աթեղահայն այնուամենայնիվ անդրադառնում է սատանայի անգիտության հարցին, բայց այն փաստարկելիս բոլորովին շեղվում է Եփրեմից ու Եզնիկից: Ըստ Աթեղահայի՝ սատանայի կանխագետ լինելը երևում է նրանից, որ նա խառնիխուսն է մարտնչում, իսկ ըստ Եփրեմի ու Եզնիկի՝ սատանան կանխագետ չէ, քանի որ նախապես չդիտեր, որ Հորին հաղթել չկարողանալով խայտառակ է լինելու. եթե դիտենար, որ պիտի պարտվի, ապա չէր մարտնչի նրա հետ:

Այսպիսով, թվում է, բավականին հիմքեր կան պնդելու համար, որ նրշված հատվածում Եզնիկն իսկապես օգտվել է Եփրեմ Ասորու «Հորի մեկնությունից»²⁷: Սույն փաստը թեև երկրորդական նշանակություն ունի Եզնիկի երկի ուսումնասիրման տեսակետից, սակայն կարևոր է Եփրեմի մեկնության հայերեն թարգմանության թվագրման համար: Թարգմանությունն, ըստ այդմ, պետք է կատարված լինի «Եղծ աղանդոցի» գրություն ժամանակից՝ 440-ական թթ. առաջ:

Л. А. ТЕР-ПЕТРОСЯН

ТОЛКОВАНИЕ ЕФРЕМА СИРИНА НА «КНИГУ ИОВА» КАК ОДИН ИЗ ИСТОЧНИКОВ ЕЗНИКА КОХБАЦИ

Резюме

В статье предпринята попытка доказать, что в состав источников «Книги опровержений» Езника Кохбаци входило также и толкование Ефрема Сирина на «Книгу Иова». Сирийский оригинал этого сочинения утрачен. Из армянского перевода сохранились только предисловие и комментарии к стихам Иов: 1, 1—12. Зависимость Езника

²⁶ Ինչպես վերը նշվեց, շատ բառը տպագրում չկա. այն ավելացրել ենք մենք Մաշտոցի անվան Մատենադարանի 1879 ձեռագրի հիման վրա:

²⁷ Դա չի բացառում, իհարկե, որ նշված տողերը գրելիս Եզնիկն աչքի առաջ է ունեցել նաև Աթեղահայի գրվածքը, մանավանդ որ այլ տեղերում բավականին օգտվել է նրանից:

от толкования Ефрема позволяет определить время осуществления армянского перевода этого сирийского сочинения. Поскольку достоверно известно, что «Книга опровержений» Езника написана в 440-х гг., значит, толкование Ефрема переведено на армянский в первые десятилетия V в.

L. A. TER-PÉTROSSIAN

LE COMMENTAIRE DE JOB D'EPHREM LE SYRIEN COMME
L'UNE DES SOURCES D'EZNIK DE KOLB

Résumé

L'article entreprend de démontrer que le Commentaire de Job d'Ephrem le Syrien fit partie des sources du „De Deo“ d'Eznik de Kolb. L'original syriaque de cette oeuvre est perdu. De la traduction arménienne subsistent seulement la préface et les commentaires de Job 1, 1—12. Le fait qu'Eznik se soit servi du Commentaire d'Ephrem le Syrien permet de préciser l'époque de la traduction arménienne de cette oeuvre syriaque. Puisqu'il est établi que le „De Deo“ d'Eznik fut écrit aux années 440, il s'ensuit que le Commentaire d'Ephrem fut traduit en arménien aux premières décennies du Ve siècle.

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ԵՎ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ
«ՔՆՆԻԿՈՆԸ»

Միջնադարյան հայ մշակույթի նշանավոր գործիչ Գրիգոր Մազիսարոսը, իր ժամանակի ամենազարգացած անհատներից մեկը, հայրենի դպրոցները խորունկ տիրապետելուց բացի, հմուտ էր հելլենական, ասորական և արաբական գիտությունն ու գրականությունը: Նա փիլիսոփա էր, քերական, մանկավարժ, բանաստեղծ, թարգմանիչ, բնական գիտությունների շատագույն, հայրենի երկրում բարձրագույն կրթությունը տարածող և հովանավոր:

Գրիգոր Մազիսարոս Պահլավունին «մի հետաքրքիր դեմք է... իր ժամանակի համեմատ ազատամիտ ու լուսամիտ մի բազմադետ անձ,—գրում է Մանուկ Աբեղյանը:—Նրա մեջ մարմնացել է իր ժամանակի վերածնության մտքի մի կողմը—չբավականանալ միայն կրոնականով և եկեղեցական դպրոցով, վերանորոգել և զարգացնել հայերի մեջ հին հունական գիտությունը... և ընդհանրապես բազմակողմանի գիտանքներ ձևոք բերել...»

Բոլոր ուսյալ աշխարհականների մեջ առանձնապես փայլում է այս Պահլավունի իշխանը..., իսկական լուսավորական գործիչ: Նա ոչ միայն ուրիշներին հորդորել է գիտությամբ պարապելու և դպրոց ունենալու, այլ և ինքը շարունակ սիրով և անխոնջ հետևել է դրան՝ նշանաբան ունենալով «պատարուն ընթերցմամբ», «գիտութեամբ լուսաւորել զանձն»¹: Նա ուներ իր դպրոցը, որի, ինչպես նաև ուրիշ դպրոցների համար մշակել է ճեմարանական ծրագիր, ձևոք է բերել ձեռնարկներ և հանձնարարել ուսուցման:

Գործունեության այս ճանապարհին Գրիգոր Մազիսարոսը հանդիպում է Անանիա Շիրակացու «Քննիկոնին»:

Անանիա Շիրակացին «Քննիկոնը» գրում է Անաստաս կաթողիկոսի (661—667 թթ.) հանձնարարությամբ: Այդ մասին ուղղակի վկայություն ունենք Ստեփանոս Ասողիկի Պատմութեան մեջ²: Նրանից առաջ, Հ. Դրասխանակերտցին այս նույն բանը հաղորդում է առանց «Քննիկոն» անունը տալու³: Նրա վկայությամբ «Քննիկոնը» կաթողիկոսի մահից հետո ուշա-

1 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ (11—19-րդ դդ. 30-ական թթ.), Երևան, 1946, էջ 16—19:

2 Մասենազարան, ձեռ. № 2865, էջ 170 ա: Հմմտ Ստ. Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 285: Հրատարակիչ Ս. Մալխասյանը «Քննիկոն» բառի փոխարեն գրել է «Քրօնիկոն» և ստորին լուսանցքում ծանոթագրել. «Ձեռագրում աստ և ստորև «Քննիկոն»: Այդպես է նաև Տարոնացու Պատմութեան բոլոր ձեռագրերում: (Տե՛ս Ա. Մարկվոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 7, էջ 69—70):

3 Հ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92—93:

դրույթյան շի արժանանում, և ինչպես հաստատում է Գրիգոր Մագիստրոսը, պահվում է կաթողիկոսարանում⁴:

Պետրոս Գետադարձին 1036 թ. դահաղրկելու և մի տարի անց վերստին գահին հաստատելու առթիվ Գ. Մագիստրոսը մի նամակ է ուղարկում նրան, որն ունի այսպիսի խորագիր. «Առ անք Պետրոս ի ժամանակի խուժան յաննելոյ ի քաղաքին, ի վերայ նորա բան մխիթարական և հարցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Քննիկոնն անուանեն»: Վերնագիրը ցույց է տալիս, որ նամակում երկու հարց է շոշափվել. առաջինը Պետրոս Գետադարձին աթոռից զրկելու և վերստին աթոռին հաստատելու մասին մխիթարական խոսք է⁵: Յավելով տեղի ունեցածի համար, Գ. Մագիստրոսը մխիթարում է նրան, ողևորում, հորդորում, խորհուրդ է տալիս մաքի տեսությամբ, հոգու աչքով շուրջը նայել և ծառայել ժամանակին («...միայն պարտ է աւագ աշօք շուրջ հայել և ժամանակի ծառայել»)⁶:

«Ժամանակի ծառայել» է նաև Անանիա Շիրակացու «Քննիկոն» մասին հոգալը, որին Մագիստրոսը անդրադառնում է նամակի երկրորդ կեսում: Բերում ենք նամակի այդ մասը, միայն խորագրի «հարցումն» բառը ուղղում ենք «հայցումն» ձևով, հիմք ունենալով Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագիրը⁷, ապա՝ նամակի մեջ նույն նպատակով օգտագործող «զհայցումս» բառը և, վերջապես, թղթի ավարտը, ուր բացահայտվում է նամակի նպատակը. այնտեղ Գրիգոր Մագիստրոսը Պետրոս Գետադարձից Անանիա Շիրակացու «Քննիկոնի» նոր ընդօրինակություն է խընդրում, հայցում: Ուրեմն՝ «...Հայցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Քննիկոնն անուանեն»:

«Գրիգոր Մագիստրոսի թղթերն ունեն վերնագրեր, — գրում է Մ. Արեղյանը, — որոնք ծագում են հավանորեն կամ հեղինակից, կամ նրան մոտիկ մարդկանցից, քանի որ վերնագրեր դնողներն փմացել են, թե ինչ առթիվ են գրված և ումն են ուղղված այս կամ այն թուղթը: Գրության բովանդակությունից միայն՝ երբեմն շի փմացվում այդ»⁸: Ինչպես մյուս թղթերում, այնպես էլ այստեղ դրության բովանդակությունը և խորագիրը լիակատար համապատասխանություն մեջ են, որն հաստատվում է նաև Սահեփանոս Ասողիկի հանրահայտ վկայությամբ⁹, միջնագարյան մատենագիտական ցանկերով ու ձեռագրացուցակներով¹⁰:

Նամակի սկզբից տեղեկանում ենք, որ Անանիա Շիրակացու գիրքը, որ կոչվում է «Մեծ Քննիկոն», դանվում է «տէրունեան տանը», այսինքն՝ կաթողիկոսարանում, և մինչև Պետրոս Գետադարձի կաթողիկոսական գահ բարձրանալը (1019 թ.), անշքացած, թաքուն պահում էին գրվանի տակ: Այս նշանակում է, որ 667 թվականից (Անաստաս կաթողիկոսի մահը)

4 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8:

5 Ուրեմն նամակը գրված է այդ դեպքերից անմիջապես հետո, 1038 թ.:

6 Նույն տեղում, էջ 7:

7 Գ. Զարբանալյան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 579:

8 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 21:

9 Ստ. Տարոնացի, Պատմութիւն տիեզերական, էջ 285:

10 «Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամրդուլ՝ համարով, անհինգ լիցատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետին», «Արարատ», 1903, էջ 178: 1891 Շ. Տաշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վիեննա, 1895, էջ 253: 2. Թովմյան, Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 134 և այլն:

«Քննիկոնը», որի մեջ գտնվում էր նաև հայոց անշարժ տոմարը, արգելված էր կաթողիկոսարանում:

Գրիգոր Մազիստրոսը «Քննիկոնն» ուսումնասիրել էր մինչև Պետրոս կաթողիկոսին գահազրկելը: Նամակի ընդհանուր ոգուց երևում է, որ նամակից առաջ և «Քննիկոնն» ուսումնասիրելուց հետո Պետրոս կաթողիկոսի և Գրիգոր Մազիստրոսի միջև խոսակցություն է տեղի ունեցել, որտեղ Շիրակացու աշխատության դադարի պահինը պատճառաբանվել է նրա «խրթին և անշայտաբար», այսինքն՝ «զժվար հասկանալի», «ըստ իմաստից մթին», «անորոշակի» գործ լինելով: Գրիգոր Մազիստրոսը այդ տեսակետը փարատելու համար, նամակով պարզաբանում է աշխատության բովանդակությունը, դրվատում նրա գիտականությունը, նշում գործնական կարևորությունն ու անհրաժեշտությունը, որպես ուսումնակրթական ամբողջ համակարգի դասագրքի, և մի օրինակ էլ խնդրում, որպեսզի օգտագործի իր դպրոցում: Այսպես է գիմում կաթողիկոսին.

«Փոխան Յիսուսի, համարձակիմք, միշտ սովորեալ յառատաձիր պարգևս, զկարևորսն և զպիտանացուան յարատեւական բաշխելով քեզ, որ ոչդ երբէք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակացնոյ, որ բազում աշխատութեամբ և յաճաշու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յօրնաբեղուն մատենից. յորում և ենթակայացեալ են ոչ միայն բառիցն արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունս. որ են այժմ ի տան տէրունեան, զոր նախքան զքեզ խրթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին... յորում մթերեալ են տոգորք աստուածային, և ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան, և նախագասել է թուականութեանն և երաժշտականութեանն, որք են ի տարորոշ քանակէ տարակացեալք, իսկ երկրաշափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ. և զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք և մակացութիւնք, մատենագրութիւնք և զրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հռետորական»¹¹: Ինչպես տեսնում ենք, «Քննիկոնը» ուսումնակրթական որոշակի համակարգի, այս դեպքում հռետորական կրթության դասընթացի դասագիրք է, որը պարունակում է «բառիցն արհեստք» և որը Անանիա Շիրակացին համարում է «հռետորական ուսումն»: Քառյակ արվեստները կամ գիտությունները նույնպես բնկած էին հույն փիլիսոփա Պլատոնի դաստիարակության հիմքում: Մեր թվարկության սկզբներին, գանազան փոփոխություններից հետո, դրանց վրա հենված անտիկ դասընթացը հետևյալ գիտություններից էր կազմված. քերականություն, հռետորություն, տրամաբանություն, թվաբանություն, երկրաշափություն, երաժշտություն և աստղագիտություն:

Քրիստոնեական եկեղեցին, որն այնքան նպաստել էր անտիկ կուլտուրայի ոչնչացմանը, V դարի սկզբներին փորձ արեց ի մի բերել անտիկ գիտելիքների նվազագույնը, որն իրեն անհրաժեշտ էր: «Զի կարելի հասկանալ Աստվածաշունչն ու եկեղեցու հայրերին, պաշարել հեթանոսության ու հերետիկոսության դեմ առանց իմանալու հռետորությունը, քերականությունը, գիալեկտիկան, պատմությունը և նույնիսկ բնական գիտությունները», — գրում է եկեղեցու հեղինակություններից մեկը, Օգոստինոսը (354—430 թթ.)¹²:

¹¹ Գրիգոր Մազիստրոսի Բզմեբը, էջ 8:

¹² «Միջին դարերի պատմություն», մ. Ա., Երևան, 1958, էջ 266:

IV դարի սկզբներին Մարցիանոս Կապելլան տալիս է այդ առարկաների շարադրանքը, Բոհեցիոսը (481—525 թթ.) գրում է տրամաբանության, բարոյագիտության, թվարանութիան, երկրաչափության և երաժշտության դասագրքեր: VI դարում Կասիոդորը առաջին անգամ գործածում է «յոթն ազատ արվեստներ» արտահայտությունը, և այն դիտում որպես քրիստոնեական աստվածաբանության նախապատրաստական ուղղափառ արտաքին ուսմունք: Իսիդորը (556—636 թթ.) յոթ ազատ արվեստներից առաջին երեքը՝ քերականություն, հոնտորություն, դիալեկտիկա դասավորում է իբրև «եռուղի», իսկ մյուս չորսը՝ թվաբանություն, երկրաչափություն, երաժշտություն և աստղագիտություն՝ իբրև «քառուղի» դասընթացներ, «ըստ որում «եռյակը» համարվում էր ուսուցման առաջին աստիճանը, «քառյակը»՝ բարձր: Այդ առարկաները մտան միջնադարյան բոլոր դասագրքերում և պահպանվեցին մինչև 15-րդ դարը»¹³:

IV—V դարերում գոյություն ունեին քերականների, հոնտորների և փլիսոփաների դպրոցներ: «Քերականների դպրոցներում պարապմունքների շարունակվում էին չորս տարի, որից հետո երիտասարդը կամ ուսումնավարտված էր համարում կամ ընդունվում էր հոնտորական դպրոց... հունական, լատինական կամ խառը հոնտորական դպրոց, որի տեսությունը նույնպես չորս տարի էր»¹⁴: Ահա միջնադարյան այս տիպի դպրոցի համար էր դասագիրք ստեղծել Անանիա Շիրակացին, որի առանցքը քառյակ արվեստներն էին, որի մեջ, ինչպես նշում է ինքը, նաև՝ «ամենայն բոլոր վարժումն հոնտորական»¹⁵:

Գրիգոր Մագիստրոսը այնուհետև պարզաբանում է, որ «Քննիկոնի» մեջ հավաքված նյութերը Անանիա Շիրակացին քաղել է քաղղեացիների, հույների և այլ ազգերի մատենագիրներից, որոնք այդ ժողովուրդների մոտ ուսումնասիրվում էին արդեն որպես իմաստասիրական գիտություն, որպես հոնտորական ուսումն: Քանի որ ովքեր դրանցով նախապես չեն կրթված, բոլորովին հնարավոր չէ այդպիսիներին աստվածաբանության մեջ մուտք գործել. «Թեպէտ և մասնաւոր զփոշէտեսական զօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղուանոցի այդր ի բազմավէտ մատենադրից Քաղղեացոց և Յունաց և ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ, որք նախ քան զայնոսիկ հաւաքեալն մատեանս, մակացու եղեալ իմաստասիրութեան, քան զի որք ոչ նախուստ կրթեալք են, բոլորովին ոչ գոյ հնար թեակոխել զայնպիսի աստուածաբանութիւնս. քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և անտուստ աստուածաբանականն... վասն որոյ և Պղատոն իսկ զգուշացուցանէ այսպէս յիրումն աստուածաբանութեանն. Աներկրաչափական որ մի ներամտեսցէ. զայսոսիկ ասելով. զի Մի որ անկատար ի քառիցն ենթակայէ մտցէ ի լսարանն...»:

Գրիգոր Մագիստրոսը գիտությունների դասակարգման վերը բերված ձևակերպումը վերցրել է Անանիա Շիրակացու «Քննիկոնից», որի նորերս հայտնաբերված հատվածում, որը Գրիգոր Մագիստրոսը անվանում է «տո-

¹³ «Միջին դարերի պատմություն», խմբ. աղագ. Ս. Գ. Սկազկին և ուրիշներ, Երևան, 1975, 735—736:

¹⁴ Г. Е. Жураковский, Очерки по истории античной педагогики, Учпедгиз, М., 1940, стр. 354, 362.

¹⁵ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 8—9:

գորք աստուածային» կամ «էակաց խոկմունս», կարգում ենք. «Զի բնականն ամենևին մարմին է և աստուածականն ամենևին անմարմին, և ուսումնականն միշակ երկուցն, զի ունի մասն ի մարմնոյ և յանմարմնոյ, վասն այն ի միշի բնաբանականին և աստուածաբանականին եղ զուսումնականն, զի զկնի ամենևին մարմնականին վարժելով զամենևին անմարմնական զտանիմք»: Անանիա Շիրակացին, իր հերթին, այն վերցրել է Դավիթ Անհաղթից¹⁶:

Անհրաժեշտ է նշել, որ հոետորական դասընթացի տարողութիւնը ավելի բնագրծակ էր: Նշված առարկաների հետ դասավանդվում էին նաև բժշկութիւն¹⁷, տոմար («Քննիկոնի» մեջ)¹⁸ և այլ առարկաներ:

«Եւ արդ՝ քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ, բեր ոչինչ խրթին և անյայտարար. կամիմք զհայցուած մեր ծանուցանել մերոյ լուսաւորչիդ. ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառութիւնք և հանդէսք, որ ոչ երբէք ի ստադին վարժելոյ գրամարտկոսաց և քերդողաց հնացեալ, ի մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եղև անկանել, այլ և բազմաց, որպէս ի մերոյն Մովսիսէ¹⁹ ուսեալ, գտեալ զտաք և յայդմ մատենի մակազրութեան վերծանեաք: Քանզի Արամեան սերի հպարտութիւն և անամոք բնութիւն և խստապարանոց բարս ոչ ստորակայի յայտասիկ կրթութիւնս յարատևական հաւանել, կամ եթէ ոչ փոյթ, որք պետականին հասին բախտի, մեծարու լինել և խուզել զխոհեմական արհեստս ի զարդ քարզոնոսական ապարանին, որպէս մեծ Փալումէոսն այն և որք այլք այդպիսիք»²⁰:

Մագիստրոսը, որպես իր պատճառաբանութիւն ամենահարմար ապացույց, բերում է իր անձի օրինակը, ցույց տալու համար, որ եթե ինքը հասկացել է Անանիա Շիրակացու «Քննիկոնը», պատճառն այն է, որ նա ուներ հենց այդ բնագավառի կրթութիւն, որ ձեռք է բերել արաբական, քաղղեական և հունական մատենագիրներից. «Եւ զի բազում աշխատասիրութեամբ խոնջեալ և տազնասպեալ, մինչ տակաւին յիմում անտիականն

¹⁶ «Եւ պարտ է զիտել, զի բնաբանականն զառաջինն ընկալաւ դաս... որպէս ամենևինք նիւթական: Իսկ ուսումնականն զմիջինն ընկալաւ դասաւորութիւն, այսինքն ի մէջ բնաբանականին և աստուածաբանականին, վասնզի և նիւթաւոր է, որպէս աստուածաբանականն: Իսկ աստուածաբանականն... զվերջին ընկալաւ դասաւորութիւն, վասնզի ոչ է կարողութիւն յետ բնաբանականին յաստուածաբանականն ամբառնալ, վասնզի և ոչ է պարտ յամենևինք նիւթականացն՝ այն ինչ աննիւթականս մատչել...»: (Դավիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք. համահավաք բնական բնագիրք և առաջարանը Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 87—88): Բնականաբար այն ծանոթ էր նաև Գ. Մագիստրոսին, ինչպես երևում է նշված նամակի շարունակութիւնից:

¹⁷ Т. В. Блаватская, Из истории греческой интеллигенции эллинистического времени, М., 1983, с. 24: Robert Browning, Bizantinische Schulen und Schulmeister, „Das Altertum“, Berlin, 1963, B—9, N 2, s. 19.

¹⁸ Մարտիան, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրութիւն մեջ, Երևան, 1983, էջ 18, 20:

¹⁹ Գ. Մագիստրոսի Թղթերը, էջ 105, 228:

²⁰ Ստ. Տարանցի, Պատմութիւն, էջ 285:

¹⁹ Գրիգոր Մագիստրոսը նկատի ունի Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն» առաջին գրքի 9 գլուխը՝ «Մեր առաջին թագավորների և իշխանների անիմաստասեր բարքի մասին»: Շարունակութիւն մեջ նկատի է առնված դարձյալ նույն գրքի 8 գլուխը, ինչպես նաև Ողբը (Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, էջ 8, 9, 11—13, 452):

²⁰ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 9:

ելով տիս, հազիւ հազ մականացու այսմ եղեալ, սուղ ինչ էականն հասեալ, ըստ որումն են յԱրարացոց և Քաղղէացոց և Յունաց, ոչ դանդաղեցայ ըննութեամբ զփորձ առնուլ»²¹:

Գրիգոր Մազիստրոսի և նրա կրթութեան վերաբերյալ ունենք այսպիսի վկայութիւն. «Յոյժ իմաստուն և հանճարեղ, և ներքին և արտաքին ուսմամբ ներկրթեալ վարժմամբ և մանկական տիոց՝ հայկական և յունական դպրութեամբ, մինչև հասեալ և հոետորական աստիճան փիլիսոփայութեան»²²: Եթէ կենսագիրը նկատի ունեցած լինի նույնիսկ նամակի վերը բերված տողերը, այդ ապացույց է կրկին այն բանի, որ «Քննիկոնը» հոետորական ուսման դասընթաց է, և Մազիստրոսը այն ձեռք է բերել մեծ դժվարութիւններով՝ այլևայլ դպրութիւններից, ուստի նամակի վերջում նա խնդրում է մի նոր օրինակ «Քննիկոնից»:

Այդ օրինակը պետք է հեշտ կարգացվի, որ ինքը շարշարվի թե՛ ընթերցելու, թե՛ ուսումնասիրելու ժամանակ: «Եւ խնդրեմք ի բումմէ լուսափայլութենէդ զնորագոյնն մատեան շնորհել մեզ, զի այժմ մերձ առ ծերութիւն հասեալ եմք, և դիւրին վերժանեալ հասցուք ըստ կարողութեան, զի մի յերկուցունց կողմանցն ունիցիմք մարտակցութիւնս՝ տեսութեան և մտածութեան, քանզի լուսով քո տեսանեմք զլոյս: Ապա եթէ ոչ այսոքիկ հաճոյ թուեսցի բումդ աստուածապետական իշխանութեանդ, զոր և կամեսցի, այն իբրև յաստուածուստ պարզև համարեալ է մեզ: Ողջ լեր, փոխան Աստուծոյ»²³:

Գրիգոր Մազիստրոսը ցանկանում է ունենալ «Քննիկոնի» ընդօրինակած նոր մատյան, որը գրված լինի ոչ թե Շիրակացու «Քննիկոնը» շարադրելիս օգտագործած գրատեսակով, որը դժվար ընթեռնելի էր, այլ դյուրընթեռնելի գրատեսակով, այսինքն՝ բոլորգրով²⁴: Գրիգոր Մազիստրոսը Պետրոս կաթողիկոսից ստանում է իր խնդրածը, Անանիա Շիրակացու «Քննիկոնից» մի օրինակ՝ «զնորագոյնն մատեան»: Սանահինցիներին գրած նամակում հիշում է Սանահինի «հոետորական և երաժշտական վարժարանսն», ուր սովորում էին երիտասարդները «բոլոր արհեստից և մականցութեան»²⁵: Իսկ Պետրոս Գետադարձի մոտ գտնվող իր աշակերտներին խորհուրդ է տալիս, թե ինչ ծրագրով պետք է պարապել, որն ավարտվում է այսպես. «Զի յամենայն իմաստասէրն խոստովան լիցի զգիտութիւն և ուրացեալ զանգիտութիւն, մանաւանդ ըստ կարողութեան քառիցըն արհեստից՝ թուական, երաժշտական, երկրաչափական, աստղաբաշխական»²⁶: Աշակերտներն այն ձեռքի տակ պետք է ունենային, որպէսզի նրանից սովորելին:

Պետրոս Գետադարձից «զնորագոյնն մատեան» ստանալուց հետո այն մտցնում է ուսումնական իր ծրագրի մեջ: Այդ ժամանակից քառյակ գիտութիւնը դարձավ հայ վարդապետարանների ուսումնական ծրագրի անբաժանելի մասը: Հայ վարդապետարանի շրջանավարտի ձեռք բերած գիտութիւն-

21 Անդ:

22 Ա. Ալպոյանցյուն, Պատմութիւն հայ դպրոցի, Կահիրե, 1946, էջ 112—113:

23 Անդ, էջ 9—10:

24 Շիրակացին, ինչպէս երևում է նրա ժամանակից, հենց նրա գործերի ընդօրինակութիւններից մեզ հասած պատասխիկներից, զրել է գրչագրով (ուղղագիծ երկաթագրով):

25 Գրիգոր Մազիստրոսի Քննիկոնը, էջ 105: Հմմտ. Ա. Մարեոսյան, նորից Շիրակացու «Քննիկոնի» մասին, ՊԲԶ, 1981, № 2, էջ 228:

26 Նույն տեղում:

ների մեջ էր. «զբնաբանականն, զուսումնականն, զաստուածաբանականն, զթուականն, զերաժշտականն, զերկրաչափականն և զաստղաբաշխականն և զամենայն իմաստս հոետորական հանճարոյ արտաքին փիլիսոփայութեան...», — ինչպես նշում է Կիրակոս Բանասերը²⁷:

«Քննիկոնի» պարունակութեան մեջ էր նաև հայոց անշարժ տոմարի Անանիա Շիրակացու շարադրանքը: Հովհաննես Գրասխանակերտցին գրում է, որ Անաստաս կաթողիկոսը Անանիա Շիրակացուն հանձնարարել է գրել Հայոց անշարժ տոմարը: Ասողիկը հուշում է, որ Հայոց անշարժ տոմարը գտնվում էր «Քննիկոն» հրաշազան մատյանի մեջ, որ կաթողիկոսի պահանջով շարադրել էր Շիրակացին: Մագիստրոսը ներկայացնում է «Քննիկոնի» պարունակությունը՝ քառյակ արվեստներից դուրս, նաև այլ արհեստներ, որի մեջ՝ նաև տոմարական արվեստը, մակացություններ, մատենագրություններ, միով բանիվ, ողջ հոետորական դասընթացը: Այս ամենն ապացուցվում է նորահայտ նյութերով:

Պետրոս կաթողիկոսին ուղղված Գրիգոր Մագիստրոսի նամակը Անանիա Շիրակացու «Քննիկոնի» մասին վավերական եզակի փաստաթուղթ է, մատենագրական, մատենագիտական անգնահատելի աղբյուր Անանիա Շիրակացու անհայտացած երկի մասին: Նրա մեջ ներկայացված է «Քննիկոնի» բովանդակությունը, աղբյուրները, նրա տեղը հայ միջնադարյան ուսումնակրթական համակարգում: Նամակը նաև անփոխարինելի ուղեցույց է Անանիա Շիրակացու «Քննիկոնը» վերականգնելու ճանապարհին:

Նամակի «Քննիկոնին» վերաբերող հատվածը բանասիրության ուշադրությանն է արժանացել ավելի քան հարյուր տարի առաջ: Գ. Զարբհանալյանը այն հիշում է որպես Պետրոս կաթողիկոսին ուղարկած «ճմտական և գեղեցիկ» նամակներից մեկը²⁸: Անցյալ դարի վերջերին Գ. Տեր-Մկրտչյանը օգտագործում է Անանիա Շիրակացու ժառանգության ճակատագիրը պարզելու կապակցությամբ²⁹: Մ. Հայրապետյանը նամակից քաղվածք է բերում ցույց տալու համար, որ Շիրակացին սովորել է «քերականաց և հոետորական դպրոցներում»³⁰:

Կ. Կոստանյանցը 1910 թ. հրատարակած Գրիգոր Մագիստրոսի Թղթերի ծանոթագրություններից մեկում, նկատի ունենալով սույն նամակը, գրում է. «Տ. Պետրոս ևս հոգատարություն է ունեցել ձեռագրերի մասին, նա ազատել է կորստից Անանիա Շիրակացու մեծ Քննիկոնը, որը սակայն մեզ չի հասել. այդ առիթ է տվել Մագիստրոսին, բողոքել «Արամյան ազգի անմտության» վրա, մտաբերելով և Մ. Խորենացու տրտունջը, և գոհունակություն հայտնել կաթողիկոսին, որ ձեռագրերը ժողովել և տեղավորել է եկեղեցում»³¹: Այստեղ միայն պետք է նկատել, որ ոչ թե Պետրոս կաթողիկոսն է հավաքել, այլ մինչև նա, դեռևս Անաստաս կաթողիկոսի ժամանակ, Շիրակացու գործը և օգտագործած աղբյուրները գտնվում էին կաթողիկոսարանում:

27 Կ. Հովանիյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ 1—2:

28 Կ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 579:

29 Կ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1886, էջ 12:

30 Ս. Հայրապետյան, Անանիա Շիրակացի, կյանքն ու գործունեությունը, «Մատենագրանի գիտական նյութերի ժողովածու», Երևան, 1941, № 1, էջ 7:

31 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 295:

Նամակին ավելի հիմնավոր անդրադառնում է Մ. Արեղյանը: 1946 թ. հրատարակած «Հայոց հին գրականության պատմության»՝ Գրիգոր Մազիստրոսին նվիրված բաժնում նա գրում է. «Ուսումը լինում էր հայերեն, հարկավոր էր ունենալ հայերեն լեզվով գրքեր: Դրա համար կային հին թարգմանությունները, ինչպես Ուսմպիանոսի առակները, որը հիշում է Մազիստրոսը (ՄԸ, էջ 132): Կար և Անանիա Շիրակացու «Մեծ Քննիկոնը»,— այդուհետև մթերեալ են,—ասում է նա,—տոգորը աստուածային և հնթակայեցեալ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն... երկրաչափութեանն և աստղաբաշխութեանն... և զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք և մակածութիւնք, և զրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հոնտորական»³²: Ուրեմն առաջին անգամ Մ. Արեղյանն է նշում, որ Անանիա Շիրակացու «Քննիկոնը»՝ Մազիստրոսի կողմից օգտագործվել է որպես դասագիրք իր հիմնած ճեմարանում³³:

1959 թվականին «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» աշխատության մեջ Գ. Պետրոսյանը, խոսելով Մազիստրոսի դպրոցի մասին, կրկնում է Մ. Արեղյանին. «Դասավանդումը կատարվում էր հայերեն լեզվով, իսկ որպես դասագրքեր՝ օգտագործվում էին թարգմանությունների հետ միասին նաև ինքնուրույն աշխատություններ: Մազիստրոսը այդ աշխատություններից բարձր էր գնահատում հատկապես Անանիա Շիրակացու «Մեծ Քրոնիկոնը», որովհետև այնտեղ, գրում է նա, ...մթերեալ են. և այլն»³⁴: Մ. Արեղյանի մոտ օգտագործված «Մեծ Քննիկոնը» այստեղ սխալ կերպով դարձել է «Մեծ Քրոնիկոն»³⁵:

32 Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, էջ 20—21:

33 Հայ դպրոցի և մանկավարժության պատմության ուրվագծերում Ա. Մովսիսյանը նույնպես անդրադառնում է սույն նամակին (Ա. Մովսիսյան, Ուրվագծեր Հայ դպրոցի և մանկավարժության պատմության (5—15-րդ դարեր), Երևան, 1958, էջ 221):

34 Գ. Պետրոսյան, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, էջ 127, 131:

35 Որ Գ. Պետրոսյանը անմիջապես Մազիստրոսի Թղթից շի օգտվել, երևում է սույն բաղվածքի նախորդ պարբերությունից. «Գրիգոր Մազիստրոսի մանկավարժական հայացքների մասին մենք որոշակի կարծիք կարող ենք կազմել Տեր Պետրոսին ուղղված նրա վերահիշյալ Թղթից, որտեղ նա պարզ կերպով շարադրել է, թե ինչպես պետք է կաղմակերպվի ուսումը, ինչից պետք է սկսել և ինչով վերջացնել»,—գրում է Գ. Պետրոսյանը (էջ 129): Սակայն բերված փաստերը ոչ թե Տեր Պետրոսին ուղղված վերահիշյալ Թղթից են, որ գտնվում է «Քրոնիկոնի» 8—11 էջերում, այլ Բարսեղ և Եղիշե աշակերտներին ուղարկած նամակից, որը գտնվում է նույն գրքի 105—106 էջերում: Իսկ որ Պետրոսյանի ազդյուրը Մ. Արեղյանն է, երկվում է ստորև բերված օրինակից.

Մ. Արեղյան, նշվ. աշխատությունը, էջ 20:

«Այս էլ, ուրեմն առաջին շրջանի դասընթացն է: Ուսումը պետք է սկսել Ս. գրքի ընթերցանությամբ և առասպելավարժությամբ: Ապա հոմերական ու պղատենական և այլ գրքերի հատվածներից հետո «չարս արհեստները» թվարանություն, երաժշտություն, երկրաչափություն, աստղաբաշխություն և նոր անցնել երկրորդ աստիճանի ուսման, որ է բերականություն և մյուսները»:

Գ. Պետրոսյան, նշվ. աշխ. էջ 129:

«Ըստ Մազիստրոսի՝ առաջին աստիճանում ուսումը պետք է սկսել Ս. գրքի ընթերցանությունից և առասպելավարժությունից: Դրանից հետո պետք է կարդալ հոմերական և պղատենական ու այլ գրքերից հատվածներ և ապա ձեռնամուխ լինել «չարս արհեստներին» թվարանության, երաժշտության, աստղաբաշխության ուսումնասիրությանը: Միայն այս բոլորից հետո կարելի է սկսել երկրորդ աստիճանը՝ ուսումը, որն

Գրիգոր Մազիսարոսի նամակին Գ. Պետրոսյանը կրկին անդրադառնում է 1980 թվականին: Անանիա Շիրակացու գիտական ժառանգության ուսումնասիրությունը համարելով ավարտված «Ֆիզիկա-մաթեմատիկական և այլ գիտությունների պատմության տեսանկյունից», գտնում է, որ «մնացել են սկզբնաղբյուրների հետ կապված որոշ կնճառահարցեր»³⁶, որոնց ինքը պետք է անդրադառնա, մանավանդ, որ «որոշ նոր ուսումնասիրություններում «Քննիկոնի» բովանդակությունը բխեցնում են Գրիգոր Մազիսարոսի նամակից»:

Ժամանակին որդեգրելով Մ. Արեղյանի տեսակետը նա հայտարարում էր, որ Մազիսարոսը իր դպրոցում դասավանդվող «աշխատություններից բարձր էր գնահատում հատկապես Անանիա Շիրակացու «Մեծ Քրոնիկոնը», այժմ ժխտում է այն, որպեսզի արդարացնի իր նոր որդեգրությունը, այսինքր՝ «Քննիկոնը» տոմարական աշխատություն է, ուրիշ ոչինչ»³⁷,

«Մեր «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում...» աշխատության մեջ,—պարզաբանում է Գ. Պետրոսյանը,—տոմարական հարցերը քննության շնչ են հնթարկվել, որոշ հարցեր՝ կապված Գրիգոր Մազիսարոսի նամակի հետ, իրենց լուսարանությունը շնչ ստացել»³⁸: Սվ ահա սկսում է նամակի «լուսարանության» առաջին հերթը. «Գրիգոր Մազիսարոսի նամակի վերնագրում նշված է «Մեծ Քննիկոն», բնագրում «Քննիկոն» բառը չի գործածվում: Ավելին, նամակում բերված գիտությունների շարքում «Քննիկոնի» մասին ոչ մի հիշատակություն չկա: Ամբողջ նամակում ոչ մի բառ չկա Անանիա Շիրակացու Անաստաս կաթողիկոսի կողմից արված հանձնարարությունների մասին: Այս ամենը ցույց է տալիս, որ վերնագիրը հետո է գրված, և նրա մեջ նշված «Մեծ Քննիկոնը» ոչ մի առնչություն չունի նամակի հետ, դա հետագայում կատարված հավելում է», որ «գրչագիրները շտրանալով հարցի էության մեջ, բառ իրենց նախասիրության վերնագիր են դրել և այնտեղ էլ գործ ածել «Քննիկոն» բառը: Մազիսարոսն իր նամակին այդպիսի վերնագիր դնել չէր կարող»³⁹:

Եթե Պետրոսյանի կարծիքով «Քննիկոնը» միայն տոմար է և ուրիշ ոչինչ, նշանակում է Մազիսարոսի դպրոցում թվարանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունը Անանիա Շիրակացու

«Առասպել» բառը նշանակում է զրույց աստվածների և դյուցազների մասին, և առակ արդի սովորական իմաստով»:

ընդգրկում է քրեականությունը և այլ առարկաներ: «Առասպել» բառը և զրույց էր աստվածների ու դյուցազունների մասին և առակ այն իմաստով, ինչպես այժմ է հասկացվում»:

36 Գ. Պետրոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», ՊԲՀ, 1980, № 2, էջ 212:

37 Ա. Արբահամյանը Անանիա Շիրակացու «Քրոնիկոնը» տոմարական աշխատություն է համարել Շիրակացուն նվիրված մենագրության մեջ (1944 թ., էջ 105): 1979 թ. Շիրակացու Մատենագրության աշխարհաբար հատորյակի առաջաբանում Ա. Արբահամյանը և Գ. Պետրոսյանը գրում են. «Շիրակացու տոմարական աշխատություններից ամենակարևորը «Քրոնիկոնն» է (էջ 14): Իր հաջորդ հոդվածում Գ. Պետրոսյանը «սրբազրում» է. «Անանիա Շիրակացու տոմարական աշխատությունը հայ մատենագրության մեջ հայտնի է «Քննիկոն» կամ «Քրոնիկոն» անվան տակ (ՊԲՀ, 1983, № 4, էջ 132):

38 Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., ՊԲՀ, 1980, № 2, էջ 212, ծն. 1:

39 Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 215:

«Քննիկներից» շին սովորել, ինչպես մի ժամանակ կրկնում էր ինքը⁴⁰: Հաջորդ հոդվածում (1983 թ.)⁴¹ պնդելով, որ «Անանիա Շիրակացու՝ գիտության պատմության հայտնի տոմարական աշխատությունն է», որ «Քննիկներ բացի տոմարական նյութից ու աղյուսակներից ուրիշ ոչինչ չի պարունակում»⁴², սկսում է «պարզաբանել» որոշ հարցեր՝ կապված Գրիգոր Մազիսարոսի նամակի հետ: «Այժմ դիմենք Գրիգոր Մազիսարոսի նամակին՝ ուղղված Պետրոս կաթողիկոսին, որովհետև այդ նամակի վերնագրում տեղ է գտել «Մեծ Քրոնիկոն» անվանումը,— սկսում է Պետրոսյանը նույնությամբ, ինչպես 1980 թ. հոդվածում⁴³: Նամակը նույն շափով բերելուց և նրա մեջ «մատեան» բառը հաշվելուց հետո, գյուտ է անում. նամակում «մատեան» բառի գործածության... հաճախականությամբ «բացահայտում» է Շիրակացու աշխատությունների բանակը և բնագավառները: Խոսքը տանք Գ. Պետրոսյանին.

«Գրիգոր Մազիսարոսի նամակի վերնագրում գրված է. «և հարցումն զրոց Շիրակայնոյն, զոր Մեծ Քննիկոն անուանեն»: Առաջին մասը որոշակի նշում է, որ հարցում է արվում Շիրակացու գրածների, աշխատությունների մասին: Իսկ երկրորդ մասը ցույց է տալիս, թե այդ աշխատությունները ինչպես են անվանվել: Եթե խոսքը «Քննիկոնի» մասին լիներ, Մազիսարոսը ամբողջ նամակում գոնե մեկ անգամ բացի վերնագրից, կնշեր «Քննիկոնի» մասին. նման բան գոյություն չունի: Մազիսարոսը իր նամակում վեց անգամ զգրծածում է մատյան բառը, այդ նշանակում է՝ խոսքը գնում է Շիրակացու աշխատությունների մասին⁴⁴, որոնք զետեղված են այդ մատյանի մեջ: Մեջ ենք բերում այդ նշումները.

1. ... հաւաքեալ ի բազմազան և յոքնաբեղուն մատենից...

2... որք նախքան զայնոսիկ հաւաքեալ ի մատեանս...

3... Եւ արդ, քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ...

4.... ի մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եղև անկեալ...

5.... եւ յայդմ մատենի մակազրութեան վերժանեաք...

6. ... եւ խնդրեմք ի քումմէ լուսափայլութենէդ զնորագոյնն մատեան շնորհել մեզ...

40 Գ. Պետրոսյան, Մաթեմատիկան... էջ 130:

41 Գ. Պետրոսյան, «Նորից Անանիա Շիրակացու Քննիկոնի մասին» ՊԲԶ, 1983, 4, էջ 135:

42 Անդ, էջ 131, 133, 135: Մեղադրելով նրանց ովքեր հակառակ տեսակետ են պաշտպանում, հայտարարում է, որ նրանք «վերցրել են Գ. Պետրոսյանի եզրակացությունն ու ներկայացրել որպես նոր հայտնագործություն» (էջ 136): Մատնացույց անելով «Քննիկոնին» նվիրված մի շարք հոդվածներ, գրում է, որ «Գիտական տեսակետից դրանք ոչինչ չեն ներկայացնում, իսկ որոշ հարցեր արմատապես խեղաթյուրում են» (էջ 181), մոռանալով, որ քիչ առաջ գրել էր թե «որպես նոր հայտնագործություններ ներկայացրած եզրակացությունները իրեն նախկին եզրակացություններն են»: Ստացվում է, որ «գիտական տեսակետից ոչինչ չեն ներկայացնող և որոշ հարցեր արմատապես խեղաթյուրող եզրակացությունները» վերցված են Գ. Պետրոսյանից ու ներկայացված որպես «նոր հայտնագործություն»: Այս էլ նշանակում է, որ Գ. Պետրոսյանի եզրակացությունները «գիտական տեսակետից ոչինչ չեն ներկայացնում, իսկ որոշ հարցեր արմատապես խեղաթյուրում են»:

Անկեղծ խոստովանություն:

43 Հմմտ. ՊԲԶ, 1980, № 2, էջ 214:

44 Ընդգծումը մերն է Ա. Մ.:

Մագիստրոսի նամակում նշված են Անանիա Շիրակացու գիտական աշխատությունների բնագավառները, այդ թվում և «քառիցն արհեստք», թվարանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը և աստղագիտությունը: Տոմարագիտության մասին նամակում խոսք չկա: Այս թուղթը որոշակի կերպով ցույց է տալիս, որ նամակի վերնագրում «Մեծ քննիկոնը» ավելացված է հետագայում, գրիչների կամ խմբագիրների կողմից»⁴⁵:

Ոչ գիտական մոտեցում, և ահա թե ինչու:

Սկսենք սկզբից «և հարցումն գրոց Շիրակայնոյ զոր մեծ Քննիկոն անուանեն» (էջ 135) նախագասություն մեջ բաց է թողնված «Անանիայի» բառը: Խորագիրը նշանակում է «և հարցումն (խնդրանք) Անանիա Շիրակացու գրքի որ մեծ Քննիկոն են անվանում» և ոչ թե «և հարցումն Շիրակացու գրածների, աշխատությունների մասին»: «Գրոց»-ը գրաբարում «գիրք» բառի եզակի թվի սեռականն է՝ գիրք-գրոց և ոչ՝ հոգնակին՝ որը կլինի «գրեանք» «գրեանց» կամ «գրենաց»: Ուրեմն խոսքը մի գրքի՝ «Քննիկոնի» մասին է, և ոչ մի բանի աշխատությունների:

Վեց անգամ մատյան բառի մեջ հեղինակը տեսնում է Շիրակացու աշխատության վեց բնագավառները, որոնց մեջ՝ քառից արվեստները: Իսկ եթե նամակը մի քիչ երկարեր և «մատեան» բառը վեցի փոխարեն կրկնվեր տասնվեց անգամ, ըստ Գ. Պետրոսյանի, Շիրակացին պետք է ունենար այդքան բնագավառների վերաբերյալ աշխատություններ: Բայց ի՞նչ իրավունքով Գ. Պետրոսյանը հաշվի չի առել նամակում հանդիպող «գիրք» բառը, որը «մատեանի» հոմանիշն է և օգտագործվում է «Քննիկոնի» փոխարեն, ինչպես «Անանիայի գրոց Շիրակայնոյ» «գգիրս Անանիայի Շիրակայնոյ» դեպքերում. չէ՞ որ սրանք էլ կարող էին բնագավառներ նշանակել:

Բայց տեսնենք թե «մատեան» բառը վեց անգամ ինչ առումներով է գործածվել:

1. «Մատենից» հոգնակին նշանակում է «մատյաններից», հունական, քաղղեական բազմաթիվ մատյաններից (որոնց պարունակությունից Շիրակացին քաղել է իր «Քննիկոնի» նյութը)...

2. Այս նույն նյութերը մինչև այս մատյանում («Քննիկոնում») հավաքվելը...

3. Անանիայի մատյանի («Քննիկոնի») մասին...

4. Այսպիսի մատյանի («Քննիկոնի»)...

5. Այդ մատյանի («Քննիկոնի»)...

6. Նոր մատյան («Քննիկոն»), նոր արտագրություն, նոր ձևագիր:

Այսպիսով «մատեան» բառի գործածություն վեցից չորս դեպքերում (2, 3, 4, 5) գրվում է «Քննիկոնի» փոխարեն: Առաջին դեպքում՝ այլ ժողովուրդների մատյաններ են, իսկ վերջինը...:

Այս վերջին մատյանը վեցերորդ բնագավառն է, որի գործը շատ դժվար է: Բանն այն է, որ Գրիգոր Մագիստրոսը Պետրոս կաթողիկոսից նոր միայն խնդրում էր այդ նորագույն մատյանը, որը «Քննիկոնի» նոր ընդօրինակությունն էր լինելու:

Ըստ Պետրոսյանի, Շիրակացու գիտական ժառանգությունը ոչ թե Գրիգոր Մագիստրոսի նամակում նշված առարկաների հիման վրա, Շիրակացու

արդեն հայտնի և նորահայտ բնագրերի պատմաքննական, բանասիրական հետազոտությունների միջոցով պետք է ուսումնասիրել (այդ, ըստ նրա «արատավոր» մեթոդ է), այլ՝ գուշակությամբ. բանի «մատեան» բառ, նույնքան բնագավառ:

1974 թ. լույս տեսան «Անանիա Շիրակացու «Քննիկոնը» վերնագրով մեր հոդվածները⁴⁶, ուր Գրիգոր Մազիստրոսի նամակի մասին նկատեցինք, որ «Պետրոս Գետադարձ կաթողիկոսին Գրիգոր Մազիստրոսի գրած սույն նամակը անգնահատելի ծառայություն է մատուցում «Քննիկոնի» հայտնաբերման և Շիրակացու գործունեության գնահատման գործում և ճիշտ չի ընկալվել ըստ ամենայնի, շնայած շատերն են դիմել նրան և օգտագործել մեջբերումներով»⁴⁷, որ այս «Քննիկոնը» կուռ ծրագրով և հստակ նպատակադրումով ստեղծված աշխատություն է եղել գիտական հարուստ բովանդակությամբ, որ այն հայոց դպրության մեջ բարձրագույն կրթությունը արմատավորելու համար գրված դասագիրք էր՝ կազմված բնական գիտությունների հիմքի վրա: Անտիկ աշխարհում դաստիարակության բովանդակությունը կազմող «քառյակ արվեստները», որ հետագայում (VI—XV դդ.) Արևմտյան Եվրոպայում և Հայաստանում բարձրագույն կրթության հիմք դարձան, «Քննիկոնի» միայն մի մասն են կազմում» ներկայացրել ենք «Քննիկոնի» բովանդակությունը ըստ Գրիգոր Մազիստրոսի նշված նամակի⁴⁸:

Այդ նամակը նշում է նաև «Քննիկոնից» տեղիներ, որոնց հանդիպում ենք Շիրակացու անունով հայտնի երկերում. Այսպես. «զոր և ինքն իսկ, որ մատենագրեց զայդոսիկ յառաջնում իւրոյ տրամաբանութեան բազում տարակուսանս և կեղերջականս սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործառութիւնս» (այսինքն՝ այդպիսի աշխատությունների նկատմամբ մեր ազգի ունեցած անփութության վերաբերյալ Շիրակացու բազմաթիվ տարակուսանքները և տրտունջները), որ կարդում ենք նամակի 8-րդ էջում, մենք գտնում ենք նրա այսպես կոչված «Ընթանակենսագրության» մեջ. «Եւ վասն զի ոչ գտանէր յաշխարհիս հայոց մարդ որ, որ գիտէր իմաստասիրութիւնն, այլ և ոչ անգամ գիրք արուեստից ուրեք գտանէին: Ահա և ի Յունացն դիմեցի յաշխարհ»: (Շիրակացու գործածած «իմաստասիրությունը» Մազիստրոսի մոտ անվանված է «խոհեմական արհեստ»՝ «քառիցն

46 Ա. Մաքեռայան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 7, էջ 66—68, № 8, էջ 71—81:

47 Անդ, էջ 67:

48 Անդ, էջ 67—68: Մրանից հետո ձեռնամուխ եղանք «Քննիկոնի վերականգնման դժվարին և պատասխանատու գործին, հիմք ունենալով Հ. Գրասխանակերտցու, Ս. Ասողիկի, Գ. Մազիստրոսի վկայությունները, օգտագործելով Շիրակացու գործերի հրատարակությունները, նրա մասին ուսումնասիրությունները և հատկապես Մատենադարանի ձեռագրերի անհայտ և անտիպ նյութերը:

1979 թ. «Պատմա-բանասիրական հանդեսի» 2-րդ համարում հրատարակեցինք «Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության բաժինը» (էջ 163—178), իսկ «Լրաբերում», այդ բաժնի մաս կազմող «Անանիա Շիրակացու «Աշխարհագրության» հետ կապված մի բանի հարցեր» (№ 9, էջ 78—86) և «Եվկլիդեսի «Տարբերք» Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության մաս» (1980, № 1, էջ 89—95) հոդվածները: Մինչ այդ հրատարակել էինք «Նորահայտ պատասխաններ Անանիա Շիրակացու թվարանության դասագրքից» (1974, № 6, էջ 65—76) հոդվածը, 7-րդ դարի երեք պատասխանների հիման վրա:

արհեստը»): Ապա՝ «Եւ արդ՝ ես տրուպս Հայաստանեաց ուսայ ի նմանէ (Տյուրքիկոսէ—Ա. Մ.). զհզար արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի, և բերի յաշխարհս մեր՝ առանց ուրուք լինելոյ ձեռնառու, միայն ջանիւ իմոյ անձինս... թէպէտ և ոչ որ եղև շնորհակալ և մեծարաւզ իմոյ աշխատութեան, բանզի և ոչ սիրաւզ իսկ է ազգ մեր իմաստից և գիտութեանց, այլ ծոյրք և ձանձրացողք... Կեղծաւորք սնափառք ցուցանեն ունել զկերպարանս գիտութեանն և կոշիլ ի մարդկանէ բարբի հայցեն: Այլ և ի վերայ իմ պարսականս տգիտութեան, որք յինքենէ էին յերիւրեալք...»⁴⁹:

Գ. Մագիստրոսը նամակում նշում է, որ այս հատվածը գտնվում է «Քննիկոնի» մեջ՝ «յառաջնում իւրոյ տրամաբանութեան»:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 699 և № 10381 ձեռագրերում Շիրակացու գանգատը պարունակող «Ինքնակենսագրությունը» գտնվում է գործնական թվարանության սկզբում⁵⁰: Հուլյները ունեին տեսական թվարանություն և գործնական թվարանություն՝ «արիֆմետիկա» և «լոգիստիկա» անուններով: Մագիստրոսը «լոգիստական» թարգմանում է «տրամաբանություն»: Իսկապես, Շիրակացու գործնական թվարանության կամ տրամաբանության սկզբում է գտնվում «ինքնակենսագրությունը», որի մեջ վերը բերված գանգատական խոսքերն են: Իսկ այս էլ նշանակում է, որ վերը բերված նյութերը, որոնք գործնական թվարանության բաղադրյալ մասերն են, մտել են «Քննիկոնի» մեջ:

Գրիգոր Մագիստրոսի նամակի և Անանիա Շիրակացու արդեն հայտնի և մինչև այսօր անհայտ երկերի հիման վրա վերականգնվում է Անանիա Շիրակացու «Քննիկոնը»:

Շիրակացու գործերի վերականգնման ուղղությամբ արդեն սկսած աշխատանքները, որոնք հենվում են նաև Գրիգոր Մագիստրոսի նամակի վրա, Գ. Պետրոսյանը համարում է «մուտրության արդյունք»: Մուտրության մեջ են նրանք, ովքեր Անանիա Շիրակացու նման վիթխարի անհատականության գիտական ժառանգության ուսումնասիրությունը համարում են ավարտված, մի գիտնականի, որն իր մասին գրում է, թե «բաւանդակեցի զգպրութիւն մերոյ ազգիս Հայաստանեաց, և հմուտ եղեալ աստուածաշունչ գրոց... ամսութ ուսայ լիով զարուեստ համարողութեան» (այսինքն մաթեմատիկան, ուսումնականը կամ քառյակ գիտությունները), որ «հմուտ եղէ գրոց բազմաց, որք և ոչ ի մերս են թարգմանեալ լեզուս... յայտնիք և գաղտնիք, արտաբինք, արուեստականք և պատմադիրք, բժշկականք, ժամանակագիրք...», որ «զհզար արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի, բերի յաշխարհս

49 Անանիա Շիրակացի, Մատենադրություն, էջ 208—209:

50 Ահա գործնական թվարանության պարունակությունը № 699 ձեռագրում. 187բ Անանիայի Շիրակունւոյ երիցս երանեալ վարդապետի վասն սրպիսութեան կենաց իւրոց (այսպես կոչված «ինքնակենսագրությունը» Ա. Մ.): 194ա Անանիայի յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման: 204ա Գրեմ ձեզ և խրախճանականս յորժամ ի կերակուրս և յըմբելիս զուարճանայք և կամիք խաւսել բանս զուարճացուցիչս և ծիծաղականս: 207ա Անանիայի Շիրակունւոյ համարողի յաղագս կշոյ և կշոց և կշոսրգաց: 211ա Անանիայի Շիրակունւոյ յաղագս շափոյ և շափուց և պատարաց: 214ա Անանիայի Շիրակունւոյ համարողի թիւք որ շափութենն տանց Հին կտակարանացն: 215ա Նորին՝ թիւք որ շափութեանց նոր կտակարանացն: ր էջբ, որպես պետք է լիներ նաև հաջորդ երկի վերնագիրը, չի գրված: Այն դեռում ենք 10381 ձեռագրից (էջ 331բ): 216ա Պատմութիւն երկոտասան քարանց 217ա Վհարումն Անանիայի Շիրակունւոյ ժողովածոյն և Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք, ամէն:

մեր...»⁵¹, նրան, որ այդ գիտությունները «Քննիկոնի» մեջ ամբարելով ամբողջական դասընթաց է ստեղծել իր ժողովրդին լուսավորելու համար, համարում են միայն թվաբանական երեք գործողությունների, քսանչորս խրնդիրների, խրախճանակների, շափ ու կշռի, տոմարի հեղինակ, և նրան զբրկում իր վիթխարի գիտական ժառանգությունից, և այն փառավոր տեղից, որ նրան է պատկանում հայրենի գիտության, ուսման և կրթության, ինչպես նաև համաշխարհային գիտության ու մանկավարժության պատմության բնագավառներում:

«Հայ դպրոցի պատմությունը,—գրում է Ա. Ալպոյաճյանը,—հայ քաղաքակրթության պատմության մեկ էջը կներկայացնէ: Ուստի պետք է միշտ այդ անկյունեն դիտել մեր կրթական շարժումը, որ առնչություններ և կապեր ունի միշտ ընդհանուր ազգային մշակութային շարժման հետ և որ անոր մեջ հսկա դեր կատարած է»⁵²: Անանիա Շիրակացին մեր գիտության և կրթական շարժման խոշորագույն ներկայացուցիչներից է, և նրա գործունեությունը պետք է գնահատել մեր պատմության ընդհանուր խորքի վրա: Հիշյալ նամակը մեր անցյալի կրթական շարժման վիթխարի մեծություններից մեկի, Շիրակացու ժառանգության գնահատման կարևոր ուղենիշ է, գրված նույն շարժման մի այլ մեծության կողմից: Պետք է ակնածանքով և երկյուղածությամբ մոտենալ նրանց ժառանգությանը:

Հայ բարձրագույն դպրոցի ծրագրի հիմքում V դարից ընկած էին եռյակ գիտությունները, որոնք VII դարում այլևս չէին բավարարում: Դեռևս V դ. վերջին Դավիթ Անհաղթը առաջարկում էր տիրապետել քառյակ գիտություններին: Բարձրագույն կրթության համար հայերը այն ժամանակ գնում էին Եդեսիա, Անտիոք, Կեսարիա, Կ. Պոլիս, Աթենք, Ալեքսանդրիա և այլուր: Հայաստանում «է (7) դարեն սկսեալ,—գրում է Ա. Ալպոյաճյանը,—չկրցան այս սահմանափակ ծրագրով զոհանալ, որն ստիպված ավելի ճոխացրին, վասն զի այլևս կզգուշանային հույն շրջանակներու հետ հարաբերելե, նախ տիրող արարների ատելությունը շարժելու համար... և երկրորդ՝ անոր համար, որ հայերը սկսած էին իրենց ալ վերապահ դիրք բռնել հանդեպ հունաց, որոնք, երբ առիթը գտնեին կը նեղեին, ընդունել տալու համար անոնց քաղկեդոնականությունը...: Հայ եկեղեցու անկախությունը պահելու նախանձախնդրությունը զխավոր նպատակն է հայ կղերին... որ չէր ուզեր որ ազգային դավակները բարձրագույն ուսման համար Հունաստան երթային: Հարկ եղավ բարձրագույն ուսմանց պետքը Հայաստանի մեջ լրացնել... ավելի զարկ տրվեցավ վարդապետարաններուն: Օտարին կարոտ չլլալու համար... Օտար ուսմանց ալ հետամուտ եղավ»⁵³:

Ա. Ալպոյաճյանը շփտեր «Քննիկոնի» մասին: Հայ դպրոցի պատմությանը նվիրված ամբողջ աշխատության մեջ չի հիշվում ոչ «Քննիկոնը», ոչ էլ Գրիգոր Մագիստրոսի հիշյալ նամակը: Բայց հայ դպրոցի պատմության հմուտ մասնագետը ճշմարիտ ներկայացնում է ժամանակաշրջանը և նրա պահանջը, որը պետք է ստեղծեր, և ստեղծեց «Քննիկոնը»:

51 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1944, էջ 209:

52 Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ դպրոցի, Կահիրե, 1945, «Երկու խոսք»:

53 Անդ, էջ 178:

A. S. MATHEVOSSIAN

ГРИГОР МАГИСТРОС И «КННИКОН» АНАНИИ ШИРАКАЦИ

Р е з ю м е

Замечательный деятель армянской культуры и науки XI в. Григор Магистрос обратился к армянскому католикосу Петросу (1019—1058 гг.) с просьбой прислать ему один экземпляр «Кнникона» (666 г.), который хранился в резиденции католикосата. Григор Магистрос намеревался использовать его в своей академии. Поэтому в письме он, во-первых, представляет содержание «Кнникона», в который входят арифметика, музыка, геометрия, астрономия, искусства, литература и многое другое, затем показывает, что все эти науки входят в риторическое образование, и поэтому необходимо размножить и в учебных целях применять «Кнникон» и в духовных школах. Как следует из последующих писем Григора Магистроса, он получил список «Кнникона» Анании Ширакаци, ставший одним из учебников в его школе.

A. S. MATHEVOSSIAN

GRIGOR MAGISTROS ET LE „KNNIKON“ D'ANANIA CHIRAKATSI

R é s u m é

Grigor Magistros, célèbre homme de science et de lettres du XIe siècle, est l'auteur d'une lettre adressée au catholicos arménien Pétrós (1019—1058) où il demande à ce dernier de lui envoyer l'exemplaire du „Knnikon“ (666) conservé à la résidence du catholicos. Grigor Magistros avait l'intention de l'utiliser comme manuel dans son académie. Aussi, dans sa lettre, il commence par présenter le contenu du „Knnikon“ qui inclut l'arithmétique, la musique, la géométrie, l'astronomie, l'art, la littérature, etc., puis il montre que toutes ces sciences font partie de l'instruction rhétorique, d'où la nécessité de copier le „Knnikon“ et de s'en servir pour enseigner dans les écoles religieuses. Comme il s'ensuit des lettres suivantes de Grigor Magistros, il reçut une copie du „Knnikon“ d'Anania Chirakatsi et en fit un des manuels de son école.

ԼԵՎՈՆ ՉՈՒԳԱՍՉՅԱՆ

ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆԻ «ԹՈՎՄԱՅԻ ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ»
ՄԱՆՐԱՆԿԱՐԸ

Հայ արվեստում Թորոս Ռոսլինի դերը արժեքավորելիս ուսումնասիրողները անպայման նշում են նաև այն նորամուծությունները, որոնք ի հայտ են գալիս նկարչի հոգևոր ժառանգության մեջ:

Ի թիվս այդ նոր երևույթների հիշատակվում են և անվանի վարպետի միտքը զբաղեցրած նոր թեմաները, որոնք մինչ այդ դուրս էին մնացել հայ նկարիչների տեսադաշտից: Անդուզական երփնագրողի վրձինն է առաջին անգամ մարմնավորել և «Թովմայի անհավատության» պատմությունը (Հովհաննես, գլ. Ի, 24—29): Նրա այդ աշխատանքը հանդիպում է 1268 թ. Մալաթիայի Ավետարանի (Մատենադարան, № 10675) ձևավորումների շարքում¹ (էջ 326ա): Խնդրո առարկա մատյանի հիշատակարանները վկայում են, որ այն ծաղկել է Թորոս Ռոսլինը Հոռմկլայում: Չեռագիրը ընդօրինակվել է Կոստանդին Ա. Բարձրբերդցի կաթողիկոսի հրամանով թագաժառանգ Հեթումի համար²:

Մալաթիայի Ավետարանի «Թովմայի անհավատությունը» այդ թեմայով ստեղծված առաջին երկն է հայ արվեստում, մասնավորապես, մանրանկարչության մեջ, ուստի հնարավոր չէ պարզել, թե ինչ որոշակի կանոններ, ավանդույթներ է ժառանգել Թորոս Ռոսլինը նախնյաց փորձից: Այս իսկ պատճառով ստիպված ենք դիմել հարևան և հեռու ժողովուրդների հուշարձաններին, մեծ գեղանկարչի ստեղծագործության յուրահատկությունը սահմանազատելու, ուրեմն և հայեցի նկարագիրը հասկանալու համար:

Միջնադարյան նույնանուն բազմաթիվ պատկերների³ մեջ Թորոս Ռոս-

¹ Տե՛ս S. Der Nersessian, Armenian Manuscripts in the Walters Gallery of Art, Washington, 1963, fig. 363; И. Р. Драмнян, Художественные особенности искусства Торока Рослила (миниатюры Малатийского Евангелия).—Древнерусское искусство. Рукописная книга. Сборник третий, М., 1983, с. 335. Դժբախտաբար, այս արժեքավոր մանրանկարը մեզ է հասել մասամբ վնասված. վերևի աչ անկյունը փորք-ինչ կորրված է:

² Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Թորոս Ռոսլինի ձեռագրի վերջին հանգրվանը—«Գարուն» ամսագիր, 1976, № 4, էջ 55—62:

³ Տե՛ս Н. Покровский, Евангелие в памятниках иконографии преимущественно византийских и русских, СПб, 1892, с. 426—427, рис. И, 196; E. Sandberg-Vavala, La croce dipinta italiana e l'iconografia della Passione, Verona, 1929, p. 360—367; L. Réau, Iconographie de l'Art Chrétien. t. 2, Paris, 1957, p. 568—570; G. Schiller, Ikonographie der christlichen Kunst, Bd. 3, Gütersloh, 1971, S. 108—114; K. Wessel, Erscheinungen des Auferstandenen.—Im: Reallexikon zur byzantinischen Kunst, Unter mitwirkung von M. Restle, Hrsgb. von K. Wessel, Bd. II, Stuttgart, 1971, S. 383—386.

լինի «Թովմայի անհավատությունը» առանձնանում է մի էական մանրամասնով, որին մեծ տեղ է տրված մանրանկարի ընդհանուր մտահղացման մեջ. դա որպես ֆոն Գալիլյա լեռան ներկայացումն է: Գծվար է նման որևէ այլ օրինակ գտնել, որտեղ հորինվածքի մեջ, ընդհանրապես, տեղ հատկացված լինի բնանկարին⁴:

Որտեղի՞ց է գալիս մեզ հետաքրքրող մանրամասնը:

Ս. Տեր-Ներսեսյանը առաջինն է նկատում, որ «Թովմայի անհավատությունը» բացառիկ ձևով միաձուլված է Գալիլյայում առաքյալներին Քրիստոսի հայտնվելու դրվագի հետ⁵: Գիտնականը այս անօրինակ երևույթը արձանագրում է նաև կիլիկյան դրքարվեստի աննման գանձերից մեկի՝ 1272 թ. Կեոան թագուհու Ավետարանի (Սրուսաղեմ, սբ. Հակոբյանց վանքի հավաքածու, № 2563) ձևավորման մեջ, որը Ռոսլինի երկից հետո այդ թեմայով ստեղծված հայկական երկրորդ պատկերն է⁶: Ժամանակին Ռոսլինին վերագրվող այս ձևագրի նկարազարդումները այժմ համարվում են նրա տաղանդավոր անանուն աշակերտի վրձնի գործը:

Ռոսլինի նկարի վերևում հայտնվող «Գալիլեա լեռան ուր ժամագիրն» (Մատթեոս, գլ. ԻԸ, 17) տողը չկա Կեոանի Ավետարանի ձևավորման մեջ: Ուրեմն այս վերջին ստեղծագործության մեջ երևու ավետաշանական դրվագների զուգակցումը որսալ հնարավոր չէր լինի և այդ մասին հուշող լեռան ներկայությունը անհասկանալի կմնար, եթե պահպանված չլիներ Մաթթիայի ձևագրի «Թովմայի անհավատությունը»:

Սա մեկն է այն դեպքերից, երբ գործ ունենք ուսուցչից աշակերտին անցած գիտելիքների հետ:

Ի դեպ, հիշարժան է, որ Ռոսլինի երկում կա նաև ուրիշ մակագրություն, որը բացակայում է Կեոանի Ավետարանի մանրանկարում: Այն գրված է լեռան լանջին, փակ դռներից մի քիչ վերև. «Գա Յն [Յիսուս] դրաւք փակ-ելաւք ուր էին» (Հովհաննես, գլ. Ի, 19):

Թե՛ Ռոսլինը և թե՛ նրա աշակերտը լեռան կրծքին տեղադրել են «Յն [Յիսուս] Քս [Քրիստոս]» մակագրությունը:

Ռոսլինյան պատկերում լեռը հատուկ դեր է կատարում, մի բան, որ չի նկատվում նրա սանի մանրանկարում:

Վրան հիշեցնող լեռան ներքևի հատվածում Ռոսլինը ձախից ցուցադրել է առաքյալների խումբը, իսկ աջից՝ Քրիստոսին: Վերջինիս աշակերտները հետ կամրջողը Թովման է, որը շատ փոքր է երևում ուսուցչի կողքին: Այդպիսով երիտասարդ ու անփորձ ներկայացվող անհավատ առաքյալը նկարված է մասամբ խոնարհված, երկշտություն արտահայտող դիրքով, դեպի Քրիստոսը վարանոտ քալլ անելու պահին: Ուժեղ, խիստ արտահայտիչ շար-

⁴ Տե՛ս Ch. Rohault de Fleury, Les Saints de la Messe et leurs monuments, vol. IX, Paris, 1899, pl. III-XXV; E. Sandberg-Vavala, op. cit., fig. 332-338; G. Schiller op. cit., Abb. 340-369; G. von der Osten, Zur Ikonographie des ungläubigen Thomas angesichts eines Gemäldes von Delacroix.— „Wallraf-Richartz-Jahrbuch“, Bd. XXVII 1965, Köln, S. 371-388.

⁵ Տե՛ս S. Der Nersessian, La miniature arménienne au XIII^e siècle.— „Archéologia“, 1979, N 126, Janvier, p. 24.

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

ժումով ուսուցիչը բռնել է Թովմայի աչքը (ասես պատրաստվելով նրան պատժել) և մոտեցնում է իր կողի վերքին: Մյուս ձեռքով Քրիստոսը ետ է քաշել զգեստը, որ վերքը լավ երևա և միաժամանակ ամուր բռնել է երկար խաչը: Նկարիչը հատուկ շեշտում է նրա ձեռքերի ուժը: Բացի այդ Թովմայի բեկված, կամազուրկ, փոքր կերպարանքին, զգուշավոր մերձեցմանը հակադրելով Քրիստոսի ուղղաձիգ դիրքը, մեծ շափերը, վճռականություն արտահայտող հաստատուն քայլը, Ռոսլինը բացահայտում է կենարոնական այս անձանց իրարից բաժանող հոգեկան վիթխարի վիճը:

Զի կարելի չնկատել, որ այդ երկուսի նկարագրերի ստեղծմանն է նպաստում նույնիսկ նրանց զգեստների հաղորդումը. թափվող թույլ դարսերը Թովմայի հագուստների վրա խորհրդանշում են նրա անկումը, իսկ Քրիստոսի զգեստը թվում է եռքի մեջ: Վերջինիս ուսերի, կրծքի վրա ալիքալիք ծփալով, ծալքերը կարծես ճախրանքի զգացողությունն են առաջ բերում և թևեր ստեղծում կերպարի համար: Նկարիչը այս ձևով հուշում է, որ Քրիստոսը քիչ առաջ է իջել երկնքից:

Քրիստոսի դեմքը լի է զայրույթով. շանթահարող հայացքը ուղղված է Թովմային, աչքերը դուրս են ցայտում ակնախոռոչներից⁷:

Նախորդ դարերի և իր ժամանակի վարպետների աշխատանքները իմանալու և դրանք դերազանցելու ձգտումն է ասես հուշում ռոսլինյան Քրիստոսի հայացքը:

Այս ենթադրության օգտին են խոսում այնպիսի երկեր, ինչպիսին է օրինակ Պետերբուրգի հանրային գրադարանի № 21 բյուզանդական Ավետարանի (X դ.) նկարազարդումը (որտեղ անհավատ աշակերտը ասես կանգնեցվում է ուսուցչի հանդիմանող խոր նայվածքով)⁸, Քյոլնում ս. Մարտինի արքայության Ավետարանի (Բրյուսել, Արքայական գրադարան) մանրանկարը (1210—1220 թթ. կամ 1250 թ.)⁹ և Նեապոլում 1320 թ. կավալինիի նկարած որմնապատկերը¹⁰, որոնց մեջ Քրիստոսի հայացքը նմանապես շանթահարում է Թովմային: Ինչպես նշեցինք, ռոսլինյան Քրիստոսի աչքերը դուրս են ցայտում ակնախոռոչներից: Ընդհանուր առմամբ մանրամասն ենք տեսնում Բլանշ Կաստիլիացու 1230 թ. ֆրանսիական Սաղմոսագրքի (Փարիզ, Արսենալի գրադարան, ֆր. ձեռ. 1186) մանրանկարի մեջ, բայց ոչ Քրիստոսի, այլ Թովմայի գլխավերևում կանգնած առաքյալի դեմքին¹¹:

Շատ զարմանալի է, որ Ռոսլինի պատկերում համապատասխան աշակերտը ունի նույն նայվածքը:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 25:

⁸ Տե՛ս G. Millet, Recherches sur l'iconographie de l'Évangile aux XIV^e, XV^e et XVI^e siècles d'après les monuments de Mistra, de la Macédoine et du Mont Athos, Paris, 1960, p. 577; B. H. Лазарев, Византийское и древнерусское искусство, Москва, 1978, с. 101.

⁹ Տե՛ս The Year 1200, II, A Background Survey, Published in conjunction with the Centennial Exhibition at the Metropolitan Museum of Art, Compiled and edited by F. Deuchler, The Cloisters Studies in Medieval Art II, The Metropolitan Museum of Art, 1970, ill. 212; G. Schiller, op. cit., S. 112.

¹⁰ Տե՛ս G. Schiller, op. cit., Abb. 356, 362, S. 111.

¹¹ Տե՛ս J. Dupont et C. Gnudi, La peinture gothique, Geneve, 1954, p. 28.

Չգացմունքային ալեկոծության դերագույն աստիճանը նկարագրելու այս ձևին հայ և ֆրանսիացի ծաղկողները հավանորեն հանգել են ո՛չ թե ինքնուրույն կերպով, այլ օգտվել են ընդհանուր նախօրինակներից:

Մեզ հետաքրքրող գեղարվեստական նման կանոնները թվում է, թե պատկանում են ոչ միայն պատկերագրության, այլև ոճի բնագավառին:

Մարդկային հոգու բոլոր ելևէջներն ու վիճակները մինչև վերջ ուսումնասիրած նկարչի փայլուն տաղանդի վկայությունն է Քրիստոսի կերպարը: Եթե Ռոսլինը պատկերած լիներ միայն նրան և Թովմային, դա էլ բավական կլիներ, որ նրա երկը մեկընդմիջտ հավերժանար միջնադարյան արվեստի գլուխգործոցների զանձարանում:

Չբավականանալով ձեռք բերածով և հավատարիմ իր աշխատանքանակին, Ռոսլինը ծավալում է Քրիստոսի կայծակնահայտ բարկությունը ողջ մանրանկարով մեկ: Այստեղ է, որ նրան օգնության է գալիս Գալիլյա լեռը: Վերջինիս քարածայռերը մագիլների նման ցած են կարկառում, ահազանգելով, սպառնազին ելևէջներ ղողանջելով տեսարանի մեջ: Բնանկարն ուրեմըն շնչավորված է ճիշտ այն սգով, որով կատարված է Քրիստոսի կերպարը: Լեռան ձևերը զգացմունքային կարևոր շեշտեր են բերում պատկերի ընդհանուր լարվածության մեջ, ազդարարում հիմնական տրամադրությունը, որով համակված են նաև մյուս գործող անձինք: Բավական է մի հայացք ձգել աշակերտների տազնապահար դեմքերին զրանում համոզվելու համար:

Տեսարանի բոլոր մասերի, ողջ հորինվածքի այսպիսի մտածվածությունը խիստ բնորոշ է Ռոսլինի աշխատանքանակին: Նրա սաները որոշ դեպքերում նույնպես այդ ձևով են աշխատում, բայց օրինակ 1272 թ. Կեռանի Ավետարանի «Թովմայի անհավատություն» մեջ աշակերտը չի հետևում ուսուցչի սկզբունքներին, լեռը այստեղ զգացմունքային «առաջադրանք» չունի:

Ռոսլինի մանրանկարի ներքին լարվածությունը իրենց նպաստն են բերում նաև մյուս, երկրորդական թվացող մանրամասները: Այսպես, օրինակ, ծառերից մեկը, որը բարձրանում է ձախից, զուգահեռ է Թովմայի շարժմանը, եթե կարելի է ասել նրա «առանցքին» և Քրիստոսի բռնած խաչին: Սրանց թեքվածությունը հակադրված է Թովմային հետևող առաքյալների ու Քրիստոսի ուղղաձիգ դիրքերին: Իսկ վերջիններիս ուղղվածությունը կրկնված է նաև աչից պատկերված ծառի ու փակ դռների միջոցով: Այդպիսով ակնհայտ է դառնում, որ ինչպես իր մյուս ստեղծագործություններում, այստեղ ևս Ռոսլինը մանրանկարի ներքին ուժերին ի սպաս է դնում գծերի թաքուն երկրաչափականությունը:

Մալաթիայի Ավետարանի մանրանկարի ողջ անկրկնելիությունը նշելով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ այստեղ պատկերի բոլոր բաղկացուցիչ մասերը Թորոս Ռոսլինի հնարածը չեն: Նկարիչը իր ուզած ձևով «վերաշարագրել» է ավետարանական պատմության սուղ տվյալները և միջնադարի արվեստում զրանք ներկայացնելուն օգնող կանոնիկ բաղադրիչ առանձնահատկությունները: Ինչպե՞ս է նա օգտվել միջնադարյան գեղանկարիչների կուտակած փորձից, սեփական մտահղացումը մատուցելու, զրան ձև տալու ի՞նչ միջոցներ է ընտրել:

Այս հարցերը փաստորեն մղում են մեզ թափանցելու այն գիտելիքների աշխարհը, որոնցով առաջնորդվել է Թոսլինը այդ պատկերը ծաղկելու պահին: Կասկած չկա, որ նրա մակարդակի զարգացած վարպետին պետք է քաջ հայտնի լինեին «Թովմայի անհավատությունը» և «Հանդիպումը Գալիլյայում» ցուցադրող արևելյան պատկերները: Բայց արևելյանների երկերը չէ, որ նրան ներշնչել են իր աշխատանքի ընթացքում:

Այս երկրորդ թեման ներկայացնելիս բյուզանդական վարպետները Քրիստոսին տեղադրում էին առաջլալների երկու խմբերի միջև կամ ժողովում նրանց բոլորին Քրիստոսի մի կողմից¹²: Երկրորդ տիպի հորինվածքը ունեցող պատկերները գուցե և որոշ շափով կողմնորոշել են Թոսլինին առաջլալների դասավորության հարցում, բայց այդպիսի մի քանի հուշարձան¹³ են հայտնի, և դրանց հետ Մալաթիայի Ավետարանի մանրանկարը այլ ընդհանրություն չունի: Ավելորդ չէ նկատել, որ բյուզանդական նկարիչները լեռը չեն պատկերում:

Թոսլինյան հրաշակերտի նկարագրությունը ցույց է տալիս, որ այստեղ ընդգրկված մանրամասների մեծ մասը վերաբերում է «Թովմայի անհավատության» թեմային և միայն լեռն ու մակադրությունն են հուշում «Հանդիպումը Գալիլյայում» դրվագի (Մատթեոս, գլ. ԻԸ, 16—29, հմմտ. Մարկոս, գլ. ԺԶ, 15—18) առկայության մասին:

Թոսլինի ստեղծագործությունը բիշ է նմանում արևելյան հուշարձաններին և բոլորովին նման չէ բյուզանդական արվեստի այն օրինակներին, որոնք ներկայացնում են «Թովմայի անհավատությունը»:

Դրանում համոզվում ենք, երբ ուշադրություն ենք դարձնում առաջին հերթին դորժող անձանց տեղադրությանը: Որպես կանոն, բյուզանդական և ասորական վարպետները Քրիստոսին ցուցադրում են դռների առջև, աշակերտների երկու խմբերի արանքում¹⁴: Այս օրինաչափությունը ծնունդ է առնում վաղքրիստոնեական արվեստում, այն հանդես է դալիս Մոնցայի արքայության Պաղեստինից ծագող տափաշշերից մեկի (6-րդ դ.) վրա¹⁵: Միջին բյուզանդական շրջանում և XI դարում վերջնականորեն ձևավորվում, ավարտուն տեսք են ստանում և սկսում են դարից դար ընդօրինակվել նման համաչափ և հավասարակշռված պատկերադրական նմուշները:

Այդ կարգի հուշարձանների կողքին հորինվում և տարածում են գտնում այնպիսի ստեղծագործություններ, որտեղ անհավատ Թովման մենակ կամ մյուս աշակերտների հետ ներկայացված են Քրիստոսի ձախ կամ աչ կողմից: Այս ավանդույթը ավելի հին է, քան Մոնցայի տափաշշի կատարման ժամանակը: Դրա մասին են վկայում Միլանի ս. Յելսիա եկեղեցու սար-

¹² В. Н. Лазарев, Византийское и древнерусское искусство, с. 81—86, 106—111.

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 86, 111:

¹⁴ Տե՛ս E. C. Colwell and H. R. Willoughby, The Four Gospels of Karahissar. The Cycle of Text Illustrations, vol. 2, Chicago, 1936, p. 417—419; A. Goldschmidt, K. Weitzmann, Die byzantinischen Elfenbeinskulpturen des X—XIII. Jahrhunderts, Bd. 2, Berlin, 1934, Abb. 15, 127; G. Schiller, op. cit., Abb. 347, 349, S. 110; В. Н. Лазарев, Византийское и древнерусское искусство, с. 97—105; J. Leroy, Les manuscrits syriaques à peintures conservés dans les bibliothèques d'Europe et d'Orient, Album, Paris, 1964, pl. 69. 1, 94. 3, 94.4, 109.3, 135.1, 145.2.

¹⁵ Տե՛ս E. C. Colwell and H. R. Willoughby, op. cit., p. 417; J. Leroy, op. cit., d. 277; G. Schiller, op. cit., Abb. 343, S. 109.

կոֆագի (IV դ. 2-րդ կես) քանդակը, Միլանի մայր տաճարի գանձատան փղոսկրե դիպտիխի (V դ. կամ կարոլինգյան շրջան) դրվագը: Ի դեպ այդ հուշարձաններին է աղերսվում և Պասկալ I-ի 817—824 թթ. արժաթե մասնատուփի պատկերը¹⁶:

Չնայած արևմտյան Եվրոպայի, մասնավորապես Իտալիայի, արվեստում բյուզանդացիների նախընտրած տարրերակը հայտնի է լինում, բայց, այդուհանդերձ, տարածում են գտնում ոչ համաշափ հորինվածքով պատկերները¹⁷:

Առաքյալներին ձախ մասում ցուցադրող երկերից սովորաբար առաջինն են համարում մոտավորապես 980 թ. բնօրինակված էգբերտի Ավետարանի (Տրիր, Քաղաքային գրադարան) մանրանկարը¹⁸: Դարից դար փոխանցված, նկարչից նկարիչ անցած այս սակավ հանդիպող կանոնիկ տարրերակի իմացությունն է դրսևորված Թորոս Ռոսլինի և Կեռանի Ավետարանի ծաղկողի նկարազարդումների մեջ: Նախքան Մալաթիայի Ավետարանի պատկերում հայտնվելը մեզ հետաքրքրող առանձնահատկությունը երևան է գալիս զայցրուրդյան գրքարվեստում, օրինակ՝ ս. էրենտրուդի մոտավորապես 1140 թ. ձեռագրի (Մյունխեն, Բավարական պետական գրադարան, լատ. ձեռ. 10590) մանրանկարում¹⁹, XII—XIII դդ. ասորական Ավետարանի (Լոնդոն, Բրիտանական թանգարան, ձեռ. 7169) ձևավորման մեջ²⁰, Գաեթայի (Իտալիա) XIII դ. իտալական մոմակալի քանդակում²¹ և այլ նմուշներում²²: Հիշյալ ասորական պատկերը թույլ է տալիս մտածել, որ բերված մյուս օրինակները արևելյան ծագում ունեն և Թորոս Ռոսլինին խնդրո առարկա հորինվածքը կարող էր հայտնի դառնալ ոչ միայն Եվրոպական, այլև արևելյան երկերից:

Մալաթիայի Ավետարանի «Թովմայի անհավատությունը» մանրանկարի գեղարվեստական ակունքները ըստ ամենայնի ուսումնասիրելու առումով հետաքրքիր է ուրվագծել այդ ստեղծագործության մեջ տեղ գտած նաև մյուս ավանդույթների զարգացման ուղին:

Նույնանուն հուշարձանները բննելիս արվեստաբանները տարրերակում են երեք հիմնական պատկերատիպեր:

Ստեղծագործությունների մի մասը ներկայացնում է Քրիստոսին ձեռքը վերև բարձրացրած իր վիրավոր կողը Թովմային ցուցադրելիս²³. «Թովմայի անհավատությունը» այդպես է պատկերվում հիմնականում բյուզանդական արվեստում և որոշ Եվրոպական օրինակներում²⁴:

¹⁶ Տե՛ս G. Schiller, op. cit., Abb. 341, 268, 345.

¹⁷ Տե՛ս A. M. Latil. Le Miniature nel rotoli dell 'Exultet, Montecassino, 1899. Tav. 3; E. Sandberg-Vavala, op. cit., fig. 332—337.

¹⁸ Տե՛ս G. von der Osten, op. cit., Abb. 262; G. Schiller, op. cit., Abb. 351, S. 109.

¹⁹ Տե՛ս G. Schiller, op. cit., Abb. 354.

²⁰ Տե՛ս J. Leroy, op. cit., pl. 123. 1.

²¹ Տե՛ս E. Sandberg-Vavala, op. cit., fig. 338, p. 367, 373, n. 78.

²² Տե՛ս E. C. Colwell and H. R. Willoughby, op. cit., p. 419.

²³ Տե՛ս G. von der Osten, op. cit., S. 378.

²⁴ Տե՛ս Ch. Rohault de Fleury, op. cit., pl. IV, V, XII, XIII, XVIII, XX, XXI, XXV; E. Sandberg-Vavala, op. cit., fig. 332—337; K. Wessel, op. cit., S. 383—384; B. H. Лазарев, указ. соч., с. 97—105.

Պատկերների մի ուրիշ խումբ նույն պատմությունը ձևավորում է այլ կերպ. ուսուցիչը խլում է անհավատ աշակերտի ձեռքը և մոտեցնում կողին, կարծես վերքը ցույց տալու համար²⁵:

Թորոս Ռոսլինը նախընտրել է այս, շատ քիչ կիրառվող, կանոնիկ տարբերակը:

Խնդրո առարկա տեսարանները Քրիստոսին հազվադեպ են ներկայացնում Թովմայի ձեռքը կողին մոտեցնելիս:

Ստրասբուրգի ս. Թովմայի եկեղեցու ճակատակալ քարի քանդակը համարվում է առաջին օրինակը, որտեղ առկա է մեկ հետաքրքրող մանրամասնը²⁶: Ռոսլինի մանրանկարին նմանող գերմանական հուշարձանը նրանից տարբերվում է կարևոր մի քանի հատկանիշներով. դիտավոր երկու անձինք պատկերված են Պետրոսի և Հովհաննես ավետարանիչի արանքում, մյուս առաքյալներն ու դռները չկան և այլն²⁷:

Ստրասբուրգի քանդակը ոմանք թվագրում են XIII դ. 20-ական թթ., ուրիշները՝ մոտավորապես 1230 թ., կամ 1250—1255 թթ.²⁸:

Որոշ ուսումնասիրողներ, առանց հիմնավորելու իրենց կարծիքը, գրտնում են, թե գերմանական քանդակը աղերսվում է բյուզանդական արվեստի հետ²⁹, անտեսելով, որ քննարկվող պատկերագրությունը բյուզանդական վարպետներին հայտնի չէ:

Ավելի ճիշտ կլիներ, թերևս, Ստրասբուրգի օրինակը մոտեցնել ասորական ստեղծագործություններին. Թովմային և Քրիստոսին նման ձևով են ներկայացնում նույն ժամանակի երկու ասորական ավետարանների մանրանկարները: Խոսքը վերաբերում է 1226 թ. ձեռագրի (Միդիաս, ասոր.— օրթոդոքս եպիսկոպոսություն) և XIII դ. սկզբի մատյանի (Փարիզ, Ազգային գրադարան, ասոր. 355) ձևավորումներին³⁰: Միայն մեկ ընդհանրություն ունենալով Թորոս Ռոսլինի երկի և գերմանական քանդակի հետ, ասորական նկարազարդումները տարբերվում են դրանցից ուրիշ էական առանձնահատկություններով,

Ստեղծագործությունների այս տիպի հետ պետք է կամրջել նաև Ֆլորենցիայի Ազգային գրադարանում պահվող իսպանական Ալֆոնս 10-րդ թագավորի նրգարանի (XIII դ. կես) մանրանկարը (ժողկել են ֆրանսիական դպրոցում սովորած իսպանացիները կամ Իտալիայից եկած վարպետները)³¹, որտեղ Քրիստոսը բռնում է առաքյալի առաջ մեկնված աչք՝ առանց այն մոտեցնելու իր կողին³²:

²⁵ Sk' u K. Laske, O. Holl. R. von Dobschütz, C. Jaszai, Thomaszweifel.—Im: Lexikon der Christlichen Ikonographie, Bd. 4, Rom-Freiburg-Basel—Wien, 1972, S. 301—303.

²⁶ Sk' u G. Schiller, op. cit., Abb. 361, S. 112.

²⁷ Sk' u O. Schmitt, Gotische Skulpturen des Strassburger Münster, Bd. 1, Frankfurt am Main, 1924, Taf. 33.

²⁸ Sk' u E. П. Ювакова, Немецкая скульптура 1200—1270 гг., Москва, 1983, с. 92; H. Jantzen, Deutsche Bildhauer des dreizehnten Jahrhunderts, Leipzig, 1925, Abb. 28, S. 68.

²⁹ Sk' u H. Jantzen, op. cit., S. 57.

³⁰ Sk' u J. Leroy, op. cit., pl. 109.3, 69.1.

³¹ Sk' u J. Dominguez Bordona, Spanish Illumination, vol. 1 and 2, New York 1969, pl. 89, p. 38—41.

³² Sk' u G. von der Osten, op. cit., S. 384.

Ռոսլինի պատկերին և մյուս հուշարձաններին ժամանակակից այդ աշխատանքը կրկին անգամ համոզում է մեզ քննարկվող կանոնիկ առանձնահատկության XIII դարում կիրառելի լինելու մասին և լրացնում մեր պատկերացումը այդ օրինաչափության տարածման սահմանների վերաբերյալ:

Իսպանական մանրանկարը իր հորինվածքային հատկանիշներով ավելի է մոտենում Քորոս Ռոսլինի ձևավորմանը, քան մյուս օրինակները: Այստեղ ևս առաջաչինքը տեղադրված են ձախից: Իսպանական և հայկական նկարազարդումները ունեն նաև այլ բնոճանրություն, որին կանդրազանանք բիշ հետո:

Մեզ հետաքրքրող հիշյալ երկրորդ տիպի հուշարձանները անցումային միջին փուլ են նշանավորում ստեղծագործությունների առաջին և երրորդ խմբերի միջև: Այդ բոլոր խմբերը իրարից խիստ սահմանազատված չեն, այլ գոյություն ունենալով կողք-կողքի, կապված են միմյանց հետ տարբեր թելերով:

«Քովմայի անհավատությունը» պատկերող երկերի երրորդ խումբը Քրիստոսին ցուցադրում է աշակերտի ձեռքը վերքի մեջ տեղադրելու պահին³³: Երբեմն «նոր» համարվող³⁴ այս տարբերակը իրականում գալիս է վաղքրիստոնեական շրջանից: Եվրոպայում շատ տարածված, նույնիսկ ոմանց արևմտյան թվացող, այդ պատկերատիպը հին արևելյան ակունքներ ունի³⁵: Այն տեսնում ենք դեռևս մեր հիշատակած Մոնցայի տափաշշի վրա³⁶: Պատահական չէ, որ նույն նախօրինակին են հետևում XII—XIII դարերի ասորական մի շարք ձեռագրերի³⁷, նաև արաբական ու ղարա-արաբական երկու մատյանների ծաղկողները³⁸ և Բեթղեհեմի ծննդյան եկեղեցու, հավանորեն, ասորական հանդիսացող, 1169 թ. խճանկարի ստեղծողը³⁹: Կանոնիկ այդ տարբերակը հանդիպում է միայն մեկ բյուզանդական հուշարձանում: Նկատի ունենք Վիեննայի Ազգային գրադարանի (Theol. gr 154) հունական Ավետարանի մանրանկարը (XI դ. 3-րդ քառորդ)⁴⁰: Այն հանդես է գալիս նաև որոշ արևմտյան նմուշներում. օրինակ՝ Քյոլնի ս. Մարտինի արքայությունից վերահիշյալ Ավետարանի մանրանկարում⁴¹, Բլանշ Կաստիլիացու 1230 թ. ֆրանսիական Սաղմոսագրքի պատկերում⁴², Լոնդոնում Վեստմինստերի արքայությունից մոտավորապես 1300 թ. որմնանկարում⁴³,

³³ Տե՛ս G. von der Osten, op. cit., S. 384.

³⁴ Տե՛ս K. Laske, O. Holl, P. von Dobschütz, G. Jaszai, op. cit., S. 311—303.

³⁵ Տե՛ս O. Demus, The Mosaics of Norman Sicily, London, 1949, p. 200, 345.

³⁶ Տե՛ս C. Colwell and H. R. Wiloughby, op. cit., p. 417; J. Leroy, op. cit., p. 277; G. Schiller, op. cit., Abb. 313.

³⁷ Տե՛ս J. Leroy, op. cit., pl. 94.3, 94.4, 135.1, 145.2.

³⁸ Տե՛ս K. Wessel, op. cit., S. 385—386.

³⁹ Տե՛ս W. Harvey, W. R. Lethaby, O. M. Dalton, H. A. A. Cruso, A. C. Headlam, The Church of the Nativity at Bethlehem, Ed. by R. Weir Schultz, London, 1910, pl. 2; B. H. Лазарев, История византийской живописи, т. 1, Москва, 1947, с. 130—131.

⁴⁰ Տե՛ս G. Millet, Recherches..., p. 577, n. 5; K. Wessel, op. cit., S. 385—386.

⁴¹ Տե՛ս The Year 1200, III, 212; G. Schiller, op. cit., S. 112.

⁴² Տե՛ս J. Dupont et C. Gnudi, La peinture..., p. 28.

⁴³ Տե՛ս M. Rickert, Painting in Britain, the middle ages, London, 1954, pl. 115a, p. 127; G. von der Osten op. cit., S. 384.

Ստրասբուրգի Աստվածածնի տաճարի արևելյան ճակատամասի XIII դ. վերջ թվագրվող քանդակում⁴⁴ և այլ երկերում:

Նույն նախօրինակն է օգտագործված և Կեռանի Ավետարանի ձևավորման համար:

Երրորդ խմբի հուշարձանները այսպես հանգամանալից ներկայացնելու կարիքը չէր լինի, եթե Ռոսլինի մանրանկարը առանձին ուշագրավ հատկանիշներով շանչվեր նրանցից մի քանիսի հետ: Անհրաժեշտ է նաև նկատի առնել, որ երկրորդ և երրորդ տիպերի ստեղծագործությունները հորինվածքով իրարից այնքան էլ հեռու չեն:

Մեր ուշագրության առարկան հանդիսացող երրորդ խմբի երկերում Քրիստոսը երբեմն ցույց է արվում դրոշ կամ խաչ բռնած⁴⁵: Այս առանձնահատկությունը բոլորովին բնորոշ չէ բյուզանդական, ասորական կամ դպտական արվեստի նմուշներին, այն հանդիպում է միայն արևմտյան որոշ երկերում:

Ռոսլինի կողմնորոշումների պատկերը ամբողջական չէր լինի, եթե նրա մանրանկարում աչքաթող անեինք այնպիսի բացառիկ մի երևույթ, ինչպիսին է խաչի առկայությունը Քրիստոսի ձեռքին: Այդ հատկանիշն ունեցող մեզ հայտնի առաջին օրինակը անգլո-սաքսոնական արվեստից է: Նկատի ունենք 971—984 թթ. Ազոթագրքի (Լոնդոն, Քրիստանական գրադարան, ձեռ. 49598) մանրանկարը⁴⁶:

Կանոնիկ նույն ավանդույթն ենք տեսնում արդեն վերը հիշատակված իսպանական Ալֆոնս X թագավորի ձեռագրի, Գի դե Դամփյերի Հյուսիսային Ֆրանսիայից ծագող մոտավորապես 1270 թ. բնագործակված Սաղմոսագրքի (Բրյուսել, Արքայական գրադարան)⁴⁷, և մինչև 1300 թ. ստեղծված անգլիական Ռամսեյ Սաղմոսագրքի (Նյու Յորք, Փյերփոնթ-Մորգան գրադարան, ձեռ. Մ. 302) պատկերներում⁴⁸:

Մալաթիայի Ավետարանի մանրանկարը աղերսվում է երրորդ տիպին պատկանող հիշյալ երկերի հետ նաև ուրիշ հատկանիշներով:

Բավական է ասել, որ այդ բոլոր օրինակներում առաքյալների խումբը ներկայացված է ձախից և միայն 971—984 թթ. անգլո-սաքսոնական Ազոթագրքի նկարազարդման մեջ է աչից հայտնվում ևս մեկ աշակերտ: Դա կրկին անգամ հաստատում է մեր որոնումների ճշտությունը, թույլ տալիս ավելի վստահ լինել նշված ստեղծագործությունների համար մի բնահանուր նախօրինակի առկայությանը:

Քորոս Ռոսլինի մանրանկարի յուրօրինակությունը հավաստող հատկանիշներից է նաև փակ դռների անսովոր տեղադրությունը: Սովորաբար,

⁴⁴ Տե՛ս M. Aubert, Cathédrales et trésors gothiques de France, Paris, 1971, ill. 273, p. 218—219.

⁴⁵ Տե՛ս K. Laske, O. Holl, R. von Dobschutz, G. Jaszai, op. cit., S. 301—302.

⁴⁶ Տե՛ս E. Temple, Anglo-Saxon Manuscripts 900—1066, A Survey of Manuscripts Illuminated in the British Isles. London, 1976, ill. 86, p. 49—53.

⁴⁷ Տե՛ս Medieval Miniatures from the Department of Manuscripts (Formerly the „Library of Burgundy“) the Royal Library of Belgium, Commentaries by L. M. J. De-laissé, Foreword by H. Liebaers, Introduction by F. Masai, New York, (1965), pl. 9, p. 50.

⁴⁸ Տե՛ս R. Marks and N. Morgan, The Golden Age of English Manuscript Painting 1200—1500, London, 1981, pl. 16.

բայց ոչ միշտ, ցուցադրվող կանոնիկ այդ մանրամասնը պատկերված է անկրկնելի ձևով՝ այնպիսի մի տեղում, որտեղ երբևէ նկարված չի եղել:

Բյուզանդական և ասորական նկարիչները դռները ներկայացնում են Քրիստոսի ետևից, փակ վիճակում, նրա «հայտնության հեթաթային բնութքը շեշտելու համար»⁴⁹: Ասորական և արևմտյան, հատկապես, իտալական որոշ օրինակներում դրանք գտնվում են գործող անձանց ոտքերի տակ⁵⁰, XII դ. անգլիական, ղպտական, նաև XIII դ. իտալական առանձին հուշարձաններում⁵¹՝ ձախից, իսկ XII դ. գերմանական աշխատանքներում՝ միաժամանակ և՛ ձախից և՛ աջից: Այս վերջին տիպի ստեղծագործությունները այնքան էլ շատ չեն: Դրանք են ս. էրենտրուդի ղալցբուրգյան 1140 թ. վերը նշված ձեռագրի և Քյոլնի XII դ. երկրորդ կեսի փղոսկրե տախտակի (Նյու-Յորք) պատկերները⁵²: Միայն Կեռանի Ավետարանի ձևավորողն է դռները տեղադրում աջից, ըստ երևույթին, հետևելով Ռոսլինի օրինակին: Այսպիսով տեսնում ենք, որ բոլոր մեջբերված նմուշները թեև Ռոսլինի աշխատանքի ուղղակի գուգահեռները չեն, բայց այնուամենայնիվ դրանք մատնանշում են, թե գեղարվեստական ո՛ր իրականության մեջ, ո՛ր հուշարձաններում են դիտվում մեզ հետաքրքրող ստեղծագործական առանձնահատկությունները, օգնում հասկանալ, թե պատկերագրական ինչ հումքից է կերտված կիլիկյան երկը:

Արևմտյան և արևելյան օրինակների հորինվածքային բաղադրիչ կանոնիկ մասերը Ռոսլինի երեակայության մեջ խմբագրվում և կազմում են մի ինքնատիպ մանրանկար, որը շատ է զանազանվում ծանոթ պատկերներից:

Միջնադարյան արվեստի օրինաչափությունների հետ կիլիկյան ստեղծագործության առնչությունները պարզելու տեսանկյունից ոչ պակաս հետաքրքիր է նաև Ռոսլինի երկի գունային համակարգի քննությունը:

Հավանական է, որ «Թովմայի անհավատությունը» թեմայի համար գոյություն են ունեցել գունային պատկերագրության կանոններ, որոնք կիրառվել են նկարիչների կողմից:

Զի կարելի չնկատել, որ այս ավետարանական հատվածը ներկայացնող որոշ աշխատանքներում կարևորություն է տրված կապույտին. այն հաճախ է հանդես գալիս և կամ մեծ մակերես է զբաղեցնում: Դա դիտվում է և՛ Ռոսլինի, և՛ Կեռանի Ավետարանի ձևավորողի, և՛ Բյանշ Կաստիլիացու ձեռագրի, և՛ անգլիական Ռամսեյ Սաղմոսագրքի, և՛ Քյոլնի ս. Մարտինի արքայության մատյանի ծաղկողների նկարագրումներում, և՛ Բեթղեհեմի ծննդյան եկեղեցու խճանկարում և այլ նմուշներում⁵³:

Պատահականություն է արդյո՞ք, որ Քրիստոսի զգեստի համար Մալաթիայի և Կեռանի Ավետարանների մանրանկարներում գործածված է սպի-


⁴⁹ Տե՛ս E. C. Colwell and H. R. Willoughby, op. cit., p. 415.

⁵⁰ Տե՛ս J. Leroy, op. cit., pl. 123.1; E. Sandberg-Vavala, op. cit., fig. 333, 335, 336; G. Schiller, op. cit., Abb. 348, 350, S. 110.

⁵¹ Տե՛ս G. Schiller, op. cit., Abb. 291; G. Millet, op. cit., fig. 631.

⁵² Տե՛ս G. Schiller, op. cit., Abb. 354, 358.

⁵³ Տե՛ս S. Der Nersessian, La miniature arménienne..., p. 19; J. Dupont et C. Gnudi, op. cit., p. 28; R. Marks and N. Morgan, op. cit., pl. 16; The Year 1200..., III. 212; W. Harvey, W. R. Lethaby, O. M. Dalton, H. A. A. Cruso, A. C. Headlam, op. cit., pl. 2.



տակ գույնը ու նույն օրինաչափությունը հանդիպում է Քյոլնի հիշյալ ձեռագրի պատկերում, իսկ մյուս օրինակներում հետևողական կերպով ի հայտ է գալիս կապույտը:

Ռոսլինյան Քովմայի զգեստավորման մեջ, ըստ երևույթին, ինչ-որ կանոնի թելադրանքով է օգտագործված վարդագույնը, նմանապես կարմիրը՝ Կեռանի Ավետարանի, Բլանշ Կաստիլիացու ձեռագրի, Ռամսեյ Սաղմոսագրքի ձևավորումներում, Բեթղեհեմի խճանկարում:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ Մալաթիայի ձեռագրի նկարազարդման վերլուծությունը հնարավոր չէ առանց Կեռանի Ավետարանի պատկերին անդրադառնալու: Երկու նույնանուն մանրանկարների, ավելի մանրամասն համեմատությունը շահեկան է ոսլինագիտության առանձին, կարևոր խնդիրների տեսակետից: Այդ ձևով կարող ենք մեկ անգամ ևս համոզվել, որ բաղդատվող հուշարձանների հեղինակները տարբեր անհատականություններ, տարբեր արվեստագետներ են: Միևնույն թեման ընկալելու և հաղորդելու եղանակից թվում է, թե զգացվում է անգամ նկարիչների բնավորությունը:

Ռոսլինյան հավաք, նպատակասլաց նկարագրի մասին է կարծես վկայում Մալաթիայի Ավետարանի նկարազարդման միաձույլ բնույթը, որտեղ, ինչպես արդեն տեսանք, բոլոր մասերը իրար հետ սերտորեն կապված են և առաքյալների ուշադրությունը բևեռված է Քրիստոսին, ինչպես երգչախմբի անդամների ուշադրությունը՝ խմբավարին:

Կեռանի մատյանի ձևավորման մեջ այսպիսի ամբողջականություն չկա: Առաքյալները այստեղ այդքան կենտրոնացած չեն, նրանց հայացքները ցրված են: Ավելին՝ աշակերտներից մի քանիսը (հատկապես նրանք, որ նայում են դիտողին) կարծես ապրում են առանձին կյանքով՝ ասես, տվյալ մանրանկարի մեջ են տեղափոխված ուրիշ պատկերից:

Քննվող կիլիկյան ստեղծագործություններում տարբեր ձևով է մեկնաբանված և Քրիստոսի կերպարը: Թվում է, թե Ռոսլինը օժտել է նրան միահեծան իշխող, արևելյան բռնակալի տիրական կեցվածքով, իսկ անանուն աշակերտը նկարել է այդ կերպարը հանդուրժող, խոհական տեսքով: Վերջինիս մեղմությունը նկատելի է և՛ զլխի թեքվածների, և՛ մարմնի շարժման մեջ, մինչդեռ Ռոսլինի Քրիստոսը կտրուկ, շեշտակի շարժումներ, վճռական դիրք ունի:

Քովմայի կերպարը ամբողջովին նսեմանում է Մալաթիայի Ավետարանի պատկերում, իսկ Կեռանի ձեռագրի մանրանկարում նա երկարահասակ է և ոչ այնքան կամազուրկ, նույնիսկ կարելի է ասել, որ արժանապատվության ընդգծված զգացումով և նուրբ ազնվական դիմագծերով:

Դժվար է պատկերացնել, որ նույն նկարիչը կարողանար ստեղծել իրարից այսքան զանազանվող նկարագրեր: Կասկած չկա, որ երկու մատյանների ծաղկողները տարբեր ստեղծագործական խառնվածք են ունեցել:

Ռոսլինյան կերպարները բնորոշում են իրենց հեղինակին որպես զգացմունքային հուժկու անհատականության, իսկ նրա աշակերտը ներկայանում է իբրև նուրբ վերլուծող, խոր փիլիսոփա:

Քորոս Ռոսլինի «Քովմայի անհավատությունը» պատկերի վերլուծությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

ա) «Թովմայի անհավատությունը» և «Հանդիպումը Գալիլյայում» թեմաները երբեք և ոչ մի վարպետի կողմից չեն միացվել: Հետևաբար Ռոսլինի աշխատանքը եզակի տեղ է զբաղեցնում ստեղծագործությունների տարբեր տիպի պատկերազրական ընտանիքների կարգում: Խնդրո առարկա երկը միջանկյալ դիրք ունի XIII դարում կատարված և գեռես կատարվելիք օրինակների միջև:

բ) Այս հուշարձանում արտացոլվել են թե՛ արևելյան և թե՛ արևմուտյան արվեստի բնագավառում անմահ նկարչի ունեցած գիտելիքները, ըստ որում այստեղ ավելի շատ են եվրոպական գեղագիտական օրինաչափությունները:

գ) Միջնադարյան կանոնների ընտրությունը այս նկարազարդման մեջ ծառայում է յուրահատուկ ոճական նպատակի իրականացմանը, գեղարվեստական ազդեցության ուժեղացմանը:

դ) Մանրանկարի քննությունը ցույց է տալիս, թե ինչ ձևով էին կանոնիկ օրինաչափությունները կերպարանափոխվում Միջերկրական ծովի ավազանի և լատինական արևմուտքի ժողովուրդների արվեստում: Այս իմաստով Ռոսլինի ստեղծագործության կարևորությունը դուրս է գալիս հայկական արվեստի շրջանակներից:

ե) Թորոս Ռոսլինը ստեղծել է անօրինակ մի երկ, որը, այլ հուշարձանների հետ պատկերազրական առանձին բնահանրություններ ունենալով հանդերձ, խիստ տարբեր է բոլորից և տվյալ թեմայի սահմաններում նոր, կարևոր նվաճում է:

Л. Б. ЧУГАСЗЯН

ТОРОС РОСЛИН—«НЕВЕРИЕ ФОМЫ»

Резюме

Миниатюры Евангелия Малатии 1267—1268 гг. (Матенадаран им. Маштоца, рук. № 10675)—замечательные произведения армянской средневековой книжной живописи. Согласно памятным записям, рукопись была иллюстрирована выдающимся киликийским художником Торосом Рослином по велению католикаса Костандина I Бардзбердци для наследника армянского трона малолетнего принца Гетума (будущего царя Гетума II).

Миниатюра «Неверие Фомы» Евангелия Малатии является первой дошедшей до нас иллюстрацией этой темы в армянском искусстве.

Среди многочисленных восточных и западных произведений, представляющих этот сюжет, работа Рослина выделяется необычной композиционной особенностью—наличием горы Галилейской. Здесь тема «Неверие Фомы» соединена с историей явления Христа апостолам на горе Галилейской. Эти две темы никогда ни одним мастером не были представлены вместе. Несмотря на соединение двух тем большинство особенностей миниатюры относится к истории «Неве-

ԷԴՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ

1283 թվականին՝ Հայաստանի տոնի առիթով, Կիլիկյան արքունիքում տեղի են ունենում ճոխ հանդիսություններ, որոնց միջոցին Լևոն Գ թագավորը ձիավորական (ասպետական) օրհնություն է սպարզում իր Հեթում ու Քորոս որդիներին, ինչպես և բազմաթիվ այլ երիտասարդների՝ «մանկանցն իշխանաց և յարքունական սպասաւորացն»:

Այդ հանդիսություններին մասնակցում է նաև ժամանակի հայ եկեղեցու խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Հովհաննես Պլուզ Երզնկացին, որը Հակոբ Ա Կլայեցի կաթողիկոսի խնդրանքով մի քնդարձակ ու ուշադրավ ճառ է արտասանում, որտեղ ավելի մանրամասն, քան այլուր, շարադրում է իր մտքերը ավատատիրական հարաբերությունների ամրապնդման, տիրոջ ու ծառայի փոխհարաբերությունների և այդ հարաբերությունները ավելի տանելի ու կողմերի համար քնդունելի դարձնելու վերաբերյալ՝ բնաբան ունենալով Պողոս առաքյալի «Առ հոովմայեցիս» թղթի «Ամենայն անձն որ քնդ իշխանութեամբ է ի հնազանդութեան կա...» դարձվածքը¹:

Ի թիվս այլ հարցերի, Հովհաննես Երզնկացին սույն ճառում մի քանի ուշադրավ ակնարկներ է անում եկեղեցու հովանու ներքո գտնվող ինչ-որ զինվորական նոր կազմավորումների մասին, որոնք, մեր կարծիքով, կարող են նոր լույս սփռել կիլիկյան զինվորականության և մասնավորապես ասպետության շուրջը եղած վիճելի հարցերի լուսարանման վրա:

Ինչպես հայտնի է, Կիլիկյան հայկական պետությունը բազմաթիվ պետական և սոցիալական բարձունքներ ժառանգեց Հայաստանից, որոնք ուղղակի տեղափոխվեցին Կիլիկիա: Սակայն փաստ է նաև այն, որ Կիլիկյան հայկական պետությունը նոր միջավայրում իր վրա կրեց նաև շոշափելի ազդեցություններ, ինչպես Բյուզանդիայից ու խաչակիրներից, այնպես էլ մահմեդական իշխանություններից: Իզուր չէ, որ դեռևս ներսես Շնորհալին դժգոհում էր, թե դուրս գալով հայրենիքից, շատ արժեքներ փոխվել են և դարձել անկայուն, «եթէ աստուածային գործոյն տեսութիւնս, և եթէ նիւթականիս աշխարհի իշխանութիւն»²: Իսկ ներսես Լամբրոնացին բողոքում էր. «Մարմնական իշխանութիւնն՝ բազում ինչ բարեձևութիւն նախանձեալ

¹ Նորին Յոհան վարդապետի ասացեալ ի բանն առաքելոյ, որ ասէ «Ամենայն անձն, որ քնդ իշխանութեամբ է, ի հնազանդութիւն կա», Մատենագրարան, ձև. № 2173, էջ 86ա—101ա:

² Ներսես Շնորհալի, Նամականի, Վենետիկ, 1838, էջ 7:

առին ի ֆռանդաց և հոգևորն անհազորդ ամենևին»³: Անշուշտ, բացառությամբ չի կաղամակ պետության հիմնական օղակներից մեկը՝ բանակը:

Նկատվել է արդեն, որ կիլիկիայն բանակը, մասնավորապես սկզբնական շրջանում, շատ բան փոխ է առել հայկական արքունական բանակից և նրա հիմնական կորիզը շարունակում էր մնալ ազնվականական հեծելազորը: Հայտնի է նաև, որ ինչպես թագավորի, այնպես էլ պալատականների ու բարձր ազնվականության որդիները՝ հասունության տարիքի հասնելիս, հատուկ ծեսով ձիավորի աստիճան էին ստանում, որը միջնադարյան Հայաստանում հոմանիշ է եղել ասպետին: Միաժամանակ պետք է նկատի առնել, որ կիլիկիայն հայկական թագավորությունն ավելի կենտրոնացած պետություն էր, քան Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունները Հայաստանում, և կիլիկիայն ազնվականությունը, զրկված լինելով նախարարական Հայաստանի ազնվականության լայն իրավունքներից ու հնարավորություններից, չէր կարող կենտրոնական պետությանը սեփական, նախարարական զորագնդերով ապահովել, իսկ դա ստիպում էր և՛ արքունիքին և՛ խոշոր ավատատերերին լուրջ ուշադրություն դարձնել վարձու զորագնդեր ստեղծելու վրա:

Հայ իրականության մեջ վարձու բանակների օգտագործման փորձեր եղել են դեռևս Աշոտ Բ-ի թագավորության շրջանում⁴, իսկ ավելի ուշ՝ վրաց Բագրատունիների մոտ⁵: Սակայն, ի տարբերություն վերոհիշյալ փորձերի, կիլիկիայն հայկական բանակի մի զգալի մասը, անկասկած, բաղկացած է եղել վարձու զինվորներից, որոնց նկատի ունի Ներսես Շնորհալին, երբ՝ դիմելով իշխաններին, պահանջում է չկտրել զինվորների վարձը, շտանահարել նրանց իրավունքները. «Նաև զզինուորաց ձերոց և զամենեցուն՝ որք ծառայենն զձեզ, զսահմանեալ հոռքսն մի՛ պակասեցուցանէք, զի զրկանք մեծ է այն և անիրաւութիւն. քանզի որպէս նորա պարտական են վասն պարգեւաց, որ ի ձէնջ, զարիւնս իւրեանց հեղուլ վասն ձեր, նոյնպէս և դուր պարտիք զխոստացեալ թոշակսն նոցին հատուցանել անթերի»⁶:

Մյուս կողմից Լևոն Բ-ի օրոք, ինչպես և մինչ այդ էլ, ասպետական օրդենների հաստատումը կիլիկիայն հայկական պետության շուրջը, և նրա տարածքում նպաստեցին հայկական ազնվականության մեջ ասպետական կենցաղի ու սովորությունների տարածմանը⁷: Դա մասնավորապես երևում է զինվորական պաշտոնների, տիտղոսների անվանումներից. Գունգատարլ,

3 Սրբոյն Ներսիսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ և Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 529:

4 «Հայ ժողովրդի պատմություն», հտ. 3, Երևան, 1976, էջ 275:

5 Տե՛ս Ի. Արուլան, Քարթլիս ցիտվերայի կամ Վրաց ժամանակագրության հին հայերեն թարգմանությունը, Թբիլիսի, 1953, էջ 245:

6 Ներսէս Շնորհալի, Թուղթ քնդհանրական, էջմիածին, 1865, էջ 100: Անկասկած վարձու բնույթ էր կրում նաև այն հայ զինվորների ծառայությունը, որոնք ինչ-ինչ պատճառներով ննթակա էին օտար տիրոջներին, սակայն նույնիսկ մահմեդական բանակներում պահպանում էին իրենց ազգային բոլոր հատկանիշները, այդ թվում նաև կրոնը: Անդ, էջ 104—105: Հայտնի է անգամ, թե ինչպիսին է եղել վարձատրությունը կիլիկիայն բանակում. օրինակ արար պատմիչ Արուլ Ֆնդան վկայում է, որ կիլիկիայն հեծելազորայինը ստանում էր 12 օսկի, իսկ հետևակայինը՝ նրանից շորս անգամ պակաս: Տե՛ս Ղ. Ալիշան, Միսուան, Վենետիկ, 1885, էջ 487:

7 Գ. Գ. Микаелян, История Киликийского Армянского государства, Ереван, 1952, тp. 60.

Մարեշալ, ձիավոր և ձիավարժ, որոնք ինչպես ասվեց, ասպետի (рыцарь կամ chevalier) հոմանիշներն են⁸:

Այնքան նկատելի է եղել արևմտյան ազդեցությունը տարազի, հանդերձանքի, անվանումների վրա, որ ոմանց հիմք է տվել ենթադրելու, թե Կիլիկիայում, դեռևս XII դարի կեսերից, գոյություն են ունեցել հայկական ասպետական կազմակերպություններ: Մասնավորապես այդպիսի հետաուսումնառության է հանգում Ղ. Ալիշանը, որը հայագիտության մեջ կիլիկյան ասպետության առաջին և ամենից հանգամանալից ուսումնասիրողն է:

Ալիշանը, մանրամասն քննության ենթարկելով օտար աղբյուրներում կիլիկյան ասպետության մասին տեղեկությունները, գրում է. «Հնագույն գրիչը զասպետական կարգաց, ո՛չ չիշեն զհայկական ինչ առանձինն, բայց հեղինակը ոմանք ժէ և ժԸ դարուց՝ ո՛չ զիտեմ յորոց աղբերաց առեալ, ասեն և Կարգ Հայ ասպետաց՝ հաստատեալ ի ժամանակի հաստատութեան Տաճարականացն, այլ զի սոցայս հաստատութիւն եղեալ է յամի 1118 յերուսաղէմ, առ մերովս Ա. Պարօն Թորոսի, թոռամբ Ռուբէնի մեծի, ոչ կարծեմ զայդ ստոյգ, բայց հաւանագոյն զոր այլք ասեն՝ ի քաղաւորաց մերոց հաստատել. և ինձ սիրելի էր ասել ի Լեւոնի Ա. քաղաւորի: Երկու դասք ասեն լինել ասպետացս հայոց, մի եկեղեցականաց կամ քահանայից, և միւս՝ աշխարհայնոց, երկոցուն ևս նպատակ զոլով՝ բանիւ և զինու պաշտպանել զուղղափառ հաւատս և կրօնաւորիլ կանոնօք Ս. Բարսղի, պաշտպան ունելով զՍուրբ Վլաս եպիսկոպոս (թերևս նոյն ինքն զՍ. Բարսեղ), վասն որոյ և ասպետք ս. Վլասայ կոչէին, որ և այս ոչ թուի ինձ հաւանական, մանաւանդ զի չիշեն և այլ զկարգ Ս. Վլասայ յԱսորիս և յատուկ ի Պողոսմաչիս՝ այլ ո՛չ ասեն հայոց սեփհական»⁹: Այնուհետև նա բերում է ասպետագիր հեղինակներից մեկի նկարագրած հայ ասպետի պատկերը, տարազի օրհնությունը և այլն¹⁰:

Հետագա ուսումնասիրողները տարբեր վերաբերմունք են հանդես բերում քննարկվող հարցի վերաբերյալ: Ոմանք ուղղակի համաձայնում են Ալիշանի հետ¹¹, մյուսները, և մասնավորապես Ս. Բոռնազյանը, քննության առնելով Կիլիկյան հայկական բանակի հետ առնչվող հարցը, ժխտում են ասպետական ազգային կազմակերպության գոյությունն այնտեղ¹²: Սկզբունքորեն համաձայնելով Բոռնազյանի հետ, միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ հարցը դեռևս բաց է մնում և կարոտ է նոր լուսարանությունների, մանավանդ որ, ինչպես ասվեց, Հովհաննես Երզնկացու վերո-

8 Ս. Վ. Բոռնազյան, Մոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 100:

9 «Միսուան», Վենետիկ, 1885, էջ 487:

10 Անդ. Ենչան ձիավորացս էր խաշ կարմիր՝ զպատկեր Սրբոյն Վլասա, ի միջին ունեւալով զգետտ՝ ասուայ սպիտակ: Զպատկերս երկոցուն ևս դասուց անուանեալ հայ ձիավորացս՝ ընծայէ ոմն յասպետագիր հեղինակաց, որ և մեծ ինամով ասէ հետախուզեալ և ճշգրտագոյն զձեան աւանդեալ... Այլ որ կապուտագոյն ասէ զհանդերձան, և զխաշն ոսկեղէն առ հայկական ապիժուս:

11 Հ. Քյուրտյանը ո՛չ միայն հետևում է Ալիշանին, այլև առանց տարակուսելու գտնում, որ ստեղծվել էր Ս. Վլասի անվան հայկական ասպետական ընկերություն. Հ. Քյուրտյան, Երիզա և Եկեղիաց դավառ, Վենետիկ, 1953, էջ 181: Քյուրտյանից իմանում ենք նաև, որ նույնի գոյությունը բնութենել է նաև Եղիշե Գուրջան սրբազանը, անդ:

12 Ս. Վ. Բոռնազյան, նշվ. աշխ., էջ 115—116:

հիշյալ ճառում տեղեկություններ կան XIII դարի վերջերին Կիլիկիայում ստեղծված զինական նոր կազմակերպությունների մասին, որոնք առաջին հայացքից կարող են ուղղակի ասպետական կազմակերպությունների ստեղծման ակնարկներ դիտվել:

Սակայն, Երզնկացու ճառին անդրադառնալուց առաջ, անհրաժեշտ ենք համարում քննության առնել այն հարցը, թե մինչև ևևոն Բ և նրա թագավորության շրջանում հնարավո՞ր էր հայ ասպետական կազմակերպությունների գոյությունը Կիլիկիայում:

Առաջին հայացքից իսկապես շատ հավանական է թվում, քանզի ինչպես Փիլարտոս Վարաժնունու, այնպես էլ Գող Վասլի և Հայաստանի հարավում ու Ասորիքում ստեղծված մյուս հայկական իշխանությունները չկարողացան ի մի բերել ողջ Հայաստանում և նրա հարևան հայաշատ շրջաններում առկա հայկական լզինվորական ռեժիմերը, որոնցից շատերը դեռևս դարի վերջում էլ, ինչպես երևում է Շնորհալու «Թուղթ ընդհանրականից», ծառայում էին և՛ քրիստոնյա և՛ մահմեդական, օտար բանակներում¹³: Ավելին, ո՛չ միայն խաչակիրների մոտ ծառայության անցած հայ ազնվականները, այլև անգամ կիլիկյան հայ իշխանները, մինչև ևևոն Բ-ի կողմից Անտիոքի դքսությանը ենթակա դարձնելը, ասպետական տիտղոս էին ստանում Անտիոքի դքսի կողմից¹⁴: Եթե այդ ամենին ավելացնենք, որ Լամբրոնացու արտահայտությամբ Կիլիկյան հայկական պետությունը աշխարհիկ իշխանության հարցերում մեծապես ազդվել էր արևմուտքից¹⁵, ապա իսկապես կարծեք թե հավանական է դառնում ուշ շրջանի հեղինակների հաղորդածը հայկական ասպետական կազմակերպություն ստեղծելու մասին: Սակայն այդ վարկածը հերքվում է հենց Շնորհալու վերոհիշյալ «Թղթում»: Ասենք որ Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» միջնադարյան

13 Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 105:

14 Մեր կարծիքով Ս. Բոռնազյանի բերած այն հետաքրքիր փաստարկը, որ Լամբրոնի իշխան Օշինը (1140—1170) Հեթումին ձիավոր է դարձրել (Ս. Բոռնազյան, նշվ. աշխ., էջ 110), դեռևս չի ժխտում Ղ. Ալիշանի և Ժ. Մորզանի այն ենթադրությունը, թե մինչև 1193 թվականը, այսինքն՝ մինչև ևևոն Բ-ի կողմից Անտիոքի նկատմամբ դերադահուության ստանձնումը, հայ իշխանները ձիավոր էին օձվում Անտիոքի դքսի կողմից: Բանն այն է, որ Լամբրոնի իշխանությունը Օշինի ժամանակ չէր գտնվում Թուրքիանների պետության կազմի մեջ և ընդունում էր Բյուզանդական կայսրության դերադահուությունը, հետևաբար Օշինը Անտիոքի իշխանության նկատմամբ պետք է այլ հարաբերության մեջ լիներ, քան Թուրքիանները: Միաժամանակ այդ փաստը ցույց է տալիս, որ ձիավոր ասպետ օձելու սովորույթը եղել է նաև արևելյան քրիստոնյաների մոտ գուցե հետադայում ինչ-ինչ արևմտյան ազդեցություններ է ընդունել:

на территориях, где господствовал тюркский язык, изложена нами выше,—она не оставляет места для возникновения серьезных этногенетических построений с неармянскими этническими истоками.

5. Религия

История распространения христианства среди армян известна хорошо,—прошлое армянской церкви на Украине и в Польше также изучено довольно подробно¹⁴⁷. Более углубленное изучение духовной культуры армян Украины, несомненно, может привести к открытию различных культовых особенностей, вполне однако укладывающихся в комплекс религиозных верований армяно-григорианской церкви¹⁴⁸. Несомненно, армяне XVI—XVII вв. были, кроме всего, суеверными людьми, но суеверия эти (например, мистическая вера в чудеса¹⁴⁹) вполне соответствуют психическому складу жителей городов этого периода и не носят, пожалуй, специфически армянских черт. В них нельзя также открыть какие-либо реликты номадизма в прошлом.

Армяно-григорианская религия в XVI—XVII вв. накладывала на своих приверженцев совершенно отчетливый национальный отпечаток. Переход в другую религию (для верхушки колоний подобную притягательную силу имело римское католичество как религия господствующего класса Польши) являлся практически денационализацией—к чему он и действительно приводил¹⁵⁰.

Армянские колонии на Украине дважды были ареной ожесточенной религиозной борьбы: в 70-х гг. XIV в., когда киевские армяне изгнали пролатинского епископа Якова и его приверженцев, что привело к победе антиуниатов, но и к ликвидации киевской армянской епископской кафедры¹⁵¹, и в 30-70-х гг. XVII в., когда под давлением католического духовенства, польского патрициата и правящих кругов Польши в армянских колониях Украины была реализована уния армяно-григоринской церкви с Римом¹⁵².

¹⁴⁷ *Petrowicz G.* La chiesa Armena in Polonia, p. 1 (1350—1624). Roma, 1971. Арм. перевод: Պարոպիշ Գ., Հայ հիդրոկրիտի լեհաստանի մեջ, Վրեննա, 1980:

¹⁴⁸ На наличие подобных особенностей («ошибок»—в представлении католической церкви) указывал Л.—М. Пиду де Сент-Олов; см. *Zródła dziejowe*, t. 2, s. 7—12, 122—129.

¹⁴⁹ О составлении в среде армянских колоний особых книг для записи чудес см. *Dachkévytch Ya.* Les historiens arméniens... p. 410—412.

¹⁵⁰ Ср. примеры, приведенные нами в статье „Armenians in the Ukraine at the time of Hetman Bohdan Xmel'nyj (1648—1657)“.—HUS, Cambridge, Mass., 1979—1980, vol. 3—4, part. 1, p. 173—175.

¹⁵¹ *Dachkévytch Ya.* Les Arméniens à Kiev (de la deuxième moitié du XIII^e au XVII^e siècle).—Études arméniennes en souvenir de Hagj Berberian. Paris, 1983.

¹⁵² *Petrowicz G.* L'Unione degli Armeni di Polonia con la Santa Sede (1626—1686). Roma, 1950. Мы указывали на тенденциозность этой работы в рецензии, напечатанной в REArm., N. S., 1964, t. 1, p. 462—466.

Конфликтные ситуации на религиозной почве, возникавшие в армянских колониях, ни разу не привели к обнаружению пережитков каких-либо примитивных верований вроде шаманизма, который исповедали половцы. Не привели также к противопоставлению армян-кыпчакофонов армянам-арменофонам. С другой стороны, ведь известно, что христианизация половцев в Венгрии неоднократно в XIII—XV вв. приводила к обострениям на религиозной почве именно в связи с сохранением пережитков шаманизма среди половцев.

Изучение религиозной жизни армян Украины, Крыма, Польши убедительно свидетельствует об отсутствии реликтов первобытного шаманизма.

6. Духовная и материальная культура

Как духовная, так и материальная культура армян Украины типична для городского населения,—конечно, со своеобразными восточными элементами, являющимися определенным отражением жизни и быта населения восточных городов, т. е. городов Малой Азии, Закавказья, Крыма. Пристрастие к восточной роскоши, типичное для верхушки колоний, восточные одежды, восточное убранство квартир, восточная утварь, специфическая армянская кухня и т. п. постепенно все теснее переплетались с проявлениями местной украинской и польской, а также западной культуры, ярко проявившимися, например, в некоторых областях армянской духовной культуры. Армянское зодчество, живопись на Украине рано потеряли специфические восточно-христианские черты, но их на длительное время сохранили некоторые ответвления декоративно-прикладного искусства (книжная иллюстрация, каменная резьба¹⁵³). Изучение всех этих явлений, которое, по существу, не проводилось¹⁵⁴ или проводилось с предвзятых представлений об армянах как пропагандистах искусства ислама¹⁵⁵, отстает от нужного уровня. Проблема осложняется также тем, что значительная часть Украины и Польши в XV—XVII вв. сама по себе входила в зону интенсивного влияния переднеазиатской материальной культуры. Независимо от этого можно сказать, что как в духовной, так и в материальной культуре армян до сих пор никаких следов быта кочевников обнаружено не было.

¹⁵³ Дашкевич Я. Р. Армянские рельефные кресты Львова и Каменца-Подольского XIV—XVII вв.—*ФФ*, 1980, № 3, с. 125—145.

¹⁵⁴ Кроме искусства. Ср., в частности, *Mankowski T. Sztuka Ormian lwowskich. Kraków, 1934.* Также: Дашкевич Я. Р. Неизвестные памятники армянского зодчества на Украине (XIII—XVII вв.).—В кн.: V Республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов. Ереван, 12—16 октября 1982 г. Ереван, 1982, с. 66—67, 305—306.

¹⁵⁵ См. нашу рецензию на книгу *Mankowski T., Orient w polskiej kulturze artystycznej. Wrocław, Kraków, 1959, опубл. в REArm., N. S., 1965, t. 2, p. 434—444.*

Показательной можно считать профессиональную структуру экспатриантов. Для армян Крыма и Украины характерно занятие купечеством (как международной, т. е., по существу, межконтинентальной, так и местной торговлей) торговлей специфическими «армянскими товарами»¹⁵⁶, различными ремеслами (ювелирное, вышивальное, оружейное, скорняжное, камнерезное, мыловаренное и др.), садоводством. Нет следов того, чтобы армяне занимались скотоводством—столь характерным для номадизировавших половцев, сохранявших, кстати, это занятие на протяжении столетий как в Трансильвании, так и на паннонской степной равнине (в пределах Большой и Малой Кумании).

Если хотя бы на момент принять в качестве рабочей гипотезы теорию о половецком этническом субстрате армян Украины, невозможно представить себе, чтоб та жесткая психическая ломка, которая на протяжении очень ограниченного отрезка времени должна была привести к смещению этнической доминанты (кочевничество → оседлость), не оставила следов как в духовной, так и в материальной культуре).

7. Формы общественной организации

Не подлежит сомнению, что два резко отличные типа обществ—кочевое и оседлое—создавали два резко несхожие типа общественной организации. Кочевое общество с господствующими в нем родоплеменными взаимосвязями, с большим трудом приравнивалось к прокрустову ложу западных форм общественной организации, к которым им пришлось с трудом и не без конфликтов адаптироваться в феодальной Венгрии.

Армяне Украины принесли с собой готовые формы общественной организации, характерной для населения городов, или же без особых трудностей приравнивались к существовавшим в городах Украины формам общественной организации. Армяне принесли с собой свое право (судебник Мхитара Гоша), подвергшееся определенной модификации в соответствии с господствовавшим на Украине местным древнерусским кодифицированным и украинским обычным правом, а также с немецким городским (магдебургским) правом. Структура полуавтономной, более или менее ограниченной (в зависимости от условий в отдельных колониях) административно-судебной системы, базировавшейся на модифицированном армянском праве, не противоречила обычаям людей, привыкших к городской жизни. Армяне принесли с собой организацию молодежных братств удальцов¹⁵⁷, эволюционировавших на Украине в сторону распространен-

¹⁵⁶ *Dachkévytch Ya.* Les marchandises arméniennes en Ukraine, Pologne et Lituanie au XVII^e siècle.—*REArm.*, N. S. 1981, t. 15, p. 341—354.

¹⁵⁷ *Григорян В. Р.* К вопросу о «братствах удальцов» в армянских колониях Западной Украины.—В кн.: Исторические связи и дружба украинского и армянского народов. [т. 2]. К., 1965, с. 128—136. Его же. *Յազնովեց քաղաքի հայկախոն*

ных, особенно среди украинского населения, церковных братств с собственными ссудными кассами-ломбардами (братскими банками). Господствовавшая в городах Украины цеховая организация не являлась чуждой для армян, знакомых с регламентацией ремесленного производства в ближневосточных городах.

Церковная организационная структура (парафии, епископства, монастыри), при которой светский элемент (местные феодалы и, особенно, богатый патрициат) играл даже главенствующую роль (что было характерно для украинской православной церкви), отодвигая на второй план власть духовенства, также была привычной для армян, независимо от того, говорили ли они на армянском или на кыпчакском языках. До сих пор не было найдено никаких следов существования в среде армянских колоний реликтов родо-племенной структуры кочевого общества.

* * *

Итог произведенной нами «проверки» этнических показателей по нескольким важнейшим параметрам приводит к однозначному выводу. С точки зрения антропологии, этнического самосознания, происхождения, религии, духовной и материальной культуры, форм общественной организации армяне-тюркофоны являлись органической частью армянского этноса.

Сравнение армян (кыпчакофонов) и половцев свидетельствует о существовании двух различных этнических доминант. Отсутствуют хотя бы малейшие следы осуществившейся, будто бы, психической ломки, вследствие которой часть номадов-половцев должна была превратиться в горожан (жителей городов), армян-кыпчакофонов. Социолингвистические данные—тот ошеломляющий факт, что армяно-кыпчакский язык официально считался армянским—свидетельствуют только о том, что этнические связи внутри одного, единого этноса—армянского, явились гораздо более сильными, фактически определяющими, чем языковые различия. Лингвистическое сходство армян-кыпчакофонов и половцев или (что более близко исторической правде) крымских татар не является никаким этногенетическим признаком.

Попытка различными, далекими от фактов рассуждениями обосновать мнимое существование этногенетических процессов, в результате которых часть половцев превратилась в армян, не имеет под собой никакой реальной почвы.

Не было никаких этногенетических процессов. Был только этап в этнической истории части армян Крыма и Украины—эпизод, для которого характерным был переход части армян на кыпчакский язык.

X. Несколько слов о методике

Изучение источников говорит о том, что гипотеза о мнимом существовании армяно-кыпчаков не выдерживает критики. Источниковая база этой гипотезы равна нулю. Утверждения Гаркавца, для поддержки которых он фальсифицировал данные источников (в которых, будто бы, зафиксировано самоназвание «кыпчаки», употребляемое армянами-кыпчакофонами, и, будто бы, засвидетельствовано употребление названий «армяно-кыпчаки», «армяно-половцы» в качестве этнонима или в качестве составной части названий различных общественных инструментов армян Украины и т. п.), игнорировал обширную литературу вопроса или же давал заведомо неправдивые ссылки на отдельные авторитеты,—сами по себе компрометируют выдвигаемую гипотезу.

Замалчивание работ предшественников, стоявших на точке зрения армянского этноса армян-кыпчакофонов, фальсификация переводов армяно-кыпчакских текстов, популяризация беспочвенных выдумок в качестве проверенных фактов—совершенно явные проявления «метода», который может вызвать только осуждения. Погоня за дешевой сенсацией, продиктованная ненаучными соображениями, попытка изобрести этногенез выдуманных «армяно-кыпчаков»—этногенез, для которого никогда не было реальной почвы, накладывают негативный отпечаток на публикациях Гаркавца. Научное творчество создателя гипотезы свелось к примитивному приему—образованию от вошедшего в научный обиход названия языка «армяно-кыпчакский язык»—названия несуществующего народа армяно-кыпчаков. Научную ценность подобного открытия можно приравнять к попытке создать название этноса от названия языка суахили.

К чести современной тюркологии, необходимо признать, что это этногенетическое «творчество» не нашло почти никакой поддержки. Мы встретили всего несколько случаев употребления термина «армяно-кыпчаки» в научной литературе—употребления, произведенного более по инерции (которая сама по себе, правда, может настораживать), чем из глубокого убеждения в правомерности существования новосозданного этнонима.

В свое время Э. И. Фазылов в хроникерской заметке упоминал «язык армянских кыпчаков, проживавших на территории Польши»¹⁵⁸. И. И. Абдуллин сначала только сигнализировал существование гипотезы Клоусона,¹⁵⁹ а в дальнейшем осторожно писал о том, что дальнейшие исследования «будут способствовать прояснению этногенеза

¹⁵⁸ Фазылов Э. И. Первый тюркологический съезд в Анкаре.—Советская тюркология. Баку 1973, № 1, с. 132.

¹⁵⁹ Абдуллин И. И. Армяно-кыпчакские рукописи и их отношение к диалектам татарского языка.—Материалы по татарской диалектологии, т. 3, Казань, 1974, с. 169.

армяно-кыпчаков»¹⁶⁰. По существу, только польский тюрколог, караим по национальности, З. Абрагамович выступил как приверженец теории Клоусона-Гаркавца (по-видимому, здесь сыграл свою роль ненаучный момент: Клоусон, излагая свою теорию, привел, как параллель, пример караимов, библистов по религии и тюркофонов по языку, считая их тюрками по расовому составу). З. Абрагамович писал, что об армяно-кыпчакофонах «утверждают сейчас, по-видимому правильно, что это часть кыпчаков, обращенных, однако, в христианство армянского обряда»¹⁶¹. Так или иначе все эти, по существу, случайные, высказывания нельзя считать поддержкой гипотезы об армяно-кыпчаках. Гораздо больший вес, несомненно, имеет полное замалчивание злополучной гипотезы в современных синтетических тюркологических работах. Т. М. Гарипов, например, пишет всего только о «памятниках тюркоязычных армян XV—XVII вв.»¹⁶² игнорируя новоизобретенную этническую терминологию.

На сегодняшнем этапе изучения кыпчакского языка армян Украины на первый план выдвигается задача тщательного анализа языка в сравнении с языком Codex Cumanicus'a, а также ранних письменных памятников языка крымских татар и караимов. Этот путь сулит настоящие научные открытия, он, несомненно, расширит наши представления об истории кыпчакских языков.

Конечно, можно и в дальнейшем заселять страницы писаний мифическими армяно-кыпчаками, но нужно наконец осознать и то, что таким образом совершенно невозможно заселить ими города Украины XVI—XVII вв.

Յ. Ռ. ԳԱՇԿԵՎԻՉ (Լվով)

ՈՎՔԵՐ ԵՆ «ՀԱՅ-ՂՓՁԱՂՆԵՐԸ». XVI—XVII ԳԴ. ՀԱՅԱՍՏԱՌ-ՂՓՁԱՂՆԵՐԵՆ ՉԵՌԱԳՐԵՐ ՍՏԵՂԾՈՂՆԵՐԻ ԱԶԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ս. մ փ ո փ ո լ մ

Ուկրաինայի և Լեհաստանի հայերի ձեռագիր ժառանգության մեջ նշանակալի տեղ են զբաղում հայաստան-ղփղաղերենով գրված նյութերը: Այդ լեզվով պահպանված ձեռագիր հուշարձանների ուսումնասիրությունը լեզվաբանների և պատմաբանների կողմից ունի շուրջ 200 տարվա պատմություն: Ներկա դարի 70-ական թվականներին լեզվաբաններ Ա. Գարկավեցը

¹⁶⁰ Его же. Актуальные проблемы армяно-кыпчаковедения.—В кн.: Источниковедение и история тюркских языков. Казань, 1978, с. 44.

¹⁶¹ Abrahamowicz Z. Rec. na: Reychman J. Historia Turcji. Wrocław, Warszawa, Kraków, Gdań k. 1973.—Kwartalnik Historyczny. Warszawa, 1976, Nr. 3, s. 657.

¹⁶² Гарипов Т. М. Кыпчакские языки Урало-Поволжья. Опыт синтетической и диахронической характеристики. М., 1979, с. 14.

և Ջ. Կլոուսոնը առաջ են բաշել մի հիպոթեզ, ըստ որի հուշարձանների ստեղծողները ոչ թե ղփչաղախոս հայերն էին, այլ հայերի կողմից բրիստոնյա դարձված ղփչաղները (սյուլվյինները): Այդ կապակցությամբ Ա. Ն. Գարկավեցը իր բազմաթիվ աշխատություններում հետևողականորեն օգտագործում է իր հնարած «Հայ-ղփչաղներ» տերմինը: XVI—XVII դդ. սկզբնադրյունների մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ թե՛ Ջ. Կլոուսոնի և թե՛ Ա. Գարկավեցի դատողությունները լիովին կտրված են սկզբնադրյուններից, որոնց մեջ ամենևին չեն հիշատակված «հայ-ղփչաղները»: Այդուհանդերձ, վերջին ժամանակներս այդ հիպոթեզը ներկայացվում է որպես ապացուցված փաստ: Այսպես, Ա. Գարկավեցը առանց հիմնավորման գրում է, որ այդ ղփչաղները հայերի կողմից բրիստոնեության են բերվել X դարում (նա նույնիսկ նշում է որոշակի թվական՝ 965): Սկզբնադրյուններից բերված քաղվածքներում ամենուրեք նա հայ կամ հայեր բառերը դարձնում է հայ-ղփչաղ կամ հայ-ղփչաղներ:

Հենվելով սահմանված բազմաթիվ սկզբնադրյունների վրա, հեղինակը ցույց է տալիս, որ «Հայ-ղփչաղների» մասին Ջ. Կլոուսոնի և Ա. Գարկավեցի հիպոթեզը հնարովի, կեղծիքների վրա խարսխված տեսություն է, որը չի կարող դիմանալ որևէ քննադատության: XV—XVII դդ. բազմաթիվ հեղինակներ, որոնք գրել են լեհահայ գաղութներում եղած լեզվական կացության վերաբերյալ, վկայում են, որ երկար տարիներ Ղրիմում ապրելով ղփչաղների մեջ, հայերը սովորել էին նրանց լեզուն և Ուկրաինա գաղթելուց հետո շարունակում էին խոսել ղփչաղերեն: Սկսած XVI դ. 20—30-ական թվականներից այդ լեզվի համար օգտագործելով հայերեն տառերը, նրանք ստեղծեցին բազմաժանր գրականություն: Ղփչաղախոս հայերի հետ միասին այդ գաղութներում ապրում էին հայախոս, իսկ հետագայում լեհախոս հայեր, որոնք բոլորը միևնույն՝ հայկական համայնքի անդամներ էին:

Հողվածում հանգամանորեն քննարկված են վերոհիշյալ հարցերը. բազմաթիվ փաստերով ցույց է տրվում, որ ոչ մի հիմք չկա խոսելու իրականության մեջ գոյություն չունեցած «հայ-ղփչաղների» մասին, իսկ ինչ վերաբերում է հայատառ-ղփչաղերեն գրված նյութերին, ապա դրանք իրավամբ համարվում են հայ ժողովրդի կուլտուրական ժառանգությունը:

Y. R. DACHKEVITCH (Lvov)

QUI SONT LES „ARMENIENS—KIPTCHAKS“: DE LA NATIONALITE DES REDACTEURS DES MANUSCRITS KIPTCHAKS ECRITS EN LETTRES ARMENIENNES AUX XVIe—XVIIe SIECLES

R é s u m é

Les documents en langue kiptchak écrits en lettres arméniennes occupent une place importante dans l'héritage manuscrit des Arméniens d'Ukraine et de Pologne. Depuis deux cents ans environ, les linguistes et les historiens poursuivent l'étude des manuscrits qui nous sont parvenus dans cette langue. Aux années 1970, les linguistes A. Garkavets et G. Clauson avancèrent une hypothèse, selon laquelle les auteurs de ces

manuscripts furent non pas des Arméniens parlant kiptchak, mais des Kiptchaks (des Polovets) christianisés par les Arméniens. A. Garkavets emploie avec beaucoup d'esprit de suite dans ses nombreux ouvrages le terme „Arméniens—Kiptchaks“ de son invention. L'étude minutieuse des manuscrits des XVIe—XVIIe ss. montre que les Jugements de G. Clauson et de A. Garkavets sont absolument sans rapport avec les sources dont aucune ne mentionne des „Arméniens—Kip'chaks“. Néanmoins, ces derniers temps, A. Garkavets présente son hypothèse comme un fait prouvé. Ainsi, il écrit sans preuve aucune que ces Kiptchaks furent christianisés par les Arméniens au Xe siècle (il mentionne même une date exacte: 965). Dans les citations prises aux sources, il remplace partout les noms „Arménien“ ou „Arméniens“ par „Arménien—Kiptchak“ ou „Arméniens—Kiptchaks“.

En se basant sur de nombreuses sources, l'auteur de l'article montre que l'hypothèse de Clauson et de Garkavets sur les „Arméniens—Kiptchaks“ est une pure invention, une théorie basée sur des falsifications, qui ne résiste pas à la moindre critique. De nombreux auteurs des XVe—XVIIe ss., en parlant de la réalité linguistique des communautés arméno-polonaises, témoignent qu'ayant vécu de longues années en Crimée parmi les Kiptchaks, les Arméniens avaient appris leur langue qu'ils continuaient à parler après avoir émigré en Ukraine. A partir des années 1620—1630, employant les lettres arméniennes pour écrire cette langue, ils créèrent une littérature de divers genres. A côté des Arméniens parlant kiptchak, ces communautés comportaient des Arméniens parlant leur langue natale et, par la suite, d'autres parlant polonais, qui étaient tous membres de la même communauté.

L'article examine minutieusement les questions susmentionnées; à l'appui de nombreux faits, il montre qu'il n'y a aucune raison de parler d' „Arméniens-Kiptchaks“ n'ayant pas réellement existé. Quant aux documents en langue kiptchak écrits en lettres arméniennes, ils font légitimement partie du patrimoine culturel du peuple arménien.

ՔՆԱՐԻԿ ՏԵՐ-ԳԱՎԹՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈԼՈՎԻ ԵՐԿՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

XVII—XVIII դարերի գեղարվեստական թարգմանական արձակը քիչ է ուսումնասիրված: Դեռևս ի մի հավաքված և գնահատված չեն այն բոլոր հուշարձանները, որոնք շրջանառության մեջ գրվելով, բավարարել են ժամանակի ընթերցողի գեղարվեստական պահանջմունքները: Դրանց մի մասը ձեռագիր վիճակում է և սպասում է իր ուսումնասիրողին, իսկ մի մասն էլ թեպետ ժամանակին տպագրվել է, սակայն տարբեր պատճառներով անուշադրության է մատնվել և լավագույն դեպքում հիշատակվել ցանկերում կամ նշվել այս կամ այն թարգմանչի գրական ժառանգության ժամանակագրությունը կազմելիս: Այնպես որ, այն թարգմանական երկերը, որոնք պահպանվել են հնատիպ հրատարակություններում, մեծ մասամբ հայտնի են միայն իրենց վերնագրերով: Նրանց կցված հիշատակարանները շատ հաճախ՝ բացի թարգմանչի անունից և թարգմանության թվականից (երբեմն բացակայում են նաև սրանք) այլ տեղեկություններ չեն պարունակում: Ուսումնասիրողը փաստորեն ձեռքի տակ ունի հնատիպ թարգմանական երկերի մի ստվար ցուցակ, որի ինչ լինելը՝ անհայտ է: Այդ ցուցակում քիչ տեղ չեն գրավում նաև այն երկերը, որոնք որակվել են որպես եկեղեցական, դավանաբանական և շրջանցվել: Մինչդեռ հայտնի է, որ հին և միջնադարյան գեղարվեստական արձակի փոքրածավալ ժանրերը, հատկապես պատմողական արձակը, անսպառ աղբյուր է հանդիսացել քարոզչրբերի և նման ժողովածուների համար: Եվ հաճախ հենց այդպիսի քարոզչրբերի շնորհիվ են պահպանվել և մեզ հասել հին շրջանի պատմողական արձակի բազմաթիվ նմուշներ: Ուրեմն, XVII—XVIII դդ. թարգմանական արձակի մասին քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմելու համար, բացի գեղարվեստական արձակին պատկանող ինքնուրույն երկերից, անհրաժեշտ է ընդգրկել և հետազոտել այն ողջ թարգմանական գրականությունը, որի բաղկացուցիչ մասն է կազմում հին և միջնադարյան գեղարվեստական արձակը:

XVII դարի երկրորդ կեսի հայ տպագրության երախտավոր Հովհաննես Հոլովը (մհ. 1691 թ.¹) հեղինակ է մի քանի երկերի և բազմաթիվ թարգմանությունների, որոնք ունեցել են ավելի քան 15 հրատարակություններ: Այդուհանդերձ Հոլովի կյանքն ու նրա թողած գրական ժառանգությունը չի արժանացել պատշաճ ուշադրության²:

1 Տե՛ս Ա. Ալպոլյանյան, Պատմութիւն հայոց գայրոցի, հ. Ա, Գահիրե, 1946, էջ 418:

2 Հոլովի վաստակի հիշա գնահատման պակասը հայագիտության մեջ որոշ չափով լրացրել է Ռ. Իշխանյանը, որը նրա գործունեությունը և գրական ժառանգությունը քննել է կու-

Հոլովի թարգմանությունների մասին հիմնականում խոսվել է ամենա-
ընդհանուր ձևով: Ուսումնասիրողները բավարարվել են նրա թարգմանու-
թյունների, հեղինակային երկերի ցանկերի և ժամանակագրության ճշտ-
մամբ³: Հոլովի թարգմանությունների հետ առաջին ծանոթությունն իսկ
ցույց է տալիս, որ նրանց շարքում կրոնականից զատ, կան նաև այլ բնույ-
թի գրքեր: Այստեղ ներկայացվող երկու թարգմանություններից առաջինը
1671 թ. թարգմանված և 1675 թվականին Հռոմում հրատարակված «Նորա-
գոյն ծաղիկ զօրութեանց» երկն է⁴, երկրորդը՝ Մարտիի հայկական տպա-
րանում նույն 1675 թ. լույս տեսած «Ասացուածք խոհեմականը հնոց իմաս-
տասիրաց» ժողովածուն⁵: Այս երկուսն էլ սլավոնական են «Բանք իմաս-
տասիրաց» կոչված հին իմաստասերների ասույթների ժողովածուների
շարքին:

Ասույթների ժողովածուները առաջ են եկել մ. թ. ա. VI—V դարերում,
ապա անցել զարգացման երկարատև ուղի և հարատևել մինչև ուշ միջնա-
դար: Այդ ժողովածուների առաջացման և զարգացման գործում մեծ է եղել
անտիկ գրականության ավանդը: Հունական ասույթների ժողովածուները
հիմք դարձան հին լատինական, ապա նաև քրիստոնեական ժողովածուների
համար:

Իրենց զարգացման ընթացքում ասույթների ժողովածուները սլարավորոշ
սահմանազատվեցին և բաժանվեցին երկու թևի՝ արևելյան-հունական և արև-
մրտյան-լատինական: Արևելյան կամ հունական ժողովածուները, որոնք
իրենց ծագումով ավելի վաղ շրջանի արդասիր են, ընդգրկում էին հին հույն
իմաստասերների և հեղինակների ասույթները, և միայն երբեմն (ավելի ուշ
շրջանի ժողովածուներում)՝ արևմտյան հեղինակների: Իսկ արևմտյան՝ լա-
տինական տիպի ժողովածուներում բացառապես ընդգրկվում են հանրա-
հայտ արևմտյան բարոյախոս հեղինակները՝ Թովմա Ակվինացին, Օգոստի-
նոսը, Սենեկան, ինչպես և այն հեղինակները, որոնց ընդունում էին թե՛
արևմուտքում, թե՛ արևելքում⁶: Ահա ասույթների այդ երկու թևերին սլավո-
նական ժողովածուների օրինակ են Հովհաննես Հոլովի կողմից թարգմանված
«Ասացուածք խոհեմականը»-ը և «Նորագոյն ծաղիկ զօրութեանց»-ը: Առաջի-

տուր-սլավոնական հայեցակետով: Տե՛ս «Հայ գրքի պատմություն», «Հովհաննես Հոլովն իրրև
17-րդ դարի հայկական գրահրատարակչական եռանդուն գործիչ», Երևան, 1977:

3 Տե՛ս «Հանգէս ամսօրեայ», 1893, էջ 269—270: Ա. Ալպոյանյան, Պատմութիւն հայ գրա-
րոցի, հ. Ա, էջ 418—419: Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, էջ 503—504:

4 Սրա անվանաթերթում կարդում ենք. «Նորագոյն ծաղիկ զօրութեանց թարգմանեցալ
ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպոլսեցոյ, ի զուարճութիւն հայկազունեաց, յամի
ներմարմնութեան տեան 1671, ըն հնգետասներորդում ատուր ամսեանն փետրվարի, ի Հռոմ,
ի փառս մեծագոյնս Այ»: Գիրքը հրատարակվել է երկու անգամ եւ՝ 1685 թ. Վենետիկում և
1724 թ. Կ. Պոլսում:

5 Տե՛ս «Գիրք վայելուչ և հարկաւոր հանուրց հայկազունեաց բարեխրաց, յորում պարու-
նակի աղիւսակ գրոց տարեկանաց: Պարզատօմար մշտնջենական, համաձայնութիւն ամսոյն
Ազարեայ ընդ Յունաց: Ասացուածք խոհեմականը հնոց իմաստասիրաց և սկզբունք համա-
րողականի արհեստի, Մարչիխայ, տպ. սր. էջմիածնի և ս. Սարգսի զօրավարին, 1675:

6 Ասույթների ժողովածուների մասին տե՛ս М. Н. Сперанский. Переводные сборники
изречений в славяно-русской письменности. Исследования и тексты. Гл. I. История
изречений и их собрания в старой классической и византийской литературе. М.,
1904, с. 1—67.

նր ներկայացնում է արևելա-հունական ժողովածուների տիպը, երկրորդը՝ արևմտա-լատինականը:

«Նորագոյն ծաղկին», որքան մեզ հայտնի է, ոչ ոք չի անդրադարձել: Գրքի անվանաթերթի հայերեն խորագրից հետո տպված է նրա լատիներեն անվանումը «Flos virtutum»: Թարգմանության աղբյուրի մասին այլ տեղեկություններ չկան: Եվ դա այն պարզ պատճառով, որ խոսքը մի երկի մասին է, որը շատ մեծ ճանաչում էր գտել կաթոլիկ բարոյախրատական գրականության մեջ: «Flos virtutum»-ը իրենից ներկայացնում է ասույթների և նրանց կցված exemplum-ների բարոյախրատական զրույցների ժողովածու: Այն ստեղծվել էր հյուսիսային Իտալիայում, ըստ երեվույթին՝ Վենետիկում: Պահպանվել են այդ երկի XIV դ. իտալերեն ձեռագրեր (Բոլոնիայից), որոնց խորագիրն է «Fiori di virti»: Գրքի կազմողներն են Կերուբինո դա Ապոլետոն, Զիովանի Անտոնիոն և Տոմազեո Լեոնին: Այն պատկանում է հնագույն իտալական հրատարակությունների թվին: Մինչև 1500 թ. արդեն հայտնի են եղել այդ գրքի 26 հրատարակություններ: Ժողովածուն ունեցել է երկու խմբագրություն, մեկը պարունակում է 35 գլուխ, երկրորդը՝ 41: Համառոտ խմբագրությունից է առաջացել ուսերեն թարգմանությունը⁷: Այդ խմբագրությունը տարածված է եղել Արևելքում, որի վկայությունն են նոր հունարեն, ուսերեն և ուսմիներեն թարգմանությունները: Հայերեն թարգմանության համար հիմք է ծառայել Արևմուտքում տարածված և 41 գլուխ պարունակող ընդարձակ խմբագրությունը: Չնայած զրքի հայերեն օրինակի ցանկում նշված է 40 գլուխ, իրականում նրանց ըսնակը 41 է, որովհետև առաջին հատվածը՝ «Յաղագս սիրոյ հասարակաբար» չի համարակալված: Որպես «Գլուխ Առաջին» ներկայացված է հաջորդ՝ «Յաղագս սիրոյն Այ» հատվածը:

Գիրքը սկսվում է թարգմանչի՝ Հովհաննես Հուլվի առաջաբաններով. 1. «Բան առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայաստանեայց» (էջ 5—6) և 2. «Տրակ առ ընթերցողս» (էջ 7—9):

Առաջին առաջաբանը գրված է միջնադարյան ավանդական առաջաբանների ոճով, որոնցում գրիչը կամ հեղինակը աղոթքով և պաղատանքով դիմում է սրբին, նայել «քաղցրութեամբ յանօգուտ ծառայ ըն, և հաճեա վերընդունիլ ի ձեռանէ իմմէ զզուղնաբեայ զայս աշխատութիւնս»: Երկրորդ առաջաբանից հայտնի է դանում, որ Հովհաննես Հուլվը այդ թարգմանությունը կատարել է Նասիպի Գրիգորյանի խնդրանքով:

«Նորագոյն ծաղիկ»-ը ամբողջությամբ կազմված է հեթանոս ու քրիստոնյա հեղինակների ասույթներից: Այն իր կառուցվածքով և մտահղացմամբ տարբերվում է արևելյան-հունական ժողովածուներից⁸:

Նրա կառուցվածքում հետևողականորեն կիրառված է անտիթեզի սկզբունքը, ըստ որի յուրաքանչյուր երկու գլուխ երկու հակադիր թեմաներ են. ուրախություն-տրամուխություն, խաղաղություն-բարկություն, ողորմություն-խստասրտություն և այլն: Բացառություն են կազմում առաջին 6 գլուխները, որոնք նվիրված են սիրո արտահայտության տարբեր ձևերին: Այդ վեց

⁷ Նույն տեղում, էջ 561:

⁸ Այդ մասին տե՛ս Ք. Ս. Տեր-Գալքյան, «Բանք իմաստասիրաց»-ի մի նոր ժողովածու հայերեն թարգմանությամբ», ՊՔԶ, 1984, № 2:

գլուխներին հակադրված է 7-րդը՝ «Յաղագս զչարութեան կամ նախանձու»:

Ամենամեծ տեղը ասույթների հեղինակների շարքում գրավում են Սողոմոնը, Պղատոնը, Սենեկան, Արիստոտելը, Սոկրատը, Օգոստինոսը, Թովմա Ակվինացին, ապա նրանց հաջորդում են Քուլիոսը, Օվիդիոսը, Մակրորիոսը, Իսիդորոսը, Կատոնը, Բոեցիոսը, Աղեքսանդրոսը, Գալիլադորոսը, Վարոնը, Հերոնիմոսը, Գիոգենեսը, Պիթագորասը, Եզոպոսը և այլք:

«Նորագոյն ծաղիկ»ը տարբերվում է արևելյան թևին պատկանող ժողովածուներից նաև նյութի մատուցման տեսակետից: Վերջիններում պարունակած ողջ նյութը կրում է աֆորիստիկ բնույթ: Այս կամ այն իմաստասերի ասույթին հաջորդում է նրա իմաստը բացահայտող նույնքան սեղմ պատկերավոր առակ կամ անեկդոտատիպ պատմություն: Ավելի ուշ շրջանի ժողովածուներում սրանց կցվում է նաև բարոյախոսություն: «Մաղիկ»-ը բնագրկում է քրիստոնեական, աստվածաշնչային պատվիրաններին մոտ թեմաները: Յուրաքանչյուր գլուխ, որպես կանոն, սկսվում է համապատասխան թեմային վերաբերող քրիստոնեական բարոյախոսության դրույթների պարզաբանությամբ: Որպես մեծագույն հեղինակություններ վկայակոչվում են Արևմուտքի ճանաչված հեղինակները և աստվածաբանները՝ Օգոստինոս, Թովմա Ակվինացի, մարգարեներ, առաքյալներ: Ապա նրանց դրույթները ամրապնդվում են մի շարք հունական կամ հռոմեական իմաստասերների, պատմիչների, բանաստեղծների ասույթներով: Յուրաքանչյուր գլուխ պարտադիր ավարտվում է նշված դատողությունները ցուցադրող դրույթներով՝ վերցված կամ միջնադարյան հանրագիտարաններից կամ զրուցատիպ ժողովածուներից: Բոլոր դրույթները անխտիր սկսվում են նրանց հեղինակների կամ աղբյուրների հիշատակումով: Այդ աղբյուրների շարքում են Եզոպոսը, Հնագույն պատմությունը, Տրոյական պատմությունը, Աստվածաշունչը, Հարանց վարքը, Գիրք մոլութեանցը, Գործք հոռմայեցվոցը, հիշատակվում է նաև պարզապես պատմությունը: Դրանց մեջ ամենամեծ տեղը գրավում են «Գործք հոռմայեցվոցի» դրույթները: Շատ հավանական է, որ որոշ դրույթներ, որոնց սկսվածքներում հիշատակված են այլ աղբյուրներ, նույնպես բաղված լինեն «Գործք» կամ «Պատմութիւն հոռմայեցվոց»-ից: «Գործք»-ը, որն ամենայն հավանականությամբ, ստեղծել է XIII դարում Անգլիայում⁹, ըստ մասնագետների, Աստվածաշնչից, Բարոյախոսից և «Հազար և մեկ գիշերից» հետո եղել է Եվրոպայի ամենամեծ ճանաչում գտած դրույթների ժողովածուն¹⁰: Աշխարհիկ բնույթի այդ միջնադարյան ժողովածուում ամփոփված են առակներ, նորավեպեր, անեկդոտներ և ամբողջ վեպեր, որոնք ծագում են արևելյան, անտիկ և միջնադարյան եվրոպական գրականություններից: Ժողովածուն չի թարգմանվել հայերեն, սակայն նրա բազմաթիվ դրույթներ ուղղակիորեն կամ միջնորդաբար այլ ժողովածուների կազմում, մոտավել են հայ մատենագրություն XIV—XVIII դարերի բնթացքում:

«Նորագոյն ծաղիկ» թարգմանությամբ հայ մատենագրությունը հարբստացավ հին իմաստասերների մինչ այդ անծանոթ արևմտա-լատինական թևի ժողովածուով: Նրա արժեքը հայ մատենագրության համար հատկապես

⁹ Sk' = Gesta Romanorum. Geschichten von den römern. Ein Erzählbuch des Mittelalters erstmalig herausgegeben von Winfried Trilitsch. Leipzig, 1979, s. 6—7.

¹⁰ С. В. Полякова, Из истории средневековой латинской новеллы XIII в. В кн.: Средневековые латинские новеллы XIII в., Л., 1980, стр. 341.

մեծանում է եվրոպական միջնադարյան ժողովածուներից բաղված զրույցների առկայությամբ, որով հայ մատենագրություն է ներմուծվում միջնադարյան եվրոպայում շրջանառության մեջ եղած զրույցների մի զգալի մաս: Ժամանակին Ն. Մառը նկատել է, որ արևմտաեվրոպական հեքիաթները, իմա՝ զրույցները, «որոշակի ազդեցություն են ունեցել մեր ժողովածուների վրա» և բաղմիցս նշել է «բարոյախոսական և հետաքրքրաշարժ ժողովածուների ուսումնասիրության անհրաժեշտությունը»¹¹: Ահա նաև այդ տեսակետից «Նորագոյն ծաղիկի» և նմանատիպ ժողովածուների ուսումնասիրությունը պետք է լինի այդ հարցերով զբաղվողների ուշադրության կենտրոնում:

Գեոևս իտալացի հայագետ է. Տեղան հնում թարգմանված «Բանք իմաստասիրաց պիտանի ամենայն մարդոյ»¹² երկի կապակցությամբ անգրագարձել է նաև «Ասացուածք խոհեմականք»-ին և ցույց տվել, որ այդ երկու ժողովածուները («Բանք»-ը և «Ասացուածք»-ը) նույն երկի տարբեր թարգմանություններն են¹³: Երկրորդի թարգմանիչը, ըստ Տեղայի, Ոսկան Երեվանցին է¹⁴:

«Բանք»-ի հրատարակիչները՝ վենետիկյան մխիթարյանները շտապ են, որ իրենց հրատարակածը Հովհաննես Ստորեոսի գրքի կամ նրա համառոտության թարգմանությունն է, վերջինիս, սակայն, համարելով VI դարի հեղինակ («Անտոնեանց ժամանակի յոյն մատենագիր, Քրիստոսէ դրեթէ 150 տարի ետք»)՝ Իսկ թարգմանությունը «թէ յոճոյն ու թարգմանութեան ընտրութեանէն՝ յայտնապէս կը տեսնուի, որ մեր երանելի թարգմանչաց միոյն երկասիրութիւնն է, կարգեալ ի խրատ և յուսումն մանկութեան»¹⁵: Տեղայի կարծիքով, «ստուգապէս չի կրնար ըսուիլ թէ Ստորեոսի հետեւած ըլլան. թեպետև հաւանական է ենթադրել, թէ այդ հռչակեալ գրքէն ըրած են իրենց ծաղկաբազը»¹⁷: Ըստ առավել ընդունված կարծիքի, Ստորեոսը VI դարի առաջին տասնամյակների բյուզանդական հեղինակ է, որն իր մեծածավալ երկի մեջ ամփոփեց անտիկ և հռոմեական շրջանների ասույթների ժողովածուներից հասած ժառանգությունը: Ուրեմն, հայերեն թարգմանությունը, եթե այն Ստորեոսի երկի համառոտությունն է, չի կարող կատարված լինել VI դարից վաղ:

Ինչևէ, «Բանք»-ը լայն տարածում է գտել հայ միջնադարյան գրականության մեջ: Նրանում ամփոփված իմաստասերների ասույթներով, թեև վոր խոսքերով և հակիրճ պատկերավոր առակներով դարեր շարունակ սնվել են մեր բարոյախրատական և կրթական ձեռնարկները, քարոզգրքերը, զրույցները և այլ ժողովածուները, հարստացնելով և ավելի պատկերավոր դարձնելով հայոց լեզուն: Պահպանվել են «Բանք»-ի բաղմաթիվ ընդօրինակություններ:

«Ասացուածք»-ը հրատարակվել է մի փոքրադիր ժողովածուի կազմում,

11 Ն. Մառ, ժողովածուք առակաց Վարդանայ, մասն Ա, Պետերբուրգ, 1894, էջ 267:

12 Տե՛ս «Սոփերք հայկականք», հ. Ա, Վենետիկ, 1853, էջ 9—59:

13 Տե՛ս է. Տեղա, Հելլեն իմաստասիրաց հատընտիր խրատք, թարգմանեալք ի հայ, «Բաղմաթիպ», 1894, էջ 132:

14 Նույն տեղում:

15 «Բաղմաթիպ», 1853, էջ 252:

16 Նույն տեղում:

17 «Բաղմաթիպ», 1894, էջ 73:

որի անվանումն է «Գիրք վայելուչ և հարկաւոր»: Գրքի անվանաթերթում հիշատակված են շորս երկեր, որոնք պետք է պարփակված լինեին նշված ժողովածուում. 1. Աղիւսակ գրոց տարեկանաց: 2. Պարզատօմար մշտնջենական, համաձայնութիւն ամսոցն Ազարեայ ընդ յունաց: 3. Ասացուածք խոհեմականք հնոց իմաստասիրաց: 4. Սկզբունք համարողական արհեստի:

Անվանաթերթում նշված այս շորս երկերից գրքում ներկայացված են երեքը (առաջինը՝ 7 էջ, երկրորդը՝ 72, երրորդը՝ 74): Իսկ չորրորդի («Սկզբունք համարողական արհեստի») փոխարեն «Ասացուածք»-ից անմիջապես հետո (որն ավարտվում է «Քէդդորոս ասէ, ամենայն կատարեալ շինուած սկիզբն է աւերման»—էջ 125) առանց վերնագրի տեղադրված են 9 գրույց (125—143 էջերում): Զրույցներին հաջորդում է հետևյալ հիշատակարանը (էջ 145). «Աւարտեցաւ գրգուկս շահաւէտ և օգտակար տպագրեցեալ ի պէտս և ի հրճուանս հայկազունեաց և մանաւանդ վաճառականաց: Արդ՝ որք վայելէք զսա առողջութեամբ և խնդութեամբ ի փառս Քրիստոսի յիշեցէք զպատճառս զմատակարարս և զաշխատողս ի սմին, և մանաւանդ զհանգուցեալն ի Քրիստոս զՈսկան վարդապետ, ընդ որս և դուք յիշեցեալ լիջիք ի նոյնոյ տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. Ամէն»:

Ասեմք, որ «Գիրք վայելուչ»-ում գետնդրված գրույցները դիտվել են որպես «Ասացուածք խոհեմականք»-ի շարունակութիւն: Անվանաթերթում հիշատակված «Սկզբունք համարողական արհեստի» բացակայութիւնը գրքում Ռ. Իշխանյանը բացատրում է նրանով, որ տպագրիչները չեն ցանկացել խախտել սահմանված ծավալը (145 էջ), որով հրատարակվել էին մի քանի այլ գրքեր ևս: Եվ քանի որ «Սկզբունք»-ը իր ծավալով եղել է մյուս երեք մասերի շափ, դեռ մի քիչ էլ ավելի, այն չեն ընդգրկել ժողովածուի մեջ, այլ նույն 1675 թ. տպագրել են առանձին գրքով¹⁸: Այդ ենթադրութիւնը լիովին արգարացի է, միայն կարոտ է մի փոքր ճշտման: «Ասացուածք»-ը ավարտվում է ոչ թե 143-րդ էջով, այլ 125-ով, այսինքն, այն նախատեսվածից 20 էջով պակաս էր: Նշված ծավալը պահպանելու համար տպագրիչները դատարկ 19 էջերը լրացրել են 9 գրույցներով:

Արդ, որտեղից են այս գրույցները հայտնվել «Ասացուածք խոհեմականք» թարգմանական հուշարձանի հավելվածում: Պարզվում է, որ նրանք քաղված են «Նորագոյն ծաղիկ զօրութեանց» գրքից: Երկու ժողովածուների համապատասխան գրույցների համեմատութիւնը ցույց տվեց նրանց լիակատար նույնութիւնը:

Ստորեւ բերում ենք «Գիրք վայելուչ»-ում «Ասացուածք»-ից հետո տեղադրված գրույցների ցանկը սկզբնատողերով՝ բաղդատելով այդ պատմութիւնները «Նորագոյն ծաղիկ» գրքում եղած համապատասխան գրույցների հետ¹⁹:

18 Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 515—516:

19 Այս ինք գրույցներից երկուսը («Ընթեանումք ըն վարս հարանց սրբոց, թէ անապատական ոմն...», «Ընթեանում ի պատմութիւնս հոռմայեցոց, թէ Փարազնեայ դուտր Անաստասի՝ գոյով սիրահարեցեալ...») գետնդրվել են նաև «Հայելի վարուց»-ի հրատարակութիւն մեջ՝ «Վերջ» բառից հետո (տե՛ս Գիրք Հայելի վարուց, որ ասի Հարանց վարք. տպագրեցեալ ի հայրապետութեան տեառն Սահակի Հայոց կաթողիկոսի. ի թվին Քրիստոսի 1702, իսկ ըստ Հայոց ՌճՍ..., էջ 331—333, էջ 333—334): Այս երեք ժողովածուների համապատասխան գրույցների համեմատութիւնը ցույց տվեց մանր գրչական տարբերութիւններ մի կողմից «Հայելի վարուց»-ի և «Գիրք վայելուչ»-ի, մյուս կողմից՝ «Նորագոյն ծաղիկ»-ի միջև Հեռե-

«Գիրք վայելուչ»-ի գրույցներ

«Նորագոյն ծաղիկ»

1. Ընթեանումք ըն վարս հարցն սրբոց, թէ անապատական ոմն ճգնութեամբ մեծաւ աղաչէր... (էջ 125—128)

2. Ընթեանումք ի վարս հարցն սրբոց, սատանայն խորհեցաւ յաւուր միում ամուսնանալ... (էջ 128—129)

3. Ընթեանումք ըն պատմութիւնս հոռմայեցոց, թէ զոլով զերեցեալ Մարբուպիոսս սկզբեան... (էջ 130)

4. Ընթեանումք ըն զիրս աստուածաշունչս, թէ ձերք երկու տափացեալք ումեմն մանկուհուցն Շունչան, կոչեցելոյ...» (էջ 130—132)

5. Ընթեանումք ըն վարս հարցն սրբոց, թէ այր ոմն մեծազգի և ազնուական թողեալ զաշխարհ... (էջ 132—135)

6. Ընթեանումք ըն պատմութիւնս հոռմայեցոց, թէ Փարազնեայ զուստր Անաստասի կայսեր զոլով սիրահարեցեալ... (էջ 135—136)

7. Ընթեանումք ըն պատմութիւնս հոռմայեցոց, թէ արքայն Գիոնեսիոսս զոլով երկշտագոյն... (էջ 137—138)

8. Ընթեանումք ըն վարս հարցն սրբոց, թէ աւագակ ոմն զկնի գործելոյ զրնաւս տեսակս շարութեան... (էջ 138—140)

9. Ընթեանումք ըն պատմութիւնս հոռմայեցոց, թէ կայսր ոմն մինչ անցանէր ընդ անտառ իմն, ևտես փիլիսոսփայ ոմն նստեալ անդ... (էջ 141—143):

Ընթեանումք ըն վարս հարցն սրբոց, թէ անապատական ոմն ճգնութեամբ մեծաւ աղաչէր... (էջ 134—137)

Ընթեանումք ի վարս հարցն սրբոց, սատանայն խորհեցաւ յաւուր միում ամուսնանալ... (էջ 142—143)

Ընթեանումք ըն պատմութիւնս հոռմայեցոց, թէ զոլով զերեցեալ Մարբուպիոսս սկզբեան... (էջ 146)

Ընթեանումք ըն զիրս աստուածաշունչս, թէ ձերք երկու տափացեալք մանկուհուցն ումեմն Շունչան կոչեցելոյ... (էջ 153—155)

Ընթեանումք ըն վարս հարցն սրբոց, թէ այր ոմն մեծազգի և ազնուական թողեալ զաշխարհ... (էջ 157—160)

Ընթեանումք ըն պատմութիւնս հոռմայեցոց, Փարազնեայ զուստր Անաստասի կայսեր զոլով սիրահարեցեալ... (էջ 164—166)

Ընթեանումք ըն պատմութիւնս հոռմայեցոց, թէ արքայն Գիոնեսիոսս զոլով երկշտագոյն... (էջ 172—175)

Ընթեանումք ըն վարս հարցն սրբոց, թէ աւագակ ոմն զկնի գործելոյ զրնաւս տեսակս շարութեան... (էջ 187—190)

Ընթեանումք ըն պատմութիւնս հոռմայեցոց, թէ կայսր ոմն մինչ անցանէր ընդ անտառ իմն, ևտես փիլիսոսփայ ոմն նստեալ անդ... (էջ 120—124):

Ամենայն հաւանականությամբ, այդ 9 գրույցները «Գիրք վայելուչ» ներմուծել է ինքը Հովհաննես Հովովը, քանի որ այլ ոք այդ բանը արած լինել չէր կարող. «Նորագոյն ծաղիկն» ու «Գիրք վայելուչ»-ը տպագրվել էին միաժամանակ՝ 1675 թ., մեկը՝ Հոռմում, մյուսը՝ Մարսելում: Եվ պարզ է, որ «Գիրք վայելուչ»-ում զետեղված գրույցները լինելով Հովհաննես Հովովի թարգմանություն, այդ կարճ ժամանակամիջոցում չէին կարող անցնել ուրիշի ձեռք:

Ռ. Իշխանյանը ենթադրաբար արտահայտել է այն միտքը, որ «Գիրք վայելուչ»-ի բոլոր երեք մասերը կամ զոնն նրա երրորդ մասը կազմել է (ուստի և թարգմանել) Հովհաննես Հովովը: Նա գրույցները ընկալել է որպես «Ասացուածք»-ի շարունակություն և դրանք չի անշատել իրարից: Իր վերոհիշյալ ենթադրության համար, որ «Ասացուածք»-ը Հովհաննես Հովովի թարգմանությունն է, կովան է ծառայել հենց նշված գրույցների, որոնք

վարար, հիշյալ գրույցները «Հայելի վարուց»-ի հրատարակություն են անցնել ոչ թե անմիջապես «Նորագոյն ծաղիկ»-ից, այլ «Գիրք վայելուչ»-ից:

չին մտնում «Ասացուածք»-ի կազմի մեջ, «ըն» լատինարան նախդրի գործածութիւնը («ընթեռնումք ըն գիրս», «ըն պատմութիւնս» և այլն), որը բանասիրութեան մեջ հատկապես բնորոշ է համարվել Հովհաննես Հոլովի գրավոր խոսքին»²⁰:

Եթե զրույցների հարցը լրիվ պարզարանված է, ապա «Ասացուածք»-ի թարգմանութեան վերաբերյալ կարելի է միայն ենթադրութիւններ անել: Բացառված չէ, որ «Ասացուածք»-ի թարգմանիչը նույնպես Հովհաննես Հոլովն է, որը ասույթների հանդեպ նախասիրութիւն էր ցուցաբերել և արդեն այդ կարգի թարգմանութեան փորձ ուներ: Հիշատակարանից զգացվում է, որ «Գիրք վայելուչ»-ը նվիրվել է Ոսկան Երևանցու հիշատակին, որին պատկանել է այդպիսի մի գրքի հրատարակութեան գաղափարն ու նախաձեռնութիւնը («զպատճառս, զմատակարարս և զաշխատողս ի սմին, և մանաւանդ զհանգուցեալն ի Քրիստոս զՈսկան վարդապետն...»): Ոսկան Երևանցուն հարգանքի տուրքն է մատուցել իր մասնակցութեամբ նաև Հովհաննես Հոլովը, զետեղելով այդ գրքում իր թարգմանութիւնները և շարունակելով Մարսելի տպարանի հայ տպագրութեան ղեկավարման աշխատանքները:

K. S. TER-DAVTYAN

О ДВУХ ПЕРЕВОДАХ ОВАНЕСА ОЛОВА

Р е з ю м е

Армянская переводная литература XVII века богата произведениями средневековой художественной прозы. В 1675 г. в Риме и Марселе были изданы переведенные с латинского «Цветы дарований» и «Мудрые изречения».

В статье выявляется и определяется характер этих сборников: первый из них принадлежит к западно-латинскому, второй—к восточно-греческому типу сборников изречений мудрецов.

Показано, что 9 новелл, помещенных непосредственно сразу после «Мудрых изречений», не входят в состав последних. Они внесены в сборник из книги «Цветы дарований», по всей видимости, самим переводчиком «Цветов» Ованесом Оловом. Автор статьи склоняется к мнению, что и «Мудрые изречения» переведены Ованесом Оловом.

K. S. TER-DAVTYAN

DE DEUX TRADUCTIONS DE HOVHANNES OLOV

R é s u m é

La littérature arménienne de traduction du XVIIe siècle est riche en oeuvres médiévales en prose. En 1675, deux oeuvres traduites du latin—„Flos Virtutum“ et „Apophegmata“—furent publiées à Rome et à Marseille.

²⁰ Նույն տեղում, էջ 516. այդ մասին տե՛ս նաև «Հանդես ամսօրեայ», 1893, էջ 376:

L'article éclaircit et précise le caractère de ces recueils: le premier appartient au type occidental latin, le second au type oriental grec de recueils de préceptes.

Il montre que les neuf nouvelles qu'on trouve immédiatement après les „Apophegmata“ n'en font pas partie. Elles ont été empruntées au livre „Flos Virtutum“, probablement par leur traducteur même, c'est-à-dire Hovhannès Olov.

L'auteur de l'article est enclin à penser que le recueil „Apophegmata“ fut également traduit par Hovhannès Olov.

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻՉՅԱՆ

ՀԱԿՈՐՈՍ ԱՅՎԱԶՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ
«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ»

Հակորոս Այվազյանը անցած հարյուրամյակի վերջի և ներկա դարի սկզբի արևմտահայ երևելի երաժիշտներից է: Մնվել է 1869-ին, Արմաշում, համեստ աշխատավորի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի նարեկյան վարժարանում: Ավարտել է նաև Պրուսայի շերամաբուժական ուսումնարանը: Բայց նրա վաղագույն, տեական, ու, ի վերջո, նաև մասնագիտական հետաքրքրությունների գլխավոր առարկան եղել ու մնացել է երաժշտարվեստը:

Այվազյանի երաժշտական հակումներն ու ընդունակությունները դրսևավորվել են մանկապատանեկան տարիներից: Տակավին նախակրթարանում սովորելիս, զգալուն դպրոցականը տարվել է հայկական եկեղեցական երաժշտությամբ, սիրով ու խանդավառությամբ մասնակցել բոլոր ժամերգություններին, և ընդհանուր երաժշտականությամբ, երգչային հաճելի ձայնով, նուրբ լսողությամբ ու հիշողությամբ գրավել Արմաշի դպրեվանքի երգեցողության ուսուցիչ և Չարխափան ս. Աստվածածին եկեղեցու դպրապետ, մեծահմուտ երաժիշտ Պապա Համբարձում Չերչյանի ուշադրությունը: Դա վճռորոշ նշանակություն է ունեցել Այվազյանի կյանքում:

Նա իր երաժշտական կրթությունն ստացել է Արմաշի Դպրեվանքում: Յուրացրել է հայկական ձայնադրությունը, հայ եկեղեցու տարեկան շքրչանի բոլոր երգեցողությունները, ինչպես և աշխարհիկ՝ մերձարևելյան քաղաքային մասնադիտացված երաժշտության հիմունքները: Նաև ինքնուրույն աշխատանքով ծանոթացել է եվրոպական երաժշտական գրաճանաչության տարերքին, սովորել է նվագել ու վարժ նվագել է ուգ, ջութակ և ձեռնադաշնակ:

1891-ին Արմաշից հեռացող Համբարձում Չերչյանի հանձնարարությամբ և անմիջական կարգադրությամբ, դպրեվանքի երաժշտության ուսուցիչ է նշանակվում 22-ամյա Հակորոս Այվազյանը: Այդ պաշտոնին նա մնացել է գրեթե քառորդ դար՝ մինչև Մեծ եղեռնը (երկու տարվա ընդմիջումով, երբ աշխատել է Անկարայում, դարձյալ՝ որպես երաժշտության ուսուցիչ):

Ծավալելով բազմակողմանի գործունեություն, նշված տարիների ընթացքում Այվազյանը հայ եկեղեցական երաժշտության ճաշակ է ներարկել մի ամբողջ շարք նպագա (այդ թվում և նշանավոր դարձած) կղերականների, ճանաչում ու հեղինակություն է ձեռք բերել որպես հմուտ երաժշտապետ, հեղինակել աշխարհիկ ու հոգևոր երգեր, գրական ու երաժշտագիտա-

կան դորժեր, այլև ժամանակ գտել խնամքով արտագրելու իր ուսուցչի կազմած ծավալուն ժողովածուները՝ ժամագիրքն ու Չայնբադ Շարականը:

Այվազյանի կարողությունների և հնարավորությունների մասին հստակ գաղափար են ունեցել արևմտահայ հոգևոր բարձրագույն իշխանությունները: 1908-ին Կ. Պոլսի հայկական Ազգային Կենտրոնական վարչությունը, պաշտոնեթույնի բարեկարգման խնդրի քննարկման առթիվ, Հակոբոս Այվազյանին, որպես հայ եկեղեցական երաժշտության խոշոր մասնագետի, հանձնարարում է կարևորագույն մի գործ. ժամերգությունները պատշաճեցնել նոր ժամանակների պահանջներին այնպես, որ հոգևոր եղանակներն ավելի ամփոփված լինեն, առանց կորցնելու իրենց ոճական ավանդական հատկանիշները: Հինգ տարի նվիրելով այդ գործի կատարմանը, Այվազյանը պատրաստում է մի սովորածավալ հատոր, որը, սակայն, չի հասցնում ներկայացնել ազգային կրոնական ժողովին, և որից կարևոր մասեր անդարձ կորչում են արտոբի տարիներին:

Առաջին աշխարհամարտի սկզբին, արևմտահայ հարյուրավոր մտավորականների կողքին ձերբակալվում և արստրվում է նաև Հակոբոս Այվազյանը: Հետևում է քնդհանուր տարագրությունը: Ընտանիքը Այվազյանին հանդիպում է Կոնիայի մեջ: Այստեղ էլ, սակայն, նոր հալածանքների է ենթարկվում երաժշտապետը, ի վերջո՝ բանտարկվում է և մահանում բանտում 1918-ին:

Նրա ձեռագրերը փրկել է որդին՝ Գեղամ Այվազյանը (հետագայում հայտնի բժիշկ-ատամնարույժ), տարագրության դաժան պայմաններում հնարավոր ամեն ջանք գործադրելով դրանք անվնաս ու անկորուստ պահելու համար:

Եվ ահա, 1959 թվականին դ-ր Գեղամ Այվազյանը ճիշտ որոշում է քնդունում՝ հայրենադարձնել հոր ձեռագրերը. և անձամբ բերելով դրանք Երեվան, հանձնում է Եղիշև Չարենցի անվան դրականության և արվեստի թանգարանի երաժշտական բաժնին¹: 60-ական թվականների սկզբին այստեղ ստացվում է նաև Շ. Նարզունու՝ Փարիզում տպագրված գրքույկը. «Հակոբոս Այվազյան երաժշտապետ» (Կյանքը, գործը և նմուշներ)²: Այն գրված է Գեղամ Այվազյանի տրամադրած նյութերի հիման վրա: Աշխատության մեջ հեղինակը նախ շարադրում է Հակոբոս Այվազյանի կենսագրությունը, հետո ներկայացնում նրա ժառանգությունը, այն բաժանելով երկու հիմնական մասի՝ գրական (բանասիրական) ու երաժշտական:

Գրական գործերից հիշատակվում է երկու անտիպ աշխատություն՝ «Արձաշի գյուղաբարբառը» (փաստորեն՝ մի բառարան) և «Արձաշի պատմությունը» (որ ճիշտ կլիներ անվանել՝ Գպրեվանքի պատմությունը):

Բուն երաժշտական ժառանգությունը ևս բաժանվում է երկու հատվածի՝ աշխարհիկ ու եկեղեցական:

Առաջինի մեջ դասվում են քնարական ու հայրենասիրական բովանդակության հայերեն երգեր, սիրային բովանդակության հայատառ թուրքերենով հորինված երգեր (շարքիներ), ինչպես և «Արևելյան երաժշտության

¹ Հիշյալ թվականից էլ ՉԱ ԳԱԹ-ի երաժշտական բաժնում գոյություն ունի Հակոբոս Այվազյանի դիվանը:

² ՉԱ ԳԱԹ, Հակոբոս Այվազյանի դիվան, նյութ հ. 8ա:

ձեռնարկը» (որ Նարդունին «Դասագիրք» է անվանում): Երկրորդ հատվածը կազմում են հոգևոր հայտնի բանաստեղծությունների՝ Պատարագի և ժամագրքի երգերի գրական խոսքերի վերանայնակավորումներ և աղոթքներ (այլև հայկական եկեղեցական ձայնագրության անավարտ մի Դասագիրք, կավելացնելինք մենք, որ յուրահատուկ կապեր ունի վերոհիշյալ «Արևելյան երաժշտության ձեռնարկի» հետ):

Այսպես ներկայացնելով Հ. Այվազյանի ժառանգությունը, և օրինակներ ու փաստաթղթեր առաջ բերելով «նմուշներ» բաժնում, Նարդունին «Ավանդապահ» ենթախորագրի տակ իր մտորումներն է շարադրում երաժրշտապետի տեղի մասին հայ հոգևոր մշակույթի պատմության մեջ: Ըստ այդմ՝ Այվազյանը բնութագրվում է որպես մի գործիչ, որն իր դերը տեսնում էր ազգային եկեղեցական արվեստի հարստությունները բժախնդիր ճշտությամբ հաստատադրելու և սերունդներին հավատարմաբար փոխանցելու մեջ. ի դեմս այն իրականության, որն ստեղծվել էր XIX դարի վերջում և XX-ի սկզբում, և որը հատկորոշվում էր Պոլսի ու Թիֆլիսի հայկական մամուլում ևս արձագանք գտած սուր վեճերով՝ հայ հոգևոր երաժշտության գրառման ասպարեզում եվրոպական ձայնագրագիտության հնարավորություններից օգտվելու նպատակահարմարության շուրջ:

Նարդունու գրքույկը գնահատելի աշխատություն է: Արժանին հատուցելով Հ. Այվազյանի կյանքի ու գործի յուսարանությանը ուղղված նրա ջանքերին, միաժամանակ պետք է անենք երկու դիտողություն: Նախ՝ եթե Այվազյանն իր ավանդապահությամբ, և կամ, ավելի ճիշտ կլիներ ասել՝ որոշ արևելահայացությամբ, կանգնած էր Հ. Լիմոնջյան—Ա. Հովհաննիսյան—Հ. Չերչյան գծի վրա. ապա եվրոպական ձայնագրագիտության սկզբունքներից խելամտորեն օգտվելու կողմնակիցներն էլ աչքի առաջ ունեին Հ. Լիմոնջյան—Ա. Հովհաննիսյան—Գ. Երանյան—Ն. Քաշճյան գիծը գոյացնող ոչ պակաս հմուտ երաժիշտների փորձն ու տեսական գրույթները³: Երաժիշտներ, որոնք իրենց հռանդուն գործունեությամբ վաղուց կանխորոշելին պայքարի կլքը՝ հօգուտ արևելյան և արևմտյան տարրերի յուրահատուկ գույզորդության սկզբունքի⁴: Եվ հետո՝ Հ. Այվազյանի, որպես խոհուն երաժրշտի ու տեսաբանի գիտաստեղծագործական գիմանկարը բնութագրող հիմնական նյութերը միայն դուռ ազգային ու եկեղեցական երաժշտությանը չէ որ վերաբերում են: Այդ նյութերի շարքում առաջնակարգ տեղ է գրավում նաև, մասնավորապես, Այվազյանի «Արևելյան երաժշտության ձեռնարկը», որի հետ որոշակի կապերի մեջ է, ասացիմք, նրա հայկական եկեղեցական ձայնագրության անտիպ ու անավարտ Դասագիրքը:

Վերջինս մեզ հանդիպել է Այվազյանի դեռևս չկարդավորված (քիչ թե շատ մանրամասն շնկարագրված) երևանյան դիվանի նյութերից Hymns

³ Տե՛ս մեր հոդվածը՝ Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, «Կոմիտասական», հ. 1, Երևան, 1969, էջ 174:

⁴ Անկախ զրանից, թե՛ մեկ, և թե՛ մյուս խմբավորման պատկանող գիտակից երաժիշտների առջև ծառայած զլխավոր խնդիրը եղել է՝ հոգևոր երգարվեստի բնագավառում կուտակված մեղեդիական աչքի բնկնող հարստությունը հարազատորեն պահպանել ու հավատարմաբար փոխանցել սերունդներին: Խնդիր, որը նոր շրջանի հայ երաժիշտները ժառանգել էին ու ժիջնադարից: Հմմտ. Ն. Քահնիզյան, Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1982, էջ 47:

ընդանուր խորագիրը կրող մի տետրում, որտեղ իրոք հոգևոր երգերի ձայնագրություններ են ամփոփված: Հ. Լիմոնջյանի «Տիրաժին կոյս» ներբողատիպ ծավալուն գործից (որի զրական խոսքերում ուսուցողական նպատակներով հիշատակվում են, ի դեպ, մերձարևելյան շուրջ քսան ախպական եղանակների անուններ)⁵, մինչև Մ. Եկմալյանի բազմաձայն Պատարագից հատվածներ և այլն: Այս նյութերի մեջ, «Չայնագրութիւն» վերտառության տակ, բավական անսպասելի, հանդիպում է դիտարկվող «Դասագիրքը»⁶: Այն շարադրված է հարց ու պատասխանի ձևով և ունի պարզ կառուցվածք՝ բաժանված է մի շարք «գասերի»:

Առաջին գասը նվիրված է երաժշտական տվյալ համակարգում գործածական ամբողջ և կես ձայների, որով և՛ հիմնական, բնուղիղ (դիատոնիկ) ու բազադրյալ (քրոմատիկ) ձայնաշարերը բաղկացնող աստիճանների ու դրանց դասավորության բացատրությունը: Չայնաստիճաններն այստեղ բերվում են հայկական և արևելյան զույգ անուններով⁷: Ամբողջ ձայների շարքն սկսվում է Ճ'-ից, որին հավասարեցված է «փուշ»-ը, արևելյան անունով՝ «եգյահ»-ը: Կես ձայների շարքն սկսվում է ձի՛-ից, որին հավասարեցված է «փուշ կիսվերը», արևելյան անվանակոչությամբ՝ «բէս հիսար»-ը: Առհասարակ, կես ձայների շարքը՝ կիսվեր, այն է՝ բարձրացված աստիճանների շարք է: Այս բոլորից հստակ երևում է, որ դեռևս հայկական ձայնագրության նոր համակարգի ստեղծողն իսկ՝ Հ. Լիմոնջյանը, ձայների բարձրության հարաբերությունների հարցը լուծելիս, հիմնականում բավարար է համարել XVIII դարի հայ նշանավոր երաժիշտ Քամբուրի Հարութինի «Արևելյան երաժշտության ձեռնարկում» ընդունված դրությունը⁸, կատարելագործել է այն՝ հատկապես կիսվերի նշանի դրությունն ու գործածությանը վերաբերող կանոնների շրջանակում⁹ ու խարսխվել դրա վրա: Եվ Հակոբոս Այվազյանն էլ, որպես հայ ձայնագրագետների «պահպանողական» թևի վերջին ներկայացուցիչներից մեկը, հարազատորեն արտահայտել է ճիշտ այդ՝ նախնական պատկերը:

5 Հմմտ. նաև՝ Տ. Պալյան, Հայ աշուղներ, տետր Ա, Զմյուռնիա, 1911, էջ 15:

6 ԶԱԳԱԹ, Հակոբոս Այվազյանի դիվան, նյութ հ. 1:

7 Այդ ավանդույթը գալիս է հնուց՝ Հ. Լիմոնջյանի գործունեության ասրիներից: Վերջինս, ինչպես գիտենք, իր երաժշտատեսական փորձերը կատարում էր, հենվելով Քամբուրի վրա և օգտվելով նրա լարերի ու մասնատեղերի անուններից: Գ. Երանյանն ու Ն. Թաշճյանը ժամանակին հրաժարվել էին ձայնաստիճանների արևելյան անվանակոչություններից, պահպանելով միայն հայկականները: Հ. Այվազյանի «Դասագրքում» արտացոլված է ավելի նախնական ավանդույթը:

8 Հիրավի մերձարևելյան, այդ թվում և հայկական միաձայնային երաժշտության հիմնական և ձևափոխված (բարձրացված) ձայնաստիճանների երկու կարգերն ըստ էության նույնն են Քամբուրի Հարութինի և Հ. Լիմոնջյանի հաստատած համակարգերում: Հմմտ.՝ Гамбурист Арутин, Руководство по Восточной музыке (Перевод с турецкого, предисловие и комментарии Н. К. Тагмизяна), Ереван, 1968, с. 74—78, 128—129.

9 Խոսքը կիսվերի նշանին հատկացված այն դրության մասին է, որով մերձարևելյան և հայկական երաժշտության հիմնարար (բնուղիղ) ձայնաշարի լոկրիական (արգի լավ հավասերեցված համակարգի համապատասխան հնչյունների բաղդատմամբ փոքր-ինչ ցած) ձայնաստիճանները բարձրացվում են կես ձայնից էլ պակաս մի ձայնամիջոցի շափով: Հայ (և, միաժամանակ, մերձարևելյան) միաձայնային երաժշտության հիմնարար բնուղիղ ձայնաշարի առանձնահատկությունների մասին տե՛ս Խ. Ս. Кушнарев, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, с. 323.

Դասագրքի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ դասերում լուսաբանվում են հնչյունների հարաբերական տևողությունների, դրանց նշանների, այլև ընթացքի (տեմպի) և շափի ու կշռույթի խնդիրները: Այդ դասերի բովանդակությունը նորեն ցույց է տալիս, որ հայ և քնդհանուր արևելյան միջնադարյան երաժշտության վերաբերությամբ հնչյունների հարաբերական տևողությունների համաստորագասության սկզբունքը որոշելու հարցում լուրջ դժվարությունների են հանդիպել Հ. Լիմոնջյանն ու նրա շուրջ հավաքված մասնագետները: Եվ շկարճղանալով լուծել դրանք, բարվոք են համարել որդեգրել քրիստոնյա Եվրոպայում (Թեկուզ և բազմաձայն արվեստի համար) մշակված դրությունը¹⁰:

Վեցերորդ և հետևյալ դասերը (մինչև ութ-ձայնի սկսվածքներն առաջ բերող կիսատ մնացած դասը, որով անավարտ է մնում ողջ աշխատությունը ևս), վերաբերում են հայկական միաձայնային երաժշտության ձայնեղանակների համակարգի խնդրին և մեր նյութի տեսակետով ունեն առավել կարևոր նշանակություն:

Այվաղյանը հայկական ութ հիմնական ձայների ու նրանց դարձվածքների մասին նախընտրում է խոսել անմիջական հաջորդականությամբ¹¹: Յուրաքանչյուր ձայնեղանակի բնութագրման կապակցությամբ նա նկարագրում է երկու կամ ավելի մեղեդիներ: Ըստ որում ուշագրավ է, որ հեղինակն այստեղ հայկական բուն և դարձվածք տիպի ձայնեղանակներին տալիս է նաև դրանց մերձարևելյան նմանակների անվանակոչությունները, որոնք (վերջիններս) համապատասխան եղանակներով առկա են նրա «Արևելյան երաժշտության ձեռնարկում» ևս:

Ութ-ձայնի սկսվածքների բաժնում Այվաղյանը դարձյալ հանվածք (հայկական ու մերձարևելյան անուններով) հիշատակվող եղանակների վերաբերությամբ կիրառում է նաև «պարզ» (կամ «բուն») և «դարձված» (կամ «դարձվածք») ձայն հորջորջումները: Համեմատությունից պարզվում է, որ բոլոր դեպքերում՝ տվյալ ձայնին պատկանող եղանակներից առաջինը, բնականաբար, «պարզ» կամ «բուն» տիպն է, իսկ մյուսը և կամ մյուսները՝ «դարձվածք» ձևերը: Առանձին-առանձին դուրս դրելով հայկական բուն և դարձվածք ձայններին համապատասխանող արևելյան եղանակների անունները, ստանում ենք հետևյալ երկու տախտակները.

¹⁰ Այս պայմաններում, հայ և արևելյան երաժշտության շափահշռույթային նրբությունները պահպանելու և արտահայտելու միջոցը կարող էր լինել և իրոք եղել է՝ տևողությունների զույգ բաժանման վրա հիմնված համաստորագասությունը կատարողական արվեստում բրտեա քնդհանուր հիմունք դիտելու դիրքորոշումը, առանց հաշվի առնելու տվյալ հարաբերությունները խտտորեն պահպանելու պահանջները: Տե՛ս մեր հոդվածը՝ Հնչյունների հարաբերական տևողությունների համաստորագասության սկզբունքը հայ միջնադարյան արվեստում և հայկական ձայնագրության նոր համակարգում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1984, հ. 1, էջ 221:

¹¹ Նման մոտեցման զեպքում ուշադրությունը կենտրոնանում է դարձվածք տիպի ձայնեղանակների մեղեդիական կառուցվածքի խնդրության գծերի վրա, դժեր, որոնք բյուրեղացել են պատմական զարգացման բազմադարյան ընթացքում:

Աձ—Հեֆթյուզյահ

Ակ—Սեզյահ

Բձ—Հյուսեյնի

Բկ—Աջեմ

Գձ—Հիշաղ

Գկ—Սարա

Դձ—Իսֆահան

Դկ—Իուշշակ

Աձդ—նեշապուր

Ակդ—Բուսելիբ

Բձդ—[Շեհնազ]

Բկդ—Ֆերահ-Ֆեզա, Աջեմ-աշրան

Գձդ—էվիշ

Գկդ—Բեսթենիզյար

Դձդ—Սեզյահ-Տյուզզամ

Դկդ—Ռասա

Իսկույն ևեթ նկատենք, որ Այվազյանի Գասազրքից քաղվող այս տրվյալները վստահելի են: Հայկական և արևելյան (հատկապես մերձարևելյան) ձայնեղանակների հիմունքների ընդհանրությունը վաղուց, տակավին միջնադարում գիտակցված երևույթ է¹²: Նոր ժամանակներում Ս. Տնտեսյանը շահեկան գիտողություններ արեց այդ մասին: Նկատի առնելով նույնիսկ ուշ միջնադարի աննպաստ պայմաններում կենցաղավարած հայկական աշխարհիկ, քաղաքային մասնագիտացված երգ-երաժշտությունն ու եկեղեցական (պաշտամունքային) երգարվեստը, և վերջինս համարելով մեղեդիական շատ ավելի անեղծ ազդային ձևերի պահեստարան, Տնտեսյանը շվարանեց հաստատելու, որ երկուսն ևս բնականորեն ներառնվում են մերձարևելյան արվեստի ընդհանուր շրջանակների մեջ, որպես ամբողջական երևույթի տարրեր երեսակներ¹³:

Կոմիտասը միշտ էլ ընդգծել է, որ հայ երաժշտությունը ևս արևելյան է այնպես, ինչպես պարսիկ, արաբ, տաճիկ երաժշտությունը: Եվ իր անդրանիկ հոդվածում իսկ, նվիրված հայկական եկեղեցական եղանակներին, առաջ է բերել հայ և մերձարևելյան ութ հիմնական ձայնեղանակների մի համեմատական աղյուսակ: Այն՝ ամբողջապես համընկնում է Այվազյանի դասազրքից քաղված և վերը բերված տախտակներից առաջինի հետ¹⁴: Մենք, տակավին 1960-ական թվականների կեսերին ուսումնասիրելով Կոմիտասի կազմած աղյուսակը, Թամբուրի Հարութինի ձայնազրած արևելյան եղանակների ստվար բազմությունը, այլև ուրիշ օժանդակ նյութեր, կազմել ու հրատարակել էինք նաև հայ երաժշտության դարձվածք տիպի ձայնեղանակների համապատասխան աղյուսակը¹⁵: Եվ ահա, այժմ պարզվում է, որ մեր կազմած և հրատարակած աղյուսակն էլ գրեթե¹⁶ լրիվ համընկնում է Այվազյանի Գասազրքից քաղված երկրորդ տախտակին:

Հայկական միաձայնային երաժշտության գլխավոր ու երկրորդական ձայնեղանակների միակցությունը զարգացած ավատատիրության շրջանում, հատկապես մինչև XV դարը, ներկայացրել է՝ ժամազրքում, Շարակնոցում,

12 Հմմտ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հ. 55 (ժողովածու, 1489 թ., Երզնկա), էջ 466բ—467ա:

13 Տե՛ս Ս. Տնտեսյան, Ազդային երաժշտություն, «Սիոն», Երուսաղեմ, 1867, հ. 6—7:

14 Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 114:

15 Տե՛ս մեր հոդվածը՝ Կոմիտասը և Հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, էջ 193:

16 Ասում ենք՝ գրեթե, որովհետև Այվազյանը, հավանաբար անուշադրությամբ, Բձ դարձվածք եղանակի մերձարևելյան նմանակի անունը չի տալիս: «Շեհնազը» մեր հրատարակած տախտակից է:

Պատարագամատուցում, Գանձարանում և մանր ուսման գրքերում ամփոփված, տասնյակներով հաշվվող շափանմուշ մեղեդիների մի պերճ համակարգ: Կոմիտասի մոտավոր հաշվումներով, այդ մեղեդիները 150-ից ավելի են եղել¹⁷: Մոտ ապագայում հնարավոր կլինի, դարձյալ մոտավոր հաշվումների հիման վրա, շուրջ 200-ի բարձրացնել դրանց թիվը (տարբերակների հետ)¹⁸: Այդ հարստության մեկ երրորդ մասը հագիվ հասել է մեզ՝ բնավոր ավանդությանը պահպանված եկեղեցական պաշտամունքային երգերի ձայնագրեալ ժողովածուներում: Իսկ որտե՞ղ են մնացածները: Դրանց հայտնաբերումը չի կարելի կապել խաղանշանների վերծանության կնճռոտ հարցին: Ընդհակառակը, խաղագրերի վերծանությունն ինքը ուղղակի կախման մեջ է հիշյալ շափանմուշ եղանակների հայտնաբերումից: Քանի որ տվյալ որևէ խաղավորում երաժշտական իմաստ և հնչող մարմնի ուժ է ստանում միայն և միայն նախօրոք տրված որևէ շափանմուշ եղանակի սահմաններում: Այս կապակցությամբ շատ շտաբաժվելու համար նշենք (ինչպես հավաստել ենք այլ առիթներով էլ)¹⁹, որ հայ երաժշտության մեղեդիական հարստությունների մեծագույն մասն ուղղակի կամ անուղղակի կերպով ներքաշվել է մերձարևելյան արվեստի ընդարձակ խճանկարի մեջ, ուշ միջնադարի պայմաններում, մասնավորապես, XV—XVIII դարերում, թեև բուն ընթացքը, կենտրոնական Հայաստանում սկսվել էր տակավին XVIII հարյուրամյակից²⁰:

Վերագանալով Հակոբոս Այվազյանի կազմած հայկական եկեղեցական ձայնագրության «Դասագրքին», և ամփոփելով այդ մասին ասվածը, նկատենք, որ այն՝ իր թերի կամ անավարտ վիճակով էլ էական նպաստ է բերում մեզ հետաքրքրող հարցերի լուսարանության գործին: Բավական է հաստատել, որ Այվազյանի «Արևելյան երաժշտության ձեռնարկում» եղանակների գրառումները կատարված են իր իսկ նկարագրած հայկական ձայնագրության նշաններով, և նրանում առկա են հայ երաժշտարվեստի ութ ձայների ու դրանց դարձվածքների վերը նշված մերձարևելյան նմանակները:

Պետք է ասել, որ անկախ հայ երաժշտական մշակույթի զարգացման այն նոր աստիճանից, որն հատուկ էր Հակոբոս Այվազյանի գիտակցական կյանքի տարիներին, նա իր էությունը պատկանել է նախակոմիտասյան շրջանի հայ եկեղեցական երաժիշտների տիպարին: Երաժիշտներ, որոնք պատմական պայմանների բերումով, այլև հայրենիքից հեռու գտնվելու պատճառով, անմասն են մնացել հայ ժողովրդական, հատկապես գեղջուկ երգերի հավաքման, հարգարման ու տարածման վերափոխիչ շարժումից: Նրանք (նույնիսկ հեռավոր գավառներում ապրողներից առանձին դեմքեր, Պոլսի իրենց արվեստակիցների հետ կապ պահպանելու միջոցով), բացի

17 Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, էջ 120:

18 100-ից անցնում են միայն «մանրուսման» կոչված եղանակները, որոնց անունների և թվաքանակի ճշգրտման գործն սկսել ենք արդեն: Տե՛ս մեր հոդվածները՝ նյութեր հայկական և ուսական հոգևոր երգարվեստների համեմատական ուսումնասիրության, «Թանրեր Մատենադարանի», հտ. 13, Երևան, 1980, էջ 119—120. Հայկական ութ-ձայնի գանձարանային հատվածի մասին, «Թանրեր Մատենադարանի», հտ. 15, Երևան, 1986, էջ 44—59:

19 Н. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, с. 186 (Проблема хазовых знаков пения).

20 Տե՛ս մեր հոդվածը՝ Музыкальная культура Армении и ее связи с Востоком, «Музыка народов стран Азии и Африки», вып. 5, М., 1986.

հայ եկեղեցական երաժշտությունից, այս կամ այն չափով ծանոթանում էին նաև հունական (ուշ բյուզանդական) պաշտոներգությանը, եվրոպական ձայնագրագիտությանը (ինչպես նշվեց վերը), յուրացնում հայկական քաղաքային և ազգային-հայրենասիրական երգերի մշակույթը, ինչպես և մերձարևելյան աշխարհիկ մասնագիտացված երաժշտարվեստի դարավոր շերտերը:

Այս վերջին բնագավառին հայ երաժիշտները հաղորդվել են շատ վաղ ժամանակներից, իսկ ուշ միջնադարի սկզբներից նաև իրենց զործուն մասնակցությունն են բերել դրա շրջանակներում իրականացվող ստեղծագործական, կատարողական և տեսական ու մանկավարժական աշխատանքներին: Դա ապացուցող գրավոր փաստաթղթեր, այդ թվում և ամբողջական գրվածքներ կան: Դրանցից մեկն է՝ XVIII դարի առաջին կեսում ծաղկած հայ երաժիշտ Քամբուրի Հարութինի վերոհիշյալ՝ մեր ջանքերով լույս տեսած աշխատությունը: Ծիշտ այդ շարքին է պատկանում նաև Հակոբոս Այվազյանի «Արևելյան երաժշտության ձեռնարկը»²¹, որն և հրատարակության ենք պատրաստում ներկայումս:

Այն գրված է արևմտահայերենով, 1901 թվականին, բայց իր բովանդակությամբ ամբողջապես միջնադարյան երաժշտական մշակույթի արտացոլումներից է: Նրանում Այվազյանը գրավոր հաստատագրել է գլխավորապես սերնդե-սերունդ բանավոր կերպով փոխանցված ավանդական եղանակները, կշռույթներն ու դրանց մասին գիտելիքները, ողջ նյութը ենթարկելով մի ուրույն դասակարգության, սեփական բազմամյա փորձի հիման վրա: Նա փնտրել ու գտել է մի քանի գրավոր մանր աղբյուրներ էլ, որոնք, սակայն, իրենց մասնագիտական մակարդակով և կամ հատվածական բնույթով նրան չեն զոհացրել: Դրանցից մեկը հիշատակում է Այվազյանը, Չեռնարկի «հավելված» բաժնում թվարկվող եղանակների վերաբերյալ ասելով, որ վերջիններիս «մասին թուրք հիշատակարան մը²² տեղեկություններ կուտա, առանց կարող ըլլալու ճաշակ մը կամ օրինակ մըն ալ կցել, որպեսզի լավ հասկցվեր հեղինակին միտքը»:

Այդ գրվածքը մենք շղտանք Այվազյանի դիվանում: Նրանում մենք հանդիպեցինք հայատառ թուրքերենով շարագրված մի այլ փոքր նյութի²³, որին նույնպես պատշաճում են Այվազյանի քիչ առաջ բերված խոսքերը: Ու մեկ էլ Քամբուրի Հարութինի վերոհիշյալ աշխատությունից թեև կարեւոր, բայց առանձին մի հատված²⁴:

Ըստ եղած տվյալների, ոչ միայն հայ, այլև Կ. Պոլսի թուրք երաժիշտների շրջանում իսկ, Այվազյանի զործունեության տարիներին, չի եղել որևէ ձեռնարկ, որում նոր ժամանակների պահանջների համեմատ դասակարգված ու, ըստ կարելիվույն, հստակ ու լրիվ ներկայացված լինեին արևելյան երաժշտության մեղեդիական և կշռույթային կուտակված հարստությունները: Այնպես որ, Այվազյանը քննարկվող Չեռնարկը աշխատասիրել է՝ մի

²¹ ՉԱԳԱԹ, Հակոբոս Այվազյանի դիվան, նյութ 5. 2:

²² Մէժմուայի Շարդը (-ծաղկաբազ երգերի—Mermüai şarki). այսպես է անվանում հեղինակը հիշյալ աղբյուրը:

²³ Մաղամաթը միւթետափուլի (-տարածված մուղամներ—Makâmati mütedavile), ՉԱԳԱԹ, Հակոբոս Այվազյանի դիվան, նյութ 5. 5:

²⁴ Նույն տեղում, նյութ 5. 4:

կարևոր բաց լրացնելու գիտակցությամբ: Համառոտ առաջաբանում նա գրում է.

«Արևելյան երաժշտություն անունին ներքև պետք չէ կատարյալ գործի մը երաշխավորությունը փնտրել մեր այս աշխատության մեջ: Հույժ կարճ ժամանակի մեջ՝ թերի պայմաններում ներքև պատրաստված գործ մ'է այս տեսակ մը հատակագիծ ապագա գրվածի մը՝ ուր այժմեն կարելի է ըստ կարելիության ճշտորեն թվված և բացատրված տեսնել նյութին երկու գլխավոր կետերը, երկու առանձին մասերու մեջ. 1) եղանակները և 2) ուսույնները:

Այս հանգամանքներով ներկայացող գործ մը տարակույս չկա թե մատչելի և օգտակար կըլլա ամենեն ավելի անոնց համար, որոնք Հայկական Չայնագրության արվեստին սկզբունքներուն տիրանալիս հետո կուզեն ավելի ևս զարգանալ և իրենք իրենց մեջ առանձին հեղինակություն մ'ըլլալ: Ուստի այս գործը իր թերություններովն հանդերձ, ուրկե շենք հավակնիր զերծ համարել զայն, միակն է, որ կ'հանձնարարվի երաժշտության արվեստին սիրահար անձներու»²⁵:

Թող շշտօթեցնեն մեզ ճշմարիտ գիտնականին հատուկ զգուշավոր արտահայտություններն ու վերապահումները: Համեմատությունը ցույց է տալիս, որ Այվազյանի Չեռնարկում ընդգրկված ու յուրովի դասակարգված մեղեգիական նյութը զգալիորեն ավելի է, քան այն, ինչ շուրջ ըսան տարի վերջ պրոֆ. Կավինյակի երաժշտական բազմահատոր հանրագիտարանում «La musique Turque» ծավալուն հոդվածի շրջանակներում ներկայացրել է Ռաուֆ Եկտա Բեյը²⁶: Եվ որ կարևորն է, բացի ամեն ինչից, Այվազյանի Չեռնարկում առաջ բերված եղանակները հատկապես կրում են հայ երաժշտի ճաշակի կնիքը:

Աշխատության առաջին մասը վերնագրված է՝ «Ծանոթություն ընդհանուր եղանակներու վրա», որտեղ ուշագրավ է «մուզամ» (կամ «շոքե» և կամ «ավազե») խոսքի բացակայությունն առհասարակ: Այստեղ դասակարգված են շուրջ հարյուր եղանակներ, իրենց ձայնելեկչային կանոնների բացատրություններով և որպես այդ կանոնների իրացման հնարավոր ձևեր առաջ բերվող ամբողջական ձայնագրություններով (չհաշված «Հավելված» բաժնում հիշատակվող մի քանի տասնյակ եղանակները): Ամեն անգամ հեղինակը նախ տալիս է եղանակի անունը (ասենք՝ Եգյահ), հետո հաստատագրում է նրա համաձայնութային (լադային) հիմքն ու ելեկչային հատակագիծը (կանոնը)՝ թամբուրի համապատասխան մատնատեղերի հիշատակության միջոցով, և հուսկ ուրեմն առաջ է բերում ամբողջական եղանակի ձայնագրությունը, հայկական ձայնանիշերով, միշտ նախապես նշելով՝ «զոր օրինակ»:

Աշխատության երկրորդ մասը վերնագրված է Ուսույնները, այն է՝ արեւելյան երաժշտության մեջ երգ ու նվագի հետ դափի կամ մեկ այլ գործիքի օգնությամբ մշտապես հնչող շափակչույթային տիպական բանաձևերը: Դրանք այստեղ ճիշտ կերպով մեկնաբանվում են որպես որևէ միաձայնային ստեղծագործության կանոնը՝ շափի, կշույթի ու նաև ձևի (հորինված-

²⁵ Հակոբոս Այվազյան, Երևելյան երաժշտություն (Չեռնարկ Արևելյան երաժշտության), նշվ. ձև-ը, էջ ա-բ (Երկու խոսք):

²⁶ Հմմտ. La musique Turque, par Raouf Yekta Bey, Encyclopédie de la musique et dictionnaire du conservatoire, fond. H. Lovignac, 1-er partie, V, Paris, 1922, p. 2980.

քի) մակարդակի վրա: Բացատրվում են այդ բանաձևերը կազմող տևողության տարրեր շափերի պայմանական նշանները: Ու դրանց միջոցով էլ նշանագրվում-հաստատագրվում են շուրջ երեսուն ուսույններ:

Ամբողջապես առած, Հակոբոս Այվազյանի «Արևելյան երաժշտության ձեռնարկը» կարևոր նշանակություն ունի երկու տեսակետով: Նախ, դիտարկվող ձեռնարկը մի պատվավոր տեղ է զբաղում Մերձավոր արևելքի շափացույցերով ու միջնադարում և նոր ժամանակներում ազգային տեղական լեզուներով շարադրված փոքրաթիվ այն աշխատությունների շարքում, որոնց մեջ ամփոփված-հաստատագրված են հնուց բանավոր ավանդությանը նաև հայ երաժիշտների մասնակցությանը սերնդի-սերունդ փոխանցված քաղաքային մասնագիտացված երաժշտարվեստի տիպական եղանակներն ու կշռույթները և նրանց մասին անհրաժեշտագույն զիտելիքները, և որոնք կրում են որոշակի ժամանակի, միջավայրի ու նաև հեղինակի անհատականության կնիքը: Եվ հետո, ըստ եղած տվյալների, Այվազյանի աշխատությունն իր մեջ թաքցրած պահում է ուլ միջնադարի ընթացքում աստիճանաբար ձևափոխված (իրենց արտաքին տարադով մերձարևելյան քաղաքային երգ-երաժշտության ընթացիկ հոսքին պատշաճեցված) և ընդհանուր արեվելյան անուններով վերակնքված մի ամբողջ շարք հայկական տոհմիկ, տիպական ձայնեղանակներ, որոնք զատորոշելով վերականգնելը հայ երաժշտագիտության կենսական խնդիրներից է:

Н. К. ТАГМИЗЯН

АКОПОС АЙВАЗЯН И ЕГО
«РУКОВОДСТВО ПО ВОСТОЧНОЙ МУЗЫКЕ»

Резюме

Акопос Айвазян, жизнь и деятельность которого трагически оборвалась во время первой мировой войны, принадлежит к плеяде докомитасовских церковных музыкантов—мастеров духовного песнетворчества и светской городской профессиональной музыки. Мастера эти, не знавшие армянской крестьянской песни, различали две ветви национального музыкального искусства: духовную и светскую. Под последней они подразумевали ту часть городской профессиональной музыки Ближнего Востока и Малой Азии (в частности—Константинополя), которую с давних пор создавали сами армяне.

Примерно с середины XIII века, когда процессы исламизации вслед за большими регионами Ближнего Востока охватили и Малую Азию, армянские светские поэты-музыканты—гусаны, постепенно приспособиваясь к новым условиям, определили ближневосточные аналоги свыше 150 главных и побочных гласов армянской монодии, усвоили практику сочинения тюркоязычных песен, переняли всю восточную музыкальную терминологию и со всем своим народно-национальным музыкальным багажом включились в дело развития практики и теории многонациональной общевосточной музыки.

«Руководство по Восточной музыке» Акопоса Айвазяна является отражением этой многовековой практики. Оно состоит из двух частей: мелодии и усули. Особо богатой является первая часть, где автор объясняет структуру около 100 мелодических моделей и приводит их записи знаками новоармянской нотации.

N. K. TAHMIZIAN

HACOPOS AIVAZIAN ET SON
„MANUEL DE MUSIQUE ORIENTALE“

R é s u m é

Hacopos Aïvazian, dont la vie et l'oeuvre furent tragiquement interrompues pendant la Première Guerre mondiale, appartient à la pléiade de musiciens ecclésiastiques—maîtres du chant spirituel et de la musique urbaine séculière professionnelle—ayant précédé Komitas. Ne connaissant pas les chansons rurales arméniennes, ces musiciens distinguèrent en deux branches de l'art musical national: spirituelle et séculière. Cette dernière sous-entendait la partie de la musique urbaine professionnelle du Proche-Orient et de l'Asie Mineure (en particulier, de Constantinople) créée depuis toujours par les Arméniens eux-mêmes.

Vers le milieu du XIII^e siècle, lorsque le processus d'islamisation, à la suite d'importantes régions du Proche-Orient, envahit également l'Asie Mineure, les poètes-mélodes séculiers arméniens—les goussans—s'adaptèrent progressivement aux nouvelles conditions; ils déterminèrent les analogues proche-orientaux de plus de 150 modes principaux et collatéraux de la monodie arménienne, assimilèrent la pratique de la composition des chansons en langue turque, empruntèrent toute la terminologie musicale orientale et, avec tout leur bagage musical national et populaire, ils prirent part au développement de la théorie et de la pratique de la musique orientale multinationale.

Le „Manuel de musique orientale“ de Hacopos Aïvazian est le reflet de cette pratique séculaire. Il se compose de deux parties: mélodies et „oussouls“ (modes). La première partie est particulièrement riche, l'auteur y explique la structure d'environ cent modèles mélodiques et donne leur inscription en signes de la nouvelle notation arménienne.

ԱՐՓԻ ՎԱՐԳՈՒՄՅԱՆ

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
«ՄԱՏԵԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ԶԵՌԱԳԻՐԸ
ՈՐՊԵՍ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ-
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանում պահվող մի շարք ուշ միջնադարյան ձեռագրերի հեղինակ է Տրիեստի Մխիթարյան միաբանության¹ անդամ, հ. Անտոն Ուշգարտաշյանը: Նրա անունը ցարդ անհայտ է մնացել հայ երաժշտության պատմությանն այն պարզ պատճառով, որ նրա երաժշտագիտական և այլ բնույթի աշխատություններն անտիպ են և երբևէ չեն դրվել գիտական շրջանառության մեջ: Հարկ է նշել, որ 1700 թվականից հետո ստեղծված ձեռագրերի ցուցակը Վիեննայի Մխիթարյանները լույս բնծայեցին միայն վերջին տարիներին²: Ա. Ուշգարտաշյանը հեղինակ է մի քանի սովորածավալ ձեռագրի, որոնք ցույց են տալիս նրա հետաքրքրությունների լայն շրջանակը: Գրանք են՝ «Ուսումն ճարտարապետության» (ձեռ. № 1457), «Գիրք Պատկերաց ճարտարապետության» (№ 1458), «Գիրք Պատկերաց մաթիմաթիքական ուսմանց, Գործնական երկրաչափության, Երաժշտության և Կանոնական կտրության» (№ 1459), «Գիրք Պատկերաց Հանդիպակահայեցության, Ստուերագրության, Մեքենականության» (№ 1460), «Ուսումն մաթեմաթիգական» (№ 1461) և «Մատենան երաժշտականության» (№ 1456): Այս ձեռագրերն ստեղծված են 1780—1801 թթ., ըստ որում, ամենից ուշ ստեղծված է «Մատենան երաժշտականության» ձեռագիրը, այսինքն հեղինակի շուրջ քսանամյա գիտաթարգմանական գործունեության վերջում միայն³: Նշանակում է, հեղինակն իր հետաքրքրությունների ընդարձակ ոլորտում երաժշտության բնագավառին անդրադարձել է առավել հասուն տարիքում և արդեն թարգմանական աշխատանքի մեծ փորձ ունենալով: «Մատենան երաժշտականության» ձեռագիրը մի սովորածավալ աշխատություն է, որ կրում է հետևյալ խորագիրը. «...Ի շորս գիրս բաժանեալ, այս է՝ ի հանրական երաժշտութիւն, յարհեստական հնչողութիւն, ի թուարանական ներդաշնա[կա]ւոր թուոց համեմատու-

1 Վիեննայի Մխիթարյանները, ինչպես հայտնի է, Վենետիկի Մխիթարյան միաբանությունից զատվելով, 1773—1810 թթ. հաստատվեցին նախ Տրիեստում, իսկ 1811-ին՝ Վիեննայում:

2 Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1977—1983 թթ., նաև՝ «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան Մատենադարանին ի Վիեննա», հ. Գ., կազմեց հ. Օգոստինոս վրդ. Սեբուլյան, Վիեննա, 1983: (Ձեռագրերի համարները՝ ըստ Վիեննայի Մատենադարանի ձեռագրացուցակի):

3 Նշելի է, որ «Գիրք պատկերաց Ա-Գ» կոչվող ձեռագրում ևս, որ ընդգրկում է գիտության մի շարք տարրեր բնագավառներ, ի տարբերություն մյուսների, որոնք գրված են 1780—1781 թթ., երաժշտության վերաբերող բաժինը դարձյալ գրված է 1800-ին:

թիւն, և ի ըստ արդեաց կերպի և ոճոյ երաժշտականութիւն: Յօրինեալ ի գրոցն նախնի և յարդի մեծանուն երաժիշտ հեղինակաց յունաց, լատինացւոց և իտալացւոց, աշխատասիրութեամբ հայր Անտօն Վարդապետի Կոստանդնուպօլսեցոյ Իւշգարտաշեան, յաշակերտէ Մխիթարայ մեծի բարբունապետի և Աբրայի: Յամի Տեառն 1801 յԱպրիլի 3 ի թր[ի]եստ ի վանս սրբոց վկայիցն, զոր ստացան զնով Հարք Մխիթարեանք ի փառս փրկչին և մօր իւրոյ ի պատիւ, և յուսումն մանկանց Արամեանց դպրատան մերոյ»⁴: Այս տիտղոսաթերթից երևում է, որ ձեռագրիս հեղինակն օգտվել է ինչպես մի շարք հին, այնպես էլ իրեն ժամանակակից այլազգի հեղինակների աշխատութիւններից: Պարզվում է նաև, որ ձեռագիրն ստեղծվել է ուսուցողական նպատակով: Ըստ խորագրի, ձեռագիրը բաղկացած է շորս գրքից, սակայն ըստ բովանդակութեան այն կարելի է դատել երեք մեծ բաժինների: Գրանցից առաջինը, որի մեջ մտնում են տիտղոսաթերթում նըշված առաջին երեք գլուխները, հիմնականում XVII դ. գերմանացի հայտնի մաթեմատիկոս, բանասեր և ֆիզիկոս Աթանազիուս Կիրխերի (Kircher) «Murgia universalis» աշխատութեան առաջին երեք գլուխների թարգմանութիւնն է: Կիրխերի այս աշխատութիւնը լույս է տեսել 1650 թ. Հոմումում, լատիներեն լեզվով⁵: Այն բաղկացած է 10 գրքից, որոնք համապատասխանաբար կոչվում են՝ «Ֆիզիոլոգիկա», «Ֆիլոլոգիկա», «Արիֆմետիկա», «Գեոմետրիկա», «Օրդանիկա», «Մելոտետիկա», «Գիոկրիտիկա», «Միրիֆիկա», «Մազիկա» և «Անալոգիկա»:

Այս աշխատութեամբ Կիրխերը հանդես է գալիս որպես իր ժամանակի ինքնատիպ մտածողներից մեկը, որը, հենվելով բնական գիտութիւնների նվաճումների վրա և համադրելով դրան մաթեմատիկայի իր իմացութիւնն ու արեւելագետ պատմաբանի լայն հետաքրքրութիւնները, աշխատել է գիտական որոշակի հիմքի վրա դնել երաժշտութեան հետ կապված բազմազան հարցերի ուսումնասիրութիւնը, մնալով, սակայն, որոշ դեպքերում, սքոլաստիկ մտածողութեան սահմաններում: Կիրխերն ուրույն ձևով վերաբարձում է երաժշտութեան բուժիչ հատկութիւնների մասին հին պատկերացումները, բայց չբավարարվելով դրանով, ազուցում է դրանք նաև աֆֆեկտների տեսութեան հետ⁶, վերագրելով երաժշտութեանը խորհրդավոր հատկութիւններ:

⁴ Վիեննայի Մխիթարյան միաբանութիւնից մենք ստացանք ձեռագրիս, ինչպես նաև «Գիրք պատկերաց Ա-Գ» ձեռագրի Գ. բաժնի մանրաժապավենը, որի համար երախտագիտութիւն ենք հայտնում Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրէնութեանը, ինչպես նաև Վիեննայի Մխիթարյաններին, որոնց բարեհաճ վերաբերմունքի շնորհիվ ձեռագրերի պատճենները հասան մեզ: Տե՛ս Վիեննայի մատենադարան, ձեռ. № 1456, էջ 4ա: (Այսուհետև՝ Վ. Մ.):

⁵ Աշխատութեան համառոտ տարբերակը 1662-ին լույս է տեսել նաև գերմաներեն լեզվով, իսկ 1690-ին այն ունեցել է լատիներեն և գերմաներեն հրատարակութիւններ (տե՛ս Die Musik in Geschichte und Gegenwart, Basel-London-New-York, 1958, Bd. 7, s. 937—940; տե՛ս նաև՝ «Музыкальная энциклопедия», 1974, т. 2, стр. 804; Այսուհետև աշխատութիւնը վերնագրված է այսպես. «Универсальная музыка или Великое искусство созвучий и диссонансов». (Այսուհետև համապատասխանաբար կնշդվի՝ Die Music և МЭ):

⁶ Սա հին հույներից և հատկապես Արիստոտելից եկող «էթոսի» (բառացի՝ «բնույթ») նորովի մեկնաբանումն էր, որ լայն արձագանք էր գտել Կիրխերի ժամանակակիցների և հաջորդների երաժշտատեսական և գեղագիտական գործերում. այսպես, հնում գտնում էին, որ հունական Տ լադերից յուրաքանչյուրը կրում է մարդու վրա ազդելու որոշակի լիցք: (Տե՛ս В. П. Шестаков, Музыкальная эстетика Западной Европы XVII—XVIII веков, М., 1971, стр. 188):

Հեղինակը տարբերում է ութ հուզական վիճակ, որ բնդունակ է հարուցել երաժշտությունը: Եվրոպական երաժշտության մեջ Աթանազիուս Կիրխերն առաջինն է արժարժել ոճի հասկացողությունը, որով նա բացատրում է ազգային երաժշտության առանձնահատկությունները: Ըստ Կիրխերի տեսության, որևէ ժողովրդի երաժշտության հատուկ է ուրույն ազգային ոճ, որն առաջանում է ազգային բնավորությունից, բնական կերտվածքից ու կլիմայից, ինչպես նաև տվյալ հեղինակի խառնվածքի անհատական առանձնահատկություններից: Կիրխերն առաջարկում է նաև երաժշտություն հորինելու համապարփակ միջոցներ, որոնցով նրա ստեղծած երաժշտական սարքը պետք է ըստ պահանջի արտածեր ցանկացած ոճի երաժշտություն⁷:

Աշխատության վերը նշված տասն զրքերում Կիրխերի հետաքրքրությունների շրջանակը ներառում է երաժշտության բաղկացուցիչների գիտական բացատրությունից մինչև երաժշտությանը երևակայական որակներ վերագրելը: Բնական գիտություններով զբաղվելուց բացի, Կիրխերն իր ժամանակ համարվել է նաև եզրափակական հիերոգլիֆների մասնագետներից մեկը⁸, ինչպես և առաջին երաժշտագետներից, որ փորձել է վերծանել բյուզանդական նեվմերը⁹:

Հավանաբար, խնդրո առարկա ձեռագրի հեղինակ Ա. Ուշգարտաշյանին գրավել են Կիրխերի աշխատության մեջ Արևելքին, հատկապես երբայական և բյուզանդական երաժշտությանը նվիրված մասերը, որոնք նա պատահաբար է համարել՝ արտահայտելու իր տեսակետը հայկական երաժշտության մասին: Մինչ Կիրխերի աշխատության թարգմանությանն անցնելը Ուշգարտաշյանը տալիս է մի առաջաբան, որ հիմնականում թարգմանված երկու հեղինակների ամենակարևոր դրույթների համառոտ շարադրանքն է (երկրորդի մասին կխոսվի ստորև): Առավել ուշադրավ են այն մտորումները, որոնք կապված են հայկական երաժշտության հետ, քանի որ դրանք ինքնուրույն են և հիմնված չեն թարգմանական նյութի վրա: Այսպես, հեղինակն իրավամբ նշում է, որ հայերը, ի տարբերություն հույների, ունեն միայն խաղերի ցուցակներ, այսինքն՝ «պակասին գիրք արուեստիս»¹⁰: Ըստ այդմ նշվում է նաև խաղանշանների ծագման ժամանակը՝ 500 թ., հավանաբար ենթադրելով, որ հայ գրերի գյուտից հետո կարող էին ստեղծվել նաև հայկական խաղանշաններ¹¹: Ա. Ուշգարտաշյանը գտնում է, որ հայկական խաղերն այլ ազգերի երաժշտական նշաններից ավելի բարեձև ու գեղեցիկ են, մանավանդ, որ անուններն էլ հայկական են: Նա նշում է, որ կան խաղեր էլ, որոնց անունները պակասում են, սակայն որոնք նույնպես զործածվում են մեր ձեռագրերում: Հեղինակը, գիտակցելով խաղերի բանալու կո-

7 Т. Л. Ливанова и Р. Ю. Виннер, История европейского искусствознания, М., 1963, стр. 162.

8 Б. П. Шестаков, Музыкальная эстетика Западной Европы..., стр. 187.

9 Die Musik, Bd 7, s. 937.

10 Տե՛ս Վ. մ., ձեռ. № 1456, Յառաջարանութիւն, էջ 5 բ:

11 նման կարծիքներ՝ V—VI դդ. ձայնագրության այրբենական համակարգ ստեղծելու մասին եղել են օտար և հայ երաժշտագետների մեջ, մասամբ կապված Ղազար Փարպեցու՝ «Երգողական տառեր» արտահայտության հետ: Նորագույն ուսումնասիրությունները, ճշգրտելով փաստերը, խաղանշանների ծագումն ու կիրառումը կապում են VIII—IX դդ. հետ (տե՛ս Н. К. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, стр. 186—87 и т. д.).

րուտը, մեծ պակասութուն է համարում դա և գտնում, որ շնայած մեր խազանշանների բազմաթիվ առավելություններին, այլևս հնարավոր չէ դրանցով որևէ նոր եղանակ գրառել: «Եղանակը աստուածային պաշտա(մա)նց մերոց, են յիրաւի քան զայլ ազգաց եկեղեցական երգոց՝ վսեմք և աստուածավայել, առանց իսկ գործեաց ինչ նպաստից ընկերութեան (թէև երբեմն ընկերեմք զգործիս ինչ՝ զորօրինակ, պէսպէս զծնծղայս, զզանգակս): Բայց շեն միօրինակ յամենայն ուրեք՝ եղանակը երգոց մերոց՝ ի սակս ոչ գոլոց պարփակեալ ցուցակօք խազիցն ըստ լատինացոց կերպին անխախտ, շափով, որպէս և յունացն ըստ մերս է, ըստ իմիք»¹²: Այստեղ Ուղղարտաշյանը տալիս է և՛ հայկական հոգևոր երգեցողության գնահատականը, և՛ եկեղեցում օգտագործվող գործիքների անունները, նշելով նաև մեր եղանակների կատարման բնույթը, որ, ի տարբերություն եվրոպական ձայնագրութեամբ գրառված եղանակների, «անխախտ» ու «շափով» շեն: Նույն կերպ է բնութագրված նաև բյուզանդականը, որովհետև նրանց ձայնագրությունը նույնպես առանց հնգագծի է և այդ առումով նման է հայկականին: Հեղինակը գտնում է, որ եվրոպական ձայնագրությունը դյուրացնում է երաժշտության ուսուցումը, իսկ հայկական և բյուզանդական խազանշաններով երգելու համար հարկավոր է անմիջականորեն ուսուցչից լսել կենդանի երգեցողությունը. հայկական խազերն ուրվագծում են ավանդական մեղեդու շրջագծերը միայն, և դրանցով երգելու համար երգիչը նախապես զինված պիտի լինի հայկական ձայնեղանակների բավական բարդ համակարգի քաջիմացութեամբ և հանկարծաբանելու ձիրքով¹³: Առաջաբանի վերջում հեղինակը փորձում է պատճառաբանել եվրոպական ձայնագրությունը հայ իրականություն ներմուծելու անհրաժեշտությունը: Նշելով հանդերձ, որ հայկական ութ ձայնեղանակներով երգվում են բոլոր տեսակի, նաև այլազգի մեղեդիներ, նա գտնում է, որ մեր խազանշաններով նորահայտ օտար եղանակներ հնարավոր չէ գրի առնել, որովհետև ինչպես մեր լեզուն է տարբերվում եվրոպական լեզուներից, այնպես էլ արևելյան եղանակներն են տարբերվում արևմտյան եղանակներից¹⁴:

Առաջաբանից հետո Ուղղարտաշյանը շարադրել է մի քանի կետից բաղկացած ներածական բնույթի մի մաս ևս, որ կոչվում է «Բան առ ուսանօղս երաժշտութեան», ուր գործնական բնույթի տարբեր խորհուրդներ են տրվում ուսանողներին:

Հայկական իրականության մեջ Ուղղարտաշյանը երաժշտության ծաղկումը կապում է Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու անունների հետ, «որոց ի վերայ յօրինելոցն սքանչացեալ մնամք ապշեցեալք, ունելով առաջի զարարս նոցա, բայց թէ որո՞վ արուեստիւ կա(նո)նովք երաժշտութեան շարադրեցին, շունիմք առաջի զայնս»¹⁵ (Նկատի ունի խազերի նշանակությունը բացահայտող ձեռնարկի բացակայությունը):

Խոսելով բազմաձայնության մասին և նշելով, որ շորս կամ հինգ ձայնից ավելի լինելու դեպքում այն խճողվում է ու այլևս չի ընկալվում որ-

12 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 6բ.:

13 Տե՛ս Н. К. Тагмизян, Теория музыки..., стр. 193—194.

14 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 7ա:

15 Նույն տեղում, էջ 8ա:

պես արվեստ, հեղինակը գտնում է, որ «Գլխավոր նպատակն ո՛ր և ից է երաժշտության՝ է լինելն սիրելի և ախորժելի ունկնդրաց, և ո՛չ բնաւ շփոթելի դլսելիս և զմիտս լսողաց, աւելի եղանակաւոր մեղեդեօք, որ յառաջ գայ յայսպիսի գործողութենէ»¹⁶: Ուրեմն, նա նախ և առաջ պարզության կողմնակից է և երաժշտության էությունը համարում է մեղեդայնությունը, նշելով, որ «հակակետի», այսինքն՝ կոնտրապունկտի կամ, լայն իմաստով՝ բազմաձայնության բացակայությունը հայերի և հույների երաժշտական արվեստում բնավ չի նսեմացնում նրանց երաժշտության գեղարվեստական արժանիքը¹⁷:

Բուն թարգմանական բաժիններից առաջ Ուշգարտաշյանը համառոտակիորեն ներկայացնում է ձեռագրի հետագա նյութերի ամփոփ տեսությունը՝ «Թէ զո՞րոց ճառի ի մատենիս» խորագրով:

Ինչպես վերը նշվեց, Ուշգարտաշյանը թարգմանել է նախ Ա. Կիրխերի աշխատության առաջին երեք գլուխները: Դրանցից առաջինը կրում է ամբողջ աշխատության խորագիրը՝ «Գիտութիւն հանրական երաժշտութեան կամ Մեծի արհեստի համաձայն և տարաձայն հնչմանց»: Այս գլխում հիմնականում նկարագրվում են բնական հնչյունները, նրանց ծագումը, բնույթը և հատկությունները: Քննվում է նաև ձայնը որպես ֆիզիկական երևույթ, տարբեր կենդանիների արձակած ձայները, արձագանքի էությունը, լսելու օրգանը և մարդկային ձայնի տարբեր որակները: Պետք է նշել, որ Կիրխերի սույն աշխատության աղերսը իր ավագ ժամանակակից, ֆրանսիացի գիտնական և երաժշտության տեսաբան Մարեն Մերսենի հետ նկատելի է հատկապես այս գլխում, որտեղ շոշափված հարցերի շրջանակն ու դրանց դիտարկման սկզբունքը հիմնականում համընկնում են վերջինիս «*Harmonia universalis*» աշխատության հետ¹⁸:

Կիրխերի աշխատության երկրորդ գլխում, որ կոչվում է «Երաժշտական բանասիրություն», խոսվում է բուն երաժշտության, կամ, ինչպես թարգմանված է, «արհեստական հնչման» ծագման, ծավալման, առարկայի ու դասակարգման մասին: Այստեղ դրսևորվում են նաև հեղինակի գեղագիտական հայացքները երաժշտության վերաբերյալ: Նա տարբերում է երևույթի լայն ու նեղ առումները և սահմանում դրանք այսպես. «Երաժշտութիւն լայնարար առեալ է տարաձայն համաձայնութիւն, կամ համաձայն տարաձայնութիւն ալ և ալ իրաց՝ առ ի զմի ինչ կացուցանելի զուգընթացք»¹⁹: Ինչպես տեսնում ենք, երաժշտության լայն առումը Կիրխերը պատկերացնում

¹⁶ Նույն տեղում, էջ 9ր:

¹⁷ Նույն տեղում, էջ 10ա: Հայտնի է, որ XVII—XVIII դդ. եվրոպայում բազմաձայնության բուռն վերելքի շրջանում, երաժշտական-գեղագիտական լուրջ բանավեճեր են ծագել միաձայնության (մոնոդիայի) գեղարվեստական արժանիքների մասին՝ որպես լիարժեք արվեստի, և որոշ գեղագետներ իրենց աշխատություններում հատկապես անդրադարձել են այս հարցին՝ ի պաշտպանություն միաձայն երաժշտության: (Տե՛ս, օրինակ, В. П. Шестаков, Музыкальная эстетика Западной Европы..., стр. 357):

¹⁸ В. П. Шестаков, Музыкальная эстетика Западной Европы..., стр. 187 и 357.

¹⁹ Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 32ա: Երաժշտությունը որպես հակադրությունների միասնություն դիտում էր դեռևս անտիկ փիլիսոփաներից Հերակլիտը, ըստ որի ներդաշնակությունն առաջանում է հակադրությունների պայքարից: Միջնադարում այս տեսությունը զարգացրին Գրիգոր Նյուսացին և Բոնցիոսը: (Տե՛ս В. П. Шестаков, Гармония как эстетическая категория, М., 1973, стр. 28—30, 58, 68):

է որպես հակադրամիասնություն, այսինքն՝ հարցին մոտենում է փիլիսոփայական դիալեկտիկայի ճիշտ տեսանկյունից: Այնուհետև՝ «Երաժշտութիւն անձկապէս առեալ կարէ սահմանիլ այսպէս. Երաժշտութիւն է հնչելի ներդաշնակաց յոր և իցէ սեռէ յառաջեկելոց, կամ պատահելոց՝ կատարեալ գիտութիւն»²⁰: Սա նշանակում է, որ երաժշտությունը նեղ առումով հեղինակը պատկերացնում է որպես որևէ սեռից (այսինքն՝ հնչյունաշարից) առաջացած ներդաշնակ հնչողություն, սակայն իսկույն ևեթ ճշգրտում՝ «կատարեալ գիտութիւն», որ ցույց է տալիս նրա ռացիոնալիստական վերաբերմունքը երաժշտության հանդեպ, որը խիստ հատկանշական էր տրվյալ ժամանակաշրջանի համար, հատկապես ֆրանսիական կլասիցիստների գործերում²¹:

Հեղինակը տեսակների դասակարգմանը միահյուսում է նաև երաժշտության ներդաշնակ բնկալման հարցը, որտեղ ուրույն դեր ունեն և՛ զգայությունը, և՛ դիտակցությունը: Կիրիսերը բաժանում է երաժշտությունը նաև տեսականի ու գործնականի: Առաջինի դեպքում երաժշտության մասին դատում ենք միայն խոսքով, իսկ երկրորդի դեպքում՝ սոսկ զգայությամբ, այդ պատճառով էլ հեղինակը նախապատվությունը տալիս է առաջինին. «Որոյ վասն այնչափ ազնուագոյն է տեսականն քան զգործնականն, որչափ վսեմագոյն է գիտութիւն քան զարհեստն»²²: Արդ, ո՞րն է կատարյալ երաժշտի տիպարն ըստ Կիրիսերի. «Ապա կատարեալ երաժիշտ, և ասիլ պարտէ, որ զտեսականն յարակցէ ընդ գործնականին»²³:

Հնուց ի վեր երաժշտության տեսությունը բարձր է դասվել գործնական երաժշտությունից, այսինքն՝ ձայնով կամ որևէ գործիքով կատարումից²⁴, և միայն Վերածննդի շրջանի մտածողներն էին (ի դեմս Զոդեֆո Յաուլինոյի և այլոց), որ կարևորեցին ոչ միայն երգահանի, այլև կատարող երաժշտի տեսական ու գործնական գիտելիքների և կաշողությունների համաչափ զուգակցումը²⁵:

Ա. Կիրիսերն անդրադառնում է երաժշտության ծագման խնդրին և այս կապակցությամբ՝ երբայական երաժշտությանը, որպես երաժշտական հնագույն օրրաններից մեկի: Հենվելով աստվածաշնչային տեղեկությունների վրա, հեղինակը նշում է, որ երաժշտությունը ծագել է «յառաջ քան զջրհեղին», այնուհետև տալիս է երբայական տարբեր տիպի երաժշտական գործիքների բնութագիրը, որոնցից առաջինը, ըստ Գավիթ Մարգարեի սաղմոսի

20 Վ. Մ., ձև. № 1456, էջ 33ր:

21 Պետք է նշել, որ Կիրիսերն իր կյանքի զգալի մասն անց է կացրել Ֆրանսիայում, որով պետք է բացատրել նաև Մ. Մերսենից նրա կրած ազդեցությունը:

22 Վ. Մ., ձև. № 1456, էջ 32ր:

23 Նույն տեղում: Բազմակողմանիորեն զարգացած անձի իդեալը հատկանշական էր դեռևս վերածննդի շրջանում (homo universalis) տե՛ս В. П. Шестаков, Музыкальная эстетика западно-европейского средневековья и Возрождения, М., 1966, стр. 423—24.

24 Ըստ Արիստոտելի, երաժշտությամբ «մասնագիտորեն» զբաղվելը (այսինքն՝ կատարողական արվեստը) «անազատ արհեստավորների» համար էր նախատեսված (տե՛ս МЭ, էջ 203): Քառյակ գիտությունների՝ կվարդիվիումի մեջ մտնող երաժշտությունը ոչ այլ ինչ էր, եթև ոչ հարմոնիայի, այսինքն՝ տեսական երաժշտության ուսուցում: (Տե՛ս З. Г. Самодурова, Школы и образование—Культура Византии, IV-первая половина VII в., М., 1984, стр. 490).

25 В. П. Шестаков, Музыкальная эстетика западно-европейского..., стр. 423—24.

(Սաղ. լԲ. 2), տասնադյա սաղմոսարանն է: Ապա, վկայակոչելով միջնադարյան երբայական հեղինակներից Շիլթերին²⁸, հեղինակը նշում է, որ «սրբութիւն սրբութեանցն էին գործարանք երաժշտութեան թուով 30»²⁷ (հավանաբար նկատի ունի երբայական պաշտամունքային երաժշտական գործիքները) և բերում դրանցից մի քանիսի նկարագրությունն ու անունները:

Այնուհետև Կիրխերը, դարձյալ աստվածաշնչից բերելով մի շարք երաժիշների անուններ, տալիս է նաև երբայական խաղերի ցուցակը, որ բաղկացած է 28 նշանից: Սրանք կանտիլյացիայի²⁸ նշաններն են, որոնք մեծ մասամբ համընկնում են երբայական հնագույն ցուցակների նշանների հետ, և որոնք հեղինակը բնորոշում է ոչ միայն որպես երաժշտական, այլև առհասարակ առողանական նշաններ:

Աշխատության հաջորդ պրակը վերաբերում է հին հունական և բյուզանդական երաժշտությանը: Հին հույների մեջ երաժշտության ծագումը կապելով առասպելական երաժիշտներ Օրփեոսի, Լինոսի և Ամփիոնի²⁹ անունների հետ, Կիրխերը խոսում է նաև ուրպսոզների³⁰ մասին, բնութագրելով նրանց երգեցողությունը որպես մեղմ ու անուշ միաձայն կատարում, որ երբեմն ընդմիջվում էր սրնգի հնչյուններով: Հին հունական տաղերգուներից Կիրխերն առանձնացնում է Պինդարոսի³¹ անունը, որից հետագայում առաջացել է քնարական բանաստեղծության «պինդարիկա» անվանումը և որը բաղկացած է ստրոֆա (տուն), անտիստրոֆա (հակատուն) և էպոդոս (ևս մեկ տուն՝ տարբեր տաղաչափությամբ), որով ստացվում է aab կառուցվածքով երեք տուն: Հին հույները սրնգի կամ քնարի նվագակցությամբ պարել են, և նրանց բանաստեղծները նաև երաժշտության և նույնիսկ պարերի հեղինակն էին: Այսպիսով, արձանագրվում է հին հույների երաժշտաբանաստեղծական արվեստի սինկրետիկ բնույթը:

Հեղինակն անդրադառնում է նաև բյուզանդական խաղերին, որոնցով զրի էր առնվում երգեցողությունը: Հեղինակը նախ տալիս է, այսպես կոչված, «վերելիակ» և «վայրիչակ» խաղերը, այսինքն՝ Կուկուզելեսյան նշան-

²⁸ XVI դ. ակննավոր թալմուդիստ Բարուխ Հոշուա բնն Սիմոն բեն-Աբրահամը, որ ի թիվս այլ աշխատությունների, առաջին անգամ կազմել է Թալմուդի մեջ աստվածաշնչային մեջբերումների ցանկը (Տե՛ս Еврейская энциклопедия, т. III, стр. 838).

²⁷ Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 33ա:

²⁸ Երբայական պաշտամունքային ասերգության Աստվածաշնչի հատվածներից, որոնք կատարվում էին մեղմ ձայնով, ծորուն-աղերսական ոճով: Սրա ամանակային կողմը որոշվում էր տեքստի քերականական-տրամաբանական շեշտերով, որոնց համակարգը մշակվել է դեռևս 900-ական թվականներին: Տե՛ս МЭ, т. 2, стр. 702:

²⁹ Տե՛ս «Мифы народов мира», М., 1980, т. 2, стр. 262 и 55, т. 1, стр. 72.

³⁰ Հին հունական թափառական երգիչ-պատմողներ, որոնք երգելով կատարում էին էպիկական պոեմներ, երբեմն լարային գործիքներով նվագակցելով իրենց: Հավանաբար, փողային գործիքը զանց է առնված, որովհետև այն միաժամանակ չի կարող զուգորդվել ձայնի հետ, սակայն Կիրխերն այստեղ նշում է հատկապես սրինգը, որը ձայնի հետ փոխն ի փոխ հանդես գալով, բացահայտում է երգվող մեղեդու երաժշտական հնարավորությունները:

³¹ Պինդարոս (518—442 թթ. մ.թ.ա.)—հին հունական իմբերդային քնարերգության խոշորագույն բանաստեղծը, որն ստեղծել է տոնական և պաշտամունքային հիմներ (Տե՛ս Фр. Любкер, Реальный словарь классической древности, М., 1888, стр. 796): Հարկ է նշել, որ Կիրխերը դեռևս 1637—1638 թթ., համփորդելով Մալթա կղզում, Սան-Սալվադոր մենաստանի մատենադարանում հայտնաբերում և հրատարակում է Պինդարոսի մի շարք մինչ այդ անհայտ օրհներգությունները (տե՛ս Die Musik, Bd. 7, s. 937):

ները³², որոնք երկու խմբի են բաժանվում՝ «մարմնոյ» և «ոգոյ»: Սրանք միջին բյուզանդական ձայնագրության «somata» և «pneumata» կոչվող նշաններն են³³, որոնցից առաջինները խորհրդանշում են կից հնչյունների միջև սահուն շարժումը, իսկ մյուսները՝ թռիչքաձև շարժումը տերցիա և կվինտա ձայնամիջոցներով: Ապա բերվում են բյուզանդական ութ ձայնեղանակների «փոփոխման», այսինքն՝ զարտուղության նշանները, որոնք լիովին համընկնում են բյուզանդական երաժշտության և խաղաղության ժամանակակից հեղինակավոր մասնագետ Վելեշի «The modulation signs» անվանած նշանների հետ³⁴:

Խոսելով բյուզանդական նեվմագրության հիմնական նշանների մասին, Կիրիսերը գտնում է, որ «Համը մեծ նշանքն յունաց այնք են, որք ասեն Հիփոսթազէզը և ցուցանեն, թէ ո՞րքան, և ո՞րչափ ի ձայնս եղանակաւոր երգոց, պարտին յամենալ և երկարել: Համեմատեալ պատասխանեն ժամանակաց և միջոցաց, քանակութեանց և որչափութեանց նօթայից լատինացոց, այլև դարձուածոց և փոխաբերութեանց հռետորաց, զորս աւասիկ դիցուք յանդիման»³⁵: Այսինքն՝ Կիրիսերը պատկերացնում էր «Մեծ հիպոսթազներ» կոչվող նեվմերի նշանակությունը, գտնելով որ դրանք հիմնականում հնչյունի արտաբերման կերպն ու ամանակն արտահայտող նշաններ են, որոնց կիրառությունը գործնականում կարելի է սովորել միայն անմիջականորեն՝ ուսուցչի կենդանի կատարումից:

Չնազդի հաջորդ՝ ութերորդ պրակը վերաբերում է հայկական երաժշտությանն ու խաղաղությանը և պատկանում է Ուլզարտաշյանի գրչին: Այն կոչվում է «Ի վերայ երաժշտութեան, նօթայից, կամ խաղից հնչմանց ձայնից Արամեանց»³⁶: Հեղինակը նշում է, որ ըստ Խորենացու, երաժշտությունը հայերի մեջ գոյություն է ունեցել դեռևս հեթանոսական ժամանակներից, երբ երգեր էին հյուսվում արքաների և քաջարիների մասին, որոնք ուղեկցվում էին «թմրկօք, բամբուամբբ, տաւղօք, քնարօք, սրնգօք»³⁷: Ա. Ուլզարտաշյանը գտնում է, որ մեր ազգն իր նախնի երաժշտությունը վերցնելով մասամբ իրեն սահմանակից երկրներից, առավելապես հույներից ու պարսիկներից, ըստ իր լեզվի ու ձայնի բնույթի և տաղաշափական բանահյուսության կանոնների, համադրելով այդ ամենը «ընդարոյս»³⁸, այսինքն՝ տեղում եղած ավանդական երաժշտական մշակույթին և հետզհետե ճոխաց-

³² Յոհաննես Կուկուզելիս—բուլղարական ժազումով բյուզանդացի երգահան և տեսաբան (XIII—XIV դդ.), որը բարեփոխեց միջին բյուզանդական նեվմերը, տալով դրանց ձայնամիջոցային և կոմպոզիցիոն որոշակի արժեքներ, որոնցով գրանցել է նաև իր սովորածությունները (Տե՛ս Egon Wellesz. A history of Byzantine music and hymnography, II ed., Oxford 1962, p. 284—287, նաև՝ С. Лазаров, История на новото писъмо, София, 1965, стр. 47—61):

³³ Egon Wellesz. A history of..., p. 287—291.

³⁴ Նույն տեղում, էջ 309—10:

³⁵ Վ. Մ., ձև. № 1456, էջ 37ր: Այս նշանները Վելեշն անվանել է՝ the «Great Hypostases», տես՝ E. Wellesz. A history of..., p. 294.

³⁶ Վ. Մ., ձև. № 1456, էջ 39ր:

³⁷ Նույն տեղում:

³⁸ «Նոր Հայկազյան բառարանն» այս բառը բացատրում է որպես «տնկեալ ի բնէ, բնածին, բնաւորական, բնտանի» և այլն: (Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Ա., Վենետիկ, 1836, էջ 765):

նելով, այնպիսի կատարյալ արվեստ ստեղծեց, որ «յամարձակիմք ասել՝ քան զյունաց և զլատինացւոցն գեղեցիկս յօրինել զկերպաւորութիւն խազիցն, առ հեշտեալ կատարելոյ զելէկէջութիւն խազուց և աստիճանաց ձայնից համառօտ միջոցօք ի վերայ միոյ տողի երգոցն, և ոչ հինգ տողով գծից իբրև զլատինացւոցն, և կամ զանազան խազիւք ի վերայ միմեանց բարդութեամբ, և զի ներքոյ եղեալ ևս տառիւք նոյնոց»³⁹: Հեղինակը ուշադրութեան է հրավիրում մեր խազերի գեղագիտական կողմի, ապա նաև՝ հարմարութեան ու հակիրճութեան վրա, համեմատելով դրանք եվրոպական հնգագծով ձայնագրութեան ու բյուզանդական նեվմերի հետ, նախապատվութիւնը տալով հայկական խազերին: Նույնիսկ իր ժամանակի համար նման կարծիքը միամիտ է հնչում, քանի որ հեղինակը համադրում է զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող երևույթներ⁴⁰:

Այնուհետև Ա. Ուշագարտաշյանն ուղղակի անդրադառնում է հայկական խազանշանների լուսարանմանը: Նա գտնում է, որ մեր խազանշանները 40-ն են, որոնցից 24-ն անուն ունեն, իսկ մնացածը՝ ոչ: Անուն ունեցող խազերը նա կոչում է պարզ և առանձին, բացի երկուսից, իսկ անուն չունեցող 16 խազերից 12-ը, ըստ նրա, բազադրյալ են (այսինքն՝ մեկից ավելի խազերի համակցութիւն), մնացած 4-ը՝ պարզ: Հեղինակն իրավամբ գրտնում է, որ բազադրյալ խազերը հանդիպում են, շարականներից ու տաղերից բացի, հատկապես ստեղծիչների ու մեղեդիների մեջ, «որք երգին գեղգեղալք», այսինքն՝ ձայնորոումներով հարուստ ծանր տիպի երգերում: Ապա բերվում է վերը նշված խազերի ցուցակը: Պարզվում է, որ անուն ունեցող խազանշանները կհամընկնենին Գրիգոր դպիր Գապասաքալյանի առաջարկած ցուցակին⁴¹, եթե շիններ հետևյալ տարբերութիւնը. ինչպես հայտնի է, շափազանց տարվելով բյուզանդական նեվմերով, վերջինս աշխատել է հայկական «թաշտը» նմանեցնել բյուզանդական «խօսն»-ին, գիտակցելով հանդերձ, որ դրանք տարբեր որակներ ունեն: Այսպիսով, Գապասաքալյանի բերած 24 խազերից բաղկացած ցուցակում վերոնշյալ «թաշտը» բացակայում է, որի փոխարեն առկա է «երկբութ» կոչվող խազանշանը⁴²: Այսինքն, եթե անգամ Ուշագարտաշյանը ծանոթ է եղել Գապասաքալյանի աշխատութեանը, ապա նրա առաջարկած խազացուցակը չի կրկնում վերջինիս: Հեղինակի համար առավել հավանական աղբյուր կարելի է համարել գերմանացի անվանի հայագետ Շրյոդերի «Արամեան լեզուին զանձ» գրքում մեջբերված խազացուցակը⁴³, մանավանդ որ քննարկվող ձեռագրում բերված է 9 բազադրյալ խազանշան ևս, որոնք ճիշտ նույնութեամբ առկա են նաև վերը նշված գրքում⁴⁴:

39 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 40ա:

40 Բացի այդ, մեր խազանշանների ընթերցման արվեստն այդ ժամանակ և դրանից էլ առաջ արդեն անկում էր ապրում. նշելի է թեկուզ և այն փաստը, որ ընդամենը մի քանի տարի անց՝ 1815-ին, Կ. Պոլսում ստեղծվեց հայկական նոր ձայնագրութեան համակարգը:

41 Գ. Գապասաքալյան, Գրքոյկ որ կոչի նուագարան, Կ. Պոլիս, 1794, էջ 216:

42 Ն. Թախմիզյանի «Հիմնական խազերի միակցութիւնը» (Բ. Մ. № 9, Երևան, 1969, էջ 114 և 121) հոդվածում նշվում է, որ վերոնշյալ խազը որպես ինքնուրույն խազանշան չի հանդիպում մեր խազավոր ձեռագրերում:

43 F. Schröder, Thesaurus Linguae Armenicae, Amstelredami 1711, p. 244:

44 Նկատելի է, որ Շրյոդերից փոխ առած վերոնշյալ անանուն խազանշանները, ըստ ամենայնի, չեն մտնում Ուշագարտաշյանի նշան 40 խազերի ցուցակի մեջ:

Սրանցից անմիջապես հետո Ուշգարտաշյանը զետեղում է անուն շունեցող 16 խազանշան ևս, որոնց աղբյուրը, հավանաբար, հնատիպ շարականներից մեկն է⁴⁵: «Կարգ ութն ձայնից»⁴⁶ վերնագրի տակ տալով հայկական ութ ձայնեղանակների հայերեն և լատիններեն անունները, հաջորդ էջում հեղինակը բերում է նաև «Կառուարք և կարգադրիչք ձայնք»⁴⁷ անվանված մի ցուցակ, որ փաստորեն նախորդի լրացված տարբերակն է: Այստեղ ձայները կոչվում են «յատուկ», իսկ կողմերը՝ «անյատուկ»⁴⁸, և բոլոր ութ ձայնեղանակների կրճատ նշանակումներից առաջ հատուկ նշում կա՝ «բ.», այսինքն՝ «բանալի», որ բացատրում է հենց ինքը՝ հեղինակը, գրելով «բ. տառս եղեալ աստեն աս ընթեր ձայնիցն իւրաքանչիւրոցն նշանակէ զբանալին սկսուածոյ ձայնիցն»⁴⁹: Նույն տեղում Ուշգարտաշյանը հանգամանորեն շարադրում է բանալի խազերի մասին ունեցած իր պատկերացումները. «Բանալիք ձայնից եղանակաւորացն՝ են ութն ձայնից ցուցակքն. այս է՝ աձ, ալ և այլն որք ի սկսուածս ամենայն շարականաց կամ երգոց՝ զնեն աս ընթեր ի լուսանցս մատենիցն, զի նորօք կարասցեն երգեցողք միօրինակ՝ ըստ նոցա յատուկ տարազու խազից և եղանակացն երգել զայնոսիկ, յորում և իցէ պահու, զորս ուսան յուսուցչէն կենդանի ձայնիւ և եղանակաւ, վասն զի ինքնին՝ առանց լսելոյ զտարազն ձայնից՝ ոչ է հնար ումեք ուսանիլ զայնս, և եղանակել ըստ այնց, և են թուով բանալիք ութն ըստ ձայնիցն»⁵⁰: Ուշգարտաշյանն, այսպիսով, լիովին գիտակցում էր բանալի խազերի որոշիչ դերը խազագրված նմուշների ձայնավորման համար՝ որպես շափանմուշ եղանակների, առանց որոնց բանավոր իմացության հնարավոր չէր երգել որևէ խազագրված եղանակ⁵¹: Ինչ վերաբերում է ստեղծի եղանակներին, ապա հեղինակը գտնում է, որ դրանք միշտ հանդես գալով ԴԿ-ին, իսկ երբեմն էլ ԲԿ-ին կամ նույնիսկ ԲԶ-ին կից, տալիս է բառի բացատրությունն այսպես. «որ ասի ստեղծի, իբր ունօղ զբազում ստեղունս խազից եղանակաւորաց...»⁵²:

Ուշագրավ է այն, թե ինչ է գրում Ուշգարտաշյանը մեր հոգևոր երգեցողության և ձայնեղանակների մասին. «Թ՛ո՛ղ զի և ի սահմանակցաց իւրեանց օտարաց, և ի տէրութեանց որք եկին մտին յաշխարհս մեր, և տիրեցին մերազնեայցս՝ արգելուին զհանդէսս պաշտամանց համարձակ կատարել, ապա այն շանք ուսման, և զործածութիւն եղանակաւորութեանց սահ-

45 Հարկ է նշել, սակայն, որ Ուշգարտաշյանի ցուցակի վերջին նշանը փոքր-ինչ ազավազված է Կ. Պոլսի 1703-ի, ինչպես նաև էջմիածնի 1789-ի հրատարակությունների համեմատությամբ (համապատասխանաբար՝ էջ 773 և էջ 886):

46 Վ. Մ., ձև. № 1456, էջ 41ա:

47 Նույն տեղում, էջ 41բ:

48 Այս անվանումները ոչ այլ ինչ են, եթե ոչ ավտենտիկ ու սլլադալ լազերի լատիներեն համարժեքների՝ *proprius* և *im-proprius*, թարգմանությունը (տե՛ս «Латинско-русск. словарь», М., 1976, ст. 824 и 501):

49 Վ. Մ., ձև. № 1456, էջ 41բ:

50 Նույն տեղում:

51 Բանալի խազերի մասին տե՛ս Ն. Թանմիզյան, Կամիտասը և հայկական խազերի վերածանություն խնդիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 45:

52 Վ. Մ., ձև. № 1456, էջ 41բ: Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լիզուի», Վենետիկ, 1837, հ. 2-րդ, էջ 743 (Ստեղծի-բազմաստեղծ, բազմաճիւղ, գեղեցիկալ, որպէս մեղեդի, և կամ ստեղեալ երգ՝ հանգստեամբ և հանդարտ նուազելի):

մանեալքն ի նախնեաց՝ ընդ ժամանակս ժամանակս դուցցէ փոփոխեցան, և եղանակք ինչ ինչ խազիցն ընդ եղանակաց օտարաց խառնեցան, որպէս երևի ի տեղիս տեղիս յորս բնակեալ են ազգայինք մեր: Սակայն ըստ էականաց ձայնիցն (ընդգծումը մերն է՝ Ա. Վ.) ո՛չ փոփոխեցան ողջոյն, վասն արձանացեալ՝ կալոյ խազիցն ի վերայ երգոց, և ի տողս նոցին»⁵³:

Հեղինակը գտնում է, որ շնայած դարերի ընթացքում կրած օտար ազդեցութիւններին, հայկական միջնադարյան հրաժշտութեան հիմքում ընկած ձայնեղանակները խազերի շնորհիվ անաղարտ են պահել իրենց հիմնական էութիւնը:

Համառոտակիտրեն մեշրերելով Ա. Կիրիսերի աշխատութեան այն մասը, որ վերաբերում է եվրոպական ձայնադրութեանն ու բանալիներին, Ուշգարտաշյանը եվրոպական սոլմիզացիայի նշաններին (Ut, Re, Mi, Fa, Sol, La, Si)⁵⁴ համապատասխան գետեղում է հայերէն վանկերով համարժեքներ՝ «դու, ես, այն, եր, գե, ցիկ, իմ»⁵⁵, անշուշտ՝ ուսուցողական նպատակով, որպեսզի հայ մանուկներին հարմար լինի դրանք արտաբերել: Հարկ է նշել, որ Ուշգարտաշյանը, ըստ երևույթին, փնտրելով հայերէն առավել հարմար համարժեքներ, իր ձեռագրի այլ մասերում նույնիսկ առաջարկում է լադի աստիճանների անունների հայացման ևս երկու տարբերակ⁵⁶:

Քանի որ վերը նշված դամման ընդհուպ մինչև XVIII դ. սկիզբը կիրառվում էր հարաբերական սոլմիզացիայի օրենքներով, այսինքն, սկսելով այն լադի ցանկացած աստիճանից, այդ իսկ պատճառով ձայնադրութեան մեջ այդ շրջանում լայն կիրառում ունեին նաև հնգագծի յուրաքանչյուր գծի վրա դրվող բազմապիսի բանալիները, որոնց տարբեր ձևերն ու ըստ այդմ՝ ձայնադրութեան սկզբունքները տալուց հետո միայն Ուշգարտաշյանը գետեղում է Շրյոդերի գրքում եղած օրհնութիւնների ութ-ձայն սկսվածքները՝ եվրոպական ձայնանիշերով⁵⁷: (Հարկ է նշել, որ 1800 թ. Շրյոդերի գիրքը գեռես միակն էր, որտեղ կարելի էր գտնել վերոնշյալ սկսվածքները՝ եվրոպական ձայնադրութեամբ⁵⁸): Ապա հեղինակը խոսում է ստեղի ձայնեղանակների սկսվածքների մասին և առաջարկում ԴԿ ստեղիի ձայնադրութեան երկու նմուշ՝ «Ըստ Գրիգորեան ցուցակաց նօթայից», այսինքն՝ մենզուրալ նոտագրութեամբ⁵⁹, երկուսն էլ տենորի «Դո» բանալիում, նոտաների տակ բառային տեքստով ու խաղանշաններով հանդերձ:

53 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 40ր:

54 Այս անվանումներից առաջին վեցը Գվիդո Արետինացին (XI դ.) վերցրել է Սր. Հովհանի օրհնութեան առաջին վեց տողերից, որոնց առաջին վանկերում նա նշել է հերսախորդի աստիճանները: Դրանք հետագայում (XVI դ. վերջում) համալրվեցին յոթերորդ աստիճանով, ինչպես նաև ՍԼ-ը փոխարինվեց ԾՕ-ով (Տե՛ս ՄԶ, Ե. 5, ցր. 186—190):

55 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 42ր:

56 Երբորդ գլխում, էջ 131: Այս մասին տե՛ս նաև «Յուցակ հայերէն ձեռագրաց...», հ. Գ, էջ 202 (ի դեպ, այստեղ վրիպակ է սպրդել. «Իմ աստ ստացիր»-ի փոխարեն տալված է՝ «Թէ դայս խորհիցիս», որ անցել է Հանդես ամսօրյայից, 1978, էջ 378):

57 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 44ա, 44բ: Տե՛ս նաև՝ Շրյոդեր, նշվ. աշխ., էջ 246:

58 Տե՛ս F. Fétilis, Histoire générale de la musique, t. IV, Paris, 1874, էջ 69—81:

59 XIII—XVI դդ. եվրոպայում օգտագործվող ձայնադրութեան համակարգ, որ իր նախորդ նոտագրութեան համեմատ գրառում էր նաև հնչյունի հարաբերական տեղությունը, որն անհրաժեշտ էր բազմաձայնութեան դաջացման բուռն վերելքի փուլում: (Տե՛ս ՄԶ, Ե. 3, ցր. 544—46):

Պարզվում է, որ Կիրիսերն իր աշխատության մեջ փորձել է վերծանել բյուզանդական նեովմերը և, որ նրա օրինակով Ուշգարտաշյանն էլ փորձում է վերծանել հայկական խազերը, սակայն ոչ թե իրեն ժամանակակից եվրոպական ձայնանիշերով, այլ դեռևս Կիրիսերի ժամանակներում կիրառվող մենզուրալ նոտագրության հնացած նշաններով, որոնք իրենց հերթին վերծանման կարիք են զգում: Մեջբերման վերջին հատվածը բնութագրում է նաև հաջորդ հոդվածի բովանդակությունը, որը կոչվում է «Ի վերայ ձայնարձակութեանց հնշմանց, արժողութեանց և կիրառութեանց իւրաքանչիւր ցուցակացն հայոց մի առ մի, հանդերձ օրինակօք նոցին վարմանց, թէ զիա՞րդ կան, և հնշին ի նուագս երգոցն», ուր Ուշգարտաշյանը բերում է 90 խազանշաններից բաղկացած մի ընդարձակ ցուցակ էլ: Այստեղ, նախապես իր առաջարկած հիմնախազերի 24 նշաններից յուրաքանչյուրից հետո, նա տեղագրում է տվյալ խազանշանի իրեն հայտնի բոլոր տարբերակները, ինչպես նաև բարդ և բաղադրյալ միակցություններն այլ նշանների հետ, ըստ որում սրանցից յուրաքանչյուրի դիմաց զետեղելով մեր խազավոր ժողովածուներից այնպիսի հատվածներ, որոնցում կիրառված է այդ խազանշանը⁶⁰: Անուն ունեցող նշաններից առաջ հեղինակը տալիս է նաև դրանց հայատառ լատիներեն անվանումները, իսկ անանուն խազերի համար առաջարկում պայմանական անվանումներ, որոնք տվյալ խազանշանի ձևը նկարագրելու բնույթ ունեն: Անհրաժեշտ է նշել նմանատիպ տախտակ-ցուցակի առկայությունը նաև Վիեննայից ստացված մյուս՝ № 1459 ձեռագրի 79—80-րդ էջերում, այն տարբերությամբ, որ այս վերջինում տրրված են միայն խազանշաններն իրենց անվանումներով, առանց կիրառությունը նշելու, ըստ որում այստեղ, անուն չունեցող խազերի հայերեն ինքնահնար անվանումներից բացի, հեղինակը տալիս է նաև դրանց հայատառ լատիներեն թարգմանությունները: Պետք է նշել, որ իր ժամանակի համար հեղինակը շահեկան աշխատանք է կատարել, առանձնացնելով, հիմնական ու բարդ խազերից բացի, նաև բաղադրյալ խազերը, այսինքն՝ մեկից ավելի տարբեր խազերի զուգորդումները, և արձանագրելով դրանք հենց կիրառման պահին: Հայ իրականության մեջ, Գրիգոր Գապասաբալյանից հետո⁶¹ Ուշգարտաշյանը փաստորեն երկրորդ երաժշտագետն է, որ զբաղվել է նաև խազանշանների դասակարգման հարցերով: Ուշագրավ է հեղինակի նշումն այն մասին, որ ա հոդվածի բոլոր խազերն էլ (այսինքն՝ վերոհիշյալ 40 անուն ունեցող և անանուն խազանշանները) «գտանին լիով վարեալ, զորժածեալ յերգս շարականաց, տաղից, և մեղեդեաց մերոց, զորոց և զձայնարձակութիւնսն հնշմանց ուսեալ, գիտեմք աւանդութեամբք՝ այնչափ և այնքան, ըստ որում վարեմք այժմոցս: Այլ ոչ համարձակիմ ասել՝ այնպէս, որպէս նախնիքն վարէին, որք ստեղծին զխազս, և զձայնարձակութիւնսն հնշմանց նոցին»⁶²: Այս հատվածից պարզ է դառնում, որ Ուշգարտաշյանի երաժշտական գիտելիքները միայն տեսական ոլորտին չէին պատկանում: Նա իր ժամանակի ուսյալ երաժիշտներից է եղել, իմացել մեր շարականների, տաղերի և մեղեդիների իր ժամանակ հայտնի ավանդական եղանակ-

60 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 45բ—50ա:

61 ՏԵ՛ս Գ. Գապասաբալյան, Գրքոյկ որ կոչի նուագարան, էջ 216—218:

62 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 50բ:

ները, ինչպես նաև եվրոպական ձայնագրության սկզբունքները: Մնում է միայն ամփոփել, որ մեր հեղինակը եվրոպական ձայնանիշերով շի գրանցել իրեն հասած հայկական հնավուրց եղանակները: Ըստ երևույթին, Ուլգարտաշյանը շի էլ պատկերացրել, որ հայկական ավանդական եղանակները հնարավոր է գրանցել նաև ժամանակակից եվրոպական ձայնանիշերով. նա գրանք համարել է բոլորովին տարբեր որակներ ունեցող երևույթներ⁶³:

Սույն բաժնի վերջում հեղինակը զետեղել է հինգ կանոն, որ յուրօրինակ հրահանգներ են հայկական խաղաղրված եղանակներ կատարողին: Այդ կանոնները հիմնականում վերաբերում են հայկական ձայնեղանակներին, նրանց սկզբածքներին և ավարտներին, որոնք հեղինակն անվանում է «փակելակ կամ փակարանք ձայնիցն» և մի անգամ ևս շեշտում, որ գրանց երգեցողությունը կարելի է ճիշտ սովորել միայն ուսուցչի կենդանի կատարումից⁶⁴:

Սրանով ավարտվում է Ուլգարտաշյանի հեղինակած բաժինը, որ վերաբերում էր հայկական երաժշտությանը: Ինչպես արդեն վերը նշվել է, թարգմանիչն այն զետեղել է Ա. Կիրիսերի աշխատության երկրորդ գլխի վերջում՝ որպես ընդարձակ հավելված:

Ձեռագրի հաջորդ՝ «Գիրք երրորդ: Թուարանական համեմատություն երաժշտութեան» խորագիրը կրող բաժնում⁶⁵, որ Կիրիսերի աշխատության երրորդ գրքի թարգմանությունն է, խոսվում է հիմնականում թվային համամասնության վրա հիմնված ներդաշնակ ձևերի մասին: Այս գլխում մեծ տեղ է հատկացված բուն մաթեմատիկային, իսկ ձայնամիջոցների մեծությունները կապվում են համասպատասխան թվային մեծությունների հարաբերակցության հետ: Կիրիսերը երաժշտությանը տալիս է մաթեմատիկական բացատրություններ՝ կցելով բազմաթիվ աղյուսակներ և հաշվումներ: Հեղինակն այստեղ ընկնում է որոշ ծայրահեղության մեջ, չափազանցելով մաթեմատիկական հաշվարկի գերը երաժշտության բնագավառում:

Այս գլխում ուշագրավ է այն բաժինը, որ վերաբերում է երաժշտության ախուստիկական կողմին, իհարկե, ուշ միջնադարի պատկերացումների սահմաններում⁶⁶:

Խնդրո առարկա ձեռագրի վերջին՝ չորրորդ գիրքը կամ գլուխը հիմնականում իտալացի երգահան և երաժշտության տեսաբան Վինչենցո Մանֆրեդինի (Manfredini) «Regole armeniche» աշխատության թարգմանությունն է, որը գրվելով 1775-ին լատիներեն, 1805-ին լույս է տեսել նաև ռուսերեն լեզվով, Պետերբուրգում⁶⁷:

63 Սրա պատճառը նաև հայկական ձայնեղանակների և եվրոպական ձայնագրության միջև եղած անհամապատասխանությունն է՝ վերջինիս տեմպերացված ձայնաշարի և արևելյան բնական ձայնաշարի տարբերությունների հետևանքով:

64 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 51ր:

65 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 52ա:

66 Այստեղ ևս նկատելի է ֆրանսիացի դիտնական և երաժշտության տեսաբան Մարկո Մերսենի ազդեցությունը, որը XVII դ. հարստացրեց երաժշտական ախուստիկայի մասին պատկերացումները մի շարք նոր հասկացություններով: См. В. П. Шестаков, Музыкальная эстетика Западной Европы..., стр. 357.

67 В. Манфредини, Правила гармонические и мелодические для обучения всей музыки, СПб., 1805.

Մանֆրեդինին սերտ կապեր է ունեցել Պետերբուրգի օպերային թատրոնի և արքունիքի հետ: Հաճախակի լինելով այստեղ, նա ոչ միայն բարձաստիճան սպալատականների երաժշտութեան ուսուցիչն է եղել, այլև իր խմբի հետ միասին բազմիցս բեմադրել է սեփական օպերային ներկայացումները: Մանֆրեդինիի վերը նշված աշխատութունը ուսուցողական-մեթոդական բնույթ ունի և վերաբերում է գործնական երաժշտութեան մի շարք բնագավառներին: Այն հազեցած է նոտային բաղմաթիվ օրինակներով և վերնագրված՝ «Երաժշտութիւն ըստ արդեաց ոճոյ»⁶⁸: Գիրքը բաղկացած է շորս բաժնից, որոնցից առաջինը կլավեսին և երգհնոն նվագելու սկզբունքների մասին է: Հեղինակը խոսքն սկսում է երաժշտութեան բնութագրումով. «Երաժշտութիւն է արհեստ համաձայնութեամբ միարանելոյ զպէսպէս հընչմունս ձայնից, այս է՝ զերգս, զմեղեղիս, զներդաշնակս: Երաժշտութիւն կատարելագործի ձայնիս, կամ ընկերութեամբ գործեաց, և կամ առանց ընկերութեան, որ և կոչի երաժշտութիւն ձայնաւոր, և այն որ կատարի միայն ի ձեռն գործեաց, անուանի երաժշտութիւն գործիքական»⁶⁹:

Ինչպես տեսնում ենք, նախորդ XVII դ. համեմատութեամբ երաժշտութեան բնորոշումը մասամբ փոխվել է. եթե Կիրիսերը հենվում էր զլիսավորապես երաժշտութեան միջնադարյան մեկնաբանման վրա, ապա Մանֆրեդինին արդեն մատուցում է երաժշտութեան ավելի գործնական՝ նոր ժամանակների հատուկ բնորոշումը:

Աշխատութեան երկրորդ մասը կոչվում է «Ի վերայ միոյ նոր մեթոտոսի վասն ուսանելոյ, և ունելոյ զբամբ հնչիւնն. այս է զլսասոսոն||»⁷⁰: Սա արդեն հարմոնիայի դասագիրք է, որտեղ խոսվում է բարեհնչյուն և անբարեհնչյուն ձայնամիջոցների, ինչպես նաև եռահնչյունների, դոմինանտսեպտակորդների, նրանց շրջվածքների ու լուծումների, ձայնառութեան, կազանսների տարբեր տեսակների, զարտուղութեան և նվագակցութեան մասին Մանֆրեդինիի աշխատութեան երրորդ մասը կոչվում է «Ի վերայ էական կանոնաց, որք են յոյժ հարկաւորք երգելոյ»⁷¹ և վոկալիստների համար մեթոդական ցուցմունքների բնույթ է կրում: Հեղինակը գտնում է, որ երգելն ավելի հեշտ է, քան որևէ գործիք նվագելը, և որ առանց հատուկ երաժշտական կրթութեան էլ բնական ավյալներ ունեցող յուրաքանչյուր սք կարող է երգել որևէ մեղեղի, միայն լսելով այն⁷²: Սակայն, բացի բնական ձայնական հարմարութեանից, հեղինակը գտնում է, որ անհրաժեշտ է նաև դիտակ ուսուցչի հսկողութուն: Մանֆրեդինին ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ իսկապես լավ երգելու համար բավական չէ երգել միայն բերանով, այլև պարտ է երգել զգացմամբ ու հոգով: Հեղինակը նշում է նաև, որ երգիչը անպայման պետք է բաղմակողմանիորեն զարգացած մարդ լինի, կարողանա գեղեցիկ կարգալ բանաստեղծութունն ու դրա միջոցով կրթի իր միտքը և զարգարի հոգին: Եվ ամենակարևորը, երգիչը պետք է հասկա-

68 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 91ր:

69 Նույն տեղում:

70 Նույն տեղում, էջ 93ա:

71 Նույն տեղում, էջ 110ա:

72 Անշուշտ, այստեղ նա նկատի ունի երևութի լուկ ձևական կողմը:

նա իր երգածն ու ինքը հուզվի, որպեսզի կարողանա հուզել նաև ունկնդիրներին: Սրանք պահանջներ են, որ այսօր էլ կարելի է դնել յուրաքանչյուր երաժշտի առաջ:

Մանֆրեդինի աշխատության վերջին՝ շորրորդ մասը կոչվում է «Ի վերայ կանոնաց հակակիտի (բոնթուարունթո)»⁷³: Այն պոլիֆոնիայի դասագիրք է, որտեղ քննվում են իր ժամանակի բազմաձայնության տարրեր տեսակները: Այստեղ նախ բացատրվում են կոնտրապունկտի տեսակները, ապա՝ իմիտացիան, ֆուգան, կրկնակի կոնտրապունկտն ու կանոնը՝ իրենց տարատեսակներով: Հեղինակը խոսում է նաև երաժշտության սեռերի մասին (արիա, դուետ, տերցետ, սոնատ, կոնցերտ, սիմֆոնիա, օրիո և այլն), ինչպես նաև օպերայի տեսակների (սերիա, բուֆ) և առհասարակ վոկալ երաժշտության գործիքային նվագակցության բնույթի մասին: Առանձին պրակ է նվիրված նաև եկեղեցական երգերին և նվագարաններին, որոնք պետք է հնարավորին շափ դուստպ ու շափավոր լինեն, ինչպես վայել է սուրբ տեղին: Մանֆրեդինին գտնում է, որ հոգևոր երգեցողությանն ավելի պատշաճ է մինոր տոնայնությունը և կատարման լրջությունը:

Հեղինակն ավարտում է աշխատությունն այն մտքով, որ կատարյալ երաժշտության խնդիրն է՝ «հաճել միշտ, և մերձեցուցանել ի սիրտս լսողաց զմեղեղին, կամ զտաղերգութիւն՝ պահելով վարելով անխափան, գորոշեալ և զպայծառ ներգաշնակ»⁷⁴: Խոսքը հոմոֆոն-հարմոնիկ ոճի երաժշտության մասին է, որի հիմնական արտահայտչաձևը Մանֆրեդինին համարում էր տպավորիչ մեղեղին՝ զուգակցված գործիքային ներգաշնակ նվագակցությամբ: Հարկ է նշել, որ ամբողջ աշխատությունը հագեցած է նոտային բազմաթիվ օրինակներով:

Մանֆրեդինի սույն աշխատությամբ եզրափակվում է քննարկվող ձեռագրի բուն թարգմանական բաժինը, որին հետևում է մի ստվար բաժին ևս: Սրա առաջին գլուխը կոչվում է «Նշանագրական ազդեցութիւնք ի վերայ երաժշտութեան»⁷⁵: Այն ծավալուն շարադրանք է, որն արդեն թարգմանություն չէ, սակայն լիովին ինքնուրույն նյութ էլ չի կարելի համարել. սա 44 կետից բաղկացած բացատրությունների մի փունջ է, որտեղ շոշափվում են նախընթաց նյութերից կարևորած տարրեր հարցեր:

Ձեռագրի վերջին բաժնի մյուս գլուխը կոչվում է «Բովանդակութիւն երաժշտական գիտութեան: Հանդերձ ամենայն էական, և պատահական հանգամանօքն, ըստ պատշաճի կարգեալ, և դասաւորեալ հակիրճ, և մէկն բանիւք երաժիշտ վարդապետաց: Յորում առաջին դնին սահմանք, և բաժանմունք մասանց նորա և կանոնք: Որք առ գործածութիւն, և կազմութիւն եղանակաց շարականաց երգոց, տաղից, ցցոց և մեղեղեաց, եթէ ձայնականի և եթէ գործիքականի՝ են պիտանի. և հարկաւոր»⁷⁶: Վերնագրից երևում է, որ այդ բաժինը նույնպես հավաքական է, այսինքն, հիմնված է նախորդ երկու հեղինակներից կատարված թարգմանությունների վրա: Սկսած երա-

73 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 118ա:

74 Վ. Մ., ձեռ. № 1456, էջ 141բ:

75 Նույն տեղում, էջ 142ա:

76 Նույն տեղում, էջ 159ա:

ժրջառության բնորոշումից, Ուշգարտաշյանը համադրում է Կիրիսերի և Մանֆրեդինիի սահմանումները, հետևություններ անելիս հենվելով առավելապես վերջինիս վրա:

Ամբողջ ձեռագիրն ավարտվում է «Ի վերայ տարազու երաժշտութեան Արեւելեայց և Արեւմտեայց, և թէ ո՞րով տարբերին ի միմեանց»⁷⁷ խորագրով 19 կետից բաղկացած վերջաբանով, որ պարունակում է առանց հնգագծի ձայնագրության և եվրոպական ձայնագրության հակիրճ համադրությունը: Հեղինակը նշում է, որ հայերը, շունենալով բազմաձայնություն, իրենց եկեղեցական երաժշտության մեջ, հատկապես տոն օրերին, դորժածում են որոշ նվագարաններ, գրանով նմանվելով արեւմտյան ազգերին, ի տարբերություն հույների, որ ոչ մի դորժիք չեն օգտագործում իրենց եկեղեցում: Ուշգարտաշյանը գտնում է, որ շնայած արեւելյան եկեղեցում օգտագործում են բամբ (բաս) հնչյունով, ռամկորեն ասած «տէմ բաշել»-ը, այսինքն՝ ձայնառությունը, սակայն դա իր արվեստով չի կարելի համեմատել հակակետի, այսինքն՝ կոնտրպունկտի հետ: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ շնայած մեր ազգը չունի եվրոպական ձայնագրության ձայնանիշերը⁷⁸, սակայն մեր ութ ձայնեղանակները պարունակում են եվրոպական լազերի բոլոր աստիճանները:

Այստեղ հարկ է անդրադառնալ նաև Ուշգարտաշյանի մյուս՝ «Գիրք երրորդ, պատկերաց տեսական և գործնական երաժշտութեան» ձեռագրին⁷⁹, որ կոչվում է նաև «Տախտակ սկզբանց երաժշտութեան»: Սա Վինննայի մատենադարանի «Գիրք պատկերաց Ա.-Գ» ձեռագրի երրորդ մասն է, որ կրում է «Գիրք Պատկերաց Մաթէմատիքական ուսմանց, Գործնական երկրաչափութեան, Երաժշտութեան և կանոնական կտրութեանց» խորագիրը⁸⁰: Այս մատյանի ստեղծման ժամանակը 1780—1781 թթ. են, սակայն ուշագրավ է այն, որ մեզ հետաքրքրող՝ երրորդ մասն ստեղծվել է մոտ քսան տարի անց՝ 1800 թվականին, այսինքն՝ երաժշտության մասին վերը քրննարկված ձեռագրից անմիջապես առաջ: Այստեղ ամփոփված են նոտային օրինակներ՝ հակիրճ բացատրություններով, որոնք վերաբերում են հիմնականում Վինննայի Մանֆրեդինիի աշխատությանը: Սակայն վերջին էջերում Ուշգարտաշյանն անդրադարձել է հայկական խազերին և, որ արդեն լուսաբանվել է իր տեղում: Մնում է ավելացնել, որ այստեղ Ուշգարտաշյանը զետեղել է նաև օրհնությունների ութ ձայն սկսվածքները՝ խազանշաններով հանդերձ, ինչպես նաև մի շարք ստեղի ձայնեղանակների խազագրված սկսվածքներ: Այս ամենը հեղինակը կոչում է «Բանալիք երաժշտական երգարանութեանցն Հայոց»⁸¹, որոնցից յուրաքանչյուրի դիմաց նշված է՝ վսեմ (սոփրանո), այսինքն՝ սոպրանոյի բանալի, ստեղիներից մեծ մասի դիմաց

77 Նույն տեղում, էջ 200ր: Արեւելայց ասելով հեղինակը նկատի ունի բյուզանդացիներին և հայերին, իսկ արեւմտայց ասելով՝ եվրոպացիներին:

78 Ուշգարտաշյանն ակնարկում է այն հանգամանքը, որ հայկական խազանշանները չեն արտահայտում ձայնաշարի առանձին աստիճանները՝ իրենց բարձրությամբ և տեղադրությամբ:

79 Վ. Մ., ձեռ. 1459, էջ 54ա—77ր:

80 Տե՛ս «Ցուցակ հայերէն ձեռագրաց» Գ, էջ 210—11, նաև՝ «Հանդես ամսօրյա», 1978, էջ 393—96:

81 Վ. Մ., ձեռ. № 1459, էջ 75ա:

նշված է՝ մեղմ (թէնօր), այսինքն՝ տենորի բանալի, իսկ ստեղի մեղեդին, ըստ Ուշգարտաշյանի, ընթանում է բամբ (պասսո), այսինքն՝ բասի բանալիում: Ըստ Երևույթին հեղինակն այստեղ⁸², ինչպես նաև վերը քննարկված մյուս ձեռագրում, նկատի ունի գրառվող երաժշտական նյութի ավելի հնչամասային (ռեգիստր), քան հնչերանգային (տեմբր) հատկանիշը, քանի որ, ինչպես հայտնի է, հայկական եկեղեցական երաժշտությունն ընդհանրապես կատարում էին տղամարդիկ, հետևաբար և շարականների հրնչման ձայնածավալը հիմնականում ամփոփվում էր լիրիկական բարիտոն և տենոր ձայների ձայնածավալի սահմաններում⁸³: Այնպես որ Ուշգարտաշյանը պարզապես փորձում է որոշ համապատասխանություն մտցնել հայկական ութ ձայն սկավաժքների ու ստեղիների և եվրոպական ձայնագրության՝ իր ժամանակ տարածված բանալիների միջև: Ընդհանրապես, սույն աշխատությունը հիմնականում թարգմանական լինելով, ավելի ուսումնակրթական բնույթ է կրում: Թարգմանելով նախ՝ իրեն նախորդող ժամանակաշրջանի հեղինակներից մեկի՝ Աթանաղիոս Կիրիսերի, երաժշտատեսական աշխատության երեք գլուխները, այնուհետև իր ավագ ժամանակակիցի՝ Վինչենցո Մանֆրեդինիի դասագիրքը, որ վերաբերում է երաժշտության առավել գործնական մի շարք բնագավառների, Ուշգարտաշյանն, առնչված, մի կարևոր նպատակ էր հետապնդում. եվրոպական երաժշտագիտության և երաժշտության նախնի և արդի նվաճումները աստիճանաբար ներմուծել հայկական շրջանակները, գրանով իսկ լայնացնելով հայ պատանիների երաժշտական մտահորիզոնը: Սակայն ամենից արժեքավորն այստեղ, իհարկե, հայկական խաղաղության և հոգևոր երգեցողության մասին գրված ինքնուրույն ներդիրն է, որ կարևորում է Ուշգարտաշյանի դերը նաև որպես շարականագետ-երաժշտագետի, որը քաջատեղյակ էր հայ միջնադարյան երաժշտության և հատկապես հոգևոր երգեցողության հարցերին թե՛ տեսական, և թե՛ գործնական առումով: Հատկապես ուշագրավ են հեղինակի պրպտումները հայկական խաղերի ասպարեզում, որոնց վերաբերող ընդարձակ ցուցակը՝ կիրառության տեղիների մեջբերմամբ, նկատառելի Երևույթ էր խաղագիտության մեջ⁸⁴: Հետևաբար, եթե Գ. Գապասաքալյանը մինչ այժմ համարվում էր առաջին հայ հետազոտողը, որն անդրադարձել է խաղերի բարդույթին, ապա այսուհետև Ա. Ուշգարտաշյանը նույնպես պետք է համարվի հայազգի առաջին հետազոտողներից մեկը, որ զբաղվել է խաղերի բարդույթով, համարյա Գապասաքալյանի հետ միաժամանակ: Ինչ վերաբերում է խնդրո առարկա ձեռագրին ամբողջապես (որպես գիտաթարգմանական աշխատություն), ապա այն, որպես եվրոպական երաժշտության հիմունքների և ձայնագրության տեսական ու գործնական դասագրքերի ժողո-

82 Նույն տեղում, էջ 75բ—76ա:

83 Տե՛ս Ն. Կ. Թահմիզյան, Չայնի մասին ուսմունքը Հին և միջնադարյան Հայաստանում, Բ Մ, 1962, № 6, էջ 157:

84 Հարկ է նշել, որ Գ. Գապասաքալյանի՝ խաղարանական պրպտումները պարունակող երեք գրքերից երկուսը լույս են տեսել Ուշգարտաշյանի սույն ձեռագրից հետո՝ 1801-ից 1803-ին, և միայն առաջինն է, որ լույս է տեսել 1794-ին:

վածու, հավանաբար, առաջինն է հայ իրականության մեջ⁸⁵։ համենայն դեպս, հայ երաժշտագիտությանը դեռևս հայտնի չէ տվյալ ժամանակին վերաբերող նմանատիպ մի այլ օրինակ։

Հատկանշական է այն փաստը, որ Ուլգարտաշյանն ավարտում է աշխատությունը, համադրելով հայկական երաժշտության հիմունքները եվրոպականի հետ և, նշելով հանդերձ նրանց ունեցած սկզբունքային տարբերությունները, փորձում է որոշ կետերում ընդհանրության եզրեր գտնել դրանց միջև, այլ կերպ ասած, հեղինակը կամուրջ է ձգում երկու տարբեր երաժշտական մշակույթների միջև, եվրոպական երաժշտության նվաճումները հայկական երաժշտական ասպարեզ ներմուծելու նպատակով։ Ճիշտ է, Ուլգարտաշյանի սույն աշխատությունը ժամանակին չի տպագրվել (Տրիեստում Մխիթարյան միաբանության նյութական սուղ հնարավորությունների պատճառով), սակայն դեռևս 1911-ին՝ միաբանության հիմնադրման 100-ամյակի առթիվ Վիեննայում լույս տեսած «Յուշարձան» գրական ժողովածուն հատկապես նշում է Անտոն Ուլգարտաշյանի սույն երաժշտագիտական աշխատությունը՝ որպես հմտությամբ գրված և հանիրավի անտիպ մնացած մի գործ։ Այսպիսով, Անտոն Ուլգարտաշյանի երաժշտագիտական-թարգմանական քննարկված աշխատությունը կարելի է համարել Մխիթարյան դույզ միաբանությունների ծավալած կրթական-լուսավորական շարժման ուշագրավ արտահայտություններից մեկը՝ երաժշտության բնագավառում։

А. Д. ВАРДУМЯН

РУКОПИСЬ ВЕНСКОГО ХРАНИЛИЩА «КНИГА ПО МУЗЫКЕ»,
КАК ПОЗДНЕСРЕДНЕВЕКОВАЯ МУЗЫКОВЕДЧЕСКАЯ РАБОТА

Резюме

Статья посвящена исследованию рукописи № 1456 и относящегося к музыке раздела рукописи № 1459, которые хранятся в библиотеке мхитаристов в Вене. Обе рукописи принадлежат перу члена Триестской конгрегации Антона Учгарташяна и выполнены в 1800—1801 годах. Первая рукопись рассматривается в статье как поздне-средневековое исследование по музыке, состоящее из переводного и оригинального разделов, а вторая—является нотным приложением к ней.

85 Իհարկե, չհաշված 1711-ին Խաչատուր էրզրումեցու «Համառօտական իմաստասիրութիւն» մեծածավալ աշխատության մեջ երաժշտության հարցերին նվիրված երկու դուխներից՝ «Տակաին յաղագս սահմանի երաժշտութեան» դուխը, որ թեպետ եվրոպական երաժշտության սկզբունքների մասին է, սակայն ընդամենը 55 տողից բաղկացած շափածո շարադրանք է, որ միայն տեսական ընդհանուր մի տեղեկություն կարող է տալ եվրոպական երաժշտության մասին, այլ ոչ երբեք՝ գործնական որևէ պատկերացում հաղորդել, մանավանդ ձայնագրության, բազմաձայնության և դրանց հետ կապված այլևայլ հարցերի մասին (Ն. էրզրումեցու աշխատության երաժշտագիտական հատվածի մասին տե՛ս Ծան Ն. Թանմիզյանի «Խաչատուր էրզրումեցին որպես հայ երաժշտության տեսաբան» հոդվածը՝ 129, № 11, էջ 66—74)։

A. D. VARDOUMIAN

LE MANUSCRIT „LIVRE DE MUSIQUE“ DE LA BIBLIOTHEQUE
DE VIENNE, OEUVRE MUSICOLOGIQUE DE LA FIN
DU MOYEN AGE

R é s u m é

L'article est consacré à l'étude du manuscrit no. 1456 et de la partie du manuscrit no. 1459, conservés à la Bibliothèque des Mkhitaristes de Vienne. Ces deux manuscrits sont dus à la plume d'Anton Outchgartachian, membre de la Congrégation de Trieste et ont été écrits en 1800—1801. Le premier manuscrit examiné est une étude sur la musique de la fin du Moyen Age constituée de deux parties: l'une originale, l'autre traduite de l'allemand ou du latin. Le second manuscrit est un appendice constitué de textes musicaux en notation européenne.

АЛЕКСАНДР КАКОВКИН

КНИЖНЫЕ ПЕРЕПЛЕТЫ ИЗ СЕРЕБРА ИЗ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ СВ. ЕКАТЕРИНЫ В ПЕТЕРБУРГЕ

В мае 1703 г. в устье Невы был заложен город, которому через 9 лет суждено было стать столицей Российской империи. Через 5 лет после этого события в нем появились сыны солнечной Армении.

Картина сложения и развития армянской колонии в Петербурге вырисовывается довольно полно¹. В первой четверти XVIII в. она была еще малочисленной, но уже в 1730-х гг. в столице существовала «Армянская улица». Сначала армяне селились на Васильевском острове (который по замыслам Петра I, должен был стать центром города). Позднее они предпочитали жить на Невском проспекте.

Армяне в Петербурге занимались торговлей и ремеслами; они владели «конторами», мануфактурами, домами, морскими и речными судами, служили в армии, строили «армянского закона» церкви.

В данной работе освещается малоизвестная сторона жизни петербургской колонии армян, связанная с церковью св. Екатерины.

Но прежде чем перейти к сути дела, хотелось бы напомнить, что к середине XVIII столетия благоприятное отношение русского правительства к армянам (сложившееся еще при Петре I), сменилось политикой сдерживания разносторонней деятельности армян. Это чувствовалось и в религиозной области. 28 декабря 1741 г. императрица Елизавета Петровна через месяц после восшествия на престол потребовала Ведомость об имеющихся в России армянских церквях, а вслед за этим, 16 января 1742, г., последовал высочайший указ, по которому предписывалось упразднить имеющиеся в Российской империи армянские церкви «и впредь позволения о строении оных не давать»².

¹ Основная литература об армянской колонии в Петербурге: Г. Н. Григорьян, Армянская культурная колония в Петербурге в XVIII веке.—Изв. АН АрмССР, 1953, № 9, с. 53—74; О. Х. Халпахчьян, Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре. Ереван, 1957, с. 32—33; Л. П. Базилянц, Первые памятники армянской колонии Петербурга XVIII в.—В кн.: Л. П. Базилянц, Правда интереснее легенд. М., 1975, с. 30—34; Ц. П. Агаян, Армянские поселения в России.—В кн.: Ц. П. Агаян, Роль России в исторических судьбах армянского народа. К 150-летию присоединения Восточной Армении к России. М., 1978, с. 124—131; Армяно-русские отношения во втором 30-лети XVIII в. Сборник документов, т. III, Ереван, 1978.

² Армяно-русские отношения..., с. 158—159, № 112.

Положение меняется через три с небольшим десятка лет: численность столичной армянской колонии растет (в 1780-х гг. оно достигает 100—150 человек), она крепнет экономически (напомним лишь некоторых самых именитых членов колонии: сподвижник Исаэла Ори архимандрит Минас; архиепископ Иосиф Аргутинский; «бенгальский гражданин», армянский купец и ювелир Артемий Шериман; владелец каменных домов и собственной церкви Лука Ширванов; ювелир высочайшего двора Иван (Ованес) Лазаревич Лазарев (Лазарян); джюльфинец Григорий Сафрас, купивший алмаз «Орлов»; исфаганский армянин ювелир Давид Азапов, бывший с 1773 г. мастером иностранного дежа, и др.).

Растущей армянской общине необходима была церковь: единственная церковь «армянского закону», выстроенная в начале 1740-х гг. иждивением Л. Ширванова на его дворе на Васильевском острове, не могла удовлетворить колонистов. Армяне подали прошение о дозволении построить новую церковь.

2 мая 1770 г. именным высочайшим указом разрешалось армянской общине на добровольные приношения прихожан, на Невском проспекте на Армянском подворье возвести каменную церковь. Строительство ее было поручено известному архитектору-инженеру Юрию Матвеевичу Фельтену (1730—1801)³. Через 9 лет строительство было закончено. Церковь представляла собою типичное сооружение раннего классицизма и явилась подлинным украшением столицы⁴. 18 февраля 1780 г. в торжественной обстановке, при огромном стечении народа (в числе высоких гостей был фаворит императрицы князь Г. А. Потемкин) состоялось освящение храма. По предложению братьев Лазаревых, пожертвовавших на строительство церкви значительную сумму, она была названа именем Екатерины—святой, тезоименной здравствующей императрицы⁵.

Новая церковь сразу же сделалась главным храмом столичной армянской колонии и продолжала оставаться таковою в продолжение полутора столетий. Сюда стекались значительные денежные пожер-

³ С именем этого архитектора связано становление русского классицизма. По его проектам возведены набережные Невы, установили решетку Летнего сада, выстроили здание Старого Эрмитажа, возвели Армянскую церковь в Армянском переулке в Москве и др. Рядом с церковью Екатерины по заказу братьев Лазаревых Фельтен выстроил несколько домов. В одном из них с начала 1780-х гг. обосновалась первая армянская типография в России Григория Халдаряна.

⁴ О. Х. Халпахчьян, указ. соч., рис. 39 (общий вид храма со стороны Невского проспекта), рис. 40 (интерьер церкви), с. 32—33.

⁵ Следует отметить, что Екатерина II благосклонно относилась к армянам, поддерживала деловые связи с католиком Симеоном Ереванци: последний преподнес императрице «частичку Ноева ковчега», получив в дар драгоценную ризу (хранится в ризнице Эчмиадзинского кафедрального собора). Императрица поощряла переселение армян в Россию, давая переселенцам экономические и правовые привилегии (пример, колония армян на Дону).

тования, в качестве даров в большом количестве поступали различные художественные памятники.

В 1904—1906 гг. Екатерининскую церковь реставрировал архитектор А. И. Таманян, тогда же по его чертежам была изготовлена металлическая решетка для парадной двери⁶.

В 1930 г. Екатерининская церковь была упразднена. Находившиеся в ней художественные памятники и церковный инвентарь попали в Русский музей а оттуда в 1931 и 1932 гг. двумя партиями были переданы в Эрмитаж. В их числе живописные графические и фотографические портреты деятелей армянской церкви, картины и гравюры на религиозные темы, церковный инвентарь. В 1977 г. Эрмитаж передал на постоянное хранение в Исторический музей Армении значительную часть вещей из Екатерининской церкви, оставив у себя только изделия золотых и серебряных дел мастеров, архимандритскую митру и три деревянных штампа для освящения хлебов.

В настоящей работе дано описание пяти серебряных книжных переплетов из церкви Екатерины, хранящихся в Особой кладовой отдела Востока⁷.

№ 1. Армянское евангелие, напечатанное в Венеции, в серебряном окладе⁸. В центре лицевой стороны I, в овале.—Распятие с двумя предстоящими; по углам, в наугольниках,—поколенные изображения евангелистов с символами. Пояснительные надписи русские: $\overline{\text{IC XC}}$; $\overline{\text{IOAN}}$; $\overline{\text{MATHEI}}$; $\overline{\text{ЛУКА}}$; $\overline{\text{МАРК}}$.

Над головой Христа: $\overline{\text{INRI}}$ —Иисус Назарей царь иудейский.

На обороте, в центре, — стоящая на полумесяце богоматерь с младенцем Христом ($\overline{\text{MP}} \overline{\text{ΘV}}$; $\overline{\text{IC XC}}$). В углах—Благовещение, Рождество Христово, Сретение, Крещение. Пояснительные надписи русские: сретение $\overline{\text{[оспо]дне}}$; $\overline{\text{IOAN}}$, $\overline{\text{IC XC}}$.

На шитке вычеканено пять сцен: Моление о чаше, Взятие Христа под стражу, Сошествие во ад, Несение креста, Христос перед Пилатом. Во всех сценах только Христос отмечен нимбом. Корешок украшают чеканные цветы.

Сцены окаймлены завитками, цветочками, раковинами. На лицевой и тыльной сторонах по центру внизу выбито клеймо сименом мастера: «IGK»—Иоганн Георг Крауцведель, работавшего в Петербурге в 1779—1792 гг.⁹

⁶ О. Х. Халпахьян, указ. соч., рис. 41, с. 33.


⁷ Информацию об этих памятниках см.: А. Я. Каковкин, Памятники художественной культуры из армянской церкви Екатерины в Петербурге.—IV Республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы докладов. Ереван—Сардарапат, 18—22 сентября, 1979 г. Ереван, 1979, с. 214—216 (на арм. яз., с. 61—62)

⁸ ГЭ, инв. № Уз—291. Размеры: 16×11,8 см. Сохр. удовлетворительная. Поступление 7. 04. 1932 г. из ГРМ.

⁹ Расшифровку клейм в данной работе даем по книге М. М. Постниковой-Лосевой «Русское ювелирное искусство, его центры и мастера XVI—XIX вв.» М., 1974.



№ 1. Армянское Евангелие в серебряном окладе (1780 г. Гос. Эрмитаж)



№ 2. Арм. Евангелие 1786 г. С. Петербург
Серебряный оклад 1787 г. (Гос. Эрмитаж)



№ 3а. Арм. Евангелие 1786 г.,
Серебряный оклад 1790 г., (Гос. Эрмитаж)




№ 36.



№ 4. Арм. Евангелие, изд. в Петербурге в 1786 г.
Серебряные накладки на бархатном переплете 1793 г.



№ 4a.



№ 5. Арм. Евангелие, изд. в Венеции в 1732 г.
Серебряный оклад на бархатном переплете (Гос. Эрмитаж)

На странице предшествующей титульному листу, семистрочная армянская надпись¹⁰ красными чернилами:

ՅԻՇԱՏԱԿ Է Ս[ՈՐՐԲ] ԱԻԵՏԱՐԱՆՍ ՂԱՓԱՆԵՅԻ
 ԼԱԼՈՅՈՎԷՆՅ ՄՍՐՏԻՐԱՍԻ ՈՐԴԻ ՀԱՆԳՈՒՅԵԱԿ
 ՅՈՎԱԿԷՍԻՆ, ՈՐ Ի ՉԵՌԱՄԲ ՅՈՎԱԿԻՄ
 ԼԻՍՅՈՎԻՆ ԵՏ Ի ԴՈՒՌՆ ՊԵՏՐՐՈՒՔՈՒ
 ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՅՈՑ: ԹԻՎՆ 1780
 ՓԵՏՐՎԱՐԻ¹⁰

Перевод: «Это святое евангелие является памятью сына Мартироса Лалайовенца Капанского покойного Ованеса, который через Овакима Лалайова отдал в новопостроенную армянскую церковь св. Екатерины в Петербурге. Год 1780, 10 февраля»¹¹.

№ 2. Армянское евангелие, напечатанное в Петербурге в 1786 г., в серебряном переплете¹². На лицевой стороне пять серебряных литых накладок, крепящихся гвоздиками к решетчатым пластинам позолоченного оклада. В центре, в облаках,—поясное изображение благословляющего Христа со сферой; по углам—в облаках—поясные изображения евангелистов с раскрытыми книгами, рядом—символы. На оборотной стороне, в центре, в фестончатом медальоне, окруженном пальмовыми ветвями, голгофский крест и орудия страстей (русские пояснительные надписи: ИИЦІ=Иисус Назарей царь Иудейский); по углам—«жуки». На корешке—шесть полей с розами. Клейма указывают, что переплет был выполнен в Петербурге в 1787 г.

№ 3. Армянское евангелие, напечатанное в Петербурге в 1786 г. в серебряном переплете¹³. На лицевой стороне, в центральном, как бы подвешенном медальоне, вычеканено Вознесение, по углам — сидящие евангелисты с символами. На обороте, — стоящая на облаке богоматерь с младенцем Христом в центре, вокруг, в круглых медальонах,—погрудные изображения апостолов с различными атрибутами¹⁴. Армянские гравированные надписи сообщают их имена (с левого верхнего угла по часовой стрелке): Филипп (ՓԻԼԻՊՈՍ), Перт (ՊԵՏՐՈՍ), Иаков (ՅԱԿՈԲՈՍ), Иоанн (ՅՕՀԱՆՆԷՍ), Фаддей (ՔԱԴԷՍ), Андрей (ԱՆԴՐԷԱՍ), Варфоломей (ՔԱՐԴՈՒՂՈՍԷՍ), Матафия (ՄԱՏԱՔՐԻԱ), Фома (ՔՕՄԱՍ), Иаков (ՅԱԿՈԲՈՍ), Матфей (ՄԱՏԹԷՍ), Симон (ՍԻՄՈՆ).

¹⁰ Помощь в прочтении и переводах армянских надписей на вещах мне оказали П. Мурадян, П. Донабетян, В. Казарян, Л. Чукасян. Выражаю им свою глубокую признательность.

¹¹ Дар принесен за неделю до официального освящения храма.

¹² ГЭ, инв. № V3—295. Размеры: 23,3×18,3 см. Сохранность: есть помятости, потертости. Поступление—7.04 1932 г из ГРМ.

¹³ ГЭ, инв. № V3—298. Размеры: 32×22 см. Сохранность удовлетворительная. Поступление—7.04. 1932 г из ГРМ.

¹⁴ Следует заметить, что иконографический тип апостолов не всегда каноничен: Матфей представлен безбородым, обычно юный Фома изображен старцем, у Петра вместо свитка—книга.

Две застежки украшены гравированными изображениями апостолов Петра и Павла в рост. Клейма указывают город—Петербург (два якоря и скипетр), год—1790 и имена и фамилии двух пробирных мастеров: «А. Т.» = Андрей Титов, 1786—1798 гг. и «Н. М.» = Никифор Мощалкин, 1772—1800 гг.

Корешок разбит на восемь полей с розами и гравированной вкладной надписью:

ՅԻՇԱՏԱԿ Է Ս[ՈՒՐԲ] ԱԻԵՏԱՐԱՆ[Ս] ԽԱԼԴԱՐԵԱՆ
 ԽՕԶԱՄԱԻ ՈՐԴԻ ԵՒ Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
 ԳՐԻԳՈՐԻՆ ԵՎ ՏՐՏՄԱԶԳԵԱՅ ԿՈՂԱԿՅԻՆ ՆՈՐԻՆ
 ԿԱՏԱՐԻՆԱՅ ԶԱՔԱՐԵԱՆԻՆ Ի ԳՈՒՌՆ Ս[ՈՒՐ]Բ
 ԿԱՏԱՐԻՆԵԱՅ ԵԿԵՂԵՅՈՅՆ ՍԱՆԿՏ-ՊԵՏՐՊՈՐՔՈՒ:
 ՅԱՄԻ Տ[ԵԱՌ]Ն 1790, ՅՕԳՈՍՏՈՍԻ 8-ՈՒՄՆ:

Перевод: «Святое евангелие—память о сыне Ходжамала Халдаряна и почившего во Христе Григория и его окутанной грустью супруги Катарине Закарян—в благоденствие церкви св. Екатерины в Санкт-Петербурге. Мста господня 1790 8 августа».

№ 4. Армянское евангелие, изданное в Петербурге в 1786 г., в переплете зеленого бархата с пятью серебряными накладками с каждой стороны¹⁵. На крышке — стоящий с крестом-знаменем Христос в центре, над ним в облаках и сиянии—символическое изображение троицы; по углам—сидящие с кодексами в руках евангелисты. На тыльной стороне, в центре, — медальон с голгофским крестом, по углам—накладки с завитками. Пояснительные надписи в медальонах русские: IC XC; с[вятой] А[постол] И[оани], СА М[атфей], СА Л[ука], СА М[арк]. На каждой из серебряных пластин по нескольку клейм: городское Москва (Георгий Победоносец на коне, поражающий копьём дракона), 1793 г., пробирных мастеров: «I. С.» = Иван Савельев, 1772—1778 гг., «А. Т.» = Андрей Титов, 1786—1798 гг., «А. В.» = Алексей Иванов Вихляев, 1781—1809, —серебряных дел мастера, «С. С.» = Савельев Степан (или Семенов Савва, 1787—1797 гг.), —два неизвестных мастера по качеству (альдермана): М.ц 1793—1795 гг. и А.п.О. 1775—1804 гг.

№ 5. Армянское евангелие, напечатанное в Венеции в 1732 г.¹⁶. Переплет темно-коричневого бархата с серебряным окладом. На обеих сторонах — крест в «раме», украшенный растительным

¹⁵ ГЭ, инв. № V3—234. Размеры: 29,7×19,2 см. Сохранность: порваны края медальонов на обеих сторонах переплета, бархат потерт. Поступление—22.03. 1931 г. из ГРМ.

¹⁶ ГЭ, инв. № V3—233. Размеры: 11,8×16,5 см. Сохранность: бархат потерт. поступление—22. 03. 1931 г. из ГРМ.

геометризованным орнаментом. На внутренних сторонах двух застежек—по клейму «I. A. L» неизветного европейского мастера¹⁷.

Рассмотренные переплеты представляют двойкий интерес. Как памятники, происходящие из армянской церкви св. Екатерины, они привлекают к себе внимание историков армянской колонии в Петербурге. Как произведения русских золотых и серебряных дел мастеров (кроме последнего переплета) они бесспорно интересны для исследователей русского декоративно-прикладного искусства. Эти произведения служат еще одним свидетельством тесного общения русского и армянского народов.

Ա. Յ. ԿԱԿՈՎԿԻՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՍՈՒՐԲ ԵԿԱՏԵՐԻՆԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԳՐՔԵՐԻ ԱՐՄԱԹՅԱ ԿԱԶՄԵՐԸ

Ա մ փ ո փ ո լ մ

Հոգվածը նվիրված է XVIII դ. հինգ հայերեն գրքերի արծաթյա կազմերի հրատարակությանը: Այդ գրքերը եղել են Պետերբուրգի սուրբ Եկատերինա եկեղեցու սեփականությունը, իսկ 1931—1932 թթ. տեղափոխվել են էրմիտաժ: Հուշարձանները մեծ մասամբ ստեղծվել են Պետերբուրգի և Մոսկվայի ուսու սակերիչների ու արծաթագործների ձեռքով և մատուցվել որպես նվեր սուրբ Եկատերինա եկեղեցուն: Դրանք վկայում են հայ և ուսու ժողովուրդների սերտ կապերի մասին:

A. Y. KAKOVKINE

LES RELIURES EN ARGENT DE L'ÉGLISE ARMÉNIENNE STE-CATHERINE DE SAINT-PETERSBOURG

Résumé

Cet article est la publication de cinq reliures en argent de XVIII siècle, des livres arméniens conservés à l'église arménienne Ste-Catherine de Saint-Petersbourg et transférés à l'Ermitage en 1931—32. La majorité de ces reliures a été exécutée par des joailliers russes de Saint-Petersbourg et de Moscou et offerte à l'église Ste-Catherine. Elles témoignent des contacts des peuples russe et arménien.

¹⁷ Аналогичную метку встречаем на происходящем из той же церкви реликвирии-подсвечнике, хранящемся в Эрмитаже (инв. № V3—240).

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՀԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ
ՊՈՂՈՍԻ ԹՂԹՈՑ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից հետո «գրեթե անոր հա-
վասար, մեր մատենագրության ոսկեղեն դարու ամենընտիր և թանկագին
ընծայք են Հովհան Ոսկերեբան հայրապետի... հոգելից և սրտառուչ ճառից
և մեկնությանց» թարգմանությունները¹: Այս է պատճառը, որ հայ բանա-
սիրական միտքը ժԸ դարասկզբից ի վեր աննվազ հետաքրքրությամբ պե-
ղում ու հրապարակում է արևելաքրիստոնեական եկեղեցու բազմաբնույթ
գործչի մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունները:

Հեղինակի ծովածավալ մատենագրական ժառանգության մեջ կարևոր է
մասնավորապես Պողոսի թղթոց մեկնության հայերեն թարգմանությունը:
Այս երկի հայերեն թարգմանության առանձին հատվածներ առաջին անգամ
չրջանառության մեջ են դնում Մխիթարյանները՝ 1826 թ. Ոսկերեբանի
Մատթեոսի մեկնությանը կից հրատարակելով նաև նրա Պողոսի թղթոց
մեկնության առանձին հատվածները²: Իսկ 1862 թ. հրատարակվում է պո-
ղոսյան թղթերի Ոսկերեբանի մեկնության հայերեն թարգմանության ճնշող
մեծամասնությունը³: Այս հրապարակման մեջ շրջագրված առանձին մա-
սերի՝ Պատճառների բնագրերը կազմում ու հմտալից ծանոթագրություննե-
րով հրատարակում է Հ. Ա. Վարդանյանը⁴:

Ներկա հրապարակումը նպատակ ունի ներկայացնել դանազան պատ-
ճառներով նախորդ հրատարակումներից դուրս մնացած մեկնության հայե-
րեն թարգմանության հետևյալ ամբողջական և հատվածական մասերը.

- Ա. Պատճառ թղթոյ Հոռմայեցւոց (Ա)
- Բ. Պատճառ թղթոյն Հոռմայեցւոց (Բ)
- Գ. Պատճառ Առաջին թղթոյն Կորնթացւոց
- Դ. Ի Կորնթացւոց թղթոյն (Ա. 18) մեկնութենէ
- Ե. Ի Կորնթացւոց թղթոյն մեկնութենէ՝ ասացեալ վասն ննչեցելոց
- Զ. Ի Կորնթացւոց թղթոյն (ԺԱ. 27, 29) մեկնութենէ
- է. Պատճառ Երկրորդ թղթոյն Կորնթացւոց

1 Գ. Զարբհանայան, Մատենագրան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար
Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 581:

2 Տե՛ս Աւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826, Գիրք Գ, էջ 143—448:

3 Մեկնութիւն թղթոցն Պաղոսի, հտ Ա, Բ, Վենետիկ, 1862:

4 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1912, էջ 736—738, 738—740, 1913, էջ 41—44, 37—40:

- Ը. Ի Գաղատացւոց թղթոյն (Ե 12) մեկնութենէ
 Թ. Ի Գաղատացւոց թղթոյն (Զ 14) մեկնութենէ
 Ժ. Ի Եբրայեցւոց թղթոյն (Ժ 29) մեկնութենէ
 ԺԱ. Մեկնութիւն թղթոյն Փիլիմոնի:

Արդեն նկատված է, որ Ոսկերերանի Պողոսի թղթոց մեկնութիւնը, նրա շատ երկերի նման, հայերեն է թարգմանվել և զարուժ: Սակայն, ինչպես մեկնաբանական շատ աշխատութիւններ, այս գործի հայերեն թարգմանութիւնը ևս մեզ չի հասել բնագրային ձուլը ամբողջութեամբ: Նրա համեմատաբար ամբողջական և հատվածական մասերը ցրված են տարբեր գրչագրերում:

Պողոսի թղթոց մեկնութեան հայերեն թարգմանութեան մասին առաջին վկայութիւնը պատկանում է Ժ դարի գրիչ Սիմեոն վարդապետին, որ 999 թ. գրչագրված մի ձեռագրի հիշատակարանում գրում է. «Ես՝ Սիմեոնն նուսատ եւ անպիտան կրանաւոր, որ ընթերցասէր եւ ցանկացող եղեալ մանկութենէ իմմէ, յուզէի խնդրէի զգիրս տեառն Եփրեմի զՀին Կտակարանաց թարգմանութիւն եւ զնոր... եւ գտի զմեկնութիւն երանելի առաքելոյն տեառն Եփրեմի Խուրին Ասորոյ, եւ գրեցի ի ստոյգ եւ ի հին արինակէ, զոր եւ բերի, եւ այսու միայնոյ ոչ հաւանեալ այլեւայլ տեղ գտի զերանելոյն տեառն Յովհաննու Ոսկերերանի կարճառատ մեկնութիւն ԺԴ թղթոցն Պաղոսի եւ ի մին գիրս գրեցի, նախ առաջին զտեառն Եփրեմի եւ ապա զտեառն Յովհաննու, զոր եւ անբաւ եւ մեծ գիտութիւն յինքեան բովանդակեալ ունի»⁵: Հիշատակարանից պարզվում է, որ տակավին Ժ դարից առաջ հայ մատենագրութեան մեջ կենցաղավարել է ոչ միայն Պողոսի թղթոց Ոսկերերանի մեկնութեան ընդարձակ տարբերակի, այլև նրա «կարճառատ» մեկնութեան հայերեն թարգմանութիւնը կամ թարգմանութեան համառոտ տարբերակը: Ինչպես երևում է, Ոսկերերանի մեկնութեան համառոտ տարբերակը իր ձեռքի տակ ունեցել է ԺԱ դ. մատենագիր Անանիա Սանահնեցին: Նրա կազմած Պողոսի թղթոց խմբագիր մեկնութեան մեջ առկա թղթոց Պատճառները այստեղ են ներմուծվել Ոսկերերանի մեկնութեան համառոտ տարբերակից⁷: Հավանաբար այս տարբերակն օգտագործել է նաև ԺԲ դարի մատենագիր Գևորգ Կաղն իր կազմած Պողոսի թղթոց խմբագիր մեկնութեան մեջ⁸: Պողոսի թղթոց ոսկերերանյան Պատճառները ներմուծվել են նաև Աբասի որդի Գր.: դորի (ԺԳ դ.) կազմած «Գիրք պատճառաց»-ում ու զանազան արևելյան ժողովածուներում⁹:

Հրատարակվող միավորներից առաջին երկուսը, որ ձեռագրերում ներկայանում են իբրև Հոռոմայեցւոց թղթի Պատճառներ, ոչ այլ ինչ են, քան Ոսկերերանի մեկնութեան հայերեն թարգմանութեան համառոտ տարբերակի Յառաջարաններ¹⁰: Սակայն թարգմանութիւնը հզորիտ վերարտադրումը չէ

5 Ն. Ալիմյան, Գասական հայերէնը և Վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 39:

6 Տե՛ս Գ. Զարբանալյան, նշվ. աշխ., էջ 453—454:

7 Մաշտոցի անվ. Մատենադարան (=ՄՄ), ձեռ. N 2691, 2692:

8 ՄՄ, N 431, 1138:

9 ՄՄ, N 1879, հմմտ. Հ. Տաշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 220—222:

10 Հ. Տաշյան, Յուցակ, էջ 202:

բնագրի: Ա միավորի հայերեն թարգմանութիւնը հասնում է Յառաջարանի Բ մասի մինչև άπαντας περιήγει συνεχώς, οὐδαμοῦ μένων οὐδὲ ἰστάμενος **բառերը**¹¹: Հայերենում բաց են թողնված հունարենի հետևյալ հատվածները. «...սիրելի յոյն գանձն լինմ [και μονονομι παρόντα αὐτόν δοκῶ φαντάζεσθαι και διαλεγνινον ὄραν]¹² ցանկացեալ եմ մերձենալով խոսել...»: «Սորին վասն չափուն լանձն գայտպիսի աշխատութիւն [πρὸς γοῦν το καθεῖν τὰ παρ ἑτέρων συλλεγέντα διανάστητε... ἂν τοσαύτην γοῦν δῶτε]¹³ Վասն այսորիկ բիւր շարիս բուսանին...»: «Բանդի ի սկզբան զիջանել պարտ է [Μετά δὲ ταῦτα οὐκέτι. Καί πολλοκοῦ δε ἀλλακοῦ τοῦτο ἂν τις εὔροι ποιοῦντα αὐτόν]¹⁴ ՉՍոյն եւ բժիշկ անէլն եւ վարդապետք...»:

Բ միավորի հունարեն բնագիրն անձայտ է: Պետք է ենթադրել, որ շաշերեն է թարգմանվել բնագրի մեզ շխատ մի տարբերակից: Բ-ի երկու տարբերակներն են ներկայացնում № 1138 (307բ—308բ), 7431 (20բ—21ա) ձեռագրերում առկա միավորները: Ընդ որում № 7431 ձեռագրում առկա Բ-ի բնկարված միավորից դատ հանդես եկող հիշյալ տարբերակը ձուլված է Ա-ին: Բ-ի № 1138 ձեռագրում տրված տարբերակը բնկարված բնագրի «Բազումք հաւատացին ի Քրիստոս... բնութեամբ դարսինացն դորձին», իսկ № 7431 ձեռագրում՝ «Բազումք հաւատացին... վասն որոյ եւ գերբահամ ի մէջ բերել, յոր հրէայքն պարձին» հատվածների վերաշարադրված տարբերակներն են, որոնք ներկայացվում են «Տարբերցումներ» բաժնում:

Ա եւ Բ միավորները ղետեղված են Անանիա Սանահնեցու, Գևորգ Կազի Պողոսի թղթոց մեկնութիւններում, «Գիրք պատճառաց»-ում եւ այլաբնույթ ժողովածուներում: Գ եւ է միավորները նույնպես ղետեղված են հիշյալ գործերում: Գ միավորը հունարեն «πῶς το-ի δεξι-ισ θωρηγδάνωθι» է¹⁵ է միավորը համապատասխանում է հունարեն բնագրի Ա ճասի՝ «Ἄξιον ζητήσαι πρότερον, τίνας ἐνεκεν δευτέραν προστίθηται Ἐπιστολῆν τῆ προτερα... και ζητήσαι πῶς τὸν Τιμόθεον ἐνταῦθα ἐαντῶ ἴσονται. Παῦλος γάρ, φησίν, ἀπόστολος Ἰησοῦ χριστοῦ διὰ θελήματος Θεοῦ, και Τιμόθεος ὁ ἀδελφός»¹⁶ սկիզբ եւ վերջ աննցող սկզբնահատվածին: Ի տարբերութիւն նախորդի, այս միավորը ներկայացնող գրչադրերը սակայն բնագրային տեսակետից միատարր չեն: Բանն այն է, որ Անանիա Սանահնեցու քաղած թարգմանութիւնը շատ ավելի մոտ է հունարենին, քան «Գիրք պատճառաց»-ում ղետեղվածը: Վերջինիս մեջ առկա մի շարք հատվածներ կամ բացակայում են հունարենում կամ հունարենի ու հայերենի համապատասխան մասերի ընդարձակումն են՝ զխաւթրապես ի հաշիվ սուրբգրային տեղիների առավել ամբողջական, մանրամասն վկայակոչման: Այդ հատվածները նպատակահարմար նկատեցինք ղետեղել «Տարբերցումներ» բաժնում:

¹¹ S⁶ a Migne, PG. t. 60, col. 391—394. Բերված հունարեն հատվածները բնագրերի հետ վերըստին համեմատեց Հ. Բաթթիկյանը, որին մեր շնորհակալութիւնն ենք հաշտնում:

¹² PG, t. 60, col. 391.

¹³ Անդ, col. 391.

¹⁴ Անդ, col. 393.

¹⁵ PG, t. 61, col. 9—12.

¹⁶ Անդ, col. 382—384.

կով կազմված բնագիրն այսօր ներկայանում է իբրև ինքնօրինակ տարրերակր մինչ այդ կենցաղավարող ընկալված թարգմանության:

Հրատարակվող մյուս միավորը (Զ) Ա. Կորնթ. ԺԱ. 27, 29-ի մեկնության մեկ պարբերությունն է, որ վկայարկված է Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւն ընդդէմ երկարնակաց» դավանարանական աշխատության մեջ²²։ Այն հունարեն բնագրի «Ὡστε ὅς ἂν ἐσθίῃ τὸν ἄρτον τοῦτον... ἀναξίως μετέχονσι τῶν προκειμένων սկիզբ և վերջ ունեցող հատվածի»²³ հայերեն թարգմանությունն է, որ բխում է Ոսկերեբանի երկի առաջմ մեկ անհայտ հայերեն ամբողջական, ինչպես երևում է, ազատ թարգմանությունից:

Հրատարակվող Ը միավորը (Գաղատ. Ե 12) ևս քաղված է Անանիա Սանահնեցու Հակաճառությունից²⁴։ Այն համապատասխանում է հունարեն բնագրի ποῦ τοῖσιν εἰσὶν οἱ τοῖμαῶντες ἀποκόπτειν ἑαυτοῦς, ...ἀλλ' ἢ κονηα προαίρεσις μόνον սկիզբ և վերջ ունեցող հատվածին²⁵։ Բնագրի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ թարգմանությունը բառացի չէ։ Հայ թարգմանիչը տեղ-տեղ ազատ է վարվել բնագրի նկատմամբ։ Սրա ամենաբնորոշ դրսևորումներից են իմաստի լրացուցիչ բացատրությունները կամ հավելումները։ Այդպիսիք են. «այսինքն՝ ի նիթոյ» «զի ոչ թէ սոքա են պատճառք շարի», «եւ յաւժարութիւնք մտաց» բառակապակցությունները։ Եթե դրանք Սանահնեցու ներմուծումները չեն, ապա հարկ է ենթադրել, որ նա իր ձեռքի տակ է ունեցել Գաղատացից թղթի մեկնության բավական ազատ մի թարգմանություն:

Թ միավորը Գաղատ. Զ 14—17-ի մեկնության հայերեն թարգմանությունն է, որի հրատարակումն իրականացվում է միակ ընդօրինակությամբ հայտնի № 993 ձեռագրի հիման վրա²⁶։ Թարգմանության սկզբից մինչև ամենայն իսարէութիւն ամտար ինչ կրանից իբրև զփոշի հողմոյ առեալ մերժիցէ ի նոցանէ» բառերը համընթաց է բնագրի սկզբից մինչև Γούτου θε ἐν αὐτοῖς ἔντος, πῶσιν, ὡσπερ κόνις, ἀπεσοφείτο τῶν τοιοῦτων ὀσμάτων ἢ ἀπάτη²⁷ բառերը։ Թարգմանության եզրամակագր («Գրէ դարձնալ եւ առ հոովմայեցիսն...») մասը բացակայում է հունարենում։ Այն, ինչպես երեւում է, թարգմանիչի կամ գրչի կատարած հավելումն է։

Ոսկերեբանի՝ Եբր. Ժ 29-ի մեկնությունից բերված Ժ միավորը, որ դարձյալ քաղված է Անանիա Սանահնեցու Հակաճառությունից²⁸, համապատասխանում է հունարեն բնագրի πῶσιν ὁμοεῖτε χεῖρονοσ... ὅθεν καὶ οὕτως ἡμαρτον պարբերությունը²⁹։

ԺԱ միավորը, որ Փիլիմոնի մեկնության հայերեն թարգմանությունն է, կազմվել է հունարեն բնագրի առանձին մասերի համակցումով։ Թարգմա-

²² ՄՄ, ձեռ. № 5618, Բ. 138բ—139ա, 6453, Բ. 40բ:

²³ Տե՛ս PG, t. 61, col. 230:

²⁴ ՄՄ, ձեռ. № 5618, Բ. 247ա, 6453, Բ. 56ա:

²⁵ Տե՛ս PG, t. 61, col. 668:

²⁶ Հմմտ. M. van Esbroeck, U. Zanetti, Le manuscrit Érévan 993. Inventaire des Pièces. REA, N. S. t. XII, 1977, p. 158:

²⁷ PG, t. 61, col. 678—682:

²⁸ ՄՄ, ձեռ. № 5618, Բ. 140բ, 6453, Բ. 41ա:

²⁹ PG, t. 63, col. 144:

նության սկզբից մինչև «...քանի պատիժ կրեաց մինչև վերացան ի նմանէ շնորհք Տեառն Տէրոյն, և մատնեցաւ դահճաց» բառերը համապատասխանում է հունարեն բնագրի Ա ճառի ա մասին³⁰: Մեկնության հայերեն թարգմանության շարունակությունը, որ սկսվում է թղթի 4-րդ տան մեկնությամբ և ավարտվում 16-րդի մեկնությամբ («Ոչ անդեն վաղվաղակի ի սկզբանն հանէ զշնորհսն... և «եղբայր» անուանելովն զհանգիտապատիւ զուգապատիութիւն ցուցանէ») համապատասխանում է հունարեն բնագրի Բ ճառի ա և բ մասերին³¹: Թղթի 17-րդ տան մեկնությամբ սկսվում է թարգմանության «Տեսէր յետ որչափ հնարից և ասպա և զմեծն դնէ, թէ՛ Որդի իմ ես... Մեծ բարութիւնք են, թէ արժան ինչ ընդ նմա գործ գործեսցուք միա[յ]նս արժանս ինչ զանձինս ուրացուք» սկիզբ և վերջ ունեցող հատվածը, որ համապատասխանում է հունարենի Գ ճառի սկզբից մինչև նույն ճառի բ մասի մէջա ձե, *ὅταν ἄξια αὐτῆς πράττωμεν, καὶ μὴ ἀναξίους ἑαυτοὺς κατασκευάζωμεν* բառերով ավարտվող սկզբի պարբերությունը³²: Թարգմանության եզրափակիչ մասը՝ «Աղաթքն խոսակցութիւն են ընդ Աստուծոյ...» բացակայում է բնագրում: Այն, հավանաբար Թ միավորի նշված հատվածի նման, թարգմանչի կամ գրչի հավելումն է: Բնագրի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ ներկա թարգմանությունը կազմվել է կամ նախապես գոյություն ունեցած հայերեն ամբողջական թարգմանության առանձին մասերի կամ էլ, հատուկ ընտրությամբ, հունարենի առանձին մասերի թարգմանությամբ և այդ մասերի համակցմամբ: Հունարենի որոշ հատվածներ կրճատված կամ զանց են առնված հայերեն թարգմանության խնդրական մասերում ևս: Պետք է նկատել, որ խմբագրված հատվածները նմանապես բնագիրը շեն վերարտադրում ձույլ ամբողջությամբ: Խմբագիր հատվածներում բացակայում են բնագրի հետևյալ պարբերությունների հայերեն թարգմանությունը. «Վասն այսորիկ ի ձեռն տալով առաւել հանդարտեցոյց [‘Օսι γὰρ περὶ ἐκείνα τὰ παιδία μάλιστα ἐκκαίμεθα... γίδον, φησίν, ὀδύνης μου]»³³ և «...զի նոքա[ւք] պատկանեսցէ զնոսս [Πῶς δὲ γέγει ἀσπάσασθαι αὐτοὺς τὸν ἐγκάταλιπὸντα αὐτόν... καὶ ταύτη ὀυσωπῶν αὐτόν πρὸς εἴην αἰτησιν]»³⁴ **Շնորհք Տեառն Յիսուսի ընդ նզովդ ձերում**»:

* * *

Ոսկերեքանի Պողոսի թղթոց մեկնության հայերեն թարգմանության նորահայտ հատվածները հրատարակվում են ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերի³⁵.

5561—ԺԲ դ.: Գրիչ, ստացող՝ Գրիգորես: Թերք. 385: Միասյուն: Բուլթրգիր:

2783—ԺԲ դ., 1409 թ.: Գրիչ՝ Գրիգոր վրդ.: Վարդան (Բ): Ստացող՝

³⁰ PG, t. 62, col. 703—705, § 1;

³¹ Անդ, col. 707—711, Բ, § 1—2;

³² Անդ, col. 713—716;

³³ Անդ, col. 710;

³⁴ Անդ, col. 710;

³⁵ Ձեռագրերի համառոտ նկարագրությունն ըստ՝ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, հտ. Ա, Երևան, 1965, հտ. Բ, 1970:

Ստեփանոս Շոտթեցի, Աննա: Հոսոփսիմ, Յովսէփ Երէց (Բ): Թերթ՝ 264: Ծանոթ. 1—219 թերթը՝ Երկայուն (1409 թ.), իսկ 220—265՝ միասուն (ԺԲ դ.): Բ մասը՝ գծվարըրնթեանելի, վնասված:

472—1229 թ.: Գրիչ՝ Մարկոս Երէց: Թերթ՝ 265: Միասուն: Բոլորգիր:

4139—1267 թ.: Հաղպատ: Գրիչ՝ Յովսէփ, Տիրացու, Գրիգոր: Թերթ՝ 489:

Միասուն: Բոլորգիր:

1324—1281 թ.: Հաղպատ: Գրիչ՝ Յոհան, Բարսեղ, Աբրահամ: Ստացող՝

Բարսեղ վրդ.: Թերթ՝ 475: Միասուն: Բոլորգիր:

1320—ԺԳ դ. (1211^ն թ.): Գրիչ Բարսեղ: Կազմող՝ Պետրոս քհյ. Ստացող՝ Պետրոս վրդ.: Թերթ՝ 397: Երկայուն: Բոլորգիր:

7431—ԺԳ դ.: Սանահին: Գրիչ՝ Գրիգորէս: Ստացող՝ Յովհաննէս առաջնորդ Սանահին: Թերթ՝ 694: Միասուն (1—22), Երկայուն (22—694): Բոլորգիր:

6120—ԺԳ դ.: Գրիչ՝ Ոհ[աննէ՞ս]: Թերթ՝ 204: Միասուն: Բոլորգիր:

1138—1347 թ.: Սիս: Գրիչ՝ Դաւիթ, Մկրտիչ դպ.: Ստացող՝ Մխիթար արքի: Թերթ՝ 421: Երկայուն: Բոլորգիր:

1879—ԺԳ դ.: Գրիչ՝ Մովսէս: Ստացող՝ Գերսամ վրդ.: Թերթ՝ 376: Միասուն: Բոլորգիր:

5618—ԺԳ դ.: Թերթ՝ 309: Միասուն: Բոլորգիր:

944—1431 թ.: Էրեղ վանք: Գրիչ՝ Յովհաննէս, Ղազար արղլք: Ստացող՝ Շնոֆոր խաթուն: Թերթ՝ 227: Միասուն: Բոլորգիր:

993—1456 թ.: Վերին Նորավան: Գրիչ՝ Մատթէոս: Մաղկող՝ Եսայի: Ստացող՝ Թադէոս, Ստեփանոս Էղբարբ: Թերթ՝ 769: Երկայուն: Բոլորգիր:

2692—1614 թ.: Գլակայ վանք: Գրիչ՝ Փիլիպպոս Բազմեցի: Ստացող՝ Մարտիրոս Բազմեցի: Թերթ՝ 335: Երկայուն: Նոտրգիր:

2691—1618—1627 թթ.: Տիւրանակերտ, Եղազարու վանք (Տարոն): Գրիչ՝ Կարապետ: Մաղկող՝ Սահակ Բաղիշեցի: Ստացող՝ Բարսեղ վրդ.: Թերթ՝ 256: Երկայուն: Բոլորգիր, նոտրգիր:

3371—1646 թ.: Կողոնիա: Գրիչ, ծաղկող՝ Գրիգոր Կողոնեցի: Թերթ՝ 386: Երկայուն: Բոլորգիր:

992—1651 թ.: Եղեւիա: Գրիչ՝ Մաղաքիա: Ստացող՝ Ոսկան Նախիչեւեանցի: Թերթ՝ 508: Երկայուն: Նոտրգիր:

941—1689 թ.: Երուսաղեմ: Գրիչ, ստացող՝ տէր Գրիգոր: Թերթ՝ 343: Երկայուն: Միասուն: Նոտրգիր:

991—1721 թ.: Կեղի: Գրիչ՝ Մելքոն Կեղեցի: Ստացող՝ Ռայիս Մարգիս Խաչախչի: Թերթ՝ 451: Երկայուն: Բոլորգիր:

1208—1739 թ.: Երուսաղեմ: Գրիչ՝ Հարութիւն Կոստանդնուպոլսեցի Ստացող՝ Յովհաննէս վարդապետ: Թերթ՝ 477: Միասուն: Նոտրգիր:

6453—1787 թ.: Էջմիածին: Ստացող՝ Սահակ վրդ. Գեղամեցի: Թերթ՝ 224: Միասուն: Նոտրգիր:

Քննական բնագրերը կազմելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով.

ա. Նախապատվութիւնը տրված է հատկապես այն բնթերթումներին, որոնք մոտիկ են հունարեն բնագրին,

հրէիցն նշանախնդրացն, [յ]իմարութիւն՝ հեթանոսաց բննողաց: Իսկ այնոցիկ, որ կոչեցան հրէից կամ հեթանոսաց՝ «Քրիստոս զարութիւն Աստուծոյ եւ Աստուծոյ իմաստութիւն նորա»^{9*}: Զարութիւն է նա, զի խափանեաց զամենայն կուռս, եւ իմաստութիւն է զարձեալ նորա, զի հաճեցաւ եւ հաւանեցոյց խաղաղութեամբ զվաչրենութիւն հեթանոսաց: Բազում է ասածոյս զարութիւն եւ հանճար, այս է, զոր կամի ասեալ. մեք ասեմք ցհրէայս, թէ՛ հաւատացէք. նորա ասեն՝ մեռեալ յարուցեք, դեւս հալածեցեք, նշանս արարեք: Մեք, փոխանակ այնորիկ, ասեմք՝ խաչեցաւ, մեռաւ, որ քարոզեն: Եւ այս բաւական է զհաւանեալսն մերժել, թող թէ զոչ հաւանել ածել: Բայց սակայն առ ինքն ձգէ, եւ ունի եւ հաղթող լինի: Գարձեալ հեթանոսք սրահանճեն ճարտարութիւն բանից, իսկ մեք նոցա զեաշն քարոզեմք: Եւ որպէս առ հրէայսն տկարութիւն թուէր, նոյնպէս եւ առ հեթանոսս [յ]իմարութիւն լեալ: Արդ, ոչ միայն ոչ տամք, զոր խնդրեն, այլ զհակառակն, զի եաշն քակտում[ն] է եւ ոչ նշան. եւ տկարութիւն, եւ զարութիւն ցուց[անէ], [յ]իմարութիւն եւ ոչ իմաստութիւն ասպացուց[անէ]: Եւ ասալսող[ս]ն ի ձեռն հակառակացն հաւանին: Զիարդ ոչից անճառելի իցէ քարոզելոյն զարութիւն. զոր արիւնակ բժիշկ զվիրաւորեալն ոչ դեղաւք, այլ վիրավորելով խոտտանայ բժշկելն եւ առ ինքն ձգել մեծի զարութենէ [է]: Որպէս կուրին արար Քրիստոս, իրաւք որ սաստկացուցանէին, ի բաց երարձ զկուրութիւն, զոր արիւնակ կաւով զկուրն բժշկեաց: Նոյնպէս եւ եաշին զաշխարհս հաւանեցոյց, որ էր յաւելուած գայթակղութեան, այսպէս եւ յարարածս գործեաց զհակառակսն ի ձեռն հակառակութեանց կազմելով. զի աւազով զծով փակեաց, տկարան զհզաւրն սանձեաց, ի ջրոյ զերկիր եղ ցնծող եւ լաժ բնութեան, ծանուն եւ խիստ ի վերա կալ պատրաստեաց, եւ ի ձեռն մարգարէին փոքր փայտիւ երկաթ վերամբարձեաց: Նոյնպէս եւ եաշին զաշխարհ[՛]ս ինքն ձգեաց: Արդ, զոր արիւնակ ջուր բառնայ զերկիր, նոյնպէս եւ՝ եաշն. ասպա ուրեմն՝ մեծի զարութեան եւ իմաստութեան ցուցք են: Արդ, զայս ամենայն զմտաւ ածե(ա)լ Պաւղոս հիացեալ ասէր. «Յիմարն Աստուծոյ իմաստնադոյն է^{10*}»⁶:

ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒՄԵՆԵՐ

Խ ո Ր Ա զ Ի Ր

A շիֆ: Խորագիրն քառ B-ի:

Բ Ե Ա զ Ի Ր

1—2 A շիֆ՝ Զի ճառ եաշին... մի վնասեցի քարոզութիւն: 2—4 B Այլ զի ի գէպ էր հեթանոսաց մտելոց զեաշն ծաղր առնել, որպէս թէ իմաստութեամբն իրեանց բնողմ կալ եւ պատերազմել՝ մխիթարելով Պաւղոս զաշակերտելսն ասէր, թէ՛ «ճառ եաշին կորուսելոցն է յիմարութիւն»: Կարծեք, ասէ ատաք ինչ լինել եւ զարմանալի զայդ իսկ բնութեան ունին իրր կորստականացն շինել ծանաթ նորա զարութեան, զի ցնորեցան եւ խելագարեցան եւ թշնամանեն եւ տաղաղան բնդ փրկութեան զկզս եւ կերակուրս զի, որ ինչ գեր ի վերոյ է քան զխորհուրդս, հաւատոց միայն կարտատանայ: Որպէս այլուր ասէ, թէ՛ հաւատովք ճանաչել զնա եւ ոչ՝ բանիւ բնութեան: Եւ ասա՛ զի մի կարծիցէ որ, թէ ես անարգեցի զիմաստութիւն, որ չեղեւ նորա զարութեան հասու: Լուարուք եւ ի Գրոց, զի եւ ի սկզբանն իսկ խոտեալ, անարգեալ է Զոգոյն զիմաստս աշխարհի, զի գրեալ է. «Կորուսից զիմաստութիւն

9* Ա Կորնթ. Ա 24:

10* Ա Կորնթ. Ա 25:

իմաստնոց»: Տես զիմաստութիւն, զի իրրեւ սասց, թէ գրեալ է. զիրացն յայտնութիւն ի վերայ բերէ եւ ասէ հարցմամբ. «ար է իմաստութիւն, որ հպարտանայր, թէ իմաստիւս ապրեցայ կամ փրկեցայ զպարտեալսն կամ բնութեամբ ուսուցի զհրէ այս կամ զհեթանոսս եւ կամ զայս իսկ կամելով ծագր անեկ զսնտոսի պարծանսն, հարցանէ. ո՞ր է Պղատոն, ո՞ր է Պիհոսն, ո՞ր է Անագաստորասն, ո՞ր է Սոկրատես, որ եւ ոչ զանձն կարացին փրկել մեծամեծ եւ կուտակական բանիւքն: Իսկ ետան ձկնորսաւքն եւ տղիտաւքն զամենայն իսկ տիեզերս որսաց ի կեանս եւ իրրեւ վկայութեանցն ազատեաց զնոսա ասելովն. «Ոչ ապարեն իմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ»: Ասէ եւ զպատճառսն զայստորիկ, զի իմաստութիւն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհի իմաստութեամբն զԱստուած» (Ա Կորնթ. Ա 21): Իմաստութիւն Աստուծոյ արարածքս են. որպէս այլուր ասէ, թէ՛ «Աներեւոյթք նորա արարածովքս իմանի» (Հաովմ. Ա 20): Մեծ են երկինք եւ անբա՛ երկիր, սքանչացիր բնդ արարիչն Վիս. Զի զէպ էր առ նոսայ... բնդ արարիչն սքանչացին: 3 Ա կրկնվում է՝ Զի որ ինչ... զխորհուրդն 4—5 Ա շի՛ զի ոչ միայն եղև... իրրեւ զոչինչ արար»: 5—6 Ե եւ զարձնալ, «Երկիրս ունի զամենայն բանիւ զարտութեան խորոյ»: Արդ, իրրեւ ոչ կամեցան այսու ճանաչել զնա հաճեցաւ Աստուած ետալի եւ թաղմամբ եւ յարութեամբ ապրեցուցանել զհաւատացեալսս, որք հստատովք ճանաչեն զնա: Եւ ի ձեռն այսր զարտութեան ապրեցան: Իսկ անհաւատն ի սնտոսիսն ապաւինելով, կորեաւ Վասն զի զայս ամենայն հրաշագործութեան խորհուրդս մարդկեղէն իմաստիւք կամեցան բնեկ եւ իմանալ: Եւ իրրեւ ոչ հասին, յիմարեցան, վասն այնորիկ ասէ, թէ՛ յիմար քարողիւն ոչ եթէ էր, այլ թուեցաւ նոցա: «Իսկ որովհետեւ հրէայք եշան հայցեն եւ հեթանոսք՝ իմաստութիւն», զայթակղութիւն են շարշարանք նորա հրէից եշանախնդրաց եւ յիմարութիւն է հեթանոսաց իմաստախնդրաց: Իսկ այնոցիկ, որ կոչեցեալն են ի հրէից եւ ի հեթանոսաց՝ Քրիստոս զարտութիւն Աստուծոյ Զի աստուածարար զարտութեամբ խափանեաց զամենայն կուտս եւ իմաստութիւն զարձնալ նորա, զի հաճեցաւ եւ հաւանեցոյց նա խաղաղութեամբ զվայրենութիւն հեթանոսաց: Եւ ի ձեռն հակառակացն յաղթեաց ամենեկուն Աստուած, բանզի ոչ մարդկային էր քարողութիւն, այլ՝ աստուածային: Արդ, յորժամ ասեմք ցհրէայն, թէ՛ հաւատացէք, խնդրեն նշանս եւ զարտութիւնս ցուցանել: Իսկ մեք ասեմք, թէ՛ խաչեցաւ եւ մեռաւ, որ քարողին: Եւ այս բաւական է զպէարսն մերժել եւ զհաւատով զարացեալսն առ ինքն ձգել եւ հաստատել: Յաղագս այնորիկ անճանաչի է զարտութիւն ետալին, որպէս թէ ալիկոծեալ նաւահանգստի ցանկալ եւ նա զմիւս կողմն խորոցն ցուցանէ եւ կամ քրժիշկ ոչ զեղովք, այլ վիրաւորելով խոստանայ ողջացուցանել, եւ այնու ձգել առ ինքն մեծի զարտութենէ է: Նոյնպէս եւ առաքեալքն ոչ ի ձեռն եշանացն, այլ իրաւքն, որ հակառակ թուէր, յաղթողք եղին: Որպէս եւ Քրիստոս զկոյրն կառովն, որ խոտազոյն խաւարն էր, երարձ զկուրտութիւն: Նոյնպէս եւ ետալին զաշխարհս հաւանեցոյց, որ է յաւելուած եւ ոչ բարձումն զայթակղութեան: Սոյնպէս ի յարարածս գործեաց, զի տկար աւագաւ զծով սանձեաց եւ զերկիր ի վերայ չրոց հաստատեաց, եւ ի ձեռն մարդարէին փոքր փայտին երկաթ ի խորոց երարձս նոյնպէս եւ ետալին զաշխարհս յինքն ձգեաց: Արդ, որպէս չորս բաննայ զերկիր, նոյնպէս եւ բաննայ զաշխարհս, որ մեծի զարտութեան եւ իմաստութեան ցոյցք, հակառակաւ հաւանեցուցանել: Արդ, զայս ամենայն զմտաւ ածեալ Պատղոս հիացեալ ասէր, թէ՛ «Յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ եւ տկարն Աստուծոյ զարագոյն է, քան զմարդիկ»: Յաղագս ետալին ասէ տկար եւ յիմար զնա, այլ ոչ եթէ յիմար էր, այլ՝ թուէր, զի առ նոցա կարծիսն պատասխանէր. զի զոր ոչ կարացին իմաստասէրքն հանճարով հաւանեցուցանել, զայն, որ թուէր յիմարութիւն, նա ուղղեաց եւ յիմարն Աստուծոյ իմաստնագոյն զտաւ, զի բնդ աշխարհս ամենայն բնեացաւ եւ զամենեկեան հզարապէս առ եւ բիրք ձեռնարկեցին շիջուցանել զխաչելոյն նշանսն: Եւ ոչ ըստ կամաց նոցին եղև: Սա աճեաց ի մեծութիւն եւ նորա կորեան, կենդանիքն բնդ մեռելոյն պատերազմելով ոչինչ զարացան, այլ յամուրթ եղին: Ասաց եթէ՛ «Յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է» եւ եցոյց, եթէ արտաքոյ բնկեցաւ իմաստութիւն մարդկան: Ի վկայութենէ Գրոց եւ յիւրից իրացն յայտ արար ի վկայութենէն, որ ասէ. «Կորուսից զիմաստութիւն իմաստնոց», եւ իրացն իւրից հարցմամբն եցոյց, եթէ՛ «ո՞ր իմաստուն, ո՞ր զպիր», եւ եցոյց, եթէ ոչ մանկան են իրքն, այլ՝ հին եւ ի վերուստ կանխաւ սպասաւորեալ եւ ասացեալ, եթէ՛ «Կորուսից զիմաստութիւն իմաստնոց»: Եւ եցոյց եթէ, յիրաի, այսորիկ եղեն, «զի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած, հաճեցաւ Աստուած քարողութեամբ յիմարութեան ապրեցուցանել: Եւ եթէ ետան անճանաչելոյ զարտութեան եւ իմաստութեան ցոյցք են, եւ եթէ յոյժ մեծագոյն է Աստուծոյ յիմարն, քան զմարդկային իմաստութիւն: Եւ զայս զարձնալ ոչ ի ձեռն վարդապետաց, այլ ի ձեռն աշակերտացն. զի տղետք կարծեցեալք խորտակեալ բա-

կեցին զամենայն ամբարտաւանութիւնս ընդդէմ գիտութեան Աստուծոյ: Փյս. եւ վասն զի ի ձեռն իմաստութեան այնորիկ... Պաւղոս յիացեալ ասէր. «Յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է»:

Ե

ՅՁՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ Ի ԿՈՐԻՔԱՅԻՈՑ ՔՂԹՈՅՆ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ՛
ԱՍՍՏԵԱԼ ՎԱՍՆ ՆՆՋԵՅԵԼՈՑ

Աղէ, ասա ինձ, ով կին դու, զի՞ ճշես եւ ընդէ՞ր վայես ի վերայ ան բոյ՛: Զի մեկնեցաւ, ասէ, յինէն, եւ այլ ոչ եւս՝ տեսանեմ զնա: Մի լար, ով կին դու, քանզի զնա ի վեր յերկինս կոշեաց Աստուած: Աղէ՞, ասա ինձ՞, եթէ տեսանէիր զայրն քո պսակ ի գլուխ եզեալ՞ եւ թագ կապեալ, լայի՞ր արդեալք. եւ ոչ երբէք: Այլ ոչ գիտեմ, ասէ, յոր՞ տեղի շոգաւ եւ կամ թէ՛ որչափ հանգիստ դտաւ՞: Է՞ր վասն շգիտես, ասա ինձ, զի եթէ՞ ուղիղ վարեցաւ եւ կամ՞ այլազգ ինչ, յայտ է, թէ ուր երթալոց է՞: Վասն այսորիկ կոծիմ, ասէ, զի մեղաւոր զնաց աստի՛: Պատճառք են այդ եւ բարուրք՞. ի կենդանութեան նորա պարտ էր՞ քեզ արտասուել, զի թերեւ կարճէիր զնա ի մեղացն: Իսկ դու աւանիկ տեսանես այժմ, զի ոչ իրաւք զանձին խնդրես եւ ոչ հանգուցելոյն՞: Ընդ այն եւս պարտ էր քեզ ուրախ լինել վասն ան բոյ, զի կարճեցաւ յառաջիկայ մեղացն՞, եւ ոչ եթէ ողբալ, այլ աւզնել զնացելոյն ոչ միայն արտասուալք, այլ՝ աղաւթիւք, պահալք եւ ողորմութեամբք, եւ տրաւք տնանկաց հաշտեցուցանել զԱստուած ընդ նմա՞: Քանզի ոչ եթէ ընդ վայր ինչ կարգեցաւ այս կամ ի գուր չիշել ի խորհուրդ աստուածային՞ պատարադին զննչեցեալսն. եւ վասն նոցա իսկ մատուցանել՞ զաղաշանս: Զի եթէ չէր վասն նոցա քառութեան, ապա եւ ոչ իսկ յիշատակեալք զնոսա ի պատարագն: Զի ոչ են՞, եթէ ընդ խաղ ինչ են, այլ Հոգոյ Սրբոյ հրամանք կատարին:

Եւ արդ, զայսոսիկ գիտելով, աւզնեցուր հանգուցելոյն, աւժանդակ եւցուր՞ զնացելոյն եւ կատարեացուր վասն նոցա յիշատակ մարմնոյ Քրիստոսի Յիսուսի: Զի եթէ զորդիսն Յորայ սրբէին՞ ողջակէզքն, որչափ եւս առաւել՝ արիւնն Քրիստոսի: Եւ արդ, մի յապաղեացուր մատուցանել վասն նոցա պատարագս՞ եւ անել ողորմութիւն: Զի բաւական է այն նոցա յազնականութիւն եւ ի մխիթարութիւն, քանզի սովոր է Աստուած այլովք այլոց ողորմել: Եւ զայս Պաւղոսի յայտ արարեալ ասէր, թէ՛ «ի բազմադէմ շնորհացն, որ ի մեզ բազմաւք պարգեւեցաւ զոհութիւն վասն ձեր՞»: Եւ արդ, մի յապաղեացուր անել յիշատակս նոցա, աւզնել զնացելոյն եւ աղաւթս մատուցանել վասն նոցա, քանզի հասարակաց առաջի ամենայն տիեզերաց կայ սրբումն՞: Վասն այսորիկ համարձակիմք վասն ամենայն ննչեցելոց

Ա Ղ Ր Յ Ո Ւ Բ Ե Ն Ե

A=Մ 2783, 92բ—93ա:

B=Մ 992, 41ա—բ:

C=Մ 991, 48ա—բ:

D=Մ 944, 26բ—27ա:

E=Մ 941, 225բ:

1* Բ Կորնթ. Ա 11:

աղաթս առնել և պատարագս մատուցանել²⁴, և մանաւանդ ընդ հայրապետացն և ընդ մարտիրոսացն յիշատակել զնրնչեցեալսն: Վասն զի ամենեքեան մի մարմին ևմք ի Քրիստոս և անդամք յանդամոց նորա և ի նա յաւղիմք և կատարիմք, և նա է թողութիւն մեղաց մերոց, և նովաւ ժառանգիմք²⁵ զարքայութիւն երկնից, և նմա փառք յաւիտեանս²⁶:

ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Խ Ն Ր Ա Ղ Ի Ր

BD նորին Յոհաննու: C նորին Յոհաննու ասացեալ: E Յովհաննու Ոսկերերանին՝ ի Կորնթացոց թղթոյն մեկնութենէ: Խորագիրն ըստ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի № 1ա (268բ) ձեռագրի (Ն. Եպս. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Ա. Երուսաղեմ, 1966, էջ 6):

Բ Ն Ա Ղ Ի Ր

DE և ողողանիս վասն մահուան առն քո (E չիք՝ վասն մահուան) փխ և քնդէ՞ր... առն քո: 2 E չիք՝ և ևս: 3 DE այլ (E այլ գնա) յերկինս կոչեաց Աստուած փխ Մի յար... Աղէ: 4 D չիք՝ ինձ: 5 ABC եղեալ փխ եղեալ: 6 E թէ յոր: 7 DE չիք՝ և կամ... հանգիստ գտաւ: 8 E թէ: 9 E կամ թէ (չիք՝ և): 10 E յայանի է, ոչ երթալոցն է: 11 E չիք՝ աստի: 12 C բարբ: E աչգորիկ բարւորք էր փխ այդ և բարուբբ: 13 E չիք՝ պարտ էր: 14 C տեսանիս: E չիք՝ իսկ դու աւանիկ... յառաջիկայ մեղացն: 16 E ընդ նոսայ զԱստուած: 18 B մատուցանել իսկ: 19 B թէ փխ ևն: 20 D չիք՝ հանգուցելոյն, աւժանդակեացուբ: 21 D սրբեցին: 22 C պատարագ: 23 ABCE չիք՝ ևս զայս Պաւղոսի... կայ սրբումն: 24 D ամենայն տիեզերաց աղաթս մատուցանել փխ աղաթս առնել... մատուցանել: 25 C ժառանգիմք: 17—26 E ի զուր ինչ յիշեմք յաստուածային խորհուրդն զանցեալսն, զոր վասն նոցա մատուցանեմք զաղաչանս զառն առաջի կայ, որ երարձ զմեզս աշխարհի և ոչ զարձեալ ընդունայն ինչ, որ առաջի սեղանոյն կայ և զահագին և զսոսկայի խորհուրդն կատարի, ոչէ վասն ամենեցուն ի Քրիստոս ննչեցելոցն նայ և յիշատակս նոցա կատարէ: և արդ, մի յապաղեցուբ մատուցանել պատարագս և առնել ողորմութիւնս, զի բաւական է այս նոցա յազնականութիւն և մխիթարութիւնք, քանզի սովոր է Աստուած աչովք այլոյ ազնել և ողորմել. փառք յաւիտեան փխ. յիշել ի խորհուրդ աստուածային... և նմա փառք յաւիտեանս:

Զ

[ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ Ի ԿՈՐՆԹԱՅԻՈՅ ԹՂԹՈՅՆ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ]

«Որ ուտէ և ըմպէ զբաժակն Տեառն անարժանութեամբ, պարտական կղիցի մարմնոյ և արեան Տեառն*»: Ընդէր ասէ զի զարարինակ, որ յայնժամ խոցեցինն, ոչ կերիցեն, այլ զի հեղցեն անարգարար, նոյնպէս և որք աստ անարժանութեամբ մերձենան, ոչինչ շահին, այլ դատապարտին¹: Եւ ոչ, զի շնորհաւք տուաւ² մեզ, անարգանաւք ուտիցեմք անսրբարար:

* Ա. Կորնթ. ԺԱ. 27, 29:

Ա Ղ Ր Յ Ո Ւ Ր Ն Ե Ր

A=N 5618, 138բ—139ա:

B=N 6453, 40բ:

Խորագիրն ըստ բովանդակութեան:

Բ Ն Ա Ղ Ի Ր:

1 A դատապարտ են: 2 B տուան:

Է

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ ՊԱՏՃԱԾԻ ԵՐԿՐՈՐԳ ԿՈՐՆԹԱՅԻՈՅՆ

Պարտ եւ պատշաճ է ի սկիզբն թղթիս¹ ի քնին² մտանել, նախ^{2*} թէ ընդէ՞ր բնաւ³ Երկրորդ թուղթն^{3*} զնէ⁴ Առաջնովն եւ կամ ընդէ՞ր սկիզբն արկեալ⁵ պատմէ⁶ ի գթութեանցն Աստուծոյ եւ ի մխիթարութեանցն⁷: Վասն զի ասաց յԱռաջնում թղթին⁸. «Եկից⁹ առ ձեզ եւ գիտացից¹⁰ ոչ զքանս հպարտացելոցն, այլ՝ զզարութիւնս^{1*}»: Դարձեալ¹¹ ի^{11*} կատարածի անդ հանդարտագոյնս¹³ զնոյնս խոստացաւ¹⁴. «Եկից առ ձեզ, յորժամ ի Մակեդոնիայ¹⁵ անցանիցեմ եւ յամեցից առ ձեզ¹⁶, եւ եթէ դիպիցէ¹⁷ ձմերկացից առ ձեզ^{2*}»¹⁸: Արդ, զկնի աշտպիսի աւետիս արձակելոյ, էանց բազում ժամանակ գալոս նորա առ նոսա¹⁹, զի կալաւ զնա Հոգին յայլ²⁰ բազումս իրս ի բազմապատիկս պատուականագոյնս²¹: Վասն որոյ հարկ եղև²² Երկրորդ թղթոյ²³, այլ ոչ լինէր պէտք, եթէ սակաւագոյն էր յամեալ²⁴: Դարձեալ ոչ^{24*} վասն այսորիկ միայն, այլ զի լաւագոյն²⁵ եղեն յԱռաջին թղթին յանդիմանութենէն²⁶ եւ պոռնկացեալն²⁷ անարգեցիին²⁸, յորոյ վերա գառաջինն միաբանեալ մեծամտեցին, զայն բովանդակ անարգեցին եւ արհամարհեցին, եւ զայս իսկ յայտնեաց եւ ասէ. «Զի եթէ տրամեցոյց որ զիս, ասէ, ոչ եթէ զիս տրամեցոյց, այլ ի փոքրիշատէ երեւեցայց ամենեցուն ձեզ, շատ է այնպիսոյն պատուհասն ըստգիւտ լինել ի բազմաց անտի^{3*}»: Եւ դարձեալ յառաջ մատուցեալ զնոյն նշմարէ եւ ասէ. «Ահաւասիկ այն, որ ըստ աստուածութեան տրամեցարուք դուք, որչափ ինչ փոյթ գործեաց ի ձեզ, որչափ աշարջութեամբ տալ պատասխանի, որչափ առնել տրամութիւն, որչափ ի վերա կացուցանել, որչափ նախանձ նախանձեցուցանել, որչափ իրաւաց զվրեժ խնդրել յամենայնի^{4*}»: Զանձինս ձեր ընծայեցուցէք սրբեալս եւ արգարացեալս եւ ժողովն իսկ, որ հրամայեցաւ, փութով ժողովեցէք²⁹: Վասն այսորիկ ասէ. «Գիտեմ զչաւժարութիւնդ ձեր, որ³⁰ վասն ձեր պարծեցեալ³¹ եմ ի մէջ³² Մակեդոնացւոց, եթէ Աքսեցիքն ի հերուն հետե պատրաստեալ^{5*} են»³³ եւ զՏիտոս, որ ձեզն առաքեցի³⁴, ամենայն գթութեամբ ընկալայք³⁵: Եւ այնու իսկ դարձեալ ցուցանէ ու ասէ, եթէ «առաւել իմն գոյթ գոյր նորա առ ձեզ առ ի յիշատակել զհնազանդութիւն ձեր ամենեցուն որպէս զիարդ ահիւ եւ երկիւղիւ ընկալարուք զնա^{6*}»³⁶: Վասն այսր ամենայնի գրէ նա զԵրկրորդ թուղթն, զի պարտ եւ պատշաճ էր որպէս զիարդ մինչդեռ մեղանշէինն մեղադիր լինէր, սոյնպէս իբրեւ ուղղէին եւ դառնային ընդունելն եւ գովելն: Վասն այսորիկ եւ ոչ ընդ ամենայն թուղթսն սաստէ եւեթ, բայց

Ա զ ր յ ու ռ է ն ր

A=N 2692, 109p—110p:

B=N 2691, 88p—89ա:

C=N 1879, 331p—333ա:

D=N 1208, 209p—90ա:

1* Հմմտ Ա Կորնթ. Գ 19:

2* Ա Կորնթ. ժ2 6:

3* Բ Կորնթ. Բ 5—6:

4* Բ Կորնթ. է 11:

5* Բ Կորնթ. Բ 2:

6* Բ Կորնթ. է 15:

միայն սակաւիկ ինչ մերձ ի վախճանն, քանզի էին ոմանք առ նոսա ի հրէից անաի հաւատացեալք եւ մեծամտեալք, որք ամբաստանէին զՊաղոսի³⁷, իբրեւ զամբարհաւաճ³⁸ եւ զանպիտան³⁹, քանզի ասէին. բանք⁴⁰ նորա ծանունք⁴¹, բայց տեսիլ նորա նուազ, բանն⁴¹ խոտան եւ արհամարհեալ^{7*} ⁴², այսինքն՝ զոր ասէին. յորժամ ի մէջ մեր լինի, ոչքնշուկ ի վերա նստի նորա, այս է, զոր ասէ. «տեսիլ մարմնոյ նորա տկար եւ անարգ», այլ յորժամ քստ մեզ անդր ելանէ, մեծամեծս բարբառի հպարտացեալ թղթաւքն իւրովք, այն է, որ ասէ «թուղթքն ծանրածանր» զայն ցուցանէ: Դարձեալ, զի հրէին յանձինս իւրեանց պաճուճեալք եւ կեղծաւորէին երեւցուցեալ զանձինս իւրեանց⁴³. մեք ոչինչ յումեքէ առաք: Վասն այսորիկ ակնարկէ սակաւ մի յասել անդր, եթէ՝ «որով պարծեսցին նորա, զտղին այնպէս քաջ որպէս մեքն^{8*}»⁴⁴: Դարձեալ յետ այնորիկ, քանզի եւ վասն բանին՝ ճշմարտութեան ոմանք հպարտանային, նա զինքն ի տգէտս իշուցանէր, եւ յայտ առնէր, եթէ ոչ զտգէտութիւն միայն համարէր ինչ ամաթ, այլ եւ զճշմարտութիւն նոցա յարզի շառնէր: Իսկ արդ, որովհետեւ մարթ էր անդրին եւ անդ զնոցա բազմաց զմիտս հաճել⁴⁵, նա յիւրում թղթի անդր զրեալ է զնոսա: Վասն որոյ⁴⁶ ուղղութիւն եկին: Դարձեալ զհրէարեն ժպրհութիւն նոցա անարգէ եւ անգոսնէ, զի տարածամ խրատելն յամառէին, ապա փոքր ի շատէ ի նմին թղթի զանպատուհասն պատուհասէ⁴⁷:

Արդ, զարութիւն թղթոյս, որչափ պարտ եւ պատշաճ էր կարճ ի կարճոյ⁴⁸ ցուցանել այսպէս թուեցաւ ինձ, թէ իցէ⁴⁹: Բայց պարտ է զսկիզբն թղթոյս առաջի առնուլ եւ, յետ սովորութեան ողջունի նորա, ասել, եթէ բնդէր այնպէս սկսաւ ի գթութեանցն Աստուծոյ: Նախ եւ զայն եւս ասել, զիարդ եւ ի սկզբան անդ զնել, եթէ բնդէր բնաւ զՏիմոթէոս առանձինն իւր համեմատեցէ⁵⁰. «Պաղոսս առաքեալ Յիսուսի Քրիստոսի եւ Տիմոթէոս եղբայր^{9*}»⁵¹:

ՏԱՐԸՆԹԵՐՏՈՒՄՆԵՐ

ԽՈՐԱԳԻՐ

D Յոհաննու Ոսկերիքների Պատճառ Բ Կորնթայոց: Անթիլիաս N 26, 63բ. Ոսկերիքներն Յովհաննու (Ա. վրդ. Դանիելյան, Մայր ցուցակ, էջ 185):

ԲՆԱԳԻՐ

1 ABD չիք՝ ի սկիզբն թղթիս: 2 Անթիլիաս BD ինքնին վիս ի բնին: 3ա C չիք՝ նախ: 3 C չիք՝ բնաւ: 3ա D թղթէ: 4 ABCD չիք՝ զնէ: 4ա D առ Առաջնոյն: 5 ABD արարեալ վիս արկեալ: 6 C կարգէ վիս պատմէ: 7 AB չիք՝ եւ ի միթարութեանցն: 8 ABD Արդ, բնդէր երկրորդ թուղթն զնէ առ Առաջնոյն, ասացուր: Եւ զի ասաց ասէ վիս Վասն զի... թղթին: 9 AB եկիցես: 10 AB ի միտ առից վիս զիտացից: 11 C եւ ի վիս դարձեալ: 12 ABD առ վիս ի: 13 C թղթին վիս անդ հանդարտագոյնս: 14 ABD խաւսեցաւ վիս խոսացաւ: 15 ABD ի ժամանակի իբրեւ ի կողմանս Մակեդոնացոց: 16 ABD այլ առ ձեզ երեկացից վիս յամեցից առ ձեզ: 17—18 C չիք՝ եւ եթէ ...առ ձեզ: 18—19 AB բազում ժամանակ անցեալ բնդ մէջ յամեաց (D յամեալ) եւ յաղաղեցաւ վիս զկնի այսպիսի աւեախ... առ նոցա: 20 ABD ի վիս յայլ: 21 C չիք՝ ի բազմապատիկս պատուականագոյնս: 22 AB այսորիկ պէտք եղեն վիս Վասն որոյ հարկ եղև: 23 C Թուղթ զրեալ վիս երկրորդ թղթոյ: 23—24 A չիք՝ այլ ոչ լինէր... յամեալ: 24ա C եւ ոչ: 25—26 ABD չիք՝ լաւագոյն եղեն... յանդիմանութեանէն: 27 C պոռնկեալն: 28 AB

7* Բ Կորնթ. Ժ 10:

8* Բ Կորնթ. ԺԱ 12:

9* Բ Կորնթ. Ա 1:

չի՛ք անարգեցին: 28—35 C անարգեցին խստագոյն: Վասն այնորիկ եւ զՏիտոս ի բաշաւ-
 լութիւնն եւ ի մխիթարութիւնն նոցա յղեաց: Իսկ իբրեւ դարձաւ նա ի նոցանէ եւ պատմեաց
 զհոգեւոր միարանութիւնն նոցա, զուարթացեալ Պաւղոսս զրեաց առ նոսա զԵրկրորդ թուղթն,
 զորս եւ զոհանալով շնորհակալ լինի, թէ՛ իբրեւ եկն Տիտոս եւ պատմեաց մեզ զանձուկն
 ձերոյ ի մեզ եւ զողբումն ձեր, որ ըստ Աստուծոյն տրամեցարուք, եւ թէ՛ որչափ փոյթ գոր-
 ծեաց ի մեզ Առաջին թուղթն, որչափ աշարջութեամբ տալ պատասխանի, ահ եւ սէր ի մեզ
 ցուցանել, որչափ դուք առ մեզ, որչափ նախանձ բարեաց եւ վրեժ ի թշնամեաց: Յամենայնի
 ցուցեալ զանձինս ձեր սուրբս լինել, եւ զժողով փութապէս ժողովեցայք, զոր գիտացեալ իմ
 վասն ձեր պարծեցեալ եմ ի մէջ Մակեդոնացւոցն: եւ զՏիտոս, որ զմեզ առաքեցի, բազում
 է զուրբ նորա առ մեզ, բանդի յիշեցուցանէր մեզ զձեր հնազանդութիւնն, թէ՛ որպէս ընկալայք
 զնա: Փխ. յորոյ վերա դառաջինն միարանեալ... զթութեամբ ընկալայք: 29—30 C չի՛ք վասն
 այսորիկ ասէ... ձեր, որ: 31 AB պարծէ: 32 ABD կողմանս փխ. ի մէջ: 33 C չի՛ք էթէ Աբաե-
 ցիքն... պատրաստեալ են: 34 AB առաքեալ էր: 35—36 C Բազում է զուրբ նորա առ մեզ փխ.
 եւ այնու իսկ դարձեալ... ընկալարուք զնա: 36—37 C եւ դարձեալ ի բազում զոհանալն ասէր.
 «ոչ զզբանամ ի տրամեցուցանելն, որ զայսչափ զանձս բարեաց ուղղեաց մեզ»: Վասն այսր
 ամենայնի կարեւոր էր զրեալ առ նոսա Երկրորդ թուղթ եւ զովէ զնոսա յասելն. «Ի սրտի
 իմում կեայք, ի կեալ եւ ի մեռանել ընդ մեզ», եւ թէ՛ «բազում համարձակութիւն է ինձ
 առ մեզ, եւ բազում պարծանք են ինձ վասն ձեր, եւ թէ՛ «չի եմ մխիթարութեամբ: Զի
 թէ՛ պէտ արտաքոյ՝ մարտք եւ ի ներքոյ՝ արհաւիրք, այլ, ի զայն Տիտոսի, լցայ խնդութեամբ,
 որ թէ՛ պէտ եւ յառաջնում զրեցի եւ առ մեզ ոչ վասն այնր, որ զրկեացն կամ զրկեցաւ, այլ
 վասն յայտնելոյ զփոյթ հնազանդութեանն ձերոյ: եւ դարձեալ յայն սակս զրեցի, զի մի յոր-
 ժամ գայցեմ հաշիւս լինիցին եւ տրամութիւն կրիցեմ ի մէջ: եւ թէ՛ զԱռաջինն ի նեղութեանն
 սրտի զրեցի առ մեզ ոչ վասն տրամութեան, այլ զի հոգարարութեան սերն իմասցիք: եւ
 թէ՛ «որ զիս տրամեցուց ոչ եղև տրամեցուց ոչ եղև տրամութիւնն իսպառ, այլ զի մի ծանր
 երեւեցայց. շատ է այնպիսոյն պատուհան, որ ի բազմացն է»: Արդ, ազալեմ զմեզ շնորհել
 նմա եւ մխիթարել, զի մի նա ընկղմիցի եւ մի մեք զրկիցիմք ի սատանայէ, բանդի չէ որ
 անտեղեակ խորհրդոց նորա: Գրեաց եւ վասն տրոց առատութեան առ սուրբսն, յորս եւ
 բազում զովութիւն անէ այսպէս եւ յամենայն թուղթսն ոչ միայն սաստիւ, այլ եւ զթած սի-
 բով խաւի: Ի վճարման թղթիս ասէ եւ վասն սուտ առաքելոցն: Քանզի էին ոմանք ի նոցանէ
 հպարտացեալք եւ մեծամտեալք, որ բամբասէին զՊաւղոսս Փխ. վասն այսր ամենայնի զրէ
 նա... որք ամբաստանէին Պաւղոսսի: 38 A զամբահաւան: C զամպարհաւան: 39 C չի՛ք զան-
 պիտան: 40 AB բանք փխ. թուղթ: 41 AB ծանրարանք փխ. ծանուց: 42 ABD տեսիլ յան-
 դիմանութեան նորա անարգ փխ. տեսիլ նորա նուազ, (D+) բանն խոտան եւ արհամար-
 հեալ: 42—47C եւ դարձեալ, թէ՛ յորժամ ի մէջ մեր լինի, իբրեւ զոչինչ մի է եւ, յորժամ
 հեռանայ, հպարտանայ թղթովքն մեծամեծս բարբառելով, որով զմիտս սաստին, ցուցեալ է.
 ազալեմ միմիայն ի հեռուստ, այլ զի ի մատուստ համարձակիցիմ: Դարձեալ առ կեղծաու-
 րեալսն բանիք, եւ առ ընչիցն ազահութիւնն թաքնարար անելով ի յերեւելիսս անինչս երե-
 փիլ, յաղագս որոյ եւ ասեն. «հրաժարեցէք ի զազանեաց ամալթոյն» եւ թէ՛ որ յոլով պար-
 ծին, եւ նորա իբրեւ զմեզ զտանիցին»: եւ վասն բանիցն ճշմարտութեանն, որով նորա հպար-
 տանային, ասէ. «Ոչ մարմնեղէն իմաստութեամբ շոքեցաց յաշխարհի, այլ՝ շնորհարն Աստու-
 ծոյ»: եւ զինքն առ ազատս զնէ՛ յասելն, զի տգիտ եմ բանիւ, այլ՝ ոչ գիտութեամբ», որոց
 զրէթէ զնոսա զովէ, եւ զինքն խոնարհս ցուցանէ: Վասն այսր ամենայնի պարտ է աշակեր-
 տաց նորա զպատիւ նորա բարձրացուցանել եւ հակառակացն՝ բերանս կարկել: Որպէս եւ ասէր.
 «Ինձ պարտ էր ի մէջ վկայութիւն անուոյ, զի ոչինչ զզակաս գտայ, քան զ՛առ առաքելայսն:
 Զնոսա զովէ եւ զհրէարեն ժպրհութիւնն անարգէ: Վասն աշակերտացն զողայ յասելն. «Գուցէ,
 որպէս ասն խաբեաց զեւայ, նոյնպէս եւ ձեր միտք լինիցին ի նոցա խորամանկ բանիցն,
 եւ ապականին ի միամտութեանն, որ ի Քրիստոս: Այսու զպատուհանն նոցա պատուաստէ
 եւ զանձն յարգէ, թէ՛ «Ոչ իշխեմք կշռել զանձինս մեր նոցա, որք զանձինս իւրեանց մեզ
 ընծայեցուցանեն: Զի թէ՛ նորա այլ Քրիստոս բարոզէին, զոր մեք ոչ բարոզեցար, բարի
 էր զմերն խոտել: Իսկ թէ՛ մեք տուար զհոգին եւ նորա հանին, մեք շատար ինչս եւ նորա
 տոհմ. այնպիսիքն սուտ առաքեալք եւ նենգաւոր մշակք: եւ ապա զանձին ցուցեալ առա-
 լելութիւն ազգաւ եւ պաշտամամբք զվշտաց եւ զնեղութեանց պատմէ եւ զայ ի տեսիլն եւ ի
 յայտնութիւնն: Այսու զնոցա ամբարհաւանութիւնն զազարեցուցեալ եւ զաշակերտան հաստատեաց
 կալ ի հաւատս ճշմարտութեան: Փխ. այսինքն՝ զոր ասէին. յորժամ ի մէջ մեր... զանպատու-
 հասէ: 43 B իբրոց: 44 A քաջ արա մարն փխ. քաջ որպէս մեքն: 45 AB հանեալ: 46 A այսո-

րիկ փխ. որոյ: 48 C շի՛՛ք՝ որչափ պարտ... կարճոյ: 49 C շի՛՛ք՝ այսպէս թուէցաւ... իցէ: 49—50 A: Բայց պարտ է յսկիզբն երթալ եւ տեսանել, թէ բնդէր իսկ բնաւ գրեաց զթուղթս եւ կամ զՏիմոթէոս իւր համեմատ եղ յասելն փխ. նախ եւ զայն եւս ասել... իւր համեմատեացէ: 50—51 ABD շի՛՛ք՝ «Պաւղոս ասարեալ... Տիմոթէոս եղբայրս»:

Ը

[ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ Ի ԳԱՂԱՏԱՅԻՈՅ ԹՂԹՈՅՆ (Ե 12) ՄԵԿՆՈՒԹԵՆԷ]

Եւ արդ, ուր իցին, որ յանդգնեցան անձամբ զանձանց¹ հատանել զծննդական զսերմունսն եւ զայսպիսի անէծս բնդունին², եւ զԱստուծոյ³ արարչութիւն խոտեցին եւ մանիքեցոցն⁴ գործակից լինին. զի նորա զմարմինն վնասակար եւ նենդիշ տանն եւ ի հիւզղէ իմն շարէ, այսինքն՝ ի նիւթոյ: Եւ սորայ⁵ արդեամբք այսպէս՝ զծննդակ կրանից տան || պատճառս, զի, իբրեւ թշնամի եւ զնենդիշ, խափանեն զսերմանական⁶ զարութիւնս, || զոր Աստուած ի բնութեանս հաստատեաց: Թէ այսպէս իցէ, ապա պարտ է զակն եւ զականջն եւ զլեզու եւ զունշս հատանել, որ է կատարեալ ամբարշտութիւն, զի ոչ եթէ սորայ են պատճառք շարի, այլ՝ կամք շարք եւ յաւժարութիւնք⁷ մտաց:

Ա Ղ Ր Յ Ո Ւ Բ Ն Ե Ր

A = № 5618, 247ա—բ:

B = № 6453, 56ա:

ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Խորագիրն բառ բովանդակութեան:

Բ Ն Ա Ղ Ի Ր

1 B յանձանց: 2 B բնդունել: 3 B Աստուծոյ: 4 B մանիքեցոց: 5 B սորայ: 6 A զսերմանական: 7 B յաւժարութիւն:

Թ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊԱԼԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ԳԱՂԱՏԱՅԻՈՅ ԹՂԹՈՅՆ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ

«Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի Խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի^{1*}»: Նա աւանիկ իբրն նախատանաց թուի, այլ՝ աշխարհի եւ անհաւատից, իսկ երկնի եւ հավատացելոց՝ փառք եւ պարծանք. որպէս աղքատութիւն բազմաց ծաղր եւ նախատինք են, այլ մեզ՝ պարծանք եւ բարձրութեան պատճառք: Այսպէս եւ Խաչն փառք եւ պարծանք են, զի յորժամ Տէրն եւ Աստուածն ճշմարիտ ոչ ամաւթ համարեցաւ վասն մեր զժառային կեր-

1* Գաղատ. 2 14:

Ա Ղ Ր Յ Ո Ւ Բ Ն Ե Ր

№ 993, 622ա—բ:

պարանս եւ զշարշարանս Խաչին յանձն առնուլ եւ անարդիլ, մի եւ մեր ամաթ համարեսցուք զնորա զանշափ մարդասիրութիւն: Այդ, շասաց, թէ՛ ես պարծիմ ալլով իւրք եւ կամ թէ՛ չկամիմ պարծել, այլ թէ՛ «քով լիցի», եւ այսու վճռաւ ցուցանէ յորպիսի շարեաց զերծեալ եւ զԱստուծոյ ազնականութիւն զարավիդն կոչեսցէ ուղղել զիրան: Եւ ասէ, ինձ մի լիցի ի թրւ փատութիւն կամ ի մարմնաւոր հաճութիւն մարդկան պարծել, որպէս նոքայն, այլ՝ ի Խաչն Քրիստոսի, այսինքն՝ ի շարշարանսն, ի մահն, որով փրկեցարն: Զի որպէս որ բանտարդել կալանաւոր, որ զթագաւորն տեսանիցէ եկեալ հասեալ ի բանան եւ զկալանաւորսն արձակիցէ, բերկրի եւ ուրախանայ: Նմանապէս եւ ես պարծիմ իմով աշատութեամբս, «որով ինձ աշխարհս ի Խաչ ելեալ է եւ ես՝ աշխահի»: «Աշխարհ» այժմ ոչ զերկին եւ զերկիր ասէ, այլ՝ զաշխարհական իրս. զգովութիւնս ի մարդկանէ, զսպասաւորութիւնս, զփառս, զընչեղութիւնս, այսոքիկ, ասէ, ինձ մեռեալ եղին: Կրկին, ասէ, զմեռելութիւն այն ամենայն, ասէ, ինձ մեռեալ է եւ ես՝ նոցա, զի ոչ նոքա զիս ըմբռնել կարեն եւ ունել, քանզի մի անգամ իսկ մեռան ինձ, եւ ոչ ես ինչ ցանկանամ նոցա, քանզի եւ ես մեռեալ եմ նոցա. չիք ինչ երանելի քան զայնպիսի մեռելութիւն: Զի ոչ թլփատութիւն ինչ է: Մեծ է Խաչին զարութիւն, զի ոչ միայն զաշխարհիս իրս մեռեալ առնէ, այլ քան զամենայն հիւանդութիւնսն զեր ի վերոյ կացուցանէ զհնազանդեալսն: Զի ասէ. «ոչ թլփատութիւն ազնէ եւ ոչ անթլփատութիւն վնասէ, այլ՝ նորս արարած^{2*}», այսինքն՝ նոր առաքինութիւնքն երկոցունց բաւական եղին հնոց եւ նորոց եղելոցս, զի ոգիքն մեր մեղաւք հնացեալ, յանկարծակի ի միում ժամու յաւազանին նորոգեցան, զի երկինք եւ երկիր եւ ամենայն արարածք եւ մեր մարմինքս յանեղծութիւն փոխեսցին: Եւ ոչինչ այնուհետեւ պիտանի է. թլփատութիւն առ Քրիստոսի զարութեամբն, եւ «որ մի անգամ այսմ կանովնի միարան լինին^{3*}»: Ասէ զնոր առաքինութիւն ստացիր եւ զհաւատս փոխման յանապականութիւն: «Եւ որ այսր կանովնի զհետ երթան ի խաղաղութիւն եւ ի մարդասիրութիւն^{4*}», Աստուծոյ վայելին եւ զաստուածատես անուն ժառանգեն: Եւ որ զսոցին հակառակս իմանայցեն եւ կամ գործիցեն, թէպէտ եւ յազգէն իցեն ծնեալ եւ զնոյն անուն կոչիցեն յորջորջմամբն, յամենեքեան իսկ տարագիր լինիցին՝ ի թողութենէ եւ յամենայն պարգեացն զրկեալք:

«Այսուհետեւ աշխատ որ զիս մի արասցէ^{5*}»: Ոչ որպէս աշխատեալ որ եւ ձանձրացեալ ասիցէ զայս, այլ յորդորէ զհեղգութիւն մտաց նոցա եւ հաստատէ զարէնսն երկիւղ արկանելովն, զի նա որ յամենայնի զամենայն հնարս շարշարանաց հնարէր խնդրել վասն աշակերտացն փրկութեան, զիա՞րդ լքանէր, որ ասէրն. «թէրես տացէ նոցա Աստուած գիտութիւն ճշմարտութեան^{6*}»: Է՞ր վասն ձանձրանալոյ ասէր զայսպիսի բանս. այլ զայս կամի ուղղել, թէ՛ մի լինիցի ձեզ այլ համարձակ խախտել զարէնսն, զոր եղի եւ հաստատեցի ես ձեզ, այլ ի նոյն հաստատուն կալ անշարժելի: «Զի

2* Գաղատ. 2 15:

3* Գաղատ. 2 16:

4* Անդ:

5* Գաղատ. 2 17:

6* Բ Տիմոթ. Բ 25—26:

ևս զշարշարանսն Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ^{7*}»: Ոչ ասաց, եթէ ունիմ զշարշարանսն Տեառն ի մարմինս, այլ՝ «կրեմ»: Որպէս զաւրաւոր որ արժանի նշանակաւքն պարծիցի՝ կրելով առաջի նմանապէս և դրաւշակիրքայսպէս և ևս վիրաւքս պարծիմ և ցնծամ և, քան զամենայն բանս և խաւսս, վկայս իմոց հաստատուն գնացիցս զփորձութիւն և զվիշտ և զվերս իմ իբրեւ և մեծ նշանակ յաղթութեան տարեալ ցուցանեմ: Եւ եթէ որ կամեսցի զինքն լսել և զիմոց մտացս զշափ և զհանդէս առնուլ, ի վերսս հայեսցի զհարուածս նշմարեսցէ: Եւ արդեամբքն իսկ քան բանիւ և գրով առնուցու զհանդէս:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում^{8*}»: Վերջին բանիւս զամենայն առաջինսն կնքեաց, զի շասաց լոկ, թէ՛ «ընդ ձեզ», որպէս և այլոցն, այլ թէ՛ «ընդ ոգւոյդ ձերում». զի մերժեաց յամենայն մարմնաւոր իրաց և զբարեբարութիւն Աստուծոյ և զշնորհսն յիշեցուցանէ, յորում վայելիացն, որով և հեռացան ի հրէական մուրրութենէն և ապա առնել արժանաւորս զհոգին ընդունել ոչ ըստ արինացն աղքատութեան, այլ ըստ հաւատոցն արդարութեան, զի և առնուլ կարիցեն և ունել: Վասն այնորիկ զխրատն յաղաթից զէմս յարդարեաց և զշնորհաց և զհոգւոյն յուշ արարեալ: Ապա և եղբարս կոշեաց ողջունին և ազաշեաց զԱստուած, զի միշտ նորիմբք վայելիցեն և կրկին զգուշութեամբ զգուշացաւ նոցա, զի և ամէնն յաղաթից կարգի է. պահել զնոսա հաստատուն ի շնորհսն, զի յորժամ նա բնակիցէ ի նոսա ամենեւին ամենայն խաբէութիւն աւտար ինչ կրանից, իբրեւ զփոշի հոգմոյ, առեալ մերժիցէ ի նոցանէ: Գրէ դարձեալ և առ Հոովմայեցիսն թէ՛ «Եւ ևս ոչ ամաթ ինչ համարիմ զԱւետարանն, քանզի զաւրութիւն Աստուծոյ է ի փրկութիւն ամենայն հաւատացելոց^{9*}»: Սոյնպէս և դու. եթէ լսիցես յումեքէ, եթէ՛ դու խաշելո՞ցն երկիր պագանիցես, մի ամաշեսցես և մի ի վայր կորացուցես զերեսս քո, այլ զուարճացիր և բերկրեա, համարձակ աշաբ և բարձրագոյն երեսաբ յանձն առ զխոստովանութիւն և աւա թէ՛ ոչ ամաթ ինչ համարիմ զնաչն Քրիստոսի, քանզի զաւրութիւն Աստուծոյ է՝ ի փրկութիւն ի նա հաւատացելոց:

7* Պաղատ. 2 17:

8* Պաղատ. 2 18:

9* Հոովմ. Ա 16:

Ժ

[ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ Ի ԵՐԲԱՅԵՏԻՈՅ ԹՂԹՈՅՆ (Ժ 29) ՄԵԿՆՈՒԹԵՆԷ]

Որչափ ևս առաւել պատժոց արժանի՛ են, որք² զՈրդին Աստուծոյ առ ռան հարկանեն և զարին նորոյ ուխտին խառնակ համարեցան և զիարդ հարկանիցէ որ առ ռան³ զՈրդին Աստուծոյ, յորժամ խորհրդոյն⁴ ահագին հաղորդի և յետոյ ի մեղս անկանիցի⁵:

Ա Ղ Ր Յ Ո Ւ Ե Ն Ե Ր

A=Մ 5618, 140բ:

B=Մ 6453, 41ա:

ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Խորագիրն ըստ բովանդակո քյան:

Բ Ն ա գ ի ր

1 A արժանիք: 2B որ: 3 B չի՛ք՝ առ ռան: 4 B խորհրդոցն: 5 B անկանիցին:

ԺԱ.

[ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՓԻՒՄՈՆԻ ԹՂԹՈՅԵՆ]

«Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի եւ Տիմոթէոս եղբնայր^{1*}»: Վասն ծառայից առ Տէր (...): Այսրէն ի սկզբանս վաղվաղակի ցածուցանէ՝ զպատմութիւն եւ շտա անմտութեամբ համարել զանարգութիւն: «Կապեալ» զանձն կոչելով՝ բրբրէ զմիտան նորա, եւ սա իշուցանէ եւ որ ինչ անց համարել զկեանս (աստ)իս, զի թէ կապանաւքն շին ամաթ վասն Քրիստոսի, այլ եւ՝ պարծանք, եւ, որչափ եւս՝ ծառայութիւն, թէպէտ եւ յանցաւոր գտանիցի, շէ նախատանայ: Եւս «Տիմէթէոս՝ եղբայրն» առնու ընդ իւր եւս ընկեր եւ այնպէս եւ յայլոց պատկառի եւ վաղվաղակի դա հաւան եւ առնիցէ երեցս^{2*} «Փիլիմոնի սիրելոյ եւ գործակցի իմոյ»: Եթէ սիրելի էր, ապա լիւր յանդրդնութեան գործո վստահ, այլ ի բազում սիրոյ եւ խնամոց, եւ թէ գործակից էր, ոչ միայն աղաչելոյ պարտ էր վասն այնպիսի իրաց, այլ եւ՝ շնորհելոյ: Եւ «գործակից» կոչելով զնա վասն սպասաւորութեան Աւետարանին ասէ եւ՝ «Ապփիայ քեռ»: Ինձ թուի, թէ զնորին ամուսնոյ ասիցէ, եւ դու տես զխոնարհութիւն Պաւղոսի եւ զՏիմոթէոս ընկերան եւ ընդ իւր յաղաշանան եւ ոչ միայն զայրն աղաչէ, այլ եւ՝ զկին եւ յայլում՝ իրրեւ զբարեկամ: «Եւ Արքիպպէս զինուորակցի մերոյ^{3*}» եւ զինուորակից մեր ես եւ յայսպիսի գործակից լինել այն³ Արքիպպոսն⁴ է, վասն որոյ գրեալ առ Կողոսացիսն. «Ասացէք ցԱրքիպպոս⁵. զգոյշ լիւր սպասաւորութեանդ⁶, զոր ընկալար ի սուրբ ի Տէր^{3*}»: Թուի ինձ, թէ կղերիկոս էր կարգեալ նա անդ, եւ զնա եւս խառնէ յաղաշանս, որպեսզի ամենայն հնարիւք զիրան վճարիցէ: «Եւ առ տնին եկեղեցոյդ^{4*}»: Ոչ զծառայս եթող դատարկս այլ եւ զնոսա խառնեաց յաղաշանաւքն, քանզի գիտեն եւ բազում անգամ եւ ծառայից քանք զտետրան ածել ի հաւանս մանաւանդ յործամ ծառայիցն աղաշանքն իցեն, թէ՛ պատուեա զնա ընդ տետրան, զի եւ այն ոչ ածէ զտետրան ի ցասումն Քրիստոսի: Զի եկեղեցին ոչ զիտէ զծառայի եւ զամենայն երեցս⁷ ընտրեալ, այլ զմեղաց եւ զարդարութիւն:

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն Աստուծոյ Հաւրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ^{5*}»: Յանձին մեղացն յիշատակեալ անձկացոյց զնա ի միտ առ. որչափ ինչ յանցանս եթող քեզ Աստուած, զիարդ ապրեցար շնորհաւքն, նմանէր եւ դու Տեառն, զի ծառան, որ առ ծառայակիցսն անողորմն գտաւ մինչ պահանջէր Ե դահեկանն, քանի պատիժ կրեաց մինչ վերացան ի նմանէ շնորհք Տեառն մերոյն, եւ մատնեցաւ դահճաց:

«Գոհանամ զԱստուծոյ իմոյ, յործամ յիշատակ առնել յաղաթս իմ վասն քո^{6*}»: Ոչ անդէն վաղվաղակի ի սկզբանն հանէ զշնորհան, այլ նախ

Ա Ղ Ր Յ Ո Ւ Ր Ե Ն Ե Ր

№ 3371, 372բ—375բ:

1 Ձեռ. այստեղ և այլուր՝ Տիմէթէոս: 2 ձեռ. երեսու: 3 ձեռ. կրկնվում է: 4 ձեռ. Արքայի պոստն: 5 ձեռ. ցԱրք եւ պոստ: 6 ձեռ. սպաս սովորութեանդ: 7 ձեռ. երեսու:

1* Փիլիմոն 1:

2* Անդ 2:

3* Կողոս. Դ 17:

4* Փիլիմոն 2:

5* Անդ 3:

6* Անդ 4

զարմանայ ընդ նա եւ գովէ զնա վասն ուղղութեանցն նորա, զի անզազար յիշէ յաղաթս: Եւ այն առաւել սիրոյ նշանակ էր:

«Իբրեւ լսեմ զքո հաւատս եւ զսէր, զոր ունիս առ Տէր Յիսուս եւ առ զամենայն սուրբսն նորա^{7*}»: Եւ զարմանալի իրք էին, քանզի մաւտո տեսանել եւ առաւել եւս մեծ այն, որ հետոյն, զի ամենայն տեղիս տարածեալ էր սէր նոր եւ յայտնի եւ լս(ել)ի էր ամենեցուն մինչ զի եւ առ նա իսկ եհաս: Բանզի բազում վերստը^{8(*)} էին ի միջի ընդ Հոռոմ եւ ընդ Փափագիայ: Զի Կողոսացւոց քաղաքն ի Փոփագիայ է, եւ Փիլիմոն անտի իսկ էր:

«Զի հաղորդութիւն հաւատոց քոց յարգոյ լիցի գիտութեամբն եւ ամենայն բարութեամբն, որ է ի քեզ Քրիստոս Յիսուս^{9*}»: Եթէ հաղորդ ես, ասէ, հաւատոցն, ապա եւ այլոքն պարտիցիսն հաղորդակից լինել, զի հաւատքն առանց գործոց մեռեալ է^{10*}»:

«Ենդրութիւն յոյժ ընկալայ եւ մխիթարութիւն ի վերայ սիրոյ քոյ, զի զուրբ սրբոց քեւ հանգուցեալ են, եղբայր^{10*}»⁹: Զիք ինչ, որ այնպէս ածէ ի հաւատսն, յորժամ զայլոցն որ զերախտիսն յառաջ բերիցէ եւ մանաւանդ քան զայլսն եւս մեծարիցէ: «Վասն որոյ համարձակութիւն ունիմ ի Քրիստոս հրաման տալ քեզ զարժանն^{11*}»: «Վասն սիրոյ^{12*}», ասէ, զու հատու մեզ համարձակութիւն ոչ միայն առ մարդիկ, այլ եւ՝ առ Քրիստոս, ոչ միայն աշխարհիս պայծառ եւ զաւրաւոր իցես, այլ եւ առ Քրիստոս սէր եւ հաւատ ունիս հրաման տալ քեզ զարժանն, այսինքն՝ քեզ պատշաճի ինչ իրս, թէ որ ինչ յայլոց առնէիր եւ ինձ առնել վասն Քրիստոսի, մանաւանդ թէ ազաւեմ այսպիսի ինչ լինել, որպեսզի ասիցէ. գիտեմ եւ զհրամայելով իսկ վճարէին բազում իշխանութեամբ վասն կա[ն]խելոյ իրաց, բայց զի կարի փութամ զիրս վճարել, ազաւեմ «որպէս Պաւղոս ծերացեալ, բայց արդ եւ կապեալ եւս ի Քրիստոս Յիսուս^{13*}»: Բարէ, որպիսի ինչ ակնածութենէն Պաւղոս ասէ. զմեծարան սերեացն (^o) յայտն առնէ. «ծերացեալ» հասակա առաւել անդ պատկառեցուցանէ, որ կարի իսկ պատուականն էր, թէ եւ «կապեալ Յիսուսի Քրիստոսի»: Զի եւ զկապանսն, որ վասն Քրիստոսի էր, յուշ առնէ նմա գթալ վասն ծառային:

«Ազաւեմ [զքեզ] վասն որդւոյ իմոյ¹⁰, զոր ծնայ ի կապանս իմ զՈնե-սիմոս^{14*}»: Դարձեալ կապանքն եւ ոչ հաւանեցուցիչք էին, եւ ապա զանազանն յայտ առնէ ոչ միայն զցասումն ցածուցանէ, այլ եւ ի խնդրութիւն եւս յորդորէ. զի^o կոչէի զնա որդի իսկ, թէ շէր պիտանի, որով եւ անուամբ եւ զՏիմոթէոսն անուանէ եւ զնա, զզուրն ցուցանէ եւ զժամանակն եւ զտեղին, թէ ուր ծնաւ, որ երբեմն անպիտան էր, «բայց արդ ինձ եւ քեզ պիտանի է»: Տես թէ քանի է յիմարութիւնն. զիարդ խոստովանի զմեզս նորա եւ այնու եւս ցածուցանէ զցասումն. «Գիտեմ, ասէ, զի անպիտան էր, արդ պի-

7* Անդ 5:

8* Անդ 6:

9* Յակ. Բ 26:

10* Փիլիմոն 7:

11* Անդ 8:

12* Անդ 9:

8 ձեռ. վարք: 9 ձեռ. եղբայրք: 10 ձեռ. իրոյ:

13* Անդ 10:

14* Անդ 11:

տանի է»։ Եւ ինձ պիտանի է, ասէ, որ այսչափ հաւատալի պահանջեմ, որչափ եւս ատե՛լ քեզ, «զոր չղեցի առ քեզ։ Եւ դու զգա ընկալչիր, տես զիմ աղիս^{15*}», եւ այնու եւս ի ձեռս եզ եւ ցածոյց¹¹ զցասումն։ Գիտեմ, ասէ, քանզի տեարք, յորժամ ցասումն, յորժամ վասն ամենայնի աղաշիցէ. վասն այսորիկ ի ձեռն տալով առաւել հանդարտեցոյց. «Եւ դու զգա ընկալ»։ Եւ այսու յայտ առնէ բազում զսէրն եւ զխնամն։ Չասաց, եթէ՛ մի ինչ ցասումն առնիցես, այլ թէ՛ «ի քեզ առ», զի ոչ միայն թողութեան, այլ եւ պատուոյ արժանի է, վասն զի Պաւղոսի որդիս արժանացաւ լինել։ «Զոր կամիցի առ իս արգելուլ, զի ընդ քո ունիցի ինձ սպասաւորութիւն, զոր ինձ պարտիս^{16*}»։ Եւ յայսու յայտ առնէ, թէ զնա քաջ մեծարեաց, քան զժառայն եւ ի նմանէ առաւել խորշի։ «Բայց առանց քո կամացդ ոչ ինչ կամեցայ առնել, զի (մի՛) բարիք քո հարկէ լիցի, այլ՝ կամաւ^{17*}»¹²։ Եւ այսու կարի իսկ լուծանէ զմիտս նորա, յորժամ իրքն պիտանիք իցեն, եւ նորա կամաւքն լիցի. երկու բարիք են, զի նա ավաթի, եւ նա կարի զգուշագոյն լիցի գիտել. գիտէի, ասէ, մինչ չէի ի քէն տեղեկացեալ, այլ յանկարծակի իմացեալ թերեւս ցասումն լինէր, այլ սակայն բազում առաւելութեամբ։ «Թերեւս վասն այսորիկ ժամանակ մի մեկնեցաւ, զի յաւիտեան ունիցիս զգա^{18*}»։ Բարի ոք ասաց, զի թէրեւս անսայցէ տանն, քանզի յանսաս[ա]ութենէ եղեւ զնայն, եւ ի կամակոր մտաց եւ ոչ ի կամաց զժամանակն կարճէ։ Եւ զմեզս խոստովանի, զի յաւիտեան¹³ ունիցիս զգա ոչ միայն յայսմ աշխարհի, այլ եւ յայնմ. «մի իբրեւ զեղբայր սիրելի^{19*}»։ Քանզի իբրեւ զժառայ կորուսէր առժամանակ մի եւ իբրեւ զեղբայր սիրելի գտէր հանապազորդ, այսուհետ եւ ոչ փախչի, այլ «յաւիտեան ունիցիս զգա»։ «Եթէ ինձ այսպէս, որչափ եւս առաւել քեզ եւ մարմնով եւ տերութեամբ^{20*}»։ Այսու բազում առաքինութիւնս ցուցանէ, եթէ իմ եղբայր է, եւ ապա՝ «մի՛ յա[մ]աթ համարիցիս» կոչելով զգութն¹⁴ յայտ արար եւ «եղբայր» անուանելովն զհանգիտապատիւ¹⁵ զուգապատու[ութիւն] թիւն ցուցանէ։ «Եթէ զիս քեզ յազորդ համարիցիս, ընկալ զսա իբրեւ զիս^{21*}»։ Տեսեր յիտ որչափ հնարից եւ ապա եւ զմեծն զնէ, թէ՛ որդի իմ ես, եւ յազորդ առ [Աւետարանն]¹⁶։ «Եթէ յանցուցեալ ինչ իցէ կամ պարտիցի, զայն ինձ համարեաց»։ Այսինքն^{22*} թէ այնր եւ [..] պարտուկանք, զի կարասոյ (°) վնաս առնել սովորէ զայրացուցանել զմարդիկք. «Ես՝ Պաւղոս գրեցի իմով ձեռամբ, եւ հատուցից»։ Այսու^{23*} պատկառեցուցանէ եւ զուարթեցուցանէ, զի դիր եւսն առնել վասն Պաւղոս շղանդաղեցուցաւ նա, զիարդ ընդունել զանդաղիցի։ «Ես հատուցից», տես թէ որպէս վասն միոյ առն այսչափ հոգէբարձութիւն յանձին կալաւ¹⁷, զի ասիցեմ, թէ զանձ քո իսկ պարտիս։ Զի մի կարծիցի, թէ թէթեւանս ինչ առնէ նմա, զոր աղա-

15* Անդ 12:

16* Անդ 13:

11 ձեռ. ցածուց: 12 ձեռ. կամայ: 13 ձեռ. յաւատուել: 14 ձեռ. զգոյթն: 15 ձեռ. զհանգիտապատիւ 16 լրացումն բառ հոմաբեմի՝ Σ. ελιον: 17 ձեռ. կ-ր-ւ:

17* Անդ 14:

18* Անդ 15:

19* Անդ 16:

20* Անդ:

21* Անդ 17:

22* Անդ 18:

23* Անդ 19—20:

չէր, թէ՛ «զանձն քո ինձ պարտիս^{24*}», եւ այս սիրոյ եւ խնամոյ էր եւ կարի-
 իսկ վստահ լինել: «Այո եղբայր, ես քո փոխան եղէց ի Տէր»: Զինչ է^{25*} «այո
 եղբայր»-ն. առ, ասէ, զզա ի քեզ եւ «քո փոխան եղեց ի Տէր», այսինքն՝
 Տեառնէ անէս զշնորհոյ եւ ոչ ինձ զգութ¹⁸ աղեաց իմոց, զոր առ քեզ ունիս:
 «Յուսացեալ ի հնազանդութիւն քո գրեցի^{26*}»: Զորպիսի՞ քարինս ոչ կակ-
 դացուցանեն այսպիսի բանք, զորպիսի՞ գազանս կասեցուցանէին եւ լու-
 ծանէին եւ տանէին ընդունել յետ այսչափ յուղղութեանցս: «Քանզի գիտեմ,
 թէ առաւել քան զոր ասեմս աննիցես^{27*}»: Միանգամայն եւ յաւժարութիւն
 իսկ տայ թէպէտ եւ ոչ այնորիկ կարծիս ունէր զնմանէ այն, զի «առաւել
 եւս քան զոր ասեմս աննիցես»: «Մի անգամ եւ վասն պատրեսչիք ինձ»: Եւ
 այս կարի իսկ վստահ լինելոյ էր: Մանաւանդ թէ վասն Ոնեսիմա, զի մի
 հեղզ ասէ, ինչ, այլ զի գիտացեն, թէ, արդարեւ, գալոց եւ լսելոց զամենայն
 ինչ նոցա եւ զամենայն սղութիւն ի միջոյ բառնայցին, քանզի բազում շնորհ
 եւ պատիւ էին Պաղոսի գալն առ նոսա յայսպիսի հասակի կապանաւքն
 հանդերձանքն, «զի յուսամ, թէ աղաթիւք ձերովք շնորհեաց ձեզ^{28*}»: Դար-
 ձեալ սիրոյ նշանակ է աղաթս աննել նոցա վասն նորա, եւ այնչափ ինչ
 նոցա պարգեւել: «Թէպէտ եւ ի վիշտս իցեմ այժմ, ասէ, այլ տեսանիցէք
 զիս, եթէ աղաթս աննիցէք. ողջոյն տա ձեզ Եպափրաս, գերակից եմ ես ի
 Քրիստոս Յիսուս^{29*}»: Եպափրաս¹⁹ այս ի Կողոսացոցն առաքեալ էր առ
 նա^{30*}, որպէսզի անտի ցուցանէ, թէ ի Կողոսացոցն էր Փիլիմոն: «Գերեկից»
 կոչէ զնա. ցուցանէ, թէ եւ նա ի բազում նեղութենէ էր, եւ զիւր հոգսն թո-
 զեալ եւ զայլոց հոգսն հոգայցէ, զի Եպափրաս քաղաքացի Փիլիմոնի էր եւ
 գերեկից Պաղոսի, զի նովաւ պատկանեցուցէ զնա: Ընդէ՞ր զՂուկաս յե-
 տոյ զնէ. զի թէպէտ եւ յետոյ եղ, «այլ առաջին էր»: Իսկ զԳեմաս վասն
 է՞ր. զի նա զնա եթող եւ սիրեաց զաշխարհ: Բուի թէ յետոյ եղև հեղճագոյն,
 յորժամ զվիշտս ետես զբազմագոյն: Իսկ զՄարկոս եւ զԱրիստարքոս, իբ-
 րև ըարմանալիս որ. զի նորա[ւր] պատկանեցուցէ զնոսա: «Շնորհք Տեառն
 Յիսուսի ընդ ողոյս ձերում. ամէն^{31*}»: Աղաթիւք աւարտէ զթուղթս. մեծ
 բարութիւնք են աղաթք նմա, կեցուցիչն, պահապան անձանց մերոց: Մեծ
 բարութիւնք են, թէ արժան ինչ ընդ նմա զորժ գործեսցուք միա[յ]նս ար-
 ժանս ինչ զանձինս ուրացուք: Աղաթքն խառակցութիւն են ընդ Աստուած:
 Աղաթք, որ ի սրտէ լինին, ապա կարող են, որ զհրաժեհտս բարկութեան
 Աստուծոյ զարձուցանել: Աղաթքն զպոռնիկն սրբեցին, զմաքսաւորն փրր-
 կեցին, զաւաղակս արդարացուցին: Որ եւ մեր աղաթիւք սրբոց սրբեսցուք
 յաւիտենիցն մահուանէն՝ շնարհաւքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում
 փառք եւ պատիւ եւ զարութիւն յաւիտեանս. ամէն:

24* Անդ 20:

25* Անդ:

26* Անդ, 21:

27* Անդ:

28* Անդ, 22:

29* Անդ, 23:

30* Կողոս. Ա:

18 ձեռ. զգոյթ: 19 ձեռ. Եպափրաս:

31 Փիլիմոն 25:

A. КЕСЕЯН

НОВОНАЙДЕННЫЕ ОТРЫВКИ АРМЯНСКОГО ПЕРЕВОДА
ТОЛКОВАНИЯ ИОАННА ЗЛАТОУСТА ПОСЛАНИИ
АПОСТОЛА ПАВЛА

Резюме

Армянские переводы толкований Иоанна Златоуста на послания апостола Павла относятся к V в. Публикуемые тексты являются до сих пор неизданными отрывками (I II Предисловие к Рим., Предисловие к II Коринф. Гал. 5, 12, 6 14 Евр. II, 29 и Фил. весь) этого толкования.

H. KEUSSEYAN

FRAGMENTS NOUVELLEMENT DECOUVERTS DE LA TRADUCTION
ARMENIENNE DU COMMENTAIRE DE JEAN CHRYSOSTOME
AUX EPITRES DE L'APOTRE PAUL

Résumé

Les traductions arméniennes du commentaire de Jean Chrysostome aux Epîtres de l'apôtre Paul remontent au Ve siècle. Les textes publiés sont des fragments inédits jusqu'à présent (I, II Préface des Rom., Préface de I Corinth., I Corinth. 1, 18, 11, 27, 29, Préface de II Corinth., Gal. 5, 12, 6, 14, Hebr. 11, 29, et Phil. entier) de ce commentaire.

ՀԱԿՈՒ ՓԱՓԱԶՅԱՆ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բուլղարիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Արևելյան բաժնում պահվող թուրքերեն արխիվային նյութերի մեջ առանձին տեղ են զբաղում 1723—1735 թթ. օսմանյան զորքերի կողմից Անդրկովկասի նվաճման ժամանակաշրջանի վավերագրերը: Նախապես առիթ ենք ունեցել նշելու, որ դրանց մեջ կան նաև տարբեր ուղղություններով առաջացող զինված ուժերի հրամանատարության կողմից սուլթանական արքունիք առաքված զեկուցագրեր, արշավանքին մասնակցող զորամասերի և բերդապահ կայազորների մատակարարումների, ռազմական ծախսերի և զինվորականությանը տրվող ոտձիկների հաշվետվություններ, բնակչությունից գանձվող հարկերի ընդարձակ և համառոտ ցուցակներ և այլ վավերագրեր, որոնց մեջ առկա փաստական նյութը հնարավորություն է տալիս ավելի համակողմանի ուսումնասիրության ենթարկելու մեր ժողովրդի պատմական ճակատադրում բախտորոշ նշանակություն ունեցող այդ ժամանակահատվածի քաղաքական և սոցիալատեսական պատմության, ցարդ դիտական մեկնաբանման շարժանացած որոշ հարցեր¹:

Այս նյութերի վրա աշխատելիս մեր ուշադրությունը գրավեցին «Թիֆլիսի ֆոնդում» գրանցված 1723 թ. երեք ընդարձակ վավերագրեր, որոնցից առաջինը Թիֆլիսի ուղղությամբ շարժվող օսմանյան զորքերի ընդհանուր հրամանատար, էրզրումի վալի, սարասքար Իբրահիմ փաշայի շտաբին առընթեր, Շարի առյանում հաստատված մի համաձայնագիր է, երկրորդը՝ այդ համաձայնագրի հիման վրա Արքունի գիվանից սուլթան Ահմեդ 3-րդին ներկայացված զեկուցագիր, իսկ երրորդը սուլթանի պատասխան-հրովարտակը ուղղված Իբրահիմ փաշային²:

Համաձայնագիրը կնքված է սարասքար Իբրահիմ փաշայի և Կայդուլի շրջանի 31 հայկական գյուղերի համայնքների միջև, հիշք. 1135 թ. շաբան ամսի 29-ին (1723 թ. հունիս 4), առ այն, որ Չըլդըբի էյալեթի Օրուչայա կոչվող բանակատեղում օսմանյան զորքերի հրամանատարությանն են ներկայացել հիշյալ 31 գյուղերի քյադխուղաները և հպատակություն հայտնելով դեպի Թիֆլիս արշավող զորքերի հրամանատարին, ապահովության (աման) խոստում են ստացել նրանից: Այս կամավոր հնազանդության հա-

1 Հ. Փափազյան, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան գիվանական վավերագրերը, «ՊԲՀ», 1984, № 3, էջ 196—199.

2 Կիրիլ-Մեթոդի ժող. գրադարան (այսուհետև՝ ԿՄԺԳ), ОАК, № 198/14:

մար նրանց թույլ է տրվել երեք տարի շարունակ օսմանյան իշխանություններին վճարել միայն ստորին շափի զլխահարկ (շիզյա), իսկ երեք տարին լրանալուց հետո, մյուս զիմմի առյաթների նման, պիտի վճարեին եռաստիճան (ստորին, միջին և վերին) շափերով, միաժամանակ կատարելով նաև խարաչ-ի մուվազաֆայի և ուսում-ի կանոնիչյայի պարտավորությունները:

Այս որոշման արձանագրությունը (հուշագր-ի շարի'յյա), Իբրահիմ փաշան ուղարկել է Արքունի դիվան, որտեղ, այդ համայնքներին երեք տարի արքունի հարկերից ազատելու և միայն ստորին շափով շիզյա գանձելու վերաբերյալ, հիշք. 1135 թ. առաջին ամսի 29-ին (1723 թ. հուլիս 3) կազմվել է ընդարձակ մի զեկուցագիր, խնդրելով այն հաստատել սուլթանական Ֆերմանով: Նույն թվականին հրատարակվել է նշված հրովարտակը, որտեղ համարյա նույնությամբ կրկնված է ներկայացված զեկուցագրի բովանդակությունը:

Պահպանված այս երեք վավերագրերից առաջին երկուսը՝ Շար'ի ատյանում կազմված արձանագրությունն ու Արքունի դիվանի զեկուցագիրը— բնագրեր են, իսկ Ֆերմանը՝ այն, այսպես կոչված, սեազիր օրինակն է, որի հիման վրա գրվել է թուղթայով զարդարուն Ֆերմանն ու ուղարկվել Իբրահիմ փաշային առ ի զործագրություն: Հատկանշական է, որ բնույթով տարբեր այս փաստաթղթերը, վերաբերելով նույն հարցին, Արքունի դիվանում պահպանվել են միատեղ և ներկայումս Կիրիլ և Մեթոդի ժող. գրադարանի Արևելյան բաժնում գրանցված են նույն համարի ներքո:

Կաշղուիլիի նահիան կամ մահալը համապատասխանում է պատմական Հայաստանի Գուգարաց աշխարհի Աշոցք գավառին, որի Սեֆյան Իրանի տիրապետության շրջանի վարչական բաժանմամբ ենթարկվում էր Արևելյան Վրաստանի վալիությանը, հանդիսանալով Թուրքիային սահմանակից գավառներից մեկը: (Ներկայումս Հայաստանի Հանրապետության Աշոցքի շրջան):

Նախորդ ուսումնասիրություններում վերլուծելով 1724—1735 թթ. Անդրրկովկասի ազմակալման տարիներին օսմանյան զինվորական իշխանությունների կողմից կիրառվող հարկային քաղաքականության բնույթը քաղաքացույց վավերագրերը, նշել ենք, որ դրանք մեծ մասամբ վկայում են սկզբնապես ցուցաբերվող մեղմ ու սիրաշահող վերաբերմունքի մասին, որը նպատակ ուներ դյուրացնելու այդ երկրամասի արագ նվաճումը, որից հետո արդեն անցկացվող հաճախակի մարդահամարների, հատկապես բնակչության և եկամտաբեր ստացվածքների ու մուկաթիանների հաշվառման և վերստուգման (չորլամա) փաստաթղթերն ու համառոտ և ընդարձակ մատյանները (զեֆթեր) պատմում են հարկերի ու տուրքերի, հատկապես քրիստոնյաներից գանձվող զլխահարկի (շիզյա), բազմապատիկ շափերով ավելացման և բնակչության սանձարձակ կողոպուտի ու հարստահարման մասին³:

Օսմանյան զորաբանակների, նվաճված երկրներում ծավալված ավերի ու ավարի, համատարած կողոպուտի և բնակչության զանգվածային գերեվա-

3 Հ. Փափազյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 440—446. տե՛ս նաև նույնի՝ Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժող. գրադարանի օսմանյան զիվանական վավերագրերը, էջ 197—199:

րության բազում դեպքերի ականատես և ականջալուր սահմանամերձ այս շրջանի հայ ազգաբնակչությունը, տեղեկանալով սկսվող արշավանքի մասին, շտապել է կանխել սպառնացող վտանգը: Այդ իրադարձության մասնավորապես նկարագրությունը պարունակող այս վավերագրերը թույլ են տալիս ենթադրելու, որ սկզբնական շրջանում այդ նրանց հաջողվել է: Սուլթանի հրովարտակում շարադրված հրահանգներում գրեկորված է օսմանյան իշխանությունների գոհունակությունը, որից ելնելով, կարգադրված է մեղմ և զգուշավոր լինել նրանց նկատմամբ, որպեսզի մյուս վայրերի ժողովուրդը ևս հետևի նրանց օրինակին:

Թե ինչ չափով են իրագործվել այդ հրահանգները, մեզ ոչինչ հայտնի չէ: 1724—27 թթ. Հայաստանում և Վրաստանում թուրք նվաճողներին ցույց տրված ուժեղ դիմադրությունը, Արարատյան երկրում, Երևանում, Սյունիքում, Արցախում և այլ վայրերում մղված հերոսական կռիվները վկայում են այն մասին, որ Կայդուլիի բնակիչների նախաձեռնությունը ոչ միայն օրինակ չի հանդիսացել, այլ բնդհակառակը, որտեղ որ հնարավոր է եղել կազմակերպված հանդես գալ, ժողովուրդը կատաղի դիմադրություն է ցույց տվել, շնավատալով ապահովության (աման) մասին օսմանյան իշխանությունների կողմից կատարվող հայտարարություններին ու հավաստիացումներին:

Մենք չգիտենք նաև թե ինչպիսին է եղել այդ զուտ հայաբնակ շրջանի բնակչության վիճակը օսմանյան ռազմակայման հաջորդ տարիներին: Կայդուլիի վերաբերյալ սկզբնաղբյուրների հետագա տեղեկությունները վերաբերում են 1735 թվականին, երբ իրանական զինված ուժերը, որոնց միացել էին նաև Արցախի հայ մելիքների և Արարատյան երկրի հայության զինված ջոկատները, Նադիր-կուլի խանի գլխավորությամբ Եզվարդի մոտ պարտության մատնելով Արդուլլա-փաշայի հրամանատարության տակ կովոդ օսմանյան զորքերին, անցան սահմանն ու գնացին պաշարելու Ղարսի բերդը⁴:

Նադիրի պալատական պատմիչներ Մուհամադ-Քյազիմի և Միրզա-Մուհամադ Մեհդի-խանի վկայությամբ, Ղարսի պաշարման օրերին Նադիրի զորքերը ասպատակ էին սփռել շրջակա գավառներում հասնելով մինչև էրզրում, Կաղզվան և Բայազետ⁵: Ղարսից վերադառնալուց հետո, երբ Նադիրը պատրաստվում էր արշավել Թիֆլիս, նա իր զորքերին կարգադրել է ասպատակել նաև Տայոց և Գուգարաց աշխարհի շրջանները: Պատմելով այս մասին, Աբրահամ Կրետացին գրում է. «Այլ և ասպատակս արձակեաց երկուց կողմանց, մինչ գնալր ի Ղարս՝ յաջ և յահեակ, զմի կողմն ի վերա Պայազիտո՞ւ կրկին, և զմիան կողմն ի վերա Կաղզուանայ և ինքն ի միջի: Յորում գնացեալ քանդեցին զերկիրն, այրեցին զշինուածսն, գերեցին զմարդիկը և զանասունս և բազում աւարաւ դարձան ի բուն բանակն՝ ի Ղարս: Եւ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ գնացեալ հասին մերձ Թէոզուպոլսոյ: Եւ գերեցին զՆարիմանու նահանգն, զՋաւախէթու, զՉլտրու

⁴ «Հայ ժող. պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 183—184:

محمد کاظم، نامه عالم آرای نادری، جلد اول، مسکو، ۱۹۶۰، ص ۳۱۴-۳۱۶
 ۴ محمد مهدی خان استادا بادی، تاریخ نادری، تبریز، ۱۲۸۴، ص ۸۹

և զՂալիղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ: Եւ բշեցին զայր և զկին, զծեր և զտղայ և տարան ի Խորասան՝ թուով ԶՌ (6000), որպէս և լսեմք»⁶:

Այնուհետև Կրետացին ավելի մանրամասն պատմում է Քիֆլիսի և Երեւմանի հայութեան գերեզման մասին, նշելով իր ջանքերը, որոնց շնորհիվ հնարավոր է եղել 3000 թուման կանխիկ դրամ և 3000 սոմար ցորեն հատուցելով կանխել Քիֆլիսեցիների արտորը: Իսկ Երևանից 300 տուն բռնի ուղարկվել է, մյուս բնակիչներից փոխադրական միջոցներ ու այլ օգնություն հավաքելով և տալով մեկնողներին⁷: Ինչ վերաբերում է Կալուրի բնակչության արտորին, ապա ինչպես երևում է այն իրագործվել է ամենայն խստութեամբ, որք տեղի է ունեցել Կրետացու Քիֆլիսում նազիրին ներկայանալուց բավական առաջ և մեծ արագությամբ:

1735—36 թթ. նազիրի հրահանգով Անդրկովկասից բռնաբերված բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում նաև դաշտային Ղարաբաղում, Բարգուշատում և այլուր բնակվող ադրբեջանական այն ցեղերը, որոնք օսմանյան սաղմակալման շրջանում հնազանդվել էին նվաճողներին և նույնիսկ համագործակցել նրանց հետ, ճնշելու Արցախում և Սյունիքում մարտնչող հայությանը: Գեպի Խորասան արտորվեցին Օթուզիբի (երեսուն երկու), Սարուշալի և Զիվանշիր կոչվող ցեղային միավորումների մեջ մտնող բազմաթիվ ցեղախմբեր (այժաղներ), ինչպես նաև Բարգուշատի Ամիրանբարի, Քարիբլու և այլ ադրբեջանական համայնքներ⁸: Ուստի անհավանական չէ, որ Կալուրի բնակչության, փաստորեն, հարկադրյալ անձնատվության և Իբրահիմ փաշային հնազանդություն հայտնելու հանգամանքը ևս հիմք հանդիսացած լինի այս անողոր բռնի տեղահանությանն ու արտորին:

XIX դ. վերջերի գրական-հասարակական գործիչ Ն. Հ. Գորոյանը, իրանահայ համայնքների պատմությանը նվիրված աշխատության մեջ, խոսելով նազիրի օրոք տեղի ունեցած այս բռնի տեղահանությունների մասին, հաստատում է զանգվածային արտորները Խորասան, տողատակում տալով հետևյալ ծանոթագրությունը. «Թեև այս գաղթականությանց հիշատակը Զուղայի հայոց ողբերգական երգերի մեջ պահված է, սակայն ոչ մեկ գրիչ որևէ տեղեկություն չէ թողեր, զեթ ևս որևէ բան չեմ գիտեր այս բազմաթիվ հայոց ճակատագրի մասին»⁹:

Իրողությունն այն է, որ այս արտորից հետո Խորասանում հայաբնակ կենտրոններ չտեղծվեցին, ինչպես այդ եղավ XVII դ. սկզբի Շահ Աբասի հրամանով կատարված մեծ գաղթից հետո կենտրոնական Իրանի որոշ շրջաններում: Այդ նշանակում է, որ կորուստներ տալով, ցաք ու ցրիվ տեղ հասած հայությունը, ենթարկվելով բռնի հավատափոխության, ձուլվել է ու անհետացել:

Հրապարակվող թուրքերեն վավերագրերը վերաբերելով մեր հանրապետության ծայրամասային շրջաններից մեկի ոչ այնքան հեռու անցյալին, գալիս են հաստատելու ողբերգական այս իրագործություններին անմիջապես նախորդող ժամանակներում, պատմական Աշոցքի գերազանցապես հայաբնակ լինելու փաստը: Նրանք միաժամանակ որոշակի գիտական հետա-

6 Абраам Кретацу, Повествование, Ереван, 1973, հայ. բնագիր, էջ 67:

7 Նույն տեղում, էջ 71:

8 Ան, Երկերի ժողովածու, հ. III, գիրք Բ, Երևան, 1973, էջ 364:

9 Ն. Հ. Գորոյան, Պարսկաստանի հայերը, ԹԼՀրան, 1968, էջ 257:

բրբրությունն են ներկայացնում որպես Օսմանյան կայսրության նվաճողական նկրտումներն ու նվաճված վայրերում կիրառվող հարկային քաղաքականության բնույթը բացահայտող հավաստի պաշտոնական փաստաթղթեր:

Ստորև հրապարակում ենք միայն Շար'ի ատյանում գրի առնված համաձայնագրի (հոջջաթ) և սուլթանական հրովարտակի հայերեն թարգմանությունն ու թուրքերեն բնագրերը, դուրս թողնելով Արքունի դիվանի զեկուցագիրը, որի բովանդակությունը, ինչպես ասվեց, համարյա նույնությամբ կրկնված է հրապարակվող հրովարտակում:

I

Հաստատում եմ ինչ գրված է այստեղ:

Գրեց Աստոն փառքի Խոաշ տնանկ, Թիֆլիսի բանակի կազի, Սեյիդ Մուհամմադը, Վերին կարգադրությամբ:

—Կնիբ—

Սույն գրության պատճառը հետևյալն է.

Ներկայումս բարձրագույն հրամանով Թիֆլիսի բերդի գրավման հրահանգ ստացած հաղթական զինվորների հրամանատար, սույն արձանագրության առիթ հանդիսացող, աստփաշնորհ վեզիր, էրզրումի մուհաֆիզ, նորին սրբություն, գերերջանիկ սիլահդար Իբրահիմ փաշան,—Թող Աստված բարեկեցություն շնորհի նրան,—հիշյալ բերդից շորս օրվա ճանապարհի վրա գտնվող Չըլդըրի էյալեթի Օրուշայա կոչվող վայրում կանգ առնելուց հետո, եպարքոսական ատյան հաստատեց, որտեղ լուսավոր Շար'ի նիստին ներկայացան Թիֆլիսի բերդին ենթակա վայրերից, Կաչուլիի նահիայում գտնվող՝

Աղբուլաղ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Ավագի որդի Բարին,
 Զիգարաշեն կոչվող գյուղի բյաղխուղա՝ Ուլիբեկի որդի Թամազը,
 Թարքաշ գյուղի բյաղխուղա՝ Մխիի որդի Մինասը,
 Վերին Օրթուլի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Գրիգորի որդի Անանիան,
 Ներքին Օրթուլի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Շահնազարի որդի Օսեփը,
 Արզըլուղ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Նարիմանի որդի Բարին,
 Ազգանշի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Պողոսի որդի Սարգիսը,
 Խանբուլաղ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Վարդանի որդի Օհանը,
 Մելիք կոչվող գյուղի բյաղխուղա՝ Մելիքի որդի Մըսըրը,
 Կուտի-շայ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Բաշուի որդի Ասլանը,
 Աուկաս կոչվող գյուղի բյաղխուղա՝ Զանիբեկի որդի Շահրիմանը,
 Օբուսթար կոչվող գյուղի բյաղխուղա՝ Առաքելի որդի Սալիմը,
 Դավազյոզ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Ավանեսի որդի Արաղյոզը,
 Ալահվերդի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Մխիթարի որդի Դանիելը,
 Արզըլուղ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Գրիգորի որդի Էմինը,
 Քեշիշթափա կոչվող գյուղի բյաղխուղա՝ Տեր Հակոբի որդի Գրիգորը,
 Կազանչի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Խաչատուրի որդի Ավազը
 և ավագներից Կիրակոսի որդի Բարիջանը,

Վալիքյանդ կոշվող գյուղի քյաղխուղա՝ Վալիդի որդի Ղազարը,
 Մըսըրքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Դամիրի որդի Սարգիսը,
 Սարգիս կոշվող գյուղի քյաղխուղա՝ Կոստանի որդի Արուսիքը,
 Թաթոս կոշվող գյուղի քյաղխուղա՝ Թաթոսի որդի Օսեփը,
 Դադրասքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Օսեփի որդի Կիրակոսը,
 Քեշիշքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Քեշիշի որդի Ներսեսը,
 Վերին Ղվարղվար կոշվող գյուղի քյաղխուղա՝ Ղվարղվարի որդի
 Սարգիսը,

Ներքին Ղվարղվար կոշվող գյուղի քյաղխուղա՝ Մարտիրոսի որդի
 Շահրիմանը,

Քուսիքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Մարտիրոսի որդի Գրիգորը,
 Գուրզլի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Ղորջանի որդի Յավրուն,
 Ղազիքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Սարբիշանի որդի Շահիշանը,
 Բուլաղքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Ղարագյուղի որդի
 Հախնազարը,

Սուֆի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Գասպարի որդի Մեհրաբը և
 Բեկքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա Թորոսի որդի Սարգիսը, նշված
 Կահիայի վերոհիշյալ գյուղերի բնակիչների և առյաթների բնդհանուր լիազո-
 բությամբ, վերոհիշյալ նորին սրբություն վեղիրից ապահովություն (աման)
 խնդրելով, պարտավորվեցին, սույն օրհնյալ թվականից սկսած, երեք տա-
 րի շարունակ, բոլոր ջիզայի ենթակաները, իրենց ջիզան ստորին շափով,
 մճարեն թագավորական իշխանության կողմից նշանակված ջիզա գանձող-
 ներին, իսկ երեք տարին լրանալուց հետո, մճարումները կատարեն երեք-
 դասյան սկզբունքով և իրենց ձեռքում գտնվող հողերի համար, նշանակված
 դարթիներին ու հարթիներին խարաջ-ի մուվազղաֆա և աուսում-ի կանու-
 նիյա վճարելով և թագավորական իշխանության ներքո ապահովություն վա-
 չելելով, շարունակեն ապրել իրենց նախկին գյուղերում: Իսկ նրանց պատ-
 կանող հողերը, առաջվա նման մնան իրենց ձեռքում, այն պայմանով, որ
 հողային և գիմմիության հարկերը հատուցեն այն անձնավորությանը, որը
 իշխանության կողմից նշանակված կլինի այդ հարկերը հավաքողի պաշ-
 տոնում:

Հիշյալ նորին սրբություն վեղիրը, ըստ վերոգրյալի, թագավորական հո-
 վանավորության ներքո գտնվելու պայմանով, նրանց ապահովություն
 (աման) շնորհեց և այլ գիմմիների դասի շարքն անցկացնելու վերաբերյալ
 իրենց իսկ խնդրանքով արձանագրվեց:

Գրվեց 1135 թ. մեծազոր շա՛բան ամսի 29-ին (1723 թ. հունիս 4):

Իրողության վկաներ.

Ներկայումս Ղարսի մուհաֆիզ, մեծապատիվ Մուստաֆա փաշա,
 Ալաղչոզ անունով հայանի, Յուսուֆի որդի, մեծապատիվ Ահմադ-աղա,
 Բարձրագույն դասն զոնապանների գլխավորը,
 Միրալայ՝ Շահնավազղաղե Սուլեյման,
 Էրզրումի միրալայ՝ Մուստաֆա-բեկ,
 Բայբուրդի միրալայ՝ Արղուլլա-աղա,
 Էրզինջանի միրալայ՝ Սուլեյման-աղա,
 Քելբիթի միրալայ՝ Օսման-աղա,

Միրալայ՝ Հասան-աղա,
Իբրահիմի որդի, միրալայ՝ Օմար-աղա,
Իսպիրի միրալայ՝ Մահմուդ-աղա,
Դերջանի միրալայ՝ Օմար-աղա:

Հրամայված է սույն շարիաթական վճիռը արձանագրել և պահել գլխավոր հաշվապահությունում:

27 ասմազանի: 1135 թ. (1723 թ. հուլիս 1):

II

Թիֆլիսի ուղղությամբ սարասքար նշանակված, էրզրումի վալի, Իբրահիմ փաշային՝ հրաման.

Դու, որ հիշյալ վեզիրն ես, հրամանատարության տակ գտնվող իսլամական հաղթական զինվորների հետ, հրահանգված ուղղությամբ շարժվելով և ուղևորվելով, երբ հասել ես Թիֆլիսի կողմերը, Թիֆլիսին ենթակա վայրերից, Կաչուլի կոչվող նահիայի ուսթաններն իրենք և նրանց լիազորները, գյուղերի քյադխուղաներն ու ավագները (կոշաբեկիներ) եկել են քեզ ընդառաջ և մեր արքայական բարեշնորհությունից մեղմություն և ապահովություն (խաթի՛ման) խնդրելով, մեր բարձր տերության հովանու տակ ապաստանելու ցանկությամբ, ընդունել և հանձն են առել մեր զիմմիներն ու ուսթաները լինել: Որով և, սույն օրհնյալ տարվանից սկսած, մինչև երեք տարի, օրենքով ջիզյայի ենթակա եղողները, իրենց ուսթանության պարտքը հանգիստացող օրինական ջիզյան, բոլորը միահավասար, ստորին շափով պետք է վճարեն նրանց, ովքեր նշանակված կլինեն այն զանձելու: Իսկ երեք տարին լրանալուց հետո պարտավորվում են վճարել երեքդասյան սկզբունքով՝ ըստ կարողության, և իրենց ձեռքում գտնվող հողերի համար էլ օրինական և ուսթաներին վերաբերող մյուս տուրքերը (ուսուումաթ-ի կանունիյա և ոուսուում-ի ուսիյաթ) ամեն տարի պետք է հատուցեն զարբիթներին: Այս պայմանով, նրանք բոլորը իրենց կամքով և հոժարությամբ, սրբազան շարի ներկայությամբ, օրինավոր վճռագիր (հոջջաթ-ի շարիյա) են տվել, որն ուղարկվել է մեր երջանկության դուռը, և քո կողմից ևս այդ մասին զեկուցվել է ու տեղեկացվել:

Քանի որ, վերոհիշյալ Կաչուլիի նահիայի ժողովուրդն ու ուսթաները մեր բարձր տերության հովանավորությանն են ապավինել և հանձն են առել զառնալ մեր զիմմիներն ու ուսթաները, ուստի, մեր արքայական բարի սովորության համաձայն, նրանց վերցնում ենք մեր հովանու ներքո, նրանց վրա տարածելով մեր խնամքն ու հոգատարությունը: Մեր գթության շվարում և արքայական ափի մեջ նրանց պատսպարումն ու հանգիստը, մեր արքայական գործերի և թագավորական պահանջների թելադրանքն է: Մանավանդ, որ հիշյալ նահիայի ժողովուրդը առաջինն է, որ առանց տատանվելու ապաստանել է մեր արքայական ողորմածությանը և զիմմիություն ու ուսթանություն են ընդունել և մյուսներից կանուխ է շտապել անցնել մեր հավերժական տերության հնազանդության և հպատակության ներքո: Ի տրիտուր նրանց կողմից դրսևորված այս հնազանդությանն ու հպատակությանը, ներկայումս իրենց ձեռքում գտնվող մուլքերն ու հողերը պետք է թողնել նրանց ձեռքում և հանձն առած ստորին շափի ջիզյայից բացի,

երեք տարի շարունակ նրանք հողային հարկից և ուսյաթներից զանձվող այլ օրինական տուրքերից (ոուսումաթ-ի կանունիյյա) ազատված են համարվում, և մինչև նշված ժամկետի լրանալը միայն տարին մեկ անգամ ստորին շափով իրենց ջիզյան պիտի հատուցեն:

Սակայն դու, որ հիշյալ վեզիրն ես և այդ կողմերի հանրության բոլոր գործերը ամբողջապես քո աստվածընկալ կամքին է հանձնված, հիշյալ նահիայի ուսյաթների տված օրինավոր համաձայնագրում արձանագրված հանձնառության համաձայն, սույն օրհնյալ տարում նրանցից պահանջվող օրինական ջիզյայի գանձումը նախընտրում ենք քեզ հանձնարարել, նպատակահարմար շղթանելով ուրիշ մեկին գործուղել, քանի որ հիշյալ նահիան նոր միայն գրավված մի երկիր է, իսկ ուսյաթները, վախից, դեռևս իրենց խնդիրքում վարանոտ:

Արդ, քանի որ նրանց ջիզյայի գանձման գործի կարգավորումը, անհրաժեշտաբար քեզ վրա է դրված, վերը նշված ձևով, ապահովության (խոթիման) քղանցքին ապավինելով, մեր Բարձր տերությունից ապաստան խնդրած, Թիֆլիսին ենթակա Կայզուլիի նահիայի ժողովրդի մեր կողմը ուղարկած վերոհիշյալ օրինական համաձայնագրում գրված կարգով, հատուցումը հանձն առած ստորին շափի ջիզյաների գանձումը սկսել 1135 թվականի սկզբից և ըստ իրենց խոստման, հիշյալ ուսյաթների օրինական ջիզյան մինչև նշված ժամանակի ավարտը, իրենց հանձնառության համաձայն, երեք տարի շարունակ գանձել համահավասար, ստորին շափով, իսկ երեք տարին լրանալուց և որոշված ժամանակը ավարտվելուց հետո, օրինական կարգով նրանց վզին դրված ջիզյան երեքդասյան կարգով պետք է նշանակվի և ըստ կարողության գանձվի: Հրամայված է, նշված ժամկետը դեռ ավարտին չհասած, հանձնառության հակառակ, ստորին շափի ջիզյայից ավելի ոչ մի ակշե չպահանջել:

Կարևոր է նաև, որ հիշյալ նահիայի ժողովուրդը, բոլոր տեսակի ոտընդդույթուններից, ճնշումներից և ապօրինություններից պահպանված լինի, որի համար էլ նրանց ջիզյաները գանձելու համար անհրաժեշտ շինք համարում առանձին ջիզյա գանձող (ջիզյադար) նշանակել և առայժմ ջիզյայի թղթեր ևս չենք ուղարկում: Ստանալով սույն մեծաշուք հրամանագիրը, հիշյալ ուսյաթներից 1135 թ. ստացվելիք ստորին շափի ջիզյան գանձելու համար, քո կողմից և անձամբ քո հայեցողությամբ, ուսյաթներին խնամող, շափավոր վստահելի և ինքնուրույն մարդիկ կնշանակես, և եթե հիշյալ նահիայում ջիզյայից ազատելու առիթ լինի, որևէ հիվանդությամբ հիվանդներից բացի, օրենքով որքան ջիզյայի ենթակա զիմմի ուսյաթներ կան, իրենց հանձնառության համաձայն, յուրաքանչյուրից երկուսուկես զուրուշ, համահավասար, ստորին շափով, օրինական ջիզյան ապահովաբար գանձիր և պետական(միրի)թերթիկների փոխարեն, ջիզյան վճարած լինելու մասին վկայող, քո իսկ կնիքով կնքված, թղթեր հանձնիր, և երբ այս ձևով ջիզյաները գանձես, հավաքված ջիզյան, առանց մի ստակը պակասելու կամ պահելու, ճշտությամբ գրանցելուց և լրացնելուց հետո, կնքված և ստորագրված մատյանը մեր երջանկության դուռը կուղարկես: Յուրաքանչյուր անձից ջիզյայի դիմաց գանձվելիք երկուս ու կես զուրուշը լրիվ հատուցելուց հետո, հարկահավաքության, գրագրության (թահսիլդարիյյա և քյաթիբիյյա) անվան տակ, կամ այլ պատուվակով, ոչ մի ակշե և ոչ մեկ ստակ չվերցնես:

և ուրիշ ոչ ոքի ևս թույլ չտաս վերցնել և խնամք տանես նրանց ապահովությանն ու հովանավորվածությանը:

Հիշյալ նահիայի ռայաթները, բոլորից առաջ, մեր Բարձր տերությանը հնազանդություն և հպատակություն հայտնելով և մեր հաստատուն հպատակությանն ու ապահովությանը ձգտելով, իրենց բարի վարքն են դրսևորել, հետևաբար նրանց նկատմամբ մեր արքայական առատաբուխ, բարձր ողորմածությունն ու թաղավորական գթությունը ցուցաբերելով, 35 թվականից սկսած անընդմեջ, մինչև երեք տարի, հանձն առած ստորին շափի ջիզյայից բացի նրանց ազատում ենք հողային հարկից և ռայաթներից գանձվող այլ օրինական տուրքերից (մուաֆ և մասալլամ ենք դարձնում): Այս ազատության պայմանների (շրուֆ-ի մուաֆիլյաթ) պահպանումը խիստ կարևոր է: Եվ դու, որ հիշյալ վեզիրն ևս, այդ կողմերի բոլոր հասարակաց գործերի մեջ ռայաթների և ժողովրդի գործերի խաղաղ ընթացքը կամ անհանգիստ վիճակը, ընդհանրապես և ամբողջությամբ քո տնօրինությանն է վերապահված: Հիշյալ նահիայի ժողովրդին վերաբերող բոլոր գործերի տնօրինումը քեզանից է պահանջվում: Նրանց հովանավորության և հարկերից ազատ լինելու (մուաֆիլյաթ) վերաբերյալ մեր արքայական բարեհոգության մասին նրանց փոքրերին ու մեծերին, ստորին և վերին խավի մարդկանց տեղեկացրեք և հայտարարեք, որ այսուհետև նրանք մեր արքայական հովանու և շուքի ներքո ամեն կողմից պաշտպանված պիտի լինեն: Նախապես և ներկայումս էլ իրենց տիրապետության տակ գտնվող մուլքերն ու հողերը թողնում եմ իրենց ձեռքում:

Ամենակարող աստծու օգնությամբ, կարևորագույն գործերը կարգավորելով և բոլոր դեպքերում խեղճերին և կարոտյալներին հովանավորելով ու պաշտպանելով, մեր արքայական մեծազոր փառքի հավերժացման և թաղավորական կենաց և տերության հարատևման համար բարի աղոթքների առաքման համար հոգալու մասին, մեծաշուք հրամանս հրապարակվեց: Որով հրամայում եմ:

1135 թ. ռամազանի 29-ին (1723 թ. հուլիս 3):

Հաշվապահությունից:

Կարգադրված է հրամանագիր տալ:

1135 թ. ռամազանի 29-ին (1723 թ. հուլիս 3)

(Ստորագրություն)

Բացատրված կարգով գլխավոր հաշվապահությունից, ջիզյայի գրասենյակին հաշվեցուցակ տալու համար, գլխավոր հաշվապահությունում արձանագրելով, այլ գրությամբ գրի առնել:

الامر حبیباً حرر فیہ نطقه الفقیر اللہ عزّ شأنه
 السيد محمد القاضي بآردو تفلیس
 من قبل امر من له الامر - مهر -

سبب تحریر کتاب بود که حالا با فرمان عالی تفلیس قلعہ سی
 تسخیرینہ مأمور جنود منصورہ نیک سرداری اولان اشبویا عث الوثیقہ
 وزیر آصف رسوم محافظ ارض روم سعادتلو سلحدار ابراہیم پاشا یسر
 اللہ بالخیر ما ینشاء حضرتلری قلعہ مزبورہ یدہ درت مرحلہ قریب چلدیر
 ایالتقدن اوروجایہ نام محلہ نزول ایدوب ترتیب ایلدک لری دیوان
 آصفیلرندہ عقد اولغان مجلس شرح انورده قلعہ تفلیس نواحیلرندن
 قیفیللی ناحیہ سندہ واقع آغ بولاقی نام قریہ کتخداسی بابی ولد اوک
 جکرشین نام قریہ کتخداسی تاماس ولد اولی بیک و ترکیش قریہ سی
 کتخداسی مناس ولد مخی و اورتولی علوی نام قریہ کتخداسی انانیہ
 ولد کرکور و اورتولی سفلی نام قریہ کتخداسی اوسیب ولد شاہ نزار
 و قزل قوج نام قریہ کتخداسی بری ولد نرمان و قزنجی نام قریہ سی
 کتخداسی سرکز ولد بوغوس خان بولاقی نام قریہ کتخداسی اوہان ولد
 وارتان و ملک نام قریہ کتخداسی مصر ولد ملک و قوری چای نام قریہ
 کتخداسی اصلان ولد باجلو غوکاس نام قریہ کتخداسی شرمان ولد جان
 بیک و اوکوستان نام قریہ کتخداسی سلیم ولد اراکیل دوہ کوز نام
 قریہ کتخداسی قرہ کوز ولد اوانیس و اللہ ویردی نام قریہ کتخداسی
 دانیل ولد مختار قزل قوج نام قریہ کتخداسی امین ولد کرکور کشیش
 دیہ نام قریہ کتخداسی کرکور ولد یاغوب کشیش و قزنجلی نام قریہ
 کتخداسی عزیز ولد خجادر و اختیارلرندن بابیجان ولد کراکوس والسی

شهود النسال

عزتلیو مصطفی پاشا محافظ قارص حالیا
 عزتلیو احمد آغا ابن یوسف الشهیر بالاکوز سربوآبان درگاه عالی
 هینوا ززاده سلیمان آغا میرالای
 مصطفی بیک میرالای ارضروم
 عبدالله آغا میرالای بایبورد
 سلیمان آغا میرالای ارزنجان
 عثمان آغا میرالای کلکیت
 حسن آغا میرالای
 عمر آغا بن ابراهیم میرالای
 محمود آغا میرالای اسبر
 عمر آغا میرالای درجان

اشبو حجت شرعیہ باش محاسبہ یه قید و حفظ اولنمق بیورلدی

۲۷ رمضان سنه ۱۱۳۵

ارض روم والیسی اولوب تغلیسی جانبینده سرعسکر اولان وزیر
 ابراهیم پاشایه حکم که سنکی وزیر مشارالیه سن مقیتکه ما مور اولان
 جنود منصوره اسلامیه ایله صوب ما مورہ حرکت و عزیمت اهل یوب تغلیسی
 جانبینده واردوقده تغلیسی مضافاتندن قیفولی ناحیه سنک اهاالی
 و رعایاسی طرفلرندن اصل و وکیللری و قراکنخدالری وقوجه باشیلری
 طرفکه کلوب عواطف علیہ پادشاها نمدن استقطاف و استیمان و زیر
 سایه دولت علیهم التجا ایله ذمت و رعیتی تعهد و قبول ایتملریله

خدیوانه می جمله سنه اشاعت و اعلان و فیما بعد ظل و ربق پادشاهانه
 مده من کل الوجوه محمی الاطراف اولاجقلمین صغیر و کبیر و وضع و
 رفیعنه افاده و ابتداده و حالا متصرف اولدقلزی املاک و اراضیلرینی
 یدلرنده ابقا و تقریر ایلایوب بیون سبحانه تعالی اوامر خطیر
 صورت حسن نظام افراغ ایتمکده حدیاتی و هر حالده فقرا و ضعفا یی
 حمایت و صیانت ایلک قیام فر و شوکت ملوکانه و دوام عمر و دولت
 پادشاهانه استجاب دعوات خیرییه ایلمکده تقید و اهتمام ایلمکی
 باینده فرمان عالیشانم صادر اولمشدر بیوردمکی *

فی ۲۹ رمضان سنه ۱۱۳۵

[امضاء]

تذکره امر داده

محاسبه دین

فی ۲۹ رمضان سنه ۱۱۳۵

وجه مشروح اوزره باش محاسبه دین جزیه قلمنه قائمه ویرلمک

اوزره باش محاسبه قیدایله باشقه یازوایله یازیله *

А. Д. ПАПАЗЯН

НОВЫЕ МАТЕРИАЛЫ О НАЛОГОВОЙ ПОЛИТИКЕ ТУРЕЦКИХ ВЛАСТЕЙ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

Резюме

В Тифлисском фонде Восточного отделения Народной библиотеки в Кириллы и Мефедия в Болгарии хранятся три османских документа 1723 г. Первый из них является утвержденным в Шариатском присутствии при штабе командующего двигающихся в направлении Тифлиса османских войск Ибрагима-паши соглашением. Второй документ—решерт, представленный на основании этого соглашения из дворцового дивана султану Ахмеду III, а третий—указ султана, датированный Ибрагим-паше.

Документы рассказывают о том, что 4 июня 1723 г. в лагерь османских войск направлявшихся в Тифлис, явились старейшины (кезхуди) 31 армянского селения переименованной в Кайгули провин-

ция Ашоцк (область Гугарк исторической Армении), входящей в этот период в подвластное Сефевидскому Ирану валийство Восточная Грузия и, выразив подданство, сумели предотвратить набег и грабеж своих областей. Взамен «добровольного» принятия подданства, уплатив лишь по размерам поголовную подать (джизью), указанные селения были освобождены на три года от других поземельных налогов.

Публикуя в приложении к статье турецкий текст и армянский перевод двух документов (протокола Шариатского присутствия и султанского указа), мы показываем на основании параллельного анализа других архивных материалов, грабительский характер налоговой политики Турции и соответствующие способы взимания налогов в Закавказье в 1723—1736 гг. турецкими оккупационными властями.

A. D. PAPAŽIAN

NOUVEAUX DOCUMENTS SUR LA POLITIQUE D'IMPOSITION DES AUTORITES TURQUES EN ARMENIE ORIENTALE

Résumé

Le Fonds de Tiflis du Département oriental de la Bibliothèque Nationale Cyrille et Méthode de Bulgarie conserve trois documents ottomans de 1723. Le premier est un accord confirmé en lieu public du Chariat près l'état-major du commandant des troupes ottomanes d'Ibrahim-pacha se dirigeant vers Tiflis. Le second document est un rapport présenté, en se basant sur l'accord mentionné, par la chancellerie du palais au sultan Ahmed III, le troisième, un ordre du sultan adressé à Ibrahim-pacha.

Ces documents témoignent que le quatre juin 1723, le camp des troupes ottomanes en route pour Tiflis reçut la visite des doyens (kathoudas) de 31 villages arméniens de la province d'Achotzk, nommé Kayghouli par les Ottomans (région de Gougark de l'Arménie historique), qui faisait partie à cete époque du vilayet de la Géorgie orientale soumise à l'Iran Séfévide qui, ayant fait acte de soumission, réussirent à prévenir le pillage de leurs régions. En récompense de cette soumission „volontaire“ et ayant seulement payé une capitation (djizzia) modérée es villages mentionnés furent libérés pour trois ans des autres impôts, fonciers.

En publiant en appendice à l'article le texte turc et la traduction arménienne de deux documents (le protocole du lieu public du Chariat et l'ordre du sultan), nous montrons, par l'analyse parallèle d'autres documents d'archives, le caractère inhumain de la politique d'imposition de la Turquie et les procédés de levée des impôts en Transcaucasie par les autorités d'occupation turques aux années 1723—1736.

ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊԱՐԱԿԱ-ՀՆԴԿԱՀԱՅ ՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ՝ ԴԱՀԲԱՇՅԱՆ ՏՈՀՄԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ԺԷ-ԺԹ ԴԱՐԵՐ)

Վերջին տարիներին հայտնաբերվում, ուսումնասիրվում և հրատարակվում են Պարսկաստանի և Հնդկաստանի հայություն պատմությանը, մշակույթին, կենցաղին ու կյանքի այլ ասպարեզների վերաբերող նոր աղբյուրներ¹, որոնք հրամայական անհրաժեշտություն են դարձնելու գոյություն ունեցող մեծարժեք, բայց արդեն հնացող աշխատությունների² կողքին ունենալու հայ գաղթաշխարհի այս ստվար հատվածին վերաբերող առավել ընդգրկուն և համապարփակ նոր ուսումնասիրություններ: Այսպիսի մի նորահայտ կարևոր սկզբնաղբյուր է պարունակում Մաշտոցի անվան Մատենադարանի վերջին տարիների ձեռքբերումներից մեկը՝ լոնդոնարնակ պ. Հովսեփ Ավետույանի նվիրարբերած և Հայերեն ձեռագրերի հիմնական հավաքածուի 10703 համարի ներքո գրանցված Հայամավորքը³:

Թավրիզեցի Դահբաշի Զաքարիայի ծոռ Հովսեփ Դահբաշյանն այս ձեռագիրը գրել է իր կյանքի մայրամուտին. «ի ծերութեան և տկար հասակոջս և անկարողութեան ժամանակիս, դողդոջմամբ ձեռօքս... ի կթ (69)-երորդ ամի կենաց իմոց սկսեցայ գրել և ՀԱ(71)-երորդ ամի կենաց իմոց Աստուծով աւարտ հասուցի...»⁴: Սկսել է 1809 թ. փետրվարի 24-ին, Հրնդ-

1 Առաջին հերթին նկատի ունենք Նոր-Ջուղայի հայերեն ձեռագրերի երկհատոր ցուցակը. Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Կաղմեց Սրմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, հ. Բ, Կաղմեց Լ. Գ. Մինասեան, խմբագրեց Օ. Ս. Եզանեան, Վիեննա, 1974 (այսուհետև կհիշատակենք Ցուցակ Նոր-Ջուղայի, Ա, Բ ձևով), ապա Հովհաննես Տեր-Ծավթյան Ջուղայեցու Հաշվետումարը, Աշխատասիրությունը Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Գ. Փափազյանի, Երևան, 1984 (այսուհետև կհղենք՝ ՀԶ, Հաշվետումար ձևով), իրանահայ բանասեր Լ. Գ. Մինասյանի որոշ ուսումնասիրություններ՝ Փերիայի հայ աշուղները, Թեհրան, 1964. Պատմադիր Սահիաննես Կրէյց, Թեհրան, 1956. Պատմութիւն Փերիայի հայերի, Անթիլիաս, 1971. Նոր-Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636—1972), Նոր-Ջուղա, 1972. Դիւան Ս. Ամենափրկչի վանքի, 1606—1960, Արխիւի ուղեցոյց գրքոյկ, Նոր-Ջուղա, 1983. և այլն, ի վերջո՝ Շ. Լ. Խաչիկյանի աշխատությունը՝ Նոր-Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրաանտեսական կապերը Թուսաստանի հետ XVII—XVIII դարերում (Երևան, 1988) և այս խնդրին վերաբերող նրա հոդվածները:

2 Սրանց ոչ լրիվ, ցավօք նաև տպագրական վրիպակներով լի ցանկը տե՛ս P. A. Աճրայան, Армянские источники XVIII в. об Индии, Ереван, 1968, с. 290—295.

3 Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», հ. 12, Երևան, 1977, էջ 334. ձեռագիրն այստեղ սխալմամբ թվագրված է «ԺԸ դ.» 1993 թ. ամսանք լոնդոնում մեծ ցավով առանք. պ. Ավետույանի անձամանակ մահուան (1991 թ.) բոթր. «Ցիշատակն արգարոց օրհնութեամբ եղիցի»:

4 Ձեռագրի և նրա ընդօրինակման հանգամանքների մասին տե՛ս այստեղ՝ Հավելված Ա և Ժ. 134. ավելորդ կրկնություններից խուսափելու համար այս ձևով այսուհետև շարադրանքի մեջ կհղենք բնագրին կցված ծանոթությունները:

կաստանի Սուրաթ քաղաքում, իսկ 1810 թ. ապրիլի 28-ից ի վեր շարունակել և 1811 թ. դեկտեմբերի 25-ին ավարտել է Բոմբեյում (ողջ աշխատանքը տևել է ուղիղ 2 տարի 10 ամիս): Այս տարիներին նա վարում էր սնանկացած վաճառականի գործից ետ քաշված կյանք, իսկ Հայսմավուրքն ընդօրինակել է, որովհետև անգլիացի գործատիրոջ մոտ ծառայող իր որդիները հաճախ շէին կարողանում եկեղեցի գնալ, ուստի և այս ձեռագրի շնորհիվ կարող էին «զսրբոց պատմութիւնսն» կարդալ նաև տանը:

Հայսմավուրքը գրել-ավարտելուց հետո Հովսեփի Դահբաշյանը նրան կցել է իր տոհմի պատմության բազմաթիվ առումներով ուշագրավ մի շարադրանք (սկսվում է իր մեծ պապ Դահբաշի Չաքարիայով), որը կարող է լինել Պարսկաստանի և, հատկապես, Հնդկաստանի հայության պատմության կարևոր սկզբնաղբյուր և որն այս հրատարակմամբ դրվում է գիտական շրջանառության մեջ: Չեռագրի բովանդակությունը հետևյալն է.

1. 2ա. (Տիտղոսաթերք-Յիշատակարան).

2. Յա-214բ¹. Յայսմաուրք.

3. 214բ¹—5բ¹. Յիշատակարան սուրբ գրքոյս.

4. 214բ²—7ա². Յանկ Յայսմաուր սուրբ գրքոյս թղթահամարովն՝ որ ինչ պատմութիւն գոյ ներ սուրբ մատենիցս, 366 աւուրց սրբոց պատմութիւնքն, որք են.

5. 217ա²—20բ² և 228բ¹—30բ². Պատմութիւն նախնեացն իմոց.

6. 221ա¹—8ա². Յանկ Յայսմաուրաց արարեալ ըստ կարգի այբուբենից՝ վասն յատուկ անուանց սրբոց մարտիրոսաց, եղիւոց ի մատենիս՝ վասն դիրաւ գտանելոյ զվարս և գործս նոցին:

Թվարկված նյութերից հինգերորդը մեզ զբաղեցնող աղբյուրն է, իսկ առաջինն ու երրորդը սերտորեն կապված են նրա հետ, նպաստում են մեր հեղինակի և՛ բնդհանրապես հնդկահայության կյանքը ճիշտ հասկանալուն, ուստի և այստեղ հրատարակվում են իբրև Դահբաշյան գերդաստանի պատմության հավելվածներ:

Բնագիրը հրատարակության պատրաստելու ընթացքում նամակադրական կապ հաստատեցինք խնդրո առարկա Հայսմավուրքի նվիրատու Հ. Ավետումյանի հետ և 1985 թ. նրանից ստացանք նույն պատմության մի այլ տարբերակ՝ Գրիգոր Նարեկացու Մատյանի 1774 թ. Պոլսի հրատարակության մի օրինակ, որի սկզբում և վերջում ավելացված թերթերի վրա գրված էր այդ տարբերակը⁵. 5ա—10բ էջերն զբաղեցնող զբանցումներն ընդգրկում են ընտանիքի 1785 թ. սեպտեմբերի 7—1862 թ. հուլիսի 21 ժամանակահատվածի տարեգրությունը (Հովսեփի գործերին վերաբերող նկարագրություններն այստեղ չկան):

Այժմ՝ մի քանի խոսք Դահբաշյան տան պատմության ստեղծման ժամանակի մասին. ինչպես նշել ենք, Հայսմավուրքում բնագիրը զետեղված է բուն հիշատակարանից անմիջապես հետո, ասել ենք նաև, որ վերջինիս

⁵ Մաշտոցի անվան Մատենադարանում այն գրանցվեց որպես ձեռ. № 10943. ունի 20,5×14,5 սմ մեծությամբ 13 թերթ. շարված՝ 1ա—3բ, 4բ, 11ա—3բ, միասյուն, նոսրգիր, էջում՝ 38—40 տող, 3բ—4ա էջերն զբաղեցնում է «Ճուշակ աղօթամատոյց սուրբ գրքիս՝ թէ երբ և որք զլուխք ընթեռնելիք են» ցանկը (կիրառական նույնպիսի նշումներ կան նաև տպագրի տարբեր էջերում):

մեջ ձեռագրի գրչության ավարտը նշված է 1811 թ. դեկտեմբերի 25-ի ամսաթվով, ուստի և պետք է մտածել, որ Հովսեփին իր պատմությունն սկսել է գրել դրանից անմիջապես հետո՝ 1812 թ. սկզբին: Մինչև այս վերջին տարվա ապրիլի 7-ը (ծանր հիվանդությունից կնոջ ապաքինվելը) դեպքերը նկարագրված են իբրև անցյալի իրողություններ, իսկ այստեղ գրված է հիշատակարանանման մի մաղթանք, որին հաջորդում է առաջին տարեգրական գրանցումը՝ 1815 թ. հուլիսի 23-ին Հովսեփի ավագ որդի Մարկոսի երկրորդ ամուսնության մասին:

Ուրեմն, աշխատության բուն մասը գրվել է 1812 թ. առաջին կեսին, Հովսեփի օրըստօրէ գրանցած տարեգրությունն ընդգրկում է 1815—1823 թթ. դեկտեմբերի 8 ժամանակամիջոցը, իսկ նրա մահվանը (1824 թ. օգոստ. 25) նախորդող երեք և հետագա բոլոր տեղեկությունները գրված են իր որդի Մարկոսի ձեռքով: Վերջինիս մահվան (1864 թ. մարտի 14) արձանագրումն էլ արված է երևի իր ավագ որդի Գրիգորի ձեռքով. սրանով էլ վերջանում է Դահբաշյան տան 1812—1864 թթ. Բոմբեյում գրված պատմության բնագիրը:

Նարեկում ևս, ինչպես Հայսմավուրքում, նույն հաղորդումով Հովսեփին ավարտել է, հաջորդով՝ Մարկոսը շարունակել գրանցումները: Առաջին հայացքից կարող էր թվալ, որ սկզբնականը Նարեկի տարբերակն է և որ Հայսմավուրքի ընդարձակ պատմությունը հետագայում կազմվել է նրա հիման վրա: Բայց շարագրանքի բնույթից երևում է, որ Նարեկի գրանցումները Հովսեփին սկսել է 1788 թ.՝ իր երկրորդ որդու ծնվելուց հետո, նախապես շնոռանալով արձանագրել նաև երեքամյա ավագ որդու ծնունդը (ըստ որում, սխալվել է և վերջինս 1785 թ. փոխարեն նշել 1786-ով): 1809 թ. փետրվարին, երբ Հայսմավուրքի գրչություն սկսվել էր, Նարեկի գրառումները դադարեցրել է և լրացնելով վերսկսել միայն 1817 թ. սեպտ. 7-ից հետո (1818 թ. մայիսի 11-ից ի վեր երկու տարբերակն էլ գրեթե բառ առ բառ կրկնում են իրար, այսինքն՝ գրանցումները երկուսում էլ արվել են միաժամանակ): Այսպես մտածելու հիմք է տալիս նաև հետևյալ իրողությունը. Նարեկի 5ր էջում գրված է. «Թիւն փրկչի 1809, փոքրն 193, Ֆէվէր 5, Ուլդան 10. յաջողութեամբն Աստուծոյ». սրան հաջորդող 4 տողը գրված է թղթի այդ մասին փակցված կարկատան թերթիկի վրա և հաղորդում է Թոմաս Նիկողոսի դուստր Թագուհու հետ Հովսեփի որդի Մարկոսի ամուսնության մասին: Կարկատանն անջատվեց՝ բացված տեղում գրված էր նույն Մարկոսի երկրորդ ամուսնության՝ 1815 թ. հուլիսի 23-ին կատարված դեպքի մասին, այսինքն՝ անկասկած է, որ սա գրվում էր 1815-ից հետո, ավելի ստույգ՝ 1817 թ.: Այսուհանդերձ, Նարեկի տարբերակն ունի կարևոր արժանիքներ՝ 1785—1809 թթ. մասում հաճախ առանձին մանրամասներով լրացնում է Հայսմավուրքի որոշ հաղորդումներ, ունի նաև 1856 թ. նոյ. 24-ին, 1858 թ. սեպտ. 6-ին և դեկտ. 25-ին, 1862 թ. հուլ. 21-ին վերաբերող՝ Հայսմավուրքում մոռացմամբ ընշանակված շորս հաղորդում:

Նախընթաց շարագրանքի առանձին ակնարկներից իսկ երևաց, որ բնորոշ հատկանիշների առումով բնագիրը բաժանվում է երեք մասի.

ա. Ավանդական կամ նախահեղինակային շրջան (ներկայացնում է տոհմի առաջին երեք սերնդի՝ իր մեծ տատից լսած պատմությունը)։

բ. Հեղինակի և իր որդիների ընտանիքի պատմություն (բնականաբար՝ ամենամանրամասնը, հարուստն ու արժեքավորն է)։

գ. Չեռագրի գրչությանը հաջորդած տարիների և Մարկոսի գրած շարունակություն-տարեգրություն (ծնունդների, ամուսնությունների ու մահերի միօրինակ գրանցումներ)։

Առաջին մասի սկզբի (իր մեծ պապ Գահրաշի Զաքարիայի և նրա որդի Սարգսի մասին պատմող հատվածի) համար մեր հեղինակի հիմնական աղբյուրը Զաքարիայի հարս և Սարգսի կին (հոր գծով Հովսեփի տատ) նարգիդի գրույցներն են, իսկ երկրորդ կեսի՝ տոհմի երրորդ սերնդի կամ իր հորեղբայրների ու հորաքույրների կյանքի ու կենցաղի ականատեսն արդեն ինքը՝ Հովսեփն է։ Այստեղ նա համառոտ գծերով ներկայացնում է նորջուղայեցի հայ արհեստավորների ամենասովորական մի ընտանիքի պատմությունը⁶, նրա անդամների գրադմունքն ու կենցաղի որոշ մանրամասներ։

Ընտանիքի նախահայրը՝ թավրիզեցի սամուրակար Զաքարիան դարձել էր Աբաս Ա շահի ըմբիշների տասնապետը (գահրաշի—այստեղից էլ նրա և իր շառավիղների մականունը)։ Նրա միակ որդի Սարգիսը ևս պարապել է հոր արհեստով, ապա՝ անգլերեն սովորել և «ինկլիզ պարոնաց» թարգմանի պաշտոնով երեք անգամ գնացել Բրիտանիա։ Սարգսի հինգ որդիներն էլ եղել են անգլիացիների թարգման, հյուան, ոսկերիչ, սափրիչ, ձկնորս, կրոնավոր կամ վաճառական։ Երրորդ որդին՝ ոսկերիչ Ստեփանը, բազմանգամ ընտանիք խնամելով հանդերձ, աշխատել է միջոցներ առանձնացնել և իր որդիներին դարձնել վաճառական։ Իսկ նրա դուստրերի ամուսիններն արհեստավորներ և քահանաներ էին, այսինքն՝ պատկանում էին հասարակության այն նույն խավին, որի մեջ և իրենց աներոջ ընտանիքն էր։ Հովսեփի գործի այս ավանդական՝ ժամանակագրական հենքից զուրկ մասի շնորհիվ և նրա երբեմն աղքատ, երբեմն էլ միջին կարողություն ունեցած ընտանիքի օրինակով այժմ հնարավոր է պատկերացում ունենալ ջուղահայոց ոչ միայն հարուստ առևտրական, այլև՝ միջին կարողության տեր արհեստավորական ընտանիքների մասին։

Հովսեփի գործի ամենաարժեքավոր մասը, ինչպես ասել ենք, իր և իր որդիների ընտանիքի պատմության հատվածն է, այդ պատճառով էլ համառոտ ներկայացնում ենք ընտանիքի կենսագործունեությանը վերաբերող այն ամենը, ինչ կարողացել ենք պարզել⁷։

6 Նոր-Ջուղայի հայ գաղութի պատմարան 2. Տեր-Հովհանյանցը բազմաթիվ արժանահավատ փաստաթղթերի հիման վրա հյուան է իր հայրենակիցների առավել հանրահայտ տների համառոտ պատմությունները. տե՛ս 3. ՏԼԵ-Յովհաննեանց, Պատմութիւն Նոր-Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 86—157 (այսուհետև՝ 3. ՏԼԵ-Յովհաննեանց, Ա կամ Բ՝ Նոր-Ջուղա, 1881)։ Պատահական չէ, որ այստեղ Գահրաշյան տոհմի մասին ակնարկ իսկ չկա, որ նշանակում է, թե սա, իրոք, սովորական արհեստավորական մի ընտանիք էր։

7 Ծիշա է, Հովսեփի հիմնական նպատակն իր ընտանիքի կյանքի կարևոր իրադարձությունների (ծնունդ, ամուսնություն, մահ) արձանագրումն էր, ուստի և կյանքի գործնական կողմի՝ առևտրի, նրա հետ կապված հաշիվների, դրամական կարողության շափի և ընտանիքի տնտեսական գրության մասին չի խոսում, սակայն ակամա ասված որոշ ակնարկներ և հարակից այլ փաստեր հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու նաև նրա կյանքի այս կողմի մասին։

Ստեփան Գահրաշյանի 8-րդ զավակ Հովսեփը հորից ոսկերչություն է սովորել, տեր Մկրտչից (հետագայում նոր-Ջուղայի առաջնորդ արքեպիսկոպոս)⁸ սաղմոսերգություն և տախտակի վրա գիր գրել, նրա եղբայր Գրիգորից՝ Ազարիա Ջուղայեցու թվականը (այստեղից էլ Հովսեփի տոմարագիտական հմտությունը, որի շնորհիվ պարզել է իր ծննդյան թվականը՝ 1741) և թղթի վրա գրելը, գուլպա կարող Մատուրից՝ «բարևագրի ոճ» ու դրամ հաշվել, Ս. Ամենափրկչի միաբան Ղուկաս վարդապետից՝ շարականերգություն, Գևորգ ներսիսյանից՝ շարականներ և քարոզներ ու «գեղեցկաձև գիր», հուղադ անունով պարսիկից՝ պարսկերեն (կիսատ է թողել): Մի տարի էլ սովորել է «սամուր, մորթեղեն, գդակ և վերարկու» ձևել, այնուհետև իր քեռայր Եղնազարից 13 ամիս ջուլհակություն է սովորել և այսքանով ավարտել ուսումնառությունը:

Այս նկարագրությունը չափազանց մեծ արժեք ունի բնդհանրապես ժԸ դ. կեսերին Հնդկաստան գնացող ջուղահայ պատանիների ստացած ուսման մասին պատկերացում ունենալու իմաստով: Հնդկաստանում թեև նրանք ամուսնանում էին հայ աղջիկների հետ և հայ բնտանիքներ ստեղծում, բայց ազգային դպրոցների շրջությունը⁹, անգլիացիների մրցակցությունը դիմանալու համար նրանց լիզվի ու բարքերի բնօրինակումը և այլ մասնավոր պատճառներ հանդեպնում էին տխուր արդյունքների. նրանց երրորդ սերունդն արդեն օտարանում էր, իսկ շորրորդը՝ իսպառ մոռանում հայ լինելը¹⁰:

Այսպիսով, 1761 թ. 20-ամյա Հովսեփ Գահրաշյանն ստացել էր գործնական կյանքի համար անհրաժեշտ բոլոր գիտելիքները և, հոր ցանկությունամբ ու եղբայրների հետևելով, պետք է մտներ առևտրական ասպարեզ: Բայց պատմական աննպաստ պայմանների պատճառով նոր-Ջուղայի վաճառականությունն այս շրջանում լիովին մարել էր¹¹, իսկ ջուղայեցի առևտրականները հանգրվանել էին իրենց գործունեության ուղիների հանդուցակետերում՝ Աստրախանում և Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, Բուշերում, Բասրայում, Սուրաթում և Հնդկաստանի այլ քաղաքներում, Եվրոպայի կարևորագույն նավահանգիստներում և այլ վայրերում: Ուստի և Ստեփան Գահրաշյանը, որ իր ավագ որդուն ուղարկել էր Աստրախան, միջնակին՝ Չիչրա, կրտսերին էլ ճանապարհեց Բասրա, ուր վերջինս որպես սպասավոր-գործակատար սկսեց ծառայել և վաճառականություն սովորել նշա-

8 Հովսեփի պատմածները հաստատում են վերջինիս կենսագրության որոշ հայտնի մանրամասներ. հմտ. Յ. ՏԷՐ-Յովհաննես, Ա, էջ 63—7:

9 Հնդկահայությունն ողջ պատմության մեջ եզակի բացառություն է Կալկաթայի Հայոց մարդասիրաց ճեմարանը, բայց սա էլ գրեթե միշտ հիմնականում ծառայել է ջուղայեցի ունեզուրկ պատանիներին կրթություն տալու գործին, իսկ տեղացի հայերը նախընտրել են իրենց զավակներին եվրոպական կրթություն տալ. հմտ. Փ. Գուշակեան, Հնդկահայք. Տպատրոթիւններ և տեղեկութիւններ, Երուսաղէմ, 1941, էջ 132—9, 235—42 (այսուհետև՝ Փ. Գուշակեան, Հնդկահայք):

10 Հնդկահայ գաղթօջախները, և բնդհանրապես Հնդկահայություն հասկացությունը, վաղուց գոյություն չէին ունենա, եթե կես կամ մեկ հարյուրամյակը մեկ նոր-Ջուղայից և Պարսկաստանի գավառներից գաղթականության նոր ալիքներ չգային վերակենդանացնելու այստեղի հայ համայնքների մարմրող կյանքը. տե՛ս Փ. Գուշակեան, Հնդկահայք, էջ 233—5, նաև՝ Հայքի Հնդկա Անգլիացուց և Հոլանդացուց, հրատ.՝ Խ. Թովմասեանի, [Կալկաթա, 1880], էջ 15:

11 ՏԷ՛Ս 3. ՏԷՐ-Յովհաննես, Ա, էջ 199—303:

նաժոր առևտրական Մինաս Խալաբյանի թոռ (էմնիազի որդի) Հարությունի¹² մոտ: Նրա հետ էլ 1764—1767 թթ. ուխտի է գնացել Երուսաղեմ¹³, վերադարձից հետո դարձել էմնիազի որդիների առևտրական տան բաժնետեր և ուղարկվել Բենգալիայի Սեիդաբադ քաղաք: էմնիազյանների հետ Հովսեփի հարաբերությունն այնպիսին չէր, ինչպիսին, ասենք, ստեղծվել էր խոշա Գերաբի որդիներ Զաքարիայի ու Բմպրումի և Հովհաննես Տեր-Դավթյանի միջև կնքված համաձայնագրով¹⁴. նա «աղայ Յարութիւնի» եղբայրներ Հովհաննեսի և Խաչիկի անիրավահավասար գործակատար-ընկերակիցն էր և կարող էր ստանալ միայն իր ներդրած դրամագլխի շահը¹⁵: Իսկ այդ դրամագլուխը, ըստ ամենայնի, չպետք է մեծ լիներ՝ ոչ շատ ավելի այն գումարից, որ հորից ստացել էր իր ավագ եղբայր Սարգիսը՝ 10 թուման, որն էլ, իրոք, էմնիազյանների ընդարձակ ու բազմաձյուղ գործառնությունների համեմատ չնչին էր: Այս է պատճառը, որ երբ Հովսեփի Սեիդաբադ գնալուց մի տարի անց այստեղ մահացել է Հովհաննես էմնիազյանը, նրա եղբայր Խաչիկն առանց շահը տալու Հովսեփին է վերադարձրել նրա դրամագլուխը (էնալմալը) և նրան վտարել ընկերակցությունից: Խաչիկ էմնիազյանի այս քայլը կարող էր լինել նրա անարդարացի կամայականության (որ կարող էր անպատիժ մնալ) կամ Հովսեփի որևէ զանցառության արդյունքը¹⁶:

Վտարվելուց հետո 1,5—2 տարի (1769—1771 թթ.) Հովսեփը մնացել է Սեիդաբադում: Այս ժամանակ ոմն Արիստակես Կիրակոսյան «ի Բանկալայ, ի գեօղաքաղաքն Սէիտապատ... ի թվի փրկչի 1770, թիւն փոքր 155 (1770), նադար ԺԱ. (11. սեպտեմբերի 8)» գրել՝ ավարտել է մի ձեռագիր ժամագիրք՝ «ի խնդրոյ մարմնաւոր ուսուցչին իմոյ մահտեսի Յովսէփին», որին կոչում է նաև՝ «զվարպետդ իմ»¹⁷: Դժվար է ասել, թե Հովսեփին ինչ էր սովորեցնում իր աշակերտին (սրա մասին այլ տեղեկություն չունենք), որովհետև կարող էր ուսուցանել և՛ վաճառականություն, և՛ գրչության արհեստ, գուցե և երկուսը միասին: Քանի որ ապրելու համար 29-ամյա Հովսեփը պարտավոր էր թեկուզ և համեստ շափերով առևտուր անել, նրան կարող էր ընկերակցած լինել Նոր-Զուղայից Հնդկաստան գնացած ոչ ունևոր երիտասարդ Արիստակես Կիրակոսյանը:

12 Հարություն էմնիազյանը, նրա մահվանից (1782 թ. գարուն) հետո էլ իր որդի Ստեփաննոսը եղել են Բասրայում և Հնդկաստանի տարբեր քաղաքներում էջմիածնի մայր աթոռի տնտեսական շահերի հավատարմատարներն ու գործերի կարգավորողները. տե՛ս «Գիվան Հայոց պատմության». Նոր շարք, դիրք առաջին. Ղուկաս Կարնեցի, հ. Ա՝ 1780—1785, Աշխատասիրությունը Վ. Գրիգորյանի, Երևան., 1984, էջ 137, 205—10, 311—2 և այլն (այսուհետև՝ Գիվան, ՆՇ, 1—Ա):

13 Հովսեփի գործի ժամանակագրական կարգը, որի շնորհիվ կարելի է հեշտությամբ գտնել նրա ցանկացած հատվածը, մեզ աղատում է բնագրից բերվող վկայակոչումներն ու բազմաձևերը հղելու պարտավորությունից:

14 Տե՛ս ՀԶ, Հաշվետումար, էջ 8—9, հմմտ. Դատաստանագիրք Աստրախանի հայոց, Աշխատասիրությունը Ֆ. Գ. Պողոսյանի, Երևան, 1967, էջ 130 (այսուհետև՝ Դատաստանագիրք Աստրախանի):

15 Դատաստանագիրք Աստրախանի, էջ 131:

16 «Աղայի» ցուցումներից շեղվող «ընկերք» խտորեն պատժվում էր. նույն տեղում, էջ 132—70:

17 ՄՄ ձեռ. № 9571, էջ 167ա:

1771 թ. գարնանը մեր հեղինակն իր՝ գուցե մի փոքր աճած դրամա-
պիսով ընկերացել է Հովհաննեսի որդի Արրահամին¹⁸ և այս նոր «աղայի»
Սուրաթի գործերը վարելու համար մեկնել այնտեղ: Երկու տարի Արրահա-
մի հանձնարարականով ապրել է իր նախկին աղաների եղբայր և նոր աղայի
հորեղբայր (°) Մելիքնազ էմնիազյանի տանը, բայց որովհետև նրանց գոր-
ծերին «ներհակութիւն» էր պատահում (նույն տանն ապրելը կարող էր
առաջացնել երկուստեք աննպաստ մրցակցութիւն), տեղափոխվել է այլ
տուն: Եվս երկու տարի անց՝ 1775 թ. դուրս է եկել Արրահամի և նրան
միաբանած մադրասարակ Փանշյանց Հովսեփի Մարութի¹⁹ ընկերութիւնից,
ստացել իր դրամագրութիւնը, բայց շահն Արրահամը չի տվել, որովհետև չէր
կամենում նրա «հեռանալն ի գործոց իւրոց»: Այս փաստը մեզ թույլ է տա-
լիս մտածելու, որ Հովսեփի դրամական կարողութիւնը կտրուկ աճել էր, այդ
պատճառով էլ նրան այլևս չէր բավարարում «աղայ» Արրահամի անիրա-
վահավասար «ընկերոջ» իր վիճակը:

Հեռանալու իր ձգտումը Հովսեփը բացատրում է նոր-Ջուղա գնալու և
հորը տեսնելու անհրաժեշտութիւնով, և որպէսզի պատճառարանութիւնը
համոզիչ լինի, ոչ պատահաբար, մի փոքր խառնում է դեպքերի հաջորդա-
կանութիւնը: Իրականում եղել է այսպես. 1773 թ. մարտին «աղա Արրա-
համի հրամանաւն» հեռացել է Մելիքնազ էմնիազի տնից և բնակվել «յա-
տուկ տան», «յետ երկու ամաց»՝ 1775 թ. հորից ստացել է նոր-Ջուղա գնալ
և վերջին անգամ տեսնվել հորդորող «թուղթ աղերսանաց»: Բայց մինչ այդ՝
1774 թ. հուլիսի 9-ին, ամուսնացել էր նույն տարվա մայիսի 10-ին վախ-
ճանված ունևոր վաճառական, ժամակազմ (ժամագործ և ժամացույցի առե-
տուր անող) Աղազար Ոսկանի (տե՛ս ծ. 35) 13-ամյա դուստր Վարդենու
հետ (Հովսեփը 32 տարեկան էր): Շուտով՝ նույն 1774 թ. հոկտեմբերի 1-ին
մահացել է նաև Աղազարի 29-ամյա կին Բեկզազան: Աներոջ հարստութիւն
(ներառյալ նաև Հովսեփի կնոջ բերած օժիտ-պոռնոյր) իրավահավասար
ժառանգները նրա դուստրերն էին՝ Վարդենին և 7 կամ 8 տարեկան Հոսի-
սիմեն (տե՛ս ծ. 49), և թեկուզ կենդանի էր նաև Աղազարի զոքանչ Մա-
րիամխանումը, բայց Հովսեփը դարձել էր հանգուցյալ աներոջ ամբողջ հա-
րստութիւն փաստական տնօրենը, իսկ Մարիամխանումի մահից (1776 թ.)
հետո՝ նաև անշահափաստ քենու միակ հնարավոր հոգարարձուն²⁰: Այսպի-
սով, Հովսեփը կարող էր շրջանառութիւն մեջ դնել մի հսկա դրամագրութիւն
(քենու բաժին շահը, բնականաբար, հաշվելով նրա օգտին), իսկ քանի որ
Սուրաթում «շահ վաճառականութեան այնմ ժամանակին գոյով հաւասար
ընդ դրամադիսոյն (մաքուր օգուտը 100 տոկոս էր—Գ. Տ. Վ.) կամ սակաւ մի
նուազ քան զայն»²¹, իր աղայից հեռացող Հովսեփն ինքնուրույն գործելով

18 Հնարավոր է, որ սա նույն Հովհաննես էմնիազյանի որդին էր, որը հոր մահից հետո
բաժանվել էր հորեղբայրներից և ստեղծել նոր ընկերութիւն, որի մեջ սկզբից ևեթ ընդ-
գրկել էր մեր Հովսեփին, իսկ հետագայում՝ նաև Հովսեփի Մարութին:

19 Հովսեփի Մարութը Մադրասում էմնիազնի կաթողիկոսարանի գործակալն էր. տե՛ս Գի-
վան, ՆԵ, 1—Ա, էջ 288, 520, 523, 543—6, 561, հմմտ. աստ՝ ծ. 33:

20 Աստրախանի դատաստանագիրքը (էջ 75—80), որ պարսկահայոց սովորութային իրա-
վունքի օրենսգիրքն է, Հովսեփի հոգարարձութիւն համար որևէ արդելք չի նախատեսում:

21 Յ. Տէր-Յովհաննէանց, Ա, էջ 186:

կարող էր «կուտել զմեծագանձ հարստութիւնս»²²: Պետք չէ կասկածել, որ այս ամենը հայտնի էր նաև Սեփարադում ապրող աղային՝ Աբրահամին, որն էլ հենց նույն պատճառով չէր կամենում Հովսեփի «հեռանալն ի գործոց իւրոց» և առաջարկում էր նոր պայմաններով կամ հավասար իրավունքներով՝ նախկին դրամազլխի «շահն ի մէջ բերելով» և հավասար դրամական ներդրումներով վերստին «կիրարար ընկերանալ» իր և Հովսեփ Մարութի հետ: Սա, ի վերջո, ձեռնառու էր նաև Հովսեփին, ուստի և 1776—7 թ. ստեղծվեց այս նոր եռանդամ և եռաճյուղ (Սեփարադ-Սուրաթ-Մազրաս) իրավահավասար առևարական ընկերությունը:

Գծվար է ասել, թե որքան էր Հովսեփի ձեռքին եղած ողջ դրամազուխը. 1777 թ. մայիսի 20-ին վախճանվեց նաև նրա 16-ամյա կինը՝ Վարդենին (տե՛ս ծ. 37), որից հետո երկրորդ անգամ ամուսնանալիս (1784 թ. նոյեմբերի 15) նա պարտավոր էր հօգուտ առաջին կնոջ միակ արյունակից-ժառանգի՝ նրա քույր Հռիփսիմեի, հրաժարվել Վարդենու պուլյգ-օժիտից²³: Բայց այն հանգամանքը, որ Հովսեփի երկրորդ ամուսնությունից երկու տարի անց Հռիփսիմեն ամուսնացել է նրա «Յորդնովն» (քեւին մնում էր նրա խնամակալության տակ), իսկ, Աստրախանի դատաստանագրքի կազմողների խոստովանությամբ, պարսկահայոց մեջ «ամենայն գործառնութիւնք եղեն բանիւ և քստ հանութեան դատաւորացս, այնու աղադաւ այլայլեցաւ բազում բարեկարգութիւնք՝ մանաւանդ ի գրեյն կտակագիր և այլ նորին շամնաւա գրուածս»²⁴, հնարավոր է դարձնում ենթադրելը, որ մեր հեղինակը զանց է առել հանդուցյալ կնոջ օժիտից հրաժարվել պարտադրող վաղնշական սովորութային օրենքը: Աղազարի դուստր Հռիփսիմեն երկրորդ անգամ ամուսնանալիս (1795 թ.) ուներ 40 հազար ուսփի առձեռն դրամ և մի քանի թանկարժեք քար²⁵, բայց բացառված չէ, որ նախ Հովսեփը կարող էր նրան զրկած լինել իր օրինական հասանելիքի (և՛ դրամազլխի, և՛ շահի) մի մասից, ապա՝ առաջին ամուսին Փանոս Աղաբարն ամբողջովին վերադարձրած շիններ նրա տարած օժիտը: Այլապես հաղիվ թե «մեծահարուստ վաճառական» կոչված²⁶ Աղազար Ոսկանի մահից հետո՝ 20 տարի շարունակ շրջանառության մեջ գտնված նրա հարստության կանխիկ մասի կեսը կազմեր միայն 40 հազար ուսփի: Գա քիչ հավանական է, որովհետև ինչպես շուտով կտեսնենք, նույն տարիներին սուրաթահայ վաճառականները միանգամից գործի մեջ էին դնում ամբողջ լաբերի (100.000 ուսփի) հասնող գումարներ: Հռիփսիմեի ունեզրկված լինելու մասին այս ենթադրությունը հենվում է նաև այն փաստի վրա, որ երկրորդ անգամ ամուսնանալիս, հավանաբար նախընթաց դառը փորձից ելնելով, ամուսնական համաձայնագրի մեջ նա մտցնել է տվել կետեր, քստ որոնց կարող էր ազատորեն տնօրինել իր ունեցվածքը, պատասխանատու չէր հոլանդացի ամուսնու և

²² Նույն տեղում:

²³ Գատաստանագիրք Աստրախանի, էջ 64, հոդ. 38:

²⁴ Նույն տեղում, էջ 7. քննդժումը մերն է—Գ. Տ.—Վ.:

²⁵ Տե՛ս M. J. Sein, Armenians in India. From the earliest times to the present Day, Calcutta, 1937, p. 263 (այսուհետև՝ Մ. Սեյ):

²⁶ Նույն տեղում:

նրա ազգականների առջև ընդհանրապես և այդ ազգատ ամուսնու նախաամուսնական պարտքերի համար՝ մասնավորապես²⁷:

Այսպիսով, 1774 թ. Հովսեփի ունեցած և տնօրինության տակ գտնվող դրամագլուխը փոքր չէր, իսկ սուրաթահայ վաճառականների առևտուրն այս շրջանում աննախադեպ ծաղկում էր ապրում, որովհետև նրանք «կալան զհաղորդակցութիւն տուրևառութեան ընդ Պարսկաստանի և ընդ օսմանեան սահմանի, թափելով զվաճառս իւրեանց ի Բուշեռ և ի Բասրայ, ընդ Չինաց և ընդ Մանիլայի, ևս և սիրելի եղեն յաշս հնդիկ թագաւորաց աաշայ կոչեցելոց»²⁸: Ըստ էության Սուրաթն այս օրերին հնդկական տարանցիկ առևտրի ծովային և ցամաքային ուղիների կարևորագույն հանգուցակետն էր. ողջ Հնդկաստանից, Չինաստանից և նրանց հարող կղզիախմբերից ծովային ուղիներով այստեղ բերվող ապրանքն այնուհետև ցամաքով՝ Պարսկաստանի, ապա՝ Ռուսաստանի կամ Թուրքիայի վրայով առաքվում էր Եվրոպա: Իսկ հայ վաճառականները, ինչպես տեսանք, հաճախ ստանում էին գործի մեջ ներդրած իրենց դրամագլխին հավասար շահ: Եվս մի փաստ, որ հաստատում է Հովսեփի ունեկորության մասին մեր ենթադրությունը. 1782 թ. նա էջմիածնի նվիրակ Գրիգոր վարդապետին ընծայել է 130 ուսփի առձեռն դրամ, մի ձեռք քահանայական զգեստ և ոսկեթել կարմիր մ: մահրամա (սրբիչ կամ թաշկինակ), որի դիմաց 1785 թ. մայիսին էջմածնից Դուկաս Կարնեցու ստորագրությամբ շնորհակալության և օրհնության գիր է ուղարկվել մեր հեղինակին²⁹: Առատաձեռնությամբ Հովսեփը սուրաթահայ մյուս վաճառականներից միայն Հոհանջան Հակոբ Գերաբջանին է զիջել, իսկ վերջինս էջմիածնի կարևոր քարերարներից էր, և նրա միջոցներով այստեղ գրքեր էին տպագրում³⁰:

Հենց դրա շնորհիվ է, որ 1783 թ. Հովսեփն ընդունակ է եղել ոմն Սիրի Զաֆարից 3000 ուսփիով գնելու սեփական տուն և էլի 2000 ուսփի ծախսելու նրան կից «նոր շինուածքների» համար: 1784 թ. նոյեմբերի 13-ին տեղափոխվել է նոր տուն, երկու օր անց ամուսնացել ոմն Ներսեսի այրի՝ Շամախեցի Հարությունի դուստր Մարիամի հետ: Դժվար է ասել, թե դրամական իմաստով Հովսեփին ինչ է տվել այս ամուսնությունը, որովհետև երկրորդ կնոջ հոր և հանգուցյալ ամուսնու ու նրանց տնտեսական-ընտանեկան կացության մասին տեղեկություններ չունենք: Նախապես տունն ընծայագրով կնոջ անունով գրանցելով (տե՛ս ծ. 96), 1786 թ. ապրիլի 10—1787 թ. ապրիլի 26 ժամանակամիջոցում նա կատարել է Սուրաթ-Կանտոն (Չինաստան)—Սուրաթ ըստ ամենայնի հաջող առևտրական ճամփորդությունը: Այդ ընթացքում՝ 1786 թ. հուլիսի 9-ին եղել է նրա առաջին կնոջ քույր Հռիփսիմեի վերն ակնարկված ամուսնությունը Փանոս Աղարարի հետ, որ, անկասկած, պետք է որոշ չափով պակասեցնեք Հովսեփի ունեցած շրջանառու դրամագլուխը: Սակայն նրա համար առավել ճակատագրական է եղել 1795 թ. դեպի նույն Կանտոն երկրորդ առևտրական ուղևորությունը. և՛ նպատակակետին հասնելուց առաջ, և՛ վերադարձին ֆրանսիացիները գրավել են Հովսեփին տանող նավը, իսկ երկրորդ անգամ՝ նաև բռնադրավել

27 Նույն տեղում, էջ 364:

28 Յ. Տեր-Յովհաննես, Ա, էջ 186:

29 Տե՛ս ՄՄ ձեռ. № 4501, էջ 59աբ. հմմտ Դիվան, ՆՇ, 1—Ա, էջ 520:

30 Տե՛ս ՄՄ ձեռ. № 4501, էջ 58բ, 60աբ և այլուր. հմմտ. Դիվան, ՆՇ, 1—Ա, էջ 523:

նրա ապրանքը: Չորս տարի շարունակ տատանվել է Մալակկա թերակղզու, Սումատրա կղզու (ներկայիս Մալայզիայի և Ինդոնեզիայի) ու Ֆիլիպինների շրջանում³¹: Ի վերջո, 1799 թ. ապրիլի 21-ին երկրաշարժից հետո գետնի ճաքերից ելած ժանտահոտ տիզմի սպառնալուց Սումատրայում վարակվելով, հիվանդացել է և վերջնականապես ապաքինվել միայն 7 տարի անց: Այս բույր փորձանքների հետևանքով վերջնականապես սնանկացել է, 1799 թ. օգոստոսի 31-ին հասել է Պինանկ, իբրև գրագիր ծառայության մտել Մարգարի որդի Գեորգի մոտ, բայց վերջինս էլ սնանկացել է 1804 թ. գարնանը և ի վիճակի չի եղել վճարելու նույնիսկ գրագրի վարձը, ուստի Հովսեփն ստիպված է եղել մարտին վերադառնալ Սուրաթ³²:

Մեր հեղինակի առևտրական գործունեության այս անփաստական վախճանը պատահական կամ միայն նրան վերաբերող բան չէր, այլ՝ Հնդկաստանի գաղութացման համար Անգլիայի և Ֆրանսիայի վաղեմի պայքարի վերսկսման³³ ուղղակի հետևանքներից մեկը: Այսպես, 1783 թ. մայիսի 8-ին սուրաթահայ վաճառական Հոհանջան Հակոբ Գերաբյանը Նոր-Ջուզայի առաջնորդ Մկրտիչ արքեպիսկոպոսին գրել է. «ինչպիսի ամեն ազգի խեղ կովում այ. թէ Սուրաթումն՝ գազան մարդ է, թէ Տաղլերի ուղե, թէ Մադրասումն՝ Հէյդարալէ, թէ Ֆոանգուրսի, և հալ էլ Հոլանդգի խեղ կոխն այ, որ բովազակ ծով ու ցամաք կոխ այ: Չինու նախն բռնվելէն երկու լաք մեր աղդէն գնաց. հալ Բանկալոյ դու է մին նաւ, որ մարաթէն բռնեց՝ երկու և կէս լաքէն իւել մեր աղդէն գնաց. տասն օր այ, որ էս լուր եկել այ, միւս նախն գալէն էլ մեծ կասկածանաց միջում անք... վեց լաք ուսփուցն յաւել մեր աղգին վնաս ելաւ յիրար յետնայ»³⁴: Հաջորդ տարվա փետրվարի 12-ին նույն վաճառականը նույն առաջնորդին գրել է. «օր ըստ օրէ սուրբն անք մտման՝ գլխման աղքատաման, շուքմն ձախորդութիւն աւելաման, մանաւանդ տարէնս շամս 21-էն (1783 թ. ապրիլի 21—Գ. Տ.—Վ.) երկնից բարկութենէն շատոնք աղքատացան, յիսուն և վեց հազար ուսփի ինձանէ գնաց՝ էսպէս յամենուն ուր գորայ (համեմատ—Գ. Տ.—Վ.). հալ Բաթախու նաւերն գոլման՝ մինն ճանապարհին բռնման, մինն՝ կոտորման. մեր աղգի ետևու լաք ջուքամ գնաց՝ տասներեք հազար ուսփին բանդինս էր»³⁵: Չպետք է կասկածել, որ այս հսկայական դուժարների մեջ կային նաև մեր Հովսեփի կորուստները: Այս բուրբը գեղև 1783—1784 թթ. էր, երբ Անգլիան ու

31 Անհրաժեշտության դեպքում հնարավոր է հեշտությամբ կազմել Հովսեփի ուղևորությունների բարեկարգ, բայց դա մեր նպատակներից դուրս է:

32 Հ. Տեր-Հովհանյանցը (Ա, էջ 186—7) տպագրել է 1780—1800 թթ. Սուրաթում վաճառականությամբ զբաղված 30 հայ բնտանիքների մի ցանկ, որի վերջից երբորդ անունն է՝ «Յովսէփ Ստեփան-Բժշկեան», բայց սա մեր հեղինակը չէ, որովհետև նրա հայրը բժիշկ չէր. նրան վերաբերողը «Մարկոս Մահտեսի-Յովսեփեան» անունն է, այսինքն՝ ցանկն ըստ ամենայնի կազմվել է 1795—1800 թթ. ընթացքում, երբ Հովսեփ Գահրաշյանը Սուրաթում չէր (գուցե և մահացած էր համարվում): Ամուսնու մոտ տասնամյա բացակայության շրջանում նրա գործերը վարում էր կինը, բայց Նոր-Ջուզայի Ս. Ամենափրկիչ վանք ուղարկված փաստաթղթում (Հ. Տեր-Հովհանյանցի տպագրած ցանկում) նշվել է բնտանիքի ամենամեծ աղամարդ անդամի՝ 10—15-ամյա Մարկոսի անունը:

33 Այս երկարատև պայքարի մասին մանրամասն տես Ա. Բ. Կեպլան, Путешествие в историю. Французы в Индии, М., 1973.

34 Յ. Տեր-Յովհանեսեանց, Ա, էջ 189—90:

35 Նույն տեղում, էջ 189—90:

Ֆրանսիան պաշտոնապես պատերազմում էին իրար դեմ. այն ավարտվեց Ֆրանսիայի պարտությունը և մի համաձայնագրի կնքմամբ, որով վերջինիս հաջողվեց Հնդկաստանում պահպանել միայն իր նախկին փոքրիկ հենակետ-ֆակտորիաները, բայց 1793 թ. անգլիացիները պայմանագիրը խախտեցին և վերագրավեցին նաև դրանք: Իսկ դրանից հետո ֆրանսիացիներին մնում էր դիմել գործողությունների ծովահենական եղանակին³⁶, որի պատճառով, ինչպես տեսանք, Սուրաթի և ողջ Հնդկաստանի հայ վաճառականները հակայական վնասներ էին կրում, իսկ դրա հետևանքով էլ ժԸ դ. մայրամուտը նաև սուրաթահայ վաճառականության մայրամուտն էր՝ նրանց մեծ մասը ցրվեց Հնդկաստանի այլ քաղաքներ, հիմնականում՝ Բոմբեյ:

Վերջին հանգամանքը ևս պատահականություն չէր. ֆրանսիացի մրցակիցների հարցը լուծելուց և, հատկապես, անգլա-մայսուրական պատերազմից հետո, ժԸ դ. վերջում անգլիական Արևելա-Հնդկական ընկերությունը (իմա՝ Անգլիան) դարձավ ամբողջ Հնդկաստանի փաստական տերը և ընկերության նահանգական կենտրոններ Բոմբեյի, Մադրասի ու Կալկաթայի նավահանգիստների միջոցով հնդկական առևտուրն ուղղեց գերազանցապես դեպի ծովային ուղի: Յամաքային ճանապարհը, որի կարևորագույն հանգուցակետն էր Սուրաթը, կորցրեց իր նշանակությունը, ուստի և առևտրական իմաստով Սուրաթի հաշվին մի քանի անգամ ավելի մեծացավ նրան բավական մոտ գտնվող Բոմբեյի դերը: Հայերի սուրաթյան վաճառականությունը նույնպես մարեց³⁷. նրանց մեծ մասը տեղափոխվեց Բոմբեյ (Հովսեփի գործում հիշատակված են Սուրաթից այստեղ եկած Բոմաս Նիկողոսի ժառանգների, Պողենց Հովսեփ Միրայի, Խալաբյան տոհմի մի շառավղի³⁸ և ուրիշների անունները): Միաժամանակ, Հնդկաստանի լիիրավ տեր դարձած անգլիացիներն սկսեցին արմատական եղանակներով առևտրատնտեսական ասպարեզից վտարել իրենց նախկին «դաշնակից» հայերին, որոնք այդ ժամանակ այլևս չէին կարող մրցել լավագույնս կազմակերպված հզոր ռազմաքաղաքական ուժի՝ անգլիական առևտրական ընկերության հետ: Գրեթե բոլոր խոշոր հայ վաճառականները սնանկացան, ժՔ դ. սկզբներից ի վեր հնդկահայերը մեծ մասամբ պետական մանր պաշտոնյաներ, զինվորականներ, թարգմանիչներ, առևտրական գրասենյակների գրագիրներ և այս կարգի այլ մանր ծառայողներ էին³⁹:

Մեր հեղինակի ընտանիքը ևս արժանացավ հնդկահայության այս տխուր ճակատագրին. Պինանկից վերադառնալուց հետո Հովսեփն այլևս նոր գոր-

36 Տե՛ս A. B. Канлан, նշվ. աշխ., էջ 205—18. Անգլիան այդ զաղութները վերադարձրեց նապոլեոնին, բայց 1803 թ. կրկին գրավեց և Բուրբոններին հանձնեց միայն 1816 թ.:

37 ժՔ դ. Սուրաթում մնացել էին սակավաթիվ հայեր, որոնք չէին կարող հոգալ նույնիսկ հայոց Ս. Աստվածածին եկեղեցու քահանայի ուժեղի հարցը. անգլիական իշխանությունների հետ երկարատև գրադրությունից հետո, 1861 թ. եկեղեցին փակվեց, իսկ նրա կայքը տեղափոխվեց Բոմբեյի Ս. Պետրոս եկեղեցի: 1907 թ. այնտեղ կար միայն մի հայ ծերունի (տե՛ս Մ. Սեր էջ 267—77):

38 Տե՛ս այստեղ, ծ. 56: Այս փաստն ուղղակիորեն հաստատում է Մ. Սերի (էջ 298—4) այն պնդումը, թե անգլիացիները որոշակի գիտավորությամբ դեպի Բոմբեյ էին հրապուրում Սուրաթի հայ վաճառականներին:

39 Հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հ. V. Հայաստանը 1801—1870 թթ., Երևան, 1974, էջ 521—2:

ծի ձեռնարկելու ընդունակ շէր⁴⁰, և 1805 թ. սկզբին «ինկլիզերէնի» ուսում առած իր որդիներ Մարկոսին ու Ղուկասին (չորս տարի անց նաև Մատթեոսին) որպես գրագիր ծառայության տվեց «մտոր Թոմաս Վայթի Օֆիսից»։ Սուրաթի անգլիական անտրական գրասենյակում։ Ըստ որում, վարձատրությունն այնպիսին էր, որին, անկասկած, ոչ մի անգլիացի շէր համաձայնի. ավագ որդիներն ամսական ստանում էին 40-ական ռուփի, որը պետք է տարեկան աճեր 10-ականով, իսկ կրտսերին մի տարի ձրի աշխատեցնելուց հետո, պատճառաբանելով՝ թե անգլերենի իմացության մեջ «ոչ է կատարեալ», ամսական տալիս էին 20 ռուփի։ Ավելին, 1809 թ., երբ այս Թոմաս Վայթը նահանգական կենտրոն Բոմբեյում նշանակվեց ավելի բարձր պաշտոնի, Հովսեփի ընտանիքը կանգնեց ճակատագրական երկընտրանքի առջև՝ կամ պետք է անգլիացի պարոնի հետ տեղափոխվեր Բոմբեյ և շարունակեր ստանալ գոյություն համար անհրաժեշտ շնչին վարձատրությունը, կամ՝ մնար Սուրաթում և դրկվեր այդ շնչին նպաստից⁴¹։ Եվ, բնականաբար, ընտրվեց առաջին տարբերակը։

Բոմբեյ գնալուց հետո Հովսեփը վաճառեց վարձով տրված Սուրաթի իր տունը, որպեսզի կարողանա վճարել անհաջող անտրական ուղևորության պատճառով առաջացած պարտքերը։ Մի քանի տարի անց Հովսեփի որդիները կարողացել են օգտվել ինչ-որ նպաստավոր հանգամանքներից, որոշ գումար տնտեսել կամ կուտակել, դուրս գալ Թոմաս Վայթի Օֆիսից (կրտսերը՝ Մատթեոսը դուրս է եկել 1818 թ., հավանական է, որ ավագներն ավելի շուտ ազատված լինեին) և ինքնուրույն առևտուր սկսել։ Այս ենթադրության համար մեզ հիմք է տալիս նախ այն փաստը, որ Բոմբեյ դալուց 13 տարի անց (1823 թ.) Հովսեփի ընտանիքը «քրէով կացած» տնից տեղափոխվել է «Մարկոսին և Ղուկասին արծաթագին գնեալ և շինեցուցեալ» տուն։ Փոքր հիմք չէ նաև ԺՊ դ. կեսերին վերաբերող՝ Հ. Տեր-Հովհանյանցի հետևյալ վկայությունը. «Երկու եղբարք՝ պարոնայք Մարկոս և Ղուկաս Մահտեսի-Յովսեփեան իրրև քանի ամօք յառաջ էին անդ (Բոմբեյում—Գ. Տ.—Վ.) առաջադէմ, այլ սնանկութիւն խոնարհեցուցիչ այց ել նոցա»⁴²։ Վերջապես, նույն ենթադրության օգտին է խոսում նաև Մ. Սեթի հետևյալ ժլատ բնորոշումը. «Մարկոս Հովսեփը ԺՊ դ. առաջին կեսի ընթացքում (Բոմբեյում—Գ. Տ.—Վ.) հաջողակ հայ վաճառական էր»⁴³։

Մենք բավական մանրամասն տեղեկություններ ունենք Մարկոսի կրտսեր որդի «Հովսեփ բժշկի» գործունեության մասին՝ նա Հնդկաստանի անգլիական գաղութային բանակում երբևէ ամենաբարձր աստիճանի հասած հայ սպան էր՝ բժշկական ծառայության գեներալ (տես ծ. 112). ավագ որդի Գրիգորի մասին գիտենք միայն այն, որ ղեղազործ էր և Բոմբեյում ղեղա-

40 Գործից ետ քաշվելուց հետո նա սկսում է ավելի քիչ խոսել իր ընտանիքի անդամների գրադմունքի մասին, իսկ Մարկոսը, ինչպես գիտենք, սոսկ տարեգրող է, ուստի տոհմի պատմության այս հատվածի մասին քիչ գիտենք։

41 Արևելա-Հնդկական ընկերությունը մանր պաշտոնների էր ընդունում նաև հնդիկներին և մյուս տեղացիներին, ու նրանց վճարում 6—10 անգամ պակաս՝ քան անգլիացիներին. տե՛ս Новая история Индии, М., 1961, էջ 186։

42 Յ. Տէր-Յովհաննանց, Բ, էջ 108։

43 Մ. Սեթ, էջ 301։

տուն ունեի⁴⁴։ Իսկ նրա եղբայր Ղուկասի որդի Գավթի զբաղմունքի մասին որևէ տեղեկություն չունենք. գիտենք միայն այն, որ Մ. Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքին (1847 թ.) բաժանորդագրվել էին բոմբեյարնակ երեք մարդ. «Յարութիւն Յորդանանեան, Գրիգոր Մ[արկոս] Մահտեսի-Յովսէփ և Դաւիթ Ղ[ուկաս] Մահտեսի-Յովսէփ»⁴⁵։ Այս Գավթի ամուսնութեան և ունեցած զավակների մասին ևս մեր աղբյուրը չի խոսում, իսկ Հովսեփի բժշկի որդու և օտարահունչ անուններով շորս դուստրերի, նրա եղբայր Գրիգորի յոթ զավակների ծննդյան և մկրտութեան հանգամանքները հաղորդում է մանրամասնորեն։

Քանի որ Հայսմավուրքի և նարեկի գրանցումներն ընդհատվում են 1864 թվականով, անհրաժեշտ էր պարզել նաև տոհմի պատմության մինչև մեր օրերն ընկնող ետտարեգրական շրջանի պատկերը։ Ուստի մեր խընդրանքով աղբյուրիս ձեռագրերի նվիրատու Հ. Ավետումյանը դիմեց Գահրաշյան ընտանիքի այժմ լոնդոնարնակ ամենատարիքով անդամին՝ տիկին Վիկտորիա Հովսեփյանին (հիշյալ ձեռագրերը ևս ստացել էր նրանից) և մի քանի նամակով հաղորդեց այն ամենը, ինչ պահպանել էր նրա հիշողությունը⁴⁶։ Այդ ամբողջը, որի համառոտ շարադրանքն իբրև «Հավելված Գ» կցել ենք բնագրին, լրացրեց մեր իմացությունները և հնարավոր դարձրեց հայագիտության տրամադրության տակ զննել եզակի արժեք ունեցող մի աղբյուր, որ, անկախ պատմական պայմանների և հայ իրականության հարափոփոխությունից, շարունակարար և առանց ընդհատման ներկայացնում է մի գերդաստանի շուրջ շորսհարյուրամյա (մոտ 1600—2000 թթ.) պատմությունը, այդ ընթացքում հորից-որդի ապրած 10 սերնդի ժամանակագրությունը։

Նույն հիշողությունների շնորհիվ նաև հնարավոր եղավ եզրակացնել, որ ընտանիքի բարգավաճման շրջանը մեր հեղինակ Հովսեփի կյանքի փոքր ժամանակահատվածն էր. նրանից հետո մի փոքր բարեկեցություն ստեղծեցին նաև իր որդիները, թոռները ևս հնդկահայ հասարակության մեջ հասան ինչ-որ դիրքի, բայց ծոռները և նրանց զավակները՝ 7—8-րդ սերունդները, արդեն զրասենյակային մանր ծառայողներ էին (հաշվապահ, պահեստապետ և այլն)։ 1950-ական թթ. բոմբեյահայ գաղութն արդեն մարում էր, կյանքն այստեղ անհեռանկար էր դարձել, ուստի 1960 թ. դահրաշյան-հովսեփյանների շառավիղները (6 հոգի) մեկնեցին Լոնդոն։ Այստեղ նրանց 9-րդ սերնդի միակ արական ներկայացուցիչը՝ տոհմի մեջ Հովսեփ անունը կրող շորրորդ մարդը ամուսնացել է անգլուհու հետ և այժմ իր անգլախոս ընտանիքով ապրում է Օնտարիոյում (Կանադա)։

44 Նույն տեղում։

45 Տե՛ս Մ. Թաղիադյան, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, երեվան, 1975, էջ 539։

46 Ինչպես Հովսեփի և նրա որդու շարադրանքի, նույնպես և այս հիշողությունների մեջ ընտանիքի որոշ հյուղերի մասին տեղեկություններ չկան։ Սա ոչ թե այդ հյուղերի ընդհատման նշանակ է, այլ՝ մեր չիմացության, որն էլ իր հերթին պատճառարանվում է ժամանակի հետ՝ տոհմի տարբեր վայրերում ապրած շառավիղների օտարացմամբ ու խորթացմամբ։ Իրեն, ընտանիքի այդ «ընդհատվող» հյուղերի կենդանի ժառանգորդների ապագա բացահայտումները լիովին հնարավոր են, այսինքն՝ ներկա հրապարակումը կարող է ունենալ նաև գործնական արդյունքներ։

* * *

Այժմ համառոտ բնորոշենք Հովսեփ Գահրաշյանի երկի ազդյուրագիտական այն հատկանիշները, որոնց շնորհիվ այս գործը դադարում է սոսկ մի գերդաստանի մոտ շորսդարյա պատմություն լինելուց և դառնում եզակի ազդյուր բնդհանրապես Պարսկաստանի և Հնդկաստանի հայություն կյանքն ավելի ճշգրիտ և մանրամասն պատկերացնելու համար:

Առաջին հերթին պետք է նշել, որ մեր պատմագրության մի ճյուղի՝ տոհմական պատմություն-ժամանակագրությունների շրջանառության մեջ գտնվող հուշարձաններն առայժմ բավական քիչ են⁴⁷, ուստի և այս գործի հրապարակմամբ դրանց քանակն ավելանում է ոչ սակավարժեք մի բնագրով ևս:

Հովսեփի գործունեության սկզբից ի վեր՝ 1761 թ., նրա բոլոր տեղեկությունները ճշգրիտ թվագրված են նախ ամիսներով, ապա՝ ամսաթվերով: Այս արժանիքի համար պարտական ենք մեր հեղինակի առևտրական հաշվեմատյաններին, որոնց մեջ նա պարտավոր էր «վասն իւրաքանչիւր առտորոյ գրել մի քստ միոջէ օրինաւոր գիրք հաշուի»⁴⁸: Այս հաշվի գրքերից էլ հետագայում քաղվել են Գահրաշյան տան պատմության մեջ գրանցված տարեթվերն ու ամսաթվերը, որոնց արժանահավատությունը հաստատվում է այլ ազդյուրներով և որոնք կարող են օգտագործվել նրա մեջ հիշատակված հնդկահայ գործիչների կենսագործունեությունն ուսումնասիրելիս:

Հովսեփի գործի արժեքը մեծ է նաև պատմա-վիճակագրական տեսակետից. մի ընտանիքի օրինակով կարելի է վերապահություններով պատկերացում կազմել նոր-Ջուղայի և Հնդկաստանի հայ բնակիչների ընտանիքների կազմի, արական և իգական անդամների քանակի, նրանց տեղաշարժերի և ճյուղավորումների, մանուկների և ծննդկանների մահացությունների հաճախականության և այլ հարցերի մասին:

Գահրաշյան տան պատմությունը մեծապես ավելացնում է մեր իմացությունները ժԸ դ. երկրորդ կեսի Սուրաթի և ժԹ դ. առաջին կեսի Բոմբեյի հայ գաղութների մասին: Այսպես, Մ. Սեթն իր մեծարժեք աշխատության «Տիկին Հոփսիմե կեմբրուզեն. մի հայ կին վաճառական» խորագրով գլուխը⁴⁹ նվիրել է հնդկահայության կյանքում իրապես մեծ դեր խաղացած մի կնոջ, որը մեր հեղինակի քենին էր և որի ընտանիքի նախընթացի մասին այս ազդյուրն ունի բավական կարևոր տեղեկություններ, իսկ սրանք էական ճշտումներ են մտցնում հնդկահայոց պատմաբանի շարադրանքի մեջ (տես ծ. 49): Նույն գրքի «Հայերը Բոմբեյում» ոչ այնքան հարուստ (10 էջ) գլխի երեք էջը⁵⁰ նվիրված է մեզ ծանոթ բժիշկ Հովսեփ Մարկոս Հովսեփյանին՝ մեր հեղինակի թոռանը, որի ընտանիքի մասին Մ. Սեթին հայտնի էր միայն այն, որ Բոմբեյ էին եկել Սուրաթից և որ այս բարձրաս-

47 Հմմտ. Գրիգոր և Ուրախ Կարնեցիների ժամանակագրությունը.—Մանր ժամանակագրություններ, ԺԱ—ԺԸ դդ., հ. Ա, Կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 292—6. [Մարուզե և Աւետիս Կարնեցիների ընտանեկան տարեգրությունը].—Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի և Ս. Գանիէլի ի Կեսարիա, Կազմեց Տ. Պալեան, Վիեննա, 1963, էջ 1—6. և այլն:

48 Գատաստանագիրք Աստրախանի, էջ 132:

49 Մ. Սեթ, էջ 263—6:

50 Նույն տեղում, էջ 299—301:

տիճան բժշկի հայրը Բոմբեյում զբաղվում էր վաճառականությամբ (հմմտ. ծ. 112): Իսկ այժմ՝ մեր աղբյուրի շնորհիվ առավել քան մանրամասն գիտենք այդ նշանավոր բժշկի տառացիորեն «յոթը պորտը», նրա որդու, շորս դուստրերի և այրու, սրա մադրասցի հարազատների անունները և այլ մանրամասներ:

Սուրաթահայ վաճառականների վերն ակնարկված անվանացանկի մեջ թվարկված 30 մարդուց 10-ի մասին մեր աղբյուրը հաղորդում է այնպիսի կենցաղային-ազգակցական մանրամասներ, որոնք կարելի է համադրել շրջանառության մեջ գտնվող այլ փաստերի հետ և ուրվագծային պատկերացում կազմել նրանց գործունեության մասին (հմմտ. ծ. 37—8, 40, 49, 50, 53—6 և այլն): Որոշակիորեն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Խալդարյան տոհմի էմնիազյան ճյուղի հնդկաստանյան առևտրական գործունեության մասին. առաջին անգամ այստեղից ենք իմանում Աբրահամ Հովհաննես-Հովսեփ Մարութ-Հովսեփ Դահրաշյան եռանգամ առևտրական ընկերության մասին: Ուշագրավ տեղեկություններ ունի նաև ազգակցորեն Դահրաշյանների հետ կապված՝ ժԹ դ. առաջին կեսի բոմբեյահայ վաճառականներ Կարապետ Ծատուրի, Խաչատուր Հովհաննեսի, Հարություն Կոստանդիանոսի, Հովսեփ Միքայելի, Մկրտիչ Հարությունի, Հարություն Աղանուրյանի և նրա որդիների, Հորդանան Հովսեփի ու նրա որդու, Աստվածատուր Հարություն Աթամի, Գալստան Նազարեթի և ուրիշների, Սուրաթում և Բոմբեյում ժԸ—ժԹ դդ. պաշտոնավարած տասնյակ հայ քահանաների մասին և այլն: Ավելին, Հովսեփի գործի և Մարկոսի շարունակության շնորհիվ հնարավոր է դառնում պարզելու ժԹ դ. վերջում և ներկա դարի սկզբում Բոմբեյում ամենաերևելի դիրք ունեցած հայ ընտանիքի՝ Միքայելյան տոհմի ծագումն ու նախընթացը (տես ծ. 102) և այլն:

Մի այլ իրողության շնորհիվ ևս ընդգծվում է Հովսեփ Դահրաշյանի գործի արժեքը ընդհանրապես հնդկահայության պատմության համար. կյանքի և պայմանների հարափոփոխությունը հաճախ է վերջիններիս ստիպել տեղափոխվել մի քաղաքից մյուսը (լավագույն օրինակը Սուրաթն է, որի հայ գաղութը կարճատև և բուռն ծաղկումից հետո մարեց նախորդ դարի սկզբին): Այս պատճառով էլ հաճախ հնարավոր է այստեղ իբրև սուրաթարենակ կամ բոմբեյարենակ հիշատակված տարբեր մարդկանց, առավել ևս՝ նրանց զավակներին հետազայում տեսնել Հնդկաստանի կամ Ինդոնեզիայի այլ հայկական գաղութներում:

Այսպիսով, Պարսկաստանի և Հնդկաստանի հայ գաղթավայրերի պատմությունն ուսումնասիրող մասնագետների ուշադրությանը ներկայացվող այս աղբյուրը հայության այդ հոծ զանգվածի սոսկ մի բեկորի կենսագրությունն է, առանց որի օգտագործման այսուհետև չի կարող գրվել Սուրաթի և Բոմբեյի հայ գաղութների պատմության նոր շարադրանքը: Դահրաշյան տոհմը նոր-չուղայեցի ամենասովորական մի ընտանիք էր, որն արհեստագործությունից թեթևից դեպի առևտուր, բայց շկարողացավ դիմանալ անգլիացիների մրցակցությանը, սակայն դարեր շարունակ պահպանեց իր ազգային նկարագիրն ու դիմագիծը:

* * *

Այժմ անդրադառնանք բնագրի հրատարակության առանձնահատկություններին.

Մեր ունեցած երկու օրինակն էլ հեղինակային են, բայց հիմք ենք ընդունել Հայսմավուրքի տարբերակը, որն առավել ամբողջական, ընդգրկուն և ավարտուն է. Նարեկի օրինակի տարբերությունները հիմնականում ոճական կամ շարադասական են, բնագրի սկզբնական վիճակ չեն արտահայտում, ուստի դրանք իբրև տարբերություններ կայացնելն անհնար (1785—1817 թթ. հատվածը) կամ անիմաստ է: Այդ պատճառով էլ հայսմավուրքում մոռացմամբ չգրանցված հաղորդումները և Նարեկի ունեցած մյուս մանրամասները, ուղղանկյուն փակագծերի՝ [] մեջ առնելով, մուծել ենք բնագիր: 1785—1864 թթ. բոլոր հաղորդումների վերջում, կոր փակագծերի մեջ նշել Նարեկի տարբերակի մեջ այդ հատվածի դոյությունը կամ չդոյությունը:

Բնագիրը հրատարակության ենք պատրաստել ընդունված սկզբունքներով. ըստ ժամանակակից կանոնների նշանակել ենք կետադրությունը, մեր վերականգնումներն առել ենք ուղղանկյուն⁵¹, թվերի և թվականների վերծանումները՝ կոր⁵², անուշադրությամբ առաջացած հեղինակային կրկնությունները՝ սուրանկյուն փակագծերի մեջ. եղծված կամ ընկած մասերի տեղում դրել ենք երեք թեք զուգահեռ՝ |||, Հայսմավուրքում վնասված մասերը որոշ դեպքերում, առանց նշելու, վերականգնել ենք Նարեկի տարբերակի օգնությամբ, ուղղագրական շեղումներն ընդգծել ենք: Ազարիայի տոմարի առանց ամսաթվերի նշված տարեթվերի մոտ, փակագծում նշել ենք փրկչական թվականի համապատասխան երկու տարին՝ «165 (1780—1)», նկատի ունենալով, որ փոքր թվականի այդ տարին ընդգրկում է առաջինի մարտի 21-ից մինչև երկրորդի մարտի 20-ի օրը: 1810-ական թվականներից սկսած բնագրում հիշատակվում են ներկա թվականության նոր՝ գրիգորյան կոչվող տարբերակի ամսաթվերը, ուստի Ազարիայի տոմարի բոլոր ամսաթվերի մոտ, կոր փակագծերի մեջ նշել ենք միայն նոր տոմարի ամսաթվերը (հնի համեմատ ժԸ դարում ունեին 11, ժԹ դ.՝ 12 օրվա տարբերություն). երկվությունից խուսափելով, նույն ամսաթվերն ենք օգտագործել նաև ներկա առաջաբանում ու ծանոթագրությունների մեջ: Տոմարական համակարգերի և ամսանունների բազմազանության պատճառով բոլոր կարգի ամսանունները գրել ենք գլխատառերով:

Բնագրին իբրև առաջին և երկրորդ հավելված կցել ենք Հայսմավուրքի տիտղոսաթերթը և բուն հիշատակարանը, որոնց տեղեկությունները և ընդհանրապես ողջ շարադրանքը մեծ արժեք ունեն Հովսեփի միջավայրի ու նրա զբաղմունքի տեր մարդկանց հոգեբանությունը ճիշտ հասկանալու համար: Երրորդ հավելվածը 1785 թ. մայիսին էջմիածնի կաթողիկոսարանի

⁵¹ Մրանք հիմնականում երեք թեք զուգահեռով՝ ||| նշանակուած՝ եղծումներ ունեցող մասերում են՝ դրա շնորհիւ էլ հեշտութեամբ զատուած են նոյնպիսի՝ ուղղանկին փակագծերի մէջ առնուած՝ Նարեկի յաւելուածային բառերից, արտայայտութիւններից և հաղորդումներից: Իսկ մոռացմամբ չգրուած առանձին տառերի վերականգնումներն ինքնին չոկուած են մնացած բոլորից:

⁵² Այսպիսի փակագծեր մեկ-երկու անգամ օգտագործել է նաև Հովսեփը, բայց դրանք հեշտութեամբ զատվում են մեր նշանակածներից:

գրասենյակից Հովսեփին ուղարկված նամակի սևագրությունն է⁵³, որ Ղուկաս Կարնեցու գրագրությունների հատորի մեջ միայն հիշատակվել է⁵⁴: Չորրորդ հավելվածը տիկին Վիկտորիա Հովսեփյանի հիշողությունների շարադրանքն է, որ համառոտ վերարտադրում է Գահրաշյան ընտանիքի 1865 թ. այս կողմ ընկած ժամանակահատվածի պատմությունը: Իսկ հինգերորդը մեր կազմած պարզեցված տոհմածառն է, ուր գահրաշյանների դուստրերի ամուսնությունները և նրանց զավակներին, նաև՝ անզավակ ամուսնությունները շենք նշել: Այստեղ բացակայում են նաև ծննդյան և մահվան ամսաթվերը և ամուսնությունների թվականները, որոնք հեշտությամբ կարող են գտնվել աղբյուրի ժամանակագրական կառուցվածքի շնորհիվ: Շփոթից խուսափելու համար կրկնվող անունները համարակալել ենք հայերենի այբուբենի տառերով: Հովսեփի տարբեր հաղորդումների զուգադրմամբ, հաճախ էլ նրա ժառանգների տապանադրերի հիման վրա տոհմածառի մեջ նշանակել ենք նաև որոշ թեական կամ աներկբայելի թվականներ, որոնք պատճառաբանված են ծանոթագրությունների մեջ: Վերջիններիս մի մասն օտար և բարբառային բառերի բացատրություններ են⁵⁵, իսկ հիմնականը՝ Հովսեփի ընտանիքի անդամների կամ նրա հիշատակած անձանց մասին այլ աղբյուրներից մեզ հայտնի տեղեկությունները: Այդ աղբյուրներից մեզ համար առավել արժեքավոր ու օգտակար է եղել Գերենիկ կպս. Փոլադյանի կազմած «Արձանագիրք հնդկահայոց» ժողովածուն⁵⁶, որից քաղել ենք Գահրաշյան ընտանիքի՝ Սուրաթում և Բոմբեյում թաղված անդամների տապանադրերը⁵⁷, որոնք լիովին համընկնում և հաստատում են Հովսեփի հաղորդած թվականների արժանահավատությունը: Հաճելի պարտականություն ենք համարում խորին շնորհակալություն հայտնել Լ. Գ. Մինասյանին, որը մեր խնդրանքով նոր-Ջուղայի գերեզմանոցում փնտրել, ընդօրինակել և ուղարկել է Հովսեփի տատ նարգիզի, հոր, մոր և ավագ հորեղբոր տապանադրերը. սրանք մեծապես նպաստել են աղբյուրիս ժամանակագրական հենքի որոշ թերիների լրացմանը և՛ հրեմն ճշգրտել Հովսեփի մոտավոր կամ սխալ թվագրումները⁵⁸:

53 ՄՄ ձև. № 4501, էջ 59աբ:

54 ՏՆ՝ս Գիվան, նՇ, 1—Ա, էջ 520:

55 Բացատրությունների համար, երբեմն, շնորհակալությամբ ստացել ենք պրոֆ. Լ. Փափազյանի և արևելագետ-բանասեր ն. Գեորգյանի սիրահոժար օգնությունը:

56 ՄՄ, Հայ. նոր ձև. № 244. Գ. Փոլադյանի այս մեծարժեք ժողովածուն ևս պատրաստում ենք հրատարակության:

57 Այստեղ ըկան Բոմբեյի Ա. Պետրոս եկեղեցու բակի և բաղաբամիջի Gîrgaum վայրի՝ 1812—1870 թթ. գործած գերեզմանոցի (տե՛ս Մ. ԱԼք, էջ 298, Թ. Գուշակեան, Հնդկահայք, էջ 25) արձանագրությունները, ուստի և մեր ծանոթագրությունների մեջ գահրաշյանների այդ սարիների հանգուցյալների տապանադրերն արտացոլված չեն:

58 ՏՆ՝ս ծ. 6, 16—7, 27. մեր աղբյուրը տալիս է նոր-Ջուղայի գերեզմանոցի Գահրաշյան ընտանիքին հատկացված մասում թաղված մոտ 20 մարդու անուն, բայց, ինչպես հայտնեց Լ. Մինասյանը՝ «Գերեզմանատան այդ մասից՝ Չաղահարույցի հյուսիսային կողմից, 1936 թվին մի ճամփա բացվելու հետևանքով, մեծ թվով տապանաքարեր այս ու այն կողմ են ընկել կամ կուտրատվել ու գետնի տակ թաղվել»:

217ա²

[ՅՈՎՍԷՓԱՅ ԴԱՀԲԱՇԵԱՆՑ]

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՅՆ ԻՄՈՑ,

Ի ԶՈՋ ՊԱՊՈՅՆ ԻՄՈՑ ՍԿՍԵԱԼ ՄԻՆՉԵԻ ԹՈՌՔ, ԻՄ՝ Ի ՎԵՅՆԵՐՈՐԳ
ՑԵՂՆ ԴԱՀԲԱՇԵՑԻՈՑՆ. ԱՅՍՊԷՍ.

Գահրաշի Զաքարիայն ծնաւ զԳահրաշեանց Սարգիսն, Գահրաշեանց Սարգիսն ծնաւ զԳահրաշեանց Ստեփանն, Գահրաշեանց Ստեփանն ծնաւ զԳահրաշեանց մահտեսի Յովսէփս, մահտեսի Յովսէփս, Աստուծով ծնալ զՍտեփանոսն, զՄարկոսն, զՂուկասն և զՄատթէոսն Գահրաշեանց, Մարկոսս ծնաւ զԳահրաշեանց Վարդիսաթուն թոռնիկս. որպէս ըզլուեալս և տեսեալս գրեցի:

1. Գիտելի է, զի ես լուայ ի բերանոյ հանւոյն իմ նարգղէն, թէ սկեսեր այրն իմ էր ծնեալ ի Թարեղ գաղաքի և կոչիւր Զաքարիայ (և ի ժամանակս մեծին Շահ Աբասու Պարսից թագաւորին, որ նստէրն ի Թարեղ) և էր արեւստիւ սամուրակար՝. և երիտասարդ ուժեղ յոյժ անհամեմատ: Եւ շահն յոյժ սիրէր զմենամարտիկս արանց և անասնոց և գաղանաց, և ամենայն ուրբաթի աւուր առաջի կացուցանէր ազգի ազգի մարտիկս և մարտնչեցուցանէր առ միմեանս և նորօք ուրախանայր և զբօսնոյր. և ամենայն բաղմութիւնք ժողովրդոցն անդ ժողովէին՝ ի տես խաղուցն մարտկաց: Իսկ յաւուր միում մարտնչեցոյց շահն երկուս գոմէշս ընդ միմեանս, և տեեաց մարտն մեծ ժամս, և շահն հրամայեաց բաժանել ի միմեանց, զի մի վիրաւորիցին. և պահապանքն ջանացին և ոչ կարացին բաժանել: Եւ շահն ունէր տասն ըմբշամարտիկս, որոց հրամայեաց բաժանել, և նորա ջանացին, ևս ոչ կարացին բաժանել ի միմեանց: Եւ շահն ասաց. Աւաղ, որ ոչ գտաւ ի քաղաքի իմում բաժանօղ գոցա, և ահա ի դուր վիրաւորին գոքայ: Եւ անդ էր Զաքարիայ սկեսեր այրն իմ՝ խառն ի մէջ բաղմութեան ամբոխին, և ի լսելն զբանն ի թագաւորէն, իսկոյն յառաջ մատեաւ առ թագաւորն և խոնարհեալ ասաց. Կեցցէ արքայ, եթէ զիս հրամայեսցես, ես Աստուծով բաժանեցից զգոսա:

217բ¹

|| ||| բաժանեսցես, յինէ ||| Զաքարիայ, և կալաւ |||ն, և միւս ձեռամբն զ||| ուժգնութեամբ ճմլելով զակ ||| [բաժանեաց ի] միմեանց և մեկուսացոյց. և շահ[ն հր]ամայե[աց պահ]ապանացն գոմշոցն տանել զնոսա ի տ[եղիս] նոցա և դարմանել զվէրս եղջերաց նոցա: Եւ նոյն[ժամայն] խիլայեաց² շահն Զաքարիային՝ տալով նմա հանդերձ[ս] պատուականս և երիվարս զարդարեալս, և կարգեաց զխաւոր ի վերայ տասնեսին ըմբշացն և կոչեաց զան[ուն] նորա Գահրաշի Զաքարիայ, և հաստատեալ կարգեաց նմա ոռճիկս ամենայն ամսազլխի տալ նմա. և տային նմա ամսէ ամիս: Եւ եղև գնալ շահին ի Թարիզոյ ի Ասպահան քաղաքն, տարաւ ընդ իւր և զԳահրաշի Զաքարիայ ամենայն ընտանեօք և աղխիւքն իւրովք. և գնացին ընդ նմալ այլ ևս չորս տուն քրիստոնեայք բարեկամք՝ ամենայն աղխիւքն իւրեանց, ի Ասպահան քաղաք, և ետ նոցա շահն տեղի բնակութեան յայնկոյս գետոյն Զանդայ, ի հարաֆայկողմն նոր Զուղայու, և անդ շինեցին տունս բնակութեան իւ-

րեանց և կոչեցաւ Քարէզցոց մահլաթ, և յարեցան դաշտեցիքն ևս ընդ նոսա և շինեցին իւրեանց տունս բնակութեան ի հարաւաչկողմն Քարէզցոց մահլաթին, և կոչեցան Դաշտեցիք³:

Իսկ Դահբաշի Զաքարիայն անդ ամուսնացաւ ընդ դստեր թարիզեցոյ Վարդխաթուն կոչեցելոյ, և ծնաւ որդիս և անուանեաց զանուն նորա Սարգիս, և ինքն հասեալ ի բարձր ծերութեան, հանգեալ խաղաղութեամբ ի Քրիստոս, և յետ նորա կին նորա Վարդխաթունն փոխեցաւ ի Քրիստոս և թաղեցաւ մերձ Զագայարուցի մատուռին, ընդ անն իւրոյ, մէջ արեմուտ և հիւսիս Զագայարուցի, և գերեզմանայ քարին նկարիւ փորագրեալ զոյ անն արեգակ և կնոջն՝ լուսին. որոց հոգին Տէր լուսաւորեսցէ և յերկնից արքայութեանն արժանաւորս արասցէ:

2. Սարգիսն Դահբաշեանց որդի էր Դահբաշի Զաքարիային և արհեստիւ սամուրակար՝ որպէս հայրն իւր: Եւ ի շափ հասակի հասեալ, ամուսնացուցին ծնօղք նորա ընդ դստեր թարիզեցոյ միոյ՝ Նարկիզ կոչեցելոյ. և ծնաւ որդիս հինգ և դուստր մի. նախ՝ Սաֆարն, երկրորդ՝ Դաւիթն, երրորդ՝ Սաէփանն, չորրորդ՝ Հէրապետն, հինգերորդ՝ Քարառուքն, վեցերորդ՝ Զաքարիայն: Այս երանելի Սարգիսս էր յոյժ բարեպաշտ և երկիւղած Աստուծոյ և ուսաւ զիզուս և բարբառս ինկիլիզաց և յարեցաւ առ ին[կ]լիզ ոմն պարոնի, և նա վարձիւ պահեաց ընդ իւր՝ ի սպասաւորութիւն թարգմանութեան պարսկական լեզուի, և ընդ նմա գնաց ի Բրիտանիայ և դարձաւ, և ընդ այլ ումեմն ինկիլիզ պարոնաց. և երկու անգամ գնաց և դարձաւ և յերրորդում դառնալն ի Ասպահան, ի Բանդար-Աբասու ցամաքային ճանապարհաւ երիւարաւ երթայր, և սպասաւորն չորեաւ զկնի նորա երթայր, և մերձ ի Ասպահանու հողմ ինչ թիւնաւոր դիպեալ, որ բաղի-սամուր ասեն, և հիւանդացեալ մերձ ի վաղճանն, ետես զհրեշտակն հոգիւրնկալ և աղօթեալ խնդրեաց յԱստուծոյ ժամանակ՝ մինչև հասանել Ասպահան, տունն իւր, և հաղորդել ի սուրբ մարմնոյ և յարենէ Որդոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, և լուսաւ պատասխանի ի հրեշտակէն, թէ լինելոց է ըստ խնդրոցա, և անյայտ եղև: Իսկոյն ստիպեաց սպասաւորին քշել զերիվարն առ ի փութով հասանիլ ի տուն իւր: Եւ յետ երից ժամուց ի զիշերի հասին ի տունս իւրեանց, և խոստովանեալ հաղորդեցաւ ի սուրբ խորհրդոյն և ողջունեաց զոքանչ և կողակիցն և համբուրեաց զաւակունսն իւր, և ասաց, զոր սակի դրամ ի խուրչն ձիոյս է՝ իմ է, առեալ պահեցէք և շքաւորապէս արարէք խարչ՝ ապրուստից ձերոց, և շունիմ պարտս ի այլոց, և կացէք բարեաւ ասացեալ, հանգեալ խաղաղութեամբ ի Քրիստոս՝ չև ևս հասեալ ի ծերութիւն հասակին, || այլ երիտասարդական տիօք փոխեցաւ աշխարհէս և թաղեցաւ ի հանգստարանի, յարեւելից կուսէ մատուռի Զագայարուցին մերձ է. և արձանագրեալ ի վերա գերեզմանքարին արեգակ և զանուն նորա և թիւն:

Եւ սակի դրամն, որ էր ի ձիոյ խուրչին, ի նոյն զիշերի զողացեալ եղև, և կարծիս ունէին ի Սաֆար որդւոյն, և ոչ գտանեցաւ:

Եւ Վարդխաթունն, որ էր զոքանչ Սարգսին և մայր Նարգիին,

եկաց ամս հարիւր և քսան և ծնեալ էր 17 որդի և 8 դուստր, և ամենեքեան ոչ ժամանեալ ի քսան ամս, և 24 զաւակն տասնամենից ի վեր վաղճանեցան, միայն մնաց յետին զաւակն՝ զնարգիզ անուն դուստրն, որ էր կինն Սարգսին: Եւ Վարդխաթունն՝ մինչև ի վաղճանն ոչ վատեցան աչքն և ոչ անկաւ զատամունսն, և միում աւուր շարաթու Վարդխաթունն ճաշ պատրաստեաց և կոշեաց վարդապետս և քահանայս ի ճաշ և ինքն ի նոյն առաւօտին զնաց յեկեղեցին, խոստովանեալ հաղորդեցաւ ի սուրբ խորհրդոյն, և եկեալ ի տուն, պատրաստեաց զամենայն հարկաւորն, մինչև եկին հրաւիրեալքն, և ի[ն]քն ի սեղանի սպասու կայր և պաշտէր բոլոր կարգաւորացն, մինչև ամենեքեան լիացան և օրհնեցին զսեղանն, և համբուրեաց զաշս նոցա և յետ նորա երեք մրգեղէն և գինի, եզ առաջի ամենեցուն և ինքն, խնդրեալ ի նոցանէ, և զնաց առ ընտանիկանաց կերակրել, և ինքն ի դրացեացն կացէր բարեաւ ասացեալ, հմուտ ի սենեակն և պարզեցաւ ի մահճի իւրում, և ձեռքն խաշանման եղեալ ի կրծոցն, աւանդեաց զհոգին իւր առ Աստուած: Եւ կարգաւորքն կամեցան տեսանէլ զնա և երթալ, զի կիրակմուտ էր, և զնացին առ ի կոշիկ և տեսին, զի վաղճանեալ էր և, գիտացեալ, փառս հտուն Աստուծոյ, ասելով, թէ արդար է նա, զի յառաջագոյն գիտաց մահն իւր: Եւ վերստին հրաւիրեցան ի կիրակի աւուրն ամենեքեան ի պատարագ պաշտօն և թաղում և հացկերուտ հոգւոյ նորա, որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ և յիշատակքն օրհնութեամբ եղիցին:

[3]⁵. Սաֆար որդին հասեալ ի շափ հասակի, ամուսնացաւ ընդ դստերն Գրիգորի Զարիֆխանին և ծնաւ Մելքիսէթ որդին. և զիտէր զանկլիացոց լեզուն՝ ուսեալ ի հօրէն, և եղև թարգման ումեմն ինկլիզ պարոնի և ընդ նմա զնաց Բրիտանիայ և դարձաւ և ի տիս ալեվորութեան վաղճանեցաւ և թաղեցաւ ընդ Սարգսի հօրն⁶ իւրոյ*: Եւ ի վերայ տապանին արձանադրեալ կայ արեգակ և զանուն նորա: Եւ յետ վաղճանին Մելքիսէթն, ի խրատու քնոցն իւրոյ Աւետ Գրիգորին, և վիճեցաւ ընդ Ստեփան հօրեղբօրն դատաստանաւ պարսիացոց և բազում վնաս հասոյց նմա և էառ բաժին Սաֆարին և մարքն իւրով բաժանեցաւ և ել ի տանէ Ստեփան հօրեղբօրն և զնացին ի տուն քնոցն իւրոյ Աւետ Գրիգորի⁷. և մինչև ցայս վայր էին ի տան Ստեփան հօրեղբօրն իւրոյ, և ամենայն պիտոյս նոցա հոգայր Ստեփանն, որպէս միւս եղբարցն և իւր զաւակացն:

[3]. Գաւթ որդին ի տիս պատանեկութեան, յետ ուսման գրոց, յարեցաւ ի գործ շուրհակի և գործէր կտաւա: Եւ յաւուր միում յոյժ նեղասրտեալ եթող զգործն և զնաց հմուտ ի վանս Սուրբ Ամենափրկչին, ի առաջնորդութեան մեծ Մօվսէսի արհիպիսկոպոսին⁸ և եղև կրօնաւոր և ձեռնադրեցաւ արեգայ և արար ժամանակ ինչ անդ և, խնդրեալ թուղթ առաջնորդէն, զնաց յԵրուսաղէմ և եկաց անդ լուսարար գերեզմանի սուրբ Աստուածածնին ամս երիս, և անտի զնացեալ ի Տարօն, ի վանս Սուրբ Կարապետին, անդ ևս ուխտեալ, դարձաւ ի վանս Սուրբ Ամենափրկչին, և կարգեցին զինա-

* Այստեղ կրկնել տպա ջնշել է. «Սարգսի»:

պան վանացն, և եկաց այլ ևս քառասուն ամս ճգնաւորական վարուք, և ամենայն ամի զպահս առաջաւորաց հինկ օրն անսւաղ պա-
 218 ա¹ հէր և յաւուր շալթաթու սուրբ Սարգսի տօնին պատարագ մատուցանէր իւր ծնողաց հոգւոյն, ապա ի մասնաւորաց սակաւ ճաշակէր: Եւ այսպէս առաքինի վարուք կացեալ մինչև ի ծերութիւնն, փոխեցաւ աշխարհէս ի անանց կեանս և թաղեցաւ ի հանգստարանի վարդապետացն, որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ և յիշատակք նորա նորին կենդանի օրհնութեամբք, աղօթիւք և բարեխօսութեամբն, օրհնութեամբք եղիցին. ամէն՞:

[3]. Հէրապետ որդին ամուսնացաւ ընդ ումեմն դստեր Սարբիխան անվամբ և ծնաւ դուստր մի Բէկու՛մ կոչեցեալ. յետ ուսման գրոց, ուսաւ զլեզուս ինկլիզաց և եղև թարգման ումեմն ինկլիզ պարոնի և գնաց ընդ նմա ի յերկիրն անկլիացոց Բրիտանիայ և ուսուցանէր նմա խօսիլ բարբառս պարսից, և եղև ի դառնալն եղբօրն իւրոյ Սաֆարին առ Ասպահան և յարեցաւ Հէրապետն եղբայրն ընդ մեծ եղբօրն իւրոյ Սաֆարին և ի միասին նաւեցին ի Ջմիւռին քաղաք, և անդ էր ժանտամա՛հ, և իջևանեցան ի պանդոկի միում՝ ի մի սենեկոջ, և Հէրապետն բմբռնեցաւ ի ժանտամահէն. իսկոյն ել Սաֆարն և կալաւ այլ սենեակ, և վաղճանեցաւ Հէրապետն Իզմիր քաղաքի և թաղեցաւ, որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ և յիշատակքն օրհնութեամբ եղիցին: Իսկ Սաֆարն միայն եկն ի տուն <միայն>, և ոչ ետ Սաէփան եղբօրն ի յընչից Հէրապետին և ոչ դրամ մի, ասելով. «Ոչ առի ի մահահոտ ընչից նորա վասն երկիրէս»: Բայց ասեն, թէ զաղտ առեալ է զամենայն դրամ Հէրապետին. քանզի Սաէփանն պահէր զկին և զդուստրն Հէրապետին. և յորժամ հանդերձեալ էր Հէրապետն երթալ ի Բրիտանիայ, ետ նկարել զպատկեր իւր ի շափ հասակի իւրոյ, ի ձեռն պատկերահան Եղիազարին, և կախեաց ի սենեկոջ իւրում երիտասարդական բուռն պարթև հասակաւ և յոյժ գեղեցիկ քաղցրահայեաց դիմօք՝ ի տես մխիթարութեան ընտանեացն. և յորժամ լլաւ զգուժ մահուան նորա նարզիզ մայր նորա, հրամայեաց անհետ առնել զպատկերն, և եղբարքն տարեալ ի վերնատան եդին, և Բէկում դուստրն ամուսնացուցին ընդ ջուհակ Յեղգարին, և կինն գնացեալ ամուսնացաւ ընդ ան այլում:

[3]. Թարառուք դուստրն ամուսնացուցին ընդ որդոյ տէր Յովհաննէսին Ղուկաս անվամբ. և ձեռնադրեցաւ քահանայ և կոչեցաւ տէր Ղուկաս, և ծնաւ Մաղլինայ դուստրն և Յարութիւն որդին, և տէր Ղուկասն երիտասարդական տիօք վաղճանեցաւ, և Ստեփան եղբայրն զԹարառուք քոյրն իւր զաւակօքն բերեալ ի տունն իւր, պահեաց և Մաղլինայ դուստրն ամուսնացոյց ընդ Բնօխ Ասլանին, և Յարութիւն որդին՝ յետ ուսման գրելոյ և կարգալոյն, ուսուց նմա և զիւր արհեստն ոսկերչութեան, և եղև հմուտ կատարելապէս, և ետ նմա զամենայն գործիս ոսկերչութեան արհեստին և ուղարկեաց ընդ Յովսէփիս ի Բասրայ. ի փոքր թվին 146 (1761), Շամս 2 (Ապրիլի 2) ելեալ ի Ջուղայոյ և Գամայ (նոյեմբեր) ամսին հասաք ի Պասրայ, քանզի հինգ ամիս ի Խարկոյ կղզոջն յամեցաք, ի տան Բէկ-

զաղայ բեռն Յովսէփիս, ապայ նաւեցաք ի Բարսայ, և Յարութիւնն նաւէր ի Բանկալայ, և հասեալ ի Մուշի Բանդար, կամէր փոքր նաւակաւ իշանել, և բախեալ ալեացն, ընկղմեցաւ և հեղձաւ ի ծով անդր, և ալիք ծովուն տարեալ հասուցին ի ցամաք զմարմինն մեռեալ, և գտեալ մերազնէից, ծանեան և առեալ թաղեցին ի գերեզմանի. որոյ մեղացն ողորմածն Աստուած թողութիւն շնորհեցէ և յերկնից արքայութեանն արժանաւորս արասցէ: Եւ Քաբառուքն կացեալ ի տան Ստէփան եղբորն և հասեալ ի բարսոք ծերութիւնն, հանգեալ խաղաղութեամբ ի Քրիստոս և թաղեցաւ. որոյ հոգին Տէր լուսաւորեցէ և յիշատակքն օրհնութեամբ եղիցին:

218 ա²

[3]. || [Ջաքարիայ որդի]ին ետուն ուսում ||| գիրս և մարդագիրս և ||| և երկաթագիրս և ար|||րս և զարդարելն ոսկէզօծ և զա ||| յնօք, և ի շափ հասակի հասեալ, նա ||| [եղ]բայրքն շատ ստիպեցին նմայ ամո[ւսնանալ և նա] ոչ ամուսնացաւ, ասելով. «Ջաւահունք եղբօր իմ որպէս զաւ[ակ]ունք իմ են, և զնեաց զգործիս հիւսկան և սափրիչի և հարկաւորիլ գործոցն ինքն գործէր. և արար ուսկանս ձկնորսի և երբ կամէին ուտել ձուկն, և սպասաւորօքն տանէր զգործին և ի գետոյն որսայր ձկունս բազումս, տան հարկաւոր բաւականն առնոյր և զայլսն բաշխէր դրացեաց, ազգականաց և բարեկամաց: Եւ զնեաց բառասուն բեռնակիր էշս և կալաւ ի վարձու երկու սպա[սա]ւորս՝ մին Ասլանն, միւսն՝ Ամիրխանն, և զնեաց զանազան ճոթեղէնս ի սէտս գեօղականաց, և բարձեալ տարաւ ի գեօղն Դարամարայ և վաճառէր ի գին դրամոց, և դրամն գրօվ սալամ տայր¹⁰ որոց ունէին ազարակս վար և ցանք առնելոյ, և հասանիլ կտրելոյ զսերմանիսն, առնոյր յամենայնէ, բառնայր զամենայն իշոցն, ողորկէր Ջուղայ՝ ի ձեռն Ստեփան եղբօրն առ ի վաճառել: Եւ այսպէս երիցս և շորիցս անգամ ուղարկէր սպասաւորօքն մինչև աշունն, ապայ ինքն ևս դառնայր ի Ջուղայ. և այսպէս առնէր ամս ոչ սակաւս. և ի գեօղն Դարամարայ ուսոյց գիրս մանկանց, որոց երկուսն եղին քահանայ՝ տէր Բաղդասարն, որ ի Սէիտապատայ վիճակին իւրոյ վաղճանեցաւ¹¹, և տէր Ռսկանն՝ ի Սուրաթ վիճակի իւրոյ վաղճանեցաւ¹². որոց հոգին Տէր լուսաւորեցէ և նոցին կենդանի օրհնութիւնն ի վերայ յիշողացս եղիցի. ամէն: Եւ եղև ի գնալն Սարգսի՝ ըՍտէփան եղբօրորդոյն իւրոյ ի յերկիրն Ռուսաց՝ յԱշտարխան, և յերկիրն Ասպահանու եղև սղութիւն հացի, և էառ Ջաքարիայ զիշունսն, գնաց ի Քաշան՝ բերել ցորեան, և անդ վաճառեաց զամենայն իշանսն իւր և ոչ զարձաւ ի Ջուղայ, և անտի գնաց ի յԱշտարխան և յարեցաւ առ եղբօրորդին իւր Սարգիս, զի յոյժ սիրէր նմայ, և դրեաց թուղթ Ստեփան եղբօրն, թէ Մինաս և Յովսէփ որդիքա քեզ լիցին որդիք, և Սարգիս որդիք՝ ինձ եղիցի որդի, զի սովաւ ուրախացեալ մխիթարեցայց. և եկաց առ նմա զամենայն աւուրս կենաց իւրոց, և էր յոյժ հմուտ ոսկերչութեան արհեստի, և գործէր զգործն, և եղև Ղէ (97) ամաց, անդ հանգեալ ի Քրիստոս, որոյ հոգին Տէր լուսաւորեցէ և <և> յիշատակք նորա օրհնութեամբ եղիցին. ամէն:

3. Գահրաշեանց Ստեփանն էր որդի Գահրաշեանց Սարգիսին. ոչ ուսաւ զգիրս, այլ ուսաւ զարհեստս սսկերշութեան և ի վաստակոց իւրոց հատոյց զամենայն պարտս մօրն իւրոյ Նարգզին, զոր արարեալ էր ի ժամանակի մանկութեան վեցեսին զաւակացն և հոգացեալ էր զապրուստս նոցա: Եւ լեալ իբ (32) ամաց, Նարգզի զմայրն նորա ամուսնացոյց զՍտեփան որդին ընդ դստեր Վերի-Ղարազէլցի Եղիազարին՝ Թանկում կոչեցելոյ, ի առաջին կնոջէն Ամանբազ կոչեցելոյ. և էր Թանկումն Թ (9) ամաց, և սնոյց Նարգզի սկեսուրն մինչև շափ հասակի լեալ, ետ ցառն իւրոյ. և ծնաւ երիս որդիս՝ զՍարգիսն, զՄինասն և զՅովսէփն, և հինգ դուստրս՝ զՎարդխաթունն, զմիւս Վարդխաթունն, զՄարիամխանումն, զԲէզզադայն և զՅաննային. ամենեքեան եղեն Ը (8) զաւակս:

[4]. Առաջին զաւակն Ստեփանին էր Վարդխաթունն, որ Խ (40)-օրեալ լեալ վաղճանեցաւ:

218 ր¹ [4]. Սարգիս որդին էր երկրորդ զաւակն. և տուաւ || նմա [ուսման գր]ոց. և ուսաւ զգիր ի ||| արհեստ հօրն իւրոյ ս[սկերշութեան] ||| աւ, եղև գրագիր պարոն Նազ[արէթին] ||| յերկիրն Ռուսաց և յԱշտարխ[ան] ||| ոչ [կամեցաւ] կալ ի սպասու պարոն Նազարէթին¹³, զի նե[ղէր] ի զանազան գործս, և պարոն Նազարէթն անցեալ գնաց ի [Պետեր]բուրգ, և Սարգիսն վաճառականութիւն առն[էր] տասն թուման դրամովն, զոր տուեալ էր նմա հայրն ի[ւր], և գնալն Զաքարիայ հօրեղբօրն ի միասին բնակէին, և ամուսնացաւ ընդ դստեր շամախեցոյ Մարիամ կոչեցելոյ, և ծնաւ երկուս որդիս՝ զՄարտիրոսն և զՅովակիմն, և երկուս դստերս՝ զԵղիսաբէթն և զԱնէն, և դստերքն ամուսնացոյց ընդ առն և ինքն ի ալե-Վորութեան հասակի ի Բաբու վաղճանեցաւ և թաղեցաւ. որոյ հոգին Տէր լուսաւորեցէ և յիշատակք նորա օրհնութեամբ եղիցին: Եւ Մարտիրոս և Յովակիմ որդիքն նորա, յետ վաղճանելոյն Մարիամ մօրն իւրեանց, եկին ի Սուրաթ քաղաք Հնդկաց՝ առ հօրեղբայրս իւրեանց և օգնութիւն խնդրէին վասն շքաւորութեան իւրեանց, և ես ինձանից կարեոր օգնութիւնն արարի և ուղարկեցի ի Յաշտարխան քաղաքն Ռուսաց. որոց ողորմած և մարդասէրն Աստուած օրհնեցէ և մինչև ի լի ծերութիւնն բարի գործովք, առաքինի վարուք, ծաղկեալք բարի զաւակօք և բարազողութեամբ հասուցէ: Եւ ի Սուրաթ գալն և գնալն եղև փոքր թիւն 171 (1786—7)-ին, ի Սուրաթոյ:

4. Վարդխաթուն դուստրն էր երրորդ զաւակ Գահրաշեանց Ստեփանին. հասեալ ի շափ հասակի, ամուսնացոյց ընդ Մարգարին, և ծնաւ Յովհաննէս որդին, և վաղճանեցաւ այրն, յետոյ ամուսնացոյց ընդ Գաւութին, և ծնաւ Մէրջան դուստրն, և վաղճանեցաւ այրն, յետոյ ամուսնացոյց ընդ Գասպարին, յորմէ ծնաւ Մովսէս որդին և Խաթուն և Թանկում դուստրն. որդիքն վաղճանեցան և երեքին դրստերքն ամուսնացոյց՝ Մէրջանն ընդ Եղնազարին, Խաթունն ընդ Յովակիմին և Թանկումն ընդ Էմինին, և հասեալ ի բարձր ծերութեան, հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս, որոյ հոգին Տէր լուսաւորեցէ, և յիշատակօղքն նորա օրհնութեամբ եղիցին. վողճանեցալ 175 (1790—1) փոքր թիւն:

4. Մինաս որդին Դահրաշեանց Ստէփանին էր շորրորդ զաւակ նորա, և ետ նմա ուսումն գրոց, և ուսաւ կարգալ և գրել զգիրս բոլարիքս և նօտրագիրս, ուսաւ ոսկէզօծ պատկերս նկարել, նաև՝ ոսկէզօծ և գոյնզգոյն դազանագիրս, մարգագիրս, ճնճզագիրս, ծաղկագիրս, երկաթագիրս, արձանագիրս և զլխագիրս, և եղև գրագիր աղայ Մինաս էլիազին¹², և թող գծնօղսն և ընդ նմա գնաց Հնդկաց երկիրն Բանկալայ՝ ի քաղաքն Չիչրայ և անդ կացեալ ինն տարի ի գիր գրողութեան և՝ հիւանդացեալ, երեսնամեա հանգեալ ի Քրիստոս և թաղեցաւ ի Չիչրայու եկեղեցոյ առաջի հիւսիսային դրանն, և վէմ փորագրեալ գոյ ի վերայ տապանին¹³, և փոքր թվին 139 (1754—5) ամին եհաս գուժ մահձան Մինասին ի Ջուղայ, և ծնողքն արարին կոծ մեծ, և ի սաստիկ կսկծանացն ներ միջոցի իննօրեայ հօնաղ-կուլացաւօր թանկում մայրն նորա բարի մահաւմբ ՍԶ (56) ամաց փոխեցաւ ի Քրիստոս¹⁶ և թաղեցաւ արեւելեան կողմ Չազայարուցի մատուտին. արձանագրեալ և լուսին փորագրեալ կայ ի վերա տապանին. որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ և յիշատակքն նոցին օրհնութեամբ եղիցին:

218 ր²

4. Մարիամխանում դուստրն էր հինգերորդ զաւակ Դահրաշեանց Ստէփանին. և հասեալ ի շափ հասակի, ամուսնացոյց ընդ յերևանցի ոսկերիչ Յակոբջանին, և ծնաւ չորս որդիս՝ զՍահակ, զԿարապետ, զՅովհաննէս և զԱրրահամն. ի Սահակն ի մանկութեան, Կարապետն՝ ի պատանեկութեան վաղճանեցան, և Յակոբջանն եթող զկին և զորդիսն առ Ստէփան աներն իւր և ինքն գնաց ի Պասրայ, և դարձաւ ի Ջուղայ և հիւանդացեալ, ալևորեալ վաղճանեցաւ, և Մարիամխանումն որդօվքն մնաց առ հայրն մեր Ստէփան և որդիքն իւր յղեաց ի Պասրայ՝ առ աղայ Յարութիւն էմնիագն, և նա ուղարկեաց ի Բանկալայ, ի Սէիտապատ՝ առ եաշիկ աղայ էմնիագն. և Արրահամն անդ վաղճանեցաւ, և Յովանէսին ուղարկեցին ի Բնարիս: Եւ ինքն էր առ հայրն մեր Ստէփան, և 161 (1776) թվոյ Շրաթ 19 (Յունիսի 18) պատուական հայրն մեր Ստէփանն հասեալ ի բարաճ ծերութիւնն, 103 ամաց¹⁷, սակաւ հիւանդացեալ, փոխեցեալ էր ի Քրիստոս, և թաղեցեալ ընդ լուսաւորեալ հոգի կնոջն՝ մօրն մերոյ թանկումին, արեւելեան կողմն Չազայարուցին, ի շարս գերեզմանաց նախնեցան մերոց, և արձանաքար արկեալ ի վերայ տապանին և գրեալ զանունն, և փորագրեալ արեգակ ի վերայ արձանին. որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ և յիշատակքն նորա օրհնութեամբ եղիցին: Եւ Մարիամխանումն հասեալ ի բարաճ ծերութիւնն՝ ի փոքր թվին 188 (1803—4)-ին հանգեալ խաղաղութեամբ ի Քրիստոս. որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ և յիշատակք նորայ օրհնութեամբ եղիցի: Իսկ զամենայն ժամանակս կենաց իւրոց և վաղճանն եղև ի տան հօր մերոյ:

4. Բէկզաղայ դուստրն Դահրաշեանց Ստէփանին էր վեցերորդ զաւակ նորա. և հասեալ ի շափ հասակի, ամուսնացոյց ընդ յերևանցի ոսկերիչ Գալուստին, և ծնաւ Մարամջան դուստրն, և եղև քահանայ, կոչեցաւ տէր Գալուստ, և տէր Գալուստն առեալ կինն և զդուստրն իւր, գնաց և Շիրազ և անդ ծնաւ զՆիկողոս որդին, և ոչ ժամանեալ ի մի ամն և վաղճանեցաւ Նիկողոսն ի Շիրազ, և անտի

գնացին Բուշեր, և անտի նաեցին ի կղզին Խարկ, և անդ վաղճանեցաւ տէր Գալուստն և թաղեցաւ յեկեղեցւոջն. անդ էր և քեռայրն Բէկզաղային, տիրապետեալ զամենայն ինչս տէր Գալուստին և հոգայր զապրուստս Բէկզաղայ քենոյն և դստեր նորա: Ի սոյն ժամանակի անդ ես՝ Յովսէփ եղբայր նորա և Յարութիւն հօրաքեռս որդին հանդիպեցաք ի կղզին Խարկ 146 (1761) փոքր թիւն, Ազամ (Մալիս) ամսին, և անդ մնացաք ամիսս 5 (5): Յետ այնու գնացաք ի Բասրայ. ես մտայ ի ծառայութիւն աղայ Յարութիւն էմնիազին, և Յարութիւնն յարեցաւ ոսկերիչ Գասպարին և քնկերակցութեամբ առնէր զոսկերչութիւն: Եւ Յակոբջանն անփութ արարեալ զԲէկզաղայ քենին իւր, եթող առանց ապրուստի, առեալ Յովսէփս որդին, գնաց ի Ջուղայ, և Բէկզաղայն զրեաց ինձ ըզնեղութիւնն, և ես գրեալ բերի Պասրայ և եղի ի տան ումեմն, և հոգացի զապրուստն, և Մարամջան զուստրն ամուսնացուցաք ընդ Յարութիւն Մարտիրոսին, և հոգացի զապրուստն, և ընդ աղայ Յարութիւնին գնացի ի սուրբ Երուսաղէմ. միշոց Գ (3) տարի եղև մինչ զառնալս, և ինքն ամուսնացեալ էր ընդ շամբեցի Յովհաննէսին: Եւ ի Պասրայ զառնալս իմ՝ աղայ Յարութիւնն յղեաց զիս Բանկալայ ի 152 (1757—8) փոքր թիւն, և երեք տարի կացեալ՝ նաեցի ի Սուրաթ, և այրն Բէկզաղային և զուստրն վաղճանեցան ի Բասրայ, և գրով խնդրեաց զալ ի Սուրաթ՝ առ փոքր եղբայրս իւր մահտեսի Յովսէփս, և ես գրեցի և բերի Սուրաթն, և էր տկար և տխուր, և Պասրայ բերել հառու Հոսիսիմայ թոռն իւր՝ զուստրն Յարութիւնին և Մարիամջանին՝ առ ի մխիթարիլ նովաւ. այնու ևս ոչ մխիթարեցաւ, այլ և յաւելաւ ցան և 169 (1784) փոքր թիւն փոխեցաւ¹⁸ ի Քրիստոս <ի Քրիստոս>. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի և զհոգիս նորա Տէր լուսաւորեցէ. և թոռն մնաց առ իս:

219 ա¹ 4. Յաննայի զուստրն Գահրաշեանց Ստէփանին էր եօթներորդ զաւակ նորա. յետ վաղճանի Թանկում մօրն նորա ամուսնացոյց հայր նորա ընդ բժիշկ Դաւթին, և օրհնեցաւ քահանայ և կոշեցաւ տէր Դաւիթ. և ոչ ծնաւ զաւակ, և ի վայրէջս տանն սողացեալ անկաւ յերկիր և զոսկրն աչոյ || ծնկանն խախտեցաւ և այլ ոչ ուղղեցաւ, և կաղ ընթանայր զամենայն ժամանակս կենաց իւրոց, և 171 (1786—7) թիւն Յաննային վաղճանեցաւ, և 174 (1789—90) թիւն տէր Դաւիթն վաղճանեցաւ. որոց հոգին Տէր լուսաւորեցէ և յիշատակօղբ նոցա օրհնութեամբ եղիցին:

4. Յովսէփ որդիս Գահրաշեանց Ստէփանին էի ութներորդ զաւակ նորա, որ ի ծնանելոյ Յաննայի դստերն յետ ինն տարոյ¹⁹ ծնաւ Թանկում զորդին իւր Յովսէփ և երեք տարի սնոյց իւր կաթամբն. մինչև մայրս ասէր ցորդիս. «Այ տղայ, շուր յե՞փ ծիծ ուտես, գնայ հաց կեր, ջուր խմիր»: Պատասխանէի մօրս. «Մին ծիծն հաց այ, միւս ծիծն ջուր այ, հացն կուտեմ, ջուրն կխմեմ»: Եւ եղէ է (7) ամաց, Ստէփան հայրս ուսուցանէր զիս զարհեստն իւր ոսկերչութեան, և Թանկում մայրս տարեալ զիս առ տէր Մկրտիչ քահանայն և ետ ուսումն գրոց, և նայ էր վարժապետ մանկանց Թարիզոցոց մահլաթի Սուրբ Գրիգոր Լուսաւորչի անուամբն կառուցեալ սուրբ եկեղեց-

ւոյն, և տէր Մկրտչէն ուսայ կարգալ մինչ զամենայն փոխս եկեղեցւոյ և «Երանեալ կանօն» սաղմոսն, և «Երկինք պատմեն»-ի առաջին փառքն, և տախտակի գիր գրելս. մինչև «Այսօր անճառն» ուսոյց զիս (յետոյ հնաց յերկիրն Ռուսաց, անտի գնաց յԵրուսաղէմ, և անդ արարին զնայ ծայրագոյն վարդապետ և յղարկեցին նՎիրակ ի Հընդիկս, և անտի դարձաւ ի սուրբ յԵրուսաղէմ, և անտի գնաց ի սուրբ էջմիածին և եղև արքեպիսկոպոս ի վիճակի Նոր Զուղայու Սուրբ Ամենափրկչի վանացն, և եղև առաջնորդ և յետ ամաց փոխեցաւ ի Քրիստոս. որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ և կենդանի օրհնութիւնն ի վերայ իմ և իմայնոցս եղիցի. ամէն)²⁰:

Յետ նորա մտի ի աշակերտութիւն եղբօր տէր Մկրտչին՝ Գրիգոր ճգնաւորին, և ուսոյց զիս խօմարն՝ թաղանն Ազարիայի, վասն որոյ հարկաւորեցայ իմանալ զթիւ և զամիս և զօր ծննդեան իմ և հարցիցմայրն իմ պատուելի Թանկումն, և չասաց ինձ օրինակօք, և նօվազտի զթիւ ծննդեան իմոյ՝ ի թՎոյ փրկչին ԱՌԷՃԽ (1740) և թին հայոց ԱՌԺՂ (1741)-ին և ի թին Ազարիայի ԱՃԻՁ (1741)-ին, Հոգտեմբերի ամսոյ 17²¹, Սահմի Տ, Գամայ Ա (1)-ին, գիր տարոյն Ա (1), յաւուր կիրակէի, առաւօտեան ժամուն, և վասն շափազանց լալոյս փութացուցին զմկրտելն և ի միւս օրն, որ էր երկուշաբթ և տօն սրբոցն Ղուկիանոսի հարիւրապետին և Յովսէփայ աստուածահօրն և Յովսէփայ Արեմաթացոյն, մկրտեալ են զիս. և ասեն՝ մինչ աւագանն իջուցանելն լայի, և ի ժամ մկրտութեանն յանդարտեցայ, և մկրտօղս էր տէր Սիմէօնն և կնքահայրս էր Ամիրխանն, և ըստ պատշաճի աւուրն զանուն իմ կոչեցեալ են Յովսէփ, ի առաջնորդութեան Սուրբ Ամենափրկչի վանին Աղանի Աստուածատուր վարդապետին և արհիեպիսկոպոսին²²:

Եւ առ Գրիգոր ճգնաւոր վարժապետն իմ ուսայ «Երկինք պատմեն» սաղմոսն և ի վերայ թղթոյ գիր գրելն: Յետ նորա գնացի առ ջօրար²³ կարօղ Մատուրն և ուսայ ի նմանէ գրել զոճս բարևագրի և զհամարողութիւնս գրամոց, յետ նորա գնացի Սուրբ Ամենափրկչի վանի միարան Ղուկաս վարդապետի²⁴ մօտն և ուսայ ի նմանէ զսրկսուածս Ը (Տ) ձայն շարականացն և Գ (Յ) կարգ շարականս՝ զՄարտիրոսացն, զՀանգստեանն, զԱւագօրհնութեանն և զԱրևելքն:

Ի սոյն ժամանակի պատճառով մայրն իմ Թանկումն յօնաղկուլացաւօք փոխեցաւ ի Քրիստոս 139 (1754—5) փոքր թՎին. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցին և զհոգի նորա Տէր լուսաւորեսցէ: Եւ վասն տրտմասիրտ լինելոյս, ձեռամբ Պետրոս արհիեպիսկոպոսին²⁵ շորս աստիճան եկեղեցական ետուն ինձ, և հրաման ետ բուրվառ բռնել և Հաւատամի աւետարանն կարգալ: Եւ յետոյ մտի առ տէր Գէորգ Ներսէսանն և ուսայ ի նմանէ «զծննդեան կարգ» շարականն և «Այսօր անճառն» և «Աստուած անեղն» և «Արարչականն» և «Առաւօտ լուսոյն», և «Աշխարհ ամենայնրն», և բոլոր քարոզքն եկեղեցական, նաև գեղեցկածե գիրս ի նմանէ ուսայ. որոյ հոգին Տէր լուսաւորեսցէ և յիշատակք նորա օրհնութեամբ եղիցին:

Յետ նորա ամ մի աշխատեցայ պարսից գիր ուսանիլ ի Խուզադ պարսկէն և թողի անկատար, և ամ մի աշխատեցայ ի սամուր և

219 ա² մորթեղէն || ||| գրասէ²⁶ գգակ և վերարկու ձեւի և ||| ի յայս միջոցիս վաղճանեցան նախ պատ[ուելի տատ]իկն իմ նարգիզն, ապա՛ երանելի հօրեղբայրն [իմ Դաւիթ] վարդապետն. վաղճանեցան այսպէս քա|||նե||| [ն]արգիզ էր ամաց իբր հարիւր և քսան²⁷ ||| էր հիւանդութիւն և Խ (40) աւուրբ յառաջ ք[ան զվաղճա]նն [պակ]ասեցաւ յօժարութիւնն ուտելեաց և ըմպելեաց և [զոչ]ինչ ոչ եկեր և ոչ էարբ, և զոր ինչ մատուցանէին նմա, իբր[և] առնոյր ի բերանն, ի դուրս ձգէր՝ ասելով. «Յոյժ դառն է, և ես այժմ կերի ամենայն բարեաց, զոր բերեն ինձ սեղան Բ (2) մանկունք գեղեցիկք»: Մինչև ցերեք օր այսպէս ի միջօրէի բերէին նմայ սեղան, և կոչէր զմեզ ասելով. «Եկայք, մանկունք, կերէք և դուրք»: Եւ գնացնցեալ նայէաք շուրջ զնովաւ, ասելով. «Ուտեմք, ուտեմք և մեք, մեծ նանի»: Եւ ինքն որպէս թէ ուտէր և ըմպէրն զուարդազին դիմօք և զոհանայր զԱստուծոյ, և մեք ինչ որ տեսանէաք՝ ոչ զսեղան, և ոչ ուտելիք և ըմպելիք: Եւ այս երիս աւուրս էր առաւել զարդ և զարճալի դիմօք, և ունէր ընդ պարանոցն փայտեղէն սուրբ Երուսաղէմայ համարք մի և փայտեայ խաշ ի գլուխ նորա, և էր երեք հարիւր հիսուն հատ թօվ, և ամենայն աւուր նոյն համարովն «Հայր մեր» աղօթէր և նոյն համարովն «Ողջոյն քեզ Մարիամ» աղօթէր: Իսկ ի շորեքշաքաթի և կիրակէի, ի մէջ գիշերին սկսանէր աղօթելն մինչև ցառաւօտն՝ երկու համարօքն «Հայր մեր» և երկու համարօքն «Ողջոյն քեզ Մարիամ» աղօթէր, որ պարունակէ եօթն հարիւր «Հայր մեր» և եօթն հարիւր «Ողջոյն», և յետ աղօթիցն աղօթէր վասն ամենայն աշխարհաց և ամենայն մարդկանց և ազգա[կա]նաց իւրոց կենդանեաց և ննջեցելոց, և վասն որդոց և <և> թոռանց իւրոց, և զամենայն ժամանակս կենաց իւրոց զպահս ոչ ելոյժ և յետին շաքաթի աւուրն, որ նոյն գիշեր վաղճանելոց էր, խնդրեաց քահանայ և սրբութիւն, և խոստովանեալ հաղորդեցաւ ի սուրբ խորհրդոյն, և ի ժամ երեկոյին սկիզբ արար զաղօթս Կիրակէի, զէ (7) հարիւր «Հայր մեր» և զէ (7) հարիւր «Ողջոյնն» և զայլ աղօթան՝ մինչև ի մէջ գիշերն. և խնդրեաց դինի բաժակ մի, էարբ և խաշակնքեաց դինքն, ընկողմանեցաւ և ձեռքն խաշանման եդ ի վերայ կրծոցն, և աւանդեաց զհոգին, և եկեալ քահանայքն տարան յեկեղեցին և է (7) եկեղեցոյ վարդապետօք և քահանայիւք՝ պատարագօվ և պաշտամամբ կարդ կատարեցին, և ի ժամ պաշտմանն որդի նարգիզին երանելի մահտեսի Դաւիթ վարդապետն բաժանեաց ամենեցուն՝ արանց և կանանց իւրաքանչիւրոց զմի լուստ մոմեղէնս և մի լուստ համարքս, զոր բերեալ էր ի սուրբ Երուսաղէմայ, և ասէր ամենեցուն. «Աղօթս արարէք վասն հանգուցեալ մօրս իմոյ»: Եւ յետ կատարման պաշտմին բարձեալ տարան ի հանգստարանն՝ բազում մեծամեծ մեմեղինօք և խաշվառօք և քահանայիւք, և կատարեցին զկարդ թաղմանն և հանգուցի[ն] ի գերեզմանի, ի յաջկոյս կից գերեզմանի առն իւրոյ Սարգսի, և արկին վէմ՝ փորագրեալ զանուն և լուսին ի վերայ նորա: Եւ յետ ամաց հանգեաւ ի Քրիստոս մահտեսի Դաւիթ վարդապետն²⁸ և ամենայն ուխտիւք վանիցն և ամենայն եկեղեցեաց բարձեալ տարեալ ի

հանգստարանն վարդապետաց և հանդուցին ի գերեզմանի. որոց հոգին Տէր լուսաւորեսցէ և յիշատակք նոցա օրհնութեամբ եղիցին:

Եւ յետ այնու գնացի առ Եղնազար փեսայն՝ քեռն իմոյ այրն Մէրջանին, և ուսայ զգործս ջուհակութեան ամիսս 13: Ի սոյն աւուրս որդին հօրաքեռս՝ Յարութիւն սակերիչն երթալոց էր ի Պասրայ, և ես հայցեցի ի հօրէս՝ և զիս ընդ նմայ յուղարկեսցէ ի Բասրայ, և արար այնպէս: Ի 146 (1761) փոքր թիւն, Շամս ամսոյ Բ (2)-ին (Ապրիլի 2) ելաք ի Զուղայու և Ադամ ամսին հասաք ի կղզին Խարկ և յետ 5 ամսոյ ելեալ ի Խարկոյ, Գամայ (Նոյեմբեր) ամսին հասաք ի Բասրայ: Եւ գնացի առ էմնիազի որդի աղայ Յարութիւնն՝ ի գրագրութեամբ ծառայել նմա և ուսանիլ զգործ վաճառականի և նորին շնորհիւն արդիւնաւորիլ, յորմէ գրօվ խնդրեալ էր հայրն իմ ծերունազարդ: Եւ նա յօժարութեամբ ընկալաւ զիս ի տուն իւր և ի սպասաւորութեան իւրում: || Եւ 148 (1764) թլին աղայ Յովհաննէս էմնիազն [նաւէր ի Բան]կալայ, ի նոյն նաւովն երթայր Յարութիւնն ի Բանկալայ, և տա[նէր ընդ իւր] զամենայն գործի սակերչութեան հօրն իմոյ՝ Յարութ[իւնին] տու[եալ էր] հայրն իմ, զի նոքօք արդիւնաւոր[եսցի] ||| մասնաւորեսցէ, նա ևս աղայ Մէլի[քնազ էմն]իազ[ն երթայր ի] Սուրաթ: Իսկ աղայ Յարութիւնն ի Նիրհան 1 (Փետրուարի 25) ե[թող] զամենայն գործս իւր և եղբարցն ի կառավարութիւնս մեծ գր[ագրին] իւրոյ սլարոն Մկրտում Մատուրին և զիս էառ ընդ իւ[ր և] ելեալ ի Պասրայոյ, Եփրատ գետովն գնացաք ի Յիլա, և անտի [գր]աստիւ գնացաք ի Բաղդատ զաւուրս ԺՁ (16), և անդ հինգ ամիս յամեցաք՝ մինչև դումարեցան ամենայն Շամ քաղաք երթալոյ կարաւանն, յետ նորա ելաք ի Բաղդատու երեք հազար ուղտու կարաւանաւ, յանապատ ճանապարհաւ, յետ Խ (40) աւուր հասաք ի Շամ և, անտի ելեալ, յետ Ժ (10) աւուր Աստուծով հասաք ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, ի տօնի Սուրբ Խաչին, և մնացաք մինչ ի Համբարձումն՝ ի վնաս Սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն և Յակոբայ առաքելոյն, և կատարեցաք զուխտս մեր ամենայն տնօրէնութիւնս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի Սուրբն Նազարէթ տեղի աւետեաց սուրբ կուսին, ի Սուրբն Բեթղահէմ՝ տեղի ծննդեանն Քրիստոսի, և ի Սուրբ Հրեշտակապետն՝ երկրորդ բանտն Քրիստոսի, և ի Սուրբ ծառն, որ կապեցաւ Քրիստոս, և ի առաջին բանտն Քրիստոսի, և ի Սուրբ Գողգոթայ՝ սարսափելի տեղի խաչելութեանն Քրիստոսի, և ի Սուրբ Պատանատեղն Քրիստոսի, և ի լուսաբուղիս Սուրբ Գերեզմանն՝ տեղի սուրբ յարութեանն Քրիստոսի, և ի Սուրբ Փրկչա վանքն՝ յերրորդ բանտն Քրիստոսի, և Կափարիչ սուրբ վէմն ի դրան Սուրբ Գերեզմանին Քրիստոսի, և ի Սուրբ Գերեզմանն Աստուածածին սուրբ կուսին Մարիամու, և ի Սուրբ Համբարձումն՝ ոտնատեղն Քրիստոսի, և ի Բեթանիայ սուրբ գերեզմանն Ղազարու, և Սուրբ ծնունդն Յովհաննու Կարապետին և Մկրտչին Քրիստոսի, և սուրբ յեկեղեցին Յոհաննու Աւետարանչին, ուր է մարմարիոն սիւնն, որ կապեցաւ Քրիստոս, և տեղի Գիւտ Խաչին, և այլ ամենայն տեղիս ուխտեալ, հոգւով և մարմնով ցնծացեալ, զոհացաք ի Տեառնէ, որոց

շնորհն եղիցի ի վերայ ամենայն հաւատացեալ քրիստոնէից, ևս առաւել ինձ և իմայնոցն եղիցի:

Եւ ելեալ ի սուրբ քաղաքէն, եկաք ի Շամ քաղաք, և անտի ի Բաղդատ և ի 152 (1767—8) փոքր թՎին ի Բաղդատայ ելեալ ի Տիգրիս գետովն, յետ 2 (6) աւուր հասար ի Բասրայ, և գտի Բանկալոյ գիր ի պարոն Բարաքիաս էրեմիայէն և ի նմին պարունակեալ հինգ հարիւր ուսիոյ բարաթալգիր, և ըստացայ զայն: Քանզի հօրաքեոս որդի Յարութիւն Տէր-Ղուկասն, որ նաւէր ի Բանկալայ, հասեալ ի Մուշիբանդար, փոքր նաւակաւ իջանէր ի ցամաք և ի սաստիկ հողմոյն ընկղմեալ նաւակն, և մարդիկն հեղձան ի ծով անդր, և ինչքն Յարութիւնին աղայ Յոհաննան Քամազն տիրեալ և ի Բանկալայ հասեալ, հանձնեալ էր պարոն Բարաքիազին, և նա թղթիւ ծանուցեալ էր ինձ զիրսն և, ըստ պատասխանուոյ իմոյ, լէլամով²⁹ վաճառեալ զամենայն ինչս Յարութիւնին, և բարաթով³⁰ ուղարկեալ, զոր ըստացայ և մասն ինչ ի նոյն ամի, մնացեալն՝ յետոյ քանիցս անգամ ուղարկեցի պատճելի հօրս իմոյ Սաւփանին, զի զինք զործեացն ոսկ[ե]րչի իւրոյ էին:

Եւ սոյն ամի աղայ Յարութիւնն ընկերացուցեալ զիս, յղեաց ի Բանկալայ³¹, առ Յովհանէս աղայ էմնիազեան եղբայրն իւր, և ի միւս ամին վաղճանեցաւ Յովհանէս աղայն³², և ընկերութեանս բանն եղբայրն նորա Խաչիկ աղայն կապեալ, զամենայն շահիւն տիրեաց և զիմ բաժին շահն ոչ ետ ինձ, այլ առ ինքն մնացեալ: Այնույետ յանձին կալայ զընկերութիւն և Սուրաթու զործն աղայ Աբրահամ Յովհանէս աղային, 155 (1771) փոքր թՎին ելի ի Սէխտապատայ առ Կալկաթայ և անտի նաւեցի ի Սուրաթ, և Նիրհան ամսոյ (Մարտի) վերջն հասի ի Սուրաթ քաղաք, և ամս Բ (2) մնացի ի տան աղայ Մէլիբնաւ շահիազին՝ ըստ հրամանի աղայ Աբրահամին: Յետոյ զործն մեր այնպէս եղև, զի միմեանց զործոց ներհակութիւն պատահէր, վասն որոյ նորին հրամանաւն ելի ի տանէ նորա սիրով, և յատուկ տան բնակեցայ ի 157 (1773) փոքր թՎին, Նիրհան (Մարտ) ամսին:

219 ր²

Եւ յետ երկուց ամաց էհաս || [ի Ս]պահանու՝ ի հօրէ իմմէ թուղթ աղերսանաց, թէ եկ առ իս, միւս անգամ ևս տեսից զբեզ, և դարձիր անդրէն՝ ուր [և] կամիս: Իսկ ես զայս բանս զեկուցի աղայ Աբրահամի[ն, թ]է վերջացոյ զընկերութեանս հաշիւն և տուր զիմ բաժին շահն, զի երթայց ես առ հայրն իմ և դարձայց, բայց նա վերջացոյց հաշիւն և զիմ բաժին շահն պահեաց առ ինքն և ոչ հատուց ինձ, զի ոչ կամէր հեռանալն իմ ի զործոց իւրոց, այլ՝ ընդ իւր և ընդ աղայ Յովսէփ Մարութիւն³³ և զիմ յառաջէն շահն մէր բերելով, վերստին կիսրար ընկերանալ: Եւ զամս երկուս զրով ազաշանօք ինդրէի զիմ բաժին շահն՝ շկամեցայ վերստին ընկերանալ, բայց շեղև հնար, վասն որոյ*, անճարակ գոլով, վերստին ընկերացայ ըստ կամաց նորա ի 161 (1776—7) փոքր թՎին: Իսկ որովհետև շեղև հնար առ հայրն իմ երթալ ի Ջուղայ, միջնորդութեամբ համատանցի Յո-

* Իր իսկ ձեռքով շնչած սխալը՝ «անճարակ ճարակ գոլով»:

հաննէս արհիեպիսկոպոսին նշանեցայ և 159 (1774) նախայ 10 (Յուլիսի 9) պսակեցայ ընդ ժամակազմ³⁴ Աղազարի դուստր Վարդենույն, որ էր 13 ամաց. և նոյն թվին զոքանչս իմ Բէկզադայ խաթունն և աներն իմ պարոն Աղազարն և նորածին դուստր նոցին վաղճանեցան³⁵, որոց հոգին Տէր լուսաւորեցէ և յիշատակք նոցա օրհնութեամբ եղիցին: Եւ 161 (1776) թվոյն Մարիամխաթուն զոքանչն հանդուցեալ Աղազարին վաղճանեցաւ³⁶: Ի սոյն թվոյ (1776) Շրաթ ամսոյ 19 (Յունիսի 18) վաղճանեալ էր պատվական հայրն իմ Ստէփանն <վաղճանեալ էր>, և դուժ մահվանն եհաս, և անկայ ի մէջ մեծի տրամութեան: Եւ 162 (1777) թվին պատվական դեռարողոջ ամուսինն իմ Վարդենին, 15 ամն շև ևս էր լրացեալ, փոխեցաւ ի Քրիստոս³⁷, վասն որոյ սուգ ի վերայ սոցոյ հասեալ միշակոտոր արար զիս: Առ այս ասեմ. կամք Տեառն օրհնեալ եղիցի և զհոգիս նոցա Տէր լուսաւորեցէ և ընդ սուրբս իւր դասեցէ, և յիշատակք նոցին օրհնութեամբ եղիցին. և ի 164 (1780) թվին աղայ Մէլիքնազն վաղճանեցաւ³⁸, որոյ հոգին Տէր լուսաւորեցէ և յիշատակք նորա օրհնութեամբ եղիցին:

165 (1780—1) թվին պատվելի Բէկզադայ քոյրս եկաւ Պասրայոյ ի Սուրաթն, 166 (1781—2) թվին Հռիփսիմայ թոռն նորա Պասրայուց բերել տվի ի Սուրաթ՝ ի միսիթարութիւն նմայ: 167 (1782) թվին լուս գրօվ զգուժ վաղճանի պատվելիք Զաքարիայ հօրս եղբօրս³⁹ ի Յաշտարխան և Մարգիս եղբօրս՝ ի Բարու: Եւ յայսմ ամի (1782) Դամայ 27-ին (նոյեմբերի 23), փոխանակ սուրբ Երուսաղէմայ նկրակ Յակոբ վարդապետին, եղէ կնքահայր աղայ Մկրտչի⁴⁰ անդրանիկ որդի Միքայէլին, և լեալ 4 ամսական վաղճանեցաւ. որոց հոգին Տէր լուսաւորեցէ և յիշատակք նոցա օրհնութեամբ եղիցին:

168 (1783) Դամայ 12 (նոյեմբերի 8) եղէ կնքահայր աղայ Մկրտչի դուստր Սօլթիաշէ, ի սոյն ամի գնեցի տուն մի Մուղարայ մահլաթումն, Սիդի Զաֆարէն՝ երեք հազար ուսիփ, նոր շինուածք շինել տվի. հինգ հազար ուսիփ խալաշ գնաց: Ի սոյն ամի Բէկզադայ խաթուն պատվելի քոյրս վաղճանեցաւ⁴¹, որոյ հոգին Տէր լուսաւորեցէ, և յիշատակք նորա օրհնութեամբ եղիցին:

169 (1784) Դամայ ժէ (17. նոյեմբերի 13) Աստուծով բնակեցայ նոր շինած տանս և Դամայ 19-ումն (նոյեմբերի 15) ընդ շամախեցի հանդուցեալ Յարութիւնի դուստր պատվելի Նարգիզ խաթունին ամուսնացայ. պսակողն էր սրբանվէր տէր Զաքարիայ Տեր-Պետրոսեան առաք բահանայն⁴², խաշեղբայրս էր աղայ Մկրտիչ Մէլիքնազն. օրհնութիւն ամենազօրին Աստուծոյ ի մէնչ անպակաս եղիցի: Եւ այս նարգիզ խաթունս էր 28 ամաց⁴³ և ունէր դուստր մի ի հանդուցեալ առաջի առնէն Ներսէսէ՝ 14 ամաց, և էր առ մեզ, Մարթա կոչեցեալ, ծնեալ ի Բուշեր, 155 (1770—1) փոքր թվին:

5. Եւ ի 170 (1785) փոքր թվին, [թիւն փրկչի 1785, Օգոստոսի 27 (հին տոմարով—Գ. Տ.—Վ.), հայոց ՌՄԼԴ (1785)] Մարկոս և Ստեփաննոս որդիքս Աստուած պարգևեաց, զոլով ազգք Դահրաշի Զաքարիայէն հինգերորդ. ի նազար 10 (Սեպտեմբերի 7), յաւուր շորեքշաքաթի, ի ծագմանէ արեգականն երեք և կէս ժամուն ծնաւ ի պա-

220 ա՝ տուելի խաթուն նարգիզ մօրէն Ստեփաննոսն, և ի շորս ը ժամուն ի նոյն յարգանտէ ծնաւ Մարկոսն. [ի տէր Զաքարիայէ մկրտեցաւ... սոցա կնքահայրն էր ազայ Մկրտիչ Մէլիքնաղեանն]: Իսկ յետ տասն աւուրց՝ [նազար քսանումն] (Սեպտեմբերի 17) վաղճանեցաւ Ստեփաննոսն⁴⁴. և բարեխոսութեամբ սրբոյ աւետարանչին Մարկոսի Տէր Աստուած ամենազօր օրհնելով օրհնեսցէ և շնորհաւորս արասցէ և մինչև ի լի ծերութիւնն բարի գործովք, առաքինի վարուք, ծաղկեալ բարի զաւակօք և բարի աշողութեամբ հասուցէ ազգաց յազգս: (Նարեկ, 5ա):

Ի 170 (1786) փոքր թւին, Ովդան 25 (Փետրուարի 19) եղէ կընքահայր ազայ Մկրտչի դուստր Մարիամ սանիս. Աստուած երկար ամօք պահեսցէ: (Նարեկ. շիք):

171 (1786) Շամս 10 (Ապրիլի 10) Փուրթքեշի քափտան⁴⁵ կամօրու «Վէնուս» նաւումն Սուրաթէն առ Զին վեր կացի, նախայ 23 (Յուլիսի 22) Աստուծով հասայ ի Մաքաւ⁴⁶, յետ 2 ամսոյ զնացի ի Գանթում⁴⁷, Համիրայ 29 (Դեկտեմբերի 25) Գանթումուց վեր կացի, Արամ 1 (Դեկտեմբերի 27) խասայ Մաքաւն և Արամ 6 (1787 թ. Յունուարի 1) նոյն «Վէնուս» նաւումն վերհացի, 15 օր Գուայ, 6 օր Բումբայի մնացի և 172 (1787) Շամս 18 (Ապրիլի 18) ընդ տէր Գալուցին Բումբայուց ցամաքով գարով⁴⁸ եկինք, Շամս 26 (Ապրիլի 26) Սուրաթ խասանք: Եւ տեսի զի հանգուցեալ Աղազարի դուստր Հոփսիմայ քենիս ընդ պարոն Փանոս Աղարաբին⁴⁹ 171 (1786) նախայ 10 (Յուլիսի 9), և քվերս թոռն՝ Հոփսիմէն՝ նոյն թվոյ վերջնումն ընդ ազայ Յովսէփ Միքայէլին⁵⁰, իմ տված օրհնովն⁵¹ իմ պատվելի նշանած նարգիզ խաթունն պսակէլ էր, և ուրախացայ. Աստուած ուրէնց ուրախ վայելում և կեանս երկարս պարգևի: (Նարեկ. շիք):

Եւ 172 (1787) փոքր թվին, Թիրայ ամսի 10 (Հոկտեմբերի 7), եղէ կնքահայր ազայ Մկրտչի որդի Յարութիւն սանիս. Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ: (Նարեկ. շիք):

5. Ղուկաս որդիս ամենազօր ողորմածն Աստուած պարգևեաց ի 172 (1788) փոքր թվին, [թիւն փրկչի 1788], Ովդան ամսի 19-ին (Փետրուարի 13)՝ աւուր շորեքշաբթի, այսպէս որ երեքշաբթու կէս զիշերն անցած, լուս ի շորեքշաբթն՝ ի կէս ժամուն ծնաւ ի պատվելի խաթուն նարգիզ մօրէն: Սա ևս ի Դահբաշի Զաքարիայէն հինգերորդ ազգն է: Եւ Ովդան 30 (Փետրուարի 24), յաւուր կիրակէի ի յեկեղեցոջն, ձեռամբ տէր Խաչատուրին [Տէր-Մարտիրոսեան, ի տօնի սուրբ Սարգսին] մկրտեցաւ [և Ղուկաս կոչեցաւ ըստ պատուիրելոյ Եփրեմ նիրալին, զոր նարգիզ մօրն յղի ետես և ասաց. Որդի լինելոց է, և Ղուկաս կոչեցէք]⁵², որոյ կնքահայրն էր ազայ Մկրտիչ Մէլիքնաղն. բարեխոսութեամբ սուրբ աւետարանչին Ղուկասու Տէր Աստուածն ամենազօր օրհնելով օրհնեսցէ և շնորհաւորս արասցէ և մինչև ի լի ծերութիւնն բարի գործովք, առաքինի վարուք, ծաղկեալ բարի զաւակօք, բարի աշողութեամբ հասուցէ ազգաց յազգս: (Նարեկ, 5ա):

Ի 174 (1789) փոքր թվին, նազար 8-ին (Սեպտեմբերի 5) եղէ կնքահայր ազայ Մկրտչի որդի Սարգիս սանիս. Աստուած ընդ երկայն

աուրս արացէ: Ի սոյն թվոյս, Թիւրայ 14 (Հոկտեմբերի 11) աղայ Մինաս Մուրաան ընդ պարոն Սարգիս Անդրէասի⁵³ դստերն և պարոն Թօմաս Նիկողոսն⁵⁴ ընդ պարոն Նազար Գիլանի Յաննայի դստերն⁵⁵ պսակեցան. Աստուած շնորհաւորս արասցէ: (Նարեկ. շիք):

Ի 175 (1791), Ովդան (Փետրուար) եղէ կնքահայր աղա Մկրտչի որդի Ստեփաննոս սանիս. Աստուած ընդ երկայն աուրս արասցէ: (Նարեկ. շիք):

176 (1791) Համիրայ 13 (Դեկտեմբերի 9) աղայ Գրիգոր Յովանէսաղայեանն⁵⁶ ընդ Դաստագիւլ օրիորդին պսակեցաւ. Աստուած շնորհաւորս արասցէ: (Նարեկ. շիք):

Ի 177 (1792) Նախայ 8 (Յուլիսի 7) եղէ կնքահայր աղայ Մկրտչի որդի Մէլիքնազ սանիս. Աստուած ընդ երկայն աուրս արասցէ: (Նարեկ. շիք):

[5]. Մատթէոս որդիս ամենազօր ողորմածն Աստուած պարգեւեաց ի 179 (1794) փոքր թվին, [Թիւն փրկչի 1794, հայոց ՌՄԽԳ (1794)], ի Դամայ ամսոյ ինն, որ է 9 (Նոյեմբերի 5), յաուր շորեքշարաթու, ի ծաղմանէ արեգականն շորք ժամուն, և ի Դամայ 10-ին (Նոյեմբերի 6), երեկոյեան [առաջի] ժամոյն, վասն հանկարծ տկարանալոյն, ի տան մկրտեցաւ տէր Խաշատուր քահանայի⁵⁷ ձեռամբն, և կնքահայրն էր պարոն Սիմէոն Բուրվարեցին, և Մատթէոս կոչեցաւ. բարեխոսութեամբ սրբոց աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսու, Ղուկասու և Յոհաննու օրհնելով օրհնեցէ մարդասէրն Աստուած և ընդ նարգիղ մօրն և ընդ Մարթայ քեռն և ընդ Մարկոս և Ղուկաս տիրապարգև հղբարցն մինչև ի լի ծերութիւնն բարի դործովք, առաքինի վարուք, ծաղկեալք բարի զաւակօք, ամբողջ, առողջ, ուրախ || ||| ութեամբ հասուացէ ազգաց յազգս. և սա ևս [է ի մ] երոյ Դահբաշի Զարբախայէն հինկերորդ ազգն: (Նարեկ, 5ա):

220 ա²

[Ի 179 (1795) փոքր] թվին աղայ Մարտիրոս Միքայէլն ընդ պարոն [Ստեփ]ան Յովսէփի⁵⁹ դուստր Հոփսիմէին պսակեցաւ: [Ովդ]ան 21-ին (Փետրուարի 15). Աստուած շնորհաւորս արասցէ: (Նարեկ. շիք):

|||ու|||ս կիրակի երեկուն, մուտն ի երկուշաբթի [Մ]արթայ դու[ստրն] մեր ընդ Կեսարացի մահտեսի Կարապետի որդի պարոն Յակոբին [պս]ակեցինք. Աստուած ուրախ վայելում տացէ: (Նարեկ. շիք):

Ի 180 (1795) փոքր թվին, Ադամ 21 (Մայիսի 21), Համբարձում սուրբ օրն Սուրաթէն ցամաքով վեր կացի, Ադամ 30 (Մայիսի 30) հասայ ի Բումբայի, Աստուծով Շքաթ 8 (Յունիսի 7) Բումբայի քափտան Ըշտոնին կառավարութեամբն «Պատնչէ Թաշբախշ» նաւն մտայ և Շքաթ 17 (Յունիսի 16) լանկար⁶⁰ վեռինք առ Զին. Նախայ 20 (Յուլիսի 19) խասանք Մալաղու բերանքն⁶¹, Յոանսսի 6 նա՛վ պատահեաց, մեր նա՛վն բռնեցին, մեզ ֆրղաթի⁶² բօրգն⁶³ գերի տարան՝ որ Սիբել կոչիւր. և քափտնին տարան լաֆոթ⁶⁴ ֆրղաթի բօրգն, մեր նա՛վիցն նաղտին⁶⁵ և թիթեղէնն⁶⁶ և մարդիկն խանեցին, նա՛վն տարան մերձ ի Աշին⁶⁷, երեցին, ինձ խագիս շորէքօվն Մալաղայ⁶⁸ վեր տվին, տեղէն գնացինք Պուլու Պինանկ⁶⁹ և տեղէն Ղամար 21 (Օգոստոսի 19)

քափտան լօրէ «Սուրաթ կեաստել» նախումն վեր կացինք առ Չին, թէՖանն⁷⁰ մեզ գծեց Մանիլայ⁷¹, 9 օր մնացինք, Դամայ 8 (Նոյեմբերի 4) վեր կացինք, Համիրայ 20 (Գեկտեմբերի 16) խասանք Չին՝ Գանթում. ողորմածն Աստուած կրած վնաս և նեղութեան փոխարէն բարի աջողութիւն պարգևի, որ այսուչեաւ բարի աջողութեամբ անցուցանեմ զամենայն գործս իմ: Եւ մինչև 183 (1798) Համիրայ 8 (Գեկտեմբերի 4) ի Չին՝ Գանթում մնացի, և սոյն թաւումն մանդարինի⁷² հրամանովն բոլոր ըստրանչէրք⁷³ և մեր ազգին բռնութեամբ Մաքալն ազարկեցին, և ես ընդ նոսա ահամայ գնացի և մօտումին⁷⁴ դարձայ ի Գանթում, և Համիրայ 9 (Գեկտեմբերի 5) Գանթումուց քափտան Թէլէրին կառավարութեամբն Շեխ Սալէմին «Ղազրբաշխ» նախումն վեր կացի, Բ (2) ֆրղաթ և է (7) վաճառականի նախք ի միասին Արամ 11 (1799 թ. Յունուարի 6) խասանք Պինանկ⁷⁵ և Արամ 18 (Յունուարի 13) Պինանկուց նոյն նախովն վեր կացի, Արամ 21 (Յունուարի 16) խասանք Աշին, 24-ումն (Յունուարի 19) խասանք Սուսու գեօղն՝ ի Սումաթրայ քօտն⁷⁶, Մալայու երկիր: Եւ Ուլդան 20-ումն (Փետրուարի 14) Ֆոանսսի հէրուկուրուրին⁷⁷ մեր նախն և Բանկալու «Մարգրիտ» նախն բռնէց, մարգկոց Սուսու վէր տվեց, նախէրն տարաւ Մուրիս, յետ 66 օրէն Սուսու գեղն՝ 184 (1799) Շամս 21-ումն (Ապրիլի 21) Սուսու գետինն ծօլօվն դողիք ընկաւ, գետինն ճարճաքվեց, յամէն ճարից Գ (3) թիզ բացք սէվ և շատ ժահահոտ թանձր տիլ դուս ընկալ՝ ֆաղարի⁷⁸ նման, և ծօլամերձ մաստաղընի⁷⁹ շինվածքն վէր նստալ, և ծօլի ջուրն Բ (2) թիզ բացքացաւ յառաջէն կոպարիցն⁸⁰ և էնպէս մնաց: Այս եղև կէսօր անցած, և 15 բոպէ տեեց դողիքն, ապա դադարէց: Այս դողիքն Աշինուց սկսեալ մինչև Պատանկ⁸¹ պատասէլ այ, և սորայ ժահահոտութիւնն ով առէլ էր, որպէս ժանտախտ ջերմութեան հանդիպեցան, ոմանք փոքր օրում մեռան, ոմանք՝ յետ ամսոց, ոմանք յետ տարոց բժշկեցան կամ մեռան, և ես յետ հօթն տարոյ Աստուծով առողջացայ: Եւ մինչ ի Ղամար 20 (Օգոստոսի 18) ի Սուսու, ի Մուկի, ի Մալարու գեղարէնքումն տատանեալ մնացինք, յետոյ ինկլիզի քափտան Ռինօյի «Լամփէրիայ» ֆրղաթն Պինանկուց եկաւ, 21 հոգի քափտան, պիլօթ⁸², և փասաջէրն⁸³ միայն ես ի. ֆոանսսից թալանածքս վեռեց, Ղամար 20-ումն (Օգոստոսի 18) վեր կացինք, Նադար 3 (Օգոստոսի 31) Աստուծով խասանք Պուլ Պինանկ: Եւ անգ պարոն Գէորգ Մարգարէն գիր գրութեան դուրուղ գտայ վարձու: Մինչև 188 (1804) Նիրհան 6 (Մարտի 3) մնացի պարոնին դուրուղումն, և պարոնին ճախորդութիւն և ինձ ծանր տկարութիւն պատասէլց, իմ վարձուց փոքր բաժինն պարոն Գէորգէն գտել ի յառէջ և տուն ի ուղարկել, մնացեալն մնաց՝ յերբ կարողանայ հատուցանի: Եւ Նիրհան 7 (Մարտի 4) Պինանկուց քափտան Ըստորին «Կէրօն» նախումն վեր կացի, 189 (1804) Շամս 29 (Մայիսի 1) խասայ Բումբայի, Ադամ 8 (Մայիսի 9) Բումբայուց փաթմա||րօվ⁸⁴ վեր կացի, ծանր տկարութեամբ, ուսուց ||| Աստուծոյ ողորմութեամբն հասայ Սուրաթն, մինչև ի 8 ա[մն] ||| ի զանազան բժշկաց, խնամօքն Աստուծոյ առողջացայ: (Նարեկ. շիբ):

Իսկ յորժամ ես էի և Պինանկ, ի փոքր թվին 186 (1801—2)-ին
 ||| որդիքն իմ ի նարգիզ խաթուն մօրէն իւրեանց՝ Մարկոս[ս] և Ղ[ու-
 կաս] տվեալ եղև ուսումն գրոց ինկլիզաց ||| ազան վարպետէ, և ի
 [թիւն փրկչի 1805, փոքրն] 189, Ուլղան 26, [Ֆէվրվարի 21 և օրն
 հինգշաբաթի] Աստուծոյ աշողութեամբն տարեալ ետու ի գրագրու-
 թիւն ինկլիզերէն, ի օֆիսն⁸⁵ [յՕշանդիշի բանդարումն բնակած ինկ-
 լիզի] մատր⁸⁶ թոմաս Վայթ պէ մաստրին⁸⁷, ամսական վարձիւ՝ մին-
 շև ամս [մի] միոյ ամսոջ երկոցունց վարձն ութսուն ուսիս տայր,
 ապալ ամ յամէ յաւելոյր տասնական ուսիս: [Օգնեա Հոգի Սուրբ
 Աստուած... զի և մեր ամենեքեանս նօվաւ զապրուստս մեր և բարի
 յառաջադրութիւնն մեր բարեպէս հոգասցուք...]: (Նարեկ, 5բ):

Եւ ի [թիւն փրկչի 1808], փոքր թվին 193 (1808), [Մէի 11],
 Ադամ 10, յաւուր շորեքշաբաթի Մասթէոս որդոյս տարալ [Զալարէ
 Դրիայ մըհէլն], ի նոյն [ինկլիզի պէ մաստր] մատր թօմաս Վայթի
 օֆիսն, առի ինկլիզերէն գրագիր՝ ուր էին եղբայրքն իւր, և մատր
 Վայթն ամ մի ձրի աշխատեցոյց, ասելով՝ Ոչ է կատարեալ. և չետ
 նորա քսան ուսիս ամսական վարձ հաստատեաց և ապալ յաւել
 զվարձն. և սա ուսեալ էր ի Ղուկաս եղբօրէն: [Օգնեա Հոգի... զի և
 մեր բնդ վարձուցն եղբայրցն իւրոյ զապրուստս և բարի յառաջա-
 դրութիւնս բարեպէս հոգասցուք]: (Նարեկ, 5բ):

Եւ ի [թիւն փրկչի 1809], 193 (1809) փոքր թվին, Ուլղան ամսոյ
 10, [Ֆէվր 5], յերեկոյի կիրակէ՝ մուտն ի երկուշաբաթի, աշողու-
 թեամբն Աստուծոյ Մարկոսիս բնդ պարոն թօմասի դուստր թագու-
 հէ ամուսնացուցեալ, հանդիսի պսակեցինք⁸⁸ [տէր Զաքարիայ աւագ
 քահանային օրհնութեամբն, խաշեղբայրն էր պարոն Նիկողայոս
 Տէր-Զաքարիայն, փեսայի եղբայրն է իւր իսկ եղբայր Ղուկասս, պա-
 տարագիշն էր տէր Խաշատուրն]: (Նարեկ, 5ար և 5բ):

6. Եւ 194 (1809) փոքր թվին, Գամայ 19, [թիւն փրկչի 1809,
 Նօվէմբր 16] ողորմածն Աստուած Մարկոսին դուստր պարզեւէց ի
 հարս թագուհէն. կնքահայրն էր պարոն Նիկողայոս Տէր-Զաքա-
 րիայն⁸⁹ և մկրտողն՝ տէր Գալուստ Յօվսէփեանն, ի Սուրաթոյ Սուրբ
 Աստուածածնի եկեղեցոյն հանդիսի մկրտեցաւ և վարդխաթուն կո-
 շեցաւ՝ յանուն շոջ հանկան իմոյ և քեան իմոյ. և սա է ազգ վեցերորդ
 ի Գահրաշի Զաքարիայէն. Աստուած շնորհաւոր և բազմամեայ՝ [120
 ամաց] արասցէ քստ անուանակցին իւրոյ՝ շոջ հանկան իմոյ. ամէն:
 (Նարեկ, 5բ):

Իսկ որովհետև եմք ամենեքեանս փոփոխականք քստ բերմանց
 փոփոխականութեան աշխարհիս, այսպէս փոխեցաւ և մեր մեծագոյն
 ուրախութիւնն ի մեծագոյն տրտմութիւն, քանզի մեր պատվական
 հարս թագուհի ծննդկանն յետ 26 աւուրց ծնանելոյն զվարդխաթուն
 թոռնիկն մեր, էր 17 ամաց, ի [թիւն փրկչի 1809, Նէվէմբր 12,
 փոքրն 194 (1809)], Համիրայ 15, երեքշաբաթի աւուր հօվակարու-
 թեամբ՝ [սառնութեանն ցաւով] 6 ժամ միշոցաւ փոխեցաւ աշխար-
 հէս⁹⁰, վասն որոյ Տէր լուսաւորեացէ զհոգի նորա և մնացողացն
 մխիթարեցէ. ամէն: (Նարեկ, 6ա):

Եւ ի փոքր թվոյս 194 (1809), Համիրայ 20 (Գեկտեմբերի 17) ժամանակն այսպէս փոխարկում էառ, որ պարտաւորեցաք թողուլ զքաղաքս Սուրաթ և ելեալ երթալ ի քաղաք՝ որ և կղզին Բումբայի բնակիլ: Քանզի մասր Թօմաս Վայթ պէ մաստրն ազգ արար ինձ, թէ գնալոց է Բումբայի՝ անդ լինիլ ջէնրալ⁹¹ պէ մաստր, և թէ թողուս զՄարկոս, Ղուկաս, Մատթէոս որդիբոց ի վերա գործոցն իմոց լինիլ անդ ի Բումբայի, յղեա գնոսա ի Բումբայի, ի վերա գործոց իմոց: Եւ ես յամի Տեառն 1810, Ջէնվարի 1-էն, որ համաձայն թվոյս Արամ հինգն, ի ամենայն ամսոջ երկու հարիւր քուսփի վարձս վաստակոց երից որդոցս հատուցից ամսէ ամիս, այսինքն՝ 80 Մարկոսին, 80 Ղուկասին և 40 Մատթէոսին. և ես առ այս գերիս աւուրս էի ի մէջ մատանջութեան տիւ և գիշեր՝ թէ արդեօք երթիցո՞ւք ամենեքեանս ի միասին, թէ՛ մնասցուք: Եւ ի տեսեան գիշերի երևեցաւ ինձ <ի տեսեան գիշերի> աստղ մի յոյժ պայծառ և շուրջ զնօվաւ պատեալ մանր աստեղօք և շարս մանր աստեղուտեղաց, մի ծայրն էր որպէս ի Սուրաթ և միւս ծայրն երկար ձգէր դէպ ի հարաւ, ի կողմն՝ ուր է Բումբայի, որպէս ծրեցի ի լուսանցոյ⁹²: Եւ զարթուցեալ, ի միտ բերեալ, գոհացայ զԱստուծոյ, որ եցոյց աստեղք մեզ ճանապարհ երթալոյ ի Բումբայի: Վասն որոյ Համիրայ 24 (Գեկտեմբերի 21) պատուելի Ղուկաս որդիս պատրաստեցաք ամենայն հարկաւորութեամբ, ընդ մասր Ատկին մեծ գրագրի պէ մաստր մասր Թօմաս Վայթին, ի Ջկչիվնդասի փաթմարովն Աստուծով Համիրայ 25 (Գեկտեմբերի 22) ելեալ ի Սուրաթոյ առ Բումբայի և Համիրայ 28 (Գեկտեմբերի 25) Աստուծով հասին ի Բումբայի, կացին ի վերա գործոյ մասր Վայթ ջէնրալ պէ մաստրին. և Մարկոս, Մատթէոս և Նարզիզ խաթիլիս մայրն իւրեանց, միարանեալ ընդ Տիկին-Խաթունին, [կ]ալան վարձու զսենեակն «Լըմի պրսաթ» փաթմարուն. [կ]էս վարձն մեր տուար, կէսն՝ Տիկին-Խաթունն տաւ, և ամենայն հարկաւորն պատրաստեցաք և բարձար ի նաւակն և մտեալ անդ, Տիկին-Խաթուն Յօվհաննէսաղայեանն⁹³ և թոռն իւր՝ աղայ Յոհաննէսան Գրիգորաղայեանն⁹⁴ և խաթուն Նարզիզ և պատվելի որդիքն մեր Մարկոսս և Մատթէոս Յովսէփեանս Համիրայ 30 (Գեկտեմբերի 27) և Աստուծով գնացին ասացեալ փաթմարու զլուսին և անտի նաւեցին առ Բումբայի, և Արամ 4 (Գեկտեմբերի 31) Աստուծով ամբողջ հասին ի քաղաք և կղզին Բումբայի: Իսկ ես և խաթուն Մարթայ Յակոբեան դուստրն մնացաք ի Սուրաթ՝ ընդ նորածին Վարդխաթուն թոռնիկն մեր, և զամենայն աւելորդ կահս և կարասիս տան մերում վաճառեցի և հարկաւորն զաֆաթով⁹⁵ ուղարկեցի ի Բումբայի՝ առ պատվելիքն իմ. և տունն մեր թողի ի վարձու, և վարձն դացէ պարտաւէրն իմ: Մինչև ի 195 (1810) Շամս 29 (Ապրիլի 30) աւարտեալ ի գործոց, թողի Վարդխաթուն թոռնիկս մեր ի հոգաբարձութեան Մարթայ խաթուն դստերն մեր և ես ցամաքով ելեալ ի Սուրաթոյ, զարով եկի, Ադամ 9 (Մայիսի 10) Աստուծով հասի ի Բումբայի՝ առ պատվելիքն իմ և ուրախացեալ միամտեցայց, (Նարեկ 6ա): Եւ անցեալ փոքր միջոցի, նեղեալ ի պարտաւեարց մերոց, որ մասն ինչ յաղագս ծախուց մերոց և մասն ինչ վասն պարտուց Մարթայ դստերն մերոյ, զարձա-

Քաղին տունն իմ որ ի Սուրաթ, որ ի 171 (1786) փոքր թվին դարա-
լումն⁹⁶ ընծայ գրեցեալ պարգևեալ էի խաթուն նարզիզ ամուսնոյ
իմոյ, ի սոյն ժամոյս պարտաւորեալ, նոյն <նոյն> տունն իմով կա-
մակցութեամբն վաճառեաց պակաս քան զկիսագնի, և հատուցաք
զղանազան պարտսն մեր և Աստուծով թեթեացաք ի մտատանջու-
թենէ: (Նարեկ, շիք):

Եւ ի 196 (1812) փոքր թվին, Ովդան 28 (Փետրուարի 23) սկսեալ
նարզիզ խաթունին տկարութիւն սաստիկ ջերման զիպեալ ի ցրտա-
նալոյ և տեւաց մինչ 197 (1812), Շամս 18 (Ապրիլի 19): Եւ ազդ
արարաք ի Սուրաթ՝ Մարթայ դստերն մեր. նարզիզ խաթուն մայր
քոյ տկար է և կամի, զի առեալ զսիրելի Վարքխաթուն թոռնիկն մեր,
եկեսցես ի Բումբայի՝ առ մեզ: Եւ Մարթայ խաթունն առեալ զսիրելի
Վարքխաթունն, ցամաքով, ներ 7 աւուր եկեալ, 197 (1812), Շամս
8 (Ապրիլի 9) եհաս աստ ի Բումբայի, և միմեանց տեսեալ՝ ուրա-
խութեամբ փառս մատուցաք արարչին Աստուծոյ, և ի սկզբան տկա-
րութենէ նարզիզ խաթունին մինչև Աստուծոյ սղորմութեամբն կատա-
րեալ առողջանալն բազում նեղութիւն կրեաց, և դարմանեալ ի բժշ-
կաց՝ շնորհօքն Քրիստոսի առողջութիւն քստացաւ, որ և բարեխօսու-
թեամբ ամենայն սրբոցն Աստուծոյ, որոց զճառս և զպատմութիւնս
նոցին գրեցի ի մէջ սուրբ գրքոյս, օրհնեա, Տէր, զաղախին քո նար-
զիզն և զաւակունսն մեր՝ Մարթայն և Մարկոս, Ղուկաս, Մատթէոսն
և սիրելի թոռնիկ Վարքխաթուն ծառայք և աղախնայքն քո և պա-
հեա զսոցա միշտ ի շնորհս, ի խնամս և յողորմութիւնս քո, ազատ
ամենայն հոգեկան և մարմնական, երեկի և յաներևոյթ թշնամեաց,
և ամենայն պատահարաց և ամենայն վնասուց, և ամենայն մեղաց,
և լցոյ զսոցա շնորհօք Սուրբ Հոգւոյդ կալ միշտ առ միմեանս ջեր-
մեռանդ սիրով և առ քեզ ջերմեռանդ սիրով և սուրբ երկխոյր և
աստուածպաշտութեամբ, բարի գործովք, առաքինի վարուք, ծաղ-
կեալք բարի զաւակօք և բարի աշողութեամբ մինչև ի լի ծերութիւնն
ազգաց յազգս: Եւ մեղապարտ ծառայս ընդ սոցին համաձայնեալ
մատուցանեմք քեզ ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ օրհնութիւն, գոհութիւն,
փառաբանութիւն և երկրպագութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն: (Նարեկ, Եա. համառօտ):

Յաշողութեամբն Աստուծոյ յամի Տեառն 1815, Նախայ 23 (Յու-
լիսի 23) կիրակի երեկոյ՝ մուտն ի Նախայ 24 (Յուլիսի 24) երկուշա-
բաթի տիրապարգև Մարկոս որդին իմ երկրորդ օրհնութեամբ ամուս-
նացաւ ընդ Շուշանին, որ է դուստր Բարդամին և այրի կին հան-
գուցեալ Կարապետ Մատուրին և ունէր 5-ամեա Յովհաննէս որդին
ընդ իւր՝ ի Բասրայու եկեալ: Վասն որոյ Աստուած շնորհաւորս
արասցէ և մինչ ի լի ծերութիւնն սոցա առ միմեանս սիրով և ծաղ-
կեալ բարի զաւակօք և բարի աշողութեամբ պահեսցէ ազգաց յազգս.
ամէն: (Նարեկ, Եա):

[Թին փրկչին 1790, Դամայ 14 կամ նովէմբր 11, օրն շաբա-
թի Շուշան Մարկոս Յովսէփեանն ծնել ալ ի Բասրայ]⁹⁷:

|| Ե. Ի թւին փրկչի 1816, Յունիսի 23 հ[նոյ] տօմարին հո-
մէականի և Ջուլայի 5 նորոյ տօմարին և ի թւին հայոց 1265 (1816)

և Մարգարյան ամսոյ 17, և ի թՎին Ազարիայի 201 (1816) և Նախայ ամսոյ 5-ին, յաւուր ուրբաթու, յերեկոյեան ինն ժամ 55 րոպէին ողորմած մարդասէրն Աստուած Շուշան նուոյ իմոյ բարի ազատում պարգևեաց. Մարկոս որդոյս արու զաւակ ծնաւ [եօթն ամսական], և զի մանուկն յոյժ նազ էր, ի նմին զիշերոյ 11 ժամոյն դաւանութեամբն կնքահայր պարոն Յարութիւն Սահակին⁹⁸, ձեռամբ Տէր Միքայէլ քահանային մկրտեցաք և Գրիգոր կոչեցաք, վասն զի ի լուսանալ շարաթին տօն էր Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, որոյ բարեխօսութեամբն ամենագօրն Աստուած շնորհաւորս և երկարակեացս արասցէ շնորհածին Գրիգոր թոռնիկս իմ և օրհնելով օրհնեացէ և մինչ ի լի ծերութիւնն հասուցէ, միշտ լինիլ բարի գործովք, առաքինի վարուք [և ծաղկեալ բարի զաւակօք և բարի աշողութեամբ] և բարի օրինակ բազմաց և ի խնդութիւն բարի ծնողացն և համայն արեւակեացն սորին. ամէն, եղիցի, եղիցի: Եւ սա է ի Դահբաշի Զարարիայէն ազգ վեցերորդ: (Նարեկ, 6ա):

Յաշողութեամբն Աստուծոյ ի թուին փրկչի 1817, Օգոստոսի 26 րատ հնոյ տումարին հոծմայեցւոց և Սէտեմբր 7 նորոյ տումարին, և թւին հայոց ՌԲՃԿԶ (1817), Նաւասարդի ԺԶ (16), և թւին Ազարիայի [202], Նադար Թ (9), ի կիրակի յերեկոյի, մուտն երկուշաբթն տիրապարգև Ղուկաս որդին իմ հանդիսի բնդ օրիորդ Օվսաննային, որ է դուստր շիրազեցի պարոն Մկրտիչ Յարութիւնին, պարոն Խաչատուր Յովհաննէս խաչեղբարրն և իւր հարազատ Մատթէոս փեսայեղբարրն և համայն մերազնեայ պարոնիւք և աղայիւք և խաթունօք հանդիսի գնացեալ ի Սուրբ Պետրոսի յեկեղեցւոյն 8-րդ ժամուն, Տէր Միքայէլին օրհնութեամբն պսակեցաւ և հանդիսի դարձաւ յօթնվանս մեր, և յընթրիս բազմեցաք, մեծաւ ցնծութեամբ և ուրախութեամբ կերաք և արբաք և յետ ընթրեացն երգօք և պարուք ուրախացաք, և 2 ժամուն ամենեքեան խաղաղութեամբ գնացին ի տունս իւրեանց: Եւ գիտելի է, զի ասացեալ օրիորդ նորապսակ Օվսաննա թագուհին է դուստր ի Շիրազ բնակեալ պարոն Մկրտիչ Յարութիւնին, որ վասն օգափոխ[ութեան] յղեալ էր ի Բուշեր ի ձեռն կնքահօրն նորա պարոն Յարութիւն Կոստանդիանոսին⁹⁹, և մեր կնքահօրէն խնդրեցաք, որ «Վիլիամ Պիտրի» նաւան բնդ քերքն Խաթունի յղեալ էր, որ Շամս 22 (Ապրիլի 23) հասաւ Բումբայի, ուրախութեամբ ընկ[ալ]աք և այսօր պսակեցաք: Վասն որոյ խնդրեմք ի մարդասիրէն Աստուծոյ, զի շնորհաւորս արասցէ նորապսակ Ղուկաս թագաւորիս և Օվսաննայ թագուհւոյս մերոյ¹⁰⁰, որպէս օրհնեաց զԱրարամ, զԻսահակ և զՅակոբ նահապետքն և պահեցէ մինչև ի լի ծերութիւնն առ միմեանս սիրով, միշտ առողջ անձամբ, ուրախ սրբտիւ, ծաղկեալ բարի զաւակօք, բարի գործովք, առաքինի վարուք և բարի աշողութեամբ ազգաց յազգս. ամէն, եղիցի, եղիցի: (Նարեկ, 6բ):

Ի թՎին փրկչի 1818, փոքրն 203 (1818), Մէի 11, Ազամ 10 Մատթէոս որդիս Բումբայուց վեր կացալ առ Պօնոյ՝ մստր Վարդինին առ մստր էլֆինստօնն սֆարշագրով¹⁰¹ վասն տէրութեանն

գրագրութեան՝ 2 հարիւր ուսիսի ամսով. Աստուած առողջ և բարի աշողութեամբ պահի: (Նարեկ, 6բ):

Ի նոյն թվի[ն փրկչի 1818, Ձուն 29, փոքրն 203], Շրաթ 29 պարոն Մկրտչի դուստր Խաթունն ընդ ազայ Յովսէփ Միքայէլի որդի Աղազարին¹⁰² պսակեցինք. Աստուած շնորհաւոր արասցէ: (Նարեկ, 6բ):

Ի նոյն թվի[ն փրկչի 1818, նովէմբր 1, փոքրն 203, Դամայ 4 Մատթէոս* որդիս Պօնուց եկաւ Բուժբայի և Համիրայ 4 (Դեկտեմբերի 1) վեր կացա՛ւ առ Պօնայ, և Ալեկեաց 1 (1819 թ. Մարտի 28) Պօնուց եկաւ Բուժբայի. Աստուած միշտ բարի աշողութեամբ պահի: (Նարեկ, 6բ):

Ի թվին փրկչի 1819, [Ձուն 11], փոքրն 204 (1819), Շրաթ 11, օրն ուրբաթ, [կէս] գիշերէն [անցած] 3 սհաթին, [մուտն ի շաբաթ] Դահրաշեանց Սարգսի որդի Մարտիրոսն առ Աստուած փոխեցաւ¹⁰³. Աստուած հոգին լուսաւորի և մնացորդքն պահի (Նարեկ, 6բ):

Ի թվին փրկչի 1820, [Ձուն 23], փոքրն 205 (1820), Շրաթ 23, օրն ուրբաթի, ցերեկեան՝ [կէս օրն անցած] 3 սհաթին իմ սիրելի շորրորդ որդի Մատթէոսն [կօլօբայ տկարութեամբ 24 սհաթ միշոցաւ] առ Քրիստոս փոխեցաւ, մեզ՝ մնացորդացս դառնալի տրտմութեամբ կսկծալի թողէց. Աստուած հոգին լուսաւորի [և յերկնից արքայութեանն արժանաւորի] և մերոցս սիրտն մխիթարի. էր սա ԻՅ (25) ամաց և եօթն ամսոց և 19 աւուրց: (Նարեկ, 6բ):

Ի թվին փրկչի 1822, Մարչ 26, թվին փոքր 206 (1822), Նիրհան 29, օրն երեքշաբաթի, ի ծագմանէ արեգական տասն՝ [կէսօր անցած 4] սհաթին մեր յոյժ պատուելի և ամենայն գովութեանց արժանի ժԸ (18) ամաց թարմահասակ ժամանակի հարս Օվսանէն թորացաւութեամբ մեզ տրտմեալ եթող և ինքն <առ> առ Աստուած փոխեցաւ: [Աստուած հոգին լուսաւորի և յերկնից արքայութեանն արժանաւորի, և տրտմելոցս սիրտն մխիթարի]: (Նարեկ, 6բ):

Թվին փրկչի 1823, Ապրիլ 7, փոքրն 208 (1823), Շամս 6 պարոն Խաշատուր Յովհաննէսն մին կնքեալ բարեալցիր մահտեսի Յովսէփ Ստեփանիս անձամբն բերէց ինձ տ՛կեց. բացի տեսի, որ Բուշերայ պարոն Յարութիւն Մելքումն 1823 Ովդան 7-էն (Փետրուարի 2) թարեղ¹⁰⁴ գրեալ էր և խնդրեալ էր, որ Մարկոսիս դուստր Վարդխաթունին նշանեմ ընդ իւր որդի Մելքումին և յաջող ժամանակում աղարկեմ Բուշեր, որ ընդ որդւոյն իւրոյ Մելքումին պսակի¹⁰⁵: Եւ ես, կամակեցութեամբ Մարկոսիս և մերայնոցս Շամս 12 (Ապրիլի 13) Տէր Դաւիթ քահանայօվն նշանն հանդիսիւ օրհնել տ՛կի. Աստուած շնորհաւոր արասցէ. և պարոն Խաշատուրն հաջի Ջբրբին «Յարիէթ» նա՛վումն Մարթէ և Վարդխաթունին առ Բուշեր գնալէ փասաշն¹⁰⁶ հաստատել էր. Աստուծով Ազամ ժԱ (11, Մայիսի 12), օրն երկուշաբաթ գնացին նա՛վին գլուխն և յէքսնէ¹⁰⁷ լանկար վեռէց գնաց. Աստուած ամբողջ խասուցանի ի Բուշեր: (Նարեկ, 6բ):

* Չնչել է սխալմամբ գրածը՝ «տեղէս առ Պօնայ վեր կացէ»:

Թվին փրկչի 1823, Զուլայի 6, փոքրն 208 (1823), Նախայ 6, օրն կիրակի երեկոյն, լուս ի երկուշաբթ Ղուկասիս երկրորդ ամուսնութեամբ ընդ պարոն Աբրահամի դուստր օրիորդ Օվսանէ պսակեցինք հանդիսիւ. պսակօղն էր Տէր Դաւիթն, խաշեղբայրն էր պարոն Խաշատուր Յովհաննէսն, փեսայքէրն՝ իւր իսկ եղբայր Մարկոսն. Աստուած շնորհաւոր ասարցէ և միմեանց սրաիւ և սիրօվ ուրախ վայելումն պարգևեսցէ և շնորհիւ Տեառն լիցին միշտ առողջ, ուրախ, բարի գործովք, առաքինի վարուք, ծաղկեալք բարի զաւակօք և բարի աշողութեամբ ազգաց յազգս. ամէն, եղիցի, եղիցի: (Նարեկ, 6բ—7ա):

[6]. Թվին փրկչի 1823, Զուլայի 27, փոքրն 208 (1823), Նախայ 27 առաւօտեան 4 սհաթին, յաւուր կիրակի ողորմեցաւ մեզ մարդասէրն Աստուած և Շուշան նոյս բարի ազատում շնորհեաց՝ Մարկոս որդույս արու զաւակ ծնաւ. Աստուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ: || Թվին փրկչի 1823, Ազատ 2, փոքրն 208 (1823), Ղամար 3, օրն շաբթ Մարկոսիս նորածին որդին վասն տկարութեանն, վկայութեամբ կնքահայր պարոն Յարութին Սահակին և օրհնութեամբ Տէր Դաւիթ քահանային, կէսօրն անցած 4 սհաթին ի տան մկրտեցաւ և Յարութին կոչեցաւ. Աստուած առողջութիւն շնորհի: Եւ յաւուր կիրակէի՝ Ղամար 4 (Օգոստոսի 3), կէսօր անցած 4 սհաթին վաղճանեցաւ. կամք Տեառն օրհնեալ եղիցի, Աստուած մնացորդացն պահի և մխիթարի: (Նարեկ, 7ա):

Թվին փրկչի 1823, Մէտէմբր 29, փոքրն 208 (1823), Թիրայ 1, օրն երկուշաբթի, քրէօվ¹⁰⁸ կացած տունն թողինք ես և Նարգիզն, և Մարկոսըս, և Ղուկասըս, և Շուշանն, և Օվսանէն, և Յովհաննէսն, և Գրիգորն, և աղային Սամպարն և Աստուծոյ աշողութեամբն եկինք Մարկոսին և Ղուկասին արծաթադին գնեալ և շինեցուցեալ նոր տանս բընակեցանք: Ամէնողորմ և մարդասէրն Աստուած ի մեզ գթասցի և ողորմեսցի և շնորհաւորս արասցէ և յուրախութիւն ի տանէս մի պակասեցուցէ, և մեզ միշտ առողջ և ուրախ և բարի աշողութեամբ պահեսցէ, և պատկանաւորացն բարի զաւակօք ծաղկեցուցէ և մնացական [զաւակօք], կենօք պողարեբեսցէ ազգաց յազգս, և նմա փառք, պատիւ և երկրպագութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: (Նարեկ, 7բ):

Թվին փրկչի 1823, Գիզէմբր 8 և Համիրայ 11 Բուշերայ պարոն Յարութին Մելքումէն Դամայ 9 և նօվէմբր 6-էն զիր հասաւ առ ինձ և Մարկոսն, որ զրել էր. «Թիրայ 15-ումն (Հոկտեմբերի 9) Վարդխաթունն ընդ Մելքումին պսակեցինք»: Աստուած շնորհաւոր արասցէ և մինչ ի ի ծերութիւնն բարի գործովք, առաքինի վարուք, ծաղկեալ բարի զաւակօք և բարի աշողութեամբ հասուցէ. ամէն: (Նարեկ, 7աբ):

[ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՄԱՐԿՈՍԷ ԳԱՇՏԱՇԵԱՆՑ]

Թվին փրկչի 1823, Զուլայի 7, փոքրն 208 (1823), Նախայ 7 կիրակի երեկոյի, մուտն ի երկուշաբթի տիրապարզև Ղուկաս որդին

իմ ընդ օրիորդ Ուսաննայ՝ դուստր շուղայեցի պարոն Արրահամ Յովհաննէս Մելքումեանին հանդիսի սուրբ յեկեղեցւոյն, օրհնութեամբ Տէր Դաւիթ քահանային, վկայութեամբն պարոն Խաչատուր խաչեղբօրն և Մարկոս փեսանդրօրն, Երեկոյեան 8 ժամուն պսակեցաւ երկրորդ անգամ. Աստուած շնորհաւոր արասցէ: (Նարեկ, 7բ):

229 ա² [6]. ԹՎին փրկչի 1824, Զուն 20, փոքրն 209 (1824), Շրաթ 20, յաւուր կիրակի, առաւօտեան 3 սհաթ և 20 րոպէին || ողորմեցաւ մեզ մարդասէրն Աստուած և Ուսաննայու բարի ազատում պարգևեաց. Ղուկաս որդւոյս արու զաւակ ծնաւ. Աստուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ: ԹՎին փրկչի 1824, Զուլայի 11, փոքրն 209 (1824), Նախայ 11, յաւուրն կիրակի Ղուկասիս նորածին որդին, վկայութեամբն պարոն Ալեա Յարութիւն Սահակին¹¹⁰ և օրհնութեամբ տէր Մարտիրոս քահանային, կէս օրն անցած 5 սհաթին սուրբ յեկեղեցւոյն մկրտեցաւ և Դաւիթ կոչեցաւ: (Նարեկ, 7բ):

ԹՎին փրկչի 1824, Ազտ 25 և փոքրն 209 (1824), Ղամար 26, օրն շորէքշարաթ, առաւօտեան խինդ կէս սհաթին Դահրաշեանց մահտեսի Յովսէփ ԸՍտեփանեանն՝ գրչագրող սուրբ մատենիս փոխեցաւ առ Քրիստոս 83 ամաց. Աստուած իւր հոգին լուսաւորի և մեր սիրան մխիթարի: (Նարեկ, 7բ):

[6]. ԹՎին փրկչի 1826, Ապրիլ 16, փոքրն 210 (1826), Շամս 15, յաւուր կիրակի, սէփառէն¹¹¹ 2 սհաթ և 15 րոպէին ողորմեցաւ մեզ մարդասէրն Աստուած և Շուշանին բարի ազատում պարգևեաց՝ Մարկոսիս արու զաւակ ծնաւ. Աստուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ: ԹՎին փրկչի 1826, Ապրիլ 23 և փոքրն 210 (1826), Շամս 22, յաւուրն ծաղկազարդ կիրակի Մարկոսիս նորածին որդին, վկայութեամբ պարոն Յարութիւն Սնակին և օրհնութեամբ Տէր Մարտիրոս Տէր-Խաչատուր քահանային, սուրբ յեկեղեցւոյն մկրտեցաւ և Յովսէփ¹¹² կոչեցաւ: (Նարեկ, 7բ):

ԹՎին փրկչի 1832, Զուն 12-ումն մեր խորղաքոյր Մարթա Յակոբեանն ժանտախտի տկարութեամբ ի Բուշն վախճանեցաւ. Աստուած իւր հոգին լուսաւորի: (Նարեկ, 8ա):

229 բ¹ || [ԹՎին փրկչի] 1839, Սէպտեմբր 9, օրն երկուշարթաի, 10-երորդ ժամին Մարկոսիս որդի Գրիգորն ի Բումբայի Սուրբ Պետրոսի յեկեղեցւոյն, Տէր Առաքել Յովհաննէսի օրհնութեամբն պսակեցաւ ընդ օրիորդ Մէրին դուստր հանգուցեալ պարոն Յորդանան Յովսէփ Յարութիւնին. խաչեղբայրն էր Ղուկաս եղբօրս որդի Դաւիթն, և փեսեղբայրն էր պարոն Աստուածատուր Յարութիւն Աքամն. Աստուած շնորհաւոր արասցէ, մինչև ցլի ծերութիւնն իւրեանց առ միմեանս սիրով և ծաղկեալ բարի զաւակօք: Ասացեալ Մէրին հարսն մեր ծնեալ է ի Բումբայի՝ թիւն 1821, Մարչ 23-ումն, օրն շարաթ, առաւօտեան եօթն և կէս ժամին և Ապրիլ 8-ումն մկրտեցաւ. կնքահայրն այ պարոն Յակոբ Յարութիւն Սահակ Աղանուրեանն¹¹³: (Նարեկ, 8ա):

[7]. Թիւն 1840, Օքտօբր 23, օրն ուրբաթ, առաւօտեան 11 սհաթին բարեբարն Աստուած մեր հարս Մէրինին բարի ազատում շնորհեաց, Գրիգոր որդւոյս դուստր ծնաւ, և նորամանուկին Նովէմբր

14-ումն՝ օրն շաբաթ, վկայութեամբ կնքահայր պարոն Աւետ Յարութիւն Աղանուրին և օրհնութեամբ տէր Առաքել Յովհաննիսին, սուրբ եկեղեցումն մկրտեցաւ և անունն Հոսիսիմայ կոչեցաւ. Աստուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ: (Նարեկ, Տա):

[7]. Թիւն 1843, Զուլայի 11, առաւօտեան 3 սհաթ և 20 րոպէին, յաւուրն երեքշաբաթի ողորմեաց մեզ մարդասէրն Աստուած և մեր հարս Մէրինին բարի ազատում պարգևեաց՝ Գրիգոր որդուս դուստր ծնաւ. Աստուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ: Եւ [նորամանուկն] Զուլայի 30-ումն, օրն Վարդավառ կիրակի, վկայութեամբ կնքահայր սրբակրօն տէր Գալստան Նազարէթին և օրհնութեամբ տէր Գարրիէլ Տէր-Միքայէլին սուրբ եկեղեցումն մկրտեցաւ և անունն Եղիսաբեթ կոչեցաւ: (Նարեկ, Տա):

229 p²

|| ԹՎին փրկչին 1846, Զուլայի 18, օրն շաբաթ, սէփառէն մերձ երեք սհաթին Նարզիզ Մահաեսի-Յովսէփեանն փոխեցաւ առ Քրիստոս՝ 96 ամաց: Աստուած իւր հոգին լուսաւորի և մեր սիրան մխիթարի: (Նարեկ, Տր):

[7]. ԹՎին փրկչին 1846, Սէպտեմբր 9, առաւօտեան 4 սհաթ և 27 րոպէին, յաւուրն շրեքշաբաթի ողորմեաց մեզ մարդասէրն Աստուած և մեր հարս Մէրինին բարի ազատում պարգևեց՝ Գրիգոր որդուս դուստր ծնաւ, Աստուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ. և Սէպտեմբր 27-ումն, օրն Սուրբ Խաչ կիրակի, վկայութեամբն կրնքահայր սրբակրօն տէր Մինաս Պետրոս Պօղոսին, Տարգէվայ բաղչի մեր բնակած տանն, ձեռամբն տէր Սիմէօն Տէր-Մատթէոսին, մկրտեցաւ և անունն Շուշան կոչեցաւ: (Նարեկ, Տր):

[7]. ԹՎին փրկչին 1848, Զուն 7, օրն շրեքշաբաթ, երեկոյեան 5 սհաթ և 36 րոպէին ողորմեաց մեզ մարդասէրն Աստուած և մեր հարս Մէրինին բարի ազատում պարգևեց՝ Գրիգոր որդուս որդի ծնաւ. Աստուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ: Եւ Սէպտեմբր 24-ումն, օրն Սուրբ Խաչ կիրակի [նորամանուկն] վկայութեամբն կրնքահայր սրբակրօն տէր Մինաս Պետրոս Պօղոսին սուրբ եկեղեցումն, ձեռամբն տէր Յարութիւն Եղիային մկրտեցաւ և անունն Մատթէոս կոչեցաւ: Եւ է սաչ Դահբաշի Զարարիայէն ազգ եօթներորդ: (Նարեկ, Տր):

[7]. ԹՎին փրկչին 1851, Ապրիլ 17, օրն հինգշաբաթ, երեկոյեան 10 կէս սհաթ և 24 րոպէին, այսինքն՝ 11 սհաթիցն 6 մնուդ պակաս, ողորմեաց մեզ մարդասէրն Աստուած և մեր հարս Մէրինին բարի ազատում պարգևեց՝ Գրիգոր որդուս դուստր ծնաւ. Աստուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ. և [նորամանուկն] Ապրիլ 27-ումն, օրն կիրակի, վկայութեամբ կնքահայր պարոն Յակոբ Յարութիւն Աղանուրին, սուրբ եկեղեցումն, ձեռամբն տէր Մատթէոս Գրիգոր Ղարիբին մկրտեցաւ և անունն Աննայ կոչեցաւ¹¹⁴: (Նարեկ, Տր):

230 ա¹

|| ԹՎին փրկչին 1851, Զուլայի 3, օրն հինգշաբաթի Մարկոսիս որդի բօխչի Յովսէփն ի Մաղրաս, Սուրբ Աստուածածնի յեկեղեցուոչն, Տէր Կարապետ Վարդանի օրհնութեամբն պսակեցաւ ընդ օրիորդ Կատարինէ, որ է դուստր հանկուցեալ պարոն Յարութիւն կիրակո-

սին. Աստուած շնորհաւոր արասցէ և պահեսցէ [նոցա ենթ նախա-
խնամական թեոց իւրոց] մինչև ցլի ծերութիւնն իւրեանց առ մի-
մեանս սիրով և ծաղկեալ բարի զաւակօր: (Նարեկ, 9ա):

[ԹՎին փրկչի] 1852, Մարշ 16-ումն, օրն երեքշաբթ, առաւօ-
տեան 11 ժամին օրիորդ Մէրխաթուն Մկրտիչ Պետրոսեանն¹¹⁵
ամուսնացաւ ընդ 6-երորդ աէշեմէնաթի¹¹⁶ զինուոր՝ էնսայն¹¹⁷ Գէնվիս
Ջէմս Սմիթին՝ Բայթբալի բշկօլի¹¹⁸ ինկլիզի Կրայստ անուամբ եկե-
ղեցումն. պսակողն էր փազրի Գիրսընն: (Նարեկ, 9ա):

[7]. [ԹՎին փրկչի] 1852, Ջուն 28, օրն երկուշաբթի, առաւօ-
տեան 10¹/₂ ժամ և 10 րոպէին մեր հարս Կատարինայ Յովսէփ
բժիշկն ծնաւ դուստր ի Փարէզ. Աստուած շնորհաւոր և երկարա-
կեացս արասցէ. և երեխին մկրտել ան ի Լօնդօն՝ պրօտէստանտի
եկեղեցումն և անունն կոչել ան Ովսաննայ Շուշան: (Նարեկ, 9ա):

230 ա²

|| [ԹՎին փրկչի] 1853, Ագոստ 12, երեկոյեան եօթն և կէս ժա-
մին Մարկոս Մահտեսի-Յովսէփիս խորղ որդի և Շուշան կենակցոյս
անդրանիկ որդի Յովհաննէս Կարապետ Մատուր Բարումն վախճա-
նէց փորի տկարութեամբ: Սա ծնեալ էր ի Բասրայ, 1811 Օգոստր
25-ին: (Նարեկ, 9ա):

[7]. [ԹՎին փրկչի] 1854, Դիզէմբր 8, օրն ուրբաթ, առաւօ-
տեան վեց սհաթիցն վեց մնուդ պակաս մեր հարս Կատարինայ
Յովսէփ բժիշկն ծնաւ դուստր ի Մազրաս, որ ի հայոց եկեղեցումն
մկրտեալ անունն կոչեալ են Մադլինայ Ռարէլ Կատարինայ. Աս-
տուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ. կնքահայրն է պարոն
Յակոբ Յարութիւն Կիրակոսն¹¹⁹: (Նարեկ, 9բ):

[7]. [ԹՎին փրկչի] 1855, Ջուլայի 16-ումն, օրն երկուշաբթի,
երեկոյեան 11 սհաթիցն 4 մնուդ պակաս ողորմեաց մեզ մարգասէրն
Աստուած՝ մեր հարս Մէրինին բարի ազատում պարգևէց, Գրիգոր
որդու որդի ծնաւ. Աստուած շնորհաւոր և երկարակեացս արասցէ. և
1856* Մարշ 30-ումն, օրն կիրակէ, առաւօտեան 9 ժամին, վկայու-
թեամբ կնքահայր տէր Մինաս Պետրոսին, Փառէլայ մեր բնակած
տանն, ձեռամբն Տէր Յակոբ Տէր-Հայրապետին [նորամանուկն]
մկրտեցաւ և անունն Մարկոս կոչեցաւ:

[ԹՎին փրկչի] 1856, Ֆէրուէրի 2-ումն, օր շաբթ, ցերէկէն 12
ժամին մեր սիրելի և յոյժ ափսոսալի հարս տիկին Ովսաննայ Ղու-
կաս Մահտեսի-Յովսէփեանն վախճանեցաւ 53 ամաց և ամփոփե-
ցաւ Բումբայուս Սուրբ Պետրոսայ եկեղեցումն. իւր տկարութիւնն
էր փորագնացողութիւն: (Նարեկ, 9բ):

[8]. [ԹՎին փրկչի] 1856, Նօվէմբր 24, օրն երկուշաբթի, առա-
ւօտեան հինգ և կէս սհաթին մեր հարս Կատարինայ Յովսէփ բժիշկն
ծնաւ դուստր ի Կօմբակօնում, որ պրօտէստանտի եկեղեցումն մկր-
տեալ, անունն կոչել ան Նարսիսուս Տէրէշայ, այսինքն՝ Նարգիզ Թէ-
րէզիայ. Աստուած շնորհաւոր և երկարակեացս որասցէ]: (Նարեկ,
9բ. Յայտմ.—չիբ):

* Իր ձեռքով ջնջել է սխալը՝ «Ապրիլ»:

230 ր¹

|| [ԹՎին փրկչի] 1857, Զուլայի 20-ումն, օրն երկուշաբթի, առաւօտեան 11 ժամին 11 ուշիմէնթի [զինուոր] լիֆտնրն¹²⁰ Ալէն Լարիմրն ամուսնացաւ ընդ [մեր, այսինքն՝ Մարկոս և Շուշան Մահաեսի-Յովսէփիս անդրանիկ թոռն] օրիորդ Հոփսիմայ Գրիգոր Մարկոս Յովսէփին¹²¹, [Բումբայուա] Բայիբալի բշկօլի Կրայստ անուամբ կեկղեցումն. պսակողն էր փաղրի Գիրսնրն: [Աստուած շնորհաւոր արասցէ և պահեսցէ նոցա ընդ միմեանս սիրով և ծաղկեալ բարի զաւակօք և երկար ամօք]: (Նարեկ, 9բ—10ա):

[ԹՎին փրկչի] 1858, Ֆէբրուէրի 8-ումն, օրն երկուշաբթի, առաւօտեան 11 ժամին պարոն Յովհաննէս Աղազար Միքայէլն ամուսնացաւ ընդ օրիորդ [և մեր երկրորդ թոռն] Եղիսաբեթ¹²² Գրիգոր Մարկոս Յովսէփին՝ մեր Սուրբ Պետրոսայ կեկղեցումն. խաշեղբայրն էր պարոն Յարութիւն Յորդանանն և փեսեղբայրն էր պարոն Վիլիէմ Աղազար Միքայէլն, և պսակողն էր սրբակրօն Տէր Գասպար Տէր-Սիմէոնն: (Նարեկ, 10ա):

[8]. [ԹՎին փրկչի 1858, Սէպտէմբր 6-ումն, օրն երեքշաբթի, երեկոյեան սավայ¹²³ վեց սհաթին մեր հարս Մէրի Գրիգոր Մարկոս Յովսէփն ծնաւ ուսար, և Օկտօբր 10-ումն, օրն կիրակէ սրբակրօն Տէր Գասպար Տէր-Սիմէոնն Փառեյ[այ մեր] տանն մկրտէց և ինքն կնքահայր դառցաւ և անունն կոչեցին Յովսէփ¹²⁴: (Նարեկ, 10ա. Յայսմ.—չիք):

[8]. [ԹՎին փրկչի 1858, Դիզէմբր 25-ումն, օրն շաբաթ, առաւօտեան սավայ ինն սհաթին մեր հարս Կատարինայ Յովսէփ բժիշկրն ծնաւ ուսար ի Կօմբայկօնում, որ պրօտեստանտի կեկղեցումն Զենուէրի 19-ումն մկրտեալ, անունն կոչել ան Մարկոս Յովսէփ. կնքահայրն այ տեղի երկրորդ դատաւորն]: (Նարեկ, 10ա. Յայսմ.—չիք):

[8]. 1859 Ապրիլ 7-ումն, օրն հինգշաբթի, գիշերէն 11¹/₂ սհաթին մեր Հոփսիմայ Ալէն Լարիմրն ծնաւ որդի և Ազոստ 19-ումն, օրն ուրբաթ Բայիբալի պրօտեստանտի կեկղեցումն մկրտեալ, անունն կոչեցին Հարի Միքայէլ Գարդն Լարիմր. կնքահայրն էր պարոն Յովհաննէս Աղազար Միքայէլն: (Նարեկ, չիք):

[8]. 1859 Նօվէմբր 23-ումն, յաւուրն շորէքշաբթի, յերեկոյեան 7 մնուդ պակաս 12 սհաթին մեր Եղիսաբեթ Յովհաննէս Աղազար Միքայէլն ծնաւ դուսար և Դիզէմբր 18-ին, օրն կիրակէ տանն մկրտեցին ձեռամբն Տէր Գասպար Տէր-Սիմէոնին, և կնքահայրն էր ուրէնց փեսայ քապտան Գրէն, և անունն կոչեցին Ղամբարղեֆայ¹²⁵: (Նարեկ. չիք):

[ԹՎին փրկչի] 1860, Ֆէբրուէրի 4-ումն, օրն շաբաթ, առաւօտեան 11 սհաթին պարոն Վիլիամ Աղազար Միքայէլն¹²⁶ ամուսնացաւ ընդ օրիորդ Շուշան Գրիգոր Մարկոս Յովսէփին¹²⁷, մեր Սուրբ Պետրոսայ կեկղեցումն. խաշեղբայրն էր պարոն Յարութիւն Յորդանանն, և պսակողն էր [սրբակրօն] Տէր Գասպար Տէր-Սիմէոնն՝ հրամանաւ սրբազան տեառն Թաղէոսի արքեպիսկոպոսի Զուլայու առաջնորդին¹²⁸: (Նարեկ, 10ա):

230 ր²

||. [8]. [ԹՎին փրկչին] 1860, Նովեմբր 14-ումն, օրն շորէքշարաթի, երեկոյեան 6 սհաթ և 15 մնուդին մեր հարս Կատարինայ Յովսէփ բժիշկն ծնաւ դուստր ի Տրանկուէքար և ինկլիզի պրօտեստանտի եկեղեցումն մկրտեալ, անունն կոչել ան Շուշան Մէրի Մարգրիտ. և կնքահայրն այ տեղին դատաւար մստր Ռիճարդ Կլարկն (Mr. Richard Clarke), և կնքամայրքն են միս¹²⁹ Կլարկ և մեր հարսի մայր տիկին Ովսանէն: (Նարեկ, 10աբ):

[8]. [ԹՎին փրկչի 1862, Զուլայի 21-ումն, օրն երկուշարաթի, առաւօտեան երեք և կէս սհաթին մեր հարս Կատարինայ Յովսէփ բժիշկն ծնաւ դուստր ի Տրանկուէքար, և պրօտեստանտի եկեղեցումն մկրտեալ, անունն կոչել ան Յրանսէս Զոզեֆայն. կնքահայրն այ*, որ է ինգլան |||, սանամայրն այ հանգուցեալ պարոն Առաքելի նշանածն]: (Նարեկ, 10բ. Յայսմ.—չիք):

1864 Մարչ 14, Մեծ Պահոցի առաջին օրն, երկուշարաթի, երեկոյեան եօթն ժամուն Մարկոս Մահտեսի-Յովսէփեան փոխեցաւ առ Տէր՝ 80 ամաց հասակի¹³⁰. Աստուած իւր հոգին լուսաւորելով, ընդ արդարոցն արժանացուցէ արքայութեան իւրոյ. ամէն: (Նարեկ. չիք):

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ Ա.

[ՏԵՏՂՈՍԱԹԵՐԹ «ՅԱՅՍՄԱՌՈՒՐ ԳՐՈՅ» ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱԶԲԱՇԵԱՆՅ]

2 ա

|| Գիրք պատմութեանց, որ կոչի Յայսմաւոր... Իսկ ես, անարժան և անպիտան գրչագրօղ մահտեսի Յովսէփ Ստեփանե[ան Դահլեռ]շեանց, վառեալ աստուածային սիրոյն, ձեռնամուխ եղէ գրել ի հնազոյն օրինակէ ի փառս Քրիստոսի և ||| ըստ ամենայն սրբոց նորա և ի վայելումն տիրապարզ և սիրելիք որդոցն իմոց՝ ծառայիցն Աստուծոյ Մարկո[սիս], Ղուկասիս և Մատթէոսիս, և յիշատակ ի Քրիստոս հանգուցեալք ծնողացն իմոց Դահլեռշեանց Ստեփանին և [մօր] իմոյ Թանկումին, և եղբարցն իմոց Սարգսին և Մինասին, և քերցն իմոց՝ Վարդխաթունին և մի[ւս Վ]արդխաթունին, և Մարիամ-խանումին, և Բէկղաղային, և Յաննայէ, և վաղաթառամ որդոյն իմոյ [անդ]րանկի՝ Ստեփանին. և հօրեղբարցն իմոց՝ Սաֆարին, Դաւիթ վարդապետին, Հէրապետին, և [Զա]քարիային, և հօրաքեանս՝ Թաբառուքին, և ի հօրէ պապոյն իմոյ՝ Սարգսին, հանկան իմոյ՝ Նարկղ[ին]. և ի մօրէ պապոյն իմոյ՝ Սղիաղարին և հանկան իմոյ Ամանարազին. և հօրն Սարգիս պապոյն իմոյ [Դա]հլեռի Զաքարիային, որք հանգուցեալք են ի Քրիստոս, որոց հոգին Տէր լուսաւորեսցէ, և յիշատակ ն[ոցա] օրհնութեամբ եղիցի:

Այլ և բարւոյ յիշման արժանաւորք են ըզտիրապարզ և կենդանի բարեպաշտ և աստուածասէրք ընտանիք՝ ըզսիրելիքն և պատվելիքն իմ՝ զամուսինն իմ զնարկիզն և նորին [դ]ուստրն զՄարթայն և ըզորդիքն մեր Աստուծով զօրացեալք՝ Մարկոսս, Ղուկասս և Մատ-

* Անվան տեղը բաց՝ չգրված:

թէոսս, և նորապսակ հարսն մեր Թագուհի Մարկոսեանն, և եղբորորդիքն իմ՝ Մարտիրոս և Յովակիմ Սարգսեանն, որոց Տէր պահեսցէ զսոցա միշտ խնամօք, շնորհօք, ողորմութեամբ և գթութեամբ իւրով, ազատ ի հողեր և մարմնաւոր, յերեւիլ և յաներևոյթ թշնամեաց, և ծաղկեալ բարի զաւակօք և բարի աջողութեամբ մինչև ի լի ծերութիւնն հասուցէ և յետ լրման աստի կենաց, յերկնից արքայութեանն և յաւիտենական երանաւէտ կենացն արժանացուցէ, և զիս՝ անարժան գրչիս ընդ ամենայն սուրբս իւր դասակից և պսակակիցս արացցէ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ի հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն էջմիածնի Տեառն Դանիէլի կաթողիկոսին ամենայն Հայոց և ի առաջնորդութեանն Նոր Զուլայոյ Ամենափրկչի վանի տեառն Յարութիւնի արհիեպիսկոպոսի¹³¹ գրեցաւ սուրբ գիրս ի յերկիրս Հնդկաց, ի ծովամերձ քաղաքոջս Սուրաթ, յամի կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի 1809. ի Փետրվարի ամսոյ 24, յաւուր շորեքշաբաթի սկսեցի՝ ի թուին հայոց ՌՄՆ¹³² (1809), Մեհեկի ժԸ (18), ըստ փոքր թուին հայոց 193 (1809), Նիրհան 11-ին:

Չնչին ծառայ ծառայիցդ Աստուծոյ մահտեսի Յովսէփ Ստեփանեան Դահրաշեանց գրչագրօղ սորին:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ Բ.

214^{p1}

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍՈՒՐԲ ԳՐԲՈՅՍ

214^{p2}

Փառք... որ պարգևեցիր մեղապարտ ծառայիս կարողութիւն և եղեր օժանդակ առ ի սկ[ս]անիլ գրել և աւարտ հասուցանել զայս պատմութեան Յայսմաւուրաց սուրբ գիրքս, որ պարունակէ համառօտ պատմութիւնս ի սկզբանէ արարածոցն, զստեղծմանն Ադամայ և պատմութիւնն նախահարցն և նահապետացն... || ճգնաւորաց և կուսանաց, զոր պայծառ շահքն և անաղօտ լապտերքն եկեղեցւոյ տէր Գրիգորիս Վկայասէրն և տէր Ներսէս Շատաշնորհն, և ոմն Կիրակոս բանիրուն վարդապետն հոգ տարան և ամենայն ազգաց ժողովեցին, և ստուգապէս որոնեալ բննեցին յորում ժամանակի և յորում ամսեան և քանիս ամսոյն է զիպեալ տէրունական տօնսն և նահատակութիւնը սրբոցն, և զամենեսեան ի մի տուփ ժողովեցին ի վայելումն սուրբ եկեղեցւոյ, առ ի օր ըստ օրէ, ըստ ամսաթւին՝ ի նոյն աւուրն ընթեռնուլ ի լուր ամենեցուն...

Վասն որոյ և ես՝ ամենանուստ ծառայս ծառայից Աստուծոյ Դահրաշեանց Ստեփանեան մահտեսի Յովսէփս խանդաղակաթ սիրով ապաւինելով ի յօգնութիւն ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, ի ծերութեան և տկար հասակոջս և անկարողութեան ժամանակիս, զողողմամբ ձեռօքս սկիզբ արարի գրել յամի Տեառն ՌԸԾԹ (1809) Փետրվարի ԻԳ (24)՝ յաւուր շորեքշաբաթի, ի Սուրաթ քաղաքոջ և թւին հայոց ՌԲՃՅ¹³³ (1809) Մեհեկի ժԲ¹³³ (12), և ի փոքր թւին հայոց ՃՂԳ (1809) Նիրհան ժԱ. (11). և օժանդակութեամբ ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ յամի Տեառն ՌԸԾԺԱ. (1811) Դեճտեմբերի ԻԵ (25)

և թվին հայոց ԹԲՃԿ (1811) Քաղոցի ԺԷ (17), և փոքր թվին հայոց, որ Ազարիայի կոչի՝ ԱՃՂԶ (1811), Արեամ Ժ (10), յաւուր երկուշարաթի, ի տօնի սրբոյն Ստեփաննոսի նախավկային աւարտ հասուցի. ի վայելումն տիրապարզև որդոցն իմոց՝ ծառայիցն Աստուծոյ Մարկոսին, Ղուկասին, Մատթէոսին, զի քնթեանլով զսրբոց պատմութիւնսն և աստուածասիրութեամբ զմայլեցին և աստուածպաշտութեամբ կացցեն զամենայն աւուրս կենաց իւրեանց և լինիցին բարի օրինակ բազմաց և բարի յիշատակ նախնեացն իւրեանց ի Տէր հանգուցելոց, և յուրախութիւն և ի պարծանս ծնողաց և ամենայն ազգականաց իւրեանց կենդանեաց Տէրամբ...

Աւարդ, արտասուայորդ աշօք, սրտաբեկ յառաշանօք, ծնրադրական երկրպագութեամբ, առաթուր անկեալ յերկիր ի վերա երեսաց իմոց, համբուրելով զպատուանդան ոտիցդ և կողկողազին հեծեծանօք ազաշեմ, պաղատեմ և աղերսեմ առ քեզ, միաժին Որդի Աստուծոյ Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, մի՛ յիշեր զմեզս իմ և սրբեա՛ւ ամենայն զգայարանս իմ ամենայն ազատութենէ մեզաց և արժանաւորե՛ա առնուլ զսուրբ անուն քո ի բերան իմ և հայցել ի քէն բարիս վասն ազգի մարդկան կենդանեաց և ննջեցելոց, և քնդունիլ ի քէն զշնորհս և զողորմութիւն... || ողորմեա՛ւ ամենայն հաւատացնալ բրիստոնէից, ևս առաւել ազգիս հայոց՝ հայրապետաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից, սարկաւազաց, դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, այլ և թագաւորաց և իշխանաց և առհասարակ ժողովրդոց և ժողովրդականաց, և ամենայն վարժապետաց և բարի տեարց, բարի ուսուցչաց և բարի խրատատուաց, և ի բարիս կրթողացն իմոց և ամենայն էրեխտաւորաց և վաստակաւորացն իմոց, և ամենայն ազգականաց և քնտանեաց և ամենայն արեան առու մերձաւորացն իմոց, և սանէրիս և ծնողացն, և ամենայն շարարաց և բարերարացն իմոց՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից և ամենայն շափու հասակի. հնոց և նորոց, առողջաց, հիւանդաց, ճանապարհորդաց, նաւորդաց, նեղելոց, գերելոց, վշտացելոց, պարտականաց, բանտարկելոց, մեծատանց, տնանկաց, չարուստաց և աղքատաց, պատրաստ և անպատրաստ հանգուցելոց և ի հաւատոցն մոլորելոց, և ամենից մեզացն թողութիւն շնորհեա: Առողջացն խաղաղ կենօք, երկար ամօք, ուղիղ հաւատօվ պահեալ, հիւանդացն առողջութիւն շնորհեալ, ճանապարհորդաց և նաւելոցն բարի ճանապարհ և բարի աջողութիւն շնորհեա, գերելոց դարձումն շնորհեա. վշտացելոց յանդորրութիւն, նեղելոց հանգստութիւն, տրտմեցելոցն մխիթարութիւն շնորհեա, պարտականացն հատուցումն աջողեա, բանտարկելոցն ազատութիւն շնորհեալ, մեծատանց ի նմին ճոխութեամբ գթածութիւն շնորհեալ, տնանկաց վերականգնումն շնորհեալ, չարքստացն ի նմին աջողութեամբ ողորմածութիւն, աղքատացն ի շնորհաց քոց լիացոյ, մոլորելոցն դարձ և զղջումն շնորհեալ, անպատրաստ և պատրաստ հանգուցելոց մեզացն թողութիւն շնորհեալ, զհոգիս նոցին լուսաւորեալ և յերկնից արքայութեանդ արժանի արալ:

Ողորմեա, Տէր, առ քեզ հանգուցեալք ծնողացս. հօրս՝ Ստէփանին, մօրս՝ Թանկումին. եղբարցս՝ Սարգսին, Մինասին. քերցս՝ Բ (2) Վարդիսաթունացն, Մարիամ-խանումին, Բէկղաղային, Յաննայէ. և անդրանիկք՝ ամուսնոյս Վարդենէ. որդւոյս՝ Ստեփաննոսին. հարսիս՝ Մարկոսեան Թագուհէ. հօրս եղբարցն՝ Սաֆարին, մահտեսի Դաւիթ վարդապետին, Հէրապետին, Զաքարիային. հօրաքեռս՝ Թաբառուքին. պապոյս՝ Սարգսին. հանկաս՝ Նարգիզին. ջոջ պապոյս՝ Դահրաշի Զաքարիային. ջոջ հանկաս՝ Վարդիսաթունին. և ծնողաց նոցա: Եւ մի յիշէր զմեղս նոցա, թող զմեղս նոցա և ջնջեա զձեռագիր յանցանաց նոցա, և լուսաւորեա զհոգիս նոցա. և յաւուր ահեղատենին երանաւէտ ձայնդ լսելոյ և ընդ աջմէ բումմէ դասելոյ և աստուածային տեսեանդ և յերկնից արքայութեանդ || ||| ցեա և ընդ սուրբս և սի ||| և պսակեսցես:

215 ա²

||| և ողորմեա առ քեզ հա[նգուցեալ] ||| բին և ծնողացն մահտեսի Բա ||| [եղբ]արցն՝ Մինասին, Վաթանին և ամենայն [արեան առու մերձ]աւորացն և լուսաւորեա զհոգի ||| ային ||| եւնդ և յերկնից արքայութեանդ արժանի արաչ. [քան]զի ստացաւ Յայսմաւորաց սուրբ գիրքն յոյժ հնացեալ և եղ յիշատակ սուրբ եկեղեցւոյ, յորմէ օրինակեցի ԳՃԽԸ (348) ճառս և մնացեալն յայլ Յայսմաւորաց գրեցի:

Յիշեա, Տէր, և ողորմեալ վերջին ստացողի նոյն հնացեալ Յայսմաւորին՝ առ քեզ հանգուցեալք Յովհաննէսին և ծնողացն՝ Ղուկասին, Մէրմէրին. եղբարցն՝ Նազարէթին, Գրիգորին. կողակցոյն՝ Աողոմին. և լուսաւորեալ զհոգիս նոցա, աստուածային տեսեանդ և երկնից արքայութեանդ արժանի արաչ, քանզի գտի զայս հին օրինակս ի Սուրաթոյ Սուրբ Աստուածածնի եկեղեցւոջն և առեալ օրինակեցի՝ կէսն ի Սուրաթ քաղաքի և, ընդ իս բերեալ՝ կէսն աստ ի Բումբայի գրեալ աւարտեցի, և օրինակն հին վերստին դարձուցի ի Սուրաթոյ Սուրբ Աստուածածնի եկեղեցին, զոր Տէր հաստատուն և շէն պահեսցէ բոլոր ժողովրդովքն. ամէն:

Յիշեա, Տէր, և ողորմեա հոգւոց առ քեզ հանգուցեալք ծառայիցն քոց Զիք Աւետիկին. ծնողացն՝ Զիք Պետրոսին, Մէրտատիկին. կողակցուն՝ Աղսաբերին. որդւոցն՝ Աղամալին, Պետրոսին, Պօղոսին, դատերցն՝ Նանաջանին, Մէրջանին. եղբօրն՝ Վասլին. քվերն՝ Ոսկի-Տա<տա>տիկին. պապ<ո>ուն՝ Եարվալէ. հանկան՝ Սօլթախաթունին՝ առաջին ստացողի: Այլ և մահտեսի տէր Յովհաննէսին. ծնողացն՝ Բարաքիասին, Վարդերին. եղբարցն՝ մահտեսի տէր Բաղասարին, տէր Մկրաշին, Երեմիային, Պետրոսին. քվերն՝ Սափուռին. որդւոյն՝ Ստէփաննոսին. եղբօրորդւոցն՝ Երեմիայեան Բարաքիասին, Յարութիւնին, Վարդանին. դատէրն՝ Մարիամ-Բէգումին. և Պետրոսեան Գրիգորին, Բէկղաղային՝ վերջին ստացողի Յայսմաւորաց սուրբ գրքոյն. և լուսաւորեա զհոգիս նոցա, աստուածային տեսեանդ և յերկնից արքայութեանդ արժանի արաչ: Քանզի գտի ի Սուրաթ քաղաքի Սուրբ Աստուածածնի եկեղեցւոջն լիակատար նորոգեալ Յայսմաւորաց սուրբ գիրքն՝ վերանուանելոց յիշատակի տուեալ, յորմէ օրինակեցի զթերութիւնն առաջին օրինակին՝ Նաւասարդի ժԲ

(12)-էն մինչև ի նաւասարդի ԻԸ (28) այս ժէ (17) օրէն պատմութիւնքն¹³⁴:

Յիշեա, Տէր, և ողորմեա հոգւոյ առ քեզ հանդուցեալ Տիրատուրին և վերջին ստացողի Յայսմաւորաց սուրբ զրքոյն, որ գտի ի Բումբայի քաղաքիս Սուրբ Պետրոսի եկեղեցւոյն և ի նմանէ օրինակեցի զպատմութիւնս Բարաղամու ճգնաւորին և Արեւնէրայ և Յովասափու թագաւորացն ի Աւելեաց Ե (5) և Օգոստոսի Ժ (10). և լուսաւորեա զհոգիս նոցա, աստուածային տեսլեանդ և յերկնից արքայութեանդ արժանի արա:

Օրհնեա, Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս, զքո պարգևեալ և կենդանի պահեալ ընտանեացս՝ ամուսնոյս նարգղին. զՋստերն՝ Մարթէ. որդւոցս՝ Մարկոսին, Ղուկասին, Մատթէոսին. և անդրանիկ թոռնիկիս՝ Մարկոսեան Վարդիսաթունին. եղբօրս որդւոցն՝ Սարգսեան Մարտիրոսին, Յովակիմին և զաւակաց նոցա, և սրբեա զսոցա և զիս ամենայն աղտից հոգեկանաց և մարմնականաց, և փրկեա զմեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր, յերևելի և աներևոյթ թշնամեաց, և ամենայն մեղաց և հիւանդութեանց և տկարութեանց, և բռնադատութեանց և վրճմանց և խռովութեանց, և տխրութեանց և մտատանջութեանց, և սղութեանց և շքաւորութեանց, և մատնութեանց և նենգաւորաց, խաբերայից, ստախօսաց, և դաւաճանողաց, և աւազակաց և գողոց, և ձախորդութեանց և պարտուց, և զբախտմանց և բանտարկմանէ և գերութենէ, և կախարդութենէ ||| զեղաց և ամենայն գազան|||յանկմանէ բարձանց և ||| ծակ մահւանէ, և զիւ ||| և երկրադողէ, և ջրհեղեղէ ||| [կ]իզմանէ, և բքախառն հողմակոծ ||| և ալէկոծութենէ և նաւաբեկութենէ, և լրնկղ[մմանէ], և հեղձմանէ, և կայծակէ, ի ծովու և ի ցամաք ||| վնասատու օդոց և տարերաց, և ամենայն վնասուց և [վտան]գից և փորձութեանց և պատահմանց. ի տուէ և ի գիշերի և ամենայն ժամու և բոսպէի զամենայն աւուրս կենաց մերոց փրկեալ և ազատ պահեա զմեզ, զի գինք ամենասուրբ արեան քո եմք, ծառայք քո և որդիք աղախնոյ քո եմք...

Ողորմեա, Տէր, ամենայն երկրի և ամենայն աշխարհի և ամենայն գաւառաց և ամենայն քաղաքաց և ամենայն գիւղօրէից և ի նոսա բնակեալք ազգի մարդկանց, և օրհնեա զամենայն օդս և տարերս ամենայն աշխարհաց, մանաւանդ Բումբայի քաղաքիս և բնակչաց սորին և պարգևեա քաղցրութիւն օդոց և բարեխառնութիւն տարերաց, առատութիւն հարկաւոր և շափաւոր անձրեաց, պտղաբերութիւն բուսոց և տնկոց, առողջութիւն մարդկանց և անասնոց, զի ամենայն արարածք ուրախասցին, ցնծասցեն և ուռճասցին ողորմութեամբ քով և փառաւորեցեն զամենասուրբ անուն քո յաւիտեանս յաւիտենից: Հեռացոյ ամենայն վնասաբեր պատահմունս ի մարդոց և անասնոց, ի բուսոց և ի տնկոց, և ամենայն քաղաքաց, որք են, պատերազմունք թագաւորաց, կռիւք իշխանաց, խռովութիւնք մարդկանց, սաստկութիւնք հողմոց, երկրաշարժութիւնք և հրդեհմունք, որք վասն մեղաց մարդկանց պատահին, դու, անոխակալ և մարդասէր Աստուած, թողլով զմեզս մարդկան, յետս նահանջեալ զամենայն շար պատահմունս. պատերազմաց հաշտութիւն, խռովութեանց

սէր և խաղաղութիւն և ամենայն ներհակաց խափանումն պարզեցալ, զի ամենայն արարածք բարեպէս կացցեն և զոհութեամբ փառաւորեացեն զամենասուրբ անուն քո յաւիտեանս. ամէն:

215 p²

Եւ արդ, սիրելիք որդեկացդ իմոց աղերսիւ պատուիրեմ, զի ջանացէք ըստ ամսաթւի աւուր նմին աւուր պատմութիւնն Մարկոսդ կամ Ղուկասդ և կամ Մատթէոսդ ի լուր ընտանեացդ ընթեռնուցուք, նմանապէս և նշխանաւոր տէրունական տօնից պատմութիւնս ըստ պատշաճի աւուրն որոնեալ գտանիցէք և նոյնն ընթեռնուցուք և ընկալիք ի Տեառնէ վարձուց մասն բարեաց երանելի սրբոցն՝ ըստ բանին որ ասեն. «Տօնասէրն շէ զրկած ի պսակաց մարտիրոսաց, (առանց գանից և տանջանաց) հազորդ լիցին նոցին փառաց»: Նա ևս խնդրեմ. խնամածութեամբ պահիցէք և մի ամենայն ուրիք ի վայր ձգիցէք, զի փութով աղտոտեալ հնացեալ երեւացի, այլ սիրով և ուրախութեամբ վայելեցէք և թէ սխալանս ինչ գտանիցէք, մի եպիստոլիցէք, զի մարդ ևմ սխալական, և միայն Աստուած է անսխալ: Այլ և զիտելի է, զի ներկայական գործս ձեր շտայ թոյլ միշտ ըստ ժամուն երթալ ի սուրբ եկեղեցին և լսել զպատմութիւնս սրբոցն Աստուծոյ, վասն որոյ խանդակաթ սիրով յուսալով օգնականութիւն ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, առ ձեռս առի զծանր գործս՝ գրչաւ յօրինակել ի բոլորագրէ ի նօտրագիրս՝ գրել զողորշուն ձեռօքս, զոր տեսիք իսկ պատուական աշօք ձերովք ի ծերութեան ժամանակոջս՝ ի ԿԹ (69)-երորդ ամի կենաց իմոց սկսեցայ գրել և ՀԱ (71)-երորդ ամի կենաց իմոց Աստուծով աւարտ հասուցի ի փառս և ի պատիւս Աստուծոյ և ամենայն սրբոց նորա և պարծանս ազգիս հայոց և ի ուրախութեամբ վայելման տիրապարզե պատուելիք որդեկացդ իմոց և ի խնդութիւն նուաստագունեղ հօրս ձերոյ երկրաւորի և վասն սիրելեացդ իմոց մշտապաղատ աղօթողի առ ողորմած և մարդասէրն Աստուած որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յուակ յետոյ աղերսիւ խնդրեմ ամենից հանդիպողաց սուրբ գրքոյս՝ սրբազնագործ քահանայից, իշխանապատիւ աղայից, շնորհապերճ պարոնաց և բարեմիտ տիկնաց, զի յօժարական կամօք միով Աստուած ողորմեալիւ լիշեցէք զմեղապարտ գրչագրօղս և ամենից իմայնոցն կենդանեաց և հանգուցելոց. և զձեզ լիշեսցէ մարդասէրն Աստուած և այց արասցէ յաւուր մեծի գալստեան իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ Գ.

ԹՈՒՂԹ ՂՈՒԿԱՍՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՐԵՆՅԻՈՅ ԱՌ ՅՈՎՍԷՓ ԴԱՂՔԱՇԵԱՆ

Ի Սուրաբ, առ մահտեսի Յովսէփն Ստեփանեան՝ ըստ օրինակի վերնոյդ, որոյ փոխեալ բանքն են այսոքիկ, որք գրին.

Բարեպաշտ և մեծահաւատ մահտեսի Յովսէփիդ, աստուածապահ տան բում և բնակութեան, որդւոց և զս[տերաց] (հարցանելի է), ազգայնոց և բնտան.

որոց կարօտէաք իմանալոյ, գրեցաք առ հասարակ ի վերա ամենայն մերազնէիցդ՝ որք յայդկոյս, զկոնդակ մի երկարօրէն, և զկոնդակ մի ևս ի վերա օրհնեալ քաղաքիդ ձերոյ՝ ի պատասխանի ձերդ գրեալ երկուց համօրինակ թղթոցն, հանդերձ բանեօք յատուկ թղթովք առ ոմանս յատկացեալ անձինս, ծանուցանելով ի նոսա ամենեցուն ձեզ զանցս և զորպիսութիւնս մեր և գրելով զպատուէրս հարկաւորս: Եւ զայն թուղթսն բաց ի օրհնեալ քաղաքիդ ձերոյ կոնդակէն՝ այժմ ևս ահա կրկին գրեալ առաքեցաք, զի մի գուցէ թէ առաջինքն շիցեն հասեալք, այսոքիկ երկրորդքս հասցեն, և մի մնայցէք անտեղեակ անցից և որպիսութեանց և շահաւէտ պատուիրանաց մերոց: Բայց և Գրիգոր աստուածիմաստ վարդապետն թէսլէտ ի ծովուն և ի ցամաքին փորձութեանց մեծաց հանգիստելով զբազում ինչս էր կորուսեալ, սակայն զնազտ արդիւնսն նուիրակական ի բոլորապէս և զոր ինչ զերծուցեալ էր ի վէճ իրացն հասոյց ի Սուրբ աթոռս և առ մեզ: Եւ ընդ նոսին զքոյդ տուեալ յատուկ տուրսն և զյիշատակսն ևս, որք էին 130 ուսիի և Ա (1) ձեռք բահանայական զգեստ, և Ա (1) կարմիր և զարով մահրամայ՝ յիշատակ ի վերոյն գրեալ իբր հոգեբաժինք ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն քոց Ստեփանին և Թանկում խաթունին, և կենակցին քոյ Վարդենւոյն, ամբողջապէս հասոյց առ Սուրբ աթոռս և առ մեզ, պատմելով զանկեղծ սէր և զհարազատութիւն քո, զոր ունիս առ լուսատու մայրս քո և առ հոգևոր հայրութիւնս մեր և զառ ինքն իսկ ցուցեալ զշահեցողութիւնսդ և զմեծարանսդ: Որոց ամենից սակս յոյժ շնորհակալեցաք զսիրելւոյդ, և զհոգևոր տուրսն և զյիշատակսն քո սիրով մեծաւ առնկալեալ մատուցաք Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ վերաբաղմելոյն ի լուսակերտ սուրբ տեղւոջս: Որք և բազմութեամբ միաբանից ասացաք զհոգևոցն յաղազս վերոյ յիշեալ ծնողացդ և կենակցիդ՝ ի Տէր հանգուցելոցս և յիշեցաք զնոսա ի փրկարար սուրբ պատարագոջ, ի սարսափելի սուրբ տեղւոջս, և զքեզ՝ հանդերձ ամենայն կենդանեօքդ օրհնեցաք բազմաւ օրհնութեամբ: Ուրեմն՝ ընկալցի Տէր զհոգևոր տուրս և զյիշատակս քո ի հաճոյս իւր և զփոխարէնն բազմապատկապէս հատուցէ ի հոգիս հանգուցեալ ծնողացդ, և կենակցին քոյ և այլ ամենայն ննչեցելոցդ, շնորհելով զթողութիւն ամենայն մեղաց նոցա և արժանացուցանելով զնոսա արքայութեանն իւրում և մշտնջենական փառացն ընդ սուրբս և ընդ սիրելիս իւր: Եւ զքեզ ևս օրհնեսցէ և զօրացուցէ, փրկեսցէ ի շարէ և պահեսցէ ի խնամս իւր, տացէ զբարեյաջողութիւն բանից և գործոց քոց, և զարդարեսցէ ամենիւք բարեգործութեամբք և առաքինութեամբք: Իսկ և որովհետև Գրիգոր Աստուածարան վարդապետն ի վաղուց է աւարտեալ զնուիրակական գործն օրհնեցելոյ վիճակիդ, և ժամանակն անցեալ ևս է, վասն որոյ ահա ըստ բնիկ բարի սովորութեան զսիրելի և զհոգեծին որդին մեր և զմտերիմ զաւակն սրբոյ աթոռոյս զսէր Եփրեմ շնորհապերճ վարդապետն և զարհիւպիսկոպոսն նուիրակ կարգեալ աստուածախնամ վիճակիդ, սրբալոյս մեռոնաւ և օրհնածիր կոնդակաւ առաքեցաք առ սիրելի և օրհնեալ ժողովուրդդ մեր, որ եկեալ բաշխեսցէ ձեզ զհոգետիպ մեռոնն մաքրարար և ժողովեսցէ ի ձենչ զնուէրս հոգևորս վասն լուսատու ծնողիս ձերոյ սրբոյ աթոռոյս: Վասն որոյ խնդրեմ ի ստոյգ սիրելւոյդ, զի որպէս զնախորդ նուիրակն շահեալ էիր, նոյնպէս և զդա ի սէր ընկալցիս և մեծարեսցես և մխիթարեսցես յամենայնի՝ սակս պատուոյ սրբոյ կարգին և ի սէր մեր, և գործոյն ևս ձեռնառու և օժանդակ լիցիս առ ի արդիւնաւորեցուցանել՝ համարելով ստուգիւ, թէ զոր ինչ դմա

առնիցես, մեզ և սրբոյ Աթոռոյս են համարեալ, յաղագս որոց և առաւելապէս շնորհակալելոց եմ զագնիւ սիրելւոյդ, որ և ի յորդիական ճշմարիտ սիրոյդ և ի հարազատութենէդ և ի յօգտարար բարեգործութեանցդ՝ որ առ Սուրբ աթոռ մայրս քո անվերջանալի մնալով, ողջ լիք ի Տէր և ի շնորհս նորին յանձնեցեալ միշտ հանդերձ քոյայնովքդ ամենեքումքք, ամէն: Գրեցաւ ի ՌՄԼԳ (1785) թուոջ, ի Մալխի, և ի լուսակառոյց աթոռս սուրբ էջմիածին*:

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ս Գ.

ԴԱՂՅԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ 1865—1986 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Ըստ տիկին Վիկտորիա Հովսեփյանի հիշողութիւնների)

Գործիս հեղինակի բժիշկ թոռան՝ Հովսեփ Բ-ի կնոջ, որդու և շորս դուստրերի ճակատագրի մասին տեղեկութիւններ չկան:

Նրա եղբայր՝ դեղագործ Գրիգոր Ա-ը Բոմբեյում ծառանգել էր 7 շինք, կնոջ մահից հետո վշտից տրվել է հարբեցողութեան և բազմանգամ բնտանիքի կարիքները հոգալու համար մեկ առ մեկ ծախել բոլոր տները: Անհայտ են և՛ կնոջ և՛ իր մահվան թվականները:

Գրիգոր Ա-ի ավագ որդի Մատթեոս Բ-ը շի ամուսնացել, երկաթուղային ընկերութեան հաշվապահ էր, մահացել է 1916 թ.: Չի ամուսնացել նաև կրտսեր դուստրը՝ Աննան (1851—1916), որ մոր մահից հետո խնամել է հորը, նրա մահից հետո էլ՝ դեռևս շամուսնացած եղբորը՝ Հովսեփ Գ-ին:

Գրիգոր Ա-ի երկրորդ որդի Մարկոս Բ-ը ևս երկաթուղու հաշվապահ էր. ամուսնացել է Մերի անունով մի իռլանդուհու հետ և ուներ Գորոթի անունով մի աղջիկ: Ապրում էր Հայդարաբադում, որտեղ կինը նահանգապետ-նայզամի բազմաթիվ երեխաների անգլերենի ուսուցչուհին էր:

Վերջինիս եղբայր և Գրիգոր Ա-ի կրտսեր որդի Հովսեփ Գ-ը (1858—1913) նույնպես երկաթուղու հաշվապահ էր, ծագումով հզիպտահայ՝ Բոմբեյի վիճակավոր քահանայի միջնորդութեամբ 1898 թ. 40-ամյա տարիքում ամուսնացել է 20-ամյա հզիպտահայ Վարսենիկ Աղամյանի հետ. 1899 թ. ծնվել է նրանց առաջնեկը՝ Գրիգոր Բ, 1902 թ.՝ կրտսեր որդի Մատթեոս Գ-ը, որոնք հոր մահից (1913 թ.) հետո մոր հետ շարունակել են ապրել Բոմբեյում: Թ. Գուշակյանը 1916 թ. դեկտեմբերի 18-ին Հովսեփ Գ-ի կնոջ մասին գրել է. «Այցելեցինք... հանգ. Յովսէփեանի այրի տիկին Վարսենիկի՝ դուստրը զահիրէարնակ ծերունի Տէր-Աղամեանի. աղնուական հայուհի մը, որ պատկառանք կազդէ ամենուն» (Հնդկահայք, էջ 23):

Գրիգոր Բ-ը շի ամուսնացել, իբրև պահեստապետ (մթերապահ) ծառայել է հարավային Հնդկաստանի երկաթուղային ընկերութեանում: Մատթեոս Գ-ը 1939 թ. ամուսնացել է կալիպաճայ Վիկտորիա Գասպարյանի (ծն. 1909 թ., այս հիշողութիւնների աղբյուրն է) հետ. նույն 1939 թ. ծնվել է նրանց դուստր Մարին, իսկ 1943 թ. որդին՝ Հովսեփ Գ-ը: Մատթեոս Գ-ը ևս երկաթուղային ընկերութեան հաշվապահ էր, իսկ Լոնդոնի և Փարիզի համալ-

* ՄՄ ձեռ. № 4501, էջ 59տր. սա նամակի սևագրութիւնն է, հրատարակում ենք ջրնշումները զանց առնելով և առանց ծանոթագրելու:

սարաններն ավարտած կինը անգլերենի ու ֆրանսերենի ուսուցչուհի էր և Բոմբեյում մասնավոր դպրոց ուներ: Այս ժամանակ Բոմբեյում կար ընդամենը 10 հայ, ընտանիքը մտածում էր հասունացած երեխաների ապագայի մասին, ուստի երբ 1958 թ. լուծարքի ենթարկվեց երկաթուղային բաժնետիրական այն ընկերությունը, ուր աշխատում էր Մատթեոս Գ-ը, նրա կին Վիկտորիան էլ փակեց իր դպրոցը, և 1960 թ. ամբողջ ընտանիքը՝ մեծ մայր Վաքսենիկը, ամուրի ավագ որդի Գրիգոր Բ-ը, կրտսեր որդի Մատթեոս Գ-ը, նրա կինն ու երկու երեխան տեղափոխվեցին Լոնդոն: Առաջին երկուսն այստեղ ապրում էին մյուսներից առանձին. մայրը 90-ամյա հասակում մահացավ 1968 թ., որդին Լոնդոնում ևս պահեստապես էր և մահացավ 1981 թ.:


Մատթեոս Գ-ը նոր բնակավայրում «մանր գործերով զբաղվելով», մահացել է 1973 թ.: նրա կին Վիկտորիան այսօր էլ շարունակում է անգլերենի և ֆրանսերենի ուսուցչուհու զբաղմունքը: Դուստրը՝ Մարին 1962 թ. Լոնդոնում ամուսնացել է ծագումով նոր ջուղայեցի հայ քահանայի որդի, ինժեներ Վարուժան Այվազյանի (ծն. 1936 թ.) հետ. ունի Քլոդիա (ծն. 1967 թ.) և Կարոլ (ծն. 1973 թ.) անուններով երկու դուստր, ընտանիքը հայախոս է, այժմ ապրում են Լոս Անջելեսում:

Հովսեփ Գ-ը ևս կրթությամբ հաշվապահ է, 1972 թ. Լոնդոնում ամուսնացել է Պատրիշիա անունով մի անգլուհու հետ, այժմ ապրում է Օնտարիոյում (Կանադա), ունի մի դուստր՝ Ալիսոն (ծն. 1981 թ.) և մի որդի՝ Լևոն (ծն. 1978 թ.): Ընտանիքն անգլախոս է. Դահրաշի Զաքարիայի 10-րդ սերնդի միակ արական ներկայացուցիչ-ժառանգն առայժմ հայերեն չգիտի:

ՅԱԲԵՆՈՒԾ և
ԳՍՀՈՒՇԵՆՆ ԸՆՏԵՆԻՔԻ ՏՈՀՄԵՏՈՇԸ

1. ԴԱՀՈՒՄԸ ԶԱԲԱՐԻՎ
Վարդանյան

2. ՄԱՐԳԻՎ
Նարզկ (1737-1757)



ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սամուրակար—մորթեղենից մուշտակ և այլ հազուստ կարող:
2. Խիլա կամ խալաթ—(արար) զգեստ, որով ի նշան բարյացակամության և որևէ ծառայության դիմաց շահերը պարգևատրում էին իրենց հպատակներին:
3. Աբաս Ա շահը Կոստանդնուպոլսի 1590 թ. պայմանագրով Թուրքիային զիջել էր մի մեծ տարածք, որի մեջ էր նաև սեֆյանների նախկին մայրաքաղաք Քալքիզը (վերագրավեց 1603 թ.): Եվ այս օրերին, և «մեծ սուրգունի» շրջանում Քալքիզից հայերը, բազմաթիվ այլ վայրերից բերված հայության հետ միասին, ապաստանել էին 1597—8 թ. Պարսկաստանի մայրաքաղաք դարձած Սպահանում: Աբաս Բ շահը (1642—1666) 1650-ական թվականներին մահմեդականների հետ խառն ապրող հայերին Սպահանից տեղափոխեց Նոր-Ջուղա, ուր առաջացան Քալքիզեցոց, Գաշտեցոց, Երևանցոց և այլ նոր թաղամասերը (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Վաղարշապատ, 1896, էջ 442—58. հմմտ. Յ. Տէր-Յովհաննես, Ա, էջ 81—6): Ըստ այսմ, Շահ Աբաս մեծի մասին մեր հեղինակի «որ նստերն ի Քալքիզ» բնորոշումը, նաև այն պնդումը՝ թե իր մեծ պապին շահը Քալքիզից Սպահան է բերել իբրև ըմբիշների տասնապետ, հիշտ չեն: Շահ Աբաս մեծը (Ա) Զարթիսային շնորհի էր արժանացրել, հավանաբար, Սպահանի կենտրոնական Շամսապատ թաղում, ուր մինչև 1650-ական թթ. ապրում էին Քալքիզիցի հայերը:
4. Խարջ, խալաջ—khardj (արար.) ծախս, ծախսի դրամ. հմմտ. ՀԶ. Հաշվետումար, էջ 386:
5. Կենսագրությունների սկզբում դրված այս թվերը սերունդների հերթական համարներն են և կարող են կրկնվել այնքան, որքան ներկայացուցիչ ունեցել է այդ սերունդը: Հովսեփը երբևէն մոռացել է դրել դրանք, իսկ Մարկոսն ընդհանրապես չի նշել. միօրինակության բերելու համար ուղղմանկյուն փակագծերում վերականգնել ենք այդ վրիպումները:
6. Սաֆարի տապանազիրը հետևյալն է. «Այս է տապան Սարգսի որդի Սաֆարիս. թվ.—ՌՃԶԳ (1735), Նիսան Գ. (4): Նրա որդի Մելքիսեթը 1798 թ. դեկտեմբերի 6-ին մահացել է Բենդաբլայի Սեփարադ թաղաքում. «Այս է տապան Զուլայու Քարվրսեցունց մահաթի Գահրաշյանց Սաֆարի որդի Մելքիսեթին, որ փոխեցաւ առ Տէր թիվ փոքր 183, Համիրայ 10, ի Սէյ-դաբազ» (ԳՓ, էջ 129). սրանց հիման վրա էլ տոհմածառում նշանակել ենք Սաֆարի և Մելքիսեթի մահվան թվականները:
7. Այս Ավետ Գրիգորը Տերտերենց տոհմից էր, 1764 թ. օգոստոսի 20-ին մահացել է Սուրաթում (ԳՓ, էջ 88). սրա աղջիկը՝ Նոմալենց Աստվածատուրի կին Ալամը ևս նույն Սուրաթում մահացել է 1780 թ. դեկտեմբերի 22-ին (ԳՓ, էջ 80): Կարելի է ենթադրել, որ Ավետ Գրիգորն առևտուր էր անում Հնդկաստանում, իսկ դրանից առաջ բնորոշուն համոզել էր բաժանվել հորեղբորից և միանալ իր սկսած գործին:
8. Նոր-Ջուղայի առաջնորդ Մովսես արքեպիսկոպոսի (1706—1725) մասին տե՛ս Յ. Տէր-Յովհաննես, Բ, էջ 49—52. Յուցակ Նոր-Ջուղայի, Ա, էջ 910, Բ, էջ 102. ՄՄ ձեռ. № 2271 և այլն:
9. Մահտեսի Դավիթ արեղան ստացել և Նոր-Ջուղայի Կատարինյանց վանքին է նվիրել մի հայամազուրք. տե՛ս Յուցակ Նոր-Ջուղայի, Ա, էջ 468—9: Իսկ 1748 թ. գրված մի Ատենի ժամագրքում, ուր տրված է Ս. Ամենափրկչի միաբանների անվանացանկը, արեղանների կարգում նա հիշվում է առաջինը. «ԺԲ. Տէր Դավիթ, ծերափայլ և յոզնաշխատ, զինկպան և անօթապահ». տե՛ս Յուցակ Նոր-Ջուղայի, Ա, էջ 480:
10. Անշուշտ նկատի ունի մուրհակներով կատարվող ապառիկ վաճառքը. այս դեպքում գյուղացիներն ապրանքի դիմաց տալիս էին իրենց հողի բերքի որոշակի քանակը:
11. Սեփարադում մահացել է 1782 թ. դեկտեմբերի 17-ին (ԳՓ, էջ 129):
12. Սուրաթում մահացել է 1782 թ. նոյեմբերի 18-ին (ԳՓ, էջ 91):
13. Այս պարոն Նազարեթը, հավանաբար լազարյանների նախահայր Աղազարի որդին էր: Սրա և իր որդիների առևտրական տան գործունեության նախադասատանյան շրջանի մասին տե՛ս Շ. Խաչիկյան, Լազարյանների առևտրական ընկերությունը XVIII դ. 40—50-ական թվականներին.—ՀնՄՀ ԳԱ կրթեր հասարակական գիտությունների, 1981, № 7, էջ 78—91:
14. Այս խոշա Մինասը, ըստ երևույթին, երևի Խոշա-Մինասենց կամ Քարթանենց տոհմից է՝ Մինաս Փանոսյանի էլիազ որդու (մ.հ. 1712 թ.) զավակը. տես Յ. Տէր-Յովհաննես, Ա, էջ 145—7:

15. Չիշրայի (Չինսուրա) գերեզմանոցում արձանագրված է մի տապանագիր. «Այս է տապան Ստեփանի որդի Մինասին. թիւ ճ (100), Ադամ ԻԸ (28)» (ԳՓ, էջ 73): Բացառված չէ, որ եղծվածության պատճառով սխալ կարդացված լինի թվականը, որ զուցե ճե էր. այս բեկարում հնարավոր կլինի մտածել, որ Հովսեփի եղբայր Մինասը մահացել է 1755 թ. մայիսի 28-ին, իսկ միայն հաջորդ տարվա սկզբին ծնողներին հասած բռթից 9 օր հետո՝ 1756 թ. հունվարի 15-ին էլ վախճանվել էր նրա մայր Քանկումը (հմմտ. ծ. 16):
16. Հովսեփի մոր տապանագիրը հետևյալն է. «Այս է տապան ըՍտեփանի կողակից Բանկումին. թվին փոքր Աճե (1756), Արամ Ի (20)»՝ հունվարի 15. Հովսեփի հաղորդման համաձայն մայրը մահացել է 56-ամյա հասակում, ուստի և տոհմաժառուս նրա կյանքը նշանակել ենք 1700—1756 թթ. միջև:
17. Հովսեփն իր կենսաչրուծյան հատվածում ևս հոր մահը թվագրում է Ազարիայի 161 թ. Շրաթ 19-ով՝ 1776 թ. հունիսի 18: Սակայն Ստեփանի տապանագիրն այլ բան է ասում. «Այս է տապան Սարգսի որդի սուկիճին ուստայ ըՍտեփանին. բազում սաչ ալեօք ծերացեալ, ճԺԴ (114 ամաց, և (30) Արամ (Յունուարի 25) շանդա ի Քրիստոս թվին ՌԻՃԻԵ (1776)»: Բացառված չէ, որ դեպքից 36 տարի հետո գրող Հովսեփը շիշեր հոր տարիքը և մահվան ամսաթիվը, ըստ այսմ էլ նախապատվութունը տալիս ենք տապանագրի հաղորդմանը և համարում, որ 114-ամյա վախճանված Հովսեփը ծնվել էր 1662 թ.:
18. Սուրաթում մահացել է 1784 թ. հուլիսի 3-ին. «Այս է տապան Ջուղայու թավրիզեցոց Գահրաշեանց Ստեփանի դուստր, Գալուստի կողակից Պէկզադէ. թվին փրկելի 1784, նախա 4» (ԳՓ, էջ 93):
19. Այս հաղորդման և Հովսեփի ծննդյան թվականի՝ 1741, հիման վրա Հաննայիի ծննդյան տարին տոհմաժառուս նշանակել ենք 1732 թ.:
20. Նոր-Ջուղայի առաջնորդ Մկրտիչ արքեպիսկոպոսի (1769—1787) մասին տե՛ս 3. Տէր-Յովհաննեանց, Բ, էջ 63—7:
21. Ամսաթիվը հին տոմարով է. նորով կլինի հոկտեմբերի 28:
22. Նոր-Ջուղայի առաջնորդ Աստվածատուր եպիսկոպոսի (1729—1745) մասին տե՛ս 3. Տէր-Յովհաննեանց, Բ, էջ 57—9. Յուցակ Նոր-Ջուղայի, Ա, էջ 480, 530:
23. Ջորաբ—djorab (պարսկ.) դուլպա:
24. Վերը վկայակոչված միաբանացանկում Ղուկաս վարդապետի մասին գրված է. «ԺԵ. Միս տէր Ղուկասն. բազմամուտ գրոց և տեղեակ արտաքնոց և ծամասաց». տե՛ս Յուցակ Նոր-Ջուղայի, Ա, էջ 480:
25. Այս Պետրոս արքեպիսկոպոսը կարող է լինել նույն միաբանացանկի երրորդ տեղն գրադեցնողը. «Գ. Սրբազան Պետրոս վարդապետ, այր ծերունի, խոհեմ, առաքինի և ծամարհնող». տե՛ս Յուցակ Նոր-Ջուղայի, Ա, էջ 479:
26. Թուղթը վնասված է, բարը՝ |||գրասէ, կիսատ և անհասկանալի:
27. Հովսեփի տատի տապանագիրը հետևյալն է. «Այս է տապան Սարգսի կողակից նարգիզին. թվ. ՌՄՁ (1757)»: Ըստ Հովսեփի, նա ապրել է 120 տարի, ուրեմն՝ 1757—120 = 1637՝ ծննդյան թվականը (տե՛ս տոհմաժառուս):
28. Հիմնվելով հաջորդ տողերի վրա (Դավիթ արեղայի մահից հետո Հովսեփը 13 ամիս շուհակութուն է սովորել, ապա՝ 1761 թ. ապրիլի 2-ին մեկնել Բարսա) և 1761 թ. ապրիլից 13 ամիս ետ զնալով, Դավիթ արեղայի մահը տոհմաժառուս նշանակել ենք 1760 թ. սկզբներին: Նա մեծ էր 1662 թ. ծնված իր եղբայր Ստեփանից, ուրեմն՝ ինքն էլ ծնվել էր 1660 թ. կամ առաջ. Դավիթ Աբեղան ևս իր մոր և Ստեփան եղբոր նման ապրել է մեկ դարից ավելի:
29. Լելամ—անուրդ. պորտոգալերեն leilao բառի նշակերեն nilam պատճենի աղավաղված ձևն է:
30. Բարաթ կամ բարաթալիբ—barat (արաբ.) պարտավորագիր, հանձնարարագիր, մուրհակ. հմմտ. ՀՁ, Հաշվետումար, էջ 367:
31. Այսինքն՝ Բենգալիայի Սեիդարադ քաղաք:
32. Իրոք. Հովհաննես հմնիաղյանը 48-ամյա տարիքում Սեիդարադում մահացել է 1768 թ. հուլիսի 1-ին, իսկ նրա կին Բեկումը 75-ամյա մահացել է 1793 թ. ապրիլի 3-ին (ԳՓ, էջ 130—1):
33. Հովսեփ Արղուսյանի նամակների պատճենների ժողովածուներից մեկի սկզբում կա «Անուանք բաղաբացն Հնդկաց և ներկայ եղեալ իշխանացն» խորագրով մի ցանկ, ուր, Շա-

համիր Շահամիրյանի անունից հետո, «ի Մաղրաս քաղաքոջն» նշված է՝ «Յովսէփ Մարութեանն» (ՄՄ ձեռ. № 2699, էջ 2ա), որը 1785 թ. մայիսի 7/18-ին, 51-ամյա տարիքում մահացել և թաղվել է Մաղրասում: Նրա կին Տիկին-Խաթունը 76-ամյա մահացել է 1818 թ. սեպտեմբերի 6-ին, տղան՝ Հարությունը, 56 տարեկանում վախճանվել է 1835 թ. հունիսի 17-ին, իսկ թոռը՝ Հովսեփ Հարություն Մարութը, որն արգեն համարվում էր Արևելա-Հնդկական ընկերության Մաղրասի Presidency-ի «հայ վաճառական»՝ 1877 թ. ապրիլի 2-ին, 70 տարեկանում (ԴՓ, էջ 8, 17):

34. Ժամակազմ բառը ժամագործ-ի հոմանիշն է. հնում ժամակազմ-ժամագործները զբաղվում էին ժամացույցների նորոգումով և առևտրով՝ (տե՛ս Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. Բ, Ե., 1944, էջ 136), որով Աղազարը մեծ հարստություն էր կուտակել (տե՛ս Մ. Անր, էջ 263):

35. Հովսեփին իր աներոջ և դորանչի տապաններին փորագրել է տվել բախական հանգամանալի չափածո արձանագրություններ, որոնք լրացնում են իր իսկ համառոտ հաղորդումները. աները 60-ամյա մահացել է 1774 թ. մայիսի 10-ին. «Ամփոփեալ զոչ սոյն տապանի | մարմին առ բարեպաշտի, | որ Աղազար աճուստը կոչի, | որդի զոլով սա յնականի, | նոր Չուղալու կելալ շափ, | ի Սուրաթ քաղաքս բնակի, | հմուտ արհեստի ժամակազմի, | ոչ որ բժիշկ հնարատրի, | զի ի ցաւէն առողջացի | Հարիւր յիսուն ինն թւի | Աղարիայի նոր վարպետի | Ազամ ամսոյ տաաներորդի, | պատկեր աւուրն հինգըստի, | վախճանանայ ժամանակի | հողին առ Տէր մատուցանի. | որը հանդիպիւր այս տապանի, | առ Տէր հայցմամբ տուր ողորմի» (ԴՓ, էջ 93—4): Զորանչը նույն 1774 թ. հոկտեմբերի 1-ին մահացել է 29 տարեկանում. «Ամփոփեալ զոչ սոյն տապանի | մարմին կնոջ բարեպաշտի | եւ է սա դուստր Պետրոսի | Մուշաղբրոյ ոմն իշխանի, | Բեկզազայ անուամբ կոչի, | եւ կողակից Աղազարի. | ի ծնել Դշխոյ զստրի | սա փոյթ ընդ փոյթ ցաւազարի, | կլանելին սորա փակի, | կաթիլ մի ջրոյ սա կարօտի, | երեսներն ժամաւ տապի, | հողին առ վեր մատուցանի | որբան զովեստ կանանց յարկի, |... զտանի առանց թերի. | հարիւր յիսուն զինն թւի | թիրա ամսոյն ի շորորդի, | որ շարաթու, յինն ժամի, | քան և ինն ամաց սա վախճանի. | որը հանդիպիւր սոյն տապանի, | առ Տէր հայցմամբ տուր ողորմի» (ԴՓ, էջ 94): Նրանց նորածին զստեր տապանագիրը շատ համառոտ է (այսպէս սովորաբար արվում էր մանկահասակ հանգուցյալների համար. «Տապանս է ժամակազմ Աղազարի | դուստր Դշխոյին. թիւն 159» (ԴՓ, 89):

36. Մարիամխանումի մահը թվագրել ենք 1776 (ոչ 1777), որովհետև Հովսեփին այս տեղեկությունից հետո է արձանագրել իր հոր՝ որոշակիորեն 1776 թ. տեղի ունեցած մահվան փաստը:

37. Հովսեփի առաջին՝ վաղամեռնիկ կինը վախճանվել է 1777 թ. մայիսի 9/20-ին. «Շիրմոջս է ամփոփեալ | մարմին հարսի հանուրց զովեալ, | Հովսէփայ մահաւսոյն կողակցեալ, | սա Վարդենի էր առձայնեալ, | թարմահասակ տարածամեալ, | կոկոն վարդի՝ շու էր բացեալ, | արարչէն Էղև և կոչեալ | հողար երկհարիւր քառամեղեց թվեալ, | Մայիս ամսոյ ինն մտեալ, | վնշտասան ամ շու լցեալ, | առ բողձալին իր կոչեցեալ | վասն որոյ հոգ արխրացեալ, | առ կենակիցն յարասեեալ. | ի սոյն շիրիմ որը հանդիպեալ, | Տէր ողորմեան արժան վարկեալ» (ԴՓ, էջ 93): 1778 թ. փետրվարի 28-ին նոր-Չուղայի առաջնորդ Մկրտիչ արքեպիսկոպոսին ուղղված նամակում մեր Հովսեփը գրել է. «ի գալ սրբոյ էջմիածնի նուիրակ Փիլիպպոս Եփրեմ հայրապետի, յաւուր միում ընդ Աղազար Ոսկանին ի տան նորա վիճէր վասն բանի ինչ օրինաց... որ և յանկարծակի բարկացեալ, զփոշի ոտիցն թօթափեալ և անիծեալ զտունն բնտանեօրն, ել ի տանէն ասելով. Միւս եւս տարւոջ այսօր զտունս շրջեալ տեսանիցեմ կամ յիցեմ. որ և եղև իսկ». Յ. Տէր-Յովհաննեանց, Ա, էջ 188: Հովսեփը Սուրաթում կատարված այս դեպքի մասին առաջնորդին տեղեկացնում էր որպէս «Չուղալու վէրիլ»՝ Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմական առաջնորդարանի Սուրաթի գործակալ. այդ մասին խմբում ենք Հ. Արղուիյանի կլիմտից մատյանից, ուր նաև ասված է, որ 1794 թ. մեր հեղինակը 150 ուսուցի է նվիրել ուսաստանոց առաջնորդարանի տպարանական և կրթական ծախսերի համար. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 27, էջ 169 (այս տեղեկությունը շնորհակալությամբ ստացել ենք Պ. Զորանյանից):

38. Մելիքնազ էմիթազյանը Սուրաթում մահացել է 1780 թ. մարտի կամ ապրիլի 9-ին՝ փրկչական հին տոմարով նշված է «ինքն Մարտի», Աղարիայի տոմարով՝ «Շամս քան» — ապրիլի 9: Նրա կին Գուլնարաթը 67-ամյա մահացել է 1791 թ. հոկտեմբերի 3-ին (ԴՓ, էջ 87):

39. Հաջորդ հիշատակման մեջ ամսաթվի՝ Դամա 27—նոյեմբերի 23, անկայությունը թույլ է տալիս այս տեղեկությունը ևս թվագրելու 1782-ով. Զաքարյայի վարքում նշված է, որ նա մահացել է 97 տարեկանում: Ըստ այսմ էլ տոհմաձագրում նրա կյանքը դրել ենք 1685—1782 թթ. միջև, իսկ Սարգսի մահվան տարին՝ 1782 թ.:

40. Այս Մկրտիչը Մելիքնազ էմնիազյանի որդին է. նա՝ «Ազայ Մկրտիչն Մելիքնազ Խօճա-Մինասենցն»՝ Հ. Արզուխյանի Սուրաթի վերջի-գործակալն էր. տե՛ս Մ. Քեչիշեան, Ծուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենագարանին, Վիեննա, 1964, էջ 356:

41. Հովսեփի բույր Բեկզաղան մահացել է ոչ թե 1783 թ., այլ՝ 1784 թ. հուլիսի 3-ին. տե՛ս ծ. 18:

42. Տեր Զաքարիա Տեր-Պետրոսյան ավագ բահանան Նոր-Ջուղայի Պաղենց տոհմից էր՝ Հովսեփի հայամավորքի գաղափար օրինակներից մեկի նորոգողը. տե՛ս ծ. 134: Սուրաթում պահպանվել է 1795 թ. օգոստոսի 23-ին վախճանված նրա դուստր Վարդենու տապանագիրը (ԳՓ, էջ 97):

43. Սրանից ելնելով, նարզիզի ծնունդը նշանակել ենք 1756 թ.:

44. Հովսեփի այս մանկան գերեզմանը, հավանաբար, նրա աներ Աղազարի վաղամեռիկ դուստր Գշխոյի տապանի մոտ գտնվողն է, որի եղծված արձանագրությունը կարդացվել է. «Այս է տապան Յուսէփի որդի Մօսվի» (ԳՓ, էջ 89): Երկվորյակների ծննդյան թվականը նարեկում (5ա) 1786-ն է, բայց բուն որ այդ գրանցումն արվում էր ետին թվով, նաև՝ մյուս տոմարներով նշված է 1785-ը, ուտի 1786-ը համարում ենք սխալմունք:

45. Քափաան—captain (անգլ.) կապիտան:

46. Մաքա՛վ՝ Մաքաո—քաղաք Գուանչժոուից հարավ:

47. Գանթում՝ Կանտոն, այժմյան Գուանչժոու չինական նավահանգիստը:

48. Գար—գարու (պարսկ.)—սալի մի տեսակ:

49. Փանոս կամ Ստեփանոս Աղարարյանը Նոր-Ջուղայի Երևանցոց թաղից էր. 1780—1800 թթ. Սուրաթում ապրող հայ վաճառականների ցանկում նրա անունը 11-րդն է՝ Յ. Տէր-Յովհաննեսանց, Ա, էջ 187: Սա նրա երկրորդ ամուսնությունն էր. առաջին կինը նազար Գիլանի դուստր Եղիսաբեթն էր, որ 15-ամյա մահացել է 1784 թ. մարտի 20-ին: Ինքը՝ Փանոս Աղարարը 60 տարեկանում 1802 թ. մահացել է Սուրաթում (ԳՓ, էջ 91—2): Իսկ Աղազարի դուստր Հոփսիմենն (տե՛ս Մ. Սեբ, էջ 263—6) նրա հետ երկար չի ապրել. դաժան և կոպիտ վարմունքի պատճառով շուտով փախել է նրա տնից, Հովսեփի տուն չի վերադարձել և ապաստանել է իր հոր բարեկամ մի անդլիացի բժշկի տանը: 1795 թ. երկրորդ անգամ ամուսնացել է Հուլանդիայի Արևելա-Հնդկական ընկերության Սուրաթի ֆակտորիայի ծառայող Ռորերտ Հենրի Լեմբրուզենի հետ: Վերջինս մեկն էր այն բախտախնդիր աղքատ եվրոպացիներից, որոնք հարստանալու ձգտումով Հնդկաստանում ամուսնանում էին տեղացի հարուստ կանանց հետ: Բայց կյանքի դառը փորձից խրատված Հոփսիմենն ամուսնական պայմանագրով երկրորդ ամուսնուն և նրա հարազատներին զրկել էր հորից ծառանգած իր ունեցվածքի (40 հազար ռուբլի և մի բանի թանկարժեք բար) նկատմամբ ունենալիք որևէ իրավունքից, նաև պատասխանատու չէր Ռ. Հ. Լեմբրուզենի նախաամուսնական պարտքերի համար: Հոփսիմենն իլ զրամով առևտուր սկսեց նախ Սուրաթում, ապա՝ Կոլոմբոյում, ի վերջո՝ Նիջպատամում, Երտեղ և մշտապես պարտքերի մեջ խճճված ամուսնու անբարո վարքի պատճառով 1817 թ. օգոստոսի 4-ին պաշտոնապես բաժանվեց նրանից, պարտավորվելով ցկյանս (մհ. 1819 թ. նոյեմբերի 6-ին) նրան տալ ամսական 25 պազոզա (պորտո-նոփո) դրամ: Սրանից հետո ևս Հոփսիմենն շարունակել է իր առևտուրը և սովորություն է ունեցել ամեն տարի կտակ գրել ու պատճենը պահ տալ «Մադրասի հայոց որրոց ֆոնդի» հոգաբարձուներին: Վերջին կտակը կազմել է 1832 թ. հունվարի 5-ին. սրանով որոշ գումարներ է տվել Հնդկաստանի տարբեր քաղաքների հայկական կրոնական, կրթական ու բարեգործական հաստատություններին, իսկ մնացած մեծ հարստությունը՝ ի նպաստ «հայոց որրոց ֆոնդի», կտակել է Մադրասի եկեղեցուն: Նիջպատամում մահացել է 1833 թ. մայիսի 21-ին և թաղվել հուանչալիան գերեզմանոցում: Ըստ Մ. Սեթի հրատարակած տապանագրի (Մ. Սեբ, էջ 265), նա մահացել է 56 տարեկանում, որից էլ մակարերվել է ծննդյան թվականը՝ 1778 (Մ. Սեբ, էջ 263): Ինչպես վերը տեսանք, նրա ծնողները մահացել են 1774 թ., նրա ավագ բույր Վարդենին (Մ. Սեթը կարծում է, որ Հոփսիմենն Աղազարի միակ աղջիկն էր) ծնվել էր 1762 թ.: Այս ամենից հետևում է, որ մահանալիս Հոփսիմենն ոչ թե 56, այլ՝ 66 տարեկան էր (Սեթը սխալ է կարդացել նրա տարիքը), ուրեմն՝ ծնվել էր 1767—8 թ.:

50. Հովսեփ Միրայիւր Սուրաթի հայ վաճառականների ցանկում 7-րդն է՝ Յ. Տէր-Յովհաննէանց, Ա, էջ 186: Երա կնոջ՝ Հովսեփի Բեկզադա բրոջ թոռնուհի Հոփսիմեի եղծված ապականագրից պարզվում է, որ Հովսեփ Միրայիւր Պողենց տոհմից էր. «Ի տապանի աստ ամփոփի մարմին ումենն գովելի. սա Հոփսիմէ անուն կոչի. Դուար գոլով Յարութիւնի, ի Դահրաշեանց ցեղի ||| բարի աղա Յովսէփի ||| Բողենց տոհմի ||| վճար եղել յամի փրկչին ||| Արեամ |||» (ԴՓ, էջ 92):

51. Օրդեն—ordain (անդլ.) կարգադրել, թույլատրել, պատվիրել:

52. էջմիածնի Հնդկաց նվիրակ Եփրեմ վարդապետը Սուրաթում եղել է 1787 թ. հունիս-նոյեմբեր ժամանակամիջոցում (տե՛ս ՄՄ ձեռ. № 4501, էջ 238ա—9ա: Թեև իր պատմութիւնը գրելիս՝ 1812 թ. Հովսեփը որդու համար հայցում է Ղուկաս ավետարանչի բարեխոսութիւնը, բայց, ըստ ամենայնի, երեխան անվանակոչվել էր ի պատիւ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի: Ենթադրելի է, Եփրեմ նվիրակը ևս հօգուտ էջմիածնի նվերներ է ստացել Հովսեփից, բայց Ղուկաս կաթողիկոսի գրադրութիւնների մեջ այս ենթադրութիւնը հաստատող վաստաթուղթ չգտանք:

53. Անդրեասի որդի Սարգիսը Տնակերացի էր. նրա հայրը Սուրաթում մահացել է 1782 թ. փետրվարի 19-ին (ԴՓ, էջ 84):

54. Թոմաս Նիկողոսը սուրաթահայ վաճառականների ցանկում 15-րդն է՝ Յ. Տէր-Յովհաննէանց, Ա, էջ 187: Նրա կինը մահացել է 1809 թ. օգոստոսի 14-ին (ԴՓ, էջ 88):

55. Նազար Դիլանը նույն ցանկի 13-րդն է՝ Յ. Տէր-Յովհաննէանց, Ա, էջ 187:

56. Այս Գրիգորը հիշյալ ցանկի 18-րդն է՝ նույն տեղում, էջ 187. Նա Մինաս Խալաթյանի թոռան թոռն էր՝ Մինաս—Ալեքսանդր—Գրիգոր—Հովհաննէս աղա—Գրիգոր: Հովհաննէս աղան Սուրաթում մահացել է 1795 թ. ապրիլի 7-ին (ԴՓ, էջ 83):

57. Խաչատուր Տեր-Մարտիրոսյան քահանան 22 տարի Սուրաթում պաշտոնավարելուց հետո մահացել է 1809 թ. օգոստոսին (ԴՓ, էջ 87):

58. Թվականը և ամսանունը՝ Ազարիայի 179, Ուլդան, վերականգնել ենք նախորդ և հաջորդ հաղորդումների թվականների ու ամսաթվերի համաձայն:

59. Եթե անվան մեր վերականգնումը ճիշտ է, ապա սա սուրաթահայ վաճառականների ցանկի 9-րդ անունն է՝ «Ստեփաննոս Յովսէփեան» և, հավանաբար, կապ չունի 28-րդ անվան՝ «Յովսէփ Ստեփան-Բժշկեան» հետ. Յ. Տ—Յ., Ա, էջ 187:

60. Լանկար—langar (պարսկ.) խարիսխ. հմմտ. ՀՁ. Հաշվետումար, էջ 384:

61. Երևի նկատի ունի Սումատրա կղզու ծայր հյուսիս-արևմտյան մասին հարող Մալակ-կայի անցումը:

62. Ֆրիգատ—frigate (անգլ.) ֆրեգատ. առագաստանավի տեսակ:

63. Բորդ—port (անգլ.) նավահանգիստ:

64. Լաֆոսթ—la port (ֆրանս.) նավահանգիստ:

65. Նազտի—nakd (արաբ.) կանխիկ դրամ. հմմտ. ՀՁ. Հաշվետումար, էջ 397:

66. Թիթեղեն—նավում եղած թիթե, հեշտ տանելի բեռները:

67. Աչին—Սումատրա կղզու հյուսիս-արևմտյան երկրամասը. ներկայիս կենտրոնը Բանդա—Աչին քաղաքն է:

68. Մալաղա—Մալակկա թերակղզին:

69. Պուլու Պինանկ—Պուլո Պինանգ՝ կղզի Մալակկա թերակղզուց արևմուտք՝ 100-րդ միջօրեականի և հս. լայնութիւն 5-րդ զուգ. հատման տեղում:

70. Թէֆան—թայֆուն. արաբ. tūfān—փոթորիկ, ալեկոծութիւն:

71. Մանիլա—այժմյան Ֆիլիպինների մայրաքաղաքը:

72. Մանդարին—չին ավատատերերի պորտուգալական անվանումը:

73. Ըտրանջեր—estranger (անգլ.) օտարերկրացի, օտարական:

74. Մոսում—mousem (արաբ.) տարեշրջան, տարվա եղանակ. օդի և ջրի հաստատուն հոսանք, որի ուղղութիւնը փոխվում է տարվա եղանակի փոփոխման հետ և որի ժամանակ չոր, անամպ (ամառային) տարեշրջանին փոխարինում է խոնավ, անձրևառատ (ձմեռային) շրջանը: Հովսեփը նկատի ունի խոնավ՝ ձմեռային մուսոնի սկիզբը. հմմտ. ՀՁ. Հաշվետումար, էջ 396:

75. Պինանկ—Պինանգ կղզու գլխավոր քաղաք-նավահանգիստը:

76. Քոստ—coast (անգլ.) ծովափ, ափ:

77. Հերուկուրուր—ֆրանսիական գաղութային աստիճանավորի անվանում:

78. Ֆաղար—արաբ. fakāra, ողնաշար:

79. Զոն—zone (անգլ.) գոտի, շերտ, շրջան:

80. Կոպար—սահման. այստեղ՝ ծովի ջրի ափագիծը, ափին՝ ծովի ջրի մակարդակն արտահայտող գիծը. արևելահայ որոշ բարբառներում ունի՝ թավուաներում, հանդերում կամ ջեխի մեջ բացված արահետ իմաստը. տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 358:

81. «Աշինուց Պատանկ»—Սումատրա կղզու հս.—արևմտյան ծովեզերքը, հահնոտ մի շրջան, ուր Հովսեփի նկարագրած երկրաշարժը և տիղմի արտահոսքը դարմանալի երևույթ չէր կարող լինել:

82. Պիլոթ—pilot (անգլ.) նավաստի:

83. Փասաջեր—passenger (անգլ.) ուղևոր:

84. Փաթմար—հավանաբար լատտանավ է կամ թեթև նավի մի տեսակ:

85. Օֆիս—office (անգլ.) գրասենյակ, հաստատություն:

86. Մասր—mister (անգլ.) պարոն:

87. Պէ մասար—the (անգլ. որոշյալ հոգ) Master—այստեղ՝ գրասենյակի, հաստատու-
թյան պետ, տեր:

88. Նարեկի մեջ (Տար) այս իրադարձությունը գրված է երկու անգամ. առաջինում թվա-
կանը նշված և երեք տոմարով, բայց խառը. «Ի թուին փրկչի 1808, ըստ հայոց մեծ թուին
ԽՄՄէ, ըստ փոքրն՝ 193, ըստ հռոմայեցւոց հին տումարին Յունվարի ամսոյ 24, ըստ նորն՝
Ֆէվրվէրի ամսոյ 5, ըստ հայոց՝ արաց ամսոյ 17, ըստ Ազարիայի՝ Ովդան ամսոյ Ժ». ամ-
սաթվերի դուրսդիրը հշգրիտ է, սակայն փրկչական և հայոց մեծ թվականները՝ 1808, չեն
համապատասխանում Հովսեփին առավել հարազատ Ազարիայի տոմարին, որով նշված է
1809, որն էլ առկա է նարեկի մյուս հաղորդման (Տր) և հայամավուրթի մեջ: Վերջինս նախ-
ընտրում ենք, որովհետև 1808 թ. շիոթմունքի արդյունք է:

89. Պարոն նիկողայոսը Պողենց տեր Զաբարիայի որդին էր (տե՛ս ծ. 42):

90. Մարկոսի առաջին կին Բազուհին Թոմաս նիկողոսի և Հաննայի (տե՛ս ծ. 54)
դուստրն էր. նրա նշված և սխալներով ընթերցված տապանագիրը հետևյալն է. «Այս է
տապան պարոն Թոմասի դուստր, պարոն Մալխասի (իմա՝ Մարկոսի—Գ. Տ.—Վ.) նորահաս դո-
ւլելի ||| Բազուհի խաթունի. պսակեցաւ, յետ տասն ամաց (իմա՝ ամսոց—Գ. Տ.—Վ.) վարդ-
խաթուն դուստրն ծնաւ, յետ 27 աւուրց փոխեցաւ աշխարհէս թուին 1809, Հոկտեմբ. (իմա՝
Համիրայ—Գ. Տ.—Վ.) 15» (ԳՓ, էջ 87):

91. Զներալ—general (անգլ.) գլխավոր:

92 Լուսանցում վերից վար դոված է աստղերի՝ երազում տեսած պատկերը: Ըստ Հովսեփի՝
վերևի բոլորակը Սուրաթն է, միջի «յոյժ պայծառ» աստղը իր ընտանիքը, դեպի ներքև՝ հա-
րավ իջնող ծայրը՝ Բոմբեյի ուղղությունը:

93. Տիկին-Խաթունը Հովհաննես-աղա Խաղարյանի կինն է (տե՛ս ծ. 56):

94. Հոհաննյան Գրիգորաղայանը Մինաս Խաղարյանի թոռան թոռնորդին է (տե՛ս ծ. 56,
հմմտ. ԳՓ, էջ 83):

95. Դաֆաթ—dafa'at (արաբ.) մի քանի անդամով, մաս առ մաս, մի քանի նվազով.
հմմտ. 22, Հաշվետումար, էջ 376:

96. Ղարալ—kabala (արաբ.) կալվածագիր պայմանագիր, ընծայագիր, համաձայնագիր:
Կարծում ենք, որ Հովսեփն իր տունը ընծայագրով կնոջ անունով գրանցել է առաջին անգամ
Զինաստան մեկնելու ուղղակի նախօրեին՝ Ազարիայի 171 թ. Շամս 1—9 ընթացքում, որով-
հետև այդ տարվա մնացած ողջ ընթացքում՝ Շամս 10-ից մինչև 172 թ. Շամս 26-ը (1786 թ.
ապրիլի 10—1787 թ. ապրիլի 26) նա Սուրաթում չի եղել: Ըստ այսմ, Հովսեփն իր հետ պա-
տահելիք հնարավոր արկածից առաջ տնօրինել էր ունեցած միակ անշարժ գույքը:

97. Կնոջ ծննդյան մասին լրացումը հետազայում արել է Մարկոսը:

98 Հարություն Սահակը նոր-չուղայեցի հանրահայտ Ազանուրյան տոհմից է (տե՛ս
3. Տէր-Յովհաննեսեց, Ա, էջ 150—1): Հայտնի է Աւետարանի, Սաղմոսարանի և Հավատո հան-
գանակի իր շափածո վերամշակումներով և կրոնա-դավանաբանական տարբեր նյութերի վե-
րաբերող առղերով (տե՛ս ՄՄ ձեռ. ԱՄՆ 369, 558): Նրա երկերից երկուսը տպագրվել են.
«Գիրք Սաղմոսաց Դաւթի, Հոմերական ոտիւք շափեալ ի Յարութիւնէ Սահակեան Ազանուրեանց
Նոր-Չուղայեցոյ, Կալկաթա, տպ. Աւետ Զանթլումեանի, 1815», «Գիրք դաւանութեան հա-
ւատոյ, Կալկաթա, 1817»: 1795 թ. Վենետիկի Մխիթարյան միաբան Մատթեոս Մաղարյանը
Հարություն Ազանուրյանի պատվերով թարգմանել է Տրանսիայի Գիտ. ակադեմիայի անդամ

և Փարիզի աստղադիտարանի աշխատակից Փիլիպպոս դը լա Հիրեի «Ազիտակը աստղաբաշխականը» դործը (տե՛ս ՄՄ ձև. № 2769, էջ 6ա և 148բ—9բ)։ Հարություն Աղանուրյանի ընտանիքը հետազայում տեղափոխվել է Եվրոպա. «Երկորին որդիք նորա կան այժմ ի սահմանս Եւրոպիոյ»՝ 3. Տէր-Յովհաննեանց, Ա, էջ 151)։

99. Հարություն Կոստանդիանոսը, անկասկած, բուշերցի էր. այդ մասին վկայում է նաև Բոմբեյում թաղված նրա մի շառավղի տապանագիրը (ԴՓ, էջ 57)։

100. 1917 թ. փետրվարին Ք. Գուշակյանը կալիաթայում մասնակցել է մի պատկազրության և դարձանքով արձանագրել, որ արարողությանը հաջորդող «Ով երանելիդ ամենեցուն» շարականի ժամանակ Արզար, Տրդատ կամ Սմբատ «մեծ թագաւոր» հիշելու փոխարեն տալիս էին փեսայի անունը (տե՛ս Ք. Գուշակեան, Հնդկահայք, էջ 151)։ Հովսեփի այս տողերը ցույց են տալիս, որ ծխական այդ յուրահատկությունը հնդկահայության մեջ կար մի դար առաջ ևս։

101. Սֆարշագիր—արար. (sefār s`) հանձնարարական, միջնորդագիր։

102. Այս Khatoon Lazar Michael-ը Բոմբեյում 82-ամյա մահացել է 1888 թ. հունվարի 17-ին (ԴՓ, էջ 65), ուրեմն՝ ծնվել էր 1806 թ. և ամուսնանալիս 12 տարեկան էր Իսկ Աղազարը սուրաթահայ վաճառականների անվանացանկի 7-րդ տեղն զբաղեցնող Հովսեփ Միրայելի (տե՛ս ծ. 50) և մեր հեղինակի քույր Բեկզազայի թոռնուհի Հոսիսիմեի որդին է. որանով էլ բացատրվում է նրա ամուսնության՝ այստեղ արձանագրվելը։ Սրա տղաներ Հովհաննեսն ու Վիլիամը, ապա՝ նաև թոռները ԺԹ դ. կեսերից ի վեր քոմբեյահայ ամենաերեկելի գեմբերից էին (տե՛ս ծ. 122, 124, 126, 127) և կրում էին իրենց մեծ պապի անունից արտածված Միրայելյան ազգանունը։ Այսպիսով, Հովսեփ Գահրաշյանի երկով պարզվում է, որ այս ընտանիքը ծագումով նոր-Ջուզայի Պողենց տոհմից էր։ Հովսեփի Բեկզազա քրոջ ծոռներ Հովհաննեսն ու Վիլիամը հետազայում ամուսնացել են Հովսեփի թոռ Գրիգորի ազգիկների հետ։ Աղազար Հովսեփ Միրայելի և Խաթունի զավակներն էին նաև՝ «Joseph Lazar Michael-ը (1821—1885) և Ռոբերտ Միրայելյանը (1823—1897—ԴՓ, էջ 64)։

103. Այս Մարտիրոսը Հովսեփի ավագ եղբայր Սարգսի որդին էր, որը 1786—7 թ. Աստրախանից եկել էր Սուրաթ և հորեղբորից դրամական մեծ օգնություն ստացել։ Երևի այս այցելության ժամանակ Հովսեփը Սեփդարադում 1770 թ. իր համար գրել տված ձեռագիր ժամագիրքը նվիրել էր Մարտիրոսին. վերջինս այն հետք տարել է Աստրախան և օժտել մի հիշատակագրությամբ՝ «Ամենաչիտորը ծառայ Մարտիրոս դի Սարգիս. Օվ Օր որ կարքի, և մեզ յիշէ և մեր ծնողացն ողորմեա աչսէք» (ՄՄ ձև. № 9571, էջ 167ա)։ Ըստ երևույթին այս անգամ էլ Մարտիրոսը Բոմբեյում էր, այլապես Հովսեփը չէր կարող նրա մահն արձանագրել ժամի ճշտությամբ։

104. Թարեղ—tarikh (արար.) թվական, տարի, ամսաթիվ. հմմտ. ՀԶ, Հաշվետումար, էջ 381։

105. Հարություն Մելքումը Բուշերի ունևոր հայ վաճառականներից էր. հնդկահայ գաղութների ընտանիքների թվի և «պատուելի նախամեծար կոշեցեալ անձանց» մի ցանկում նշված է, որ Բուշերում կար 8 հայ ընտանիք, իսկ այնտեղի «պատուելի անձինք» են «Յովսէփ Յարութիւն Մելքոնեան և Մելքոն Յարութիւն Մելքոնեան» եղբայրները. տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 245, վավ. 119։ Այս փաստաթուղթն անթվական է, բայց նշում է թվարկված «պատուելիներին» տարիքը. այսպես. մադրասարնակ Սեթ Սամը 70 տարեկան է, նրա որդի Նդիազարը՝ 35. առաջինը ծնվել էր 1771 թ., երկրորդը՝ 1806 թ. (մահացել են համապատասխանաբար 1848 և 1852 թթ.—ԴՓ, էջ 31—2), ուրեմն՝ նրանք 70 և 35 տարեկան եղել են 1841 թ., որը և այս փաստաթղթի կազմման տարին է։ Այստեղ Վարդխաթունի ամուսին Մելքումը համարվում է 47 տարեկան, ուստի և ամուսնանալիս (1823 թ.) նա 29 տարեկան էր, Վարդխաթունը՝ 14։

106. Փասաշ—passage (անգլ.) ուղևորություն, այստեղ՝ ծովային։

107. էքսն, էքսի (բրբռ.)—մյուս, հաջորդ օրը, առավոտը։

108. Քրէ—kerayah (արար.) վարձ, վճար, ՀԶ, Հաշվետումար, էջ 417։

109. Այս տեղեկությունը սխալմամբ կրկնել է. նախորդը գրած է նույն թվականի հուլիսի 6-ի ներքո՝ սրանից շորս հաղորդում առաջ։

110. Ավետ Հարություն Սահակը Հարություն Աղանուրյանի որդին է։

111. Հովսեփը և Մարկոսը իրադարձությունների ժամերը նշելիս օգտագործում են «առաւօտեան» «երեկոյեան» և «ցերեկէն» որոշիչները։ Վերջինի փոխարեն երբեմն հանդես

է դարչին «կէսօր անցած»-ը, որի հոմանիշն է սեփառ բառը: 2. Փափազյանը, ունենալով միայն մի վկայութիւն, այս տերմինը հանգեցրել է պարսկերէն separ բառի՝ վերջ, ավարտ, օրվա վերջ իմաստին, տե՛ս ՀՊ, Հաշվատումար, էջ 408: Բառի՝ մեր աղբյուրում առկա բազմաթիվ կիրառութիւններից հետևում է, որ սեփառը հնդկահայերն օգտագործում էին կէսօր իմաստով:

112. Հովսեփի այս թող, որ նրա պատվին ստացել էր նույն Հովսեփ անունը, հետագայում դարձել է անգլիական բանակի բժշկական ծառայութեան գեներալ, եղել Հնդկաստանի անգլիական բանակի բժշկական ծառայութեան հրամանատարը և բոմբեյահայութեանից սերված նշանավոր հնդկահայերից մեկը: Մ. Սեթը, նրա մասին տեղեկութիւններ քաղելով ժԹ գ. վերջի հնդկաստանյան լրագրների պաշտօնական հաղորդումներից, իր աշխատութեան «Հայերը Բոմբեյում» գլխի նշանակալի մասը (Մ. Սեթ, էջ 299—301) նվիրել է Դահրաշի Հաքարիայի 6-րդ սերնդի այս ներկայացուցչին: Համառոտ ներկայացնենք այն, ինչ հայտնի էր նրան. Հովսեփին իր սկզբնական բժշկական (մասնավոր) կրթութիւնն ստացել է Բոմբեյում, հետագա մասնագիտացումը՝ Լոնդոնի Ս. Գեորգ հիվանդանոցում, ուր ուսումնառութեան ամբողջ շրջանում աշակերտել է ժամանակի նշանավոր հետազոտող բժիշկ և մի շարք կարևոր աշխատութիւնների հեղինակ Մամուել Արմսթրոնգ Լանին: Մասնագիտութեամբ սկսել է աշխատել նույն հիվանդանոցի կազմախոսութեան լաբորատորիայում՝ որպէս պրոֆեսորի օգնական: 1846 թ. ստացել է Վիրարույթների Լոնդոնի արքայական ընկերութեան անդամի դիպլոմ, վեց տարի անց՝ բժշկութեան դոկտորի և վիրարույթի (Master of Surgery) կոչում: 1858 թ. ընտրվել է Բժիշկների էդինբուրգի, 1860 թ.՝ Լոնդոնի արքայական կոլեջների անդամ: 1866 թ. Լոնդոնի համալսարանից ստացել է իրավունքի դոկտորի կոչում, նույն տարվա ընթացքում, ուսման միամյա կանոնավոր դասընթացից հետո, Inner Temple ընկերութեանից (Անգլիայում փաստաբանների ուսուցմամբ զբաղվող չորս ընկերութիւններից բարձրագույնը) ստացել է փաստաբանի վկայական և այդ գործով զբաղվելու իրավունք: Անգլիական Արևելա-Հնդկական ընկերութեան դիրեկտորների խորհրդի նախագահ Ջեյս Հոգի հրամանով 1852 թ. նոյեմբերին նշանակվել է Մադրասի նահանգի գլխավոր հիվանդանոցի վիրարույթի օգնական, շուտով ուղարկվել Բենգալորում գտնվող 94-րդ արքայական գնդում ծառայելու: 1870 թ. նոյեմբերին ստացել է գեներալական առաջին աստիճանը՝ Brigade-Surgeon. մյուս աստիճանները ևս չեն ուշացել՝ Surgeon-Major (1872 թ. նոյեմբեր), Deputy Surgeon-General (1879 թ. ապրիլին ժամանակավոր, 1880 թ. մայիսին՝ մշտական): 1885 թ. հուլիսին բարձր թոշակով պաշտօնաթող է եղել, բայց, կյանքի 61-րդ տարում՝ 1886 թ. հոկտեմբերի 17-ին վախճանվել և թաղվել է Մադրասի հայոց գերեզմանոցում: Յովսեփ Բ-ի մի այլ մանրամասն կենսագրական է հետևեալը. Տորր. Վահրամ Յ. Քորգոմեան, ժէնէրալ Յովսեփ բժիշկ Մարկոսեան Մահտեսի Յովսէփեանց-Հանդէս ամսորեայ, 1895, էջ 167—177:

113. Հակոբ Աղանուրյանը Հարութիւն Աղանուրյանի այն որդին է, որ 1824 թ. Կալկաթայի հայոց «Մարդասիրական ճեմարանի» տպարանում հրատարակել է «Ալբրեհտարան կամ Աղանուրական կարգ ուսմանց» գիրքը:

114. Գրիգորի այս դուստրը չի ամուսնացել. ահա նրա տապանագիրը. «Օրիորդ Աննայ Յովսէփեան. ծնեալ է 17 ապրիլ 1851 եւ հանգեաւ ի Տէր 9 Մայիս 1916» (ԴՓ, էջ 52. նույնը՝ անգլերէն):

115. Մկրտիչ Պետրոսյանը 77-ամյա հասակում՝ 1884 թ. հունվարի 10-ին մահացել է Բոմբեյում (ԴՓ, էջ 57): Բնագրի որևէ մասում սրա և Դահրաշյանների ազգակցական կապի լճասին ակնարկ իսկ չկա, ուստի այս ամուսնութեան արձանագրման պատճառն անհասկանալի է:

- 116. Թէջիմէնտ—regiment (անգլ.) զինվորական գունդ:
- 117. Էնսայն—ensign (անգլ.) բառացի՝ դրոշակակիր զինվոր. այստեղ՝ անգլիական բանակի սպայական ամենացածր աստիճանը՝ համազոր ներկա պրոպոզըշիկին:
- 118. Ըշկոլ—school (անգլ.) դպրոց:
- 119. Հակոբ Հարութիւն Կիրակոսը Հովսեփ բժիշկի կին Կատարինեի եղբայրն էր:
- 120. Լիտեննտ—lieutenant (անգլ.) լիտենանտ:
- 121. Գրիգորի դուստր Հոփսիմեի տապանագիրն այս է. «Անմոռաց յիշատակն հանգուցեալ տիկին Հոփսիմէ Լաոիմբրի, ալբույն լէֆթէնէնտ Ալլան Սիլ Լաոիմբրի. ծնեալ ի 23 հոկտեմբեր 1840, վախճանեալ ի 11 մայիս 1903» (ԴՓ, էջ 53. նույնը՝ և շափածո մի ավագական նաև անգլերէն):

122. Հովհաննես Աղազար Միքայելյանը 70-ամյա տարիքում մահացել է Բոմբեյում, 1893 թ. դեկտեմբերի 19-ին, իսկ նդիսարեթը՝ նույնպես Բոմբեյում, 1906 թ. մայիսի 24-ին. «Ի քաղցր յիշատակ նդիսարեթի Միքայելյան. ծնեալ ի 11 Յուլիսի 1843, հանգեալ ի Տէր 24 մայիսի 1906, ի հասակի 63 ամաց» (ԴՓ, էջ 55. նույնը և ավազական մի ոտանավոր՝ անգլերեն):

123. Սավայ—sav (արար.) ուղիղ, ճիշտ, հավասար, միանման:

124. Գրիգորի յոթերորդ զավակի տապանագիրն այս է. «Յոյժ ողբալին, սիրելի ամուսինս Յովսէփ Գ. Յովսէփեան. ծնեալ էր 1858 Սեպտ. 6 եւ հանգեալ ի Տէր 1913 օգոստ. 5-ին» (ԴՓ, էջ 52): Սրա և իր ընտանիքի մասին տե՛ս Հավելված Գ:

125. Ղամբարզեֆա անունը Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» չկա. սխառեղ (հ. Գ, Ե., 1946, էջ 130—1) արձանագրված է միայն Ղամբար (ար. և իգ.) անձնանունը, որ մեծանուն լեզվարանը բխցնում է թուրքերեն qamber—արև բառից (°): Մի այլ Ղամբարզեֆա՝ Հովհաննես Շուբրյանի դուստրը և Աղազարի կինը, որ ծնվել էր Նոր-Ջուղայում, 1777 թ. մահացել է Բոմբեյում (Մ. Սեք, էջ 296):

126. Վիլիամ Միքայելյանը բոմբեյահայ երեկի դեմքերից էր՝ երկար ժամանակ հայոց եկեղեցու հոգաբարձու էր. 1886 թ. հուլիսի 23-ին մահացել և թաղվել է Ս. Պետրոս եկեղեցու բակում (Մ. Սեք, էջ 302): Ըստ Մ. Սեքի, ունեցել է երեք որդի և երկու դուստր. ավագը՝ Չարլզ Միքայելը հոր նման Ս. Պետրոսի հոգաբարձուն էր, երկար տարիներ եղել է Բոմբեյի Առևտրի պալատի քարտուղարը. երկրորդը՝ Վիլիամ Վիլիամ Միքայելը, Բոմբեյի առևտրական ընկերության քարտուղարն էր. կրտսերը՝ Հենրի Վիլիամ Միքայելը, 1930-ական թթ. նույն եկեղեցու հոգաբարձուն էր և Բոմբեյի երկաթուղային վարչության բարձրաստիճան սպառնյա (Մ. Սեք, էջ 302, Թ. Գուշակեան, Հնդկահայեր, էջ 23): Աղջիկներից մեկի անունը Կատարինն էր (1861, ապրիլի 2—1932, հուլիսի 22՝ ԴՓ, էջ 54): Բոմբեյի հայոց գերեզմանոցում կա մի տապանագիր. «Sacred to the memory of Lazar William Michael. Born 11th June 1861, died 6th October 1920 (ԴՓ, էջ 59): Այստեղ սխալ է կարգացված կամ անունը՝ Չարլզ-ի փոխարեն կազար (իմա՝ Աղազար), կամ՝ ծննդյան թվականը՝ 1861 թ. հունիսի 11, որովհետև նույն տարվա ապրիլի 2-ին ծնվել էր Վիլիամ Միքայելի դուստր Կատարինեն: Վիլիամ Վիլիամ Միքայելի առաջնեկի անունը էզվարդ էր (1893, հոկտ. 23—1924, մարտի 11՝ ԴՓ, էջ 65): Միքայելյան ընտանիքին են պատկանել նաև Ռոբերտ Միքայելը (1838—1875. Հովհաննեսի և Վիլիամի եղբայրն էր), Հենրի Ռոբերտ Միքայելը (1871—1936) և Փազուհի Միքայելյանը՝ 1846—1900 (տե՛ս ԴՓ, էջ 55, 64):

127. Գրիգորի դուստր Շուշանը ևս մահացել է Բոմբեյում. «Յոյժ ողբալի տիկին Շուշան, որբեալի Վիլիամ Միքայելեան. ծնեալ է 9 սեպտեմբեր 1846, հանգեալ ի Տէր 23 ֆեվր. 1914, 68-ամեայ հասակաւ» (ԴՓ, էջ 54):

128. Նոր-Ջուղայի առաջնորդ Քաղեսու Բեկեազարյանի մասին տե՛ս Յ. Տէր-Յովհաննեանց, Բ, էջ 81—92:

129. Միս—miss (անգլ.) օրիորդ:

130. Մարկոսի կին Շուշանը մահացել է 1871 թ. փետրվարի 22-ին. 1870 թ. հիմնադրված՝ Բոմբեյի հայոց երկրորդ գերեզմանոցում թաղված առաջին հանգուցյալը նա էր. «Տիկին Շուշան Մարկոս Յովսէփ, որ ի հասակի 82 ամաց հանգեալ ի Տէր. 1871» (ԴՓ, էջ 53. ամսաթիվն անգլերեն մասում է):

131. Նոր-Ջուղայի թեմակալ Հարություն արքեպիսկոպոսի մասին տե՛ս Յուզակ Նոր-Ջուղայի, Ա, էջ 758—9, Բ, էջ 93, 100:

132. Ե՛վ այստեղ, և՛ բուն հիշատակարանում նշված են փրկչական թվականի հին տոմարի ամսաթվերը:

133. Պետր է լինի ժԸ (18)՝ ինչպես տիտղոսաթերթում է:

134. Իր ձևագրի ընդօրինակության հանգամանքների և զաղափար օրինակների մասին Հովսեփի բոլոր հաղորդումները համապատասխանում են իրականությանը. դա հաստատվում է նրա զաղափար օրինակներից մեկով՝ ՄՄ ձև. № 10737 (էջ 240ր), որ Սուրաթի եկեղեցու «լիակատար նորոգեալ» հայամավորքի կեսն է և որը 1801 թ. նորոգել է Պաղենց տեր Ջաքարիան: Հովսեփի հայամավորքն ունի երկսյուն և խիտ նոտրգիր գրչությամբ 24,2×20,2 սմ չափի բարակ թղթի թերթ և ծավալի առումով նախընտրելի է ժամանակի ձեռագիր ու տպագիր հայամավորքներից: Գահրաշյանների պատմությունը պարունակող 215—21 թերթերի վերին աջ անկյունը և միջին մասերը 3,5 սմ խորությամբ վառվել է, այդ պատճառով բնագիրը որոշ չափով տուժել է, բայց՝ ոչ անհասկանալի դառնալու չափ: Հայամա-

Վերջում բոլոր տոների սկզբում գրված են նաև Աղարիայի տոմարի ամսաթվերը (փոխառված՝ ՄՄ № 10737-ից):

Г. А. ТЕР-ВАРДАНИЯН

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ СЕМЬИ ДАГБАШЯН, ЖИВШЕЙ
В ПЕРСИДСКО-ИНДИЙСКОЙ СРЕДЕ (XVII—XIX ВВ.)

Резюме

Публикуемое сочинение Овсепя Дагбашяна—«История предков моих», сохранившаяся в двух авторских списках, была написана в 1812 г., в Бомбее а впоследствии была продолжена и хронологически доведена до 1864 г. сыном автора Маркосом.

Первые три поколения рода (нач. XVII—середина XVIII вв.) жили в Новой Джуге (вблизи столицы Ирана—Исфахана) и в основном занимались ремеслами. С середины XVIII в. некоторые члены семьи переехали в Баку и Астрахань, в Чичру и Сейдабад (Бенгалия) и стали заниматься торговлей. С 1761 г. автор настоящей «Истории» начал свою торговую деятельность сперва в Басре, а потом в Сейдабаде и Сурате. Следующие поколения успешно занимались торговлей уже в Бомбее, но к середине XIX в. обанкротились и стали мелкими служащими Бомбейской железнодорожной компании. В 1960 г. семья переехала в Лондон, а потом—в США и Канаду.

В предисловии к публикации решаются основные источниковедческие проблемы, относящиеся к тексту и его спискам, выявляется значение труда Овсепя Дагбашяна в деле изучения истории армянских колоний Ирана и Индии вообще и деятельности армянских торговых общин Сурата и Бомбея, в частности. В примечаниях приводятся дополнительные сведения о жизнедеятельности членов семьи и упомянутых в «Истории» других лиц, извлеченные из армянских источников XVIII—XIX вв., а также объясняются использованные в тексте арабские, персидские и английские слова и термины.

G. H. TER-VARDANIAN

HISTOIRE DE LA LIGNEE ARMENIENNE DES DAHBACHIAN,
AYANT VECU DANS UN MILIEU IRANO-INDIEN
(XVIIe—XIXe ss.)

Résumé

L'ouvrage publié ici de Hovsep Daghbachian „Histoire de mes ancêtres“, conservée en deux copies d'auteur, fut écrite en 1812 à Bombay, puis chronologiquement continuée jusqu'à l'année 1864 par Markos, fils de l'auteur.

Les trois premières générations de la lignée (début du XVIIe—milieu du XVIIIe ss.) vécurent à la Nouvelle-Julfa (aux environs de la capitale iranienne d'Ispahan) et s'adonnèrent principalement à l'artisanat. Au milieu du XVIIIe s., certains membres de cette famille s'installèrent à Bakou, à Astrakan, à Tchitehrou et à Seydabad (Bengale) et se firent commerçants. En 1861, l'auteur de l'„Histoire“ commença ses activités commerciales, d'abord à Bassora, puis à Seydahad et à Surat. Les représentants des générations suivantes transférèrent le commerce familial à Bombay, mais vers le milieu du XIXe, ils furent ruinés et continuèrent à gagner leur vie comme petits employés à la Compagnie de chemin de fer de Bombay. En 1950, la famille s'installa à Londres, puis aux USA et au Canada.

La préface de la publication résoud les principaux problèmes ayant trait au texte et à ses copies, révélant l'improtance de l'ouvrage de Hovsep Daghbachian pour l'étude de l'histoire des communautés arméniennes d'Iran et d'Inde en général et des activités des sociétés commerciales de Surat et de Bombay en particulier. Les annotations donnent des renseignements supplémentaires sur les vies des membres de la famille et les autres personnes mentionnées dans l'„Histoire“, pris aux sources arméniennes des XVIIe—XIXe ss., ainsi que les explications des mots et des termes arabes, persans et anglais utilisés dans le texte.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ 1941—1945 ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝

1941—1945 թթ. պատերազմի տարիները, ինչպես մեր երկրի բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների, մշակութային ու գիտական հաստատությունների, այնպես էլ Մատենադարանի համար եղել են բազում դժվարությունների և ծանր փորձությունների լարված տարիներ: Նրա փոքրաթիվ անձնակազմի մեծ մասը մեկնել է բանակ և ռազմի դաշտում պատվով կատարել իր պարտքը: Նրանցից ոմանք զոհվել կամ վիրավորվել են, մի բանիսը, ծանր պայմաններում, գերի են ընկել հիտլերականների ձեռքը, կրել աննկարագրելի տանջանքներ՝ երբեք չկորցնելով վերջնական հաղթանակի, կրկին Հայրենիք վերադառնալու հույսը: Թիկունքում մնացածները, կրկնապատկելով իրենց եռանդը, կարողացել են հաջողությամբ շարունակել ձեռագրերի պահպանության, խնամքի և ուսումնասիրման աշխատանքները:

Պատերազմին նախորդող տարիներին Մատենադարանի կյանքում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ: Հայաստանի կառավարության որոշմամբ Մատենադարանը Վաղարշապատից փոխադրվեց Երևան: Վաղարշապատում պայմանները բարենպաստ չէին: Բացակայում էր ձեռագրերի գիտական մեթոդներով մշակված խնամքը, իսկ նորոգման գործը դեռ չէր սկսվել: Տարբեր պատճառներով շատ դանդաղ էին ընթանում գիտահետազոտական աշխատանքները: Մեծապես զգացվում էր թե պահպանող ու նորոգող, և թե ուսումնասիրող կադրերի խիստ սակաս:

Մատենադարանի փոխադրումը Երևան, ըստ Հայաստանի Լուսժողովոմի 1939 թ. հուլիսի 1-ի № 151 հրամանի, պետք է ավարտվեր մինչև այդ թվականի սեպտեմբերի 1-ը², բայց ձգձգվեց և ավարտվեց 1940 թ. գարնանը³:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, թե որքան դժվարություններ են հաղթահարել Մատենադարանի աշխատակիցներն այդ փոխադրումները կատարելիս՝ գիրեկտոր Երվանդ Թորոսյանի և 1940 թ. փետրվարի 17-ից⁴ նրան փոխարինած Գևորգ Աբովի ղեխավորությամբ:

1 Որպես ղեկուցում ընթերցվել է Հայրենական պատերազմի հաղթական ավարտի 40-ամյակին նվիրված Մատենադարանի գիտական խորհրդի հանդիսավոր նիստում՝ 1985 թ. մայիսին:

2 Մատենադարանի արխիվ, թղթ. 79, վավ. 42, էջ 1:

3 Նույն տեղում, թղթ. 79, վավ. 86:

4 Նույն տեղում, թղթ. 79, վավ. 188, էջ 3:

Հաջորդ կարևոր իրադարձությունը Մատենադարանի համար այն է, որ դուրս բերվեց Հայաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ենթակայությունից և դարձվեց Հայաստանի ժողկոմսովետին կից հաստատություն: Եթե նախկինում այն կոչվում էր Վաղարշապատի կենտրոնական Ձեռագրատուն (Մատենադարան), ապա ժողկոմսովետի 1940 թ. ապրիլի 5-ի որոշմամբ անվանվեց «Հայկական ԽՍՀ ժողկոմսովետին կից Ձեռագրատուն (Մատենադարան)»⁵. 1941 թվականի հունվարի 10-ին ժողկոմսովետը հաստատեց Մատենադարանի կանոնադրությունը⁶:

Մատենադարանը համապատասխան գիտական կազմերով ապահովելու համար կատարվեց աննախընթաց մի քայլ՝ 1940 թ. սեպտեմբերի 17-ին Մատենադարանին կից բացվեց ասպիրանտուրա: Առաջին ասպիրանտները դարձան համալսարանի կողմից երաշխավորված և արդեն ձեռագրատանը գործնական աշխատանքի փորձ ձեռք բերած Լևոն Խաչիկյանը, Վիգեն Խելումյանը, ինչպես նաև Փայլակ Գրիգորյանը, Ավետիս Ղուկասյանը և Ամալյա Աճեմյանը⁶:

Ժողկոմսովետի նույն որոշման համաձայն ստեղծվում է Մատենադարանի գիտական խորհուրդ, որի մեջ հաստատվում են ակադեմիկոսներ Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը, Ի. Զավախաշվիլին, պրոֆեսորներ՝ Մ. Արեղյանը, Ս. Տեր-Ավետիսյանը, Հ. Մելիքյանը, Գ. Աբովը (նախագահ), գրող Դ. Դեմիրճյանը, ավագ գիտական աշխատակիցներ՝ Ա. Շահնազարյանը, Ա. Աբրահամյանը, Ե. Թորոսյանը, Ի. Աբուլաձեն, Բ. Առաքելյանը, Ս. Կարապետյանը և ժողկոմսովետի նախագահի տեղակալ Գ. Աղբալյանը⁷: Գիտական խորհրդի նիստերին հրավիրվածների ցուցակում են Մ. Սարյանը, պրոֆ. Հ. Աճառյանը, պրոֆ. Ա. Հովհաննիսյանը, Ե. Տեր-Մինասյանը, Ռ. Գրամբյանը, Վ. Զալոյանը, Հ. Ժամկոչյանը, Ս. Պողոսյանը, Մ. Մկրչյանը, Կ. Ղաֆաղարյանը, պրոֆ. Լ. Հովհաննիսյանը, Ռ. Զարյանը և ուրիշներ⁸:

1940 թ. հոկտեմբերի 27-ից 29-ը տեղի ունեցավ Մատենադարանի առաջին գիտական նստաշրջանը, որի ժամանակ արժեքավոր զեկուցումներով հանդես եկան պրոֆեսորներ Մ. Արեղյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Լ. Միմչոնովը, դոցենտ Ի. Աբուլաձեն և ուրիշներ: Այդ զեկուցումները հետագայում հրատարակվեցին գիտական հանդեսներում:

Երևան տեղափոխվելուց հետո Մատենադարանին արվեցին նոր հաստիքներ, աշխատանքի ընդունվեցին մի շարք նոր, երիտասարդ խոստումնալից կազմեր, որոնց թվում Կ. Մուրադյանը (Գեորգ էմին), Ա. Մնացականյանը, Գ. Աբգարյանը, Շ. Գաղբաշյանը, Մ. Սաղումյանը, Ս. Ավագյանը և ուրիշներ: Ստեղծվեց նաև գիտնական քարտուղարի պաշտոն և Մատենադարանի առաջին գիտնական քարտուղար դարձավ Վարդգես Համազասպյանը: Հիմնվեց ձեռագրերի հիգիենիկ պահպանման և նորոգման բաժին: Ձեռք բերվեց լուսանկարչական ապարատ և սկսվեց ձեռագրերի նկարահանման աշխատանքներ: Լուրջ աշխատանքներ ծավալվեցին ձեռագրացուցակի պատրաստման ուղղությամբ, շարունակվեցին արխիվային վավերագրերի նկա-

⁵ Նույն տեղում, թղթ. 80, վավ. 57:

⁶ Նույն տեղում, թղթ. 79, վավ. 133, էջ 23

⁷ Նույն տեղում, թղթ. 79, վավ. 148, էջ 5:

⁸ Նույն տեղում:

րագրման աշխատանքները: Մատենադարանում բացվեց հայ պոեզիայի ցուցահանդես:

Ահա ստեղծագործական այս նոր վերելքի, նոր ծրագրերի իրականացման ճանապարհին էր Մատենադարանը, երբ սկսվեց պատերազմը:

Մատենադարանի 31 հոգուց բաղկացած անձնակազմից ղոբակոչվեցին 23-ը: Հետագայում բանակից վերադարձան Աշոտ Աբրահամյանը և Լևոն Խաչիկյանը:

Մնացած աշխատակիցների, ինչպես նաև նոր ընդունվածների շանքերով Մատենադարանը սկսեց հարմարվել պատերազմական պայմաններին:

Ժամանակավորապես դադարեցվեց ձեռագրերից և արխիվային վավերագրերից օգտվելը⁹: Իսկ № 83 հրամանով կարգադրվեց ձեռագրերը տեղավորել սնդուկների մեջ՝ անհրաժեշտության դեպքում թաքստոցներն իջեցնելու համար:

«Ձեռագրերի դասավորումը պետք է սկսվի № 1 ձեռագրից և համարական կարգով դասավորվի սնդուկներում»,—ասվում էր հրամանում: Սնդուկները ներսից պատված են լինելու մաքուր թղթով, կողպվելու և կնքվելու են¹⁰: 1941 թ. հունիսի 25-ի № 2/331 պրոցլամը ժողկոմսովետի նախագահ Ա. Փիրուզյանը Մատենադարանին թույլ է տալիս 20.000 ա. ծախսել սնդուկներ և յուղաթուղթ ձեռք բերելու համար¹¹: Անհրաժեշտ էր շտապ կարգով պատրաստել տալ 250 սնդուկ: Գիրեկտորի հուլիսի 10-ի № 29 հրամանի համաձայն բոլոր աշխատակիցները պարտադիր մասնակցելու էին հակաօդային պաշտպանության պարաօմոնիցներին¹²:

Պատերազմի հինգերորդ օրը Մատենադարանում կազմակերպվում է վորոշիլովյան հրաձիգների նորմաները հանձնող խմբակ, որի մեջ ընդգրկվում են 12 հոգի: Դրանց թվում էին Գ. Աբովը, Վ. Համազասպյանը, Ա. Մնացականյանը և ուրիշներ¹³:

Մատենադարանում ստեղծվում է նաև աշխարհազորային ջոկատ: Քանի որ անձնակազմը փոքրաթիվ էր, որոշվում է միանալ Հեղափոխության թանգարանի կուլեկտիվի հետ և կազմել 20 հոգիանոց ջոկատ¹⁴:

Ինչպես ամենուրեք, այնպես էլ Մատենադարանում մտցվում է լուսաբողարկում: Ձեռք են բերվում հրշեջ գործիչներ, շոր կրակմարիչներ, միջանցքներում դրվում են ավազով լեցուն արկղներ¹⁵:

Մատենադարանի գիրեկտորի № 106 հրամանի համաձայն (17 հուլիսի) կազմվում է 3 խումբ՝ ինքնապաշտպանության փոսեր կամ ուժրապաստարաններ փորելու համար: Մատենադարանցիներն աշխատում էին առավոտյան ժ. 8-ից մինչև 2-ը և ապա 18ից մինչև 24-ը:

Երբ ստացվում են սնդուկները, սկսվում է ձեռագրերը նրանց մեջ տեղավորելու գործը: Նախապես նրանք մաքրվել են, թղթերի մեջ փաթաթվել և

9 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 75, էջ 30ր:

10 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 75, էջ 17—18:

11 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 63:

12 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 75, էջ 21:

13 Նույն տեղում, էջ 43, 127:

14 Նույն տեղում, էջ 126—127:

15 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 90, էջ 471:

դրվել սնդուկները, որոնք կողպվել և կնքվել են: Ապա համարակալված սրնդուկները դասավորվել են կիսակլոր դահլիճում:

Երկիրը պատերազմական վիճակում էր: Մտցվել էր ռազմական հարկ: Ամենուրեք կրճատվում էին ռազմական նշանակություն չունեցող հիմնարկների հաստիքները: Այդպիսի կրճատումներ են կատարվում նաև Մատենադարանում: ՀեՍՀ ֆին. ժողկոմատի կարգադրությամբ Մատենադարանի դիրեկտորը 1941 թ. օգոստոսի 25-ի № 113 հրամանով վերացնում է գիտնական քարտուղարի, ձեռագրատան, արխիվային, գրադարանային և մամուլի բաժինների վարիչների հաստիքները, կրճատվում են քիմիկոսի, ուսերեն մեքենագրուհու, արևելյան լեզուների մասնագետի, երեկոյան հերթի գրադարանային աշխատողի և լուսանկարչի պաշտոնները: Կրճատումներից տրնտեսված գումարներով ավելացվում է հրշեջ պահակների թիվը, հասցվելով 6 հոգու և ձեռագրատան վրա սահմանվում է 24 ժամյա հերթապահություն¹⁶:

Ստեղծված պայմաններում մատենադարանցիներից պահանջվում էր բարձր գիտակցականություն և ամուր կարգապահություն: Հատկապես պրոֆ. Գ. Աբովի դիրեկտոր նշանակվելուց հետո Մատենադարանում հաստատվել էր խիստ կարգ ու կանոն:

Մատենադարանը ստանձնել էր № 70 զինվորական հիվանդանոցի շեֆությունը և իր կարողության սահմաններում ձգտում էր օգնել վիրավոր զինվորներին:

Մատենադարանի աշխատակիցները զգալի զործ կատարեցին ձեռագրերի և արխիվային վավերագրերի ցուցակագրման, դասավորման և նկարագրության ուղղությամբ: Մենք երախտապարտ ենք նրանց այն օրինակելի կարգ ու կանոնի համար, որ այսօր գոյություն ունի մեր ձեռագրատանն ու արխիվում: Այն դժվարին պայմաններում նրանք ջանք շինակեցին հազարավոր ձեռագրերի էջակալման, ցուցակագրման, բատ բովանդակության թեմատիկ ցուցակներ պատրաստելու, հազարավոր փաստաթղթեր կարգի բերելու, համարակալելու և մեկ առ մեկ նկարագրելու համար՝ մի գործ, որպիսին մինչև այժմ չի կատարված ԽՍՀՄ և ոչ մի արխիվում: Ամենուրեք նկարագրված են ոչ թե առանձին փաստաթղթերը, այլ հարյուրավոր վավերագրեր պարունակող գործերը միայն:

Կտրվելով աշխատանքից և մեկնելով ռազմաճակատ, նրանք անհանգրստացել են իրենց աշխատանքի հետագա ընթացքի համար: Այդ անհանգստությունն է պատճառ դարձել մի բացառիկ փաստաթղթի ստեղծման, որը դուրս է եկել Մատենադարանի լավագույն աշխատակիցներից մեկի, արխիվային բաժնի վարիչ Հարություն Աբրահամյանի գրչի տակից:

Պատերազմի սկզբի օրերին, բանակ գնալուց առաջ Հ. Աբրահամյանը կազմել է մի գրություն հետևյալ վերնագրով. «Մի քանի տեղեկություններ և պատվերներ ինձանից հետո արխիվում աշխատող բնակիչներին»¹⁷:

Ընդհատվել էր նրա լարված աշխատանքը սինոզի, կաթողիկոսական դիվանի և անհատական արխիվների դասավորման ու ցուցակագրման ժամանակ և նա մտահոգված էր գործի շարունակության և հաջող ավարտի համար, ուստի կես առ կես թվարկում է այն ամենը, ինչ պետք է անել իրենից

16 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 76, էջ 1—2:

17 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 2ա—գ:

հետո աշխատողները, նույնիսկ նշում, թե որտե՞ղ են դրված գրանցման մատյանները և քարտերը: Հետո իր գրածը մեքենագրել է ավելի 3 օրինակ, դրել ամսաթիվը՝ 10 հուլիսի 1941 թ., ստորագրել ու հանձնել Մատենագարանին:

Նա կարծես զգում էր, որ այլևս չի վերադառնալու Մատենագարան: Եվ իրոք, Հ. Աբրահամյանը, որի պատրաստած Կալվածագրերի և տնտեսական գործարքների վերաբերյալ փաստաթղթերի ժողովածուն լույս տեսավ 1941 թ., զոհվեց պատերազմում: Եվ հիմա նրա թողած այդ պատվերները կարծիք կտակի ուժ են ստացել և սլատփերում են իրենից հետո աշխատող բոլոր բնկերներին բարեխիղճ, սրտացավ մոտեցում ունենալ հանձնարարված գործին և մեծ սեր տածել մեր նախնիներից մնացած գրավոր հուշարձանների նկատմամբ: Ցավալի է, որ այս ոչ սովորական գրությունը մինչև այժմ մնացել է ստվերի մեջ: Մինչդեռ այդ փաստաթղթի և հայրենիքի պաշտպանության համար իր կյանքը զոհաբերած նրա հեղինակի մասին պետք է իմանան բոլորը:

1941 թվականին Մատենագարանի գիտական խորհուրդն ունեցել է երկու նիստ: Առաջինը հունվարի 10-ին, երկրորդը հունիսի 18-ին: Այս նիստում որոշվեց հրատարակել «Պատմութիւն Տարօնոյ» երկը և միջնադարյան տաղերգուների գործերի թեմատիկ ցուցակը: Անհրաժեշտ համարվեց հրատարակության պատրաստել ձեռագրերի համառոտ ցուցակը և կազմել թեմատիկ այլ ցուցակներ: Պատերազմը, որ սկսվեց երկրորդ նիստից շորս օր անց, իր ուղղումները մտցրեց Մատենագարանի աշխատանքային ծրագրերի մեջ, բայց ինչպես հետո կտեսնենք, այնուամենայնիվ Տարոնի պատմությունը հաջողվեց հրատարակել և մեծ աշխատանք տարվեց թեմատիկ ցուցակներ ստեղծելու ուղղությամբ՝ մի շատ կարևոր գործ, որը դյուրացրեց և շարունակում է դյուրացնել ձեռագրերի ուսումնասիրության ուղղությամբ տարվող աշխատանքները:

1942 թվականի սեպտեմբերին, երբ թշնամին գտնվում էր Կովկասյան լեռներում և վտանգ կար, որ Երևանն էլ կենթարկվի ումբակոծության, որոշվում է ձեռագրերով ու փաստաթղթերով լեցուն սնդուկները տեղափոխել շենքի ներքնահարկը: Կազմվում է հինգ հոգուց բաղկացած փոխադրման հանձնաժողով, ղիրեկտորը ստորագրում է № 38 հրամանը, որով ամենաբծախրնդիր կերպով որոշվում է փոխադրումը ապահով ձևով կատարելու եղանակը: Դրան փաստորեն մասնակցելու էին բոլոր աշխատակիցները: Այն սկսվում է սեպտեմբերի 6-ին: Սնդուկներն իջեցվում են ներքնահարկը, որի մուտքերն ամուր փակվում են, կնքվում և հանձնվում պահակների ու հրշեջների հրակոչությանը:

Պատերազմի նախօրյակին Մատենագարանում զգալի թվով ընթերցողներ էին լինում: 1940 թ. մարտի 11-ից մինչև 1941 թ. մարտի 28-ը ընթերցման համար տրվել են 3728 ձեռագրեր, որոնցից դրսի ընթերցողներին՝ 2638, աշխատակիցներին՝ 1190 ձեռագրեր¹⁸: Պատերազմը սկսվելուց անմիջապես հետո, ինչպես վերը նշեցինք, ձեռագրերի ընթերցումն արգելվեց, շնայած դրան, գիտական աշխատանքը շարունակվում էր: Դիրեկտորը 1943 թ. հունվարի 16-ի № 6 հրամանով կարգադրում է կազմել հանձնաժողով՝ ձե-

18 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 98:

ուսանողների հիշատակարանները հրատարակության պատրաստելու համար: Հանձնաժողովի մեջ են եղել Գ. Աբովը (նախագահ), Ա. Աբրահամյանը, Ե. Տեր-Մինասյանը և Ռ. Տիտանյանը (քարտուղար): Հանձնաժողովը պետք է ձեռագրերի արդեն արտագրված հիշատակարաններից ընտրեր ու հրատարակության պատրաստեր կարևորագույն հիշատակարանները. «Պատերազմի պատճառով զրկված լինելով հիշատակարանները բնագրերի հետ համեմատելու աշխատանքից, վերջինս հետաձգվում է մինչև համապատասխան պայմանների ստեղծումը»¹⁹:

Քանի որ գիտական խորհրդի անդամներից մի քանիսը բանակ էին գնացել, Մատենադարանի դիրեկտորը գիմուժ է ՀԿ(Բ)Պ կենտկոմի քարտուղար Ս. Կ. Կարապետյանին և խնդրում գիտական խորհուրդ հաստատել հետևյալ կազմով.

- | | |
|------------------|--------------------------------|
| 1. Կարապետյան Ս. | 8. Երեմյան Ս. |
| 2. Աղբալյան Գ. | 9. Սարգսյան Խ. |
| 3. Օրբելի Հ. | 10. Տեր-Ավետիսյան Ս. |
| 4. Մանանդյան Հ. | 11. Ազատյան Վ. |
| 5. Արեղյան Մ. | 12. Աբուլաձե Ի. |
| 6. Աբով Գ. | 13. Սիմյոնով Լ. |
| 7. Լեոնյան Գ. | 14. Իսահակյան Ա. ²⁰ |

Բնական է, որ պատերազմի պատճառով գրսից եկող ընթերցողներ էլ չկային, միայն մի անգամ՝ 1943 թ. հոկտեմբերի 9-ին Մոսկվայից ստացվեց հայտնի ասորագետ Մ. Պիգուլևսկայայի նամակը, որով նա հայտնում էր, թե ակադ. Մառից ժամանակին ինքը տեղեկացել է, որ Մատենադարանում կան ասորերեն ձեռագրեր ու պատասխիկներ: Նա խնդրում է միջնորդել ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահությանը, որպեսզի իրեն երկու ամսով զործուղեն Երևան, քանի որ ինքն արդեն հրատարակել է Մոսկվայի ու Լենինգրադի ասորերեն ձեռագրերի ցուցակը և այժմ կամենում է ուսումնասիրել Մատենադարանի ասորերեն ձեռագրերը²¹: Ձեռագրերն արդեն փակված էին սնդուկներում և դադարեցված էր նրանց օգտագործումը, պետք է ենթադրել, որ Մ. Պիգուլևսկայային ուղարկվել է բացասական պատասխան:

1943 թվականի հունվարի 14-ին Մատենադարանի դիրեկտոր Գ. Աբովը մեկ ամսով ուղարկվում է ռազմաճակատ: Այդ կապակցությամբ արված № 2 հրամանով (13/1 1943 թ.) նա շենքի պահպանության հսկողությունը դնում է Գ. Միրբայելյանի վրա և կարգադրում ուժեղացնել հսկողությունը²²:

Մատենադարանի դիրեկտորն, ըստ երևույթին, ռազմաճակատ էր մեկնել հայ գրողների և մշակույթի գործիչների պատվիրակության կազմում, որը առաջադրանք ուներ հանդիպումներ ունենալ ռազմաճակատի հայ մարտիկների ու հրամանատարների հետ, հասցնել նրանց հայ ժողովրդի պահանջը՝ ուժեղացնել ատելի թշնամուն երկրից դուրս վճռելու և վերջնականապես

19 Նույն տեղում, թղթ. 81, վավ. 38ա, նաև թղթ. 80, վավ. 111:

20 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 103:

21 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 116բ:

22 Թղթ. 80, վավ. 113:

չախջախելու գործը: Մատենագրարանի դիրեկտորին այդ պատվիրակության հետ ճակատ ուղարկելը վկայում է այն մեծ կարևորության մասին, որ տրրվում էր Մատենագրարանին թե մեր ժողովրդի, և թե կառավարության կողմից: Մեկ ուրիշ անգամ էլ՝ 1945 թ. սկզբներին Գ. Աբովը գործուղվում է Ղրիմ, դարձյալ հայ զինվորների հետ հանդիպումներ ունենալու համար:

Այն բանից հետո, երբ խորհրդային բանակը չախջախիչ հարվածներ հասցրեց գերմանական զորքերին, վոնդեց նրանց երկրի սահմաններից, ՀԿ(Բ)Պ կենտկոմի բյուրոն 1944 թ. հուլիսի 12-ի որոշմամբ Մատենագրարանի դիրեկտորին առաջարկեց մեկ ամսվա ընթացքում ձեռագրերը հանել սնշուկների միջից և տեղավորել դարակներում: Դահլիճում կատարել ախտահանում, ապահովել համապատասխան ջերմություն: Միաժամանակ առաջարկվում է կազմակերպել քիմիական լաբորատորիա՝ ուսումնասիրելու ձեռագրերի վիճակը և մշակել դրանք հիվանդություններից զերծ պահող և բուժող միջոցներ: Մինչև 1944 թ. նոյեմբերի 1-ը անցկացնել ձեռագրերի, պատասխանների, արխիվային նյութերի և տպագիր գրքերի ցուցակագրում, որի հիման վրա կազմել նոր գույքամատյաններ, իսկ եղածները մուծել հին ցուցակների ֆոնդը: Կենտկոմի բյուրոյի որոշման մեջ ասվում էր, որ մինչև 1945 թ. հունվարի 1-ը պետք է ավարտել արխիվային բոլոր փաստաթղթերի մշակումը և նույն թվականին հրատարակության պատրաստել ձեռագրացուցակը, կազմակերպել ֆոտոաշխատանոց և կատարել ունիկալ գրքերի լուսանկարահանում, ընդարձակել վերանորոգման-կազմարարական բաժինը և 1944—1945 թթ. կազմել բոլոր շկազմված ձեռագրերը, համապատասխան պայմաններ ստեղծել գիտական աշխատակիցների կողմից ձեռագրերի ավելի լայն օգտավորման համար²³:

Կենտկոմի բյուրոն ՀԽՍՀ ժողկոմսովետին հանձնարարում է.

ա) վերանայել Մատենագրարանի հաստիքները և հասցնել դրանք 1940 թ. մակարդակին:

բ) Ապահովել Մատենագրարանի և Հանրային գրադարանի համար էլեկտրական վառարանների, սարքավորումների և վառելիքի բաց թողումը 1944—45 թթ. ձմռանը:

գ) Խնդրել ԽՍՀՄ արտաքին առևտրի ժողկոմատին արտասահմանից Մատենագրարանի համար գնելու հատուկ լուսանկարչական գործիք և ժապավեններ՝ ձեռագրերը նկարահանելու համար:

դ) Հաստատել ձեռագրերից, պատասխաններից և այլ նյութերից օգտվելու կարգը²⁴:

Պատերազմական պայմաններում այսպիսի որոշման ընդունումը վկայում է այն մեծ հոգատարության մասին, որ ուներ Հայաստանի ղեկավարությունը մեր ժողովրդի հոգևոր գանձերի պահպանման նկատմամբ: Մատենագրարանի փոքրաթիվ անձնակազմը (այն ժամանակ մեզ մոտ աշխատում էր ընդամենը 14 մարդ) գործի է անցնում կատարելու կենտրոնական կոմիտեի բյուրոյի որոշումը: Դիրեկտոր Գ. Աբովը 1944 թ. օգոստոսի 22-ին դիմում է ժողկոմսովետի նախագահի տեղակալ Ս. Կարապետյանին՝ խնդրելով 250 սընդուկները վեր բարձրացնելու, դատարկելու, դահլիճը մաքրելու, ձեռագրերը

²³ Նույն տեղում, թղթ. 80, վավ. 22:

²⁴ Թղթ. 80, վավ. 22:

փոշեհանելու համար կատարել բյուջեում չնախատեսված 4300 ո. ծախս: Միաժամանակ խնդրում է թույլ տալ Մատենադարանի բյուջեից 5000 ո. փոխանցել Հանրային գրադարանի վարչությանը՝ շենքի շեռույցման սխառնմի նորոգումներ կատարելու համար²⁵:

Կենտրոնի բյուրոյի որոշման համաձայն, Մատենադարանում մշակվում է հրահանգ Մատենադարանի ձեռագրերից և արխիվային նյութերից օգտվելու կարգի մասին և 1944 թ. օգոստոսին ներկայացվում ՀեՍՀ ժողկոմսովետին: Մշակվում և ժողկոմսովետին է ներկայացվում նաև Մատենադարանի կանոնադրությունը:

1922 թ. հետո, երբ ձեռագրային ֆոնդը Մոսկվայից վերադարձվեց էջմիածին, անհրաժեշտություն առաջացավ Մատենադարանի համար կառուցելու նոր շենք: Շենքի անհրաժեշտությունը ավելի ակնհայտ դարձավ Երեվան փոխադրվելուց հետո: Կառավարությունը նախատեսում էր Մատենադարանի համար կառուցել հատուկ շենք:

Անվանի ճարտարապետ Մարկ Գրիգորյանին հանձնարարվում է կազմել Մատենադարանի շենքի նախագիծը: Չնայած պատերազմական տարիների հազար ու մի դժվարություններին, նախագծման գործն առաջ էր դնում: 1943 թ. ապրիլի 29-ին ժողկոմսովետի նախագահի տեղակալ Գ. Աղբալյանին՝ Գ. Աբովի ուղղած մի գրությունից տեղեկանում ենք, որ Մատենադարանի նոր շենքի նախագիծն ավարտված է և պետք է կառուցման վայրում կատարվեն երկրաբանական ուսումնասիրություններ²⁶:

Այս գրության հանգիստ, գործնական տոնը մի պահ մոռացնել է տալիս ժամանակը: Նորից ուշադրություն դարձնենք գրության ստեղծման օրվան՝ 1943 թ. ապրիլի 29-ը: Հիտլերյան ֆաշիզմի վերջնական ջախջախմանը շատ ժամանակ կար: Թշնամին դեռ շատ ուժեղ էր: Խորհրդային զորքերի գեմ կռվում էին հինգ միլիոնից ավելի մինչև ատամները զինված գերմանական զորքերը, բայց մեր մարդիկ հավատում էին հաղթանակին: Այս էր պատճառը, որ սկսվեցին գործնական աշխատանքներ Մատենադարանի նոր շենքի կառուցման համար: Միաժամանակ ընթանում էին շենքի նախագծի քննարկումներ:

Մատենադարանի արխիվում պահվում է գրադարանային գործի ճանաչված մասնագետ, բանասեր Արամ Բաբայանի գրավոր կարծիքը Մատենադարանի շենքի մասին, թվագրված 15 փետրվարի 1945 թ.: Այն վերնագրված է. «Մատենադարանի շենքի նախագիծը գրադարանային շենքի տեսակետից»²⁷: Ցավով պետք է նշել, որ Ա. Բաբայանի շատ ճիշտ արված դիտողություններն այնքան էլ հաշվի չառնվեցին շենքի նախագծի հետագա սրբազրությունների ժամանակ: Ա. Բաբայանն, օրինակ, գրում է. «Մատենադարանի նոր շենքի նախագիծը գրադարանային շենքի պահանջների և հարմարությունների տեսակետից ունենալով որոշ առավելություններ... ունի նաև մի շարք թերություններ և բացեր: Այս վերջին հանգամանքը հետևանք է մասամբ առաջադրանքի ոչ լրիվ և բավարար լինելուն, մասամբ էլ, ըստ երեվույթին, մասնագիտական սխառնմատիկ կոնսուլտացիայի բացակայության»:

25 Թղթ. 80, վավ. 123:

26 Թղթ. 80, վավ. 115:

27 Թղթ. 81, վավ. 8:

Նա գրում է, թե «նախագծում շի նախատեսված նաև հաճախորդների համար հանդերձարան, հաճախորդների հանգստի սրահ, դիրեկտորի գիտ. գծով տեղակալի, գիտական քարտուղարի համար առանձնասենյակներ և այլն»: Գրքերի մշակման բաժինն ըստ նախագծի եղել է ներքնահարկում, բայց Ա. Բաբայանի քննադատությունն օգնեց գործին և այն բարձրացվեց վեր, բայց, ցավոք, այդպես էլ չուժե՛լած մնաց Ա. Բաբայանի նկատած մի կարևոր վրիպում՝ «Գրադարանային շենքի ներքին պլանավորման կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում,—գրում է նա,—վայրի ճիշտ ընտրությունը, Այս հարցը միանգամայն աչքաթող է արված նախագծում: Չի իմացվում, թե ընթերցասրահները և կարինետները, գրքերը որտեղի՞ց և ի՞նչ կերպ են ստացվում գրապահոցից»²⁸: Այս հարցը մինչև հիմա էլ մտահոգում է Մատենադարանի աշխատակիցներին:

Շատ կարևոր էր շենքի նախագծի քննադատությունը ճարտարապետական առումով: Այն հանձնարարված է եղել Հայաստանի ճարտարապետների միության պատասխանատու քարտուղար, երիտասարդ շնորհալի ճարտարապետ Աշոտ Աշոտի Ասատրյանին (Աստվածատրյանին) (1913—1947 թթ.), որը ծանր հիվանդության պատճառով ազատվել էր բանակից և մահացավ հաղթանակից երկու տարի անց՝ 1947 թ. հասցնելով նախագծել և կառուցել մի շարք շենքեր, ինչպես և Երևանը էջմիածնի հետ կապող «Հաղթանակ» կամուրջը:

Նրա կարծիքը վերնագրված է այսպես. «Քննադատություն երևանում կառուցվելիք Մատենադարանի շենքի էսքիզային նախագծի մասին»: Այն բաղկացած է 23 մեքենագիր էջերից և ունի հետևյալ բաժինները. 1. Տեղի ընտրությունը, 2. Գլխավոր հատակագծի լուծումը, 3. Ընտրված կոմպոզիցիան, 4. Հատակագծի լուծումը, 5. Ինտերյերներ, 6. Ծակատներ, 7. Ընդհանուր եզրակացություններ:

Աշոտ Ասատրյանը գտնում էր, որ հեղինակի մոտեցումը նախագծին հիմնականում եղել է ճիշտ և որ ներկայացված նախագծում խնդիրների մեծ մասը գտել են իրենց լուծումը: «Սակայն նախագիծը պետք է ապրի իր երկրորդ էտապը, այն է՝ վերամշակման և նշված թերությունների վերացման էտապը»:

Թերերնք Ա. Ասատրյանի կատարած դիտողություններից մի քանիսը.

1. Վերամշակել գլխավոր հատակագիծն այնպես, որ շենքն ունենա բակ կամ փոքրիկ հրապարակ տնտեսական կարիքների համար... վերացնելով կամ տեղափոխելով շենքը բոլորող խճուղին:

2. Շենքից դուրս բերել կաթսայատուներ:

3. Նախասրահին կից նախագծել հանդերձարան հաճախորդների համար:

4. Խմբավորել ողջ ազմինիստրացիան տնտեսական քնույթի սենյակներում մի հարկում, միմյանց կից:

5. Բավարարել անհրաժեշտ լուսավորությամբ ընթերցարանը:

6. Խուսափել միջանցիկ սենյակներից 3-րդ և 4-րդ հարկերում:

7. Շենքի կոմպոզիցիան զարգացնել՝ ստեղծելով ծավալային աշխուժություն և հարուստ սիլուետ:

²⁸ Նույն տեղում, թղթ. 81, վավ. 8:

8. Զարգացնելով կողքի գալերեաները և կապելով այն շենքի հետ, վերամշակել ճակատն այնպես, որ ստեղծվի միակերպ ծավալային լուծում, հիմք ընդունելով մուտքի պորտալը: Վերանախագծել կողային ճակատները:

9. Մշակել Սահակ և Մեսրոպ խմբաքանդակի ֆոնը ծառայող պատի հարթութունը:

Նա գտնում է, որ «Այս շենքը գտնվելով Ստալինյան պողոտայի առանցքում, դիտվելու է պողոտայի ողջ երկարությամբ ծայրի ի ծայր, հետևաբար կոմպոզիցիոն լուծման ժամանակ հեղինակը պետք է նկատի ունենար մի հիմնական հանգամանք, այն է՝ շենքին տալ այնպիսի ծավալային լուծում, որ նա հետաքրքիր լիներ դիտման բոլոր հեռավորություններից, որպեսզի դիտողը գտնվելով պողոտայի հեռավոր ծայրում, սկզբում գրավվեր նրա սիլուետով, ավելի մոտենալով հետաքրքրվեր նրա ծավալային լուծմամբ, իսկ բոլորովին մոտենալով շենքին, գրավվեր նրա ֆրագմենտներով, գետալներով և այլն»:

Անհրաժեշտ է նշել, որ ճարտարապետ Աշոտ Ասատրյանի դիտողութունների մեծ մասը հաշվի է առնվել նախագծով ճարտարապետի կողմից և օգտագործվել նախագծի հետագա մշակումների ժամանակ:

Երբ թշնամին լիովին վճռվեց Կովկասյան լեռներից, գիտական կյանքն աշխուժացավ Մատենադարանում: Դրա լավագույն ասպացույցը 1943 թ. հոկտեմբերի 26-ից մինչև 30-ը հինգ օր տևողությամբ կայացած Մատենադարանի գիտական երկրորդ նստաշրջանն է, որին զեկուցումներով մասնակցում էին 14 գիտնականներ: Նախ ասենք, որ նստաշրջանը շատ լավ էր կազմակերպվել: 300 տպաքանակով լույս էր ընծայվել նրա ծրագիրը հայերեն և ռուսերեն²⁰: Նիստերը տեղի էին ունենում Հանրային գրադարանի դահլիճում: Զեկուցումներով հանդես եկան պատմական գիտ. դոկտոր Ա. Աբրահամյանը (Հովհ. Սոփեստոսի նորահայտ աշխատությունները), պատմ. գիտ. թեկնածու Ս. Երեմյանը (Մահկանաբերդի Արծրունիները), պրոֆ. Ա. Տեր-Պողոսյանը (Լուսնի տեսանելի շարժումը ըստ հայկական գրչագրերի և նրա արդյունքների նշանակությունը այսօրվա համար), փիլ. գիտ. թեկնածու Վ. Զալոյանը (Հովհան Որոտնեցու տրամաբանության վերաբերյալ անտիպ գրչագիր աշխատություններ), ասպիրանտ Լ. Խաչիկյանը (Զենոն Իմաստասերի «Յաղագս բնութեան» աշխատության հայկական թարգմանությունը), պրոֆ. Լ. Հովհաննիսյանը (Հայ բժշկական գրականությունը հունական ազդեցությունների ծաղկման շրջանում): Զեկուցումներով հանդես եկան նաև Գ. Պետրոսյանը, դեղագործ Հ. Սեպետճյանը, քիմիկոս Տաղանջյանը, ինժեներ-քիմիկոս Տ. Մխիթարյանը, քիմիկոս Ա. Հարությունյանը, բանասեր Ա. Առաքելյանը:

Անհրաժեշտ գտանք թվարկել այս նստաշրջանի ժամանակ հանդես եկած գիտնականներին ու նրանցից ոմանց թեմաները, ցույց տալու համար, որ պատերազմի ժանր պայմաններում Մատենադարանի շուրջը համախմբված «խանութանները» ձեռագրերի ուսումնասիրությամբ շարունակել են աշխատել իրենց թեմաների վրա, որոնք հիմք հանդիսացան հետագայում ստեղծելու բազմաթիվ ուշագրավ հետազոտություններ:

²⁰ Նույն տեղում, թղթ. 80, վավ. 116, էջ 26—33:

Այս ժամանակ էր, որ ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Մատենադարանի գիտական խորհուրդը 1943 թ. նոյեմբերի 17-ին կայացած նիստում, որին մասնակցել ևս նախագահ Գ. Աբովը, քարտուղար Լ. Խաչիկյանը, պրոֆ. Հ. Աճառյանը, Գ. Գեմիրճյանը, դոկտ. Ա. Աբրահամյանը և Խորեն Սարգսյանը, որոշում կայացրեց ներկայացնել պրոֆեսորներ՝ Մանուկ Աբեղյանի, Լևոն Հովհաննիսյանի թեկնածությունը՝ Հայկ. ԽՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամության համար³⁰:

Չնայած պատերազմական պայմանների հարուցած բազմաթիվ դժվարություններին, Մատենադարանի գիտնականները կարողացան 1941—1945 թթ. լույս ընծայել մի շարք աշխատություններ, որոնք պատրաստ էին հրատարակության դեռևս 1941 թ.: Թվարկենք այդ գրքերը.

1. Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1422, 1564, 1614 և 1655—1839 թթ.), պրակ 1, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով կազմեց. Հար. Աբրահամյան, Երևան, 1941, պատ. խմբագիր Բ. Հարությունյան, 13 տպ. մամուլ, 190 էջ, տիրաժ 1000, ստորագրված է տպագրության 22/7—1941 թ.:

2. «Գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, հանձնված է արտադրության 1941 թ., ստորագրված է տպագրության 1942 թ. ապրիլի 20-ին, 251 էջ, 22 մամուլ, տիրաժ 1000:

3. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջաբանով պատմական գիտությունների թեկնածու Ա. Աբրահամյանի, Երևան, 1941, 183 մամուլ, 300 էջ, ստորագրված է տպագրության 1942 թ. օգոստոսի 25-ին:

4. Հարությունյան Ա. Խ., Ներկերի և թանաքների գործածությունը հին հայկական ձեռագրերում, 1941, 99 էջ:

5. Մելիք Փարսաղանյան Խ., Մխիթար Հերացի (ուսեսերեն), 1941, 30 էջ:

6. Աբրահամյան Աշոտ, Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի, 1942:

7. Աբրահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, ուսումնասիրություն, Երևան, 1944, պատ. խմբ. Հ. Աճառյան:

Արտադրություն էր իջեցվել և պետք է տպագրվեր նաև «Գիտական նյութերի ժողովածուի» երկրորդ հատորը, որը սակայն լույս տեսավ պատերազմի ավարտից հինգ տարի անց՝ 1950 թվականին:

Պատերազմի տարիներին իրականացված կարևոր աշխատանքներից է եղել նաև Մատենադարանի ձեռագիր պատառիկների ֆոնդի ստուգումը: Այն կատարել են գիտական աշխատակիցներ Լևոն Խաչիկյանը և Վիգեն Խեչումյանը: Այդ կասկակցությամբ 1944 թ. օգոստոսի 23-ին կազմվել է համապատասխան արձանագրություն, որի մեջ գրանցվել են նաև պատառիկների ֆոնդի կարգավորման և վերադասավորման վերաբերյալ մի շարք օգտակար առաջարկություններ:

Ինչպես թիկունքում մնացած այլ անձանց, այնպես էլ Մատենադարանի փոքրաթիվ անձնակազմի համար պատերազմի տարիներին կենցաղային պայմանները շատ ծանր էին: Չնայած այն բանին, որ պաշտոնական բոլոր փաստաթղթերում Մատենադարանը համարվել է գիտական հաստատություն,

բայց նրա աշխատակիցները վարձատրվել են որպես սովորական գրադարանային աշխատողներ: Այդպես էլ տրվել են նրանց թե հացի, և թե մթերքների բաժինները: Գիրեկտորի այս կապակցությամբ տված դիմումներն ու բողոքները արդյունք չեն տվել: Այլ հիմնարկությունների նման Մատենադարանն էլ պատերազմի սկզբում վերագաս մարմիններին խնդրանք էր ներկայացրել աշխատակիցներին, ինչպես և բանակ զորակոչվածների ընտանիքներին մշակովի հողով ապահովելու մասին: Աշխատանքի պայմանները դժվար էին. հաճախ ամիսներով էլեկտրական հոսանք չէր լինում, չէր գործում ջեռուցման սիստեմը, մարդիկ աշխատում էին կիսաքաղց վիճակում, հնամաշ զգեստներով, բայց բոտ ամենայնի կատարում էին իրենց պարտականությունները: Զգացվում էր բացառապես ամեն բանի պակաս: Որպեսզի ավելի հստակ պատկերացնեք վիճակը, մեջ կբերենք միայն 1942 թ. նոյեմբերի 2-ին կազմված մի գրություն, որի հեղինակը Գրողների միության նախագահության անդամ, բանաստեղծ Գեղամ Սարյանն է: «Մատենադարանի գիրեկտորին: Խնդրում ենք կարգադրել բաց թողնելու ժամանակավորապես երկու հատ լամպոչկա Գրողների միության կարիքների համար»³¹:

Այս պայմաններում ամենակարևոր հարցը ձեռագրերը հատկապես ձեռնարկների և միջին շատ բնական ջերմաստիճանում պահելն էր և Մատենադարանի ղեկավարությունն անում էր ամեն ինչ, ապահովելու շենքի ջեռուցումը, որը շատ դժվարին խնդիր էր:

Պատերազմի տարիներին շրջապահի ձեռագրերի հոսքը դեպի Մատենադարան: 1941—1945 թթ. ընթացքում մեր ձեռագրային ֆոնդն ավելացել է 197 միավորով: Դրանցից 35-ը ձեռք են բերվել 1941 թ., 26-ը՝ 1942 թ., 1-ը՝ 1943 թ. (այդ տեսակետից 1943 թ. ամենամահաջող տարին էր), 125-ը՝ 1944 թ. (դրանցից 91-ը առանձնացված են պատասխիկների ֆոնդից), 10-ը՝ 1945 թ.:

Վերջում պետք է խոսենք պատերազմի ժամանակ և պատերազմի հետևանքով ստեղծված հայերեն մի ձեռագիր մատյանի մասին, որն արտաքին տեսքով շատ է նմանվում մեր միջնադարյան ձեռագրերին: Այդ մատյանում գրանցված են ֆաշիստական գերության մեջ գրված շափածո և արձակ սքանչելի գործեր, որոնց հեղինակը իր գիտակցական ողջ կյանքը հայ մշակույթի և հայոց պատմության սկզբնաղբյուրների ուսումնասիրմանը նվիրած, Մատենադարանի աշխատակից Ասատուր Մնացականյանն է:

Թեոդոսիայի մոտակայքում գերի ընկնելով գերմանացիների ձեռքը, Ա. Մնացականյանը ռազմագերիների մի մեծ խմբի մեջ տարվել է ողջ Ղրիմով, ապա Ուկրաինայի հարավով, Մոլդավիայով դեպի Ռումինիա: Զարհուրելի պայմաններում հայտնված, թերսնումից և տառապանքներից հյուծված, հիվանդ, մի քանի անգամ մահվան եզրին հասած մեր Ասատուրը, որն արդեն ճանաչված բանաստեղծ էր Ասատուր Շեմս անվամբ, շկորցրեց հոգու արիությունը, հաղթանակի նկատմամբ պայծառ հավատը և նույնիսկ հումորի զգացումը, շատանվեց նրա սերը հայրենի երկրի, իր ծննդավայրի և իրեն այնքան հոգևոր սնունդ տված Մատենադարանի նկատմամբ: Դրա լավագույն վկայությունը նրա այդ մատյանն է, որը կրում է «Բանաստեղծություններ՝ գրված փշալարի ճանկերում» խորագիրը և ունի հետևյալ բնաբանը.

31 Թղթ. 80, վավ. 90, էջ 90:

«Վայրի հաուուկ մի բունած, բերած
Գրած զինք ի նեղ զնգան...»:

«Ձեռագիր այս մատյանի մեծագույն արժանիքը անկեղծությունն է,— գրել է բանաստեղծ Վահագն Դավթյանը «Գրական թերթում» զետեղված «Տառապանքի ու հրազանքի մատյան» հոդվածում,— թերթում ես մատյանի մերթ վճիտ հրազանքով, մերթ առօրյա մանրամասների ծանրություններ, մերթ ներբողական բարձրաձև, մերթ մտերմական քնարականություններ շնչող էջերը և պատկերացնում այն միջավայրը, հոգեկան այն տագնապները, որոնց մեջ ապրել ու տոկացել են մի խումբ հայ զինվորներ:

Եվ կարդալով մատյանը շես կարող կրկին շխորհել, թե ինչպիսի կենսական ուժ է կարոտը, հրազանքը, սերը, շես կարող շհամոզվել, որ հենց դրանց շնորհիվ է փշալարերի ճանկերից փրկվել հեղինակը, որ նորից մարտընչի, վերագառնա հայրենիք, վերագառնա իր այնքան սիրած Մատենադարանը»:

Ձեռագիրն ունի նաև հիշատակարան, որը ձևով այնքան նման է միջնադարյան մեր գրիչների թողած հիշատակարաններին.

«Փառք ամենազոր հույսին, որ մայրամուտից առաջ կեսօր է խոստանում...»

Արդ, ես, տկար գրչակս, ի մի հավաքելով գերության ճամփաներին, ճամբարներում ու հիվանդանոցներում հորինած արձակ ու շափածո այս թոթովանքներս, ավարտեցի «Գրքույկս սեավ» ի թվականի մերում ՌՅՂԲ-ին և սեպտեմբերի Լ-ին Գալաֆաթ կոչվող քաղաքի մոտ գտնվող ռազմագերիների ճամբարում:

Ով ծանոթ ու անծանոթ բնկերներ, եթե հանդիպեք երբևէ այս գրքույկին որևէ տեղ, բարի հիշեցեք բնկերներիցս Գուրգենին, որ գրելու թուղթ հայթայթեց, Գևորգին, որ թանաքս փոխեց, Նորայրին, որ գրչածայր տվեց, Ազատին, որ սոսինձ շնորհեց, Աշոտին, որ հաստ թել բնծայեց, Վելիխանին, որ բաշխեց բարակ թել, Հրայրին, որ ստվարաթուղթ ու կազմի շոր նվիրեց, Մուկուչին, որ գունավոր թղթով օժանդակեց, Արտաշեսին, որ գանակ զիջեց և Արմոյին, մեր շար ու բարի Արմոյին, որ կազմեց... Հետո միայն ինձ հիշեք, ոսկեվազցի Ասատուրիս...»:

Հետագայում Ասատուր Մնացականյանը ազատվեց գերությունից, կրկին զենքը ձեռքն առավ և մասնակցեց պատերազմին: Նա եղել է Բուդապեշտը գրոհող մեր զորքերի մեջ որպես դասակի հրամանատար և մի քանի պարզեններից բացի ուներ նաև «Բուդապեշտի գրավման համար» մեդալ:

Ահա այսպես է տառապել, կռվել ու հաղթանակել Մատենադարանի այն ժամանակվա շարքային աշխատակիցներից, իսկ հետագայում ամենաարդյունավետ գիտնականներից մեկը, բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ասատուր Մնացականյանը:

Պատերազմի հաղթական ավարտից ուղիղ երկու ամիս անց Մատենադարան է գալիս նշանավոր ազդրյուրագետ-արվեստարան Գարեգին Հովսեփյանը, որը քաջատեղյակ էր Մատենադարանի գանձերին: Կրկին աշխատելով ձեռագրատանը, ծանոթանալով բոլոր կարգի նորություններին, նա բարձր գնահատական է տալիս Մատենադարանի վերջին տարիների գործունեությանը:

«Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից,—գրել է նա,—ձեռագիրների ժողովածուներն են: Ուրախ ենք, որ այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է հայրենիքում: Մեր տասը տարվա բացակայության ընթացքում ոչ միայն ճոխացել է մեծ շափերով պետական դրադարանի ժողովածուն, այլև գիտության պահանջների համեմատ ցուցակների մշակմամբ ըստ բովանդակության, ըստ հեղինակների, թվականների և այլն, ամենամեծ դյուրություն է ստեղծված գիտական աշխատավորների համար իրենց ուսումնասիրությունների նյութերը հավաքել ժամանակի մեծ խնայողությամբ: Կարգավորյալ մատենադարաններն ու դրադարանները, թանգարանները մշակույթի, արվեստի և գիտության զարգացման անհրաժեշտ պայմաններն են: Եվ այդ պայմաններն ստեղծված են այստեղ ընդարձակ շափերով»³²:

В. Р. ГРИГОРЯН

МАТЕНАДАРАН В ГОДЫ ВОЙНЫ 1941—1945 гг.

Резюме

На основе архивных документов в статье делается попытка изложить историю Матенадарана в годы войны. В начальный период войны большинство сотрудников Матенадарана было мобилизовано в ряды Советской армии и честно выполнило свой патриотический долг. Силами оставшихся в тылу малочисленных сотрудников руководство Матенадарана (директор проф. Г. Абов) сумело осуществить надлежащий уход за рукописями и их надежное хранение. Не была полностью прервана научно-исследовательская работа, продолжалось составление тематических каталогов, описание архивных документов и изучение памятных записей манускриптов.

В течение военных лет было осуществлено издание семи научных работ, выполненных еще до войны. Несмотря на многочисленные трудности, были начаты работы по созданию и всестороннему обсуждению проекта нового здания Матенадарана, строительство которого началось после Победы.

V. R. GRIGORIAN

LE MATENADARAN AUX ANNEES DE LA SECONDE GUERRE MONDIALE

Résumé

Cet article est un essai de relater l'histoire du Maténadaran aux années de la guerre sur la base de documents d'archives. Au début de la guerre, la majorité des collaborateurs du Maténadaran furent mobili-

³² Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, № 89:

ses et accomplirent honnêtement leur devoir patriotique. Avec les quelques collaborateurs restés à l'arrière, la direction du Maténadaran (directeur, prof. G. Abov) réussit à organiser les services indispensables et à assurer la conservation des manuscrits. Les recherches ne furent pas complètement interrompues: la rédaction de catalogues thématiques, la description des documents d'archives, ainsi que l'étude des co'ophons des manuscrits continuèrent.

L'édition de sept ouvrages scientifiques rédigés avant la guerre fut aussi réalisée durant cette période. Malgré de nombreuses difficultés, on commença la conception et la discussion du projet du nouvel édifice du Maténadaran, dont la mise en chantier fut réalisé après la victoire.

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԱՃԸ 1985—1993 ԹԹ.

Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրական հավաքածուները 1985 թ. յունուարի սկզբից ի վեր (ուժ տարի եւ ինը ամսուայ ընթացքում) աճել են 541 միաւորով եւ 1993 թ. սեպտեմբերի 30-ի դրութեամբ ամփոփում են 16716 ձեռագիր:

Այսպէս.

Հավաքածուներ	Առ 31. ժբ. 1984 թ.	Առ 30. Թ. 1993 թ.	Աճը
1. Հայերեն ձեռագրեր	10927	11037	110
2. Հայերեն նոր ձեռագրեր	262	305	43
3. Հայերեն հմայիչներ	393	428	33
4. Հայերեն պատասիկներ	2039	2094	55
5. Արարատա ձեռագրեր	2092	2205	113
6. Արարատա հմայիչներ	36	39	3
7. Արարատա պատասիկներ	124	130	6
8. Այլալեզու ձեռագրեր	185	341	156
9. Այլալեզու պատասիկներ	113	137	22
Ընդամենը	15175	16716	541

Որպէս շնորհակալութեան եւ հրախտագիտութեան արտայայտութիւն, ստորեւ, այբբենական կարգով, ներկայացնում ենք 1985—1993 (մինչեւ սեպտեմբերի վերջ) թուականների ընթացքում Մաշտոցեան Մատենադարանին ձեռագրեր նուիրաբերած անձանց, հաստատութիւնների եւ նրանց նուիրած ձեռագրերի անունները (Մատենադարանում ձեռագրերի ստացած համարներով հանդերձ):

1. Աղատխանեան Յովսէփ, Վալանս, 1993 թ.—1. Աւետարան, 1329 թ., Հայ. Հմր¹ 11027:

2. Աղամալեան Արտուշ, Ավստրալիա, 1991 թ.—1. Աւետարան, ԺԵ դ., Հայ. Հմր 11016:

3. Աճէմեան Շահէ արքեպս., Երուսաղէմ, 1993 թ.—1. Աւետարան, 1337 թ., Հայ. Հմր 11025:

4. Այվազեան Անդրանիկ վ., Քամիշլի, Սիրիա, 1985 թ.—1. Յիբհ (Աստուածարանութիւն), ԺԸ դ., Արարատա ձեռ. Հմր 2099, 2. Մեկնութիւն Ղուրանի, ԺԸ դ., Արարատա ձեռ. Հմր 2100, 3. Հադիսներ (սուննա), ԺԸ դ.,

¹ Հմր անձայնաւոր համառոտամբ նկատի ունենք արեւելահայերէն համար (= արեւմրտահայերէն՝ թիւ) բառը:

Արարատառ ձեռ. Հմր 2101, 4. Քերականութիւն, ժԸ դ., Արարատառ ձեռ. Հմր 2102, 5. Թաֆսիր ուլ Կուրան (կրօնական), ժԸ դ., Արարատառ ձեռ. Հմր 2103, 6. Քերականութիւն, 1696 թ., Արարատառ ձեռ. Հմր 2104, 7. Կաուլ Ահմադ, 1604 թ., Արարատառ ձեռ. Հմր 2105, 8. Կրօնական, 1854—5 թ., Արարատառ ձեռ. Հմր 2106, 9. Աղօթագիրք, 1863 թ., Արարատառ ձեռ. Հմր 2107, 10. Քերականութիւն, 1819 թ., Արարատառ ձեռ. Հմր 2108, 11. Յիրհ (Աստուածարանութիւն), 1897 թ., Արարատառ ձեռ. Հմր 2109, 12. Ղուրան, ժԹ դ., Արար. ձեռ. Հմր 2165, 13. Քերականութիւն, ժԸ դ., Արարատառ ձեռ. Հմր 2165, 14. Քերականութիւն, 1628 թ., Արարատառ ձեռ. Հմր 2176, 15. Ժամագիրք (ասորերէն), ժԷ դ., Այլալեզու ձեռ. Հմր 194, 16. Ժամագիրք (ասորերէն՝ մասն), Ասորերէն պտակ. Հմր 20:

5. Անձաւախոյզների խումբ Հայաստանի Աշխարհագրական քնկերութեան, 1986 թ.—1. Շարակնոց, ժԳ դ., Հայ. Հմր 10965:

6. Աշճեան Մեսրոպ արքեպս, նիւ Եօրք, 1992 թ.—1. Աւետարան, ժԳ դ., Հայ. Հմր 11020:

7. Աւետումեան Յովսէփ, Լոնդոն, 1985 թ.—1. Ընտանեկան տարեգրութիւն Յովսէփայ եւ Մարկոսայ Դահրաշեանց, 1786—1862 թթ., Հայ. հիմնական Հմր 10943:

8. Բամպակեան Հրանտ, Միլան, 1989 թ.—1. Ժողովածու, ժԷ դ., Հայ. Հմր 11006, 2. Պատմութիւն ներկայի պատերազմի բնդ մէջ Ռուսիայի եւ Օսմանցուց դրանն, հար. երկրորդ, ժԸ դ. (1772-ից յետոյ), Հայ. Հմր 11007:

9. Բամպուրճեան Գէորգ, Կ. Պոլիս, 1985 թ.—1. Պատմութիւն հայ ձայնադրութեան Արիստակիսի քահանայի Հիսարլեան, 1909 թ., Հայ. նոր Հմր 263:

10. Բանդոյեան Մինաս, Ալեքսանդրիա, Եգիպտոս, 1987 թ.—1. Գիրք Եսթերի (երբայեւրէն տորա), ժԹ դ., Այլալեզու ձեռ. Հմր 195:

11. Բայրամեան Տիրուհի (Մարո), Երեւան, 1988 թ.—1 Ախտարք, ժԹ դ., Հայ. նոր Հմր 274:

12. Բելառուսի պետական գրադարան, Մինսկ, 1986 թ.—1. Ճառնտիր, 1629 թ., Հայ. Հմր 10960, 2. Սաղմոսարան, ժԷ դ., Հայ. Հմր 10961, 3. Պօղոս Սէնեբեան, Խօսակցութիւն բարոյական կամ Գիրք խօսակցութեանց, ժԸ դ., Հայ Հմր 10962:

13. Գարոյեան-Գուլումճեան Անժէլ եւ Գուլումճեան Տիգրան, Փարիզ, 1987, 1991 թթ.—1. Հմայիլ (եթովպերէն), ժԷ—ժԸ դդ., Այլալեզու ձեռ. Հմր 196, 2. Հմայիլ (եթովպերէն), Այլալեզու ձեռ. Հմր 202:

14. Գալեան Ալֆրէդ, Երեւան, 1987 թ.—1. Հէքիմարան, ժԸ դ., Հայ. Հմր 10978:

15. Գասապեան Արմէն, Հայէպ, 1989 թ.—1. Ղուրանի մեկնութիւն, 1822 թ., Արարատառ ձեռ. Հմր 2173, 2. Բառագիտութիւն, ժԸ դ., Արարատառ ձեռ. Հմր 2174:

16. Գարագոշ Արշակ, Կանն, Ֆրանսիա, 1991 թ.—1. Պատարագամտոյց (լատիներէն), ժԸ դ., Այլալեզու ձեռ. Հմր 204:

17. Գարեգին Բ. Սարգիսեան, կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս 1989 թ.—1. Կիրէղ Աղեքսանդրացի, Գիրք պարապմանց, 1691 թ., Հայ. Հմր 10998:

18. Գեորգեան Աստղիկ, Երևան, 1990 թ.—1. Զայնազրեալ հոգևոր երգ (ուտիներէն), ԺԸ դ., Լատ. պտակ. Հմր 24:
19. Գեորգեան Մինաս, Արտաշաւան գիւղ Աշտարակի, 1986 թ.—1. Հմայիլ, ԺԸ դ., Հայ. հմայիլ Հմր 405, 2. Հմայիլ, ԺԸ դ., Հայ. հմայիլ Հմր 406, 3. Հմայիլ (մասն) ԺԹ դ., Հայ. պտակ. Հմր 2058:
20. Գեորգեան Նիկոլայ Խաչիկի, Երևան, 1985 թ.—1. Հմայիլ (վրացերէն), ԺԸ դ., Այլալեզու ձև. Հմր 186:
21. Գեորգեան Տիգրան, Կահիրէ, 1987—1988 թթ.—1 Յովսէփ Ազնաւոր, Համայնագիտական բառարան ճարտարապետութեան, 1920-ականք, Հայ. նոր Հմր 268, 2. Յովսէփ Ազնաւոր, Ճարտարապետին առձեռն բառարանը՝ ֆրանսահայ, 1920-ականք, Հայ. նոր Հմր 271:
22. «Գթութիւն» բարեգործական միութիւն, 1992 թ. Երևան—տե՛ս Տէր-Պետրոսեան Լևոն:
23. Գույումճեան Տիգրան—տե՛ս Գարոյեան-Գույումճեան Անժէլ:
24. Դէմիր-Կապուլեան Անդրէ, Ռորէր եւ Աննա-Մարի, Գրենորլ, Յրանսիա, 1992 թ.—1. Գրիգորի Տաթևացոյ Գիրք հարցմանց, 1410 թ., Հայ. Հմր 11019:
25. Զաքեան Հայկ, Աթէնք, 1986 թ.—1. Սաղմոսարան, ԺԸ դ., Հայ. հիմնական Հմր 10963:
26. Եազմաճեան Արմէն, Գերմանիա, 1990 թ.—1. Տօնացոյց եւ Պարգատումար, ԺԸ դ., Հայ. Հմր 11012:
- 26ա. Երկանեան Վահան եւ Յովհաննիսեան Լևոն (դպրոցականներ), Երևան, 1988 թ.—1 Հմայիլ, 1680 թ., Հայ. հմայիլ Հմր 421:
27. Էդգարեան Յովիկ, Լոնդոն, 1985 թ.—1. Հաքիմարան, ԺԹ դ., Հայ. Հմր 10929, 2. Պատարագամատոյց, ԺԹ դ., Հայ. Հմր 10930, 3. Յակոբայ Նալեան Կտակ շարշարանաց, ԺԸ դ., Հայ. Հմր 10931, 4. Զադ-օլ-Մաադ, Հիշ. 1241 թ., Արարատառ ձև. Հմր 2094, 5. Ղուրան, Հիշ. 1271 թ., Արարատառ ձև. Հմր 2095, 6. Սահիֆէ Սաջազիէ (գրպանի աղօթագիրք), ԺԹ դ., Արարատառ ձև. հ. 2096:
28. Էջմիածնի կաթողիկոսարանի մատենադարան, Էջմիածին, 1987 թ.—1 Հմայիլ (մասն), ԺԸ դ., Հայ. պտակ., Հմր 2059:
29. Թառումեան Արտաշէս, Երևան, 1989 թ.—1. Սաղմոսարան, 1646 թ., Հայ. Հմր 11009, 2. Ժողովածու, 1676 թ., Հայ. Հմր 11010:
30. Թովմասեան Համլէտ, Կումայրի, 1986 թ.—Մաշտոց (մասն), ԺԸ դ., Հայ. պտակ. Հմր 2057:
31. Թորոսեան Պերճ եւ Նուարդ, Սան Յրանցիսկո, 1989 թ.—1. Աւետարան, ԺԸ, Հայ. Հմր 10999:
32. Լոբմակէզեան Տիրան, Կ. Պոլիս, 1990 թ.—1. Երզաբան մեծիմաստ վարժապետի Գրիգորի Փեշտմալճեան, 1818 թ., Հայ. Հմր 11011, 2. Ժամագիրք, ԺԸ դ., Հայ. պտակ Հմր 2081, 3. Ժամագիրք, ԺԸ դ., Հայ. պտակ Հմր 2082, 4. Շարական, ԺԸ դ., Հայ. պտակ Հմր 2083, 5. Ծա՞ն (Աստուածածին շրջագայէ ի դժոխս), ԺԸ դ., Հայ. պտակ Հմր 2084, 6. Դեղագիրք, ԺԸ դ., Հայ. պտակ Հմր 2085, 7. Դեղագիրք, ԺԸ դ., Հայ. պտակ. Հմր 2086 8. Դեղերուն դօրութիւն, ԺԸ դ., Հայ. պտակ Հմր 2087, 9. Կազմութիւն մարդոյ (Վասն ստեղծման երկկամանցն եւ ստամօքին), ԺԸ դ., Հայ. պտակ Հմր 2088, 10. Տաղ Աստուածածնայ՝ ի Յակոբայ դպրէ Սերաստացոյ, ԺԸ դ., Հայ. պտակ

- Հմբ 2089, 11. Դեղադիրք (հայատառ թուրքերէն), ԺԸ դ., Հայ. պտակ Հմբ 2090, 12. Բժշկարան, ԺԾ դ., Հայ. պտակ Հմբ 2091, 13. Բժշկարան (Վասն կերակրոց հալիւոյն), ԺՁ դ., Հայ. պտակ Հմբ 2092, 14. Քարոզ Ը. շարաթ աւուր, Ի վերայ Խ. մանկանցն վկայից, ԺԸ դ., Հայ. պտակ Հմբ 2093, 15. Երաժշտական (խազազրեալ), ԺԹ դ., Յուն. պտակ Հմբ 20:
33. Խաչատրեան Պօղոս, Երեւան, 1986 թ.—Ժողովածու-Աղօթագիրք, 1754 թ., Հայ. Հմբ 10972:
34. Խարեան Նուբար, Կ. Պոլիս, 1986 թ.—1. Ժամագիրք, Ժէ դ., Հայ. Հմբ 10967:
35. Կարազէօղեան Վարդերէս, Փարիզ, 1985 թ.—1. Ճառքնտիր, Հայ. պատահիկ Հմբ 2047:
36. Կարապետեան Թադւոր (Տազոր), Տուլշա, Ռուսիոյ, 1987 թ.—1. Հմայիլ, Ժէ դ., Հայ. հմայիլ Հմբ 412:
